Հ. 54

ՀԵՐՄԱՆ ՀԵՍԵ

ՀԱՆԱՊԱՀ ԴԵՊԻ ԼԵՌՆ

ԴԵՄԻԱՆ

ՍԻԴՀԱՐԹԱ

ՔԼԻՆԳՍՈՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՄՈՒԻԼ

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԵԵՐՍ

ԴԵՄԻԱՆ

Էմիլ Զինքլերի
երիտասարդության պատմությունը

ՍԻԴՀԱՐԹԱ

Հնդկական բանաստեղծություն

ՔԼԻՆԳՋՈՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՄԱՌԸ

ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՀՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ


DEMIAN
SIDDHARTHA
LINGSORS
LETZTER
SOMMER
AS REICH
HERMANN HESSE
Armenische Übersetzung
von Ashot Alexanian

85
Հ-54

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ

1877-1962



ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 830-3 Հեսսե
ԳՄԴ 84.4 Գերմ-4
Հ 546

Հրատարակվել է
պետական աջակցությամբ

Թարգմանությունը գերմաներենից,
առաջաբանը և ծանոթագրությունները
Աշոտ Ալեքսանյանի

Hermann Hesse:
Demian, Siddhartha, Klingsors letzter Sommer
Übersetzung, Vorwort und Anmerkungen von
Ashot Alexanian

Հեսսե Հ.
Հ 546 Ճանապարհ դեպի ներս (մանրավեպեր) / թարգմ. գերմ. Աշոտ Ալեքսանյան, - Եր., «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2004 թ., 336 էջ:

Գրքում զետեղված են հեղինակի 1919-22 թթ. գրած «Դեմիան», «Սիդհարթա», «Քլինգզորի վերջին ամառը» մանրավեպերը և որպես վերջաբան ընտրված է «Տերությունը» պատմվածքը: Այս տարիները շրջադարձային են Հ.Հեսսեի ողջ ստեղծագործական ուղու համար, քանզի այս պահից ի վեր գրողը ոտք է դնում Ֆրոյդի ու Յունգի հոգեվերլուծական մեթոդի գեղարվեստական կերպարանավորմանը՝ կյանքի կոչելով «գիտակցության հոսքի» չափորոշիչների վրա խարսխված նորագույն գրական ուղղությունը:

Հ $\frac{4702460100}{701(01)2004}$ պ

ԵՊՀ Գրադարան
SU0148655

ԳՄԴ 84.4 Գերմ-4

ISBN 540-01943-1

© Աշոտ Ալեքսանյան, թարգմանության համար,2004թ.:
© «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2004թ.:

ՆՈՐ ՍԿԻԶԲ - 1919 Թ.

Մենք չպետք է ինքներս մեզ խաբենք՝ ետ-ետ գնանք և վերջից սկսենք՝ կառավարման ու տնտեսավարության ձևերից, այլ մենք պետք է առաջ ընթանանք և ամեն ինչ սկսենք սկզբից՝ մարդ-անհատի ձևավորումից, եթե միայն ուզում ենք, որ մեզանում վերստին մեծ հոգիներ ու զորեղ այրեր ծնվեն, որ կարող կլինեն հրաշակերտելու ու երաշխավորելու մեր ապագան...

Հերման Հեսսե, «Զրադաշտի վերադարձը»
քաղաքական թռուցիկից, Բեռն 1919 թ.

2002 թվականը ողջ աշխարհում անցավ Հերման Հեսսեի դավանած ու քարոզած իդեալների նշանի ներքո: Երկրագնդի բոլոր ծայրերում տոնականորեն նշվեց չվեյցարահպատակ գերմանացի մեծ գրողի, հումանիստ արվեստագետի ու աշխարհի քաղաքացու ծննդյան 125-ամյա հոբելյանը:

Հեսսեն ծնվել է 1877 թվականի հուլիսի 2-ին Հարավային Գերմանիայի Շվաբիա երկրամասի, ներկայումս՝ Բադեն-Վյուրթեմբերգ, Կալվ քաղաքում, ուր և անցել են նրա մանկության ու պատանեկության տարիները: Շվաբիայում են ծնվել նաև այնպիսի ազատամիտ մտածողներ, ինչպիսիք են՝ աստղաֆիզիկոս Իսաակ Կեպլերը, փիլիսոփաներ Հեգելը և Շելլինգը, մեծ քնարերգուներ Հյոլդերլինն ու Մյորիկեն, գերմանական գրականության հանճար Ֆրիդրիխ Շիլլերը: Այս առաջադեմ ապստամբ հոգիների շառավիղն է Հերման Հեսսեն: Նրա հայրը Էստոնիայից սերող գերմանացի միսիոներ-քարոզիչ էր, մայրը՝ Հնդկաստանի արևելքում ծնված արևելագետ-միսիոների ու Ֆրանսախոս չվեյցարուհու դուստրը: Բոլոր այն անախորժությունները, որ ծնունդից սկսած մշտապես ծառանում էին ապագա գրողի առաջ՝ բողոքականություն դավանող քարոզչի ընտանիքից սերած լինելու պատճառով, իրենց կնիքն էին թողնում ինչպես նրա կենաց ճանապարհի, այնպես էլ՝ ողջ ստեղծագործական ուղու վրա:

Ես-ի և արտաքին աշխարհի, ոգու ու բնազդի, ինքնաոչնչացման հակումի ու ինքնարտահայտման կարոտալից ձգտման միջև գոյություն ունեցող իրական հակասությունը, մարդուս հոգևոր-ոգեղեն էներգիայի և շրջակա քաղքենի հասարակության այլասերված ու կաթվածահար հաստատությունների միջև գոյավորված լարվածության մթնոլորտը նրա հսկայածավալ գրական-հրապարակախոսական ժառանգության առանցքային թեման է, որի գեղարվեստական բարձր մարմնավորման, ինչպես նաև հումանիզմի ու առաքինասիրության գաղափարների քարոզի համար էլ Հեսսեն, որպես «լավագույն Գերմանիայի» ջատագով ու նրա իսկական ներկայացուցիչ, 1946 թվականին արժանացավ Նոբելյան մրցանակի:

1919 թվականը շրջադարձային էր Հեսսեի ողջ ստեղծագործության համար: Այդ թվականին լույս ընծայված «Զրադաշտի վերադարձը» քաղաքական թռուցիկում, ինչպես նաև «Դեմիան» վեպում, առաջին աշխարհամարտի մղձավանջային ամփոփման փորձին զուգահեռ, Հեսսեն առաջինն էր, որ մարգարեացավ և ահազանգեց նոր միայն սաղմնավորվող ազգային սնապարծության, ազգայնամոլության և ազգային բացառիկության այն գաղափարների դեմ, որ հասունանում էին գերմանական միջավայրում:

1919 թվականը նշանավոր է նաև հետայսու Հեսսեի որդեգրած գեղագիտական նոր ըմբռնումների իմաստով: Նրա ողջ գեղագիտական մտածողությունը այժմ համարձակ տեղաշարժեր է կատարում այլևայլ, բոլորովին նոր պատկերային ու հասկացական համակարգերի յուրացման ուղղությամբ: Ընդհուպ մինչև «Կնուլպ» (1915 թ.) վեպի լույս ընծայումը՝ Հեսսեն հետևորդն էր դեռևս Քելլերից, Ռաաբեից, Շթորմից ու Ֆոնտանեից եկող գեղարվեստական պայմանականությունների մեթոդի: Սակայն այդ նույն 1919 թվականին հրապարակած «Դեմիան» վեպով, ինչպես իր անձնական կյանքում, այնպես էլ՝ գրականության ասպարեզում, Հեսսեն իր ետևից մեկընդմիշտ այրում է բոլոր կամուրջները և ամեն ինչ սկսում սկզբից: Վեպում, առաջին անգամը լինելով, փորձադաշտ է ընտրվում էպիքական նկարագրական ոճը: Պատումի արվեստը գեղարվեստական նպատակներին հնարավորինս ծառայեցնելու համար Հեսսեն դիմում է ժամանակի գիտության զանազան բնագավառների մեթոդաբանական զինանոցին՝ գիտակերպ վարկածներ ու ֆիկցիաներ, պայծառատեսական ու հոգեվերլուծական դիտարկումներ... Այդ տեսությունները հրամայաբար պահանջում էին դեպքերի էպիքական հարահոսի առանձին օղակները ենթարկեցնել որոշակի օրենքների ու օրինաչափությունների: Պատրանք-երազներն ու տեսիլները, խորհրդանիշերն ու գիտակցության հոսքի առանձին միավորները, զանազան պատկերային հնարանքները տարրալուծվում են պատումի զգացմամացական պատյանի մեջ:

Այս թվականից սկսած՝ ժամանակի իռացիոնալ կենսափիլիսոփայությունը, որը նաև տիրապետող գաղափարախոսություն էր, իմաստասիրական ետնախորշի իրավունքով մուտք է գործում Հեսսեի գեղարվեստական, ինչպես նաև բարոյագիտական ծրագրերի ամենախորը շերտերը: Այստեղ ամեն ինչ կա՝ սկսած Ֆրոյդի ու Ցունգի հոգեվերլուծական մեթոդի ուղղակի գործադրումից, մինչև Նիցշեի ու Շելերի իռացիոնալիստական մտավարժանքները, բայց երբեք աչքաթող չի արվում արվեստի ու բարոյականության անխախտ, կենդանի կապը, որից և տրամաբանորեն մակաբերվում է հոգևոր մշակույթի սրբազնացման բնազանցական ձգտումը:

Վեպի գաղափարախոսական հենքը գոյավորող հերոսը՝ Դեմիանը,

աստվածաշնչյան Կայենի առասպելի իր սեփական մեկնաբանությամբ և անբարոյականության իր յուրահատուկ ըմբռնման կերպով ներկայանում է որպես Նիցշեի ու նրա քարոզած գաղափարների ճշմարիտ հոգեզավակն ու հետևորդը: Նրա համար Կայենը մի ազնիվ մարդ է, անվախների ու սարսափազդուների ցեղից, Աբելը երկյուղած ու վեհերոտ մեկն է, և այն, որ ուժեղը սպանում է թույլին, երկնքի դեմ ուղղված չարագործություն չէ, այլ արիության ու բնավորության նշան: Նա հորդորելու պես խորհուրդ է տալիս վեպի գլխավոր հերոս Զինքլերին նույն կերպ վարվել իր կեղեքիչ Քրոմերի նկատմամբ. «...Դու պետք է ազատվես այդ տղայից... Եթե ուրիշ ոչ մի ձևով հնարավոր չլինի, պարզապես սպանի՛ր նրան: Տպավորիչ ու նաև դուրեկան կլինի ինձ համար, եթե դու այդ բանն անես: Ես նույնիսկ պատրաստ եմ օգնելու քեզ»:

Քաղքենիական դասի դպրոցական տղաների այդ փիլիսոփայությունը դեռևս ճախրում էր ուղեղի ինչ-ինչ անկյուններում՝ հեռու կենսագործման չոչափելի հնարավորությունից: Բայց այն օրավուր ամրացնում ու կոփում էր մկանները: Օրերից մի օր էլ անթիվ-անհամար Դեմիաններ կհագնեն սև համազգեստները և, հանուն կրթյալ մի ընտրանու, կկենսագործեն այս իմաստախոսությունը, քանի որ «սպանելը ամենահեշտն էր: Նման պարագաներում ամենահեշտն ու դյուրինը միշտ էլ տարբերակներից լավագույնն է»: Անչուշտ այստեղ խոսում է ոչ թե Հեսսեն, այլ այն մարտնչող «առաջադիմական» հակազդեցությունը, որ Նիցշեի բարոյականության ծագումնաբանության մասին գրվածքներից սկսած մինչև Մաքս Շելերի «Պատերազմի հանճարը» գիրքը, նախահարձակ մարդկանց որպես բարձրագույն տեսակ է ներկայացնում և որոնց բովանդակած չար ոգին օգնել է գեղաձևելու Դեմիանի կերպարը: Միամիտ Զինքլերի համար քաղքենիական զանգվածների բարոյագիտական պատկերացումներին ընդդիմանալու դիրքորոշումը պատկանում է այն «խավար աշխարհին», որին նա հատկացնում է ամեն ինչ, այն ամենը, ինչ հակասում է անցողիկ, նեղքաղքենիական, հովվերգականորեն հնամենի ու անկեղծ հասարակական սահմանադրության նկատմամբ իր մեջ դաստիարակությամբ բնավորված իդեալին:

Նրա հորինած նոր աշխարհայեցությունը իր բնորոշ արտահայտությունն է գտնում գերառեղծվածային, հակաքրիստոնեական ու հակաքաղքենիական Աբրաքսաս աստծո պատկերացման մեջ: Այդ անունը առաջին անգամ հիշատակված է մ.թ. 125 թվականին ուշ անտիկ շրջանի «գնոստիկական» միստերիաներում, որոնցում հունա-արևելյան և քրիստոնեական առասպելների ու փիլիսոփայության տարրերը միակցվում, զուգակցվում էին թեոսոֆիական վերացական մտահայեցությունը: Դեմիանի ու Զինքլերի համար այդ բառը բնորոշում է մի աստծո, որը նաև դիվային-սատանայական սկզբունքն է բովանդակում, իր մեջ միավորելով լույսն ու խավարը, մարդկայինն ու անմարդկայինը, բարին ու չարը, «երանությունն ու դաժանությունը, տղամարդուն ու կնոջը միագումարված, սրբազնականն ու այլանդակը իրարու ագուցված, խո-

բագույն մեղքը նրբագույն անմեղսագիտության մեջ ներամփոփ»:

Աբրաքսասը՝ որպես գնոստիկական աստվածություն, առաջին անգամ հանդիպում է Բասիլիդես Անտիոքացու ուսմունքում, որը նա քարոզել է Հ.Ք. 130-ական թթ. Ալեքսանդրիայում: Ըստ այդ ուսմունքի՝ այդ անունով կոչվում էին մարդու մարմնով, աքաղաղի գլխով և օձակերպ ոտքերով ուշ հնադարի առասպելական էակները: Աբրաքսաս անվան մեջ պարունակվում է 365 թվային արժեքը՝ ըստ այդ բառի մեջ առկա հունարեն այբուբենի թվային արժեքների գումարի: Աբրաքսաս անվանը Հեսսեն հանդիպել է դեռևս 1895-96 թթ.՝ Գյոթեի ստեղծագործությունների խորը ուսումնասիրման շրջանում: Այն հայտնվում է Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանում», «Երգիչների գրքում»:

Նորահայտ աշխարհըմբռնումը արտահայտվում է նաև Կայենի նշանը կրողների դաշնադրության մոտիվում: Իր եկեղեցու անդամակցության առթիվ Զինքլերը խոսում է արդեն իսկ «Գաղափարի և անհատապաշտական մի միաբանության կամ ուխտի մասին, որը ինչ-որ ձևով երկրիս երեսին պետք է գոյություն ունենա» և որին նա ուզում էր անդամագրվել: Ուսանող դառնալով նա հայտնագործում է «նշանակնքվածների» միաբանությունը, որին պատկանում էին Աբրաքսասի պաշտամունքի երկրպագողները՝ ի դեմս Դեմիանի, նրա մոր և իրեն, բայց նաև «աստղագուշակներն ու կաբբալիստները, նաև կոմս Տոլստոյի մի հետևորդ և բոլոր այն նուրբ, ամոթխած, վիրավորվող ու խոցելի մարդիկ, նոր հերձվածների հետևորդներ, հնդկական վարժանքների կատարողներ, խոտաճարակներ և այլք»: Այս միաբանությունը նման է հոգեվոր մարդկանց մի յուրատեսակ օթյակի, որոնց առաջադրանքն է՝ «աշխարհում մի կղզի ներկայացնել, գուցե մի նախատիպար, ամեն դեպքում, սակայն, ծանուցման պես մի հիշեցում՝ ապրելու մեկ ուրիշ հնարավորության մասին»:

Միաբանության, ուխտի գաղափարն այստեղ առաջին անգամ է հանդես գալիս Հեսսեի ստեղծագործությունում. աշխարհից լիովին մեկուսացված նման մի հոգևոր ընտրանի ունենալու խնդրին Հեսսեն հետագայում անդրադարձավ իր ավելի ուշ շրջանում գրած կոթողային երկերում՝ «Տափաստանի գայլը» (1927), «Ճանապարհորդություն դեպի Արևելքի երկիրը» (1931), «Ուլունքախաղ» (1943):

«Դեմիանը» դարձավ ժամանակի երիտասարդական շարժման ուղեցույց-ձեռնարկը: Այդ երիտասարդությունը պարզորոշ զգում էր, «որ նորի ծնունդը և աղետալի փլուզումը մոտ են և արդեն զգալելի: Դեմիանն ինձ մեկ անգամ ասաց. Թե ինչ է լինելու՝ անկանխագուշակելի է: Եվրոպայի հոգին մի գազան է, որ անսահման երկար պառկած էր շղթայակապ: Երբ նա ազատություն ձեռք բերի, նրա առաջին գործողությունները վստահաբար ամենագորովագութը չեն լինելու...»

Համակված կյանքի փիլիսոփայության համաբանական գաղափարներով՝ Դեմիանը և Զինքլերը պատերազմը որպես «բնական պրոցես» են դիտում, որպես տիեզերական աղետ, որն իր հետևից մի նոր դարաշր-

ջան է բերում, որը հին աշխարհի «վախճանի սկիզբն է» և որի հետ նա պետք է համակերպվի: Վերջում մեկ անգամ ևս հնչում է ճակատագրի մոտիվը, այս անգամ արդեն Նորն ընդունելու նկատմամբ ներքին պատրաստականության դրական հնչերանգով:

Դեռևս 1947 թ., վեպի առաջին ամերիկյան հրատարակության նեբրածականում, Թոմաս Մանը գրում էր. «Անմոռանալի է այն էլեկտրականացնող ազդեցությունը, որ առաջին աշխարհամարտից անմիջապես հետո առաջ բերեց ոմն խորհրդավոր Զինքլերի «Դեմիանը», ստեղծագործություն, որը ճշգրտությամբ ժամանակի նյարդը բռնեց և մի ողջ երազող երիտասարդության միջից առաջ քաշեց իրենց կյանքի խորագիտակ մարգարեին՝ երախտապարտ սքանչացման հրապուրանքով տոգորված»: Քաղաքականապես անփորձ մի երիտասարդություն այս վեպում զգաց իրեն իր մոլորության մեջ հասկացված և հաստատագրված:

«ՍԻԴՀԱՐԹԱՅԻ» ԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հերման Հեսսեն «Սիդհարթան» սկսել է շարադրել 1919 թ. դեկտեմբերին՝ շվեյցարական Մոնտանյոլայում: Մինչև տարեվերջ գրել-ավարտել է գրքի առաջին մասը և երկրորդ մասի առանձին գլուխներ, այդ թվում նաև «Գետափին» գլուխը, որը սակայն նրան թվացել է չհաջողված ու նա մի կողմ է դրել հետագա շարադրանքը: 1920 թ. օրագրային գրառումներից մեկում Հեսսեն մեկնաբանում է ստեղծագործության ընդհատման պատճառները. «*... Հիմա խնդիրն ինձ համար պարզ է և ես կարող եմ պատճառները բացատրել: Իմ հնդկական քերթվածում ամեն ինչ փայլուն էր ընթանում, քանի դեռ ես բանաստեղծում էի այն, ինչ ինքս էի անձնապես վերապրել. իմաստնությանն հետամուտ պատանի բրահմանի տրամադրությունները, որն իրեն լլկանքի ու ինքնաձգման է ենթարկում, նա, որ պատվախնդրությունն է իրեն առաջնորդ կարգել և այժմ ստիպված է այն՝ որպես բարձրագույնին հասնելու ճանապարհին խոչընդոտ ճանաչել: Երբ ես ավարտին հասցրեցի Սիդհարթա հանդուրժողի ու ճգնակյացի հատվածը, որոնող ու տառապող Սիդհարթայի հետ հաշիվները փակեցի և ուզում էի անցնել հաղթող, ինքնահաստատող ու պարտադրող Սիդհարթայի ներկայացմանը, այստեղ արդեն ոչինչ չէր ստացվում: Սակայն օրերից մի օր ես անպայման շարունակելու եմ իմ կիսատ թողած ստեղծագործությունը, վաղ թե ուշ ձեռք եմ զարկելու նրան, և անպայման կերտելու եմ հաղթող Սիդհարթայի կերպարը»:*

Մեկ ուրիշ տեղ՝ Գեորգ Ռայնհարտին ուղղած 15.08.1921 թվակիր նամակում նույն խնդրի առթիվ գրում է. «*Թե հետագայում ի՞նչ է լինելու «Սիդհարթայի» ճակատագիրը, ինքս էլ հաճույքով կուզեինայի իմանալ: Ես մի քիչ ավելին եմ վերապրել, քան նա, բայց ոչ մի կերպ ինքս ինձ համար չեմ կարողանում բացահայտել վերջն ու վերջնարդյունքը և հենց այդ նույն պատճառով էլ՝ այն ստեղծագործության մեջ ներկայացնել: Անհատականության ճանապարհը, որը մարդուս ամե-*

նից առաջ հեռու է պահում հանրային կյանքից ու ավտորիտարիզմից, ներքին ձայնը (նաև խիղճը) դարձնում է այնքան անձնական ու գերզգայուն և կյանքն էլ՝ այնպես արտակարգ ձևով տարբերակված ու բազմաբարդ, ահա դրա փորձառությունը ես ունեցա ու դեռ խրված եմ դրա մեջ: Տարբերակված անհատականության վերստին համապատասխանեցումը, ներդաշնակեցումը ամբողջին, ընկերային կյանքի ու հասարակական կազմակերպվածությանը ես միայն այն ժամանակ կարող էի ներկայացնել, երբ ինքս էլ այդ ճանապարհին բավականաչափ առաջադիմած լինեի»:

1921 թ. ընթացքում չվեյցարական մի շարք պարբերականներում լույս են տեսնում ստեղծագործության առանձին գլուխներ: Միաժամանակ նույն թվականի մայիս և հունիս ամիսներին Հեսսեն հաճախակի իր մասնակցությունն է բերում հոգեվերլուծական մեթոդի շուրջ Քյուսնախում Կարլ Յունգի կազմակերպած պարապմունքներին: Եւ միայն 1922 թ. մարտին նա վերստին անդրադառնում է «Սիդհարթայի» կիսատ թողած ձեռագրին: Մայիսի վերջին գրողը ստեղծագործության մաքրագիրը ուղարկում է իր հրատարակիչ Ֆիշերին: Գիրքը լույս է տեսնում 1922 թ. հոկտեմբերին:

Հետագայում՝ 1931 թ. «Ճանապարհ դեպի ներս» ընդհանուր խորագրի ներքո լույս ընծայած ժողովածուի վերջաբանում Հեսսեն ավելի է խորացնում «Սիդհարթայի» և իր անձնական գաղափարական հասունացման միջև ուղղակի կապի թեման. *««Սիդհարթան» սկսել եմ գրել 1919 թ. ձմռանը: Առաջին և երկրորդ մասերի միջև գրեթե երկու տարվա դադար է ընկած: Այն ժամանակ ես փորձառություն էի կուտակում (բնականաբար ոչ առաջին անգամ, սակայն անցյալների համեմատ շատ ավելի խիստ ու հիմնավոր մի փորձառություն), որ անիմաստ է ցանկանալ գրել մի բանի մասին, ինչը դու անձնապես չես վերապրել, և այն երկարատև դադարի ընթացքում, երբ ես արդեն ետ էի կանգնել «Սիդհարթան» շարունակելու մտքից, ինձ վիճակվեց այդ ճգնավորական ու հայեցողական կյանքի փորձառությունը ճաշակել, նախքան որ մանկությունից ի վեր հնդկական ոգու սրբազան ու հոգեհարազատ աշխարհն ինձ համար իսկապես էլ վերստին հայրենիք կկարողանար դառնալ: Այն, որ այդ աշխարհում հետայնու ես չեմ մնացել, ինչպես կրոնափոխն՝ իր ընտրած հավատին, որ ես հաճախակի, նորից ու նորից լքել եմ այդ աշխարհը, և որ «Սիդհարթային» հաջորդել է «Տափաստանի գայլը», դրա համար ինձ հաճախագույնս ցավով կշտամբել են «Սիդհարթայի» երկրպագու իմ ընթերցողները, նրանք, որ «Տափաստանի գայլը» բավարար խորությամբ չեն կարդացել: Ես դրան պատասխան չունեմ տալու, «Տափաստանի գայլն» ինձ համար պակաս իմը չէ, քան «Սիդհարթան»: Ինձ համար իմ սեփական կյանքը, ինչպես և իմ ստեղծագործությունը, ինքնին հասկանալի մեկ-միասնություն է, որն ինքս ինձ ապացուցելը կամ պաշտպանելը ինձ միանգամայն ապարդյուն է թվում»:*

«Իմ սուրբը՝ Սիդհարթան, հնդկական հանդերձանք է կրում, սա-

կայն նրա իմաստնությունն ավելի մոտ է Լաո Ցզիին, քան Գաութամա Բուդդային: Լաո Ցզին այսօր շատ մոդայիկ է մեր բարի ու թշվառ Գերմանիայում, սակայն գրեթե բոլորը, ըստ ամենայնի, նրան համարում են առեղծվածային, մինչդեռ նրա ուսմունքը բնավ առեղծվածային չէ, այլ խստիվ երկբևեռ է, այսինքն՝ մեկ չափում ավելին ունի: Նրա աղբյուրից ես հաճախ եմ խմում» (Շտեֆան Ցվայգին գրած նամակից, 27-ը նոյեմբերի 1922 թ.):

«Իմաստնությունը սովորովի չի լինում, սա մի փորձառություն է, որը ես կյանքում մեկ անգամ պետք է փորձեի ստեղծագործությամբ ներկայացնել: Այդ փորձը «Սիդհարթան» է (Վ.Շինդլերին գրած նամակից, 14-ը հունվարի 1922 թ.)

«Սիդհարթան» ես համարում եմ իմ ամենաարժեքավոր գիրքը» (Ց. Քլայնպաուլին գրած բացիկից, 4-ը հուլիսի 1923 թ.)

«ՔԼԻՆԳԶՈՐԸ» ԱՇԽԱՐՀԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

«Քլինգզորի վեջին ամառը» վիպակում առասպելական նկարիչ Քլինգզորի շուրթերով Հեսսեն հնչեցնում է «Արևմուտքի մայրամուտն» ազդարարող չվենգլերյան գաղափարները, որ ծնունդ էին առել առաջին աշխարհամարտի հարուցած ճնշիչ տրամադրությունների, ինչպես նաև արվեստի բնագավառում առաջ եկած զանազան անկումային հոսանքների հետևանքով: Քլինգզորի կերպարի միջոցով Հեսսեն բացահայտում է ժամանակակից արվեստի ու արվեստագետի նոր ըմբռնումը, կյանքի ու արվեստի փոխհարաբերության նորովի առաջ քաշված խնդիրը, մարդկանց գլուխներում արմատավորված չփոթն ու արվեստի մարդասիրական բովանդակության կորստյան կսկիծը: Դա մի ժամանակ էր, երբ արվեստը ոչ թե որպես տաղանդավոր էակի ստեղծագործական մենաշնորհ էր ըմբռնվում, այլ դիտվում էր որպես «համաշխարհային ոգու» ինքնարտահայտման միջոց, որը բաբախում է պատմական ժամանակին համընթաց: Երբ ժամանակը ապամարդկայնացված է, արվեստն էլ պետք է ընդօրինակի նրան: Նշանավոր արվեստագետը նա է միայն, ում ստեղծագործությունը առավելագույնս համահունչ է «ժամանակի ոգուն» և կործանվող աշխարհին ի համերաշխություն՝ ի կատար է ածում մշակույթի պայթեցման առաքելությունը: Այս իմաստով Հեսսեի համար Քլինգզորը մեծ արվեստագետ է, որովհետև նա զգում է Եվրոպայի կործանումը և ինքն էլ, իր հերթին, արվեստի մեջ գնում է ինքնասպանության, իր ստեղծագործության մեջ մարմնավորելով ողջ արվեստ կոչեցյալի վախճանաբանությունը: Հատկանշական է աշխարհի կործանումն ազդարարող Քլինգզոր-նկարչի կերտած ինքնադիմանկարը, որը ոչ թե սոսկ փառաբանություն կամ քննադատություն է իր մեջ պարունակում, այլ պարզապես «ժամանակի վավերագիրն» է, պարզ վկայությունը: Գրողի համար Քլինգզորը նախ և առաջ վկա է, մարտիրոս, որ պետք է ազատվի բացասական ուժերի տիրապետությունից, որպեսզի դրանով իսկ, կամա թե ակամա, գիտակցաբար թե չգիտակցելով մասնակիցը դառնա նոր աշխարհի

հրաշակերտմանը: Թեև այս ստեղծագործության հիմքում ևս ընկած է կործանման թեմատիկան, բայց և այնպես այն վիպակում տիրապետող միակ գաղափարը չէ: Լսելի են նաև հակառակը պնդող ձայներ: Հատկանշական է, որ այդ հակոտնյա աշխարհազգացողության կրողները այն կերպարներն են, որոնք բոլորովին այլ մշակութային աշխարհ են ներկայացնում՝ արևելցի մոգը և բանաստեղծ Հերմանը՝ մականվանյալ Թու Ֆու, որը նույնանում է հեղինակի հետ: Այս երկու գաղափարակից բարեկամները արևելյան հումանիզմի ու հասարակական համերաշխության տեսլականի մունետիկներն են, որ փորձում են եվրոպացիների հոգիներում վերարթնացնել հույսով մխիթարվելու, հերոսականության և ուժի մոռացության տրված հրաշալիքները:

Ասել է, թե՝ կործանման շեմին կանգնած եվրոպացուն, արևմտյան գիտությունն ու որվեստը վերստին կենդանի կյանքի հունը վերադարձնելու նպատակով էլ Հեսսեն իր հայացքը շրջում է դեպի արևելյան իմաստնության ու կենսահաստատ աշխարհընկալումի ակունքները և վիպակում կերտում է համաշխարհային պատերազմի թոհուբոհից մի կերպ գլուխն ազատած, շվեյցարական լեռներում ապաստանած հայ աստղագուշակի խիստ գունեղ ու իմաստուն կերպարը, որը, հավատարիմ իր ազգային նկարագրին, կենսասիրության ու աշխարհասիրության դասեր է տալիս եվրոպացիներին, փորձում իր ասիական լավատեսությամբ վարակել դեկադանսի հովերով ու անկումային տրամադրություններով համակված արևմտյան արվեստագետներին: Քլինգզորի ընդդիմախոս մոգի ազգային պատկանելության ընտրության հարցում Հեսսեն տատանումներ չի ունեցել. մի բան պարզ էր, որ նա անպայման պետք է ասիացի լիներ, իսկ թե ինչու՝ հատկապես հայ, այս առիթով նա իր ձեռքի տակ ուներ Ֆր. Շիլլերի «Ռգետեսը» վեպի գլխավոր հերոսներից մեկին, որը նույնպես ասիացի մոգ էր, ազգությամբ հայ, և որը կոչված էր իրար հետ հաշտեցնելու, փոխլրացնելու ասիական հնամենի իմաստությունն ու եվրոպական գիտելիքների նորահայտ դրսևորումները:

Ուսումնասիրողների կարծիքով՝ հայ մոգի կերպարը կերտելուն նախորդել է Հեսսեի և իր շվեյցարացի բարեկամ, ինժեներ և ճարտարապետ Ցոզեֆ Էնգլերտի միջև տեղի ունեցած զրույցների մի երկարատև շրջան, երբ նրանք օրերով աստղերի ու աստղագուշակության հրաշքների մասին էին խոսում: Իր մտերիմ բարեկամ Էնգլերտին Հեսսեն կատակով կոչում էր Նոյի հետնորդ, վերջինս էլ բանաստեղծին՝ Խաթթուս (խեթ), հավանաբար նկատի ունենալով շվարացիների շրջանում տարածված ավանդազրույցը, ուր իրենց փոքրասիական ծագում էր վերագրվում:

Հերման Հեսսեի գեղարվեստական ստեղծագործությունը 20-րդ դարի մեծագույն երևույթներից է: Նրանում ամփոփված խորը մարդասիրական գաղափարները դեռ երկար ժամանակ զբաղեցնելու են գրական աշխարհի միտքն ու կրթելու են ընթերցող շրջանների գեղարվեստական ճաշակը:

Աշոտ Ալեքսանյան

ԴԵՄԻԱՆ

Էմիլ Զինքլերի
երիտասարդության պատմությունը
(1919)

Ես ցանկանում էի լոկ այն փորձել ապրել, ինչը ինքնաբերաբար իմ միջից դուրս գալ էր ուզում: Ինչու՞ էր դա այդչափ դժվար:

Իմ պատմությունը անելու համար ես պետք է շատ հեռվից սկսեմ: Հարկ կլիներ, եթե ինձ հնարավորություն ընձեռվեր, շատ ավելի հեռուն ետ գնալ, մինչև իմ մանկության ամենաառաջին տարիները, և դեռ նրանցից էլ դենը՝ ետ դեպի իմ ծննդյան հեռաստանը:

Բանաստեղծները, երբ նրանք վեպեր են գրում, աշխատում են այնպես անել, որ ասես իրենք Աստված լինեն և ի զորու՝ որևիցե մարդու պատմությունը ամբողջության մեջ մի հայացքով ընդգրկել ու ըմբռնել, և բանն այնպես ներկայացնել, որպես թե Աստված ինքը այն պատմելիս լիներ, առանց դույզն-ինչ չղարշաքողի, ամեն ինչում իմաստահեղց ու ըստ էության: Այդ ես չեմ կարող, այն նվազագույնը, ինչը որ բանաստեղծներն են կարողանում: Իմ պատմությունը, սակայն, ինձ համար շատ ավելի կարևոր է, քան որևիցե բանաստեղծի համար իրենը, որովհետև այն իմ սեփականն է և պատմությունն է կոնկրետ մարդու՝ ոչ մտացածին մեկի, հնարավոր, կատարյալ կամ որևիցե այլ կերպ գոյություն չունեցողի, այլ մի իրական, իր եզակիության մեջ միանգամյա, կենդանի մարդու: Ի՞նչ է դա, իսկապես ապրող մարդը, այսօր այդ մասին, արդարև, ավելի քիչ գիտեն, քան երբևիցե, ուստի և նույնիսկ բոլոր մարդկանց, որոնցից յուրաքանչյուրը բնության մի-մի մեծարժեք, եզակի, միանգամյա փորձն է, հատկացնում են մեռածների բազմությանը: Զլինեինք մենք ավելին, քան միանգամյա, եզակի մարդիկ, կարելի կլիներ մեզանից ամեն մեկին իսկապես որ մի հրացանազարկով զգետնել, աշխարհիս երեսից իսպառսպուռ վերացնել, ջնջել, այդժամ այլևս իմաստ էլ չէր ունենա պատմություններ պատմելը: Յուրաքանչյուր ոք, սակայն, ոչ միայն հենց ինքն է, որ կա, նա նաև եզակի է, միանգամյա, կատարելապես յուրահատուկ, ամեն առանձին դեպքում անկրկնելի ու նշանակալի մի կետ, ուր աշխարհի երևույթներն են խաչվում, այսպես միայն մեկ անգամ և այլևս երբեք չեն կրկնվում: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր մարդու պատմությունը կարևոր է, հավերժական, աստվածային, դրա համար էլ ամեն ոք, քանի դեռ նա ապրում է մի ինչ-որ տեղ և կատարում բնության կամքը, հրաշալի է և արժանի ամենայն ուշադրության: Յուրաքանչյուրի մեջ հոգին կերպարանք է առնում, յուրաքանչյուրի մեջ տառապում է արարչագործված էակը, յուրաքանչյուրի մեջ մի-մի Փրկիչ է խաչված:

Քչերը գիտեն այսօր, թե ի՞նչ է մարդը: Շատերն են դա

զգում և այդ պատճառով էլ մահանում են շատ թեթև, ինչպես որ ես եմ մահանալու, երբ իմ այս պատմությունը գրած-վերջացրած լինեմ:

Ես ինձ չեմ կարող իմաստուն կամ գիտուն մարդ համարել: Ես որոնող մեկն էի և դեռ շարունակում եմ այդպիսին մնալ, սակայն ես այլևս աստղերի մեջ ու գրքերում չեմ որոնում, ես սկսում եմ ուսմունքներ լսել, որոնք պղտորում են արյունս իմ մեջ: Իմ պատմությունը հաճելի չէ, այն քաղցրահունչ չէ ու ներդաշնակ, ինչպես մտացածին պատմությունները, նրանից անմտության ու խռովքի բույր է փչում, խելագարության ու երազի, ինչպես որ կյանքն է բոլոր այն մարդկանց, ովքեր այլևս չեն ուզում իրենք իրենց խաբել:

Յուրաքանչյուր մարդու կյանքը մի ճանապարհ է՝ ինքն իրեն ուղղված, ճանապարհի մի փորձ, մի թելի մատնանշում: Ոչ ոք երբեք էլ հենց միայն ինքը չի եղել, յուրաքանչյուրը, սակայն, ձգտում է այդպիսին դառնալ՝ անզգա ու բութ կամ լուսավոր մեկը, յուրաքանչյուր ոք՝ ով ինչպես կարող է: Յուրաքանչյուրը իր մեջ կրում և մինչև օրերի վախճանը իր հետ տանում է նախածին, վաղնջական անդրաշխարհից ժառանգած իր ծննդյան մնացորդները, լորձունքախորին ու ձվակճեպը: Ոմանք երբեք մարդ չեն դառնում, մնում են գորտ, մնում են մողես, մնում են մրջյուն: Ոմանք էլ՝ վերևում մարդ են, իսկ ներքևում՝ ձուկ: Սակայն յուրաքանչյուրը բնության մի-մի նետվածքն է՝ մարդուս նախապատկերին նմանակող: Մեր բոլորիս ծնունդները ընդհանուր են՝ մայրերը, մենք բոլորս ծագում ենք միևնույն անդնդախոր երախից, սակայն յուրաքանչյուրս՝ խորխորատներից սերած փորձն ու նետվածքը, ձգտում է դեպի իր սեփական նպատակները: Մենք կարող ենք իրար հասկանալ, սակայն մեկնել, ցուցանել յուրաքանչյուրս կարող ենք միայն ինքներս մեզ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

Ես սկսում եմ իմ պատմությունը ժամանակի մի վերապրումից, երբ ես տասը տարեկան էի և մեր փոքրիկ քաղաքի լատինական դպրոցն էի հաճախում:

Այնտեղ ամենը բուրում էր իմ առաջ և դիպչում ինձ ներսից՝ ցավեցնելով ու հաճելի դող պարգևելով. մթամած նեղլիկ փողոցները, լուսավոր տներն ու աշտարակները, ժամացույցի թակոցներն ու մարդկային դեմքերը, հանգստավետությամբ ու ջերմագին բավականությամբ լեցուն սենյակները, գաղտնիքներով և ուրվականների վախով ողողված խորհրդավոր հարկաբաժիննե-

բը: Շուրջը բուրում էր ջերմաշունչ նեղվածքով, ճագարներով ու աղախիններով, տնային բուժամիջոցներով ու չորացրած բանջարեղենով: Երկու աշխարհներ էին այնտեղ իրար մեջ ներթափանցած համագոյակցում, զույգ բևեռներից այնտեղ էին լցվում օրն ու գիշերը:

Աշխարհներից մեկը հայրենական տունն էր, սակայն այն ըստ էության շատ ավելի նեղ էր, իրականում ընդգրկում էր լոկ իմ ծնողներին: Այդ աշխարհը քաջածանոթ էր ինձ, այն կոչվում էր մայր ու հայր, կոչվում էր սեր ու խստություն, օրինակելիություն ու դպրոց: Այդ աշխարհը շատ ավելի նուրբ փայլ ուներ, ավելի պարզ էր ու մաքուր, այնտեղ մեղմ ու քաղցրահունչ, մտերմիկ խոսքեր կային, լվացված ձեռքեր ու մաքուր զգեստներ: Այստեղ էր, որ խմբերգվում էր առավոտյան օրհներգը, այստեղ ամանորն էր տոնվում: Այս աշխարհում կային ուղիղ գծեր ու ճանապարհներ, որոնք դեպի ապագան էին առաջնորդում, կար պարտականություն ու մեղսագիտություն, խղճի չար խայթոցներ ու խոստովանանք, ներողամտություն ու բարի դիտավորություններ, սեր ու հարգանք, աստվածաշնչյան խոսք ու իմաստնություն: Պետք էր միայն քեզ պահ տայիր այդ աշխարհին, որպեսզի դրանով կյանքդ պարզ ու զուլալ լիներ, գեղեցիկ ու կարգավորված:

Մյուս աշխարհը, սակայն, սկիզբ էր առնում մեր սեփական տան ճիշտ և ճիշտ մեջտեղում և բոլորովին տարբեր էր առաջինից, բուրում էր ուրիշ կերպ, խոսում այլ եղանակով, խոստանում ու պահանջում այլ կերպ: Այդ մյուս՝ երկրորդ աշխարհում, կային աղախիններ ու ենթավարպետներ, ուրվականների մասին պատմվող զրույցներ ու աղաղակող ասեկոսեներ, հրեշավոր ու չլսված, սարսափելիորեն հրապուրիչ ու հանելուկային առարկաների մի խայտաբղետ հեղեղ կար այնտեղ, այնպիսի բաներ, ինչպես օրինակ՝ սպանդանոց ու կալանավայր, հարբեցող ու հայհոյաբան կանայք, ծնող կովեր, տապալված ձիեր, պատմություններ կողոպուտների, սպանությունների, ինքնասպանությունների մասին: Բոլոր այս գեղեցիկ ու զարհուրելի, վայրենաբարո ու դաժան իրողությունները սփռված էին շուրջբոլորը, կողքի ներբանցքում, հարևան տանը. ոստիկանության ծառայողն ու թափառաշրջիկները վազվզում էին այս ու այն կողմ, հարբեցողները ծեծում էին իրենց կանանց, ջահել աղջնակների բազմությունը երեկոյան դեմ դուրս էր հորդում գործատներից, ծեր կանայք կախարդում ու հիվանդացնում էին պատահած մեկին, ավազակներն էին ապրում անտառում, հրձիգներն էին բռնվում հրացանաձիգ որսորդների կողմից (ամենուր պոռթկալով դուրս էր հորդում ու բուրում էր այս երկրորդ, դյուրագրգիռ ու տաքարյուն աշխարհը, ամենուր, միայն թե ո՛չ մեր սենյակներում, ուր

մայրիկն ու հայրիկն էին: Եվ դա հրաշալի էր: Իսկապես հոյակապ էր, որ այստեղ՝ մեզ մոտ, խաղաղություն էր տիրում, կարգուկանոն ու հանգիստ, պարտքի զգացողություն ու խղճի մաքրություն, ներողամտություն ու սեր) և հիասքանչ էր, որ այդ ամենը նույնպես կար, ամենայն բարձրաձայնումն ու զիլը, մթամածն ու բռնին, որից սակայն մի ցատկով կարելի էր փախչել ու փրկություն գտնել մայրական գրկում:

Եվ ամենաարտասովորն այն էր, թե ինչպե՞ս էին այդ զույգ աշխարհները միմյանց սահմանակցում, ինչքա՞ն իրար մոտ էին նրանք... Օրինակի համար՝ մեր աղախին Լինան, երբ երեկոյան կողմ աղոթքի ժամին նստած էր լինում սենյակի դռան մոտ և իր լուսավոր ու վճիտ ձայնով երգ էր ծոր տալիս, լվացած ձեռքերը դրած ողորկ ու նկարեն գոգնոցին, այդժամ նա ամբողջովին հայրիկին ու մայրիկին էր պատկանում, պատկանում էր մեզ՝ լուսավորին ու ճշմարտին: Իսկ երբ արդեն հաջորդ պահին՝ խոհանոցում կամ փայտաշեն ախոռում նա ինձ անգլուխ մարդու պատմությունն էր պատմում, կամ երբ մսագործի անշուք խանութում վեճի էր բռնվում հարևան կանանց հետ, այդժամ նա բոլորովին ուրիշ մեկն էր, պատկանում էր այլ աշխարհի, խորհրդավորությամբ էր շրջապատված: Բոլորին էլ նույն զգացումն էր պատում, առավել ևս ինձ: Անշուշտ ես պատկանում էի լուսավոր ու ճշմարտացի աշխարհին, ես իմ ծնողների երեխան էի, բայց ուր էլ աչքս ու ականջս ուղղելիս լինեի, ամենուր այն ուրիշն էր հայտնվում, ու ես նաև այդ ուրիշում էի ապրում, թեև շատ հաճախ այն ինձ համար օտարոտի ու տագնապալի էր պատկերանում, թեև այնտեղ, որպես կանոն, միայն խղճի ծանր խայթոցներ ու վախ էի ճաշակում: Ժամանակ առ ժամանակ ես նույնիսկ մեծագույն հաճույքով էի ապրում այդ արգելված աշխարհում և հաճախ ետդարձը դեպի տուն, վերադարձը դեպի լուսավորը (ինչքան էլ այն պարտադիր ու ցանկալի լիներ) ասես վերադարձ լիներ դեպի նվազ գեղեցիկը, դեպի ամենաձանձրալին ու նողկալին: Երբեմն ինձ այն միտքն էր պաշարում, որ կյանքում իմ նպատակն էր դառնալ այնպիսին, ինչպիսին հայրս ու մայրս էին, այնպես լուսավոր ու մաքուր, այնպես լրջմիտ ու չափվածձևված, սակայն մինչև այդտեղ դեռ շատ ճանապարհ կար անցնելու, մինչ այդ դեռ հարկավոր էր դպրոցների նստարանները մաշել, ուսանել, փորձ կուտակել ու քննություններ հանձնել, իսկ ճանապարհը մշտապես այդ ուրիշ, խավար աշխարհի կողքով էր առաջնորդում, ճիշտ և ճիշտ նրա միջով, և բնավ էլ անհնարին չէր, որ դու այնտեղ մնայիր ու ընկղմվեիր նրա մեջ: Կային պատմություններ անառակ որդիների մասին, որոնց բախտն այդպես էր տնօրինվել, դրանք ես առանձնակի կրքոտ խանդով էի ընթեռնում: Այդժամ վերադարձը դեպի հայրը և առ բարին մշ-

տապես այնքա՜ն ազատարար էր ու վեհշուք, և ես անպատճառ ըմբռնում էի, որ դա էր միայն ճշմարիտը, բարին ու տենչալին և, այնուհանդերձ, պատմության սոսկ մի հատվածը, որ խաղացվում էր չարերի ու անառակների միջև, իրականում բոլոր այդ խաղերից ամենագրավիչը լինելով, ու երբ հարկ էիր համարում այդ մասին բացահայտ արտահայտվել ու խոստովանություն անել, երբեմն դա ուղղակի ցավեցնելու աստիճան ծանր էր լինում, այն, որ Անառակը զղջար իր արարքի համար և վերստին ճշմարիտ ճանապարհին վերադառնար: Բայց այդ մասին ընդունված չէր խոսել և նույնիսկ մտքիդ ծայրով իսկ չէր անցնի դրան անդրադառնալ: Դա մի ինչ-որ ուրիշ տեղ և ուրիշ կերպ էր երևակվում, որպես նախազգացում ու հնարավորություն, բուն իսկ զգացմունքի ամենաստորին ոլորտներում: Երբ ես սատանային էի փորձում մտովի պատկերացնել, այդժամ կարող էի նրան հենց ուղղակի փողոցում էլ առմտածել՝ հանդերձավորված կամ մերկ, կամ էլ՝ տոնավաճառում, որևիցե պանդոկում, բայց ոչ երբեք մեզ մոտ՝ տանը:

Քույրերս նմանապես լուսավոր աշխարհին էին պատկանում: Նրանք, ինչպես ինձ էր հաճախ թվում, էությամբ ավելի մոտ էին հայրիկին ու մայրիկին, նրանք ինձանից ավելի լավն էին, բարեկիրթ, ավելի անսխալական: Նրանք ունեին թերություններ, ունեին վատ սովորություններ, սակայն ինձ թվում էր, որ դրանք շատ էլ խորագնաց չէին, այնպիսին չէին, ինչպես իմ պարագայում, ուր շփումը չարի հետ հաճախ այնպես ծանր ու տանջալի էր, և խավարի աշխարհն էլ՝ ավելի մոտ հարևանությամբ էր գտնվում: Քույրերիս էլ, ծնողներիս պես, պետք էր հոգատարությամբ վերաբերվել և ուշադիր լինել նրանց նկատմամբ, ու երբ կռվում կամ բանավիճում էիր նրանց հետ, այնուհետև սեփական խղճիդ հետ սովորաբար անհաշտ էիր լինում, հանգամանք, որի պատճառով այնուհետ ներողամտություն հայցելու խնդիրք էր ծառանում: Որովհետև հանձին քույրերիդ՝ ծնողներիդ էիր վիրավորած լինում, բարուն ու պահանջկոտին: Գաղտնիքներ կային, որոնց շուրջ ամենաանպետք փողոցային տղաների հետ ավելի շուտ կարող էի կիսվել, քան քույրերիս հետ: Երջանկավետ օրերին, երբ ծփացող լույս էր շուրջբոլորդ ու խիղճդ հանգիստ, հաճախ նույնիսկ հրաշալի էր խաղալ քույրերիդ հետ, նրանց նկատմամբ բարի ու սիրալիր լինել և ինքդ քեզ առաքինության ու ազնվության փայլի մեջ թաթախված տեսնել: Կարող էր և այդպես լինել, եթե ինքդ էլ հրեշտակ լիներիր... Դա այն բարձրագույնն էր, ինչ մենք գիտեինք, և քաղցրալիր հրաշափայլության մեջ ծրարված՝ ինքներս մեզ հրեշտակներ էինք կարծում, շրջապատված լուսավոր հնչեղությամբ ու բուրմունքով, ինչպես ամանորն ու երջանկությունը: Օ՜ ինչ հազվադեպ են այցել-

ում նման ժամերն ու օրերը... Հաճախ էլ՝ խաղալիս, այն բարի ու անմեղ, թույլատրված խաղերի ժամանակ, երբ մի կրքից կամ դյուրագրգիռ պոռթկումից դրդված, որը քույրերիս հետ եղած միջոցին չափից ավելի շատ էր պատահում, ես նրանց դեպի գժտությունն ու դժբախտությունն էի առաջնորդում, և երբ այնուհետև կատաղությունը պաշարում էր ինձ, ես սարսափելի էի դառնում և անում ու ասում էի բաներ, որոնց արատավոր գարշելիությունը այդ նույն պահին, երբ դրանք անում էի ու ասում, ես ամենայն խորությամբ ու կրակոտ հրայրքով էի ըմբռնում: Հետո հաջորդում էին զղջումի ու ընկճվածության չարաղետ, խավար ժամերը, ապա և ցավեցնող պահը, երբ ես ներողություն էի հայցում, ու կրկին լույսի մի ճառագայթ էր հայտնվում, երջանկության մի խաղաղ ու երանավետ զգացողություն, որն, ավաղ, ընդամենը մի քանի ժամով կամ վայրկյանով իմ միջից դուրս էր վանում ինձ պատած ներքին երկպառակությունը:

Ես լատինական դպրոցն էի հաճախում, քաղաքապետի ու գլխավոր անտառապահի տղաները իմ դասարանից էին և երբեմն ընկերակցում էին ինձ, իսկական վայրի տղաներ և, սակայն, բարի, թույլատրելի աշխարհին պատկանող: Չնայած դրան՝ ես մոտ հարաբերությունների մեջ էի հարևանությամբ ապրող երեխաների՝ ժողովրդական դպրոցի աշակերտների հետ, որոնց մենք սովորաբար արհամարհում էինք: Նրանցից մեկի հետ կապված մի դիպվածից էլ ես պետք է իմ պատմությունը սկսեմ:

Մի ազատ ետկեսօրի (ես տասը տարեկանից թերևս փոքր-ինչ ավելին կլինեի) անգործ թրև էի գալիս մեր հարևանությամբ ապրող երկու տղաների ընկերակցությամբ: Այդժամ մեզ միացավ ավելի տարեց մեկը, մի ուժեղ ու կոպիտ տղա, որը մի տասներեք տարեկան կլիներ, ժողովրդական դպրոցի սան, դերձակի որդի: Նրա հայրը թունդ հարբեցող էր, և ողջ ընտանիքը վատ համբավ էր վայելում: Ֆրանց Քրոմերը ինձ լավ ծանոթ էր, ես վախ էի տածում նրա նկատմամբ, և ինձ դուր չեկավ, երբ նա այժմ մեր դիմաց հայտնվեց: Նա արդեն տղամարդկային շարժուձևեր ուներ և նմանակում էր ջահել գործարանային ենթավարպետների պահվածքն ու խոսելաոճը: Նրա առաջնորդությամբ մենք իջանք դեպի կամրջի մոտակայքում ձգվող առափնյան և թաքնվեցինք աշխարհի աչքից՝ առաջին կամրջակամարի ներքո պատսպարվելով: Կորնթարդ, ամպակուտակ կամրջապարսպի ու մեղմահոս ջրի միջև տարածված նեղլիկ ափեզերքը լոկ զառիթափ լանջերից էր բաղկացած, ապակու կտորտանքներից, անպետք կահկարասուց ու հնոտիներից, ժանգոտած երկաթալարերի խճճված կապոցներից ու այլևայլ աղբուկեղտից: Երբեմն-երբեմն այնտեղ կարելի էր օգտակար ու գործածական բաներ գտնել: Ֆրանց Քրոմերի առաջնորդությամբ մենք պետք է ստոր-

գետնյա խավանցքները հետախուզեինք և նրան ցույց տայինք մեր գտածոները: Դրանք նա թաքցնում էր իր մոտ կամ ջուրը նետում: Նա մեր ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որպեսզի իրերը հատկապես կապարից, արույրից կամ անագից լինեին, այդպիսիք նա իր մոտ էր պահում, այդ թվում նաև հնամենի եղջյուրից մի սանր: Նրա ընկերակցությամբ ես ինձ անչափ ընկճված էի զգում, ոչ ամենևին այն բանի համար, որ գիտեի, թե հայրս նման շրջագայություններին ու ծանոթություններին պետք է որ դեմ լիներ, եթե միայն նա այդ մասին իմանար, այլ հենց միայն Ֆրանցի հանդեպ տածած վախիս պատճառով: Մյուս կողմից ուրախ էի, որ նա ինձ էլ վերցրեց և ինձ հետ մյուսների պես էր վերաբերվում: Նա հրամաններ էր արձակում և մենք հնազանդվում էինք, դա ասես մի հինավուրց, ընդունված սովորույթ լիներ, թեև ես առաջին անգամն էի նրա հետ միասին լինում:

Վերջապես մենք նստոտեցինք գետնին, Ֆրանցը թքեց ջրի մեջ և տղամարդու տեսք ուներ: Նա թքում էր ատամների արանքից և դիպչում ճիշտ իր կամեցածին: Այստեղ մի խոսակցություն էր սկիզբ առել, և տղաները պարծենում ու պատմում էին իրենց մեծագործությունների, ամեն տեսակ դպրոցական քաջագործությունների ու խաղացած չարկատակ օյինների մասին: Ես լուռ էի մնում և սակայն վախենում էի, որ չլինի թե իմ այդ լռակեցությամբ հանկարծ աչք ծակեմ ու Քրոմերի զայրույթն ինձ վրա ուղղեմ: Իմ երկու ընկերները հենց սկզբից ևեթ ինձանից երես դարձրին և նրա կողմը շուռ եկան, ես մի օտարական էի նրանց շրջապատում և զգում էի, որ իմ հանդերձանքն ու պահվածքը պետք է որ նրանց համար մարտահրավեր նետելու պես մի բան լիներ: Որպես լատինական դպրոցի սանի ու պարոնորդու՝ անհնար է, որ Ֆրանցը ինձ սիրել կարողանար, մյուս երկուսը, դա ես շատ լավ զգում էի, պետք է որ, առիթը ներկայանալուն պես, ինձ ուրանալով դավաճանեին ու ինձնից երես դարձնեին:

Վերջապես, զուտ վախի պաշարումից դրդված, ես նույնպես մի պատմություն սկսեցի պատմել: Մի երկարաշունչ ավազակաբարո պատմություն հորինեցի և ինձ էլ դարձրեցի նրա հերոսներից մեկը: Անկյունի ջրաղացի մոտի այգուց, պատմությունս սկսեցի ես, ընկերներիցս մեկի հետ մի ամբողջ պարկ լիքը խնձոր էի գողացել, բայց ոչ սովորական խնձորներ, այլ իսկական ռանետներ ու ոսկե պարմեններ, ամենալավ տեսակի: Պահի ներշնչված վտանգից դրդված՝ ես ապաստան գտա այդ պատմության մեջ, իսկ հորինելն ու պատմելը ինձ համար սովորական բան էր: Որպեսզի չլինի թե մի պահ դադար առնեմ ու ընդհատվելու վտանգին ենթարկվեմ և, հավանաբար, է՛լ ավելի վատ իրա-

դրության մեջ չխճճվելու համար ես փայլուն կերպով բանեցրեցի իմ ողջ արվեստը: Մեզանից մեկը, պատմում էի ես, մշտապես պետք է ժամապահի պես հսկեր, մինչ մյուսը ծառն էր մագլցել ու խնձորները ցած էր նետում, և այնքան էր պարկը ծանրացել, որ ի վերջո ստիպված եղանք այն կրկին բաց անել ու կիսով չափ դատարկել պարունակությունը, բայց մի կես ժամ էլ չանցած՝ նորից վերադաձանք ու մնացած գողոնը դուրս տարանք:

Երբ պատմությունս ավարտեցի, հուսով էի, թե ծափահարությունների կարժանանամ, ճիշտն ասած՝ ես շատ էի տարվել ու շլացել հեքիաթներ սարքելու իմ ընդունակությամբ: Երկու պըստիկները լռել ու սպասողական դիրք էին բռնել, սակայն Ֆրանց Քրոմերը կիսով չափ խուսափուկ ու խայթող աչքերի միջից թափանցող հայացքով ինձ էր նայում և հարցրեց սպառնական ձայնով.

- Դա ճի՞շտ է:

- Դե, իհա՛րկե,- ասացի ես:

- Ուրեմն իսկապե՞ս ճշմարիտ է:

- Այո, միանգամայն ճշմարիտ է,- հաստատելու պես համառորեն հավաստեցի ես, մինչդեռ ներքուստ խեղդվում էի վախից:

- Կարո՞ղ ես երդվել:

Ես շատ վախեցա, բայց և անմիջապես էլ ասացի՝ այո:

- Այդ դեպքում ասա. Երդվում եմ Աստծով ու Բարձրագույն Երանությամբ...

Ես վրա բերեցի.- Երդվում եմ Աստծով ու Բարձրագույն Երանությամբ:

- Այդպե՛ս, այդպե՛ս,- արտաբերեց նա և դեմքը շրջեց:

Ես մտածեցի, որ ամեն ինչ կարգին էր և ուրախ էի, երբ նա կտրուկ վեր կացավ ու վերադարձն ազդարարեց: Երբ կամրջին էինք հասել, ամոթխած վեհերոտությամբ ասացի, որ հիմա ես պետք է տուն գնամ:

- Պետք չէ այդպես շտապել,- ժպտաց Ֆրանցը,- մենք նույն ճանապարհով ենք վերադառնալու:

Դանդաղկոտ ու թափառիկ քայլքով նա շարունակեց առաջ ընթանալ ու ես չհամարձակվեցի ճողոպրել, բայց նա իսկապես էլ մեր տուն տանող ճանապարհն էր բռնել: Երբ տեղ հասանք և ես տեսա մեր տան դուռն ու հաստաբեստ արույրե փականքի մղլակը, պատուհանների մեջ թեաձող արևը և մորս սենյակի վարագույրը, այդժամ ես խորը շունչ քաշեցի: Օ՛ տունդարձ... Օ՛ բարեբաստիկ, օրհնյալ վերադարձ դեպի տուն, դեպի լուսավորը, խաղաղավետ անդորրի գիրկը...

Երբ ես շտապով բաց արեցի դուռը ու ինձ ներս գցեցի՝ պատրաստ այն ետևիցս փակելու, այդժամ Ֆրանց Քրոմերը ինձ հետ գրեթե միաժամանակ ներս սողոսկեց: Սառը, մթամած սալահա-

տակի վրա, որ միայն բակի կողմից էր լուսավորվում, նա կանգ-նել էր իմ կողքին, հետո ձեռքս բռնեց ու ցածրաձայն չշնչաց. «Հե՛յ դու, պետք չէ այդպես շտապել...»:

Զարհուրած ես նրան նայեցի: Ձեռքս բռնելու նրա կերպը ամուր էր երկաթի հանգույն: Ես մտածում էի, ի՞նչ կարող էր լի-նել նրա մտքում և արդյո՞ք նա իմ նկատմամբ կոպտություն էր ուզում բանեցնել: Հիմա ես լոկ մի բան էի մտածում, թե հա՞րկ է որ բարձրաձայն ու ուժգին գոռայի, որպեսզի դրան ի արձա-գանքումն՝ մեկնումեկը շտապով վերևներից այստեղ հայտնվեր՝ ինձ ազատելու համար: Բայց ես ձեռք քաշեցի այդ մտքից:

- Ի՞նչ է,- հարցրեցի ես,- ի՞նչ ես ուզում:

- Շատ բան չեմ ուզում: Բայց ուզում եմ քեզ մի բան հարց-նել: Մյուսները պետք չէ իմանան այդ մասին:

- Այդպե՛ս: Էլ ի՞նչ ես ուզում, որ քեզ ասեմ: Հասկացի՛ր, ես պետք է վերև բարձրանամ:

- Ուրեմն դու գիտե՞ս,- կամացուկ հարցրեց Ֆրանցը,- թե ում է պատկանում անկյունի ջրաղացի մոտ գտնվող պտղատու այգին:

- Ո՛չ, չգիտեմ: Կարծում եմ՝ ջրաղացպանին:

Ֆրանցը ձեռքով օղակել էր ինձ և այժմ ինձ կիպ դեպի իրեն էր քաշել, այնպես որ ես ստիպված էի ամենամերձավոր մոտի-կությունից նրա դեմքին նայել: Նրա աչքերը չարությամբ էին լցված, նա ժպտում էր չարագուշակ ժպիտով, և հայացքը լի էր դառնությամբ ու կորովի իշխելատենչությամբ:

- Այդպե՛ս, պստլիկս, իսկ ես քեզ կարող եմ ասել, թե ում է պատկանում մրգատու այգին: Ես դեռ վաղուց գիտեի, որ այն-տեղից խնձորներ են գողացվել, տեղյակ էի նաև, որ այգու տե-ը ի լուր բոլորի հայտարարել էր, որ ինքը երկու մարդ կտա նրան, ով իրեն կասի, թե ով է մրգերը գողացել:

- Տե՛ր Աստված,- բղավեցի ես,- բայց դու հո չե՞ս պատրաստ-վում այդ մասին հայտնել նրան:

Ես զգում էի, որ իմ կողմից անօգուտ պիտի լիներ ազդել նրա պատվազգացողության վրա: Նա ուրիշ աշխարհից էր, նրա համար մատնություն ասած բանը հանցանք չէր: Ես դա զգում էի ամենայն հստակությամբ: Նման հարցերում «այն մյուս» աշ-խարհի մարդիկ մեզ նման չեն:

- Ոչինչ չասե՞մ,- ծիծաղեց նա:- Սիրելիդ իմ բարեկամ, ի՞նչ է, կարծում ես, թե ես դրամանե՞նգ եմ, որպեսզի ինձ համար եր-կու մարկանոց կեղծադրամներ կտրեմ: Ես մի խեղճուկրակ տղա եմ, ես քեզ պես հարուստ հայր չունեմ, և եթե ինձ հնարավորու-թյուն է ընձեռնվում երկու մարկ վաստակել, ես չպե՛տք է այն ձեռքիցս բաց թողնեմ: Գուցե նա նույնիսկ ավելին կտա:

Նա հանկարծ ինձ նորից ազատ արձակեց: Մեր տան սալահա-

տակը այլևս չէր բուրում հանգստավետ հուսալիությամբ, աշխարհը խորտակվում-փլուզվում էր իմ շուրջը: Նա ինձ կամքաստանի ու կմատնի, ես այլևս հանցագործ էի, հետո հորս էլ իմաց կանեն, գուցե նույնիսկ ոստիկանությունն էլ ժամանի: Քառասային իրարանցման բոլոր սարսափները սպառնում էին ինձ, ողջ զազրելին ու զարհուրելին այլևս իմ դեմ էր ծառացած: Այն, որ ես բնավ երբեք էլ ոչինչ չէի գողացել, այլևս ոչ մի նշանակություն չէր կարող ունենալ: Բացի այդ՝ ես նաև երդվել էի: Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ...

Արցունքները խեղդում էին ինձ: Զգում էի, որ պետք է փրկագնով ազատվել և հուսահատ անզորությամբ սկսեցի մեկ առ մեկ բոլոր գրպաններս տնտղել: Ո՛չ խնձոր, ո՛չ գրպանի դանակ, նման ոչ մի բան չկար այնտեղ: Այդ պահին իմ ժամացույցը միտքս ընկավ: Դա մի հնամենի արծաթյա ժամացույց էր, թեև չէր էլ աշխատում, ես այն կապում էի «հենց այնպես»: Այն ժառանգություն էր մնացել մեր տատիկից: Ես այն շտապով դուրս կորզեցի:

- Քրո՛մեր,- ասացի ես,- լսի՛ր, դու չպետք է ինձ մատնես, դա քո կողմից գեղեցիկ բան չի լինի: Ես ուզում եմ քեզ իմ ժամացույցը նվիրել, ահա՛ այն: Դժբախտաբար ուրիշ ոչինչ չեմ կարող առաջարկել: Դու կարող ես այն վերցնել, այն արծաթից է և լավ էլ աշխատում է, միայն մի փոքրիկ անսարքություն ունի, բայց այն կարելի է վերանորոգել:

Նա ժպտաց և ժամացույցը իր մեծդի ձեռքի մեջ առավ: Ես նայեցի այդ ձեռքին և զգացի, թե ինչ կոպիտ ու անչափ թշնամական էր այն իմ հանդեպ, թե ինչպես էր այն բռնել իմ կյանքից ու անդորրս վրդովել:

- Այն մաքուր արծաթից է,- ասացի ես ամաչկոտ վեհերոտությամբ:

- Ես թքած ունեմ քո այդ արծաթի էլ, այդ քո հնոտի ժամացույցի վրա էլ...,- նետեց նա խորը արհամարհանքով:- Շատ ես ուզում՝ ինքդ էլ այն վերանորոգման տուր...

- Բայց Ֆրա՛նց,- բղավեցի ես սարսափից դողալով, թե հանկարծ ու նա թողնի հեռանա:- Կա՛ց, մի վայրկյան ինձ լսիր... Վերցրու՛ ժամացույցը: Նա իսկապես արծաթից է, իսկական, մաքուր արծաթից: Եվ հետո, ճիշտն ասած ես ուրիշ ոչինչ չունեմ:

Նա ինձ էր նայում սառն ու արհամարհական հայացքով:

- Այսպիսով դու գիտես, թե ում մոտ եմ ես գնում: Կամ գուցե ավելի լավ կլինի հենց ուղղակի ոստիկանությանը դիմեմ, պահակային ծառայության պետին ես շատ լավ եմ ճանաչում:

Նա շրջվեց՝ գնալու մտքով: Ես թիկունքից կախվեցի նրա թեզանիքից: Դա ոչ մի կերպ չէր կարելի թույլ տալ: Ես ավելի շուտ պատրաստ էի մեռնել, քան տանել այդ ամենը, որ սպասվում էր

ինձ առաջիկայում, եթե նա այդպես թողներ հեռանար:

- Ֆրա՛նց,- հուզմունքից ես ավելի ու ավելի ջերմեռանդ էի աղերսում,- խնդրու՛մ եմ, հիմարություն մի՛ արա: Դա քո կողմից ընդամենը կատակ է, այնպես չէ՞:

- Ճիշտ այդպես, կատակ է, բայց քո վրա այն շատ թանկ կարող է նստել:

- Ասա՛ ինձ, ուրեմն, Ֆրանց, ի՞նչ կարող եմ ես անել: Ես ամեն ինչի պատրաստ եմ:

Նա ուշիուշով զննեց ինձ իր կսմթող աչքերով և շարունակեց ժպտալ:

- Դե հերի՛ք քեզ հիմարի տեղ դնես,- ասաց նա կեղծ բարեհոգությամբ:- Դու ինձանից էլ լավ գիտես, թե ես ինչ եմ ուզում: Ես կարող եմ երկու մարկ վաստակել, և ես ունևոր մեկը չեմ, որպեսզի դրանից հրաժարվեմ, ինքդ էլ գիտես: Իսկ դու հարուստ ես, դու նույնիսկ ժամացույց էլ ունես: Դու պետք է ինձ ընդամենը երկու մարկ տաս, այդ դեպքում ամեն ինչ կարգին կլինի:

Ես հասկացա նրա տրամաբանության ընթացքը: Բայց երկու մա՛րկ... Դա ինձ համար նույնքան շատ էր ու անհասանելի, ինչպես եթե խոսքը տասին, հարյուրին կամ հազարին վերաբերելիս լիներ: Ես դրամ բոլորովին չունեի: Կար մի փոքրիկ խնայատուփ, որ մայրիկիս մոտ էր պահվում, այնտեղ քեռուս այցելություններին և նման առիթներով մի զույգ տասը կամ հինգ փֆենիգանոցներ էին մեջը հայտնվում: Ուրիշ ոչինչ ես չունեի: Այդ հասակում ես դեռևս գրպանի փող չէի ստանում:

- Ես ոչինչ չունեմ,- տխուր ասացի ես:- Ես բնավ փող չունեմ: Բայց և այնպես ես ուզում եմ քեզ ամեն ինչ տալ: Ես մի հնդկական գիրք ունեմ և զինվորներ ու մի կողմնացույց: Ես ուզում եմ դրանք քեզ նվիրել:

Քրոմերի շրթունքները ցնցվեցին միայն հանդուգն չարախնդությամբ, ու նա թքեց հատակին:

- Հերի՛ք բարբաջես,- ասաց նա հրամայական շեշտով:- Քո այդ անպետք հնոտիները կարող ես քեզ պահել: Բան գտար՝ կողմնացույց... Դու երևի ուզում ես ինձ հունից հանել, այո՞, դե չուտ փողը դեսը տուր:

- Բայց ես դրամ չունեմ, ես այն երբեք չեմ ունեցել: Դրա համար էլ, ախր ես չեմ կարող ոչինչ...

- Դե ուրեմն վաղնևեթ առավոտյան դու ինձ երկու մարկ կբերես: Ես դասերից հետո ներքևում կսպասեմ՝ շուկայի մոտ: Այնպես որ՝ պատրաստ եղիր: Եթե փողը չբերես, հենց կտեսնես թե գլուխդ ինչ կբերեմ...

- Այո, բայց, Տեր Աստված, որտեղի՞ց ես այն վերցնեմ, երբ որ մի գրոշ անգամ չունեմ:

- Ձեր տանը բավականաչափ փող կա: Դա քո՛ խնդիրն է: Ուրեմն՝ մինչև առավոտ, դասերից հետո: Ես քեզ ասացի, եթե փողը չբերես...- Նա կրակոցի պես սարսափելի մի հայացք նետեց աչքերիս մեջ, մեկ անգամ էլ թքեց ու ստվերի պես անհացավ:

Ես չէի կարողանում վերև բարձրանալ: Իմ կյանքն այլևս կործանված էր: Ես լոկ այն մասին էի մտածում, որ շարունակեմ ընթացքս և բնավ երբեք ետ չվերադառնամ կամ ինքս ինձ խեղդամահ անեմ: Սակայն դրանք երբեք էլ պարզորոշ տեսանելի պատկերներ չէին: Ես նստոտեցի խավարի մեջ՝ մեր տան սանդուղքի ամենաստորին աստիճանին, կուչ եկա ինքս իմ մեջ ու հանձնվեցի գլխիս եկած դժբախտությանը: Այդ ողբալի վիճակում ինձ գտավ Լինան, երբ զամբյուղը ձեռքին ցած էր իջնում փայտ բերելու:

Ես խնդրեցի նրան այնտեղ՝ վերևներում ոչինչ չասել ու աստիճաններով բարձրացա: Ապակե դռան մոտի կախիչից կախ էին ընկած հորս գլխարկն ու մորս հովանոցը, հայրենի տունն ու քնքշությունն էին հորդում ինձ վրա բոլոր այդ առարկաներից, սիրտս ողջունում էր դրանց՝ աղերսագին երախտագիտությամբ լեցուն, ինչպես որ անառակ որդին կողջուներ հնամենի հայրենական սենյակների տեսարանն ու բույրը: Բայց այդ ամենն այժմ այլևս ինձ չէր պատկանում, այդ ամենը լուսավոր հորենական ու մայրական աշխարհն էր, և ես խորանալով թաղվել ու մեղսաշատությամբ ընկղմվել էի օտար հոսանքի մեջ, խճճվել արկածախնդրության ու մեղքի ծովում, թշնամական սպառնալիքի տակ կքած և վտանգը, վախն ու ամոթանքը գլխավերևումս առկախ: Գլխարկն ու հովանոցը, բարի ու հնամենի ավազաքարե հատակը, նախասենյակի պահարանի գլխավերևի մեծադիր պատկերը և ներսում՝ ընդհանուր սենյակից լսվող իմ ավագ քրոջ ձայնը, այդ ամենը սիրելի էր, քնքուշ ու առավել հրաշալի, քան երբևէ, բայց դա այլևս մխիթարություն չէր կամ բարեբանյալ ապահովություն, դա մի բարձրագոչ, ամենաիսկական հանդիմանություն էր: Այդ ամենն այլևս իմը չէր, ես անկարող էի այլևս մասն ունենալ այդ զվարճության ու անդորրի: Ես կեղտ էի տուն բերել իմ ոտքերին, փոխանակ դրանք խսիրի վրա մաքրելու, ես ստվերներ էի ներս բերել իմ մեջ ամփոփված, որոնց անտեղյակ էր հայրենական աշխարհը: Որքա՜ն-որքան գաղտնապահություններ էի ես առաջներում ունեցել, որքա՜ն ահ ու սարսափ, բայց այդ բոլորը խաղ ու զվարճալի կատակ էին եղել այն բանի համեմատությամբ, ինչը ես այսօր ինձ հետ այստեղ էի բերել: Ճակատագիրը հետապնդում էր ինձ, թիկունքիցս զուլգ ձեռքեր էին պարզված, որոնցից մայրս անգամ ինձ չէր կարող պաշտպանել, որոնց մասին նա չպետք է իմանար: Հիմա արդեն միևնույն էր, թե արդյոք իմ հանցանքը գողությո՞ն էր, թե՞ սուտ: Չէ՞ որ ես

կեղծ երդում էի կերել Աստծո ու Բարձրագույն Երանության առաջ: Իմ մեղքը ոչ մեկն էր, ոչ էլ մյուսը, այլ այն, որ ես սատանային էի ձեռք մեկնել: Ինչու՞ ես հետևեցի նրան: Ինչու՞ լսեցի Քրոմերին, նույնիսկ շատ ավելի հլու-հնազանդությամբ, քան հորս անգամ կանսայի: Ինչու՞ ես հորինեցի գողության մասին այդ պատմությունը՝ ինքս ինձ գոռոզամտանալով հանցագործություն արած լինելու համար, ասես քաջագործություն կատարած լինեի: Հիմա սատանան բռնել էր ձեռքիցս, հիմա արդեն թշնամին թիկունքիցս ինձ էր հետամտում:

Մի պահ ես այլևս վախ չզգացի առավոտվա գալստյան հանդեպ, այդժամ մի սարսափելի ինքնավստահություն ինձ պաշարեց, այն, որ իմ ճանապարհը այժմ առհավետ դեպի հեռուն՝ զառիթափն ու խավարն էր առաջնորդում: Ես պարզորոշ զգացի, որ իմ զանցանքին նոր օրինազանցություններ կարող են հետևել, որ իմ հարաբերությունը քույրերիս հետ, ծնողներիս տված ողջագուրանքն ու համբույրը կեղծիք էր, որ ես իմ մեջ, ներսումս մեկ այլ ճակատագիր ու գաղտնի խորհուրդ էի կրում՝ խորը թաքցրած:

Մի պահ միայն, երբ ես հորս գլխարկն էի զննում, վստահությունն ու հույսը փայլատակեցին իմ մեջ: Ես նրան ամեն ինչ կասեմ, նրա դատավճիռն ու պատիժը ինձ վրա կվերցնեմ և նրան իմ պարտակիչն ու փրկիչը կդարձնեմ: Դա մի նույնպիսի պատիժ կլինի, որպիսիք ես հաճախ եմ կրել, մի ծանր, դառնաղի ժամ, ներողամտություն հանդես բերելու մի ծանրածանր և զղջումով առլի աղերսանք՝ գթասրտություն ակնկալող:

Ի՜նչ քաղցր էր դա հնչում... Ինչպիսի՜ գեղեցկություններով գրավում... Բայց դրա մասին խոսք անգամ լինել չէր կարող: Գիտեի, որ ես դա անողը չեմ: Գիտեի, որ այժմ ես մի գաղտնիք ունեի, մի մեղք, որ միմիայն ես և մեն-մենակ պետք է կուլ տայի: Գուցե ես այս պահից սկսած ճամփաբաժանին էի կանգնած, գուցե այսուհետև առհավետ ու մշտնջենապես չարին էի պատկանելու, գաղտնիքներս չարիքի հետ պիտի կիսեի, նրանից կախված լինեի, հնազանդվեի նրան, նրա նման դառնայի: Ես տղամարդ ու հերոս էի խաղացել, հիմա պետք է դրա հետևանքները կրեի:

Ինձ համար հաճելի էր, որ հայրս, երբ ես ներս մտա, իր վերդովմունքն արտահայտեց թաց կոշիկներիս առթիվ: Դա չեղում էր նրան, ու նա չէր նկատում վատթարագույնը, և ես պետք է ընդամենը մի հանդիմանություն տանեի, որը ծածուկ թաքչատեսությամբ ես մեկ այլ բանի հետ էի զուգադրում: Միաժամանակ իմ մեջ մի նոր ու տարօրինակ զգացողություն առկայծեց, չարագուշակ ու հատու մի զգացողություն՝ անդրադարձ հակահարվածով առլի. ես ինձ հորս գերազանցողի դերում զգացի... Մի կարճ ժամանակ շարունակ ես մի տեսակ արհամարհանք էի զգում նրա

անգիտության առթիվ, խոնավ ոտնամանի վերաբերյալ նրա հանդիմանությունն ինձ էժանագին մանրուք թվաց: «Եթե միայն դու իմանայի՛ր...»,- մտածեցի ես ու մտքովս մի զուգահեռ անցավ. այն հանցագործի մասին, որին հարցաքննում էին գողացած սպիտակահացի պատճառով, մինչ նա մարդասպանության հանցանքը պետք է խոստովանելիս լիներ: Դա մի զազրելի ու տհաճ զգացողություն էր, բայց այն սաստիկ ուժեղ էր ու ծածուկ գրավչություն ուներ, այն չղթայում էր ինձ ավելի ամուր, քան իմ գաղտնիքին ու մեղքին վերաբերող ցանկացած այլ միտք: Հավանաբար, մտածում էի ես, այդ Քրոմերն այժմ ոստիկանություն է գնացել ու մատնել է ինձ, և փոթորիկն ու ամպրոպն էր ճայթում իմ գլխավերևում, երբ այստեղ ինձ հետ որպես փոքրիկ երեխայի էին վերաբերվում...

Այս ողջ արկածի ընթացքում, ինչքան որ այդ մասին մինչև այստեղ պատմվել է, ամենակարևորն ու հարմանն հենց այս պահն էր: Դա մի առաջին ցնցում-պատառոտումն էր հորս սըրբազնության վարկածի, դա առաջին կտրվածքն էր կամրջասյան, որի վրա իմ մանկական կյանքն էր հանգրվանած եղել, և որը յուրաքանչյուր ոք, նախքան որ կկարողանա իր սեփական ճան ունենալ, պետք է նախապես կործանած լինի: Այս ապրումներից ու արկածներից, որ ոչ ոք չի տեսնում, մեր ճակատագրի ներքին, հիմնական գիծն է գոյանում: Այդ կտրվածքն ու պատռվածքն աճում է վերստին, բուժվում է ու մոռացվում, բայց և ապրում է ամենաթաքուն սենյակներում՝ շարունակ արյունածորելով:

Շատ շուտով ինձ էլ սկսեց վախ պատճառել նորահայտ զգացումը, հենց միայն հանուն դրա ես պետք է հորս ոտքերը համբուրեի՝ նրա ներողամտությունը շարժելու ակնքալիքով: Բայց չես կարողանում կարևոր բաների համար ներողություն հայցել, և դա զգում ու գիտակցում է ցանկացած երեխա, նույնքան աներկբա ու ամենայն խորությամբ ինչպես ամեն մի իմաստուն:

Ես անհրաժեշտություն էի զգում մտորելու ինձ համակած խնդրի շուրջ, խորհելու՝ լույսը բացվելուն պես ճամփա ընկնելուս մասին, բայց դա ոչ մի կերպ ինձ չէր հաջողվում: Ողջ երեկոյի ընթացքում, միայնակ, մեր ճաշասենյակի փոփոխված օդին ընտելանալու խնդրով էի զբաղված: Պատի ժամացույցն ու սեղանը, Սուրբ գիրքն ու հայելին, պատին ամրացված գրադարակն ու նկարները նույնպես հրաժեշտ էին կարդում ինձ, ես պետք է սառցակալող սրտով տեսնեի, թե ինչպես էր իմ աշխարհը, իմ բարի, երջանիկ կյանքը անցյալ դառնում ու բաժանվում ինձանից, և այն զգացումն ունեցա, թե ինչպես էի ես նոր ու ամեն ինչ ներծծող արմատներով դրսերում՝ խավարի ու օտարության մեջ խարիսխ գցել ու ամրացել: Առաջին անգամը լինելով՝ ես ճաշակեցի մահը, այն դառնահամ էր, որովհետև նա էլ, ինչպես

ամեն մի նոր ծնունդ, վախ ու երկյուղ է տածում՝ հանդեպ սարսափահարույց նորացումի:

Ուրախ էի, որ վերջապես անկողնումս էի պառկած... Նախքան այդ՝ որպես քավարանի վերջին պարունակ, երեկոյան աղոթքն ինձ վիճակվեց կատարել, մենք մի երգ երգեցինք, որն իմ ամենասիրելիների թվին էր պատկանում: Բայց, ավա՜ղ, ես միասին չէի երգում, և յուրաքանչյուր հնչյունը մաղձ էր ու թույն ինձ համար: Միասին չէի աղոթում, երբ հայրս օրհնություն էր չափոգում, ու երբ նա վերջացրեց՝ «եղիր մեզ բոլորիս հետ...» ասելով, այդժամ մի ցնցում պոկեց ինձ իմ այդ շրջապատից ու հեռուն տարավ: Աստծո ողորմածությունը նրանց բոլորի հետ էր, բայց ոչ այլևս ինձ հետ: Սառույց կտրած ու խորապես հոգնած՝ ես հեռացա:

Անկողնում, ուր ես միառժամանակ պառկած էի, և ջերմությունն ու ապահով հանգստավետությունն էլ սիրալիրությամբ շրջապատել էին ինձ, իմ սիրտը մեկ անգամ էլ ետ վերադարձավ դեպի վախի ոլորանները, վեհերոտ տրոփեց անցած-գնացած պատահարի կապակցությամբ: Մայրս, ինչպես միշտ, ինձ բարի գիշեր մաղթեց, նրա ոտնաձայնը դեռ արձագանքում էր սենյակում, նրա մոմի լույսը դեռ շողարձակում էր դռան ճեղքի մեջ: Հիմա, մտածեցի ես, շուտով նա նորից ետ կդառնա. նա ինչ-որ բան զգացել էր, հիմա ինձ կհամբուրի ու հարցուփորձ կանի, սիրալիր ու ներողամիտ հարցեր կտա, այնուհետև ես լաց կլինեմ, հետո քարը կհալչի կոկորդումս, հետո ես կգրկեմ նրան ու ողջը կպատմեմ, ապա ամեն ինչ լավ կլինի, հետո վրա կհասնի փրկությունը... Եվ երբ դռան ճեղքը արդեն խավարով էր պատվել, ես դեռ միառժամանակ ականջ դրեցի՝ կարծելով, թե դա անպայման պետք է տեղի ունենար:

Հետո ես վերադարձա ինձ պաչարած պատահարին ու նայեցի թշնամուս աչքերի մեջ: Ես պարզորոշ տեսա, որ նա կկոցել էր մի աչքը, նրա բերանը ժպտում էր կոպիտ, և մինչդեռ ես զննում էի նրան ու խժռում իմ միջի անխուսափելին, նա ավելի ու ավելի մեծ ու ատելի էր դառնում, նրա չար աչքը փայլատակում էր սատանայակերպ: Նա կիպ իմ կողքին էր ծվարած, մինչև որ վերջապես քուն մտա. երազումս ես ոչ նրան տեսա, ոչ էլ այս օրը, երազիս մեջ մենք լողում էինք նավակում՝ ծնողներս, քույրերս ու ես, և մեզ լիուլի շրջապատել էր տոնական օրվա խաղաղությունն ու փայլը: Գիշերվա կեսին արթնացա, դեռ զգում էի երանության հավելահամը, դեռ տեսնում էի ինչպես էին արևի շողերի ներքո փայլփլում քույրերիս ամառային զգեստները և այդ կատարյալ դրախտից գահավիժեցի ետ դեպի իրականություն ու նորից կանգնած էի չար աչքով թշնամու դեմ-հանդիման:

Առավոտյան կողմ, երբ մայրս շտապով եկավ ու ձայն տվեց,

արդեն ուշ էր և չգիտես ինչու ես դեռ անկողնում էի՝ այլայլված տեսքով, ու երբ հարցրեց, թե արդյոք ինձ հետ մի բան է պատահել, ես սիրտս թափեցի:

Դրանով կարծես ես շահեկան վիճակում հայտնվեցի: Ես շատ էի սիրում փոքր-ինչ հիվանդ ձևանալ ու կարելիությունն ունենալ առավոտյան կողմ երկար ժամանակ երիցուկի թեյի հարևանությամբ պառկած մնալ, ականջ դնել, թե ինչպես էր մայրիկը մաքրում հարևան սենյակը, ինչպես էր Լինան նախասենյակի շեմին մսագործին դիմավորում: Միջօրեն առանց դպրոցի՝ մի տեսակ կախարդական ու հեքիաթային բան էր, այդժամ արևը խաղում էր սենյակում, բայց դա այն նույն արևը չէր, որի առաջ դպրոցում կանաչ վարագույրներն են իջեցնում: Սակայն դա էլ հիմա դուրեկան չէր ու կեղծ հնչերանգ էր ձեռք բերել:

Ա՜խ, երանի թե մահանայի... բայց ես ընդամենը փոքր-ինչ վատառողջ էի, ինչպես դա հաճախ էր պատահում, ո՛չ ավել, ո՛չ պակաս: Այն պաշտպանում էր ինձ դպրոցից, բայց ոչ մի կերպ չէր պաշտպանում Քրոմերից, որը ժամը տասնմեկին շուկայի դիմաց ինձ էր սպասելու: Մայրիկի սիրալիրությունն էլ այս անգամ մխիթարիչ չէր, այն դժվարակիր էր ու ցավեցնող: Ես նորից քնելուն հարմար դիրք ընդունեցի ու մտքերի մեջ ընկա: Ոչինչ չէր օգնում, ես պետք է ժամը տասնմեկին շուկայում լինեի: Այդ պատճառով ժամը տասին կամացուկ վեր կացա և ասացի, որ ինձ կրկին լավ եմ զգում: Դա նշանակում էր, ինչպես սովորաբար նման դեպքերում էր լինում, որ ես կամ պետք է նորից անկողին մտնեի կամ էլ հնարավոր է ետկեսօրին դպրոց գնայի: Ասացի, որ հաճույքով դպրոց կգնայի: Ես մի ծրագիր էի հղացել:

Առանց փողի ես չպետք է Քրոմերին ներկայանայի: Պետք էր փոքրիկ խնայատուփը ձեռք գցել, այն, որ ինձ էր պատկանում: Նրանում բավականաչափ փող չկար, ես այդ գիտեի, եղածը շատ քիչ էր, բայց այն, համենայնդեպս, ինչ-որ բան էր, և բնազդն ինձ հուշում էր, որ չեղածից ամեն դեպքում ավելի լավ էր, դե գոնե Քրոմերը ինչ որ ձևով կբավարարվեր:

Տրամադրությունս շատ վատ էր, երբ գուլպաներս հագիս սողոսկեցի մայրիկիս սենյակը ու նրա գրասեղանից խնայատուփս վերցրի, բայց համենայնդեպս երեկվանից ավելի վատ չէր: Սրտի տրոփյունը խեղդում էր ինձ, և ինձ ավելի լավ չզգացի, երբ ներքևում՝ սանդղավանդակին կանգնած միջոցին, առաջին զընումից հայտնաբերեցի, որ խնայատուփը փակ էր: Այն կոտրելով բացելը շատ հեշտ էր, բավական էր միայն թիթեղյա վանդակաշերտը պատռելով բաց անել, բայց պատռվածքն ամեն դեպքում ցավեցնող էր ու նշան իմ կողմից կատարված գողության: Մինչ այդ ես միայն քաղցրեղեն էի ծածուկ թռցնում ու անուշ անում, կամ մրգեղեն: Հիմա ես գողություն էի արել, թեև այն իմ սեփա-

կան փողն էր: Զգում էի, թե ինչպես էի ես մի քայլ ևս մոտեցել Քրոմերին ու նրա աչխարհին, ինչպես էի հանդարտաքայլ ու աստիճանաբար դեպի ցած գլորվում՝ չնայած իմ համառ հակառակությանը: Ասես սատանան ինձ հետևելիս լիներ, այլևս ետդարձի ոչ մի ճանապարհ չկար: Վախվորած՝ ես փողն էի հաչվում, խնայատուփի մեջ մետաղադրամներ էին զնգզնգում, դրանք ձեռքի մեջ ունենալն ավելի քիչ տառապանք էր պատճառում: Եղածը վաթսունհինգ փֆենիգ էր: Ես խնայատուփը թաքցրեցի ներքևի միջանցքում, փողը ամուր սեղմեցի ափիս մեջ ու տանից դուրս եկա, մեկ այլ կերպ ու այլ տրամադրությամբ, քան որ առաչներում էի դարպասներից դուրս գալիս: Վերևից ինչ-որ մեկը ետևիցս ձայնեց, գոնե ինձ այդպես թվաց: Ես չտապ դուրս թռա ու ճողոպրեցի:

Դեռ շատ ժամանակ կար, զարտուղի ճանապարհներով ես ճողոպրում էի քաղաքի փոփոխված նրբանցքներով, աներևույթ ամպերի տակով՝ դեպի առաջ, ինձ նայող տների և ինձ կասկածամտորեն զննող մարդկանց կողքով: Ճանապարհին մտաբերեցի, որ դպրոցական ընկերներիցս մեկը մի անգամ կենդանիների չուկայում մի թալեր էր գտել: Տենչանքով աղաչեցի, որ Աստված ինձ էլ հրաչքով մի այդպիսի հայտնագործության բախտին արժանացներ: Բայց ես այլևս իրավունք չունեի աղերսելու: Նույնիսկ դրանից հետո էլ խնայատուփը վերստին չամբողջացավ ու չլցվեց:

Ֆրանց Քրոմերը ինձ հեռվից տեսավ, դանդաղ մոտեցավ ինձ և կարծես վրաս ուչադրություն չէր էլ դարձնում: Կողքիս հայտնվելով, նա ինձ հրամայական նչան արեց, որ հետևեմ իրեն, և, առանց նույնիսկ մեկ անգամ ետ նայելու, հանգիստ շարունակեց առաջ ընթանալ՝ ծղոտածածկ նրբանցքով դեպի ցած, ապա և կամրջակով անցավ, մինչև որ կանգ առավ վերջին տնակների մոտ՝ մի նոր չինության առաջ: Այնտեղ աչխատանքներ չէին տարվում, պատերը մերկ կանգնած էին՝ առանց դուռ ու լուսամուտների: Քրոմերը չուրջը նայեց ու դռնից ներս մտավ, ես էլ նրա հետևից: Նա պատի ետևն անցավ, ինձ նչան արեց դեպի իր կողմը և ձեռքը պարզեց:

- Բերեցի՞ր,- սառը հարցրեց նա:

Ես գրպանիցս դուրս կորզեցի բռունցքված ձեռքս և պարունակությունը թափահարեցի նրա հարթ ափի մեջ: Նա այն հաչվեց, նախքան վերջին հնգանոցը դեռ կզրնգար:

- Այստեղ վաթսունհինգ փֆենիգ է,- ասաց նա ու ինձ նայեց:

- Այո,- ասացի ես վախվորած:- Սա այն ամենն է, ինչ ես ունեմ, գիտեմ՝ շատ քիչ է: Բայց դա է ամբողջը: Ավելին ես չունեմ:

- Ես քեզ խելահասի տեղ էի դրել,- գրեթե բղավեց նա մեղմ,

բայց հանդիմանական հնչերանգով:- Ազնվայրերի միջև պետք է կարգուկանոն լինի: Ես քեզանից ավելին չեմ պահանջում, դու հո գիտես: Քո այդ գրոշները կարող ես քեզ պահել... Այն մյուսը, դու գիտես, ում նկատի ունեմ, չի էլ փորձի ինձ հետ սակարկել: Նա միանգամից կվճարի:

- Բայց սա այն ամենն է, ինչ ես ունեմ... Դա իմ ողջ խնայողությունն էր:

- Դա քո գործն է: Բայց ես չեմ ուզում քեզ ապերջանիկ դարձնել: Դու դեռ ինձ պարտք ես մնում մեկ մարկ և երեսունհինգ փֆենիգ: Ե՞րբ կստանամ այն:

- Օ, դու այն հաստատ կստանաս, Քրոմեր: Հիմա չգիտեմ, գուցե շուտով ավելին ունենամ, վաղը կամ մյուս օրը: Դու հասկանու՞մ ես, որ այդ մասին ես չեմ կարող հորս ասել:

- Դա ինձ չի վերաբերում: Ես չեմ ուզում քեզ հատուկ վնաս պատճառել: Ես կարող էի իմ փողը դեռ մինչև կեսօր ստանալ, ես աղքատ եմ: Դու գեղեցիկ զգեստներ ունես և կեսօրին ավելի համեղ բաներ ես ուտում, քան ես: Բայց ես ոչինչ չեմ ուզում ասել: Ես դեռ մի քիչ էլ կարող եմ սպասել: Վաղը չէ մյուս օրը ես քեզ կսուլեմ, ետկեսօրին, հետո դու խնդիրը կկարգավորես: Դու ճանաչում ես իմ սուլոցը:

Նա ցուցադրաբար սուլոց արձակեց, մի բան, որը ես հաճախ էի լսել:

- Այո,- ասացի ես,- գիտեմ:

Նա հեռացավ, կարծես ես այլևս իրեն պատկանելիս չլինեի, մեր միջև ընդամենը մի գործարք էր կնքված, ուրիշ ոչինչ:

Դեռ այսօր էլ՝ կարծես Քրոմերի սուլոցն ինձ վախեցնելիս լինի, երբ ես այն հանկարծ նորից լսում եմ: Ես այժմ այն հաճախ էի լսում, թվում էր, թե ես այն լսել ու լսում էի միշտ և հավիտյանս հավիտենից: Ուր էլ լինեի, խաղալիս, թե աշխատելիս, ինչ մտքերով էլ տարված լինեի, ամեն ինչ վերանում էր, երբ այդ սուլոցը ինձ էր հասնում, այն, որ ինձ կախվածության մեջ էր գցում, որն այժմ իմ ճակատագիրն էր դարձել: Քնքշանուրբ ու գունագեղ աշնանային ետկեսօրներին ես հաճախ էի լինում իմ շատ սիրելի ծաղիկների մեր փոքրիկ պարտեզում, և մի տարօրինակ մղում ձայնում էր ինձ վերստին վերադառնալ անցած ժամանակների մանկական խաղերին. ես ասես մի մանկան դեր էի խաղում, կարծես մի պստլիկ լինեի, որ դեռ բարի էր ու ազատ, անմեղ և ինքնապահով: Սակայն խաղի միջոցին, միշտ սպասված ու մշտապես էլ սարսափելի, խանգարիչ ու հանկարծահաս, մի ինչ-որ տեղից հնչում էր քրոմերյան սուլոցը, կտրելով թելը, խորտակելով երևակայական պատրանքները: Այդժամ ես պետք է հեռանայի, իմ կեղեքիչին վատթար ու ատելի վայրերում հետե-

վեի, նրան հաշվետվություն ներկայացնեի ու նա էլ ինձ փողի մասին հիշեցներ: Այդ ամբողջը գուցե մի քանի շաբաթներ ձգվեց, բայց ինձ թվում էր, թե տարիներ էին տևել, մի ողջ հավերժություն: Փող հազվադեպ էր ձեռքս ընկնում, պատահածն էլ՝ հինգանոց կամ մանր-մունր գրոշներ էին, որ թռցրած էի լինում խոհանոցի սեղանից, երբ Լինան շուկայի կողովը այնտեղ էր թողած լինում: Ամեն անգամ ես Քրոմերի կշտամբանքներին ու արհամարհական հայհոյանքների տարափին էի արժանանում: Այդ ե՛ս էի, որ խաբել էի նրան և ուզում էի նրան զրկել իր օրինական իրավունքից, ե՛ս էի, որ կողոպտել էի նրան, ե՛ս էի, որ նրան ապերջանիկ էի դարձրել... Կյանքումս երբեք նեղություն այնպես խորը իմ սիրտը չէր սողոսկել, ես երբեք ավելի մեծ հուսահատության մեջ չեմ եղել, ավելի մեծ կախվածություն զգացել:

Խնայատուփը լցրեցի դրոշմանիշներով ու նորից տեղը դրեցի, ոչ ոք այդ մասին հարձուփորձ չարեց: Բայց դա էլ ամեն օր կարող էր գլխիս կոտրվել: Քրոմերի կոպտատաչ ու զիլ սուլոցից առավել, հաճախ ես վախենում էի մայրիկից, երբ նա կամացուկ ինձ էր մոտենում, գուցե գալիս էր ինձ խնայատուփի՝ մասին հարցնելու:

Քանի որ ես հաճախ էի առանց փողի հայտնվում իմ սատանայի առաջ, նա էլ սկսում էր ինձ զանազան ձևերով տանջել ու օգտագործել: Ես պետք է նրա համար աշխատեի: Նա իր հոր համար հաճախորդներ էր հոգում, հիմա այդ գործում ես պետք է փոխարինեի նրան: Կամ նա ինձ ծանր ու դժվարին հանձնարարություններ էր տալիս, տասը բոպե շարունակ մեկ ոտքի վրա ցատկոտել, անցնող-դարձողների զգեստներին խծբծված թղթի կտորտանք կպցնել: Երկար գիշերներ երազիս մեջ ես շարունակ այդ տանջանքներին էի տրվում ու մղձավանջներից քրտնաթորած՝ անշարժ պառկած մնում:

Մի որոշ ժամանակ ես հիվանդացա: Հաճախ սիրտ էի թափում ու թեթև մրսածություն ունեի, գիշերներ էի լուսացնում քրտինքի ու ջերմի մեջ: Մայրս զգում էր, որ ինչ-որ բան այն չէր, շատ ժամանակ կողքիս էր լինում իմ տառապանքների մեջ, որն ինձ ցավ էր պատճառում, քանի որ ես չէի կարող նույն անկեղծ սրտացավությամբ պատասխանել նրան:

Մեկ անգամ երեկոյան, անկողնումս պառկած միջոցին, նա ինձ մի կտոր շոկոլադ բերեց: Դա հիշեցնում էր այն վաղեմի ժամանակները, երբ երեկոները, երբ ես ազնիվ էի ու առաքինի, հաճախ քնելուց առաջ նման սփոփիչ պատառներ էի ստանում: Հիմա նա կանգնած էր իմ դիմաց ու ինձ էր պարզում շոկոլադի կտորը: Դա այնքան ցավալի էր ինձ համար, որ ես միայն գլուխս կարող էի տարուբերել: Նա հարցրեց, ինչի կարիքն ունեմ, հետո մազերս շոյեց: Ես կարողացա միայն արտաբերել. «Ոչինչ: Ոչինչ:

ես ոչինչ չեմ ուզում»: Նա շոկոլադը դրեց գիշերասեղանին ու գնաց: Երբ մյուս օրը ուզեցավ ինձ նորից հարցափորձ անել, ասացի, որ ոչինչ էլ չի պատահել: Մի անգամ նա բժիշկ բերեց ինձ մոտ, որն հետազոտեց ինձ և առավոտները սառը լվացումներ նշանակեց:

Այն օրերին իմ վիճակը խելացնորության պես մի բան էր: Մեր տան կարգուկանոնված խաղաղության մթնոլորտում ես ապրում էի երկյուղած ու ճնշված, ինչպես մի ուրվական, չէի մասնակցում մյուսների կյանքին, միայն հազվադեպ էր պատահում, որ գոնե մեկ ժամով մոռանայի ինձ: Հորս հանդեպ, որն ամեն անգամ ինձ գրգռելով՝ խոսակցության մեջ էր ներքաշում, ես փակ էի ու սառը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԿԱՅԵՆ

Տառապանքներից ձերբազատվելու փրկությունը բոլորովին մի անսպասելի կողմից եկավ, ու նրա հետ միաժամանակ ինչ-որ նորություն մտավ իմ կյանքում, որ մինչև օրս դեռ շարունակում է իր ազդեցությունը գործել:

Մեր լատինական դպրոցում բոլորովին վերջերս մի նոր աշակերտ հայտնվեց: Նա մի ունևոր այրու որդի էր, որ մոր հետ մեր քաղաքն էր տեղափոխվել և թևքին սգո ժապավեն էր կրում: Նա ավելի բարձր դասարան էր հաճախում, քան ես և մի քանի տարով ինձանից մեծ էր, սակայն նա իմ աչքից էլ չվրիպեց, ինչպես բոլորի: Այդ արժանահիշատակ աշակերտը կարծես ավելի մեծահասակ լիներ, քան արտաքուստ երևում էր, ոչ ոքի վրա նա երեխայի տպավորություն չէր թողնում: Մեր մեջ՝ մանկահասակ երեխաներիս շրջապատում, նա իրեն օտարի ու հասուն տղամարդու նման էր պահում, ավելին՝ որպես մի պարոնորդի: Նա սիրված չէր, խաղերին չէր մասնակցում, առավել ևս՝ ծեծկռտուքներին, և սակայն ուսուցիչների նկատմամբ նրա սեփական արժանապատվությամբ աչքի ընկնող ու վճռական կեցվածքը մյուսների լուռ հավանությանն էր արժանանում: Նրան կոչում էին Մաքս Դեմիան:

Օրերից մի օր էլ այնպես եղավ, ինչը մեր դպրոցում ժամանակ առ ժամանակ պատահում էր, որ ինչ-ինչ պատճառներով մի երկրորդ դասարան ևս տեղակայվեց մեր անչափ մեծ դասասենյակում: Դա Դեմիանի դասարանն էր: Մենք՝ փոքրերս, աստվածաշնչյան պատմություն էինք անցնում, մեծահասակները պետք է շարադրություն գրեին: Մինչ մեր գլուխը Կայենի ու Աբելի պատմությունն էին մտցնում, ես շարունակ Դեմիանի կողմն էի

նայում, որի դեմքն ինձ մի առանձնահատուկ շլացում էր պատճառում. նայում էի այդ խելացի, լուսավոր, հստակ գծագրված դեմքին՝ ուշիուշով և ոգեշնչվածությամբ իր աշխատանքի մեջ խորասուզված. նա բնավ առաջադրանք կատարող աշակերտի տեսք չուներ, այլ ասես մի հետազոտող լիներ, որ իր սեփական խնդիրներն էր պրպտում: Ճիշտն ասած՝ նա ինձ համար հաճելի մեկը չէր, ընդհակառակը, ես նրա նկատմամբ ինչ-որ խորշանք էի զգում, նա ինձ համար չափազանց խոհուն էր ու սառը, իմ չափանիշներով նա իր էությամբ վստահաբար գրգռիչ էր ու վանող, նրա աչքերը մեծահասակի արտահայտություն ունեին՝ այն, որ երեխաներին չեն սիրում, փոքր-ինչ տխրամած՝ հեգնանքի առկայծումներով: Սակայն ես ասես ակամա անընդհատ նրան էի նայում, թող որ նա ինձ համար սիրելի կամ ցավեցնող լիներ: Հազիվ միայն մեկ անգամ նա իմ կողմը նայեց, ես վախեցած հայացքս մի կողմ շրջեցի: Երբ այսօր ինքս ինձ մտածում եմ, թե որպես աշակերտ ինչպիսի տեսք ուներ նա այն ժամանակ, կարող եմ ասել. նա բոլոր առումներով մյուսներից տարբեր էր, կատարելապես ինքնատիպ ու անհատականությամբ դրոշմակնքված, այդ պատճառով էլ աչքի էր զարնում, չնայած ամեն ինչ անում էր աչքի չընկնելու համար, հագնվում և իրեն պահում էր որպես ծպտյալ արքայազն, որ հպատակ գեղջուկ տղաների մեջ էր ընկել և ջանք ու եռանդ չէր խնայում նրանց նման երևալու համար:

Դպրոցից տունդարձի ճանապարհին նա գալիս էր իմ ետևից: Մինչ մյուսները անցնում էին կողքովս, նա հասավ ինձ և ողջունեց: Նրա այդ ողջույնը նույնիսկ, թեև դրանում ևս նա մեր դպրոցական երեխաներին էր նմանակում, այնպես մեծահասակավարի էր ու քաղաքակիրթ:

- Մի քիչ միասին չքայլե՞նք,- ասաց նա բարեկամաբար: Ես կեղծավոր շոյվածություն խաղացի ու գլխով արի: Ապա նրան նկարագրեցի, թե որտեղ եմ ապրում:

- Ա՛խ այնտեղ,- ասաց նա քմծիծաղ տալով:- Այդ տունը ես կարծես թե ճանաչում եմ: Ձեր տան մուտքի դռան վերևում մի զարմանահրաշ բան է ամրացված, որն ինձ անմիջապես էլ հետաքրքրեց:

Ես նույնիսկ չհասկացա, թե նա ինչը նկատի ուներ և զարմացա, որ նա մեր տունը կարծես ավելի լավ գիտեր, քան ես: Իրոք, դարպասի կամարի վերնամասում զինանշան հիշեցնող մի գլխաքար կար, սակայն ժամանակի ընթացքում այն մաշվել էր ու հաճախ ներկ էր քսվել վրան, որքան գիտեի այն ոչ մի կապ չուներ մեր և մեր ընտանիքի հետ:

- Ես այդ մասին ոչինչ չգիտեմ,- ամոթխած ասացի ես:- Դա կարծես թռչուն լինի կամ դրա նման մի բան, այն պետք է որ շատ հին լինի: Տունը կարծեմ առաջներում վանքին է պատկա-

նելիս եղել:

- Շատ հնարավոր է,- գլխով արեց նա:- Մի անգամ ուշադիր նայիր: Նման բաները հաճախ շատ հետաքրքրական են լինում: Կարծում եմ պատկերվածը ճուռակ է:

Մենք շարունակեցինք քայլել, ես շատ էի շփոթված: Հանկարծ Դեմիանը ծիծաղեց, կարծես ինչ-որ զվարճալի բան հիշելով:

- Ախ հա՛, ես ներկա էի ձեր այդ դասին,- աչխույժով ասաց նա:- Կայենի պատմությունն էր, որը ճակատին նշան էր կրում, այնպես չէ՞: Ինչպե՞ս էր, քեզ դուր եկա՞վ:

Ոչ, ինձ շատ հազվադեպ է մի բան դուր գալիս այն ամենից, ինչը մենք պարտավոր ենք սովորել: Բայց ես չհամարձակվեցի այդ մասին ասել, կարծես մեծահասակ մեկը ինձ հետ խոսելիս լիներ: Ասացի, որ այդ պատմությունն ինձ շատ է դուր գալիս:

Դեմիանը թփթփացրեց ուսիս:

- Սիրելիս, դու կարող ես ինձ հետ անկեղծ լինել: Բայցևայնպես այդ պատմությունը իսկապես շատ զարմանահրաչ է, կարծում եմ շատուշատ ուրիշներից ավելի զարմանահրաչ, որ հանդիպում են դասերի ընթացքում: Ուսուցիչը նրա մասին շատ բան չասաց, միայն այն սովորական բաները՝ Աստծու և մեղքի մասին: Ես կարծում եմ...,- այստեղ նա կանգ առավ, ժպտաց ու հարցրեց.-Բայց արդյո՞ք դա հետաքրքիր է քեզ:

- Այսպես ուրեմն, ես կարծում եմ,- շարունակեց նա,- Կայենի այդ պատմությունը կարելի է նաև բոլորովին այլ կերպ հասկանալ: Շատ բաներ, որ մեզ ուսուցանում են, անշուշտ լիովին ճշմարիտ են ու արդարացի, բայց նրանց բոլորին կարելի է նաև այլ կերպ նայել, քան որ ուսուցիչներն են դա անում, այդժամ դրանք հաճախ շատ ավելի իմաստալից են լինում: Օրինակ, այդ Կայենին ու նրա ճակատին եղած նշանին տված մեկնաբանությամբ, այնպես, ինչպես որ այն մեզ է մատուցվում, ըստ էության, չի կարելի գոհանալ: Դու այդպես չե՞ս կարծում: Այն, որ վեճի պահին մեկը կարող է իր եղբորը սպանել, իսկապես էլ կարող է պատահել, և այն, որ դրանից հետո կարող է վախ ընկնել նրա սիրտը, այնպես որ նույնիսկ զղջա իր արածի համար, դա՝ էլ է հնարավոր: Բայց որ նա իր փոքրոգության, երկչոտության դիմաց հատուկ մի շքանշանով պարգևատրվելու պատվին արժանանա, ճիշտն ասած տարօրինակ, չլսված-չտեսնված բան է:

- Անշուշտ,- ասացի ես հետաքրքրված. խնդիրը սկսեց ինձ գրավել:- Բայց ինչպե՞ս կարելի է այդ պատմությունը այլ կերպ բացատրել:

Նա թփթփացրեց ուսիս:

- Շատ պարզ: Այն, ինչը առկա էր և ինչից պատմությունը սկզբնավորվեց, նշանն էր: Կար-չկար մի մարդ, որն ինչ-որ բան ուներ իր դեմքին, որ մյուսներին վախեցնում էր: Նրանք չէին

համարձակվում դիպչել նրան, նա պատկառանք էր ներշնչում մյուսներին, նա և նրա երեխաները: Գուցե, թե իրականում ոչ մի նշան էլ չկար նրա ճակատին, ինչպես ասենք փոստային դրոշմակնիքի հանգույն, կյանքում այսպիսի կոպտատաշ բաներ հազվադեպ են լինում: Ավելի շուտ դա երևի թե հազիվ միայն նշմարելի սարսափազդու մի բան էր, փոքր-ինչ ավելի ընդգծուն արտահայտված ոգեղինություն ու հանդգնություն հայացքում, քան որ մարդիկ սովոր էին դրան: Այդ մարդը ուժ ուներ, նրանից պատկառում էին: Նա մի «նշան» ուներ: Դա կարելի է ցանկացած կերպ մեկնաբանել: Ընդհանրապես՝ «մարդ արարածը» միշտ էլ այն է ուզում, ինչը իրեն հարմար է գալիս ու ճիշտ է թվում: Օրինակ՝ վախ են տածում Կայենի զավակների նկատմամբ, ինչ է թե նրանք «նշան» ունեն: Սակայն, դրանով իսկ այդ նշանը բացատրում էին ոչ այն իմաստով, ինչը այն իրականում արտահայտում էր, որպես հատկանշական մի բան կամ տարբերանշան, այլ դրա ճիշտ հակառակը: Ասվում էր, որ այդ նշանով տղաները սարսափազդու են լինում, իրոք՝ նրանք հենց այդպիսին էին: Արիակամ ու բնավորությամբ օժտված անձինք մյուս մարդկանց միշտ էլ սարսափելի են թվում: Այն, որ սարսափահարույց էակների ու անվախների ցեղը վխտում է շուրջբոլորը, դա շատ անհարմար մի բան կարող էր դիտվել, և ահա այդ ցեղին մի մականուն էին կպցնում, շուրջը առասպել հյուսում, որպեսզի նրանից վրեժ լուծեին, որպեսզի իրենց պաշարած բոլոր վախերի դիմաց ինչ-ինչ անողորմ կեցվածք ընդունեին: Հասկանու՞մ ես:

- Այո՛, նշանակու՞մ է արդյոք, որ Կայենը բոլորովին էլ չար չի եղել: Եվ որ աստվածաշնչյան այդ ողջ պատմությունն ըստ ամենայնի ճշմարիտ չէ՞:

- Եվ այո՛ և ո՛չ: Նման հին-հինավուրց պատմությունները սովորաբար ճիշտ են լինում, բայց նրանք միշտ չեն այնպես դրի առնվում ու այնպես բացատրվում, ինչպես իրականում պետք է որ կատարված լինեին: Կա՛րճ, ես կարծում եմ Կայենը հրաշալի տղա էր, և լոկ այն պատճառով, որ մարդիկ վախենում էին նրանից, նրան այդ պատմությունն էին կպցրել: Այդ պատմությունը իրականում մի զտագույն բամբասանք էր, մոտավորապես այնպիսին, ինչպես որ մարդիկ են սովորաբար շաղակրատել սիրում, այս տեսանկյունից միանգամայն ճշմարիտ էր այն, որ Կայենը և նրա երեխաները իսկապես էլ մի տեսակ «նշան» էին կրում ու տարբերվում էին մարդկանց մեծամասնությունից:

Ես շատ էի զարմացել:

- Հետևաբար դու նաև կարծում ես, որ սպանության հետ կապված պատմությունը նու՞յնպես ճշմարիտ չէ,- հարցրեցի ես հուզված:

- Օ՛ ավաղ: Վստահաբար դա ճշմարիտ է: Ուժեղը սպանել էր

թուլլին: Թե արդյո՞ք սպանվածը նրա եղբայրն էր, այստեղ իրոք կարելի է նաև կասկածել: Բայց դա կարևոր չէ, վերջիվերջո բոլոր մարդիկ էլ եղբայրներ են: Այսպիսով ուժեղ մեկը սպանել էր թուլլին: Գուցե դա մի հերոսական արարք էր, գուցե ոչ: Ամեն դեպքում, սակայն, մյուս թուլլերը հիմա վախով էին լցված, նրանք բողոքի ձայն էին բարձրացնում, և երբ հարցնում էին նրանց. «Ինչու՞ դուք պարզապես նրան չեք սպանում», այդժամ նրանք չէին ասում՝ «Քանի որ մենք վախկոտներ ենք», այլ ասում էին. «Չի կարելի» կամ «մենք չենք կարող: Նա նշան ունի: Աստված է նրան այդ նշանով կնքել...»: Մոտավորապես այսպես պետք է այդ խաբեությունը ծագած լինի: - Դե ինչ, ես քեզ ուշացնում եմ: Ցտեսություն ուրեմն...

Նա թեքվեց Ալտգասսեի կողմը և ինձ մենակ թողեց, սքանչացած ու զարմացած, որպիսին ես երբևէ չէի եղել: Դեռ հազիվ էր միայն հեռացել, այն ամենը, ինչ ասել էր, ինձ կատարելապես անհավատալի թվաց... Կայենը ազնիվ մա՞րդ, Աբելը վախկո՞տ... Կայենի նշանը տարբերանշա՞ն էր... Դա անհեթեթություն էր, դա աստվածանարգություն էր ու նողկալի մի բան: Ու՞ր մնաց այդժամ բարեգութ Աստվածը: Մի՞թե նա չէր ընդունել Աբելի զոհաբերությունը, մի՞թե նա սիրելի չէր Աբելին: Ո՛չ, հիմարություն է... Եվ ես ենթադրեցի, որ Դեմիանը ուզում էր ծաղրել ինձ ու խաղ խաղալ գլխիս: Նա իսկապես որ մի անիծյալ ու խելացի տղա էր, որ կարողանում էր խոսել, բայց այդպե՞ս, օ՜ ոչ...

Համենայնդեպս ես դեռ երբեք որևէ աստվածաշնչյան կամ մեկ այլ պատմության վերաբերյալ այդքան խորհրդածած չկայի: Ու դեռ չէր պատահել, որ այդքան երկար ժամանակ այդպես լիովին մոռացած լինեի Ֆրանց Քրոմերին, մի ամբողջ երեկոյի ընթացքում: Տանը ես պատմությունը մեկ անգամ էլ ընթերցեցի: Այնպես, ինչպես որ այն Աստվածաշնչում էր գրված, կարճառոտ էր ու պարզորոշ, և անիմաստ էր նրանում մի առանձնահատուկ, ծածուկ մեկնաբանություն փնտրել: Այդժամ ամեն մարդասպան կարող էր իրեն Աստծո սիրեցյալ հայտարարել... Ո՛չ, դա անմտություն էր: Վայելչագեղը լոկ ձևն էր, որով Դեմիանը նման բաներ էր կարողանում ասել, այնպես թեթև ու գեղեցիկ, որ կարծես ամեն ինչ բնական էր և ինքնին հասկանալի, ու դեռ աչքերի միայն իրեն հատուկ այդ արտահայտությամբ:

Հաստատ ինձ հետ էլ ինչ-որ բան կարգին չէր, կարելի է նույնիսկ ասել՝ իմ ներսում կատարյալ անկարգություն էր տիրում: Ես ապրում էի լուսավոր ու մաքուր աշխարհում, ես ինքս էլ մի յուրատեսակ Աբել եմ եղել, և այժմ այնպես խորն էի խճճվել «մյուսների» մեջ, այնքան էի ընկել ու խորտակվել, և սակայն, ըստ էության, գուցե թե խնդիրը այդքան էլ այդպես չէր... Ինչպե՞ս էր հիմա վիճակը: Հանկարծ իմ մեջ մի հիշողություն փայ-

լատակեց, որը մի քանի վայրկյան շարունակ ինձ գրեթե չնչահեղձ էր անում: Այն զազրելի երեկոյան, երբ սկիզբը դրվեց իմ ներկայիս տառապանքի, և որը հետագայում շարունակվեց հորս ներկայությամբ, ես մի պահ միայն նրան, նրա լուսավոր աչխարհն ու իմաստնությունն ասես մեկընդմիշտ խորապես ճանաչած ու արհամարհած լինեի... Այո, այդժամ ինքս էլ, ես, որ Կայենն էի ու նշանն էի կրում, պատկերացրեցի, որ այդ նշանը ամոթալի չէր, դա ընդամենը մի տարբերանշան էր, և ես իմ չարությամբ ու դժբախտությամբ հորից ավելի բարձր էի կանգնած, շատ ավելի բարձր, քան բոլոր բարիներն ու հնազանդները:

Արկածը, որ այն ժամանակ վերապրեցի, բոլորովին էլ պարզ մտածումի ձևի մեջ տեղի չունեցավ, բայց և ողջը նրա մեջ էր պարփակված, դա լոկ զգացմունքների մի բոցավառում էր, արտասովոր հուզմունքի մի հուրհրատում, որ ցավ էր պատճառում և սակայն հպարտությամբ լցնում իմ սիրտը:

Ու ես ինքս ինձ առմտածեցի՝ ի՞նչ տարօրինակ եղանակով Դեմիանը խոսեց անվախների ու վեհերոտների մասին... Ինչպիսի՜ արտասովոր եղանակով նա բացատրեց Կայենի ճակատի նշանը... Ինչպե՞ս էր այդ ընթացքում բոցավառվում նրա աչքը, նրա այդ զարմանահրաշ, մեծահասակին հատկանշական աչքը... Եվ կրակոցի պես պղտոր մի զգացողություն անցավ գլխիս միջով. արդյոք ի՞նքն էլ, այդ Դեմիանը, մի յուրատեսակ Կայեն չէ... Ինչու՞ է նա պաշտպանում նրան, եթե իրեն նրա համախոհը չի զգում: Ինչու՞ այդպիսի ուժ կա նրա հայացքում: Ինչու՞ է այդպես քամահրանքով խոսում «մյուսների» մասին, այն երկչոտների, որոնք սակայն, իրականում, հեզաբարո են ու աստվածահաճ:

Իմ այդ մտքերի ծայրը ոչ մի կերպ չէր երևում: Մի քար էր ընկել ջրհորի մեջ, և այդ ջրհորը իմ երիտասարդ հոգին էր: Ու երկար, բավականաչափ երկար տևող ժամանակամիջոց Կայենի հետ կապված մարդասպանության ու նշանի այդ խնդիրը այն մեն-միակ կետն էր, որի շուրջը պտտվում էին բոլոր իմ ճանաչողական փորձերը, կասկածամտությունն ու քննադատական ոգին:

Ես նկատեցի, որ մյուս աշակերտներն էլ շատ էին տարված Դեմիանով: Կայենի հետ կապված պատմության մասին ես ոչ ոքի ոչինչ չասացի, բայց թվում էր այն ուրիշներին էլ էր հետաքրքրել: Համենայնդեպս այս ու այնտեղ լուրեր էին պտտվում այսպես կոչված «Նորի» գալստյան մասին: Եթե ես միայն այդ ամենի մասին իմանայի, դրանցից յուրաքանչյուրը մի-մի լույս կսփռեր նրա վրա, յուրաքանչյուրը ցուցանելու պես մի բան կխորհրդանշեր: Ես գիտեի միայն այն, որը և առաջինը հայտնի դարձավ, որ Դեմիանի մայրը շատ հարուստ էր: Նաև ասում էին, որ նա երբեք եկեղեցի չէր հաճախում, նույնպես և որդին:

Ոմանք կարծում էին, թե նրանք հրեաներ էին, բայց նրանք կարող էին նաև ծպտված մահմեդականներ լինել: Ապա և առասպելներ էին պատմվում Մաքս Դեմիանի մարմնական ուժի մասին: Հաստատ էր, սակայն, որ նա իր դասարանի ուժեղագույններին ու հզորներին, որոնք նրան ծեծկռտուքներին մասնակցելու էին հրահրում, հրաժարվելու դեպքում նրան վախկոտ որակելով, խստագույնս ու ամենադաժան ձևով նվաստացնում էր: Ականատեսները պատմում էին, որ Դեմիանը մի ձեռքով բռնեց մեկի վզակոթից ու ամուր սեղմեց, տղան գունատվեց ու այնուհետև ճողոպրեց և օրեր շարունակ չէր կարողանում ձեռքը գործածել: Ողջ երեկոյի ընթացքում նույնիսկ մտածում էին, թե նա մեռել էր: Ժամանակի ընթացքում ասեկոսեների մի մասը հաստատվում էր, շատերն էլ պարզապես հավատում էին դրանց իսկությանը, ամեն ինչ հուզիչ էր ու զարմանահրաշ: Այնուհետև միառժամանակ բավարարված էին լինում: Շուտով սակայն նոր լուրեր էին տարածվում աշակերտներիս շրջանում, որոնք քաջատեղյակ լինելու պես պատմում էին, թե Դեմիանը մտերմիկ հարաբերություններ ուներ աղջիկների հետ և «ամեն ինչ գիտեր»:

Այդ ընթացքում Ֆրանց Քրոմերի հետ ունեցած իմ արկածը շարունակում էր իր անխուսափելի ճանապարհը: Ես նրանից անբաժան էի, նույնիսկ այն ժամանակ, երբ նա ինձ օրերով հանգիստ էր թողնում, բայց և այնպես ես կապված էի նրան: Իմ երազներում նա ինձ հետ էր ապրում որպես թե իմ ստվերը, և ինչը որ նա իրականության մեջ ինձ արած չկար, երևակայությունս նրան անել էր տալիս երազներիս մեջ, որոնցում ես ամբողջապես նրա ստրուկն էի: Ես ապրում էի այդ երազներում (ես միշտ էլ թունդ երազող եմ եղել)՝ ավելի քան իրականության մեջ, ողջ ուժս ու կյանքս ես ի պահ էի տվել այդ ստվերներին: Երազներում հաճախ տեսնում էի, որ Քրոմերը իմ նկատմամբ կոպիտ էր վարվում, երեսիս թքում ու ծունկի էր իջնում իմ վրա, և, որ ամենասարսափելին էր, ինձ ծանր հանցագործություններ էր մղում, ավելին՝ ոչ թե դրդում էր, այլ պարզապես իր ազդեցիկության ուժով հարկադրում: Այդ երազներից ամենասարսափելին, որից ես կիսախելագար վեր էի թռչում, հորս սպանության նպատակով ծրագրված մի հարձակում էր բովանդակում: Քրոմերը սրում էր դանակն ու ձեռքս տալիս, մենք կանգնած էինք պուրակի ծառերի ետևում ու դարանակալ ինչ-որ մեկին էինք սպասում, թե ում՝ չգիտեի, բայց երբ մեկը մեզ մոտեցավ և Քրոմերը ձեռքս ցավեցնելու չափ սեղմելով ասաց, թե սա նա է՝ ում ես պետք է դանակահարեմ, պարզվեց, որ եկողը հայրս էր: Այդժամ ես քնից վեր էի թռչում:

Դրանից բացի՝ ես շարունակ Կայենի ու Աբելի մասին էի խորհրդածում, բայց ավելի հաճախ՝ Դեմիանի: Երբ նա մեկ ան-

գամ էլ կրկին ինձ մոտեցավ, դա էլ զարմանալիորեն մի երազի մեջ կատարվեց: Ես կրկին երազ էի տեսնում իմ հանդեպ բանեցրած կոպիտ վերաբերմունքի ու բռնացումների մասին, բայց Քրոմերի փոխարեն այս անգամ Դեմիանն էր, որ ծունկի էր իջել իմ վրա. դա բոլորովին նոր բան էր և խորը տպավորություն թողեց: Այն ամենը, ինչը ես Քրոմերի դեպքում որպես տառապանք ու դիմադրություն էի կրել, նույնը, Դեմիանի պարագայում, կրում էի հաճույքով ու այնպիսի մի զգացումով, որը նույնքան երանություն էր պարունակում, որքան և վախ: Այդ երազը ես երկու անգամ տեսա, հետո Քրոմերը վերստին իր տեղը գրավեց:

Ինչը ես այդ երազներում էի վերապրել և ինչը իրականության մեջ՝ վաղուց արդեն ես անկարող էի դրանք հստակորեն իրարից զանազանել: Ամեն դեպքում, սակայն, Քրոմերի հետ իմ վատ հարաբերությունները շարունակում էին իրենց ընթացքը ու վախճանը գրեթե չէր նշմարվում, անգամ, երբ ես այդ տղային պարտք մնացած գումարը անմեղ ու մանր-մունր գողությունների գնով վերջապես հատուցեցի: Ո՛չ, հիմա նա ստույգ գիտեր այդ գողությունների մասին, քանի որ ինձ մշտապես հարցնում էր, որտեղից էր այդ փողը, և ես հիմա ավելի շատ էի նրա ձեռքում, քան երբևէ: Հաճախ նա սպառնում էր ամեն ինչ պատմել հորս, այդժամ ինձ պաշարած վախը մոտավորապես նույնքան մեծ էր լինում, որքան այն խորը զղջումը, թե ինչու այդ բանը հենց սկզբից ևեթ ինքս չէի արել: Այնուհանդերձ, ինչքան էլ ինձ համար տառապալից լիներ, ամեն ինչի համար չէ որ զղջում էի ես, գոնե ոչ միշտ, և երբեմն կարծես ինձ մի զգացում էր համակում, որ ամեն ինչ հենց այդպես էլ պետք է լիներ: Ճակատագիրն էր կախված իմ գլխավերևում, և անօգուտ էր ըմբոստանալ նրա դեմ կամ հակառակվել:

Հավանաբար, այս իրավիճակում ծնողներս էլ տառապանքի իրենց չափաբաժինն ունեցան: Իմ մեջ մի օտար ոգի էր մտել, ես այլևս չէի մերվում ու ներդաշնակում մեր հանրակցությանը, որն այնքան սրտագին էր ու մտերմիկ, և հետո հաճախ մի մոլեգին կարոտախտ էր պաշարում ինձ, ինչպես եթե կորուսյալ դրախտների մասին տենչալիս լինեի: Հատկապես մորս կողմից՝ ես ավելի շուտ որպես հիվանդի նկատմամբ վերաբերմունքի էի արժանանում, քան չարագործի, բայց թե ինչպիսին էր իրերի իրական վիճակը, ես լավագույնս կարող էի երկու քույրերիս պահվածքից տեսնել: Այդ պահվածքի մեջ, որ շատ գթառատ էր և սակայն անսահմանորեն տառապեցնում էր ինձ, պարզորոշ կերպով երևակվում էր, որ ես ասես մոլեգնած ու խելացնոր մեկը լինեի, որն իր այդ վիճակի համար ավելի շատ գանգատվելու, քան հանդիմանանքի կարիքն ուներ, մի վիճակ, ուր հենց չարն էր բնավորվել: Զգում էի, որ ինձ համար այլ կերպ էին աղո-

թում, քան առաջներում, զգում էի նաև այդ աղոթքների ապարդյունությունը: Կարոտը դեպի հոգու թեթևացումը, ճշմարիտ խոստովանության պահանջը ես զգում էի հաճախ ներքուստ այրվելով, և սակայն կանխապես ըմբռնելով, որ ո՛չ հորս, ո՛չ էլ մորս չէի կարողանալու ողջ ճշմարտությունն ասել ու բացատրել: Ես գիտեի, որ դա բարեկամաբար կընդունվեր, ինձ կխնայեին, կխղճահարվեին վրաս, կցավեին, բայց ամբողջապես չէին հասկանա, և ողջը որպես մի տեսակ ճշմարիտ ուղուց սայթաքում կդիտվեր, մինչդեռ այն ընդամենը ճակատագիր էր:

Գիտեմ՝ շատերը չեն հավատա, որ դեռևս տասնմեկ տարին չբոլորած մի երեխա կարող էր ամեն ինչ այդպես զգալ: Այդպիսիններին ես չեմ պատմի իմ արկածի մասին: Ես այդ մասին կպատմեմ նրանց, ովքեր ավելի լավ են մարդկանց ճանաչում: Մեծահասակ մեկը, որ սովորել է իր զգացմունքների մի մասը գաղափարների վերածել, երեխայի մոտ այդ գաղափարների պակասն է զգում, ենթադրելու պես կարծելով, որ վերապրումը ևս տեղ չունի այնտեղ: Սակայն իմ կյանքում ես միայն հազվադեպ եմ այնպես խորը վերապրել ու տառապել, որքան այն ժամանակ:

Անձրևային մի օր էլ իմ տանջարարի կողմից ես կարգադրություն ստացա քաղաքային հրապարակում լինել, այնտեղ կանգնած էի հիմա ու սպասում էի, անհանգիստ ու ջղային՝ ոտքերով կոխկրտելով թաց շագանակենիների սաղարթը, որ դեռ շարունակում էր թափվել սև, ամբողջովին թաց ծառերից: Փող ես չունեի, բայց հետս նախապես պահ տված երկու կտոր թխվածք էի վերցրել, որ Քրոմերին գոնե մի բան տալ կարողանայի: Ինձ համար վաղուց արդեն սովորական էր դարձել այսպես մի ինչ-որ տեղ, մի անկյունում կանգնել ու նրան սպասել, հաճախ բավական երկար ժամանակ, ու ես դա ընդունում էի այնպես, ինչպես որ մարդս անփոփոխելին ու անհեղաշրջելին է ընդունում:

Վերջապես Քրոմերը եկավ: Նա այսօր երկար չմնաց: Մի երկու բունջքահարվածներ տվեց կողերիս, ծիծաղեց, թխվածքը վերցրեց, նույնիսկ ինձ մի չոր ծխախոտ առաջարկեց, որը ես սակայն չվերցրեցի, և սովորականից ավելի բարեկամաբար էր տրամադրված:

- Հա,- ասաց նա հեռանալիս,- չմոռանամ ասել, հաջորդ անգամ կարող ես քրոջդ քեզ հետ բերել, մեծին: Ի դեպ՝ ի՞նչ է նրա անունը:

Ես ոչինչ չհասկացա, պատասխան անգամ չտվեցի: Միայն զարմացած նրան էի նայում:

- Չե՞ս հասկանում: Քրոջդ հետդ կբերես:

- Այո... Քրոմեր, բայց դա լինելու բան չէ: Դա ես չեմ կարող, և հետո նա ինձ հետ ոչ մի տեղ չի գա:

Ես այնպես հասկացա, որ դա ևս նրա կողմից մի հերթական

կովի պատրվակ էր: Այդպես նա հաճախ էր անում, պահանջում էր մի ինչ-որ անհնարին բան, վախեցնում ինձ, նվաստացնում և աստիճանաբար բանը սակարկության հասցնում: Այդժամ ես պետք է մի քիչ փողով կամ այլ տուրքերով փրկագնվեի:

Այս անգամ նա բոլորովին այլ կերպ էր տրամադրված: Իմ մերժումի առթիվ նա նույնիսկ գրեթե չչարացավ:

- Դե ինչ,- ասաց նա վերևից,- մի քիչ մտածիր այդ մասին: Ես կուզենայի ծանոթանալ քրոջդ հետ: Դե մի անգամ դա պետք է լինի: Պարզապես մի օր դու նրան հետդ կվերցնես զբոսանքի, և ապա կհայտնվեմ ես: Առավոտյան ես քեզ կսուլեմ, հետո մենք մեկ անգամ էլ կխոսենք այդ մասին:

Երբ նա հեռացել էր, հանկարծ ես ինչ-որ բան սկսեցի հասկանալ նրա այդ ցանկության իմաստից: Ես դեռ կատարելապես երեխա էի, բայց ասեկոսեներից գիտեի այն մասին, որ տղաներն ու աղջիկները, երբ նրանք փոքր-ինչ ավելի մեծ են լինում, կարող են ինչ-ինչ խորհրդավոր, անպատշաճ ու արգելված բաներ իրար հետ անել: Եվ հիմա այսպիսով ես պետք է... շատ անսպասելիորեն դա ամբողջապես պարզ դարձավ ինձ, ի՜նչ սարսափելի էր դա... Այդ բանը երբեք չանելու իմ վճիռը անմիջապես ամուր մեխվեց ուղեղումս: Բայց թե ինչ էր դրանից հետո լինելու և ինչպես էր Քրոմերը դրա համար ինձնից վրեժ լուծելու, այդ մասին նույնիսկ չէի համարձակվում մտածել: Ինձ համար մի նոր տառապանք էր սկսվել, եղածը կարծես բավական չէր:

Անմխիթար ես քայլում էի դատարկ հրապարակով, ձեռքերս գրպանում: Նոր տառապանքներ, նոր ստրկություն...

Այդժամ մի թարմ ու խորը ձայն կանչեց ինձ: Ես վախեցա ու սկսեցի վազել: Մեկը ետևիցս ընկած՝ վազում էր, քիչ անց մի ձեռք թիկունքիս կողմից մեղմորեն գրկեց ինձ: Մաքս Դեմիանն էր:

Ես բռնված էի:

- Դու՞ ես,- ասացի ես անվստահ:- Դու ինձ այնպես վախեցրիր:

Նա նայեց ինձ, և երբեք նրա հայացքը ավելի շատ մեծահասակի չէր եղել, մտածկոտ ու խորաթափանց, որքան հիմա: Վաղուց մենք իրար հետ ոչ մի բառ չէինք փոխանակել:

- Ցավում եմ,- ասաց նա ինձ իր քաղաքավարի ու ինքնավստահ ոճով:- Բայց լսի՛ր, չի կարելի այդպես վախենալ:

- Դե հա, բայց մեկ-մեկ պատահում է:

- Երևի: Բայց տես, եթե դու ինչ-որ մեկից, որը քեզ ոչինչ չի արել, այդպես սարսափահար եղած ցնցվես, ապա այդ Մեկը մտածմունքների մեջ կընկնի: Դա կզարմացնի նրան, կշարժի նրա հետաքրքրասիրությունը: Այդ Մեկը ինքն իրեն կմտածի, որ դու տարօրինակ ձևով երկյուղած ես, հետո էլ կմտածի. այդպես լի-

նում է, երբ վախեցած են լինում: Երկչոտները միշտ էլ վախեցած են, բայց ես կարծում եմ, դու իրականում վախկոտ չես: Այնպես չէ՞: Օ՜ անշուշտ, դու հերոս էլ չես: Կան բաներ, որոնցից դու վախենում ես, կան նաև մարդիկ, որոնց նկատմամբ դու վախ ես զգում: Դա բնավ թուլատրելի բան չէ: Ո՛չ, մարդկանցից չպե՞տք է վախենալ: Ինձանից դու հո չե՞ս վախենում: Իսկ գու՞ցե...

- Օ ո՛չ, բոլորովին:

- Տեսնու՞մ ես: Ուրեմն կա՞ն մարդիկ որոնցից դու վախենում ես:

- Զգիտեմ... Թող ինձ, ի՞նչ ես ուզում ինձանից:

Նա կրնկակոխ հետապնդում էր ինձ, ես ավելի արագ-արագ սկսեցի քայլել՝ փախուստի մտքերով և զգում էի ինձ ուղղված նրա հայացքը:

- Ընդունենք թե,- նորից սկսեց նա,- որ այդպիսի բան չկա: Ամեն դեպքում դու ինձանից վախենալու կարիք չունես: Ես հաճույքով կուզենայի քեզ հետ մի փորձ կատարել, դա զվարճալի է, և դու կարող ես դրանից ինչ-որ բան սովորել, որը շատ պետքական է: Ուշադիր եղիր: Ուրեմն այսպես, երբեմն-երբեմն ես մի արվեստ եմ բանեցնում, որ մտքերի ընթերցում են անվանում: Դրանում ոչ մի վհուկություն կամ կախարդանք չկա, բայց երբ չգիտես, թե ինչպես է այն արվում, այն շատ տարօրինակ է թվում: Դրանով կարելի է մարդկանց զարմացնել, անակնկալի բերել: Հիմա մենք կփորձենք: Այսպիսով ինձ համար հաճելի է հետաքրքրվել քեզանով և հիմա կուզենայի իմանալ ինչ կա քո ներսում: Դրա համար առաջին քայլը ես արդեն կատարել եմ: Ես քեզ վախեցրեցի. դու այսպիսով երկյուղած ես: Կան ուրեմն բաներ և կան մարդիկ որոնցից դու վախենում ես: Ինչի՞ց դա կարող է առաջացած լինել: Մարդ չպետք է ոչ ոքից վախենա: Երբ Մեկից վախենում ես, պատճառն այն է, որ այդ Ինչ-որ մեկին դու քո նկատմամբ իշխանություն ես տվել: Օրինակի համար՝ մարդ մի չար բան է կատարել և ահա այն մյուսը գիտե այդ մասին, այդժամ նա իշխանություն ունի քեզ վրա: Հասկանու՞մ ես: Պարզ է, այնպես չէ՞:

Ես անօգ նայում էի նրա դեմքին, այն լուրջ էր ու խելացի ինչպես միշտ ու նաև բարյացկամ, սակայն այն ավելի շուտ խըստաբարո էր, քան նրբազգաց: Արդարադատություն կամ դրա նման մի բան կար նրանում: Ես չգիտեի ինչ էր ինձ հետ կատարվում. նա կանգնել էր իմ առաջ որպես կախարդ:

- Հասկացա՞ր,- մեկ անգամ ևս հարցրեց նա:

Ես գլխով արեցի: Ես անկարող էի որևէ բան արտաբերել:

- Այո, ասեմ քեզ, որ մտքերի ընթերցումը զավեշտական է թվում, բայց դա շատ բնական ընթացք է: Ես կարող էի քեզ, օրի-

նակի համար, բավական ճշգրտորեն ասել, թե ինչ էիր դու իմ մասին մտածում, երբ ես անցյալ անգամ Կայենի ու Աբելի մասին պատմությունն էի անում: Միայն թե դա այս խնդրի հետ ոչ մի կապ չունի: Ես նաև հնարավոր եմ համարում, որ դու իմ մասին երազ էլ ես տեսել: Բայց թողնենք դա... Դու խելացի տղա ես, շատերը այնպես հիմար են լինում... Ես ժամանակ առ ժամանակ հաճույքով եմ խոսում որևէ խելացի տղայի հետ, որի նկատմամբ վստահություն ունեմ: Դու քեզ լա՞վ ես զգում...

- Օ այո: Միայն թե ես ոչինչ չեմ հասկանում...

- Մեկ անգամ էլ դառնանք մեր զվարճալի փորձին... Մենք այսպիսով հայտնաբերեցինք. մանկիկ Զ.-ն վախեցած է, նա վախենում է ինչ-որ մեկից, հավանաբար նրա հետ մի գաղտնիք ունի, որն իրեն տհաճություն է պատճառում: Մոտավորապես ճի՞շտ է:

Կարծես երազում ես հանձնվեցի նրա ձայնին, նրա ազդեցությանը: Ես միայն գլխով էի անում: Արդյո՞ք այստեղ այն նույն ձայնը չէր խոսում, որն իմ ներսից միայն կարող էր դուրս գալ: Նա ամեն ինչ գիտե՞ր: Ամեն ինչ ավելի լավ, ավելի հստակ գիտեր, քան ես ինքս:

Դեմիանը ուժգին թփթփացրեց ուսիս:

- Ուրեմն ճիշտ է: Ենթադրությունս հաստատվում է: Հիմա մի հարց էլ կտամ ու վերջ. դու գիտե՞ս այն տղայի անունը, որն այնտեղ՝ մեր առջևից ճողոպրեց:

Ես սաստիկ վախեցա, ինձ բռնադատած գաղտնիքը գալարվում, շուռումուռ էր գալիս իմ մեջ՝ ցավեցնելով ու պղտորելով իմ ներսը, որ խուսափում էր դեպի լույսը բացվել:

- Ի՞նչ տղա: Այնտեղ ոչ մի տղա էլ չկար, ես էի միայն:

Նա ծիծաղեց:

- Դե ասա՛,- ծիծաղում էր նա,- ինչպես է նրա անունը:

Ես շշնջացի.- Դու Ֆրանց Քրոմերի՞ն նկատի ունես:

Բավարարված՝ նա ինձ գլխով արեց:

- Կեցցե՛ս, դու քա՛ջ տղա ես, մենք դեռ բարեկամներ կդառնանք: Բայց այժմ ես պետք է քեզ մի բան ասեմ. այդ Քրոմերը, կամ ինչպես է նրա անունը, վատ տղա է: Նրա դեմքն ինձ ասում է, որ ստոր սրիկայի մեկն է: Ի՞նչ կասես դրան:

- Օ՛ այո,- հառաչեցի ես,- նա վատն է, նա սատանա է: Բայց նա ոչինչ չպետք է իմանա... Աստծու սիրուն, նա ոչինչ չպետք է իմանա: Դու ճանաչու՞մ ես նրան: Նա քեզ գիտի՞:

- Միայն հանգիստ եղիր... Նա հեռու է և ինձ չի ճանաչում, ավելի շուտ՝ դեռ չի ճանաչում: Բայց ես հաճույքով կուզենայի ծանոթանալ նրա հետ: Նա ժողովրդական դպրո՞ց է հաճախում:

- Այո:

- Ո՞ր դասարան է:

- Հինգերորդ: Բայց նրան ոչինչ մի ասա: Խնդրում եմ, խնդրում, մի՛ ասա ոչինչ:

- Հանգի՛ստ եղիր, քեզ հետ ոչինչ չի պատահի: Երևում է դու ցանկություն չունես ինձ մի քիչ պատմելու այդ Քրոմերի մասին:

- Ես չեմ կարող: Ո՛չ, թո՛ղ ինձ:

Նա միառժամանակ լռեց:

- Ափսոս,- հետո ասաց նա,- մենք կկարողանայինք փորձը մի քիչ էլ առաջ մղել: Ես չեմ ուզում քեզ տանջել: Բայց դու հո վստահաբար գիտես, որ նրա նկատմամբ քո այդ վախը արդարացված չէ: Նմանօրինակ վախը մեզ ամբողջովին ջարդում-կազմալուծում է, մարդ պետք է ձերբազատվի դրանից: Դու պետք է նրանից ազատվես, եթե իսկական տղա ես ուզում դառնալ: Հասկանու՞մ ես:

- Անշուշտ դու իրավացի ես... Բայց դա լինելու բան չէ: Դու չգիտես որ...

- Դու տեսար, որ ես շատ բան գիտեմ, ավելին, քան դու կարող էիր երևակայել: Գուցե դու նրան փո՞ղ ես պարտք:

- Այո, դա էլ կա, բայց դա՛ չէ գլխավորը: Ես չեմ կարող ասել, չեմ կարող...

- Ուրեմն եթե ես քեզ այնքան փող տամ, որքան դու պարտք ես նրան, չի՞ օգնի: Ես հաճույքով այն քեզ կառաջարկեի:

- Ո՛չ, ո՛չ, խնդիրը դա չէ: Ես քեզ խնդրում եմ, այդ մասին ոչ ոքի չասես... Ոչ մի բառ... Դու ինձ կդժբախտացնես...

- Վստահի՛ր ինձ, Զինքլեր: Ձեր գաղտնիքի մասին դու ինձ գուցե ավելի ուշ կպատմես...

- Երբե՛ք, երբե՛ք,- ուժգին բղավեցի ես:

- Ինչպես կամենաս: Ես միայն ուզում էի ասել, որ ավելի ուշ գուցե դու ինձ մի քիչ ավելին կպատմես: Միայն ինքնակամ, հասկացի՛ր: Դու հո չե՞ս կարծում, որ ես էլ Քրոմերի պես կվարվեմ քեզ հետ:

- Օ՜ ոչ, բայց դու այդ մասին բոլորովին ոչինչ չգիտես...

- Բացարձակապես ոչինչ: Ես միայն շարունակ այդ մասին եմ մտածում: Ես երբեք այնպես չեմ վարվի, ինչպես Քրոմերը, հավատա ինձ: Բացի այդ՝ դու ինձ ոչինչ պարտք չես:

Մենք բավական երկար լռեցինք, հիմա ես ավելի հանգիստ էի: Սակայն Դեմիանի գիտցածները ինձ համար շարունակում էին հանելուկային մնալ:

- Հիմա ես տուն պետք է գնամ,- ասաց նա ու կտրուկ շարժումով ամուր ձգեց իր մահուդե վերարկուի կապերը:- Ես քեզ միայն մի բան եմ ուզում ասել, քանի որ մենք արդեն այդքան խորացել ենք. դու պե՛տք է ազատվես այդ տղայից... Եթե ուրիշ ոչ մի ձևով չստացվի, ապա պարզապես սպանի՛ր նրան... Եթե

դու այդ բանն անես, այն ինձ վրա տպավորություն կթողնի ու դուրեկան կլինի: Ես ինքս էլ պատրաստ եմ օգնելու քեզ:

Վախը նորից գլուխ բարձրացրեց իմ մեջ: Կայենի պատմությունը հանկարծ նորից միտքս եկավ: Սոսկանքը համակեց ինձ ու ես կամացուկ սկսեցի լաց լինել: Անչափ շատ սարսափ կար իմ շուրջբոլորը:

- Շատ լավ,- ժպտում էր Մաքս Դեմիանը:- Դե տուն գնա... Մենք այդպես էլ կանենք: Թեև սպանելը ամենահեշտ բանը կլիներ: Նման դեպքերում ամենահեշտն ու դյուրինը միշտ էլ տարբերակներից լավագույնն է: Ի դեմս քո այդ բարեկամ Քրոմերի՝ դու բնավ լավ ձեռքերի մեջ չես գտնվում:

Ես տուն եկա, ու ինձ թվաց, թե մի ամբողջ տարի դրսում էի եղել: Ամեն ինչ այլ կերպարանք ուներ: Իմ ու Քրոմերի միջև ապագայի պես մի բան էր կանգնած, հույսի պես մի բան: Ես այլևս մենակ չէի: Եվ միայն այժմ տեսա, թե որքան սարսափելիորեն միայնակ, երկար օրեր ու շաբաթներ շարունակ իմ գաղտնիքի հետ մենակ եմ եղել: Եվ անմիջապես էլ հիշեցի այն, ինչը բազմաթիվ անգամներ անցել էր իմ մտքով. ծնողներիս առաջ խոստովանությունը ինձ կթեթևացներ, բայց և ամբողջովին չէր փրկի: Հիմա ես խոստովանանքի պես մի բան արեցի մեկ ուրիշին, օտար մեկին, և փրկության նախազգացումը հոսեց իմ մեջ, ինչպես գերհզոր օդի շիթ:

Այնուամենայնիվ դեռ երկար ժամանակ չէի կարողանում վախս հաղթահարել, ես դեռ երկարատև ու սարսափելի բախումներ պետք է թշնամուս հետ ունենայի: Շատ ավելի զարմանահրաշ էր ինձ համար այն, որ ամեն ինչ այնպես խաղաղ, այդպես կատարելապես գաղտնի ու հանդարտ էր անցնում:

Մեր տան առաջ Քրոմերի սուլոցը չկար ու չկար, մեկ օր, երկու օր, երեք օր, մի ամբողջ շաբաթ: Ես նույնիսկ չէի էլ համարձակվում մտածել այն մասին, ու ներքուստ դարանակալած սպասում էի, որ նա հանկարծ, երբ արդեն իսկի չես էլ սպասում իրեն, ուր որ է կրկին առաջդ կհայտնվի: Բայց նա չկար ու չկար: Նոր ազատության նկատմամբ կասկածամտությամբ տոգորված՝ ես դեռ մինչև վերջ չէի կարողանում դրան հավատալ: Մինչև որ վերջապես մեկ անգամ Ֆրանց Քրոմերին հանդիպեցի: Նա Զայլերգասսեով ցած էր իջնում, հենց ուղիղ իմ դեմ-դիմաց: Երբ ինձ տեսավ, ամբողջ մարմնով ցնցվեց, դեմքին չփոթված ծամածռություն գոյացավ ու առանց մի բառ ասելու շուռ եկավ, որպեսզի չլինի թե ինձ հանդիպի:

Դա ինձ համար մի չլսված-չտեսնված ակնթարթ էր... Իմ թշնամին փախչում էր ինձանից... Իմ սատանան վախենում էր ինձանից... Հրճվանքն ու անակնկալը ավելի ու ավելի էին պաշարում ինձ:

Այդ օրերին Դեմիանը մեկ անգամ ևս երևաց: Դպրոցի առաջ նա ինձ էր սպասում:

- Աստծու բարին,- ասացի ես:

- Բարի օր, Զինքլեր: Ես միայն ուզում էի իմանալ ինչպե՞ս ես: Այն Քրոմերը հիմա արդեն քեզ հանգիստ է թողնում, այնպես չէ՞:

- Դու՞ ես դա արել: Բայց ինչպե՞ս: Ես բնավ ոչինչ չեմ հասկանում: Նա ընդհանրապես անհետացել է:

- Դա լավ է: Եթե նա մեկ անգամ էլ փորձի քեզ մոտենալ, կարծում եմ այդ բանը չի անի, բայց թե նա լպիրշ, հանդուգն տղա է, այդժամ նրան միայն անունս կտաս:

- Բայց ինչպե՞ս դա քեզ հաջողվեց: Դու ի՞նչ է՝ կռվե՞լ ես նրա հետ ու ծեծե՞լ:

- Ո՛չ, դա ինձ համար այնքան էլ հաճելի չէր լինի: Ես միայն խոսեցի նրա հետ, այնպես ինչպես և քո հետ, ու կարողացա նրան պարզ հասկացնել, որ իր իսկ օգուտի համար լավ կանի քեզանից ձեռ քաշի, քեզ հանգիստ թողնի:

- Օ՛, ուրեմն դու նրան փող չե՞ս առաջարկել:

- Ո՛չ, մանկիկս: Այդ ճանապարհը դու արդեն փորձել էիր:

Նա միայն խուսափուկ պատասխաններ էր տալիս, ինչքան էլ ես աշխատում էի հարցուփորձով նրանից մի բան կորզել, և նրա նկատմամբ իմ տածած այն հին ու ճնշող զգացումը ընկրկում էր ու կամաց-կամաց տեղի տալիս, մի զգացում, որ մի տարօրինակ եղանակով երախտագիտությունից ու պատկառանքից, հիացումից ու վախից, հակումից ու ներքին դիմադրությունից էր միահյուսված:

Ես մտադիր էի նրան շուտով վերստին տեսնել, ուզում էի ավելի հանգամանորեն նրա հետ ամեն ինչի մասին խոսել, նաև հենց Կայենի դեպքի մասին:

Բայց չէի կարողանում հարմար ժամանակ գտնել:

Երախտագիտությունը, ընդհանրապես, այն առաքինությունների թվին չէր պատկանում, որոնց ես հավատում էի, և այն մի երեխայից պահանջելը ինձ կեղծ էր թվում: Այսպես ես առանձնապես շատ էլ չզարմացա Մաքս Դեմիանի նկատմամբ ցուցաբերած իմ կատարյալ ապերախտության առթիվ: Ես այսօր արդեն վստահաբար հավատում եմ, որ ես կյանքի համար հիվանդ ու կործանված մեկը կլինեի, եթե նա ինձ ազատած չլիներ Քրոմերի ճանկերից: Այդ ազատագրումը արդեն այն ժամանակ էլ ես որպես իմ մանկական կյանքի ամենամեծ վերապրումն էի համարում, բայց իրեն՝ իմ ազատարարին ու փրկչին, ես անուշադրության մատնեցի, հենց որ նա այդ հրաշքը լիակատար կերպով իր ավարտին հասցրեց:

Ապերախտություն կոչվածը, ինչպես ասացի, ինձ համար

նշանակալի կամ արտասովոր մի բան չէր: Ինձ համար արտառոց էր միայն հետաքրքրասիրության այն պակասը, որ ես ցուցաբերեցի: Հնարավո՞ր էր արդյոք, որ ես հենց թեկուզ մի ամբողջ օր հանգիստ ապրել կարողանայի, առանց որ մոտենալու այն գաղտնիքներին, որոնց հետ Դեմիանն էր ինձ ծանոթացրել: Ինչպե՞ս կարող էի ես զսպել Կայենի մասին ավելին լսելու ցանկությունս ու նաև Քրոմերի, էլ չասած մտքերի ընթերցման մասին:

Դա դժվարությամբ միայն կարելի էր հասկանալ, բայց այն այդպես էլ կար: Ես հանկարծ ինձ ազատված տեսա դիվական որոգայթներից, աշխարհը նորից լուսավոր ու բարեկամաբար փռված նկատեցի իմ առջև, ես այլևս ենթակա չէի վախի հարձակումներին ու սրտի խեղդող թակոցներին: Արգելքը հաղթահարված էր, ես այլևս տանջահար արված ու անիծյալ մեկը չէի, ես նորից առաջվա պես դպրոցական մի երեխա էի: Իմ բնությունը ամենայն փութկոտությամբ վերստին փնտրտուքներին էր հանձնվել, կրկին հավասարակշռության ու հանգստի վիճակին վերադառնալ էր ձգտում, ճիգ ու եռանդ չխնայելով իրենից վանելու չատուչատ ատելի ու սպառնական բաները, ձգտելով մոռանալ դրանք: Իմ մեղսագործության ու ահաբեկվածության այդ ամբողջ երկար պատմությունը զարմանալիորեն արագ դուրս սահեց իմ հիշողությունից, առանց դույզն-ինչ երևացող սպիներ ու տպավորություններ իր ետևից թողնելու:

Այն, որ ինձ օգնողին ու փրկչիս նույնպես ես հապշտապ կարգով մոռանալ էի ձգտում, այսօր ես դա էլ եմ հասկանում: Իմ դատապարտվածության հեծեծանքների հովտից, քրոմերյան սարսափելի ստրկությունից իմ վիրավոր հոգու բոլոր մղումներով ու ողջ ուժով ես դեպի ետ սահեցի այնտեղ, ուր առաջներում երջանիկ ու բավարարված էի եղել. դեպի կորուսյալ դրախտը, որ նորից բացվեց իմ առաջ, դեպի հայրիկի ու մայրիկի լուսավոր աշխարհը, քույրերիս մոտ, դեպի անարատության մաքրամաքուր բուրմունքը, դեպի Աբելի աստվածահաճությունը:

Դեմիանի հետ իմ ունեցած զրույցի հաջորդ օրն իսկ, երբ ես վերջնականապես ու լիովին վստահ էի իմ վերագտած ազատության առիթով և ոչ մի ետընթացից այլևս վախ չունեի, ես արեցի այն, ինչը այնքան հաճախ ու կրքոտ խանդով ցանկանում էի անել. ես խոստովանեցի: Գնացի մորս մոտ, ցույց տվեցի նրան խնայատուփը, որի փականը վնասված էր և փողի փոխարեն դրոշմանիշներ էին մեջը լցված, պատմեցի նրան, թե որքան երկար ժամանակ ես իմ սեփական մեղավորության պատճառով անլուր տառապանքների էի հանձնվել: Նա ամեն ինչ չէ, որ հասկացավ, բայց տնտղեց խնայատուփը, տեսավ իմ կերպարանափոխ հայացքը, ականջալուր եղավ վերափոխված ձայնիս, զգաց, որ այլևս կազդուրված եմ ու նորից իրեն վերադարձված:

Եվ այժմ բարձր տրամադրության մեջ՝ ես իմ վերստին ընդունման, անառակ որդու վերադարձի իմ շքահանդեսն էի տոնում: Մայրիկս ինձ տարավ հորս մոտ, պատմությունը նորից կրկնվեց, հարցերն ու զարմացական բացականչությունները խռնվում էին իրար, երկու ծնողներս էլ գլուխներն էին տարուբերում ու թեթևացած արտաշնչում՝ երկար ճնշվածությունից հետո: Ամեն ինչ հիասքանչ էր, ամեն ինչ ասես վեպերում լիներ, ամեն ինչ տարրալուծվում էր հրաշափառ ներդաշնության մեջ:

Այդ ներդաշնության մեջ ես այժմ ընկղմվեցի ճշմարիտ կրքոտությամբ: Ես չէի կարող ինձ բավարարված զգալ միայն այն բանից, որ նորից վերագտել էի իմ հոգեկան խաղաղությունն ու ծնողներիս վստահությունը, մի տնաբույծ, օրինակելի երեխա էի դարձել, առավել քան երբևէ, խաղում էի քույրերիս հետ ու աղոթքի ժամին բոլորի հետ միասին երգում սիրելի ու հնամենի երգերը՝ փրկության ու դարձի գալու զգացումներով տոգորված: Այն սրտաբուխ էր, նրանում ոչ մի կեղծիք չկար:

Այնուհանդերձ բնավ էլ ամեն ինչ կարգին չէր... Այստեղ է ահա այն կետը, որով և ճշմարտապես բացատրվում է Դեմիանի նկատմամբ իմ մոռացկոտության իրական պատճառը: Ես պետք է որ նրան խոստովանած լինեի... Խոստովանությունն ըստ էության մակերեսային էր ու ինքնահանգստացնող, բայց ինձ համար ավելի սարսափելի արդյունք ունեցավ: Այժմ ես բոլոր արմատներով կառչել էի իմ նախկին, դրախտային աշխարհին, վերադարձել էի տուն ու ողորմածաբար ընդունելություն գտել: Դեմիանը սակայն ոչ մի կերպ այդ աշխարհին չէր պատկանում, չէր ներդաշնակում նրան: Նա անշուշտ Քրոմերից տարբեր էր, բայց նա էլ մի գայթակղիչ էր, նա ևս ինձ այն երկրորդ, չար ու վատթար աշխարհի հետ էր կապում, և նրա մասին ես հիմա բնավ ոչինչ չէի ուզում լսել: Ես անկարող էի ու չէի ուզում հիմա Աբելին բախտի քմահաճույքին թողնել կամ լքել նրան, Կայենին փառաբանելով օգնել, մանավանդ այժմ, երբ ինքս էլ նորից մի Աբել էի դարձել:

Այսպես էր այդ կապի արտաքին դրսևորումը: Ներքինը, սակայն, հետևյալն էր. ես ազատվել էի Քրոմերի ու սատանայի ձեռքերից, սակայն ոչ իմ սեփական ուժի ու վաստակի շնորհիվ: Ես փորձ էի կատարել թափառել աշխարհիս լայնարձակ մայրուղիներում, և նրանք ինձ համար չափազանց լպրծուն ու դյուրասահ էին եղել: Այժմ, քանի որ բարեկամական ձեռքի սատարումը ազատել էր ինձ, ես վազում էի, առանց իսկ հայացք նետելու շուրջբոլորս, վազում էի ետ դեպի մայրիկիս գիրկը, դեպի փրկությունն ու ապահովությունը՝ բոլոր կողմերից շահված ու պահված, դեպի բարեպաշտ ու հեզաբարո մանկության եզերքը: Ես ինձ ավելի փոքրիկի պես էի պահում, ավելի հնազանդ ու

կախված, ավելի մանկական, քան որ առաջ էի: Քրոմերից կախվածությունս ես պետք է մեկ ուրիշով փոխարինեի, որովհետև միայնակ առաջ ընթանալ անկարող էի ես: Այսպես իմ կույր սրտում, ես ընտրություն կատարեցի՝ կախվածությունը հայրիկից ու մայրիկից, այն հին, շատ սիրելի «լուսավոր աշխարհից», որի մասին սակայն ես հիմա գիտեի, որ միակը չէր: Եթե ես դա չանեի, ապա կկապվեի Դեմիանին, կհանձնվեի նրան: Այն, որ ես այդ բանը չարեցի, այն ժամանակ դա ինձ որպես նրա օտարոտի գաղափարների դեմ ուղղված արդարացված անվստահություն թվաց, իրականում դա այլ բան չէր, քան պարզապես վախ: Որովհետև Դեմիանը ինձանից ավելին էր պահանջում, քան ծնողներս, շատ ավելին, նա փորձում էր հրահրմամբ ու հանդիմանական հորդորներով, ծաղր ու հեգնանքով ինձ առավել ինքնուրույնություն մղել: Ախ, դա ես գիտեմ այսօր. աշխարհում ոչինչ մարդուս կամքին ավելի հակառակ չէ, քան ընթանալ այն ճանապարհով, որը նրան դեպի իրեն է առաջնորդում...

Այնուհանդերձ, մոտավորապես մի կես տարի չանցած, ես չկարողացա դիմանալ գայթակղությանը ու զրոսանքներից մեկի ժամանակ հարցրեցի հայրիկիս, թե ինչպես պետք է հասկանալ կամ վերաբերվել այն մարդկանց, ովքեր Կայենին ավելի լավն են համարում, քան Աբելին:

Նա շատ զարմացավ ու բացատրեց ինձ, որ դա մի ըմբռնում էր, որը նորություն չի կարելի համարել: Այն արդեն իսկ վաղ քրիստոնեական ժամանակներում էր ի հայտ եկել և քարոզվում էր աղանդավորների ու հերձվածողների միջավայրում, որոնցից մեկը իրեն «Կայենականներ» էր կոչում: Սակայն, բնականաբար, այդ ցնորամիտ ուսմունքը այլ բան չէր, քան սատանայի մի փորձ՝ կործանելու մեր հավատքը: Եթե ոմանք հավատում են Կայենի իրավացիությանն ու Աբելի անիրավությանը, ապա դրանից այն հետևությանն են հանգում, որ Աստված սխալվել էր, սխալ էր գործել, քանի որ, այսպիսով, Աստվածաշնչի Աստվածը ճշմարիտը և միակը չէր, այլ կեղծիք էր: Կայենականները հենց նման մի բան էին ուսուցանում ու քարոզում. սակայն այդ հերետիկոսությունը վաղուց անհետացել էր մարդկությունից և զարմանալին այն էր միայն, որ իմ մի դպրոցական ընկերը այդ մասին ինչոր ձևով տեղյակ կարող էր լինել: Համենայնդեպս հայրս լրջորեն հորդորում, համոզում էր ինձ՝ ետ կանգնել այդ գաղափարներից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

Գեղեցիկ, նրբագեղ ու հաճելի կլիներ պատմել իմ մանկության մասին, հորս ու մորս շրջապատում, այդ մեղմաքնքույշ, սիրելի ու լուսավոր միջավայրում իմ վայելած ապահովության զգացողության, մանկական սիրո, համեստ ու սակավապետ, անհոգ ապրելաձևի մասին: Բայց ինձ հետաքրքրում են միայն այն քայլերը, որ ես արել եմ իմ կյանքում՝ ինքս ինձ հասնելու նպատակով: Բոլոր գեղեցիկ հանգստավետության կետերը, երջանկության կղզիներն ու դրախտները, որոնց կախարդանքն ինձ անծանոթ չի եղել, ես մի հեռու-հեռավոր լուսափայլի մեջ եմ թողնում՝ չուզենալով վերստին ոտք դնել այնտեղ:

Այդ պատճառով էլ, քանի դեռ ես միառժամանակ իմ մանկության աշխարհում եմ մնում, ես խոսում եմ միայն այն նորի մասին, որ հաճախ այցելում էր ինձ, ինչն ինձ առաջ էր մղում՝ կտրել-տանելու պես:

Այդ մղումները միշտ այն «մյուս աշխարհից» էին գալիս, մշտապես վախ ու սարսափ բերելով իրենց հետ, բռնություն ու խղճի խայթոցներ, դրանք միշտ էլ հեղափոխական էին լինում ու խաթարում էին խաղաղությունը, ուր ես հաճույքով կշարունակեի ապրել:

Տարիներ անց՝ ես կրկին ինձ համար պետք է հայտնաբերեի, որ իմ մեջ էլ մի հինավուրց բնազդական հակում էր ապրում, որը թույլատրելի ու լուսավոր աշխարհում պետք է սողեսող տար ու թաքնվեր: Ինչպես ամեն մարդու, այդպես էլ ինձ վիճակվեց ճաշակել սեռի դանդաղ արթնացող զգացումը, որպես թշնամի ու կործանարար, որպես արգելված մի բան, որպես գայթակղություն ու մեղք: Այն, ինչին իմ հետաքրքրասիրությունն էր ձգտում, ինչը երազվում էր ինձ, հաճույք ու վախ ծնելով, սեռական հասունության այդ մեծագույն խորհուրդը, բնավ չէր ներդաշնակում իմ փայփայած մանկական խաղաղատենչ երանությանը: Ես անում էի ինչպես բոլորը: Ես երեխայի կրկնակի կյանք էի վարում, մի երեխայի, որն այլևս վաղուց դադարել էր այդպիսին լինելուց: Իմ բանականությունը ապրում էր իր տանը՝ թույլատրելիի ոլորտներում, գիտակցությունս ուրանալու պես դիմադարձ էր կանգնում դեպի վեր ճառագող ու նորովի հառնող աշխարհին: Դրա կողքին, սակայն, ես ապրում էի երազանքներում, ստորգետնյա բնույթի ձգտումներում ու տենչանքներում, որոնց վրայով գիտակցականությամբ օժտված այն մյուս կյանքը շարունակ հույժ վտանգաշատ կամուրջներ էր կառուցում, քանի որ մանկական աշխարհը փուլ էր եկել իմ մեջ: Ինչ-

պես գրեթե բոլոր ծնողները, այդպես էլ հայրիկս ու մայրիկս անհաղորդ էին մնում նոր-նոր արթնացող կենսական մղումներին, որոնց մասին երբեք չէր խոսվում: Դրանք անսպառ հոգածությամբ մղում էին տալիս միայն իրականությունն ուրանալու իմ հուսահատ փորձերին և մանկության աշխարհում բնակությունս շարունակելու իմ ցանկությանը, որ մշտապես էլ որպես խաբեություն ու կեղծիք էր պատկերանում: Ես չգիտեմ, արդյո՞ք նրանք այս հարցում ինչ-որ մասնակցություն կարող են ունենալ, սակայն ծնողներիս կողմից ոչ մի հանդիմանության չէի արժանանում: Դա իմ սեփական խնդիրն էր՝ ինքս պետք է ամեն ինչ անեի ու իմ ճանապարհը գտնեի, և ես վատ էի կատարում իմ խնդիրը, ինչպես որ բարեկիրթ ու լավ դաստիարակվածների մեծամասնությունը:

Ցուրաքանչյուր մարդ իր միջով անցկացնում է այս դժվարությունները: Միջին կարգի մարդկանց համար դա կյանքում այն կետն է, երբ սեփական կյանքի հավակնոտ պահանջատիրությունը ամենադաժան ձևով կռվի է բռնվում շրջակա աշխարհի հետ, դեպի ուր առաջնորդող ճանապարհը ահեղ կռվում պետք է նվաճվի: Շատերն են վերապրում մահը և նորի ծնունդը, որը մեր ճակատագիրն է, կյանքում միայն մեկ անգամ, մանկության զառամելուն զուգահեռ ու դանդաղ փլուզմանը տրվածության միջոցին, երբ ողջ սիրելի դարձածը մեզ լքել է ուզում և մենք հանկարծակի մեր շուրջը զգում ենք տիեզերական կառույցի մեկուսի հոգեվարքն ու մահացու սառնությունը: Շատերը մշտապես կախված են մնում այդ վտանգաշատ խութերից ու դժվարություններից, իրենց ողջ մնացյալ կյանքը կապելով ցավալիորեն անվերադարձին ու անցածին, կորուսյալ դրախտի երազանքին, որ վատթարագույնն ու ամենասպանիչն է բոլոր-բոլոր երազանքներից:

Դառնանք մեր պատմությանը: Այն զգացողություններն ու երազային պատկերները, որոնցում մանկության վախճանն է ինձ ներկայանում, բավարար չափով կարևոր չեն պատմված լինելու համար: Կարևորն այն էր, որ «խավարի աշխարհը», այն «մյուս աշխարհը» վերստին այնտեղ էր: Ինչը մի ժամանակ Ֆրանց Քրոմերն էր իրենից ներկայացնում, այն հիմա իմ մեջ էր ամփոփված: Դրանով իսկ այդ «մյուս աշխարհը», նաև դրսից ներխուժելով, կրկին իշխանություն ձեռք բերեց ինձ վրա:

Քրոմերի հետ տեղի ունեցած արկածից շատ տարիներ էին հոսել-անցել: Իմ կյանքի այն դրամատիկական ու մեղսալից ժամանակն այժմ ինձանից շատ հեռու էր մնացել և որպես թե մի կարճատև մղձավանջ ցնդել-անէացել էր: Ֆրանց Քրոմերը վաղուց էր անհետացել իմ կյանքից, այնպես որ ես հազիվ թե հատուկ ուշադրության արժանացնեի, եթե նա անսպասելիորեն իմ

դեմ ելներ: Իմ ողբերգության մյուս կարևորագույն կերպարը սակայն, Մաքս Դեմիանը, ամբողջովին չանհետացավ իմ շրջապատից: Այնուհանդերձ երկար ժամանակ նա հեռվում էր կանգնած՝ ասես ծայրամասում, տեսանելի, բայց ոչ ներգործուն հեռավորության վրա: Միայն աստիճանաբար նա կրկին մոտեցավ, նորից ուժ և ազդեցություն արտահերելու պես ճառագելով:

Ես փորձում էի մտաբերել այն ժամանակ Դեմիանի մասին իմ ողջ գիտեցածը: Մեկ տարի կամ գուցե ավելի երկար ժամանակ ես պետք է որ նրա հետ որևէ խոսք փոխանակած չլինեի: Ես խուսափում էի նրանից, նա էլ երբեք պնդերես ստիպողականություն հանդես չէր բերում: Միայն մեկ անգամ, երբ հանդիպեցինք իրարու, նա ինձ գլխով արեց: Այն ժամանակ ինձ երբեմն-երբեմն թվում էր, թե նրա բարեկամական վերաբերմունքի մեջ հեգնանքի կամ ծաղրական հանդիմանության մի ինչ-որ նուրբ հնչերանգ էր ի հայտ եկել, սակայն դա կարող էր նաև երևակայության արդյունք լիներ: Արկածը, որ ես նրա հետ միասին վերապրել էի, և այն արտասովոր ազդեցությունը, որ նա այն ժամանակ գործել էր ինձ վրա, ասես երկուսիս կողմից էլ մոռացված լինեին:

Ես փնտրում էի նրա կերպարանքը, և հիմա, երբ հիշում եմ նրա մասին, տեսնում եմ, որ այնուամենայնիվ նա այնտեղ էր և մշտապես աչքերիս առաջ: Ես տեսնում էի նրան դպրոց գնալիս, մենակ կամ էլ բարձրդասարանցիների ընկերակցությամբ, տեսնում էի որպես մի օտարի, միայնակ ու խաղաղ, որ ասես ճակատագրի բերումով շրջելիս լիներ նրանց մեջ՝ շրջապատված սեփական օդով, սեփական օրենքներով ապրելիս: Ոչ ոք չէր սիրում նրան, ոչ ոք նրա հետ մտերիմ չէր, թերևս միայն իր մայրը, որի հետ ևս նա կարծես ոչ որպես երեխա, այլ որպես թե մեծահասակ մեկը պետք է որ հարաբերվելիս լիներ: Ուսուցիչները հնարավորինս նրան հանգիստ էին թողնում, նա լավ աշակերտ էր, բայց և ոչ մեկին դուր գալ չէր ձգտում, և ժամանակ առ ժամանակ ասեկոսեների խողովակով մեր ականջին էր հասնում մի արտահայտություն, հեգնական դիտողության կամ հակաճառության պես մի բան, որը նա ուսուցիչներից մեկին պետք է հասցեագրած լիներ, որը, սակայն, տեղիք չէր տալիս նրան մարտահրավեր կարդալու կամ ծաղրանքի:

Աչքերս փակ՝ ես մտաբերում եմ ու տեսնում նրա պատկերի հայտնությունը: Որտե՞ղ էր նա: Ահա նա նորից այստեղ է: Դա պատահեց մեր տան դիմացի նրբանցքում: Այնտեղ ես նրան մի օր տեսա կանգնած, նոթատետրը ձեռքին՝ նկարելիս: Նա նկարում էր մեր տան դռան գլխավերևի թռչնի պատկերով հին զինանշանը: Ես կանգնել էի պատուհանի մոտ, վարագույրի հետևում թաքնված, ու նայում էի նրան, և խորը զարմացքով տես-

սա զինանշանին ուղղված նրա ուշադիր, սառը, պայծառացած հայացքը, դեմքը մի մարդու, հետազոտողի կամ արվեստագետի, խոհուն ու կամքով առլի, արտասովոր պայծառ, սառն ու գիտուն աչքերով:

Եվ ահա կրկին տեսա նրան: Դա քիչ ավելի ուշ կատարվեց, փողոցում. դպրոցից վերադառնալիս բոլորս խմբվել էինք տապալված մի ձիու շուրջը: Նա պառկած էր գյուղական մի սայլի առաջ, դեռևս առեղասարքին լծված, բաց ռունգերով խղճալիորեն փնչացնելով օդի մեջ՝ ինչ-որ բան էր փնտրում ու արյունածորում էր անտեսանելի վերքից, այնպես որ նրա կողքին շաղ տրված փողոցի սպիտակ փոշին դանդաղորեն իր մեջ ներծծվեց: Երբ սրտխառնուքի զգացումով երեսս շուռ տվեցի, աչքս ընկավ Դեմիանի դեմքին: Նա շատ չէր առաջացել, կանգնել էր հետևնեբրում՝ սովորականի պես ինքնավստահ ու նրբագեղ: Նրա հայացքը կարծես ձիու գլխին հառած լիներ՝ նույն այն խորունկ ու խաղաղ, գրեթե մոլեռանդ և սակայն անկիրք կենտրոնացումով: Ես պետք է բավական երկար նրան նայած լինեի, և այն ժամանակ մի ինչ-որ յուրահատուկ բան զգացի՝ դեռևս լիովին չգիտակցելով, թե ինչ: Նայում էի Դեմիանի դեմքին, և տեսա, որ նրա դեմքը երեխայական չէր, այլ տղամարդկային: Ես նույնիսկ ավելին նկատեցի, կարծես տեսա, կամ գուցե զգացի, որ այն ոչ էլ տղամարդու դեմք էր, այլև մեկ ուրիշ բան: Նրանում կարծես նաև կանացի դեմք հիշեցնող մի բան կար, հաջորդ պահին անսպասելիորեն այդ դեմքը ինձ թվաց ո՛չ տղամարդկային, ո՛չ էլ մանկական, ո՛չ ծեր կամ երիտասարդ, այլ կարծես թե հազարամյա մեկը, որպես ժամանակից դուրս գտնվող մի բան, ուրիշ-ուրիշ ժամանակային ընթացքներով դրոշմակնքված, քան որի մեջ մենք ենք ապրում: Կենդանիները կարող էին այդպիսի տեսք ունենալ կամ ծառերը, կամ աստղերը, ես չգիտեի, այնժամ գուցե ես հենց այն նույն զգացողությունը չունեցա, ինչպես որ այժմ, որպես մեծահասակ, մտածում եմ այդ մասին, այլ դրա պես մի բան: Գուցե նա գեղեցիկ էր, գուցե նա ինձ դուր էր գալիս, գուցե նույնիսկ հակակրելի էր ինձ, դա էլ հնարավոր չէր որոշակիորեն ասել: Ես միայն մի բան նկատեցի. նա մեզանից տարբեր էր, ասես մի կենդանի լիներ, կամ ոգի, կամ թե մի պատկեր, ես չգիտեմ ինչպիսին էր նա, բայց ամեն դեպքում ուրիշ կերպ էր, անասելիորեն ուրիշ, քան մենք բոլորս:

Հիշողությունն ինձ ավելին չասաց, գուցե թե նա ևս մասամբ խամրել էր ավելի ուշ ստացած տպավորություններից:

Միայն շատ տարիներ անց, երբ արդեն մեծացել էի, վերջապես կրկին անգամ նրա հետ մերձավորագույնս շփվելու բախտին արժանացա: Դեմիանը տարիքը լրանալիս, ինչպես սովորույթն ու ծիսակարգն էին պահանջում, եկեղեցուն չէր անդամագրվել, և

չատ չանցած այդ առթիվ էլ բամբասանքներ սկսեցին շրջել: Դպրոցում նորից խոսակցություններ սկսեցին տարածվել, թե նա իրականում հրեա էր, գուցե նույնիսկ՝ հեթանոս կամ կռապաշտ, մյուսներն էլ այն մտքին էին, որ նա, ինչպես և իր մայրը, ոչ մի կրոն չէին դավանում ու հետևում էին մի առասպելական, չար աղանդի: Նաև այդ նույն կապակցությամբ կարծեմ թե այն կասկածն իմ ականջին հասավ, թե նա իր մոր հետ էր ապրում՝ որպես թե իր սիրուհու: Գուցե դա այդպես էր, քանի որ մինչ այժմ նա առանց որևիցե դավանանքի էր դաստիարակվել, մի բան, որն այժմ սակայն նրա ապագայի համար կարող էր վնասակար լինել: Համենայնդեպս նրա մայրը որոշեց, թեև իր տարեկից ընկերներից երկու տարի ուշացումով, որդուն անդամագրել տալ ընդունելության ծեսին: Այնպես եղավ, որ հիմա մի քանի ամսով նա դավանաբանության առարկայի ժամերին իմ դասընկերը դարձավ:

Որոշ ժամանակ ես ինձ կատարելապես հեռու էի պահում նրանից, չէի ուզում նրա հետ գործ ունենալ, իմ պատկերացմամբ նա չափազանց շատ էր շրջապատված ասեկոսեներով ու գաղտնիքներով, սակայն ինձ առանձնապես խանգարում էր այն պարտավորվածության զգացումը, որը Քրոմերի հետ կապված դեպքից հետո իմ մեջ ետին պլան էր մղվել: Այդ ժամանակ ես հատկապես շատ էի տարված իմ գաղտնիքներով: Ինձ համար դավանաբանության դասերը ժամանակային առումով համընկան սեռական խնդիրներում վճռական լուսաբանումների հետ, և հակառակ բարի կամքի դրսևորումներիս՝ հնազանդության ուսմունքի նկատմամբ իմ նախնական հետաքրքրությունը դրանով իսկ մեծապես խանգարվեց ու վնաս կրեց: Խնդիրները, որոնց մասին խոսում էր հոգևորականը, ինձանից շատ հեռու էին գտնվում՝ մի խաղաղ, սրբազան անիրականության մեջ, գուցե նրանք շատ գեղեցիկ էին ու արժեքավոր, բայց բնավ երբեք արդիական ու հուզիչ, հակառակ դրան՝ մյուսները հենց այդպիսին էին բառիս բարձրագույն ու ամենաիսկական իմաստով:

Ինչքան որ ներկայիս իմ այս վիճակը ինձ անտարբեր էր դարձնում դասավանդվող այդ առարկայի նկատմամբ, այնքան իմ հետաքրքրասիրությունը վերստին ավելի ու ավելի էր Դեմիանին հակվում: Ինչ-որ բան կարծես մեզ իրար էր կապում: Ես պետք է հնարավորինս ճշտորեն այդ թելին հետևեի: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, դա տեղի ունեցավ վաղ առավոտյան, երբ դասասենյակում լույսը դեռ վառվում էր: Մեր կրոնի ուսուցիչը խոսում էր Կայենի ու Աբելի պատմության մասին: Ես դրան գրեթե ուշադրություն չէի դարձնում, քունը գլուխս էր և ես նրան գրեթե չէի լսում: Ահա քահանան սկսեց վերամբարձ ոճով, անթաքույց ոգևորությամբ ու բարձրաձայն խոսել Կայենի նշանի մասին: Այդ ակնթարթին ես մի տեսակ համահա-

ղորդակցության ու նախազգուշացնող հորդորի պես մի բան զգացի և հայացքս բարձրացնելով առաջին նստարաններից դեպի ինձ շրջված Դեմիանի հայացքը բռնեցի, պայծառ, խոսուն աչքերով, որոնց արտահայտությունը ինչպես հեգնական, այնպես էլ լուրջ կարող էր ընկալվել: Մի պահ միայն նա ինձ նայեց, և հանկարծ մի տեսակ գերլարված մթնոլորտում ականջովս ընկան քահանայի խոսքերը, նա խոսում էր Կայենի նշանի մասին, և իմ ներսում բուն դրած թաքուն մի գիտելիք հուշեց ինձ, որ դա այդպես չէր եղել, ինչպես նա էր սովորեցնում, որ խնդիրը կարելի էր նաև այլ կերպ հասկանալ ու մեկնաբանել, որ դրան կարելի էր քննական հայացքով վերաբերվել...

Այդ րոպեից սկսած Դեմիանի ու իմ միջև վերստին մի կապ գոյավորվեց: Տարօրինակն այն էր, որ դեռ հազիվ էր միայն միմյանց պատկանելու այդ զգացումը հոգիս պաչարել, ես այն տեսա, կարծես կախարդանքով, նաև տարածության մեջ տեղափոխված: Ես չգիտեի, նա էր արդյոք այդ բանը դասավորել, թե կատարվածը զուտ պատահականություն էր (այն ժամանակ ես դեռևս մեծ հավատ էի ընծայում պատահականություններին), մի քանի օր անց Դեմիանը հանկարծ փոխեց կրոնի դասերին իր սովորական նստատեղը և հիմա ուղիղ իմ դիմաց էր նստում (ես դեռ հիշում եմ, թե ի՜նչ հաճույքով էի առավոտ լույսով, դպրոցական դասասենյակի ճիշտ մեջտեղում, խեղճուկրակ, թշվառ գեղջուկ պատանիներով լեփլեցուն օդում թևածող նրա ծոծրակից ելնող նրբաթարմ օճառի բույրը ներշնչում...), մի քանի օր հետո նա կրկին տեղը փոխեց և հիմա կողքիս էր նստում, և այդպես էլ նստած մնաց ողջ ամեռը ու գարնան ընթացքում:

Առավոտյան ժամերը ամբողջապես կերպափոխվել էին: Նրանք այլևս քնատ չէին ու ձանձրալի: Ես հրճվում էի նրանց առթիվ: Երբեմն մենք երկուսով մեծ ուշադրությամբ լսում էինք քահանային, հարևանիս մի հայացքը բավական էր մի նշանակալի պատմություն, արտասովոր ասացվածք կամ առակ վկայակոչելու համար: Նրա մեկ ուրիշ, շատ ավելի սևեռուն հայացքը բավական էր ինձ հիշեցնելու պես հորդորելու, իմ մեջ ննջող քննադատական վերաբերմունքի թմրած ջիղն ու կասկածամտությունը գրգռելու համար:

Շատ հաճախ մենք վատ աշակերտներ էինք լինում և գրեթե չէինք մասնակցում դասին: Դեմիանը սովորականի պես քաղաքավարի էր ուսուցիչների ու համադասարանցիների նկատմամբ, ես նրան երբեք չեմ տեսել դպրոցականներին հատուկ մանկամիտ հիմարություններ անելիս, ոչ ոք երբեք չէր լսել նրան բարձրաձայն ծիծաղելիս կամ շաղակրատելիս, նա երբեք ուսուցիչների հանդիմանություններին չէր արժանանում: Բայց կամացուկ, ավելի շատ նշանների ու հայացքների լեզվով, քան թե փսփսա-

հունչ խոսքերով, մեծագույն ըմբռնողություն ցուցաբերելով՝ նա ինձ թույլ տվեց մասնակիցը դառնալու իր զբաղմունքների: Դրանք մասամբ տարօրինակ ու արտասովոր բնույթ ունեին:

Օրինակի համար՝ նա ինձ ասում էր, թե աշակերտներից որոնք են իրեն հետաքրքրում և թե ինչպես էր ինքը ուսումնասիրում նրանց: Ոմանց նա ճանաչում էր ստուգապես: Դասից առաջ ինձ ասաց. «Եթե ես քեզ մատով նշան անեմ, ուրեմն այս կամ այն մեկը մեր կողմը կնայի կամ էլ սեփական ծոծրակը կքորի», և այդպես շարունակ: Հետո դասի ընթացքում, երբ ես այդ մասին իսկի չէի էլ հիշում, Մաքսը հանկարծ իր մատի աչք ծակող շարժումով իմ կողմն էր շրջվում, ես անմիջապես մատնացույց արված աշակերտի կողմն էի նայում և ամեն անգամ, համապատասխան շարժումներ կատարելիս, ասես Դեմիանին տեսնում՝ նրան ղեկավարելիս: Ես չարչարում, հանգիստ չէի տալիս Մաքսին, նույնը նա պետք է նաև դասատուի նկատմամբ փորձեր, բայց նա հրաժարվում էր դրանից: Բայց մեկ անգամ, երբ ես դասաժամին ներկայացա ու ասացի նրան, որ այսօր առաջադրանքներս չեմ սովորել և հույս ունեմ, որ քահանան ինձ դաս չի հարցնի, այդժամ նա ինձ օգնության եկավ: Քահանան մի աշակերտ էր փնտրում, որին նա կատեխիզիսի մի հատված էր ուզում անգիր ասել տալ, և նրա թափառիկ հայացքը կանգ առավ իմ մեղսագիտակ դեմքին: Նա կամացուկ մոտեցավ, մատը իմ կողմը ուղղեց, և արդեն ուր որ է իմ անունն էր պատրաստվում արտաբերել, երբ հանկարծ իրար խառնվեց ու անհանգիստ եղավ, ծոծրակը ձեռքերի մեջ առավ, մոտեցավ Դեմիանին, որը սևեռուն նրա դեմքին էր նայում, թվաց ինչ-որ բան էր ուզում նրան ասել, սակայն անսպասելիորեն կրկին մի կողմ շրջվեց, մի քանի անգամ հազաց, հետո մեկ ուրիշ աշակերտի հարցն ուղղեց:

Միայն աստիճանաբար ես նկատեցի (մինչ այդ՝ Դեմիանի կատակները զվարճացնում էին ինձ), որ իմ բարեկամը հաճախ ինձ հետ էլ նույն խաղն էր խաղում: Այնպես պատահեց, որ դպրոցի ճանապարհին ես հանկարծ մի զգացում ունեցա, որ Դեմիանը գալիս էր իմ ետևից, ու երբ շրջվեցի, նա իրոք այնտեղ էր:

- Կարո՞ղ ես դու սակայն այնպես անել, որ մեկ ուրիշը մտածի այն, ինչ դու ես ուզում,- հարցրեցի ես նրան:

Նա պատրաստակամորեն՝ ասես դասախոսելու պես, հանգիստ ու հանգամանորեն, իր մեծահասակային ձևով պատասխանեց.

- Ո՛չ, դա անկարելի է: Մարդուս կամքն ազատ չէ, չնայած քահանան հակառակն է ասում: Ոչ ոք ի զորու չէ մտածել ինչ եմ ես ուզում, ոչ էլ ես կարող եմ մեկ ուրիշին մտածել տալ ինչը որ ես եմ ուզում: Սակայն մարդ կարող է մեկին ուշադիր զննել, և ապա հաճախ ստուգապես կարող է ասել, թե ինչ է նա մտածում կամ զգում, կարող է նաև մոտավոր ճշտությամբ նախատե-

սել, թե հաջորդ պահին ինչ է անելու: Դա շատ հեշտ է, միայն թե ոչ բոլորը գիտեն այդ մասին: Բնականաբար դա հատուկ վարժանք է պահանջում: Օրինակ՝ թիթեռների մեջ կա գիշերաթիթեռների մի տեսակ, որում էգերը ավելի հազվադեպ են պատահում, քան արուները: Թիթեռնիկները բազմանում են ճիշտ և ճիշտ նույն ձևով, ինչպես մյուս կենդանիները, արուն բեղմնավորում է էգին, որը հետո ձու է դնում: Եթե դու հիմա այդ գիշերաթիթեռներից մի էգ ունենաս (դա շատ անգամներ է փորձված բնախույզների կողմից), ապա գիշերվա ընթացքում այդ էգի մոտ կթռչեն-կգան արու թիթեռներ, անգամ մի քանի ժամվա հեռավորությունից... Ժամերի հեռավորությունից, կարո՞ղ ես պատկերացնել... Բազմաթիվ կիլոմետրերի հեռավորությունից բոլոր այդ արուները զգում են շրջապատում ապաստանած միակ էգին: Փորձում են բացատրություն գտնել դրան, բայց դա շատ դժվար է: Դա պետք է որ մի տեսակ հոտազգացողություն լինի կամ դրա պես մի բան, մոտավորապես ինչպես որ հմուտ որսկան շները աննկատելի մի հետք են գտնում ու կարողանում են խայծին հետապնդել: Հասկանու՞մ ես: Բնությունը լիքն է նման բաներով, և ոչ ոք չի կարող դրանք բացատրել: Բայց ահա թե ես քեզ ինչ կասեմ. այդ թիթեռների մեջ, եթե էգերը նույնքան հաճախ հանդիպեին, որքան և արուները, ապա վերջիններս բնավ էլ այդպիսի նուրբ հոտառություն չէին ունենա... Նրանք դրանով օժտված են լոկ այն պատճառով, քանի որ իրենք իրենց հատուկ այդ նպատակի համար են վարժեցրել: Երբ կենդանին կամ մարդը իր ողջ ուշադրությունը և ողջ կամքը մի որոշակի առարկայի վրա է կենտրոնացնում, այդժամ նա նաև հասնում է դրան: Սա է բոլորը: Նույնն է նաև քո մտածած դեպքի համար: Բավականաչափ ուշադիր ու համառ հետևողականությամբ նայիր դու մի մարդու և նրա մասին իրենից ավելին կիմանաս:

Ուր որ է ես արդեն պատրաստվում էի լեզվիս ծայրին թպրտացող «մտքերի ընթերցում» արտահայտությունն արտասանել և դրանով իսկ նրան հիշեցնել տալ Քրոմերի հետ կապված դեպքը, որ այնքան հեռվում էր մնացել: Բայց հիմա տարօրինակ մի բան էր կատարվում մեր երկուսիս միջև. ո՞չ նա, ո՞չ էլ ես բնավ երբեք թռուցիկ ակնարկ անգամ չէինք անում այն մասին, որ շատ տարիներ առաջ նա այնպե՛ս լրջորեն և հիմնավորապես իմ կյանքի մեջ էր ներխուժել: Կարծես առաջներում մեր միջև ոչինչ չէր եղել, կամ էլ մեզանից յուրաքանչյուրը վստահաբար հաշվարկում էր, որ մյուսը թերևս մոռացել էր այն: Մեկ թե երկու անգամ պատահեց նույնիսկ, որ փողոցում միասին քայլելիս Ֆրանց Քրոմերին հանդիպեցինք, բայց մենք հայացք անգամ իրար մեջ չփոխանակեցինք, նրա մասին մի խոսք անգամ չասացինք:

- Սակայն ի՞նչ կասես հիմա կամքի մասին,- հարցրեցի ես:- Դու պնդում ես, որ մարդս ազատ կամք չունի: Բայց նաև ասում ես, որ բավական է միայն մարդս իր կամքը ամուր ինչ-որ բանի վրա սևեռի, այդժամ նա կարող է իր նպատակին հասնել: Բայց դա այդպես չէ... Եթե ես իշխանություն չունեմ իմ կամքի վրա, ուրեմն և չեմ կարող իմ ուզածով այն այս կամ այնտեղ ուղղորդել:

Նա թիթիփացրեց ուսիս: Նա միշտ այդպես էր վարվում, երբ ես նրան ուրախություն էի պատճառած լինում:

- Ճիշտ ես անում, որ հարցնում ես,- ասաց նա ծիծաղելով:- Մարդս պետք է միշտ հարցեր տա, պետք է միշտ կասկածի: Բայց խնդիրը շատ պարզ է: Եթե այդպիսի մի թիթեռը, օրինակի համար, իր կամքը մի աստղի կամ մեկ ուրիշ տեղ ուղղել ուզենա, նա չի կարողանա դրան հասնել: Բանն այն է, սակայն, որ նա դա ընդհանրապես չի փորձում: Նա փորձում է լոկ այն, ինչը իր համար իմաստ ու արժեք ունի, ինչի կարիքն ինքն ունի, ինչը նա անպատճառ պետք է ձեռք գցի: Հենց այդ պատճառով էլ նրան նաև անհավատալին է հաջողվում, նա զարգացնում է իր կախարդական ու զարմանահրաշ վեցերորդ զգայարանը, որը իրենից բացի ոչ մի կենդանի չունի: Մեզանից ամեն մեկը հաստատապես շատ ավելի մեծ խաղատարածք ունի ու ավելի բազմաքանակ հետաքրքրություններ, քան ցանկացած կենդանին: Բայց մենք ևս հարաբերականորեն շատ նեղ շրջանակի մեջ ենք կապված և չենք կարող դրանից դուրս գալ: Ես կարող եմ իհարկե այս ու այն բանը երևակայել, ինքս ինձ ինչ-որ բան պատկերացնեմ, ես կարող եմ ցանկություն ունենալ անպատճառ հյուսիսային բևեռ գնալ, կամ նման մի բան, բայց կատարել և բավականաչափ ուժեղ ցանկալ ես կարող եմ միայն այն, եթե այդ ցանկությունը ամբողջապես իմ մեջ է առկա, երբ իսկապես իմ ողջ էությունը ամբողջապես նրանով է լեցուն ու համակված: Հենց որ դա տեղի է ունենում, հենց որ փորձում ես ինչ-որ բան, ինչը քո միջից դուրս գալ է ուզում, այդժամ դա ստացվում է, գործը առաջ է գնում, այդժամ դու կարող ես վարժեցված մրցաձիու պես քո կամքը լարել: Երբ ես, օրինակի համար, ուզենայի այնպես ազդել, որ մեր պարոն քահանան հետայսու այլևս ակնոց չկրեր, դա ինձ չէր հաջողվի: Դա ընդամենը խաղ է... Բայց երբ ես, այն ժամանակ աշնանը, ամուր կամք դրսևորեցի և որոշեցի առջևի իմ նստարանից տեղափոխվել, գործը լավագույնս հաջողվեց: Հայտնվեց հանկարծ մեկը, որը ըստ այբբենական կարգի ինձանից առաջ էր, որը մինչ այդ հիվանդ էր եղել, և քանի որ մեկնումեկը իր տեղը պիտի զիջեր նրան, բնականաբար ես էի, որ գնացի դրան, քանի որ իմ կամքը նույնպես պատրաստ էր առիթից անմիջապես օգտվելուն:

- Այո,- ասացի ես,- այն ժամանակ ինձ էլ դա տարօրինակ թվաց: Այն պահից սկսած, երբ մենք իրար նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեցինք, գնալով դու ավելի ու ավելի էիր ինձ մոտենում: Բայց ինչպե՞ս դա եղավ: Սկզբում դու անմիջապես իմ կողքը չտեղափոխվեցիր, մի երկու անգամ նստեցիր իմ առջևի նստարաններին, այնպես չէ՞: Հետո՞ ինչպես եղավ:

- Ուրեմն այսպես. ես ինքս էլ հաստատապես չգիտեի, ուր պետք է նստեի, երբ իմ առաջին նստատեղից վեր էի կենում: Գիտեի միայն, որ հետևի շարքերում պետք է տեղ զբաղեցնեի: Դա իմ կամքն էր՝ քեզ մոտ գալ, որը սակայն մինչև վերջ դեռևս հստակ գիտակցված չէր իմ կողմից: Միաժամանակ քո սեփական կամքն էլ ինձ իր կողմը ձգեց և օգնության եկավ ինձ: Միայն այն ժամանակ, երբ քո առջևն էի նստել, ես հասկացա, որ իմ ցանկությունը միայն կիսով չափ էր ի կատար ածվել, այդժամ նկատեցի, որ իսկապես ես այլ բան չէի ցանկանում, քան քո կողքին նստել:

- Բայց այդ ժամանակ կարծես նոր աշակերտ չէր հայտնվել:

- Ճիշտ է, բայց այդ անգամ ես ավելի քան պարզ վարվեցի, պարզապես ընդառաջ գնացի իմ ցանկությանը և, առանց երկար բարակ մտածելու, կողքիդ նստեցի: Այն տղան, որի հետ տեղս փոխեցի, միայն փոքր-ինչ զարմացավ և անխոս՝ չհակառակվեց ինձ: Քահանան էլ, իր հերթին, կարծես միայն մեկ անգամ նկատեց, որ տեղափոխություն էր կատարվել, և ընդհանրապես, ամեն անգամ, երբ նա ինձ հետ ինչ-որ բան էր ուզում անել, նրան ինչ-որ մի ծածուկ կասկած էր տանջում, նա գիտեր միայն, որ ինձ Դեմիան էին կոչում և որ ճիշտ չէ, որ Դ-ով սկսվող անվանակիր մեկը ամենավերջերում՝ Ս-ից հետո նստի... Բայց դա չհաջողեց թափանցել մինչև նրա գիտակցության խորքերը, քանի որ իմ կամքը հակառակվում էր դրան և ես այդ խնդրում նրան միշտ էլ խանգարում էի: Մեկ անգամ էլ նա նկատեց, որ այստեղ ինչ-որ բան այն չէր, նայեց իմ կողմը և սկսեց ինձ ուշիուշով զննել, այդ բարի պարոնը: Դրա դեմ ես սակայն մի շատ պարզ միջոց ունեի: Ամեն անգամ ես ամուր սևեռումով նայում էի նրա աչքերի մեջ: Դա գրեթե բոլոր մարդիկ էլ դժվար են տանում: Նրանք անհանգիստ են դառնում: Երբ դու ինչ-որ մեկից մի բանի հավակնությունն ունես, և անսպասելիորեն համառությամբ աչքերի մեջ ես նայում, և նա բնավ անհանգստության նշաններ ցույց չի տալիս, ապա ուրեմն թող... Դու նրա նկատմամբ ոչնչի չես հասնի, երբեք... Բայց դա շատ հազվադեպ է պատահում: Ես միայն մի մարդու եմ ճանաչում, որի նկատմամբ այդ հարցում անզոր եմ:

- Ո՞վ է դա,- շտապով վրա բերեցի ես:

Նա ինձ նայեց մի տեսակ փոքրացած աչքերով, որպիսիք նա

մտքերի մեջ ընկած ժամանակ էր ձեռք բերում: Հետո մի կողմ նայեց ու ոչինչ չպատասխանեց, և ես անկարող էի, չնայած ինձ խեղդող հետաքրքրասիրությանը, հարցս մեկ անգամ էլ կրկնել:

Բայց հավատացած եմ, որ այնժամ նա իր մորը նկատի ուներ: Թվում էր, թե նա իր մոր հետ շատ սերտ, մտերմիկ հարաբերությունների մեջ պետք է գտնվելիս լիներ, բայց երբեք ինձ հետ նրա մասին չէր խոսում, ինձ երբեք իրենց տուն չէր հրավիրում: Ես նույնիսկ չգիտեի, թե ինչպիսի տեսք ուներ նրա մայրը:

Այն ժամանակ երբեմն ես փորձեր էի անում նրա նման վարվել և իմ կամքը ինչ-որ բանի վրա այնպես կենտրոնացնել, որ դրան հասնել կարողանամ: Այնտեղ կային ցանկություններ, որոնք ինձ չափազանց կարևոր էին թվում: Բայց ոչինչ չէր ստացվում: Այդ մասին Դեմիանի հետ խոսել ես ինձ չէի կարող թույլ տալ: Իմ ցանկությունների մասին ես չէի կարող խոսք բացել: Նա էլ ավելորդ հարցեր չէր տալիս:

Կրոնի հարցերում իմ հավատընծայությունը այս ընթացքում որոշ ճեղքվածքներ ու խաթարումներ էր ունեցել: Սակայն, Դեմիանի ազդեցությամբ ձեռք բերած իմ մտածողությամբ, ես տարբերվում էի, շատ էի տարբերվում իմ համադասարանցիներից, որոնք կատարյալ անհավատությամբ էին տառապում: Մի քանիսը կային, որ պատահած դեպքում այնպիսի խոսքեր էին հնչեցնում, որ իբրև թե զավեշտական ու մարդուն անարժան մի բան էր աստծուն հավատալը և որ այդ պատմությունները, ինչպես օրինակ՝ երրորդության կամ Հիսուսի անարատ ծննդյան մասին, միայն ծիծաղ էին շարժում, և ամոթալի էր, որ մարդ մինչև օրս էլ դեռ այդ հնոտիների փերեզակությամբ ու դրանց սաղացնելով էր զբաղված: Ամեն դեպքում ես այդպես չէի մտածում: Նաև ինձ պաշարած տարակուսանքների ժամանակ ինձ օգնության էր գալիս մանկությանս տարիների ողջ փորձը՝ ինձ հուշելով աստվածավախ կյանքի իրական գոյության մասին, որով հավաստյավ իմ ծնողներն էին առաջնորդվում, և որ դա բոլորովին էլ ինչ-որ անարժան ու անվայել, կեղծ ու փուչ մի բան չէր: Կրոնական խնդիրների նկատմամբ առաջվա պես խորագույն ակնածանք էի տածում: Հիմա Դեմիանը ինձ սովորեցրել էր պատմություններն ու հավատի դրույթները ազատ, ավելի անհատականորեն, խաղացկուն ու ճկուն, առինքնող երևակայությամբ ընկալել ու մեկնաբանել: Ես գոնե հետևում էի այդ ցուցումներին, որոնք նա միշտ էլ առանձնահատուկ հաճույքով ու բավականությամբ ճանաչել էր տալիս ինձ: Շատուշատ բաներ անշուշտ ինձ համար խիստ էին ու դաժան, այդպես և Կայենին վերաբերող խնդիրը: Մեկ անգամ դավանաբանության դասաժամին նա ինձ սարսափեցրեց իր մի մեկնաբանությամբ, որը երևի թե ամենահանդուգն ու համարձակների թվին էր պատկանում: Ուսուցիչը խոսում էր

Գողգոթայի մասին: Փրկչի տառապանքների ու մահվան մասին պատմող աստվածաշնչյան հաղորդումը դեռ վաղ հասակից խորը տպավորություն էր թողել ինձ վրա. փոքր երեխա եղած ժամանակ, Ավագ Ուրբաթի երեկոյան, երբ հայրս այդ տառապանքների պատմությունը բարձրաձայն ընթերցած-վերջացրած էր լինում, ես ներքուստ և խորապես համակված՝ այդ տառապաշատ ու գեղեցկատես, գունաթափ ու տեսլական և սակայն սոսկալիորեն կենդանի աշխարհում էի ապրում, Գեթսեմանիում ու Գողգոթայում, և Բախի «Մատթեոսի կիրքը» ունկնդրելիս՝ ինձ պաշարում էր այդ խորհրդավոր աշխարհի մռայլատես ու զորեղ տառապանքների փայլը, որ պարուրում էր ինձ բոլոր միստիկական սարսափներով: Դեռ այսօր էլ՝ այդ երաժշտության մեջ և «Actus tragicus»-ում ես այդ ողջ տիեզերական պոեզիայի և բոլոր արվեստական արտահայտվածքների էությունն եմ գտնում:

Դեմիանը վերջում մտածկոտ ինձ ասաց.

- Այստեղ մի բան կա, Զինքլեր, որ ինձ դուր չի գալիս: Մեկ անգամ էլ կարդա պատմությունը և այն լեզվիդ վրա փորձիր, նրանում կա մի բան, որ անհաճո համ ունի: Երկու ավազակների հետ կապված պատմությունը: Բլրի վրա իրար կողք-կողքի վեր խոյացող երեք խաչերի պատկերը իսկապես հոյակապ է... Բայց, ահա, այդ զգայացունց բարոյախրատական պատմությունը ազնիվ ավազակի մասին... Սկզբում նա մի հանցագործ էր և անարգ գործեր էր կատարել, Աստված գիտե, թե ինչպիսի, և հիմա նա փափկում-հալչում է և դարձի գալու ու զղջումի լալկան հանդեսներ է խաղում... Ի՞նչ իմաստ ունի այդպիսի զղջումը գերեզմանից երկու քայլ հեռավորության վրա, խնդրում եմ՝ ասա՛ ինձ: Սա նորից ու նորից այլ բան չէ, քան մի իսկական տերտերական պատմություն, քաղցրահունչ ու անազնիվ տեսակի, հուզառատ սրտառուչության ճարպի մեջ թաթախված, բարձրագույն խրատաուսուցողական նստվածքով: Եթե դու այսօր այդ երկու ավազակներից մեկնումեկին պարտավորված լինես որպես ընկեր ընտրելու կամ մտաբերելու լինես, թե այդ երկուսից որ մեկին դու ավելի շուտ կկարողանաս վստահել, ապա անշուշտ, համենայնդեպս, ոչ այդ դարձի եկած լալկանին: Ո՛չ, դա հաստատապես այն մյուսը կլինի, նա մի իսկական տղա է և բնավորությամբ է օժտված: Նա թքած ունի այդ դարձի վրա, որ ներկա վիճակում լոկ մի գեղեցիկ խաբկանք կարող էր լինել, նա իր ճանապարհը մինչև վերջ է գնում ու ամենավերջին ակնթարթին վախկոտի պես չի հրաժարվում սատանայից, որը մինչ այդ պահը պետք է որ իրեն օգնած լիներ: Նա բնավորությամբ է օժտված, իսկ բնավորության տեր մարդիկ աստվածաշնչյան պատմության մեջ հազվադեպ և այն էլ՝ շատ կարճ ժամանակով են հայտնվում: Գուցե նա Կայենի սերունդներից է: Ձե՞ս կարծում:

Ես շատ էի շփոթված ու զարմացած: Խաչելության այս ողջ պատմությունը ես ասես տանու եղելություն էի կարծել ու հավատացել նրան և միայն այժմ տեսա, թե ինչքան քիչ անձնավորված, անհատականացված, պատկերացման ինչ չնչին ուժով ու երևակայությամբ էի ես այն լսել ու կարդացել: Այնուհանդերձ Դեմիանի այս նոր գաղափարը ինձ համար ճակատագրական էր հնչում և սպառնում էր իմ մեջ կործանել, գլխովին շուռ տալ հասկացությունները, որոնց մնայուն գոյությանը, կարծում էի, ես պետք է ողջ կյանքում հետևեի: Բայց ո՛չ, չի կարելի այսպես ամեն ինչի նկատմամբ և յուրաքանչյուրի շուրջը տարակուսանք սերմանել, հատկապես սրբություն սրբոցի առնչությամբ:

Ինչպես միշտ, մինչ ես ինչ-որ բան կհասցնեի ասել, նա անմիջապես նկատեց իմ վարանքն ու դիմակայող հակառակությունը:

- Գիտեմ,- համակերպված ասաց նա,- դա հին պատմություն է: Միայն թե եկ շատ չլրջացնենք... Բայց ես քեզ մի բան եմ ուզում ասել. այստեղ է այն կետերից մեկը, ուր պարզորոշ կարելի է տեսնել այդ կրոնի պակասավոր կողմերը: Խոսքը վերաբերում է նրան, որ Հին և Նոր Կտակարանների այդ ողջ Աստված կոչվածը, ճիշտ է՝ թեև հրաշալի մի կերպար է, բայց այն չէ, ինչը նա իսկապես պետք է ներկայացներ: Նա ամենաբարին է, ազնիվը, հայրականը, գեղեցիկը ու նաև բարձրը, զգայացունցը, միանգամայն ճիշտ է... Բայց աշխարհը նաև ուրիշ բաներից էլ է բաղկացած: Հիմա այդ բոլորը պարզապես սատանային են վերագրվում, և աշխարհի այդ ողջ մնացյալ մասը, այդ ողջ հատվածը կամ կեսը թաքցվում է ու քար լռության մատնվում: Ճիշտ այնպես, ինչպես որ Աստծուն որպես ողջ կյանքի հայր են փառաբանում, այդպես էլ ողջ սեռական կյանքը, որի վրա սակայն ինքը կյանքն է խարսխված, պարզապես լռության են մատնում և առանց դույզն-ինչ երկմտելու՝ որպես սատանայի գործեր ու մեղսավոր բաներ հայտարարում... Ես բոլորովին էլ դեմ չեմ, որ պաշտեն, մեծարեն այդ Եհովա կոչվող աստծուն, բնավ, քավ լիցի: Բայց նաև կարծում եմ, մենք պետք է ամե՛ն ինչ պաշտենք և ընդունենք նրա սրբությունը, ո՛ղջ աշխարհը, ոչ միայն նրա այս արհեստականորեն բաժան-բաժան արված, պաշտոնական կեսը... Այսպիսով մեզ հարկ կլինի Աստծո պատարագի կողքին նաև Սատանային պատարագ մատուցել: Ես դա ճիշտ եմ համարում: Եվ կամ հարկ կլիներ մի աստված ստեղծել, որը նաև սատանային իր մեջ կներառեր, և նրա առաջ մարդս չպետք է աչքերը փակի, երբ աշխարհիս ամենաբնական բաները տեղի ունենալու լինեն:

Հակառակ իր ոճին՝ նա դյուրագրգիռ ու տաքարյուն էր դարձել, հենց այդ պատճառով էլ ժպտում էր և չէր թափանցում իմ հոգու խորքերը:

Իմ մեջ սակայն այդ բառերը բախվեցին իմ ողջ մանկական տարիների առեղծվածներին, որոնք ես ամեն ժամ կրում էի իմ մեջ և որոնց մասին երբեք և ոչ ոքի ոչինչ ասած չկայի: Այն ինչ Դեմիանը ասել էր Աստծու և սատանայի, աստվածային-պաշտոնականի և լուսության մատնված սատանայական աշխարհի մասին, դա հենց իմ սեփական միտքն էր եղել, իմ սեփական առասպելը, իմ նախածին միտքը՝ երկու աշխարհների կամ աշխարհի երկու կեսերի մասին՝ լուսավոր ու խավար: Այն ըմբռնումը, որ իմ խնդիրը բոլոր մարդկանց խնդիրն է, ողջ կյանքային գոյության ու մտածողության խնդիրը, հանկարծ թռչելով անցավ իմ միջով՝ որպես մի սրբազնական ստվեր, և վախն ու ակնածանքը պաչարեցին ինձ, երբ ես տեսա ու հանկարծ զգացի, թե որքան խորն էր իմ սեփական, անձնական կյանքը և որ իմ մտածողությունը մասն էր կազմում մեծ գաղափարների հավերժական հարահոսի: Ըմբռնումն այդ ուրախալի չէր, թեև ինչ-որ իմաստով կենսահաստատ էր և երջանկացնող: Այն կոպիտ էր, բարկահամ, քանի որ իր ներսում մեծագույն պատասխանատվության մի հնչյուն էր պարունակում՝ այլևս երեխա չլինելու, աշխարհի դեմ մեն-մենակ դիմադարձ կանգնած լինելու մի հնչյուն:

Իմ կյանքում առաջին անգամը լինելով, այսպիսի մի խորը գաղտնիք բացելով՝ ես ընկերոջս պատմում էի դեռևս իմ վաղ մանկական օրերից մնացած «երկու աշխարհների» իմ ըմբռնման մասին, և նա տեսավ անմիջապես, որ դրանով իմ ներքին զգացողությունը համաձայն էր իր հետ և արդարացնում ու ճանաչում էր այն: Բայց մեկին մի հարցում բռնացնելն ու շահագործելը բնավ իր ոճը չէր: Նա լսում էր խորագույն ուշադրությամբ, որպիսին երբևիցե հատկացրել էր ինձ, ու նայում էր աչքերիս մեջ, մինչև որ ես հայացքս մի կողմ կշրջեի: Որովհետև նրա հայացքում ես տեսա նորից այն արտասովոր, կենդանակերպ վերժամանակությունը, նրա այդ հաշվանքի չտրվող տարիքը:

- Մեկ ուրիշ անգամ մենք ավելի հանգամանորեն կխոսենք այդ մասին,- ասաց նա խնայողական շեշտով:- Տեսնում եմ դու ավելի խորն ես մտածում, քան կիսվում ես սրա-նրա հետ: Եթե այդպես է, ուրեմն գիտես նաև, որ դու երբեք լիակատար ձևով չես ապրել այն, ինչ մտածել ես, և դա լավ չէ: Սոսկ ա՛յն միտքը արժեք ունի, որով մենք ապրում ենք: Դու գիտեիր, որ քո այդ «թույլատրելի աշխարհը» աշխարհի միայն մի կեսն է, և դու փորձել ես նրա երկրորդ կեսը թաքցնել քեզանից, ինչպես քահանաներն ու ուսուցիչներն են անում: Դա քեզ երջանկություն չի բերի... Դա չի երջանկացնի և ոչ ոքի, հենց որ նա միայն մեկ անգամ այդ մասին մտածել սկսի:

Նա խորը դիպավ ինձ:

- Բայց,- գրեթե բղավեցի ես,- չէ՞ որ փաստացիորեն կան իս-

կապես արգելված ու նողկալի բաներ, որ դու չես կարող չընդունել: Եվ մեկ անգամ որ դրանք արգելված են եղել՝ հետևաբար մենք պետք է նրանցից հրաժարվենք: Ես գիտեմ, այո, որ սպանություն ու ամեն հնարավոր արատներ ու մոլություններ կան, բայց պե՞տք է արդյոք, հենց միայն այն բանի համար, որ դրանք կան, գոյություն ունեն, ես նրանց ընդառաջ գնամ ու հանցագործ դառնամ:

- Մենք այսօր երևում է դրանից գլուխ չենք հանի,- հանգստացրեց Մաքսը:- Դու անշուշտ չպետք է մարդ սպանես կամ աղջիկներին սեռական հողի վրա խոշտանգես, բնավ ո՛չ: Բայց դու նաև դեռ այնտեղ չես հասել, որ գիտակցել կամ ըմբռնել կարողանաս՝ ինչն է իրականում «թույլատրված» կոչվում և ինչը՝ «արգելված»: Դու միայն մի կտոր ճշմարտություն ես զգացել: Այն մյուսը դեռ գալու է, վստահ եղիր: Դու հիմա, օրինակ, մոտավորապես մեկ տարի առաջվանից սկսած մի հակում ես կրում քո մեջ, որն ավելի ուժեղ է, քան բոլոր մյուսները, և այն պատկանում է այդ «արգելված» տեսակին: Հույները և շատուշատ ուրիշ ժողովուրդներ այդ հակումը, ընդհակառակը, աստվածացրել էին ու մեծ տոներին երկրպագում ու պաշտոն էին մատուցում նրան: «Արգելվածը» այսպիսով հավերժական չէ, այն կարող է փոխվել: Այսօր էլ յուրաքանչյուր ոք կարող է մի կնոջ հետ քնել, եթե միայն նրանք քահանայի մոտ են եղել ու ամուսնացել են իրար հետ: Ուրիշ ժողովուրդների մոտ այլ պատկերացումներ են իշխում, նույնիսկ այսօր: Այդ պատճառով էլ մեզանից յուրաքանչյուրը պետք է ինքը որոշի ինչն է թույլատրված և ինչը արգելված՝ իրե՛ն արգելված: Մարդս երբեք չի կարող արգելված մի բան անել, դա միայն մեծ սրիկաները կարող են իրենց թույլ տալ: Ու նաև հակառակը: Իրականում՝ դա ընդամենը հարմարության խնդրին է առնչվում... Ում ավելի հարմար է գալիս, որ ինքը մտածի և ինքը լինի իր դատավորը, նա իրեն հենց արգելվածին է կապում, նրանց, որոնք այժմ են այդպիսին համարվում: Նա դրանից թեթևացած է զգում իրեն: Մյուսները իրենք են իրենց մեջ պատվիրանները զգում, նրանց արգելված են բաներ, ինչ ամեն ազնիվ մարդ անում է ամեն օր, և թույլատրված են այլ բաներ, որոնք սովորաբար անթույլատրելի են համարվում: Ամեն ոք պետք է ինքն իր համար որոշի:

Նա հանկարծ կարծես թե զղջաց այդքան շատ բաներ ասելու համար և խոսքն ավարտեց: Արդեն այն ժամանակ ես կարող էի զգացմունքի ուժով ինչ-որ չափով հասկանալ, թե ինչ էր նա այդ միջոցին զգում: Այդպես հաճելի ոճով և կարծես հարևանցիորեն, թեթև ձեռքով նա հոգում էր շարադրելու իր նախահարձակ մտահղացումները, բայց դա սոսկական խոսակցություն էր՝ «միմիայն ի սեր խոսելու», ինչպես նա մի անգամ ասաց՝ մահվան

առաջ չտառապելու համար: Իմ խոսքերում, սակայն, ճշմարիտ հետաքրքրության կողքին՝ նա չափազանց շատ խաղ, չափազանցված ու անթաքույց ուրախություն, խելամիտ շաղակրատանքի ինքնաբավ ոգևորություն զգաց, կամ նման մի բան, կարճ՝ կատարյալ լրջության պակաս:

Երբ ես նորից կարդացի իմ գրած վերջին բառերը՝ «կատարյալ լրջություն», մեկ ուրիշ տեսարան կրկին միտքս եկավ, ամենահամառն ու սևեռունը, որ ես վերապրել էի Մաքս Դեմիանի հետ՝ դեռևս այն կիսամանկական ժամանակներում:

Մեր եկեղեցուն անդամագրության ծիսահանդեսը մոտենում էր, և հոգևոր դասընթացի վերջին ժամերը խորհրդավոր ընթրիքին էին վերաբերվում: Քահանան մեծ կարևորություն էր տալիս դրան, և առանձնահատուկ մեծ ջանք ու եռանդ էր գործադրում, մոտալուտ օծումին նախատրամադրման պես մի բան պարզորոշ կարելի էր զգալ այդ դասաժամերին: Միայն թե դավանաբանության այդ վերջին զույգ ժամերին իմ մտքերը ուրիշ տեղ էին թափառում, ուրիշ-ուրիշ իրողությունների հետ կապակցվում, այն է՝ իմ բարեկամի անձի: Մինչ ես անհամբեր անդամագրության հանդեսին էի սպասում, որն ընդամենը տոնական ու հանդիսավոր ընդունելություն պետք է լիներ եկեղեցական համայնքի մեջ, աներեսությամբ կպել ու անխուսանավելի պնդերեսությամբ համակել էր ինձ այն գաղափարը, որ մոտավորապես կիսամյա այս կրոնական դասընթացի իրական արժեքը ինձ համար այն չէր, թե ինչ էինք մենք այստեղ սովորել, այլ Դեմիանի մերձակցության և ներազդեցության մերձիմոտո ճաշակումը: Այժմ ես պատրաստ էի ոչ թե եկեղեցու, այլ բոլորովին մեկ այլ բանի մեջ ընդունվել, գաղափարի և անհատապաշտական մի միաբանության կամ ուխտի մեջ, որը ինչ-որ ձևով պետք է գոյություն ունենար աշխարհիս երեսին և որպես դրա ներկայացուցիչ կամ սուրհանդակ ես իմ ընկերոջն էի տեսնում:

Ես փորձում էի ինձանից ետ վանել այդ մտքերը, ես շատ լուրջ էի վերաբերում այն բանին, որ ընդունելության ծեսի հանդիսությունը, հակառակ ամեն ինչի, մի որոշակի արժանապատվությամբ վերապրեմ, բայց դա դժվար էր հաշտեցնել ինձ պաշարած նորահայտ գաղափարի հետ: Սակայն ես կուզենայի իմ այդ ցանկությունը իրականացված տեսնել, միտքն այդ թևածում էր շուրջբոլորս և աստիճանաբար կապվում ինձ՝ եկեղեցական հանդեսի մոտենալու հետ, ես պատրաստ էի այն այլ կերպ ընդունել, քան մյուսները, այն ինձ համար նշանակելիս պետք է լիներ ընդունելություն գաղափարական մի աշխարհի մեջ, ինչը ես Դեմիանի մեջ էի տեսել:

Այդ օրերին ես մեկ անգամ էլ նրա հետ աշխույժ բանավեճի բռնվեցի. դա հենց մի այդպիսի բարոյախրատական դասաժամից

առաջ էր: Իմ ընկերը կարծես վերացած, առանձնացած լիներ և ուրախություն չէր ապրում իմ խոսքերից, որոնք հնաբույր էին հնչում, ամպագոռգոռ ու անապատ:

- Մենք շատ ենք խոսում,- ասաց նա անսովոր լրջությամբ:- Խելացի խոսքերը ոչ մի արժեք չունեն, բացարձակապես ոչ մի: Դրանով միայն հեռանում ես ինքդ քեզանից: Ինքդ քեզանից հեռանալը մեղք է: Մարդս պետք է ամբողջապես ինքն իր մեջ ներթափանցել կարողանա, ինչպես կրեան:

Դրանից անմիջապես հետո մենք դասասենյակ մտանք: Դասը սկսվեց, ես ջանք էի թափում ուշադրությամբ լսել և Դեմիանը չէր խանգարում ինձ: Միառժամանակ անց այն կողմից, ուր նա կողքիս նստած էր, սկսեցի անսովոր ու տարօրինակ մի բան զգալ, դատարկություն ու սառնություն կամ դրա պես մի բան, այնպես, ասես այդ տեղը անսպասելիորեն դատարկվել էր: Երբ այդ զգացումը սկսեց ճնշող դառնալ, ես նրա կողմը շրջվեցի:

Ես տեսա բարեկամիս նստած, սովորականի պես ուղիղ և վայելուչ դիրքով: Բայց նա սովորականից տարբեր, բոլորովին այլ տեսք ուներ, և նրանից արտահեղվելու պես ինչ-որ բան էր ճառագում, ինչ-որ բան շրջապատել էր նրան, ինձ անծանոթ մի բան: Թվաց, թե նա փակել էր աչքերը, բայց հետո տեսա, որ դրանք բաց էին: Բայց դրանք չէին տեսնում, դրանք տեսնող աչքեր չէին, դրանք կենտրոնացված-սևեռված էին և դեպի ներսը կամ հեռու-հեռավոր մի տեղ ուղղված: Կատարելապես անշարժ՝ նստած էր նա այնտեղ, թվում էր նույնիսկ չէր էլ շնչում, բերանն ասես փայտից կամ քարից տաշված լիներ: Դեմքը գունատ էր, համաչափորեն գունատ, ինչպես քարը, և շագանակագույն մազերը ամենակենդանի բանն էին նրանում: Ձեռքերը պարզված էին իր առաջ՝ նստարանի վրա, անկյանք ու հանդարտ, ինչպես առարկաներ, ինչպես քարեր կամ մրգեր, դժգունած ու անշարժ, բայց ոչ թույլ, այլ որպես ամուր, լավ պատենավորված քողածածկույթ՝ շուրջբոլորը թաք կացած ձիգ ու զորեղ կյանքի:

Այդ հայացքն ինձ սարսուռ էր պատճառում: Նա մեռած է... մտածեցի ես, գրեթե բարձրաձայն արտաբերելով այն: Բայց գիտեի, որ նա մեռած չէր: Ես հմայված, կախարդված հայացքով նայում էի նրա դեմքին, այդ դժգունած, քարակուռ դիմակին, և զգում էի. դա Դեմիանն էր... ինչպես որ նա սովորաբար լինում էր, երբ քայլում էր ինձ հետ ու խոսում, բայց դա միայն կես Դեմիանն էր, նրա մի կեսը, մեկը, որ միառժամանակ մի դեր էր խաղում, հարմարվում էր, հաճոյակատարությունից դրդված՝ ուրիշների պես վարվում: Իսկական Դեմիանը սակայն ահա այսպիսի տեսք ունի, ինչպես այս մեկը, այսպես քարացած, հնամենի, կենդանական ու քարակերպ, գեղեցիկ ու սառը, մեռած և սակայն ափեափ լցված թաքուն ու չլսված կյանքով: Եվ նրա շուրջբոլո-

ը թեւածում էր այս խաղաղ դատարկությունը, այս եթերն ու աստղալից տարածությունը, այս մենավոր ու մեկուսի մահը...

Հիմա նա ամբողջապես իր մեջ էր խորասուզվել, զգում էի ես սարսռալով: Ես երբեք այսպես միայնակ ու անհաղորդ չէի եղել: Ես մասնակցություն չունեի նրա այդ վիճակին, նա անհասանելի էր ինձ համար, ավելի հեռու, քան եթե աշխարհիս ամենահեռավոր կղզում գտնվելիս լիներ:

Ես դույզն-ինչ չէի հասկանում, որ ինձանից բացի ոչ ոք այդ չէր տեսնում... Բոլորը պետք է տեսնեին, բոլորը պետք է սարսռած լիներին... Բայց ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում: Նա նստել էր պատկերավոր դիրք բռնած և, հանկարծ մտքովս անցավ, կուռքի պես արձանացած, մի ճանճ նստել էր նրա ճակատին, հետո դանդաղ վազեց դեպի քիթն ու շուրթերը, նրա ոչ մի խորշոմը չէր շարժվում:

Ու՞ր, որտե՞ղ էր նա հիմա: Ի՞նչ էր մտածում, ի՞նչ զգացումներ էին պաշարել նրան: Երկնքու՞մ էր, թե՞ դժոխքում:

Ինձ համար անհնարին էր նրան այդ մասին հարցնելը: Երբ դասաժամի վերջում նրան նորից տեսա ապրելիս ու շնչելիս, երբ նրա հայացքը իմին հանդիպեց, նա այնպիսին էր ինչպես առաջ: Որտեղի՞ց էր նա գալիս: Ու՞ր էր գնացել: Նա կարծես հոգնած էր: Դեմքը վերստին գույն էր ստացել, ձեռքերը շարժվում էին կրկին, շագանակագույն մազերը սակայն հիմա անփայլ էին ու ասես թաղկացած:

Հաջորդ օրերին իմ ննջասենյակում ես ավելի ու ավելի հաճախ էի տրվում մի նոր վարժանքի. քարացածի պես նստում էի աթոռին, աչքերս սևեռում, ինձ կատարելապես անշարժ պահելով և սպասում, թե ինչքան երկար ժամանակ ես նույն դիրքը կպահեմ և ինչ զգացումներ կունենամ այդ ընթացքում: Բայց միայն հոգնություն էի ճաշակում և ուժեղ քոր ստանում ակնակոպերում:

Դրանից շատ չանցած տեղի ունեցավ եկեղեցուն անդամագրության ծիսահանդեսը, որից, սակայն, ոչ մի կարևոր հիշողություն ինձ չմնաց:

Հիմա ամեն ինչ ուրիշ էր: Մանկությունը փուլ եկավ իմ շուրջը: Ծնողներս որոշ վարանքով ու շփոթվածությամբ էին ինձ նայում: Քույրերս կատարելապես օտար էին դարձել ինձ: Սթափման ու զգաստացումի պես մի բան կեղծում, դժգունացնում էր իմ սովորույթ դարձած զգացմունքներն ու ուրախությունները, պարտեզը զրկվել էր անուշահոտությունից, անտառն այլևս չէր գրավում, աշխարհը կանգնած էր իմ շուրջբոլորը որպես հնոտիների ծախծխման թշվառ մի հանդես, անհաճո ու անհրապույր, գրքերը թուղթ էին դարձել, երաժշտությունը՝ աղմուկ: Այսպես աշնանային ծառի շուրջը թափվում են տերևները,

բայց ծառն այլևս ոչինչ չի զգում, անձրևը նրա վերևից շրմփալով ներքև է թափվում, կամ արևը, կամ սառնամանիքը, և նրա ներսում դանդաղորեն սեղմվում է կյանքը ու ետ դեպի ներս գնում: Բայց նա չի մահանում: Նա սպասում է:

Որոշվեց, որ տոներից հետո ես պետք է մեկ ուրիշ դպրոց գնամ և, առաջին անգամը լինելով, տանից հեռանամ: Երբեմն մայրս ինձ էր մոտենում առանձնահատուկ քնքշությամբ, ասես նախապես հրաժեշտ տալու մտքով, ջանալով դյութելու պես սեր, կարոտ ու անմոռացություն ներարկել սրտիս մեջ: Դեմիանը մեկնել էր: Ես մենակ էի:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԲԵԱՏՐԻՉԵ

Առանց իմ բարեկամի հետ վերստին տեսնվելու, դպրոցական արձակուրդների ավարտվելուն մոտ՝ ես ուղևորվեցի դեպի Շտ.: Երկու ծնողներս էլ հետս եկան և ամենայն հոգածությամբ ինձ ի պահ հանձնեցին մանկական մի գիշերօթիկ հաստատության՝ վարժարանի մի ուսուցչի վերահսկողության ներքո: Նրանք սարսափից ապուշ կկտրեին, եթե իմանային, թե ինչ անախորժություններ գիրկն էին դրանով ինձ հանձնում:

Այն հարցը, թե արդյո՞ք ժամանակի ընթացքում ինձանից մի կարգին որդի ու օրինավոր քաղաքացի դուրս կգար, թե՞ իմ բնությունը այլ ճանապարհներով էր ընթանալու, դեռ մնում էր օրակարգում: Հայրենական տան հոգեպարար ստվերում երջանկություն գտնելու իմ վերջին փորձը շատ երկար տևեց, ժամանակ առ ժամանակ պահեր էին լինում, որ այն կարծես ուր որ է հաջողությամբ էր պսակվելու, սակայն, վերջիվերջո, փլուզվում էր՝ մնալով չկայացած:

Դատարկության ու մեկուսացումի զարմանահրաշ զգացողությունը, որ այս արձակուրդների ընթացքում, եկեղեցուն անդամագրվելու ծիսահանդեսից հետո, առաջին անգամը լինելով ինձ պաշարեց (ինչպե՛ս միայն այդքան ուշ ես ճանաչեցի այն՝ այդ դատարկությունն ու նրբասահ օդեղինությունը), շատ էլ արագ չանհետացավ: Հայրական տանը տեղի ունեցած հրաժեշտը զարմանալիորեն թեթև ու հեշտ ստացվեց, ճիշտն ասած ես ամաչում էի, որ այդ պահին ավելի թախծոտ ու տխուր տրամադրության մեջ չէի, քույրերս լալիս էին, այնպես՝ ձևի համար, ես այդպես չէի կարող: Ինքս էլ զարմացած էի ինձ վրա: Ես միշտ զգացմունքային երեխա եմ եղել և, ըստ էության, բավականին օրինավոր մեկը: Հիմա ես ամբողջովին վերափոխվել էի: Ես ինձ կատարելապես անտարբեր էի պահում արտաքին աշխարհի նկատմամբ և

օրեր շարունակ զբաղված էի միայն իմ ներքնազգացողությանը ուշիուշով ունկնդիր լինելով ու ներքին հորձանքներիս շառաչը լսելով, արգելված ու խավարչտին հորձանքները, որոնք այնտեղ՝ իմ ներսում, աղմկում էին ընդերկրյա հառաչաձայնությամբ: Ես շատ արագ մեծացա, հատկապես այս վերջին կես տարում, ծաղկափթիթ, նիհարուկ տեսք ունեի՝ աշխարհ մտնելու համար անպատրաստ: Մանկական սիրարժանությունը ամբողջովին չքվելանհետացել էր ինձանից, զգում էի, որ ինձ այլևս առաջվա պես չեն սիրի, ինքս էլ ինձ համար բոլորովին սիրելի չէի: Ես հաճախ մեծագույն կարոտով էի համակվում Մաքս Դեմիանի նկատմամբ, բայց երբեմն էլ ատում էի նրան, նրան մեղավոր համարելով իմ անկման ու կյանքիս դժբախտացման համար, կյանք, որն ատելի հիվանդության հանգույն ուսերիս էի վերցրել:

Մեր գիշերօթիկ դպրոցում հենց սկզբից եթե ես ոչ սիրված էի, ոչ էլ առանձնապես ուշադրություն էին դարձնում վրաս, ավելին՝ ես ծաղրի առարկա էի դարձել, և հետո՝ ինձանից խուսանավում էին ու հեռու մնում՝ իմ մեջ մի ծածկամիտ, սուսիկփուսիկ, անհաճո ու տարօրինակ մարդ տեսնելով: Ես մտա ինձ հատկացված դերի մեջ, դեռ մի բան էլ ավելին ինձ վրա վերցնելով, ու ինձ մատնեցի մենակության, որն արտաքուստ, սովորաբար, որպես աշխարհի նկատմամբ արհամարհական կեցվածքի ամենատղամարդկային դրսևորում էր ընկալվում, մինչդեռ ներքուստ ես հաճախ ենթակա էի լինում սևամաղձության ու տարակուսանքի ջախջախիչ գրոհներին: Դպրոցում ես սնվում էի տանը ամբարած գիտելիքներիս շտեմարանից, դասարանը դեռ մի բան էլ ետ էր մնացած անցյալի իմ մակարդակից ու ես կամաց-կամաց ընտելանում էի հասակակիցներիս քամահրանքով որպես երեխաներ դիտելու մտքին:

Մեկ տարուց ավելի այդպես էր ընթանում, նաև տուն կատարած առաջին արձակուրդային այցելությունները ոչ մի փոփոխություն չբերեցին: Ու ես հաճույքով նորից ճանապարհ ընկա:

Նոյեմբեր ամսվա սկիզբն էր: Ես սովորություն ունեի ցանկացած եղանակի կարճատև փիլիսոփայական զբոսանքներ ձեռնարկել, որոնց ընթացքում ես հաճախ մի տեսակ երանություն էի ճաշակում, տրտմաթախիծ, աշխարհատյացությամբ ու ինքնարհամարհանքով լի մի բարեբաստություն: Այդպես մի երեկո ես թրև էի գալիս քաղաքի շրջակայքում՝ չորուկ ու մշուշապատ մթնշաղի մեջ, հասարակական այգու ծառուղին կատարելապես լքված տեսք ուներ ու ինձ ներս էր հրավիրում, ճանապարհը ծածկված էր առատորեն ցած թափված տերևաստաղարթով, որ ես կոխկրտում էի խավարամած ու տոփալից ցանկասիրությամբ և որից չորուկ ու բարկահամ բույր էր բարձրանում, հեռավոր ծառերը՝ ուրվականի պես մեծդի ու ստվերակերպ, մթնշաղի մա-

ռախլապատ քուլաների միջով հայացքի առաջ ճանապարհ էին հարթում:

Ծառուղու վերջում կանգնած էի ես՝ անվճռական վարանքին տրված, սևեռուն նայում էի սևակնած սաղարթի մեջ ու ագահ ընչաքաղցությամբ ներշնչում հողմահարության ու նեխումի թաց բուրմունքը, որին ինչ-որ բան արձագանքում ու ողջունում էր իմ մեջ: Օ՜ ինչ տհաճ համ ուներ կյանքը...

Մոտակա կածանով, քամուց ծածանվող օձիքավոր վերարկուի մեջ ամփոփ, մի մարդ էր գալիս իմ կողմը, ես հենց այն է՝ ուզում էի մի կողմ քաշվել, հեռանալ, նա ետևիցս բղավեց:

- Ողջու՛յն, Զինքլեր:

Նա մոտեցավ, եկողը Ալֆոնս Բեքն էր, մեր գիշերօթիկի ամենատարիքավոր սանը: Ես միշտ բավականությամբ էի նրան նայում և ոչինչ չունեի նրա հանդեպ, թերևս միայն այն, որ ինչպես բոլոր կրտսերներին, ինձ էլ նա միշտ ծաղրանքով ու հոբեղբոր պես էր վերաբերվում: Նա արջի ուժ ուներ, և պետք է որ մեր գիշերօթիկի տիրոջ վրա ազդեցիկ տպավորություն թողած լիներ ու վարժարանի սաներիս շրջանում տարածված շատուշատ սեկոսեների հերոսն էր:

- Դու ի՞նչ ես այստեղ անում,- սիրալիր հարցրեց նա,- մի այնպիսի ոճով, որպիսին մեծահասակներն են բանեցնում, երբ պատահում էր, որ մեզնից մեկնումեկի նկատմամբ կեղծ ներողամտություն հանդես բերելու ցույցեր էին անում:- Գրազ գանք, որ դու բանաստեղծություն էիր հորինում, այնպես չէ՞:

- Մտքովս էլ չէր անցնում,- կոպտորեն առարկեցի ես:

Նա ծիծաղեց վրաս, շուրջս պտույտ գործեց ու ասաց, թե հնարավոր չէ, որ ես այդ ձիրքով բնավ օժտված չլինեի:

- Մի վախենա, Զինքլեր, ես քեզ լավ եմ հասկանում: Հաստատ մի բան կա, երբ երեկոյան այսպես քայլում ես մշուշի մեջ, աշնանային մտքերին տրված, այդժամ հաճույքով բանաստեղծություններ ես հորինում, գիտեմ: Մեռնող բնության մասին, բնականաբար, կամ որ նույնն է՝ կորուսյալ մանկության մասին: Հիշենք թեկուզ Հայնրիխ Հայնեին:

- Ես այդպես զգացմունքային չեմ,- պաշտպանվեցի ես:

- Դե լավ, թողնենք դա... Բայց նման եղանակին, ինձ թվում է, լավագույնն այն է, որ մարդս մի խաղաղ անկյուն փնտրի, ուր մի բաժակ գինի կա կամ դրա նման մի բան: Դու մի որոշ ժամանակ կընկերակցե՞ս ինձ: Ես հիմա բոլորովին միայնակ եմ: Կամ գուցե չե՞ս ուզում: Սիրելիս, ես չէի ուզենա քեզ մոլորեցնողի դերը ստանձնել, եթե դու մտադիր ես օրինակելի երեխա մնալ:

Շատ չանցած՝ մենք նստած էինք քաղաքամերձ փոքրիկ պանդոկում, կասկածելի գինի էինք խմում ու չբխկացնում հաստլիկ բաժակները: Սկզբում դա ինձ քիչ էր դուր գալիս, բայց, այնու-

ամենայնիվ, այն մի ինչ-որ նորություն էր: Սակայն չուտով ես, որ անվարժ էի գինուն, աչխույժ ու զրուցասեր դարձա: Ասես իմ մեջ մի պատուհան էր բացվել, աշխարհն ասես ներսում էր. ի՜նչ երկար, ի՜նչ սարսափելիորեն երկար ժամանակ էր, ինչ ես ոչ մի բառ չէի խոսել հոգու մասին... Ես հանձնվեցի երևակայական խաղերիս ու հատկապես մեծ ոգեշնչմամբ Կայենի ու Աբելի պատմությունը մատուցեցի:

Բեքը հաճույքով լսում էր ինձ, վերջապես մեկը կար, որին ես ինչ-որ բան կարող էի տալ... Նա թփփացրեց ուսիս՝ ինձ սատանի ճուտ անվանելով, որից փքվեց իմ սիրտը վերամբարձ խոյանքով, երանությամբ լցվելով, այնտեղ՝ չվայտ ու զեխ արբեցումի աղբյուրի մեջ թափահարել տվեց ճառասացության ու համահաղորդումի խառնափնթոր պիտույքները, հավանություն տալով ու ինչ-որ տեղ արժեվորելով դրանք տարիքով ավելի մեծ մեկի կողմից: Երբ նա ինձ հանճարեղ անառակ անվանեց, այդ խոսքը հոգուս մեջ հոսեց քաղցր ու թունդ գինու հանգույն: Աչխարհը բոցավառվում էր նորահայտ ու խայտաբղետ գույների մեջ ամփոփ, մտքերը դեպի ինձ էին հոսում հարյուրավոր ժպրելի ու հանդուգն ակունքներից, ոգին ու կրակի բոցերը հուրհրատում էին իմ մեջ: Մենք խոսում էինք ուսուցիչներից ու ընկերներից, ու ինձ թվաց՝ մենք սքանչելիորեն հասկանում էինք իրարու: Խոսում էինք հույների ու հեթանոսության մասին, և Բեքն ուզում էր ինձանից խոստովանություններ կորզել սիրային արկածների վերաբերյալ: Այդ առնչությամբ ես ոչինչ չէի կարող նրա հետ խոսել: Այդպիսիք ես ապրած չկայի, այնպես որ պատմելու բան չունեի: Այն, ինչը ես զգացել էի իմ մեջ, կառուցել ու երևակայությամբ ստեղծել, այն դեռ առկայծելով խորը նստած էր իմ մեջ, այնպես որ գինու օգնությամբ էլ հնար չեղավ այն մատուցելի ու արտահայտելի դարձնել: Աղջիկների մասին Բեքը շատ ավելին գիտեր, ու ես սքանչացումով ունկնդրում էի այդ հեքիաթները: Նրանցում ես ինձ համար անհավատալի բաներ պարզեցի, ինձ համար բնավ հնարավոր չհամարվածն ու անմտածելին հայտնվեց գռեհիկ իրականության մեջ, թվաց ինքնին հասկանալի ու բնական: Ալֆոնս Բեքը իր ապրած մոտավորապես տասնութ տարիների ընթացքում արդեն իսկ բավականաչափ փորձ էր կուտակել: Ի թիվս այլոց՝ նաև աղջիկների առնչությամբ, այն առումով, որ նրանք սեթևեթանք ու կոտրատումներից, բարեկիրթ քաղաքավարական ձևերից բացի՝ ուրիշ ոչ մի բանի հետ գործ ունենալ չէին ուզում, ճիշտ է՝ դա շատ գեղեցիկ էր, սակայն ոչ միշտ նրանց իրապես ցանկալին: Այդ իմաստով ավելի շատ հաջողությունների հույս կարելի էր գտնել կանանց շրջապատում: Կանայք այդ հարցերում ավելի խելամիտ էին: Օրինակի համար՝ տիկին Ցագգելտը, որ դպրոցական տետրերի ու

մատիտների կրպակ ուներ, նրա հետ միշտ էլ կարելի էր լեզու ծեծել, ամեն ինչի մասին խոսել, իսկ թե ինչեր են կատարվել ու կատարվում նրա վաճառասեղանի ետևում, ոչ մի գրքում գրելու կամ պատմելու բան չէ:

Ես նստել էի ամբողջովին հմայված ու չփոթահար: Ամեն դեպքում, ես անկեղծորեն անկարող էի սիրել տիկին Ցագգելտին, բայց, ինչ էլ լինի, դա մի չլսված բան էր: Թվում էր՝ այնտեղ աղբյուրներ էին հոսում, համենայնդեպս՝ տարեցների համար, որոնց մասին ես երբեք չէի երազել: Դրանում մի կեղծ հնչյուն կար, և ողջը վատորակ ու առօրեականության համ ուներ, քան որ իմ կարծիքով սերը պետք է ունենար: Բայցևայնպես, դա էր իրականությունը, այդպես էր կյանքն ու արկածախնդրությունը, նստած էր մեկը իմ կողքին, որ վերապրել էր այն, որին դա ինքնին հասկանալի ու բնական էր թվում:

Մեր խոսակցությունը փոքր-ինչ դժգունել էր, հրապույրը կորցրել: Ես այլևս այն չնորհալի պստլիկ տղան չէի, հիմա ես մի երեխա էի, որ տղամարդու էր ունկնդրում: Բայց դա էլ, ի հակադրություն այն բանի, որը երկարուձիգ ամիսներ շարունակ իմ կյանքն էր եղել, հրաշալի էր, դրախտային մի բան: Բացի այդ, ինչպես որ ինձ աստիճանաբար զգալի դարձավ, դա արգելված էր, խստի՛վ արգելված, սկսած պանդոկի նստարաններից՝ մինչև այն, ինչի մասին մենք խոսում էինք: Ես ամեն դեպքում ոգի էի համտեսում, հեղափոխականության համն ըմբոշխնում:

Ես ամենայն ճշգրտությամբ հիշում եմ այն գիշերվա անցքերը: Երբ մենք երկուսով, կեսգիշերին մոտ, աղոտ վառվող գազալապտերների կողքով, սառն ու խոնավ գիշերվա միջով տունդարձի ճանապարհն էինք բռնել, ես առաջին անգամը լինելով՝ հարբել էի: Դա գեղեցիկ չէր, չափազանց ցավեցնող էր, բայց, այնուամենայնիվ, նրանում ինչ-որ բան կար, գրավչություն, քաղցրություն, այն ապստամբություն էր ու շվայտ գինարբուք, կյանք էր ու ոգի: Բեքը ոգևորվեց իմ քաջասրտության ցուցադրանքից, թեև խստորեն հոխորտում էր ինձ վրա, որպես թե մի սկսնակի վրա, և ինձ գրեթե քարշ տալով՝ բերեց տուն ու հաջողեցրեց, որ մենք ծածուկ ներս թափանցենք բաց մնացած միջանցքի լուսամուտի միջով:

Սակայն, երբ մի շատ կարճառոտ, մեռելային քնից հետո՝ ցավերից արթնանալով սթափվեցի, անհեթեթ մի կսկիծ պաչարեց ինձ: Նստել էի անկողնումս, ցերեկային շապիկս դեռ հագիս, զգեստներս ու ոտնամաններս խառնիխուռն թափված էին հատակին, շուրջբոլորս բուրում էր ծխախոտով ու փսխումով: Գլխացավի, սրտխառնուքի ու մոլեգին ծարավի զգացումի արանքում հոգուս առաջ մի պատկեր հայտնվեց, որը ես վաղուց արդեն աչքերիս առաջ էի տեսել: Ես տեսա հայրենի եզերքն ու ծնողական

տունը, հայրիկին ու մայրիկին, քույրերիս ու պարտեզը, տեսա իմ հանգստավետ, հարազատ ննջասենյակը, տեսա դպրոցն ու չուկայական հրապարակը, Դեմիանին ու դավանաբանության դասերը, և այդ ամբողջից լույս էր ճառագում, ամեն ինչ թաթախված էր փայլի մեջ, ողջը հոյակապ էր, աստվածային ու մաքուր, ամեն-ամենը, հիմա ես դա գիտեի, դեռ երեկ, ընդամենը մի քանի ժամ առաջ ինձ էր պատկանում, սպասում էր ինձ, ու հիմա, այս պահին խորտակված էր ու նզովված, այլևս ինձ չէր պատկանում, դուրս էր հրում ինձ իր միջից ու զզվանքով նայում վրաս: Ողջ սերն ու հոգեպարար զմայլանքը, ինչն այն հեռավոր, ոսկեզօծ մանկության պարտեզում սովորել էի իմ ծնողներից, մայրիկիս յուրաքանչյուր համբույրը, բոլոր-բոլոր սուրբ ծննդյան տոները, հեզաբարո ու լուսավոր տանն անցկացված բոլոր կիրակնօրյա առավոտները, պարտեզի յուրաքանչյուր ծաղիկը, ամեն ինչ ամայացած էր, այդ ամենը ես ոտքերով կոխկրտել էի: Եթե հիմա ոստիկանները գալու լինեին, չղթայակապ անեին ինձ և որպես մի տականքի ու տաճար պղծողի դեպի կախաղան առաջնորդեին, ես համաձայն կլինեի, հաճույքով կգնայի, այն ազատարար բարեբաստություն կհամարեի:

Ուրեմն ես ներքուստ այդպիսի տեսք ունեի... Ես, որ աննպատակ թրև էի գալիս ու արհամարհում աշխարհը... ես, որ հպարտ էի ոգով ու Դեմիանի գաղափարներին համակարծիք... Այսպիսի տեսք ունեի ես, տականքի ու ցոփաբերան մի ելուզակի, հարբած ու աղտոտ, գարշելի ու անարգ մի վայրի գազան, նողկալի բնազդների գրոհումից հանկարծակիի եկած... Այդպիսի տեսք ունեի ես, ես, որ գալիս էի այն պարտեզից, ուր ողջը մաքրություն էր, փայլ ու քնքշություն, ես, որ Բախի երաժշտությունն ու գեղեցիկ բանաստեղծություններ էի սիրում: Զզվանքով ու խռովքով ես դեռ իմ սեփական ծիծաղն էի լսում, իմ հարբած, անսանձ, ցնցում-պոռթկումներով ուղեկցվող ու անհեթեթ արտաժայթքող ծիծաղը: Դա ես էի...

Սակայն, հակառակ ամեն ինչի, մի ինչ-որ հաճելի բան կար այդ տառապանքներին տրվելու մեջ: Այնքան երկար ժամանակ էի ես՝ կույր ու խուլ, այնտեղ սողոսկել, այնքան երկար էր իմ սիրտը պապանձվել ու վախվորած մի անկյունում կուչ եկել, որ նաև այս ինքնամեղադրանքները, այս սարսափները, հոգու այս բոլոր գարշելի զգացողությունները ողջունելի էին դարձել: Այն, ամեն դեպքում, զգացմունք էր, ուրեմն դեռ կրակներ էին բարձրանում, այնուամենայնիվ սիրտը դեռ շարունակում էր ցնցվելով տրոփել այնտեղ: Վրդովված ու խռովյալ՝ տառապանքների արանքում ես փրկության ու գարնանային մի բանի զգացողություն ունեցա:

Այնուհանդերձ, կողքից նայելիս՝ իմ գործերը հիմնովին դե-

պի վատն էին գնում: Առաջին արբեցումը շուտով այլևս վերջինը չեղավ: Մեր դպրոցում շատ կերուխումներ էին լինում ու զանազան կողմնակի զբաղմունքներ կազմակերպվում, ես ամենակրտսերներից մեկն էի նրանց շրջապատում, ովքեր ինձ հետ միասին մասնակցում էին այդ ամենին, շատ շուտով ես հանդուրժելի ու պստլիկ մեկը չէի այլևս, այլ մի պարագլուխ ու աստղ՝ հռչակավոր, անվեհեր ու խիզախ գինարբուքների մշտական մասնակից: Ես կրկին ամբողջապես խավարի աշխարհին էի պատկանում՝ սատանային, և այդ աշխարհում ես հրաշալի տղայի հռչակ էի վայելում:

Դրա հետ մեկտեղ ես սրտաճմլիկ ու խղճալի տրամադրություն ունեի: Ես ապրում էի ինքնաոչնչացնող ցոփ ու չվայտ կերուխումերին տրված, և մինչ ընկերներիս շրջապատում պարագլխի ու սատանայի ճտի, նզովյալ, ճարպիկ ու սրախոս պատանու համարում էի վայելում, իմ մեջ՝ խորխորատներում, հոգիս տագնապահար էր, լի սարսափահարույց դողով: Ես մտաբերում եմ, թե ինչպես մեկ անգամ արցունքներս հոսեցին, երբ գինետնից դուրս գալով՝ կիրակնօրյա ետկեսօրին երեխաներին տեսա փողոցում խաղալիս, լուսավոր ու ուրախ-զվարթ, թարմ սանրված մազերով ու կիրակնօրյա հանդերձանքով: Եվ մինչ ես՝ վատորակ պանդոկների աղտոտ սեղանների շուրջ, գարեջրային հոհոռոցի արանքներում չլսված ու լկտի անպարկեշտություններով բարեկամներիս էի զվարճացնում ու հաճախ էլ՝ ահ ու դող պատճառում նրանց, սրտիս մի ծածուկ անկյունում ես ակնածանք էի տածում այն ամենի հանդեպ՝ ինչը ծաղրում էի ես ու ներքուստ ողբաձայն հեծեծում, ծունկի իջած իմ հոգու, իմ անցյալի առջև, իմ մոր առջև ու Աստծո:

Այն, որ ես երբեք էլ մինչև վերջ չէի նույնանում իմ ուղեկիցների հետ, որ նրանց շրջապատում ես ինձ մենակ էի զգում և դրա համար էլ՝ տառապում, դա իր հիմնավոր պատճառն ուներ: Ես գինետան մի հերոս էի ու ծանակող, անպատկառ մեկը, ամենաբիրտ, կոշտուկոպիտ սրտով, ես ոգի ու արիություն էի հանդես բերում ուսուցիչների, դպրոցի, ծնողների, եկեղեցու մասին արտահայտած իմ մտքերում ու ճառերում (ես նաև անդրդվելի խանդով ըմբոշխնում էի անպարկեշտ պատմությունները և ինքս էլ մեկ-մեկ հանդգնում այդպիսիք պատմել), բայց ես երբեք դրանց մասնակցություն չէի ունենում, և երբ իմ բաժակի ընկերները աղջիկների մոտ էին գնում, ես մնում էի մենակ, սիրո հանդեպ բոցավառ կարոտով լեցուն, հուսահատ մի կարոտ, մինչդեռ, ըստ իմ ճառերի՝ ես պետք է անխիղճ, անամոթ ու կենսասեր մեկը լինեի: Ոչ ոք ինձանից ավելի խոցելի ու վիրավորվող, ավելի ամոթխած չէր: Ու երբ ժամանակ առ ժամանակ ջահել քաղաքաբնակ աղջիկների էի հանդիպում, գեղեցիկ ու մաքուր,

լուսավոր ու գրավիչ, նրանք ինձ համար հրաշալի, մաքրամաքուր երազներ էին, հազար անգամ ավելի սքանչելի ու պայծառ: Մի որոշ ժամանակ ես այլևս չէի կարողանում հաճախել Ֆրաու Ցագգելտի գրենական պիտույքների կրպակը, որովհետև կարմրում-շառագունում էի նրան նայելիս, մտաբերելով այն, ինչը Ալֆոնս Բեքն էր ինձ նրա մասին պատմել:

Ինչքան հիմա ես ավելի շատ էի լինում իմ նոր ընկերության շրջապատում, գնալով ինձ ավելի ու ավելի միայնակ և բոլորից տարբեր մեկն զգում, այնքան ավելի դժվար էր լինում դրանից՝ այդ շրջապատից ազատվելը: Իրականում ես այլևս չգիտեմ, թե արդյոք լակելը, գինարբուքներին տրվելն ու հռչակն ինձ իսկապես երբևիցե բավականություն են պատճառել, նաև խմելուն ես այդպես էլ չկարողացա այնպես վարժվել, որ ստիպված չլինեի ամեն անգամ կրելու նրա ցավալի հետևանքները: Այդ ամենն ասես ստիպողություն լիներ: Ես անում էի այն, ինչ հարկավոր էի համարում, որովհետև բնավ չէի իմանում, թե ինչ նոր բան ձեռնարկեի կամ ինչով զբաղվեի: Ես վախենում էի երկարատև մենակությունից, սարսափում շատուշատ նուրբ ու անթաքույց, ամոթալի, ներքին մոլուցքների գրոհից, դեպի որոնք ես ինձ մշտապես հակված եմ զգացել, երկյուղում էի քնքշանուրբ սիրային մտքերից, որոնք այնպես հաճախ էին ինձ այցելում:

Սակայն ամենից ավելի ինձ մի բան էր պակասում՝ բարեկամ կամ ընկեր: Երկու թե երեք համադպրոցականներ կային, որ հաճելի էին ինձ: Բայց նրանք առաքինիների թվին էին պատկանում և իմ արատներն ու մոլորությունները վաղուց արդեն ոչ ոքի համար այլևս գաղտնիք չէին: Նրանք խուսափում էին ինձանից: Բոլորի համար ես մի անհույս խաղամոլ էի, մեկը, որի ոտքերի տակ հողն էր երերում: Ուսուցիչները շատ բան գիտեին իմ մասին, ես հաճախ էի նրանց կողմից ամենախիստ պատիժների արժանացել, այնպես որ դպրոցից իմ վերջնական վտարումը զուտ ժամանակի հարց էր: Ես ինքս էլ դա գիտեի, արդեն վաղուց ես այլևս լավ աշակերտ չէի, բայց ինքս ինձ տարհամոզում ու խաբում էի, մեծ ջանքերի գնով, համակված այն զգացումով, որ դա այլևս երկար չէր կարող շարունակվել:

Շատ ճանապարհներ կան, որոնցով Աստված կարող է մեզ մենակության դատապարտել ու ինքներս դեպի մեզ առաջնորդել: Այդ ճանապարհն այն ժամանակ նա ինձ հետ անցավ: Դա կարծես մի չար երազ լիներ: Աղտեղություններից ու մածուցիկ կպչունությունից անդին, կոտրված գարեջրագավերի, լկտի ու դատարկաբան շաղակրատանքներում անցկացված գիշերներից անդին տեսնում էի ես ինձ՝ նզովյալ երազողիս, վախը սրտումս ու չարչարանաց տառապալից խորխորատներում սողեսող քարշ գալիս, մի ատելի ու աղտեղի ճանապարհ: Այնպիսի երազներ կան,

որոնցում արքայադստերը հասնելու ճանապարհին հանկարծակի դեմ ես առնում ու անշարժացած մնում կեղտոտ քրքիջների, գարշահոտող աղտեղություններով լի ետնանրբանցքներում: Ինձ հետ էլ նույնն էր կատարվում: Այդ տգեղ ու անհաճո ձևի մեջ ինձ վիճակվեց մենակությանը տրվել և իմ ու իմ մանկության միջև փակված մի եղեմի դուռ կանգնեցնել՝ անողորմ ու զինավառ հսկիչ-պահակներով շարակարգված: Դա մի յուրահատուկ սկիզբ էր, դեպի ինձ վերադառնալու մեջս ծլարձակած բաղձանքի վերարթնացում:

Ես ավելի շատ սարսափեցի ու ցնցումներ ունեցա, երբ մեր գիշերօթիկի տիրոջ նամակից տագնապահար՝ հայրս հայտնվեց Շտ.-ում և անսպասելիորեն դեմս ելավ: Երբ ամեռվա վերջավորությանը մոտ նա երկրորդ անգամ եկավ, ես արդեն անդրդվելի էի դարձել, կարծրասիրտ ու անտարբեր, ու թողեցի, որ նա հանդիմանություններ տեղար գլխիս, աղաչելու պես պահանջեր, մորս մասին հիշեցնել: Վերջում, կատաղած ու զայրացած՝ նա ասաց. եթե ես չուղղվեմ, նա կհանդուրժի, որ ինձ խայտառակելով դպրոցից վռնդեն և որ ինձ ուղղիչ տուն կհանձնի: Կանե՞ր արդյոք: Երբ նա այն ժամանակ մեկնեց, նրա հեռացումն ինձ ցավ պատճառեց, բայց նա ոչնչի չհասավ, այլևս ոչ մի ճանապարհ չգտավ՝ դեպի ինձ տանող, և մի պահ ինձ այն զգացումն էր պաշարել, որ նա իր խոստացածի պես էլ վարվելու էր:

Թե ի՞նչ էր լինելու ինձ հետ, այլևս միևնույն էր: Իմ այդ արտառոց տգեղ ու անհաճո վարքուկարգով, գինետներում վեր ընկած՝ գիշերներ լուսացնելով ու գլուխգովանության ցույցերով ես վեճի մեջ էի աշխարհի հետ, դա բողոքի իմ ձևն էր: Ես ինձ այդպիսով կործանում էի, երբեմն էլ խնդիրն ինձ մոտավորապես այսպես էր ներկայանում. եթե աշխարհն ինձ պես մարդկանց կարիքը չունի, եթե նա մեզպեսների համար ավելի լավ տեղ չունի պահած, ավելի բարձր ու վեհ խնդիրներ չունի վերապահած, ուրեմն և ինձ նման մարդիկ կործանման են դատապարտված: Դա աշխարհի համար մի մեծ կորուստ կամ վնաս չէ:

Այս տարվա ամանորյա տոները ամենևին էլ ուրախ չանցան: Մայրս սարսափեց, երբ ինձ տեսավ: Ես ավելի էի մեծացել և իմ նիհարուկ, վտիտ դեմքը դժգունած ու այլայլված տեսք ուներ, անհստակ դիմագծերով, բորբոքված ու արևահարված արտահայտություններով: Բեղիկների առաջին աղվամազածածկույթը և ակնոցը, որ ես վերջերս սկսել էի դնել, դրանից ես նրան ավելի օտարոտի էի դարձել: Քույրերս ետ քաշվեցին և քթի տակ ծիծաղում էին: Ամենը տհաճ էր ու դժնդակ: Անհաճո ու դառն էր նաև հորս հետ ունեցած զրույցը նրա աշխատասենյակում, նույն տհաճությունը զգացի մի քանի ազգականներիս հետ ողջագուրվելիս, և ամենից ավելի՝ ամանորյա երեկոյան: Այն, որքան ես

ինձ հիշում եմ, մեր տան մեծագույն օրն է եղել, տոնականության ու սիրո երեկոն, երախտագիտության, ծնողներիս ու իմ միջև միության վերանորոգման ու վերականգնման օրը: Այս անգամ ողջը միայն ճնշիչ էր, վարանք ու շփոթ առաջացնող: Սովորականի պես հայրս Ավետարանն էր բարձրաձայն ընթերցում՝ դաշտաբնակ հովիվների մասին, «որոնք այնտեղ իրենց հոտն էին արածեցնում», սովորականի պես կանգնած էին քույրերս՝ նվերների սեղանի առաջ լուսափայլելով, բայց հորս ձայնը անուրախ էր հնչում, հայացքն էլ ծեր ու նեղված տեսք ուներ, մայրս տխուր էր, և ինձ համար ամեն ինչ հավասարապես ցավեցնող էր ու անցանկալի՝ նվերներն ու բարեմաղթանքները, Ավետարանն ու լուսավառ տոնածառը: Մեղրաբլիթները բուրում էին անուշահոտությամբ և քաղցր հուշերի խտացյալ ամպաքուլաներ սրփռում չորսբոլորը: Տոնածառը անուշահոտություն էր ճառագում և պատմում բաների մասին, որ այլևս չկային: Ես թախանձագին տենչում էի երեկոյի վերջանալն ու տոնական օրերի ավարտը:

Ողջ ձմեռն այսպես անցավ: Բոլորովին վերջերս ես խստագույն նախազգուշացում ստացա ուսուցիչների խորհրդի կողմից ու ինձ սպառնում էին դպրոցից հեռացնել: Պետք է, որ այլևս ամեն ինչ վերջանալու վրա լիներ: Արդեն վերջ, կարծում էի:

Ես մի առանձնահատուկ ատելությամբ ու քենով էի լցված Մաքս Դեմիանի նկատմամբ: Այս ողջ ընթացքում ես նրան չէի տեսել: Շտ.-ում իմ ուսանելու ամենասկզբում ես նրան երկու անգամ գրեցի, բայց ոչ մի պատասխան չստացա, դրա համար էլ՝ արձակուրդներին նրան չայցելեցի:

Այն նույն այգում, ուր ես աչնանը Ալֆոնս Բեքին հանդիպեցի, պատահեց, որ գարնան սկզբին, երբ ցանկապատի փշալարերը սկսել էին կանաչել, իմ աչքով մի աղջիկ ընկավ: Ես միայնակ զբոսանքի էի դուրս եկել, գլուխս լեփ-լեցուն ամենազազրելի մտքերով ու հոգսերով, քանի որ առողջությունս վատացել էր, բացի այդ՝ ես մշտապես դրամական դժվարությունների մեջ էի., դասընկերներիս գումարներ էի պարտք, պետք էր անհրաժեշտ ծախսեր հորինեի, որպեզի տնից ինչ-որ բան ստանայի, քանի որ քիչ չէին այն խանութները, ուր իմ անվան դիմաց ծխախոտի ու նման կարգի ապրանքների հաշիվները մեծ աճ էին տվել: Քավ լիցի, թեև իմ այդ հոգսերը բազմապատկվել էին, այնպես որ ուր որ է սպասվում էր, թե այստեղ իմ գտնվելն այլևս իր վերջին էր մոտենում, բայց թե մտածում էի, որ դեռ կարող եմ ջուրն ընկնել կամ ուղղիչ տուն տարվել և այդժամ այս մի զույգ մանրմունր հոգսերը նույնպես կվերանան ու ինձ չեն դիպչի: Բայց ես մշտապես ակն ընդ ական էի ապրում այդ տգեղ ու անհաճո իրերի մթնոլորտում ու դրանց տակ կքած՝ տառապում:

Գարնանային այն օրը այգում ինձ մի երիտասարդ աղջնակ

պատահեց, որ շատ հրապուրեց ինձ: Նա բարձրահասակ էր ու նիհար, նրբագեղ հագնված ու խելամիտ մանկան դեմք ուներ: Նա անմիջապես էլ գրավեց ինձ: Նա պատկանում էր ճիշտ այն տեսակին, որին սիրում էի ես, ու նա սկսեց զբաղեցնել իմ երևակայությունը: Նա հազիվ թե տարիքով ինձանից մեծ լիներ, բայց ավելի հասունացած էր, նրբագեղ, հստակ դիմագծերով ու կազմվածքով, ասես մի իսկական օրիորդ լիներ, բայց չարաճճի ինքնահավանության ու պատանեկան ավյունի գունագեղ պոռթկում կար դեմքին, որը ես չափազանց շատ էի սիրում:

Ինձ երբեք բախտ չէր վիճակվել մոտենալու մի աղջկա, որին սիրահարված էի, այս անգամ էլ դա ինձ չհաջողվեց: Բայց տպավորությունը շատ ավելի խորն էր, քան առաջներում, և այդ սիրահարության ազդեցությունը իմ կյանքի վրա ուժեղ ու տպավորիչ եղավ:

Հանկարծ ես կրկին մի պատկեր տեսա իմ առաջ կանգնած, մի վեհ ու պաշտելի կերպարանք, ախ, և սակայն ոչ մի կարիք, ոչ մի տենչանք կամ մղում այնքան խորն ու ուժգին չէր եղել իմ մեջ, ինչպես երկրպագության ու մեծարանքի ցանկությունը: Ես նրան Բեատրիչե կոչեցի, որովհետև նրա մասին ես գիտեի, առանց որ Դանթե կարդացած լինելու, մի անգլիական նկարից, որի արտատպությունը ես պահում էի ինձ մոտ: Այնտեղ պատկերված էր անգլիական նախառաֆայելական ոճի մի աղջկա կերպարանք, երկարուկ վերջույթներով ու բարալիկ, վտիտ գլխով, եռանդուն ձեռքերով ու ոգեշունչ կազմվածքով: Իմ այս գեղեցկուհի աղջնակը ամբողջապես նրան էր նմանվում, քանի որ նա էլ ձևերի այդ վտիտությունն ու մանկականությունն ուներ, որ ես սիրում էի, ու դեմքի մի ինչ-որ ոգեշնչվածություն ու ոգեղինության պես մի բան:

Բեատրիչեի հետ ես ոչ մի բառ իսկ չէի փոխանակել: Սակայն այն ժամանակ նա ամենախորը ազդեցությունն էր գործել ինձ վրա: Նա իր պատկերն էր պարզել իմ առաջ, իմ առջև բացել ու բացահայտել մի սրբություն, նա ինձ տաճարի աղոթող էր դարձրել: Օրըստօրե ես ձեռք էի քաշում չվայտ կերուխումներից ու գիշերային մարտարշավներից: Ես կարողանում էի կրկին մենակ լինել, ես նորից հաճույքով ընթերցանությամբ էի զբաղվում, կրկին բավականություն ստանում զբոսանքների դուրս գալուց:

Այդ հանկարծական ու անսպասելի դարձը բավականաչափ ծիծաղաշարժ էր ինձ համար: Բայց այժմ ես սիրելու ու երկրպագելու մի բան ունեի, ես նորից իդեալ ունեի, կյանքը վերստին լիքն էր գաղափարներով, նախազգացումներով ու խայտաբղետ խորհրդավորությամբ լեցուն արշալույսով, դա ինձ անդյուրազգաց էր դարձնում: Ես վերստին ինքս ինձ հետ էի՝ իմ տանը, թեև լոկ որպես ստրուկ ու ծառա, որպես սպասավոր մի պաշտե-

լի պատկերի:

Այն ժամանակվա մասին ես չեմ կարողանում մտածել առանց որոշակի հուզմունքի: Նորից փորձում էի, ներքին ճիգ ու ջանքով, խորտակված կյանքի մի շրջանի ավերակներից ինձ համար «լուսավոր մի աշխարհ» կառուցել, վերստին ապրելով մեն-միակ տենչանքով՝ իավարն ու չարը իմ միջից վանելու ու ամբողջապես լուսավորի մեջ բնակվելու, ծունկի եկած աստվածների առաջ: Այնուամենայնիվ այս իմ ներկայիս «լուսավոր աշխարհը» ինչ-որ տեղ իմ սեփական ստեղծագործությունն էր. չկար այլևս մայրիկիս մոտ պատսպարվելու ու նրա գրկին ապավինելու նախկին կարելիությունը, չկար և անպատասխանատու ու անհոգ ապահովության երբեմնի հրաշքը, սա մի նոր, իմ կողմից հայտնագործված ու կյանքի կոչված իրականություն էր, պատասխանատվությամբ ու ինքնահնար վարժանքով դրոշմակնքված: Սեռական բնազդը, որից ես տառապում էի և որից մշտապես փախուստի էի դիմում, պետք էր հիմա, այս սրբազան կրակի բոցերում որպես ոգի ու ջերմեռանդ աղոթք պայծառակերպվեր: Այլևս չպետք է ոչ մի խավար կամ ատելի բան գոյություն ունենար, դատարկամիտ շաղակրատանքների գիշերներ, ոչ մի սրտի տրոփյուն՝ ցոփ ու անառակ պատկերների առջև, ոչ մի ծածուկ լրտեսում՝ արգելված դռների տակ, ոչ մի վավաշոտ ցանկասիրություն: Այդ ամենի փոխարեն՝ ես իմ խորանը կհիմնարկեմ, Բեատրիչեի պատկերով, ինքնամոռաց նրան նվիրաբերվելով՝ դրանով իսկ կորհներգեմ ոգուն ու աստվածներին: Կյանքի այն մասը կամ բաժինը, որ խավարի ուժերից էի խլել, ես որպես զոհաբերություն էի մատուցում լուսավորին: Հաճույքը չէր իմ նպատակը, այլ մաքրությունը, ոչ թե երջանկությունը, այլ գեղեցկությունն ու ոգեղենիկ հոգեկանությունը:

Բեատրիչեի այդ պաշտամունքը ամբողջապես վերափոխել էր իմ կյանքը: Դեռ երեկ՝ մի վաղահաս անառակի մեկը լինելով, ես հիմա տաճարի մի սպասավոր էի՝ նպատակ ունենալով սրբերի կարգն անցնել: Ես հրաժարվել էի ոչ միայն չարաղետ կյանքից, որին արդեն ընտելացել էի, այլև փորձում էի ամեն ինչ վերափոխել, ձգտում էի մաքրություն, ազնվականություն ու հարգամեծարություն ամեն ինչի մեջ ներարկել, այդ մասին մտածում էի ուտելիս կամ խմելիս, խոսքի մեջ ու հանդերձանքի: Առավոտը սկսում էի սառը լվացումներով, որին վարժվելուն սկզբնական շրջանում մեծ դժվարությամբ ինձ ստիպել կարողացա: Ես ինձ պահում էի լուրջ ու արժանապատիվ, կեցվածքս ուղղաձիգ էր, քայլվածքս էլ ավելի հանդարտ ու ինքնավստահ: Դիտողներին դա կարող էր ծիծաղելի թվալ. իմ ներսում, սակայն, անկեղծորեն ու բացառապես Աստծո ժամերգությունն էր ծոր տալիս:

Բոլոր այն նորահնար վարժանքներից, որոնցում ես իմ նոր

տրամադրությունների ու աշխարհընկալումների համար արտահայտություն էի փնտրում, ինձ համար հատկապես մեկը մեծ կարևորություն ձեռք բերեց: Ես սկսեցի նկարել: Դա սկսվեց նրանից, որ անգլիական Բեատրիչեի այն պատկերը, որ ես ունեի, այն աղջնակին բավականաչափ նման չէր: Ես ուզում էի փորձել նկարել նրան, նկարել՝ ինձ համար: Բոլորովին մի նոր ուրախությամբ ու հուսավառությամբ ես կարգի բերեցի իմ սենյակը (վերջերս ես իմ սեփական սենյակն էի ձեռք բերել), գեղեցիկ ու գունագեղ թղթեր, գունաներկեր ու վրձիններ, ինչպես հարկն է մի ներկապնակ պատրաստեցի, բաժակ, ճենապակյա թասեր ու մատիտներ հայթայթեցի: Իմ գնած նրբագեղ տեմպերայի ներկերը՝ փոքրիկ պարկուճների մեջ, շլացնում էին ինձ: Նրանց մեջ կար նաև կրակագույն քրոմօքսիդի կանաչ, և հիմա էլ աչքերիս առաջ պարզ տեսնում եմ այն պահը, երբ այն առաջին անգամ շողշողալով բռնկվեց փոքրիկ ու ճերմակին տվող գավաթի մեջ:

Ես զգուշավորությամբ սկսեցի: Դեմք նկարելը դժվար էր, ես որոշեցի սկսել ուրիշ բաներ նկարելու փորձերից: Նկարում էի զարդանախշեր, ծաղիկներ ու փոքրիկ երևակայական տեսարաններ, մի ծառ մատուռի մոտ, մի հռոմեական կամուրջ՝ մշտադալար նոճիներով: Երբեմն-երբեմն ես ամբողջովին կլանվում էի այդ զվարճալիորեն խաղացկուն գործունեության ծիրում, մանկան պես երջանկացած այդ գույնզգույն ներկատուփով: Վերջապես սկսեցի Բեատրիչեին նկարել:

Մի քանի թերթոններ անհաջող ստացվեցին ու մի կողմ նետվեցին: Որքան ես ավելի էի ձգտում աչքերիս առաջ պատկերացնելու այն աղջնակի դեմքը, որին ես մի ժամանակ փողոցում էի հանդիպել, այնքան գործն ավելի վատ էր առաջ գնում: Վերջապես ես հրաժարվեցի դրանից ու սկսեցի պարզապես մի դեմք նկարել՝ առաջնորդվելով երևակայությամբ ու պատկերացումներով, որոնք ինքնին բխում էին սկսվածքից, ներկ ու վրձնից: Այն, ինչ ստացվեց՝ երազային մի դեմք էր, և ես նրանից դժգոհ չմնացի: Սակայն փորձը ես անմիջապես էլ չարունակեցի և ամեն հաջորդ թուղթը ավելի ու ավելի հստակ էր խոսում, ավելի էր մոտենում իր նախատիպին՝ թող որ իրականությունից շատ հեռու մնալով:

Գնալով ես ավելի ու ավելի էի ընտելանում առանց նախապատկերի՝ երազկոտ վրձնով գծեր քաշելու ու մակերեսներ լցնելու արվեստին, որոնք ուղղակի ծնվում էին խաղացկուն վրձնահարվածներից, զուտ բնազդաբար: Վերջապես մի օր, գրեթե ենթագիտակցաբար, ես մի ավարտուն դեմք նկարեցի, որը նախորդներից շատ ավելին էր ինձ ասում: Դա այն աղջնակի դեմքը չէր, որը դեռ երկար ժամանակ չէր հաջողվելու պատկերել: Դա ուրիշ մի բան էր, անիրական մի բան, բայց ոչ նվազ արժե-

քավոր: Այն ավելի շուտ ասես մի պատանու գլուխ լիներ, քան թե աղջկային դեմք, մազերը լուսաշեկ չէին, ինչպես գեղեցիկ աղջիկների պարագայում, այլ շագանակագույն՝ կարմրավուն բծերով, կզակը ուժեղ էր ու ամուր, բերանը, սակայն, կարմրափթիթ, ամբողջը կարծես փոքր-ինչ կարծր էր, քարացած ու դիմակ հիշեցնող, սակայն տպավորիչ էր ու ծածուկ կյանքով առլի:

Երբ ես նստած էի պատրաստի նկարի առջև, նա ինձ վրա մի տարօրինակ տպավորություն գործեց: Նա ինձ պատկերացավ որպես մի ինչ-որ Աստծո պատկեր կամ սուրբ դիմակ թվաց, կիսով չափ տղամարդկային, կիսով չափ՝ կանացի դիմագծերով, առանց տարիքի, նույնքան ուժեղ ու կամային, որքան և երազկոտ, նույնքան քարացած, որքան և ներքուստ կենդանի: Այդ դեմքն ինձ ինչ-որ բան էր ասում, այն ինձ էր պատկանում, պահանջներ էր դնում իմ առաջ: Այն նմանություն ուներ ինչ-որ մեկի հետ, ես չգիտեի, թե ում:

Այդ նկարն այժմ միաառժամանակ ուղեկիցն էր իմ բոլոր մտքերի, մասը կազմելով իմ կյանքի: Ես այն թաքցնելու պես պահում էի մի դարակում, ոչ ոք չպետք է այն հայտնաբերեր ու ծաղրեր ինձ: Բայց հենց որ մենակ էի լինում իմ սենյակում, նկարը դուրս էի հանում ու հաղորդակցվում, հարաբերվում նրա հետ: Երեկոները ես այն գնդասեղով փակցնում էի մահճակալիս դիմացի պատատուին, մինչև քուն մտնելս նայում էի նրան, առավոտներն էլ՝ իմ առաջին հայացքը նրան էր ընկնում:

Հենց այդ ժամանակ էլ ես նորից սկսեցի երազանքներին տրվել, ինչը երեխա ժամանակ միշտ անում էի: Ինձ թվում էր, թե տարիներ շարունակ ես ոչ մի երազ չեմ ունեցել: Հիմա նրանք նորից սկսեցին այցելել, պատկերների բոլորովին մի նոր տեսակ, հաճախակի հայտնվում էր նկարեն պատկերը՝ կենդանի ու խոսուն, քարեկամական կամ թշնամական ձևերով, երբեմն դեմքը ծամածռելով, երբեմն էլ՝ անսահմանորեն գեղեցիկ, ներդաշնակ ու ազնիվ:

Մի առավոտ, երբ արթնացել էի նմանօրինակ երազներից, ես հանկարծ ճանաչեցի նրան: Նա ինձ էր նայում այնպես հեքիաթայնորեն քաջածանոթ ելևէջումով, թվում էր, թե իմ անունն էր տալիս: Կարծես ճանաչում էր ինձ, որպես թե մայրը՝ մշտապես ինձ վրա խոնարհված: Սրտի տրոփյունով ես սևեռուն այդ թղթին էի նայում, շագանակագույն ու խիտ մազերին, կիսականացի բերանին, արտասովոր լուսապայծառությամբ ուժեղ ու ամրակուռ ճակատին, որ ասես չորացել-մնացել էր, և ավելի ու ավելի մոտիկից, կարծես իմ մեջ զգում էի, որ նա ծանոթ էր ինձ, վերստին գտնված ու իմացված մի բան:

Ես վեր թռա անկողնուց, տնկվեցի դեմքի առաջ ու նայեցի նրան անմիջական մերձավորությունից, հայացքս հառած լայն

բացված, կանաչին տվող ու սևեռուն աչքերի մեջ, որոնցից աջը փոքր-ինչ ավելի բարձր դիրք էր բռնել, քան մյուսը: Հանկարծ այդ աջ աչքը ցնցվեց, երերաց թեթև ու նուրբ, բայց պարզորոշ և այդ ցնցումի պահին ես ճանաչեցի պատկերը...

Ինչպե՞ս միայն կարող էր պատահել, որ ես այդքան ուշ գլխի ընկա... Դա Դեմիանի դեմքն էր:

Հետագայում ես ավելի ու ավելի հաճախ էի նկարը համեմատում Դեմիանի իրական դիմագծերի հետ, այնպես ինչպես ես նրանց գտնում էի իմ հիշողության մեջ: Դրանք բնավ էլ նույնական չէին, թեև նման էին: Այնուհանդերձ այն Դեմիանն էր:

Մի անգամ՝ վաղ գարնանային մի երեկո, արևը փայլատակում էր, շեշտակի ու կարմիր, իմ պատուհանի մեջ, որ դեպի արևմուտք էր նայում: Սենյակում կիսալույս էր: Այդժամ գլխումս հանկարծ մի միտք ծագեց. Բեատրիչեի նկարը, կամ Դեմիանի, գնդասեղով փակցնել լուսամուտի խաչափայտին և ուշիուշով զննել, թե ինչպես է երեկոյան արեգակը փայլում նրա միջից: Դեմքը ցրվեց ու տարածվեց: Դիմագծերը տարրալուծվեցին, սակայն կարմրավունով եզերապատված աչքերը, ճակատի պայծառությունն ու դյուրագրգիռ կարմիր բերանը այրվում-բոցավառվում էին խորն ու անզուսպ մակերևույթից պոկվելով: Երկար նստած էի ես նրա դեմ-հանդիման, նույնիսկ, երբ այն արդեն հանգել-մարել էր: Ու աստիճանաբար ինձ մի զգացում պաշարեց, որ դա ոչ Բեատրիչեն էր, ոչ էլ Դեմիանը, այլ՝ ես ինքս էի: Պատկերը նման չէր ինձ (դա ես ինքս էլ զգում էի), բայց դա հենց այն էր, ինչն իմ կյանքն էր կազմում, դա իմ ներքինն էր, իմ ճակատագիրը կամ իմ դևը, իմ Դեմոնը: Այսպիսին պետք է իմ ընկերը լինի, եթե ես երբևէ նորից մեկին գտնեմ: Այսպիսին պետք է իմ սիրուհին լիներ, եթե ես երբևիցե նման մեկը ունենամ: Այսպես պետք է իմ կյանքը և իմ մահը լինեին, այդ իմ ճակատագրի հնչողությունն էր ու կշռույթը:

Այդ շաբաթներին ես նորից ընթերցանությանն էի տրվել, որն ինձ վրա ամենախորը տպավորությունն էր գործում, քան իմ բոլոր նախկինում կարդացածները: Հետագայում էլ ես հազվադեպ էի գրքերի ընթերցանությունից այդպես տպավորվել, թերևս միայն Նիցշե ընթերցելիս: Դա Նովալիսի մի հատորյակն էր, նամակներ ու խրատական ասացվածքներ, որոնցից շատերը ես չէի հասկանում և որոնք բոլորն էլ, սակայն, ինձ անասելիորեն գրավում էին ու շլացնում: Այժմ ես մտաբերում եմ այդ ասացվածքներից մեկը: Ես այն գրիչով գրեցի նկարի տակ. «Ճակատագիրն ու ներաշխարհը նույն հասկացության անունն են»: Ես այն հիմա միայն հասկացա:

Աղջիկը, որին ես Բեատրիչե էի կոչում, ինձ ավելի ու ավելի հաճախակի էր հանդիպում: Այդժամ ես այլևս ոչ մի շարժում չէի

գգում, միայն քնքշանվաղ ու համերաշխ մի համաձայնություն, գերզգայական մի նախազգացում. դու կապված ես ինձ, ոչ թե դու, այլ լոկ քո պատկերը. դու իմ ճակատագրի մի հատվածն ես:

Մաքս Դեմիանի հանդեպ իմ կարոտը վերստին սաստկացել էր: Ես ոչինչ չգիտեի նրա մասին, արդեն տարիներ ի վեր՝ ոչինչ: Մեն-միակ անգամ արձակուրդների ժամանակ հանդիպեցի նրան: Հիմա տեսնում եմ, որ այդ կարճառոտ հանդիպումը ես թաքցնելու պես պահ էի տվել իմ նկարած պատկերում, և տեսնում եմ, որ այն ամոթիածության ու ունայնամտության շաղախից էր հունցվել: Ես պետք է նորից այն ետ նվաճեի:

Այսպես մեկ անգամ, դպրոցական արձակուրդներին, երբ ես ինքնահավան ու մշտապես փոքր-ինչ հոգնած՝ գիներների ժամանակների ինձ հատուկ դեմքով թրև էի գալիս իմ հայրենական քաղաքում, թափառաշրջիկի ցուպս թափահարելով, քաղքենիների ծեր, անտարբեր ու արհամարհական դեմքերին նայելով, այդժամ իմ երբեմնի բարեկամը դիմացս հայտնվեց: Դեռ հազիվ էի միայն նրան տեսել՝ ցնցվեցի: Ու մի ակնթարթում՝ կայծակի արագությամբ Ֆրանց Քրոմերը միտքս եկավ: Արդյո՞ք Դեմիանը իսկապես մոռացել էր այդ պատմությունը: Այնքան տհաճ էր նրա հանդեպ պարտավորվածություն ունենալու այդ զգացողությունը, իսկապես ասած՝ մի հիմար մանկական պատմություն, բայց և, այնուամենայնիվ, մի պարտավորվածություն...

Թվում էր, նա սպասում էր, թե արդյո՞ք ես կուզենայի ողջունել իրեն, և երբ ես հնարավորինս սառնասրտություն հանդես բերեցի, նա ինձ ձեռքը մեկնեց: Դա նրա նույն ձեռքսեղմումն էր... Այնպես ամուր, ջերմ և սակայն սառը, տղամարդկային...

Նա ուշադիր նայեց դեմքիս ու ասաց. «Դու մեծացել ես, Զինքլեր»: Իսկ ինքը ինձ կատարելապես անփոփոխ թվաց, և՛ ծեր, և՛ ջահել, ինչպես միշտ:

Նա միացավ ինձ, մենք գրոսնում էինք երկուսով ու խոսում միայն կողմնակի առարկաներից, ոչ մի խոսք անցյալի մասին: Ես մտաբերեցի, որ մի ժամանակ բազմիցս նրան նամակներ էի գրել՝ առանց որ իրենից պատասխան ստանալու: Ախ, արդյո՞ք նա դա էլ էր մոռացել, այդ հիմար, անհեթեթ նամակները... Նա այդ մասին ոչ մի խոսք չասաց...

Այն ժամանակ գեռևս ոչ մի Բնատրիչ էլ չկար, և ոչ էլ նկար, ես գեռևս գտնվում էի իմ չարագեղ ժամանակների միջակայքում: Քաղաքի արվարձանում ես նրան հրավիրեցի գինետուն մտնել: Նա հեռուից ինձ: Պարծենալու պես՝ ես մի չիչ գինի պատվիրեցի. բաժակները լցրեցի, խփեցի նրա բաժակին և ցուցադրելու համար իմ քաջ ծանոթությունը ուսանողական գինարբուքների սովորույթին՝ մի չնչով պարպեցի առաջին բաժակը:

- Դու հաճա՞խ ես գինետներ այցելում,- հարցրեց նա:

- Օ՜ այո,- ասացի ես ծուլորեն,- ուրիշ էլ ի՞նչ է մնում անելու: Վերջապես դա գոնե հաճելի զբաղմունք է:

- Այդպե՞ս ես կարծում: Շատ հնարավոր է դու ճիշտ ես: Այդ հարբեցողության, բաքոսականության մեջ անշուշտ գեղեցիկ բաներ էլ կան: Բայց ես գտնում եմ, որ շատ մարդկանց համար, որոնք գինետներում երկար են նստում, այդ ամենը կորածի հաշիվ է: Ինձ թվում է, որ գինետներ հաճախելը իրապես քաղքենիական զբաղմունք է: Այո՜, երկարուձիգ գիշերներով, վառվող ջահերի ընկերակցությամբ իսկական ու գեղեցիկ արբեցողությանն ու հափշտակությանը տրվել... Ու այդպես շարունակ թասթասի ետևից պարպել, մի՞թե դա չէ ճշմարտությունը: Դու կարո՞ղ ես մի պահ Ֆաուստին պատկերացնել, թե ինչպես է նա ամեն երեկո իր մշտական սեղանի առաջ նստած բաժակ-բաժակի ետևից դատարկում:

Ես խմում էի ու թշնաբար նրա կողմը նայում:

- Այո, ճիշտ է, ամեն ոք չէ, որ Ֆաուստ կարող է լինել,- կարճ կտրեցի ես:

Նա ինձ էր նայում մի տեսակ ապշահար հայացքով:

Հետո ծիծաղեց հին թարմությամբ ու սեփական գերազանցության ցուցադրանքով:

- Դե գուցե կարիք չկա՞ այդ մասին վիճելու: Ամեն դեպքում հարբեցողի, անառակ ու ցոփ մարդու կյանքը, ըստ երևույթին, շատ ավելի աշխույժ է և հետաքրքիր, քան առաքինասեր, անբասիր քաղքենունը: Եվ հետո (ես մի անգամ այդ մասին կարդացել եմ) անբարոյական մարդու կյանքը լավագույն նախավարժանքներից մեկն է միստիկ ապրելաձևին անցնելու համար: Այդպիսի մարդիկ միշտ էլ եղել են ու կան, ինչպես օրինակ սուրբ Ավգուստինիոսը, որոնք հետո տեսանողներ ու մարգարեներ են դարձել: Վերջինս նախկինում նույնպես վայելքներին տրվող ու կենսասեր մարդ է եղել:

Ես կասկածամտությամբ էի ունկնդրում ասվածին և ոչ մի դեպքում չէի ուզում, որ նա ինձ վրա տիրապետություն հաստատեր: Այսպես՝ ինքնահավան ու հղփացած ես վրա բերեցի.

- Այո՜, ճաշակին ընկեր չկա... Անկեղծ ասած, ես նպատակ չունեմ տեսանող կամ դրա նման մի բան դառնալ:

Դեմիանը նայում էր ինձ փոքր-ինչ կկոցած աչքերով՝ ամեն ինչ հասկացողի պես:

- Սիրելի Զինքլեր,- հանդարտ ասաց նա,- ես չէի ուզում տհաճ բաներ ասել: Ի միջի այլոց՝ թե ինչ նպատակով ես դու հիմա քո թասը խմում, մենք երկուսս էլ չգիտենք: Քո մեջ եղած այն բանը, որ քո կյանքն է կազմում, արդեն իսկ գիտի այդ մասին: Որքա՜ն լավ է դա. որովհետև մեր մեջ՝ ներսում, կա մեկը,

որ ամեն ինչ գիտե, ամեն ինչ ուզում է, ամեն ինչ ավելի լավ է անում, քան մենք ինքներս: ...Բայց, ներող կլինես, ես պետք է տուն գնամ:

Մենք հապշտապ հրաժեշտ տվեցինք իրարու: Ես նստած մնացի մռայլ տրամադրության մեջ, մինչև վերջ դատարկեցի շիշը, և երբ արդեն ուզում էի վեր կենալ, իմացա, որ Դեմիանն արդեն իսկ հաշիվը փակել էր: Դա ինձ ավելի շատ զայրացրեց:

Իմ մտքերը նորից ու նորից այդ փոքրիկ պատահարի շուրջն էին պտտվում: Նրանք լիքն էին Դեմիանով: Եվ խոսքերը, որ նա ասաց քաղաքամերձ գինետանը, նորից հառնեցին իմ հիշողության մեջ, զարմանալիորեն թարմ ու անկորուստ: «Այնքան լավ է իմանալ այն, ինչը մեր մեջ՝ ներսում է և ամեն ինչ գիտի...»:

Ես նայում էի լուսամուտից կախված նկարին, որն ամբողջապես մարել-հանգել էր: Բայց ես տեսնում էի դեռևս վառվող աչքերը: Դա Դեմիանի հայացքն էր: Կամ էլ՝ նրանը, որն իմ մեջ՝ իմ ներսում էր: Նա, որ ամեն ինչ գիտե:

Ինչպե՞ս էի ես կարոտել Դեմիանին: Նրա մասին ես ոչինչ չգիտեի, նա անհասանելի էր ինձ համար: Գիտեի միայն, որ նա, ենթադրաբար, ուսանում էր ինչ-որ տեղ և որ գիմնազիան ավարտելուց հետո՝ մոր հետ հեռացել էր մեր քաղաքից:

Քրոմերի հետ կապված իմ պատմությունից ի վեր՝ բոլոր իմ հիշողությունները Մաքս Դեմիանի շուրջն էին պտտվում: Ինչքա՜ն-ինչքա՜ն հուշեր էին նորից արթնանում իմ մեջ, այն ամենից, ինչ նա ժամանակին ասել էր ինձ, մինչև այսօր էլ ողջը պահպանել էր իր իմաստը, արդիական էր ու ինձ էր վերաբերում: Նաև այն, ինչը նա մեր վերջին, այնքան քիչ ուրախալի հանդիպման ժամանակ ասաց ինձ՝ անբարոյական մարդու ու սրբերի մասին, հանկարծ լույսի պես պարզ կանգնեց իմ հոգու առաջ: Արդյո՞ք ինձ հետ էլ ճիշտ և ճիշտ այդպես չէր եղել: Արդյո՞ք ես հարբեցողության ու աղտեղությունների մթնոլորտում չէի ապրել, թմբիրի ու մոռացության մեջ, մինչև որ մի նորահայտ կենսական հակում, բոլորովին հակառակ մի բան, կենդանացավ իմ մեջ՝ մաքրության այդ պահանջը, առ սրբությունը եղած կարոտը:

Այդպես ես շարունակեցի հիշողություններս փորփրել, վաղուց արդեն գիշերն իջել էր ու դրսում բարակ անձրև էր մաղում: Իմ հիշողությունների մեջ էլ ես անձրևի ձայնն էի լսում, ու հիմա աչքերիս առաջ շագանակենիների ներքո անցկացրած այն ժամն էր, երբ նա առաջին անգամ ինձ հարցուփորձ արեց Ֆրանց Քրոմերի մասին և դուրս կորզեց իմ առաջին գաղտնիքները: Աչքերիս առաջ մեկը մյուսի ետևից ծիկրակում էին դպրոցի ճանապարհին մեր ունեցած խոսակցությունները, դավանաբանության դասերը: Եվ վերջապես ես մտաբերեցի Մաքս Դեմի-

անի հետ իմ ամենաառաջին հանդիպումը: Ինչի՞ մասին էր, սակայն, այն ժամանակ խոսակցությունը գնում: Ես անմիջապես չկարողացա հիշել, բայց ինքս ինձ ժամանակ տվեցի ու հիմա ամբողջապես դրա մեջ էի խորասուզվել: Եվ ահա այն նորից հայտնվեց, այդ կրկին նա էր: Մենք կանգնած էինք մեր դռան առաջ, այն բանից հետո, երբ նա ինձ իր կարծիքն էր հայտնել Կայենի մասին: Այդժամ նա խոսում էր այն հնամենի, մաքուր-լվացված զինանշանի մասին, որ փակցված էր մեր դարպասի վերևում՝ ներքևից դեպի վերև աստիճանաբար լայնացող գլխաքարին: Ասաց, որ դա հետաքրքրում էր իրեն և որ նման բաների վրա պետք է ուշադրություն դարձնել:

Գիշերվա ընթացքում ես երազ տեսա Դեմիանի ու զինանշանի մասին: Վերջինս անընդհատ փոխակերպվում էր, Դեմիանը այն պահում էր իր ձեռքերում, հաճախ այն փոքր էր ու գորշ, հաճախ էլ՝ վիթխարահսկա ու բազմագույն, բայց Դեմիանը բացատրում էր ինձ, որ այն միշտ էլ նույնն էր մնում ու չէր փոխվում: Վերջում նա ինձ ստիպեց ուտել զինանշանը: Երբ ես այն կուլ տվեցի, մեծագույն սոսկանքով զգացի, որ կուլ տված զինանշանի թռչունը իմ մեջ կենդանի մնաց, սուզվում էր իմ մեջ ու շարունակ այլանդակում ու խեղաթյուրում ինձ ներսից: Մահվան վախով լեցուն՝ ես քնից վեր թռա ու արթնացա:

Երբ սթափվեցի՝ գիշերվա կեսն էր, ու լսում էի, որ սենյակում անձրև էր գալիս: Պատուհանը փակելու նպատակով վեր կացա ու ոտքս դրեցի հատակին ընկած ինչ-որ լուսավոր բանի վրա: Առավոտյան կողմ ես հայտնաբերեցի, որ դա իմ նկարած պատկերն էր: Այն ընկած էր խոնավ հատակին ու բարձեր էին թափված շուրջբոլորը: Ես այն չորացնելու նպատակով դրեցի մի ծանր ու մեծադիր գրքի ծծողական թերթոնների միջև: Երբ օրեր անց այն նորից տնտղեցի, արդեն չորացել էր: Բայց և փոխվել էր: Կարմիր բերանը դժգունել էր ու փոքր-ինչ ավելի նեղացել: Հիմա այն ամբողջապես Դեմիանի բերանն էր:

Ես որոշեցի մի նոր նկար ձեռնարկել՝ զինանշանին պատկերված թռչունը: Թե իրականում այն ինչպիսի տեսք ուներ, ես այլևս պարզորոշ չէի հիշում, և նրա մասին իմ գիտցածը սոսկ այն էր, որ մոտիկից նույնիսկ այն դժվար էր ճանաչել, քանի որ շատ հին էր ու հաճախակի ներկ էր քսվել վրան: Թռչունը կանգնած էր կամ ինչ-որ բանի վրա, գուցե մի ծաղկի, կողովի կամ բույնի վրա, կամ գուցե ծառի կեղևի: Դա ինձ համար հոգ չէր և շատ էլ չէր հետաքրքրում կամ ահանգստացնում. ես սկսեցի նրանից, ինչի վերաբերյալ հստակ պատկերացում ունեի: Զգիտեմ, թե ինչ մի անորոշ կարիքից դրդված՝ ես անմիջապես ուժեղ ու թունդ գույներից սկսեցի, թռչունի գլուխը իմ թղթի վրա ոսկեգեղնավուն էր: Բարձր տրամադրության մեջ՝ շարունակեցի

աշխատանքս ու մի քանի օրից նկարը գլուխ բերեցի:

Հիմա այն մի գիշատիչ թռչուն էր հիշեցնում, սուրուլիկ ու հանդուգն ճուռակի գլխով: Մինչև գոտկատեղն այն խրված էր խավարամած երկրագնդի մեջ, որից, ինչպես մի հսկայական ձվի միջից, նա աշխատում էր վեր բարձրանալ՝ դեպի կապույտ երկնքի հենքը: Ինչքան ավելի երկար էի թուղթը զննում, այնքան ինձ ավելի շատ էր թվում, որ կարծես այն գունագեղ զինանշանը լիներ, ինչպիսին երազումս էր երևացել:

Դեմիանին նամակ գրելն ինձ անհնարին էր թվում, նույնիսկ եթե ես իմանայի, թե ուր: Բայց որոշեցի, այդ նույն զարմանահրաշ նախազգացումից մղված, որպիսին այնժամ պաշարել էր ինձ, ճուռակով նկարը ուղարկել նրան, կարևոր չէր կհասներ իրեն, թե ոչ: Նկարի վրա ոչինչ չգրեցի, ոչ անգամ անունս, խնամքով կտրեցի եզրերը, գնեցի մի մեծադիր թղթածրար ու վրան գրեցի իմ ընկերոջ երբեմնի հասցեն: Հետո ծրարն ուղարկեցի:

Քննությունս մոտենում էր ու ես պետք է սովորականից ավելի շատ ժամանակ դասերիս հատկացնեի: Այն պահից սկսած, երբ ես անսպասելիորեն փոխեցի իմ նողկալի ապրելաձևը՝ ուսուցիչներս ինձ նորից ողորմածաբար ընդունեցին: Նույնիսկ հիմա էլ՝ ես կարգապահ աշակերտ չէի, բայց թե ամեն դեպքում ոչ ես, ոչ էլ ուրիշ որևէ մեկը չէր հիշում այն մասին, որ սրանից դեռևս մի կես տարի առաջ դպրոցից ինձ հեռացնելը բոլորովին հավանական էր թվում:

Հայրս հիմա ինձ նորից գրում էր այն նույն ոճով, ինչպես առաջ, առանց կշտամբանքի ու սպառնալիքների: Սակայն ես դույզն-ինչ ցանկություն չունեի հորս կամ որևէ մեկին բացատրելու, թե ինչպես էր այդ փոփոխությունը տեղի ունեցել ինձ հետ: Այն, որ այդ կերպափոխությունը համընկել էր իմ ծնողների և ուսուցիչներիս ցանկություններին՝ դա զուտ պատահականություն էր: Այդ փոփոխությունն ինձ չմղեց դեպի ուրիշները, ոչ էլ ուրիշներին ինձ մոտեցրեց, այլ միայն ավելի միայնակ դարձրեց ինձ: Այն նշան էր բռնել դեպի մի ինչ-որ տեղ՝ Դեմիանի ուղղությամբ, դեպի հեռավոր ճակատագիրը: Ինքս էլ այդ մասին ոչինչ չգիտեի, ես նրա ճիշտ մեջտեղում էի կանգնած: Այն սկսեց Բեատրիչեից, բայց միառժամանակ ես իմ նկարած թղթերով էի ապրում, Դեմիանին առնչվող իմ մտքերով, բոլորովին անիրական մի աշխարհում, և մնացած ամեն ինչ ամբողջապես մոռացել էի, վանել իմ տեսադաշտից ու մտքերից: Իմ երազների, սպասումների, իմ ներքին վերակերպարանափոխման մասին ես անկարող էի որևէ մեկին մի խոսք անգամ ասել, նույնիսկ, եթե ցանկություն էլ ունենայի ասելու:

Բայց ինչպե՞ս միայն ես դա կարող էի ուզենալ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԹՌՉՈՒՆԸ ԿՌԻՎ Է ՏԱԼԻՍ ՁՎԻ ՀԵՏ

Իմ նկարած երազային ցնորք-թռչունը ճանապարհին էր ու ընկերոջս էր փնտրում: Զարմանահրաշ մի ձևով ինձ պատասխան եկավ:

Դասամիջոցներից մեկի ժամանակ մեր դասասենյակի իմ նստարանին մի անգամ գրքիս մեջ խցկած մի երկտող գտա: Այն ծալված էր այնպես, ինչպես ընդունված էր մեր շրջապատում, երբ դպրոցական ընկերներով երբեմն-երբեմն դասերի ընթացքում ծածուկ կերպով իրար հետ տոմսակներ էինք փոխանակում: Ինձ զարմացնում էր միայն, թե ով էր ինձ այդ երկտողն ուղարկել, քանի որ ես ոչ մի համադասարանցու հետ այդօրինակ հարաբերություններ մեջ չէի գտնվում: Մտածեցի, որ դա կարող էր մի ինչ-որ աշակերտական զավեշտական միջոցառման հրավերք լինել, որին ես, սակայն, չէի մասնակցելու, և երկտողը, առանց կարդալու, դրեցի իմ գրքի առջևի մասում: Միայն դասի ժամանակ այն պատահաբար ձեռքս ընկավ:

Ես խաղում էի թղթի հետ, պատահաբար այն մի փոքր բացեցի ու աչքովս ընկան վրան գրված մի քանի խոսքեր: Ես հայացքս սրեցի այդ բառերի ուղղությամբ, այն կառչելու պես կախ ընկավ մի բառից, ես կարդացի այն ու ցնցվեցի, սիրտս կծկվեց ու փոքրացավ ճակատագրի առաջ, որպես թե սահմռկեցուցիչ սառնամանիքի ժամանակ.

«Թռչունը կռիվ է տալիս ձվի հետ: Ձուն աշխարհն է: Ով ուզում է ծնվել, պետք է կործանի աշխարհը: Թռչունը ճախրելով սլանում է դեպի Աստված: Աստվածը կոչվում է Աբրաքսաս»:

Այս տողերը բազմաթիվ անգամներ ընթերցելուց հետո՝ ես ընկղմվեցի խորունկ մտածությունների գիրկը: Այլևս ոչ մի կասկած չէր կարող լինել՝ դա Դեմիանի պատասխանն էր: Ինձանից ու իրենից բացի՝ ուրիշ ոչ ոք չէր կարող այդ թռչունի մասին իմանալ: Նա ստացել էր իմ նկարը: Նա հասկացել էր ամեն ինչ ու օգնում էր ինձ պարզաբանել իմաստները: Բայց ի՞նչ կապ կար այդ ամենի միջև: Եվ (ամենից առաջ դա էր ինձ մտատանջում) ի՞նչ ասել է Աբրաքսաս: Ես այդ բառը երբեք չէի լսել կամ որևէ տեղ ընթերցել: «Աստվածը կոչվում է Աբրաքսաս...»:

Դասաժամն ավարտվեց՝ առանց որ դասից մի բառ իսկ լսած լինելու: Հետո սկսվեց հաջորդը՝ միջկեսօրյա դասաժամերից վերջինը: Դասավանդողը մի երիտասարդ փոխարինող ուսուցիչ էր, որ հենց նոր էր միայն համալսարանն ավարտել և արդեն հասցրել էր մեր համակրանքը շահել զուտ այն բանով, որ իսկապես էլ շատ էր երիտասարդ ու մեր նկատմամբ կեղծ արժանապատվություն խաղալու հավակնություններ չուներ:

Դոկտոր Ֆոլլենի ղեկավարությամբ մենք Հերոդոտոս էինք ընթեռնում: Այդ ընթերցանությունները պատկանում էին այն հազվագյուտ դպրոցական առարկաների թվին, որ հետաքրքրում էին ինձ: Բայց այս անգամ մտքերս ուրիշ տեղ էին: Ես մեքենաբար բաց էի արել գիրքս, սակայն թարգմանությանը չէի հետևում ու խորասուզված էի մտքերիս մեջ: Ի միջի այլոց՝ ես արդեն բազմիցս համոզվել էի, թե որքան ճիշտ էին դուրս գալիս Դեմիանի այն ժամանակվա ասածները, երբ նա ինձ հոգևոր դասեր էր տալիս: Ինչին որ բավականաչափ ուժգին ես տենչում՝ հաջողվում է: Երբ դասի ընթացքում ես խորագույնս ներսուզված էի լինում սեփական մտքերիս մեջ, այդժամ կարող էի վստահ լինել, որ ուսուցիչն ինձ չէր անհանգստացնի: Այո, երբ ցրված ես լինում կամ քնատ, նա հանկարծ կողքիդ է հայտնվում. դա ինձ հետ հաճախ էր պատահել: Բայց երբ իսկապես տրված ես լինում մտածմունքներիդ, իրոք խորասուզված ես նրանց մեջ, այդժամ դու պաշտպանված ես: Սևեռուն հայացքի հետ կապված փորձառությունը ես արդեն փորձարկել էի, յուրացրել այն ու ընդունել նրա ճշմարտացիությունը: Այն ժամանակ, Դեմիանի օրոք, դա ինձ չէր հաջողվում, հիմա ես հաճախ էի զգում, որ հայացքների, մտքերի միջոցով կարելի էր շատ բաներ կարգավորել:

Այդպես նստած էի ես հիմա, մտքերով հեռու Հերոդոտոսից ու դպրոցից: Բայց այդ միջոցին ուսուցչի ձայնը կայծակի պես մեխվեց ուղեղիս մեջ, այնպես, որ ես սարսափահար վեր թռա: Ես լսում էի նրա ձայնը, նա կիպ իմ կողքին էր կանգնած, կարծում եմ՝ մի քանի անգամ անունս պետք է արտասանած լիներ: Բայց նա ինձ չէր նայում: Ես խորը շունչ քաշեցի:

Այդժամ ես նորից նրա ձայնը լսեցի: Նա բարձրաձայն մի բառ էր արտասանում. «Աբրաքսաս»:

Անդրադառնալով իր մի բացատրությանը, որի սկիզբը ես բաց էի թողել, դոկտոր Ֆոլլենը շարունակեց. «Մենք չպետք է հին աշխարհի այն աղանդների ու միստիկ դպրոցների հայեցակերպերն ու աշխարհայեցությունները այնպես միամիտ ու պարզունակ ձևով պատկերացնենք, ինչպես դա ներկայացվում է ռացիոնալիստական ուսմունքների կողմից: Մեր մտածողության տեսակետից՝ հին աշխարհում ընդհանրապես գիտություն չկար: Փոխարենը՝ գոյություն ուներ փիլիսոփայական-բնազանցական ճշմարտություններով զբաղվելու մի բնագավառ, որը բարձր զարգացման էր հասել: Մասամբ դրանից են առաջացել մոգությունն ու ձեռնածությունները, որոնք հաճախ էլ դեպի կեղծիքն ու ոճրագործությունն էին առաջնորդում: Սակայն մոգությունն էլ ազնվական ծագում ու խորը գաղափարներ ուներ: Նույնպես և Աբրաքսասի մասին ուսմունքը, որը ես քիչ առաջ որպես օրինակ բերեցի: Այդ անունն են հիշատակում հունական մոգական

բանաձևերի առնչությամբ արտահայտվելիս, հաճախ էլ այն որպես մի ինչ-որ կախարդական սատանայական անուն են օգտագործում, որպիսին դեռ այսօր էլ գործածական է վայրենի ժողովուրդների մոտ: Սակայն, պետք է կարծել, որ Աբրաքսասը շատ ավելին է նշանակում: Մենք կարող ենք այդ անունը մոտավորապես այնպես ընկալել, որպես թե մի աստվածության անուն, որը միստիկ-խորհրդապաշտական առաքելություն ուներ՝ միավորելու աստվածայինն ու սատանայականը»:

Փոքրամարմին, ուսյալ մարդուկը շարունակում էր խոսել գեղեցիկ ու եռանդուն, ոչ ոք հատուկ ուշադրությամբ չէր լսում նրան, այդ անունը այլևս երբեք չհիշատակվեց, իմ ուշադրությունն էլ շուտով կրկին իմ մեջ խորասուզվելով՝ ամփոփվեց:

«Աստվածայինն ու սատանայականը միավորել»՝ արձագանքվելու պես դեռ հնչում էր իմ ականջներում: Դա ես ինքս էլ պատրաստ էի իմ կողմից հաստատելու: Դրան ես ծանոթ էի Դեմիանի հետ մեր բարեկամության ամենավերջին օրերին վարած զրույցներից: Դեմիանն այն ժամանակ ասում էր, թող որ այդպես է, որ մենք մեկ Աստված ունենք, որին պաշտում ենք, բայց նա աշխարհի ինքնակամ տրոհված լոկ մի կեսն է ներկայացնում (դա պաշտոնական, թույլատրելի, «լուսավոր» աշխարհն էր): Բայց պետք է ողջ աշխարհը պաշտել կարողանաս, ուրեմն՝ կամ պետք է մի աստված ունենալ, որը նաև սատանա կարող է լինել, կամ էլ՝ հարկավոր է Աստծո պատարագի կողքին նաև սատանային պատարագ մատուցելու պես մի ծառայություն կատարել: Ահա՛ ուրեմն Աբրաքսասը այն աստվածն էր, որը միաժամանակ և՛ աստված էր, և՛ սատանա:

Բավական ժամանակ ես մեծագույն եռանդով որոնումների մեջ էի, հետքն ասես բռնել էի՝ առանց, սակայն, առաջ ընթանալու: Մի ողջ գրադարան կազմող գրքերի մեջ քրքրելով՝ փնտրում էի Աբրաքսասին, բայց ապարդյուն: Եվ սակայն իմ էությունը երբեք այդպես նպատակամղված ու խորապես լծված չի եղել այդօրինակ որոշակիացված ու գիտակցված փնտրտուքի, որի ընթացքում, ըստ էության, ընդամենը լոկ ճշմարտություններ ես գտնում, որոնք քեզ ոչինչ չեն տալիս:

Բեատրիչեի պատկերը, որով մի որոշ ժամանակ ես կլանված էի հիմնովին և որն զբաղեցրել էր իմ ողջ ներաշխարհը, հիմա աստիճանաբար նահանջելու պես տեղի էր տվել, կամ ավելի շուտ՝ դանդաղ ու հուշիկ հեռանում էր ինձանից, ավելի ու ավելի մոտենալով հորիզոնին, դառնալով ավելի ստվերակերպ, ավելի հեռընկեց ու դժգունած: Այն այլևս հոգուն չէր բավարարում:

Հիմա իմ իսկ ներսում խլրտացող, սանձարձակ պրկվածության հասնող կեցության ոլորաններում, որ պաշարել էր ինձ որպես անրջուն մի թափառաշրջիկի, սկսում էր մի նոր գոյացու-

թյուն առաջ գալ: Կարոտը դեպի կյանքը փթթում էր իմ մեջ, ավելին՝ տենչանքը դեպի սերն ու սեռական հակումը, որը ես մի որոշ ժամանակ կարողացել էի տարրալուծել Բեատրիչեի հանդեպ իմ պաշտամունքի մեջ, պահանջում էր նոր պատկերներ ու նպատակներ: Առաջվա պես ոչ մի բավարարում ընդառաջ չէր գալիս ինձ, և ինձ համար ավելի անհնարին էր, քան երբևէ կարոտալի բաղձանքը մի կողմ նետել ու ինչ-որ բանի սպասելիք ունենալ այդ աղջնակից, այնպիսի մի բանի, ինչի մեջ ընկերներս իրենց երջանկությունն էին փնտրում: Ես նորից ամբողջովին երազներին էի տրվել, սակայն ավելի հաճախ ցերեկները, քան թե գիշերային ժամերին: Պատկերացումները, մտապատկերներն ու տենդագին տենչանքները գլուխ էին բարձրացնում իմ մեջ ու հեռացնելու պես ինձ կտրում արտաքին աշխարհից, այնպես որ իմ միջի այդ պատկերների, այդ երազների կամ ստվերների հետ ես ավելի իրական, կենդանի ու աշխույժ շփումներ ունեի՝ նրանցում ապրելով, քան թե իմ իրական շրջապատի հետ:

Մի սեռեռուն երազ կամ երևակայական մի խաղ, որը շարունակ վերադառնում էր, ինձ համար աստիճանաբար մեծ նշանակություն ձեռք բերեց: Իմ կյանքի այդ ամենակարևոր ու ամենամնայուն երազը մոտավորապես այսպիսին էր. ես վերադառնում էի իմ հայրենական տուն, տան շքամուտքի գլխավերևում շողշողում էր զինանշանի թռչունը՝ դեղինով ներկված կապույտ ետնախորշին (մայրս ինձ ընդառաջ եկավ), բայց երբ ես առաջ եկա և ուզում էի գրկել՝ համբուրել նրան, պարզվեց այդ նա չէր, այլ անծանոթ մի կերպարանք, հաղթանդամ ու կորովի, Մաքս Դեմիանին ու իմ նկարած պատկերին շատ նման, բայց ուրիշ մեկը, և չնայած իր զորեղությանը՝ կատարելապես կանացի: Այդ կերպարանքն ինձ իր կողմը գրավեց և ինձ առավ իր խորունկ, դողդոջուն ու սիրող գրկի մեջ: Երանությունն ու սոսկանքը իրար էին միախառնված, գրկախառնումը աստծո ժամերգություն էր ու նաև ոճիր: Հիշողություններն իմ մոր, իմ քարեկամ Դեմիանի մասին խառնիխուռն լցված էին ինձ գրկախառնված այդ կերպարանքի մեջ: Նրա այդ գրկախառնումը զերծ էր ամենայն պատկառազդու ակնածանքից և, սակայն, բարձրագույն երանություն էր: Հաճախ ես արթնանում էի այդ երազից՝ բարձրագույն երջանկության զգացումով, հաճախ էլ՝ մահացու սարսափով, ասես ահասարս մեղքից խոշտանգահար խղճի խայթոցներով:

Այժմ աստիճանաբար ու անգիտակցական բնազդով մի ինչ-որ կապ հաստատվեց այդ կատարելապես ներքին պատկերի ու իմ կողմից փնտրվող աստծուն առնչակից, դրսի աշխարհից ինձ հայտնված նշանի միջև: Այդ կապը, սակայն, գնալով ավելի ու ավելի սերտ ու հոգեպարար էր դառնում, ու ես կարծես զգացի, որ հենց այդ նախազգուշական երազի մեջ ես Աբրաքսասին ձայ-

նեցի: Երանությունն ու սարսափը, տղամարդն ու կինը իրար միախառնված, սրբազնականն ու այլանդակը փոխներթափանցած, խորագույն մեղքը սուրբ անմեղության մեջ տագնապահար ցնցվող. այսպիսին էր իմ սիրո երազային պատկերը, այդպիսին էր նաև Աբրաքսասը: Սերն այլևս կենդանական ու մութ, բնազդային հակում չէր, ինչպես որ ես այն սկզբում ընկալել էի՝ երկյուղած ու խռովահույզ, այն նաև բնավ աստվածավախ ու ոգեշունչ երկրպագություն չէր, ինչը ես Բեատրիչեի պատկերին էի մատուցում: Այն իր մեջ երկուսն էլ ուներ, ավելին՝ այն հրեշտակի պատկեր էր ու սատանայի, տղամարդու ու կնոջ՝ իրար միացած, մարդ էր ու գազան, բարձրագույն բարին ու ծայրահեղ չարը: Դա վերապրելն ինձ թվում էր նախասահմանված, այն ճաշակելն իմ ճակատագիրն էր: Ես կարոտել էի նրան ու վախենում էի նրանից, բայց այն մշտապես այնտեղ էր, իմ գլխավերևում:

Հաջորդ գարնանը ես պետք է թողնեի գիմնազիան ու սովորելու գնայի մեկ այլ տեղ, ես դեռ չգիտեի որտեղ և ինչ: Իմ շրթունքներից վերև բեղիկներ էին աճել, ես հասունացած մարդ էի դարձել և, սակայն, կատարելապես անօգնական ու նպատակազուրկ: Հաստատ միայն մի բան կար. իմ միջի ձայնը, երազային ցնորք-պատկերը: Ես զգում էի առաջադրված խնդիրը՝ կուրորեն հետևել այդ նշանացույցին: Բայց դա ինձ համար դժվար էր և օրըստօրե ես ըմբոստանում էի դրա դեմ: Գուցե խելագարվել էի, հաճախ մտածում էի ինքս ինձ, գուցե ես նման չէի ուրիշներին: Բայց այն, ինչ ուրիշներն էին անում, ես նույնպես կարողանում էի անել, մի փոքր ջանադրություն բանեցնելով ես կարողանում էի Պլատոն կարդալ, կարողանում էի եռանկյունաչափական խնդիրներ լուծել կամ քիմիական վերլուծություն կատարել: Մի բան միայն ես չէի կարողանում. իմ ներսի խավարում թաքնված նպատակը իմ միջից դուրս տալ ու դիմացս, մի տեղ այն իմ առաջ նկարել, ինչպես դա մյուսներն են անում, նրանք, որ ճշգրտորեն գիտեն, թե ինչ են իրենք ուզում դառնալ՝ պրոֆեսոր կամ դատավոր, բժիշկ կամ արվեստագետ, որքան էլ դա երկար տևելու լինի ու ինչ առավելություններ էլ ունենա: Դա ես չէի կարող: Գուցե ես էլ, ժամանակ անց, այդպիսի մեկը դառնայի, բայց ինչպե՞ս ես դա կարող էի իմանալ: Գուցե ես դեռ պետք է փնտրեի ու փնտրեի, տարիներ շարունակ, և ոչինչ էլ չդառնայի, ոչ մի նպատակի չհասնեի: Գուցեև հասնեի մի նպատակի, բայց դա մի չար, սարսափելի ու վտանգավոր մեկը լիներ:

Ես ցանկանում էի լոկ այն փորձել ապրել, ինչը ինքնաբերաբար իմ միջից դուրս գալ էր ուզում: Ինչու՞ էր դա այդչափ դժվար:

Հաճախ ես փորձում էի նկարել իմ երազների սիրելի կերպարանքը: Բայց դա երբեք չէր հաջողվում: Եթե հաջողվեր, ապա

թերթոն անմիջապես Դեմիանին ուղարկած կլինեի: Որտե՞ղ էր նա: Ես չգիտեի: Գիտեի միայն, որ նա կապված էր ինձ հետ: Ե՞րբ էի նորից տեսնելու նրան:

Բեատրիչեով լեցուն այդ շաբաթների ու ամիսների հրճվագին անդորրը վաղուց անցել էր: Այն ժամանակ ես կարծում էի, որ հասել էի մի կղզու ու խաղաղություն գտել: Բայց միշտ այդպես էր լինում. դեռ հազիվ միայն մի վիճակ սիրելի էր դառնում ինձ, մի հաճելի երազ էր հայտնվում իմ առաջ, այն անմիջապես էլ թոշնում էր ու ցնդելու պես անէանում: Դրա դեմ բողոքելն անիմաստ էր: Ես հիմա ապրում էի չհանդարտվող ու եռ եկող տենչանքի կրակներում, լարված սպասման մեջ, որն ինձ հաճախ կատաղեցնում էր ու խենթ դարձնում: Իմ առաջ դրված երազային սիրուհուս նկարին ես հաճախ նայում էի գերկենդանի պարզորոշությամբ, տեսնում էի շատ ավելի հստակ, քան իմ սեփական ձեռքը, խոսում էի նրա հետ, արտասվում նրա առաջ, անիծում ու հայհոյում նրան: Ես նրան մայր էի անվանում ու ծունկի իջնում նրա առաջ՝ արցունքակալած աչքերով, ես նրան սիրուհի էի կոչում ու նախազգալու պես ըմբոշխնում նրա հասուն, ամեն ինչ լցնող համբույրը, ես նրան կոչում էի սատանա ու պոռնիկ, արյունախում վամպիր ու մարդասպան: Այն ինձ հրապուրելու պես ներքաշում էր դեպի նրբագույն ու սիրելի երազանքներն ու վայրենաբարո, անպատկառ անամոթությունները, նրա համար ոչինչ ազնիվ ու արժեքավոր չէր, հոռի կամ ստոր:

Ողջ ձմեռը ես անցկացրեցի ներքին փոթորիկների մեջ, որ շատ դժվար է ինձ համար նկարագրել: Մենակությանը վաղուց էի ընտելացել, այն ինձ չէր ճնշում, ես ապրում էի Դեմիանի հետ, ճուռակի պատկերի, հաղթանդամ կերպարանքով երազային այդ նկարի հետ, որն իմ ճակատագիրն էր ու սիրուհին: Նրանում ապրելու համար դա բավական էր, որովհետև ամեն-ամեն ինչ մեծի ու լայնարձակի մեջ էր ակնդետ նայում, և ողջը մատնացույց էր անում Աբրաքսասին: Բայց այդ իմ երազներից և մտածություններից և ոչ մեկը ինձ չէր անսում, ես ոչ մեկին չէի կարող կանչել, ես անկարող էի, ըստ իմ ցանկության, որևէ մեկին իր գույներով օժտել: Նրանք գալիս ու համակում էին ինձ, ես ղեկավարվում էի նրանց կողմից, նրանցով ապրում:

Դրսի աշխարհից ես ինձ ապահով էի զգում: Մարդկանցից վախ չունեի, դա էլ ինձ դպրոցական ընկերներս էին սովորեցրել, որ իմ նկատմամբ ծածուկ հարգանքով էին լցված, ինչն ինձ հաճախ ծիծաղելի էր թվում: Ցանկության դեպքում ես կարող էի նրանցից շատերին մի լավ տնտղել, խորամուխ լինել նրանց նեբրաշխարհը և պատահած առիթով դրանով զարմացնել նրանց: Միայն թե խիստ հազվադեպ էի այդպիսի ցանկություն ունենում, ավելի շուտ՝ բնավ այդպիսին չեմ ունեցել: Ես միշտ ինձ-

նով էի զբաղված, միմիայն ինձանով: Այժմ ես ամենայն կարոտաբաղձությամբ տենչալով տենչում էի վերջապես գոնե մեկ անգամ փոքրիշատե ապրել, մի ինչ-որ բան ինձանից դուրս կորզել ու տալ աշխարհին, փոխհարաբերվել նրա հետ, կռվի մեջ մտնել: Երբ երեկոյան կողմ քայլում էի փողոցներով ու մինչև կեսգիշեր անհանգստությունից չէի կարողանում տուն վերադառնալ, այդժամ երբեմն ես մտածում էի, որ հիմա, հենց հիմա իմ սիրուհին պետք է ինձ հանդիպի, հաջորդ շրջադարձին դիմացս դուրս գա, ինձ ձայն տա դիմացի պատուհանից: Երբեմն էլ՝ ինձ թվում էր, որ ամեն ինչ անտանելիորեն տանջալից էր, ու այդ պատճառով ես ավելի ու ավելի էի համակվում գոնե մեկ անգամ կյանքին հանձնվելու տրամադրություններով:

Այն ժամանակ ես մի յուրահատուկ ապաստարան էի գտել՝ զուտ «պատահականորեն», ինչպես ասում են: Բայց այդօրինակ պատահականություններ չեն լինում: Երբ մեկը, որը մի բանի կարիքն ունի և այդ կարիքը կամ անհրաժեշտությունը ինքն է նրան գտնում, ապա դա բնավ էլ պատահականություն չէ, այլ հենց ինքը, իր իսկ սեփական տենչանքն ու ձգտումն է նրան դեպի այն առաջնորդում:

Մի երկու թե երեք անգամ քաղաքի փողոցներում ձեռնարկած իմ զբոսանքների ժամանակ քաղաքամերձ մի փոքրիկ եկեղեցուց տարածվող երգեհոնի երաժշտություն ականջովս ընկավ, առանց որ ունկնդրելու համար կանգ առնելու: Հաջորդ անգամ կողքով անցնելիս՝ ես այն նորից լսեցի ու անմիջապես էլ ճանաչեցի. Բախ էին նվագում: Ես քայլեցի դեպի դարպասն ու այն փակ գտա, և քանի որ նրբանցքում գրեթե մարդ չկար՝ նստոտեցի եկեղեցու հարևանությամբ գտնվող մայթասյունիկներից մեկին, վերարկուիս օձիքը ամուր կոճկեցի ու սկսեցի լսել: Երգեհոնը շատ մեծ չէր, բայց բավականին լավն էր ու հրաշալի էր նվագում՝ համառ հաստատակամության մի շատ յուրահատուկ, խստիվ անհատական արտահայտչականությամբ. ասես աղոթք հնչեցնելիս լինեին: Ինձ մի զգացում համակեց. այն մարդը, որ նվագում էր այնտեղ, այդ երաժշտության մեջ թաքնված մի գանձ է տեսնում և հետամտում, ամեն ճիգ ու եռանդ թափում այդ գանձի, որպես թե իր սեփական կյանքի համար: Արհեստավարժության իմաստով ես շատ բան չեմ հասկանում երաժշտությունից, բայց երեխայի հոգու հենց այդ արտահայտության շնորհիվ ես այն բնազդաբար ըմբռնեցի ու երաժշտությունը որպես թե ինքնին հասկանալի ու բնական մի բան զգացի իմ մեջ:

Դրանից հետո երաժիշտը նաև ժամանակակից մի ստեղծագործություն կատարեց, դա պետք է, որ Ռեգերի ստեղծագործություններից մեկը լիներ: Եկեղեցին գրեթե ամբողջովին խավարի մեջ էր ընկղմված, մերձակա պատուհանից սոսկ մի շատ բարալիկ

ու նուրբ լույսի ճառագայթ էր ներս թափանցում: Սպասեցի մինչև երաժշտությունն ավարտվեց, ապա ետուառաջ քայլեցի՝ մինչև որ երգեհոնահարը տեղից վեր կացավ. նա դեռևս երիտասարդ մարդ էր, բայց ինձանից ավելի տարիքավոր, տեսքով բիրտ էր ու անտաշ, կարճլիկ ու գեր, նա նստած տեղից արագ-արագ առաջացավ՝ հաստատուն ու միաժամանակ դժկամ քայլերով:

Այն ժամանակվանից սկսած՝ երեկոյան ժամերին ես երբեմն-երբեմն նստում էի այնտեղ՝ եկեղեցու դիմաց կամ ետուառաջ ճեմում: Մեկ անգամ էլ՝ ես դուռը բաց գտա ու մի կես ժամի չափ սրթսրթալով ու երջանկացած նստել էի աթոռակներից մեկին՝ մինչ երգեհոնահարը նվագում էր վերևում՝ աղոտ գազալապտերի ներքո: Նրա նվագած երաժշտությունից ես միայն իրեն չէ, որ լսում էի: Նաև այն ամենը, ինչ նվագում էր նա, ինձ թվում էր ծանոթ ու հարազատ, գաղտնածածուկ առնչակցություն ունեցող մի բան: Ամենը, ինչ նա նվագում էր, հավատարժան էր, նրանում անձնվիրության ու հնազանդության պես մի բան կար, բայց ոչ այն հնազանդությունը, ինչը եկեղեցականներին ու հոգևոր հովիվներին է հատուկ, այլ աստվածավախ հնազանդությունը միջնադարյան ուխտավորների ու մուրացիկների, անձնվեր ու ոչնչից չխորշող, անսահման հնազանդությամբ առլի՝ դա այն աշխարհական զգացողությունն է, որ վեր է կանգնած բոլոր դավանանքներից: Մինչբախյան վարպետների գործերը կատարվեցին ամենայն ջանադրությամբ ու նաև հին իտալացիներինը: Եվ բոլորը նույն բանն էին ասում, բոլորն ակնարկում էին այն, ինչը նաև երաժշտի հոգում էր նստած. կարոտաբաղձություն, հոգեպարար ու փոթորկահույզ ներքին հուզավառություն աշխարհի հանդեպ ու ամենավայրի ինքնամեկուսացում նրանից, կրակոտ ու հուզավառ գաղտնալսում սեփական խավարած հոգու տվայտանքների, ինքնանվիրումի արբունք ու խորունկ հետաքրքրասիրություն առ ի զարմանահրաշը:

Մեկ անգամ եկեղեցուց դուրս գալիս ես ծածուկ հետապնդեցի երգեհոնահարին, հետևեցի նրան մինչև քաղաքի ամենածայրամասը և տեսա, թե նա ինչպես մի փոքրիկ գինետուն մուտք գործեց: Ես չկարողացա դիմադրել գայթակղությանս ու հետևեցի նրան: Ես այստեղ առաջին անգամ պարզորոշ տեսա նրան: Նա նստել էր գինետան փոքրիկ սրահի անկյունում տեղադրված սեղանիկի մոտ, գլխին՝ սև ֆետրագլխարկը, առջևը դրված էր մի թաս գինի և նրա դեմքն այնպիսին էր, ինչպես ես էի սպասում: Այն ատելի էր ու փոքր-ինչ վայրի, որոնող, համառ ու խելահեղ, կամակոր ու կամային գծերով, ընդ որում՝ բերանի շուրջբոլորը մեղմ էր ու քնքուշ, նույնիսկ մանկական: Ողջ տղամարդկայինն ու ուժը դաջված էին աչքերում ու ճակատին, ավելի ներքևի մասը՝ նուրբ էր, փխրաբեկ ու անճարտար, անզսպության ու մա-

սամբ էլ՝ թուլակամ փափկասունության նշանով, անվճռականությամբ ճառագող կզակը, մանկականության փայլով դրոշմակնքված, երևակվում էր որպես թե հակադրություն ճակատի ու հայացքի: Ինձ համար սիրելի էին մուգ շագանակագույն աչքերը՝ լեցուն հպարտությամբ ու թշնամանքով:

Լռելյայն ես մոտեցա ու տեղ զբաղեցրեցի նրա դիմաց, գինետանը ուրիշ մարդ չկար: Նա այնպես նայեց ինձ՝ ասես ուզենար ինձ դուրս վռնդել: Ես սակայն դիմադրեցի նրա հայացքին ու անդրդվելի ակնդետությամբ նայեցի նրան՝ մինչև որ նա անբարեհամբույր կոպտությամբ քրթմնջաց.

- Ի՞նչ եք ինձ նայում այդպես անիծյալ ակնապիշությամբ: Ինձանից ինչ-որ բա՞ն եք ուզում:

- Ես Ձեզանից ոչինչ չեմ ուզում,- ասացի ես:- Բայց ես Ձեզանից արդեն իսկ բավական շատ բան եմ ստացել:

Նա կնճռոտեց ճակատը:

- Դուք երևի խենթ երաժշտասե՞ր եք: Երաժշտությամբ խենթանալը ես զզվելի եմ համարում:

Ես դրանից չվախեցա ու սարսափահար տեսք չընդունեցի:

- Ես Ձեզ հաճախ եմ լսել, եկեղեցում, բակի կողմից,- ասացի ես:- Ես չէի ուզենա, ի դեպ, Ձեզ ծանրաբեռնել կամ նեղը գցել: Մտածում էի, գուցե Ձեզ մոտ ինչ-որ բան կգտնեի, առանձնահատուկ մի բան, ճիշտն ասած՝ չգիտեմ թե ինչ: Բայց ավելի լավ է ինձ վրա ուշադրություն մի դարձրեք: Ես Ձեզ առաջվա պես եկեղեցում կունկնդրեմ:

- Բայց ես այն միշտ փակի տակ եմ պահում:

- Վերջերս Դուք այն մոռացել էիք փակել ու ես ներս մտա: Սովորաբար ես դրսում եմ կանգնած լինում կամ նստոտում ուղեսալիկին:

- Ախ այդպե՛ս: Հաջորդ անգամ Դուք կարող եք ներս գալ, ներսում ավելի տաք է: Դուք միայն պետք է դուռը թակեք: Բայց ուժգին, և ոչ այն ժամանակ, երբ ես նվագում եմ: Հիմա ասեք, թե ի՞նչ էիք ուզում ինձ ասել: Դուք դեռ տակավին երիտասարդ եք, հավանաբար աշակերտ եք կամ ուսանող: Դուք երաժի՞շտ եք:

-Ո՛չ: Ես հաճույքով երաժշտություն եմ լսում, բայց միայն այնպիսին, որը Դուք եք նվագում, այնպիսին, որի ընթացքում այն զգացումն ես ունենում, որ կարծես մեկը երկինքն ու դժոխքն է ցնցում: Երաժշտությունն ինձ շատ է դուր գալիս, կարծում եմ, որովհետև այն քիչ է բարոյախոսական: Մնացյալ ամեն ինչ բարոյախոսական է, ու ես փնտրում եմ մի բան, որն այդպիսին չլինի: Ես միշտ տառապել եմ բարոյախոսություններ-ի պատճառով: Ես չեմ կարողանում մտածածս լավ արտահայտել: Դուք, անշուշտ, գիտեք, որ մի Աստված պետք է գոյու-

թյուն ունենա, որը միաժամանակ և՛ աստված է և՛ սատանա: Այդ-պիսի մեկը պե՞տք է լինի, ես լսել եմ այդ մասին:

Երաժիշտը փոքր-ինչ ետ հրեց լայնանիստ աթոռն ու թափա-հարեց լայն ճակատին ընկած մուգ մազերը: Այդժամ նա քննա-խուզ հայացքով ինձ նայեց ու դեմքը խոնարհեց սեղանի վրա:

Ցածրաձայն ու լարված նա հարց տվեց.- Ինչպե՞ս է կոչվում այն Աստվածը, որի մասին դու խոսում էիր:

- Ցավոք ես գրեթե ոչինչ չգիտեմ նրա մասին, ընդամենը մի-այն նրա անունը: Նրան կոչում են Աբրաքսաս:

Երաժիշտը կասկածամիտ հայացք գցեց իր շուրջը, ասես մեկը կարող էր մեզ լսել: Հետո շրջվեց դեպի ինձ ու մոտիկից չչնչա-լով ասաց.- Մտքովս մի բան անցավ: Ո՞վ եք Դուք:

- Ես գիմնազիստ աշակերտ եմ:

- Որտեղի՞ց Դուք գիտեք Աբրաքսասի մասին:

- Պատահաբար եմ իմացել:

Նա խոնարհվեց սեղանի վրա, որպեսզի իր բաժակը լցներ:

- Պատահաբա՜ր... Անմիտ բաներ մի՛ք ասի, երիտասա՜րդ: Աբ-րաքսասի մասին պատահաբար չեն իմանում, հիշեցեք մեկընդ-միշտ: Ես Ձեզ նրա մասին շատ ավելին կասեմ: Նրա մասին ես մի քիչ գիտեմ:

Նա լռեց ու ետ հրեց աթոռը: Երբ ես սպասողական տենդով նրան նայեցի, նա դեմքը ծամածռեց:

- Ո՛չ այստեղ... Մեկ ուրիշ անգամ:- Վերցրե՛ք, ահա՛:

Ասելուն պես նա ձեռքը տարավ վերարկուի գրպանը, որն այս ողջ ընթացքում հագից չէր հանել, և դուրս կորզեց մի քանի տապակած շագանակներ ու նետեց իմ առաջ:

Ես ոչինչ չասացի, վերցրեցի դրանք ու կերա և մեծագույն գոհունակությամբ:

- Ուրեմն,- միառժամանակ անց չչնչաց նա:- Որտեղի՞ց Դուք գիտեք նրա մասին :

Ես չհապաղեցի այդ մասին ասել նրան:

- Ես մենակ էի ու անօգնական,- սկսեցի պատմել:- Հանկարծ մտաբերեցի անցյալ տարիների իմ մի ընկերոջը, որն իմ կարծի-քով շատ բան գիտեր: Ես ինչ-որ բան էի նկարել, մի թռչուն, որը դուրս գալ էր ձգտում երկրագնդի միջից: Նկարը ես նրան ու-ղարկեցի: Մի որոշ ժամանակ անց, երբ այլևս հույսս կորցրել էի, մի երկտող ստացա, ուր գրված էր. Թռչունը կռիվ է տալիս ձվի հետ: Ձուն աշխարհն է: Ով ուզում է ծնվել, պետք է աշխարհը կործանի: Թռչունը ճախրում է Աստծու մոտ: Աստվածը կոչվում է Աբրաքսաս:

Նա ոչինչ չպատասխանեց, մենք կճպում էինք մեր շագանակ-ներն ու գինու հետ անուշ անում:

- Մի-մի թաս էլ չխմե՞նք,- հարցրեց նա:

- Շնորհակալություն, ո՛չ: Խմելն ինձ հաճելի չէ:

Նա, փոքր-ինչ հիասթափված, ծիծաղեց:

- Ինչպես կամենաք... Ես հակառակ կարծիքի եմ: Ես դեռ մի քիչ էլ կմնամ այստեղ: Իսկ հիմա հեռացեք:

Երբ հաջորդ անգամ, երգեհոնային երաժշտության ունկնդրումից հետո, ես քայլում էի նրա հետ, նա այնքան էլ հաղորդակցվող ու մարդամոտ չէր: Հին ու նեղլիկ փողոցով, հնամենի քաղաքային շինության միջով նա ինձ առաջնորդեց դեպի մի մեծ, փոքր-ինչ փոշոտ ու անխնամ սենյակ, ուր դաշնամուրից բացի՝ ոչինչ երաժշտության մասին չէր հիշեցնում, փոխարենը գրքերի մեծադիր պահարանն ու գրասեղանը տարածքին մի ինչոր գիտականություն էին հաղորդում:

- Ինչքան շատ գրքե՛ր ունեք,- ասացի ես՝ գնահատանքի արժանացնելու պես:

- Դրանց մի մասը իմ հոր գրադարանից է, որի մոտ ես ապրում եմ: Այո՛, երիտասարդ, ես ապրում եմ հորս ու մորս մոտ, բայց ես չեմ կարող Ձեզ ծանոթացնել նրանց հետ, իմ ծանոթությունների շրջանակը՝ այստեղ, այս տանը մեծ ուշադրություն ու հարգանք չի վայելում: Ես մի անառակ որդի եմ, իմացած եղե՛ք: Իմ հայրը շատ հարգված մի անձնավորություն է, այս քաղաքում նա նշանավոր քահանա է ու քարոզիչ: Եվ ես, որպեսզի Դուք հենց սկզբից ևեթ վստահաբար իմանաք, նրա օժտված ու բազմախոստում պարոնորդին եմ, որը սակայն սայթաքել ու շեղվել է ճշմարիտ ճանապարհից և ինչ-որ տեղ՝ խելագարի համբավ է վայելում: Ես աստվածաբանություն էի ուսանում և պետական քննությունից առաջ լքեցի այդ ազնվագույն հաստատությունը: Ինչ վերաբերում է իմ մասնավոր ուսումնառությանը, իրականում ես միշտ իմ մասնագիտությամբ եմ զբաղվել: Թե երբեմնի ժամանակներում մարդիկ ինչ աստվածներ են հորինել կամ հնարաստեղծել, դա միշտ էլ ինձ համար շատ կարևոր է եղել ու հետաքրքրական և մինչև օրս էլ շարունակում է այդպիսին մնալ: Ես հիմա երաժիշտ եմ, և, ինչպես երևում է, շուտով երգեհոնահարի պաշտոն կստանամ մի եկեղեցում: Ասել է, թե գործս եկեղեցու հետ է ու ես կրկին ու կրկին եկեղեցուն եմ պատկանում:

Ես նայում էի գրադարակների երկայնքով, հունարեն, լատիներեն ու եբրայերեն տիտղոսաթերթեր աչքովս ընկան, որքան որ կարող էի տեսնել փոքրիկ սեղանի լապտերի արձակած աղոտ լույսի պայմաններում: Այդ ընթացքում իմ ծանոթ ուղեկիցը տեղավորվել էր խավարի մեջ ընկղմված պատի տակ՝ հատակին, և ջանում էր հարմար դիրք գրավել:

- Եկեք այստեղ,- միառժամանակ անց բղավեց նա,- մենք հիմա մի քիչ փիլիսոփայություն կպարապենք, ասել է, թե՝ բերաններս փակենք, փորի վրա պառկենք ու մտածենք:

Նա մի լուցկի վառեց ու բուխարու մեջ, որի առաջ պառկած էր, սկսեց վառել թղթերն ու փայտի տաշեղները: Կրակի լեզուները վերև բարձրացան, նա թեժացնում-բորբոքում էր կրակը և շարունակ վառելափայտ ավելացնում՝ զգուշավոր մի շրջահայեցությամբ: Ես պառկել էի նրա կողքին՝ մաշված ու գզգզված գորգի վրա: Նա ակնդետ կրակի մեջ էր նայում, որը ինձ ևս սկսել էր գրավել, ու մենք մի ժամվա չափ լռելյայն պառկել էինք փորի վրա՝ ճայթճայթող փայտի կրակների առջև ու նայում էինք, թե նա ինչպես էր բոցավառվում ու շառաչում, փուլ գալիս ու ջղաձիգ գալարվում, առկայծում ու ցնցվում և, վերջապես, խաղաղված ու բորբոքուն բոցի ջերմության մեջ՝ հատակին պառկած մտորումներին էինք հանձնվել:

- Կրակի պաշտամունքը հայտնագործություններից բոլորովին էլ ամենահիմարը չէր,- մի անգամ քթի տակ մրմնջաց նա: Այնուհետ մեզանից ոչ մեկը որևէ բառ չխոսեց: Ես ակնապիշ կրակին էի նայում՝ խորասուզված երազի ու խաղաղավետ անդորրի մեջ, կերպարանքներ էի տեսնում ծխի մեջ ու պատկերներ՝ մոխիրներում թավալվող: Հանկարծ ես ցնցվեցի ու վեր թռա: Ընկերս մի կտոր խեժ նետեց բոցերի մեջ, որից մի պստլիկ ու նիհարուկ կրակաշիթ վեր թռավ ու ես նրա մեջ տեսա թռչունին՝ դեղին ճուռակի գլխով: Ածխացող բուխարու բոցերի մեջ ոսկեփայլ պսպղացող կրակաշիթերը իրար խառնվելով ցանցկեն պատկերներ էին կազմում, հայտնվում էին տառեր ու պատկերներ, հիշողություններ արթնացնելով դեմքերի, կենդանիների, բույսերի, որդերի ու օձերի մասին: Երբ ես, արթնանալով, կողքինիս նայեցի, նա աչքերը չռած, կզակը բռունցքներին հենած՝ համակվածի պես ու մոլեռանդ խանդով մոխիրների մեջ էր նայում:

- Ես հիմա պետք է գնամ,- կամացուկ ասացի ես:

- Դե ուրեմն գնացեք: Ցտեսություն:

Նա տեղից վեր չկացավ, և քանզի լամպը հանգել էր՝ ես պետք է մեծ ջանքերի գնով, մութ սենյակների ու խավար միջանցքների միջով խարխափելով, աստիճանասանդուղքը շոշափելով մի կերպ դուրս գայի այդ նզովյալ ու կախարդված հին տնից: Փողոցում ես կանգ առա ու նայեցի այդ հնամենի տանը: Պատուհաններից ոչ մեկում լույս չէր վառվում: Դեղին պղնձից մի փոքրիկ վահանակ էր շողշողում դռան առջևի գազալապտերի փայլի մեջ.

«Պիստորիուս, գլխավոր քահանա»,- կարդացի ես ճակատին:

Եվ միայն տուն հասնելով, երբ ընթրիքից հետո միայնակ նստած էի իմ պստլիկ սենյակում, մտաբերեցի, որ ոչ Աբրաքսասի, ոչ էլ ուրիշ որևէ բանի մասին Պիստորիուսից չտեղեկացա, և որ, ընդհանրապես, մենք մի տասը բառ էլ իրար հետ չէինք փոխանակել: Բայց ես շատ գոհ էի նրա տուն կատարած իմ այցելու-

թյունից: Մյուս անգամվա համար նա ինձ խոստացավ հնագույն երգեհոնային երաժշտության մի շատ նրբագեղ երկ նվագել՝ Բուքստեհուդեի «Պասսակալիան»:

Առանց որ ես կիմանայի այդ մասին, երգեհոնահար Պիստորիուսն ինձ առաջին դասը տվեց, երբ ես նրա կողքին պառկած էի՝ բուխարու առաջ, նրա այն մռայլ ճգնակյացի սենյակի հատակին: Կրակների մեջ ակնապիշ նայելը ինձ վրա լավ ազդեցություն թողեց, այն իմ մեջ ուժգնացրեց ու հաստատագրեց հակումները, որ ես միշտ ունեցել էի, բայց իրականում երբեք նրանց մասին չէի հոգացել: Աստիճանաբար դա պարզ դարձավ ինձ համար:

Դեռ մանկության հասակում ես ժամանակ առ ժամանակ հակում եմ ունեցել ուշիուշով դիտարկելու բնության զարմանահրաշ ձևերը, ոչ թե զննելով, այլ նրա սեփական կախարդանքին, նրա խճճվածություններին, խորիմաստ լեզվին նվիրվելով: Երկար, փայտացած ծառարմատները, լեռնապարների գունագեղ ու խայտաճամուկ երակները, ջրի երեսին լողացող յուղաբծերը, ապակու ճաքերը, բոլոր նմանօրինակ գոյացությունները ժամանակ առ ժամանակ ինձ համար կախարդանքի մեծ ուժ են ունեցել և, ամենից առաջ, ջուրն ու կրակը, ծխագոլորշին, ամպերը, փոշին ու մոխիրը և առանձնապես օդակաձև պտտվող գունավոր բծերը, որոնց ես տեսնում էի աչքերս փակած միջոցին: Պիստորիուսին իմ առաջին այցելությանը հաջորդած օրերին բոլոր այդ երևույթները սկսեցին նորից միտքս գալ: Ինձ համար պարզ դարձավ, որ իմ ուժերի որոշակի հավաքագրումն ու հրճվալից երջանկության զգացողությունը, որ աստիճանաբար սկսում էր ինձ պաշարել, հենց ինձանից էր բխում, որի համար ես միայնամիայն բաց կրակի մեջ երկար ու ակնդետ նայելուն էի երախտապարտ: Այդ զբաղմունքը արտասովոր ձևով հաճելի էր ինձ, ախորժելի ու նաև հոգեպես հարստացնող:

Այն քիչ թվով փորձառություններին, որ ես մինչ այժմ իմ սեփական կյանքի հետապնդած նպատակի ճանապարհին ձեռք էի բերել, ավելանում է այս նորը. այդ պատկերների զննումը, բնության բնազդական տարերքի պտտվող, տարօրինակ ձևերին ինքնանվիրումը մեր մեջ ծնունդ է տալիս մի զգացողության, որ մեր ներքինի համերաշխությունն է այն կամքի հետ, որը գոյավորել է տալիս այդ պատկերները. մենք շուտով զգում ենք դրանք մեր սեփական քմահաճույքների, սեփական ստեղծագործ արարումների համար պահելու գայթակղությունը. մենք ցնցվելիս ու տարրալուծվելիս ենք տեսնում մեր և բնության միջև ընկած բաժանարար սահմանը և ճանաչում ենք այն տրամադրվածությունը, երբ ճանաչել ենք ուզում, թե արդյոք մեր ցանցամաշկի ու աչքի ցանցաթաղանթի վրա ներազդող պատկերները արտաքին տպավորություններից են գոյանում, թե ներքին: Ոչ մի ուրիշ տեղ,

ինչպես այս փորձառության ժամանակ, մենք այսպես պարզ ու թեթև հայտնագործություն չենք կատարում, թե որքան շատ ենք մենք օժտված ստեղծագործման շնորհով և թե մշտապես որքան մեծ մասնակցություն ունի մեր հոգին աշխարհի մշտանորոգ արարչագործմանը: Ավելին, սա այն նույն անտրոհելի աստվածությունն է, որն հավասարապես գործում է և՛ մեր, և՛ բնության մեջ, և երբ արտաքին աշխարհը խորտակվում է, ապա մեզանից մեկնումեկն ի վիճակի է այն նորից վերակառուցելու, քանզի լեռն ու հորձանքը, ծառն ու սաղարթը, արմատն ու ծաղկումը, բնության ողջ բաղկացությունները նախապես մեր մեջ են գոյավորվում, ծագում են հոգուց, որի էությունը հավիտենությունն է, որի էությունը մենք չենք ճանաչում, որը սակայն մեզ առավելապես որպես սիրո ու արարչական ուժ է զգայականորեն ներկայանում:

Միայն շատ տարիներ անց ես այս դիտարկումը հաստատագրված գտա մի գրքում՝ Լեոնարդո դա Վինչիի մոտ, որը մի առիթով խոսում էր այն մասին, թե ինչքան մանրակրկիտ ու խորը հուզականությամբ էր զննել այն պատը, որի վրա բազմաթիվ մարդիկ էին թքել: Թքահետքերով պատված չոր պատի առաջ կանգնած՝ նա նույն զգացումն էր ունեցել, ինչ Պիստորիուսն ու ես կրակի առաջ:

Մեր հաջորդ հանդիպման ժամանակ երգեհոնահարը իմ առաջ մի պարզաբանում արեց:

- Մենք միշտ էլ շատ նեղ ենք գծում մեր անհատականության սահմանները... Մենք մեր անձնավորության հաշվի մեջ ենք մտցնում միայն այն, ինչը մենք որպես անհատականություն, զանազանություն կամ շեղում ենք ընկալում: Բայց մենք, մեզանից յուրաքանչյուրը բաղկացած է աշխարհի ողջ բաղադրակազմից, և ինչպես մեր մարմինը իր զարգացման տոհմածառերը ետ է տանում մինչև ձուկը և դեռ ավելի հեռուն, այդպես էլ մեր մեջ մենք ամեն ինչ ունենք, ինչը երբևէ ապրել ու բնավորվել է մարդկային հոգում: Բոլոր աստվածներն ու սատանաները, որ երբևէ գոյություն են ունեցել, լինի դա հույների ու չինացիների կամ զուլու ցեղի մոտ, բոլորը մեզ հետ միասին մեր մեջ են, մեր ներսում՝ որպես հնարավորություններ, որպես տենչանք ու ելք: Երբ մարդկությունը իսպառ բնաջնջվի՝ մինչև մեն-միակ թող-որ ավել կամ պակաս օժտված երեխան, որը երբեք դասավանդված լինելու հաճույքը չի վայելել, ապա այդ երեխան կվերագտնի ու կվերահայտնագործի իրերի ողջ ընթացքը, աստվածներին, դևերին, դրախտները, պատվիրաններն ու արգելքները, Հին ու Նոր Կտակարանները, ամենը նա նորից վերարտադրել կկարողանա:

- Շատ լավ,- առարկելու պես վրա բերեցի,- բայց որտե՞ղ է

այդ դեպքում երջանկության արժեքը: Էլ ինչի՞ ենք մենք ձըգտում, երբ արդեն իսկ ողջը մեր մեջ կազմ ու պատրաստ ունենք:

- Սպասի՛ր,- բարձրաձայն կանչեց Պիստորիուսը:- Մեծ տարբերություն կա նրանում, թե արդյոք Դուք աշխարհը միայն Ձեր մեջ եք կրում, թե Դուք այն նաև գիտեք: Խելացնոր մեկը կարող է գաղափարներ արտահայտել, որ Պլատոնին կվայելեն ու մի փոքրիկ բարեպաշտ դպրոցական երեխա «Հեռնհուտերական» հաստատությունում ստեղծագործորեն խորհրդածում է խորը առասպելաբանական առնչակցություններ վերաբերյալ, որ գալիս են դեռ գնոստիկների կամ Զրադաշտի ժամանակներից: Բայց նա ոչինչ չգիտե այդ մասին... Նա մի ծառ է կամ քար, լավագույն դեպքում մի գազան, քանի դեռ չգիտի դա: Բայց հետո, երբ նա թող որ աղոտ կերպով սկսում է հասկանալ այդ իմաստության առաջին կայծերը, այդժամ նա մարդ է դառնում: Դուք սակայն չպետք է բոլոր երկոտանիներին, որ երթևեկում են այնտեղ՝ փողոցներում, որպես մարդ ընկալեք, հենց միայն այն բանի համար, ինչ է թե նրանք ուղղաձիգ դիրքով են քայլում և իրենց ծծկերներին ինը ամիս իրենց մեջ կրում: Դուք տեսնում եք, սակայն, որ նրանցից շատերը ձկներ են կամ ոչխարներ, որդեր կամ խլուրդներ, շատերը մրջյուն են, շատերն էլ՝ մեղրաճանճեր... Միայն թե նրանցից յուրաքանչյուրի մեջ առկա են մարդ դառնալու հնարավորությունները, բայց միայն այն ժամանակ, երբ նա նախազգում է դրանք, երբ մասամբ նույնիսկ դրանք գիտակցել է սովորում, միայն այդժամ այդ հնարավորությունները նրան են պատկանում:

Մեր զրույցները մոտավորապես այս կարգի էին լինում: Հազվադեպ էին դրանք ինձ կատարելապես մի նորություն հրամցնում, մի ինչ-որ կատարելապես անակնկալ բան մատուցում: Դրանք բոլորը, սակայն, նույնիսկ ամենատափակ անհամությունները կամացուկ ու անընդհատ մրճահարվածներով դիպչում էին իմ միջի միևնույն կետին, դրանք օգնում էին ինձ կազմավորվելու, այդ բոլորն օժանդակում էին իմ մաշկաթաղանթը մորթազերծելուն, ջարդուփշուր անելու ձվակճեպը, և յուրաքանչյուրի միջից գլուխս մի փոքր ավելի էր վեր բարձրանում, ավելի ազատ դառնում, մինչև որ իմ դեղին թռչունը իր գեղեցիկ գիշատչային գլուխը դուրս պարզեց աշխարհի կճեպի փլատակների տակից:

Մենք հաճախ մեր երազներն էինք պատմում մեկս մյուսին: Պիստորիուսը դրանք մեկնաբանելու կարողություններ ուներ: Դրա մի հրաշալի օրինակը մինչև հիմա էլ մտքիցս դուրս չի գալիս: Ես մի երազ էի տեսել, որի մեջ կարողանում էի թռչել, բայց այնպես, որ ասես հենացատկ կատարելով օդի մեջ էի շպրտվում, բայց թռիչքի վրա ես տիրապետություն չունեի: Այդ թռիչքի զգացողությունը վեհ էր ու հանդիսավոր, բայց շուտով այն վա-

խի էր փոխարկվում, երբ ես ինձ ակամա ճեղքելիս էի տեսնում վտանգավոր բարձունքները: Այդժամ ես մի ազատարար հայտնագործություն կատարեցի, այն, որ իմ խոյանքն ու գահավիժելը շնչառությանս պահումներով ու հոսանքաշիթը դուրս փչելով կարող էի կարգավորել:

Դրա առիթով Պիստորիուսն ասաց.- Այդ հենացատկումը, որը թռցնում է Ձեզ, մարդկության մեր մեծագույն ունեցվածքն է, որ յուրաքանչյուր ոք ունի: Դա մի առնչակցության զգացողություն է բոլոր տեսակի ուժերի արմատների հետ, բայց այդ ընթացքում ոմանց շատ շուտով սարսափն է պատում: Դա սարսափելիորեն վտանգավոր ձեռնարկում է... Այդ պատճառով շատերն այնպես հաճույքով հրաժարվում են թռչելու մտքից և գերադասում են օրենսդրական հրահանգների անսալով՝ մայթեզրերին թափառել: Բայց Դուք՝ ոչ: Դուք շարունակում եք թռչել, ինչպես որ վայել է եռանդուն պատանուն: Եվ տեսեք, այնտեղ Դուք Զարմանահրաշն եք հայտնագործում, որովհետև Դուք աստիճանաբար տիրապետություն եք հաստատում նրա վրա, որը Ձեզ դեպի հեռուն է շարունակում պոկել-թռցնել, մի նրբագեղ, պստլիկ, սեփական ուժ է գալիս-ավելանում, մի օրգան, մի ղեկ: Դա հրաշալի է: Առանց դրա մարդս կամազուրկ օդ կբարձրանար, ինչպես, օրինակ, ցնորամիտներն են անում: Նրանց շատ ավելի խորունկ նախազգացումներ են տրված, քան որ մայթերով երթևեկող մարդկանց, բայց նրանք բանալի չունեն, ոչ էլ ղեկ ու ճախրում են անհատակ անդունդի վրայով: Ձեզ, սակայն, Ձինքլեր, Ձեզ դա հաջողվում է... Ինչպ՞ս: Այդ Դուք էլ դեռ հստակ չե՞ք հասկանում: Դուք դա անում եք մի նոր օրգանի միջոցով՝ շնչառության կարգավորիչով: Եվ հիմա Դուք կարող եք տեսնել, թե ինչքան քիչ «անձնական»-անհատական է Ձեր հոգին իր խորքերում: Դուք չէ, որ հայտնագործել եք այդ կարգավորիչը... Այն նոր բան չէ... Այն պարզագույն փոխառություն է և գոյություն ունի հազարամյակներ ի վեր: Այն ձկան հավասարակշռության օրգանն է՝ լողափամփուշտը: Իրականում դեռ այսօր էլ կան մի քանի, քիչ թվով արտասովոր ու պահպանողական կազմվածքով ձկնատեսակներ, որոնց մոտ լողափամփուշտը միաժամանակ նաև մի տեսակ թոքի դեր է կատարում ու նայած հանգամանքներին՝ կարող է նաև իսկապես էլ շնչառությանը ծառայել: Այսպես ճիշտ և ճիշտ թոքի նման է նաև այն, ինչը Դուք երազի մեջ որպես թռչելու փամփուշտ՝ թռիչքափամփուշտ եք օգտագործում...

Նա ինձ ցույց տվեց նաև կենդանաբանության մի հատորյակ և ցուցադրեց ինձ անունն ու լուսապատկերները այդ հնատեսակ ձկան: Եվ ես մի առանձնահատուկ սոսկանքով իմ մեջ զգացի զարգացման վաղնջական դարաշրջանների մի կենդանի գործառնության օրինակը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱԿՈԲԻ ԿՌԻՎԸ

Այն, ինչ ես արտասովոր երաժիշտ Պիստորիուսից իմացա Աբրաքսասի մասին, չեմ կարող կարճառոտ վերապատմել: Սակայն, ամենակարևորը, որ ես նրանից սովորեցի, մի հաջորդ քայլ էր դեպի ինձ տանող ճանապարհին: Այն ժամանակ, տասնութամյա հասակում ես մի անսովոր պատանյակ էի, շատ բաներում վաղ հասունացած, ուրիշներում՝ անչափ հետ մնացած ու անօգ: Երբ ժամանակ առ ժամանակ ես ինձ ուրիշների հետ էի համեմատում, հաճախ գոռոզամտանում էի ու ինքս ինձ երևակայում, շատ հաճախ էլ, սակայն, ճնշված, վհատ ու նվաստացած էի: Հաճախ ես ինձ որպես հանճար էի պատկերացնում, հաճախ էլ՝ կիսախելագար մեկը: Ինձ չէր հաջողվում հասակակիցներիս ուրախություններին ու կենսակերպին մասնակից դառնալ, և հաճախ ինձ ոչնչացնում-հյուծում էի ինքնախոշտանգման ու հոգսերի ծովում, ասես անհուսալիորեն բաժանված լինեի նրանցից և կյանքն էլ՝ վերջացած լիներ ինձ համար:

Պիստորիուսն ինքն էլ՝ առաջացած տարիքով արտասովոր մարդ լինելով հանդերձ, ինձ արիության դասեր էր տալիս ու սովորեցնում սեփական անձիս նկատմամբ ինքնահարգանք ունենալ: Այն, որ իմ խոսքերում, իմ երազներում, իմ երևակայության ու գաղափարների մեջ նա մշտապես արժեքավոր բաներ էր գտնում, ամենայն լրջությամբ ընդունելով դրանք և բոլորն էլ ուշադրությամբ քննության առնելով, դրանով իսկ նա ինձ օրինակ ցույց տվեց:

«Դուք ինձ պատմեցիք,- ասաց նա,- որ այն պատճառով եք երաժշտությունը սիրում, որովհետև այն բարոյականություն չի քարոզում: Իմ կարծիքով, սակայն, Դուք նույնպես բարոյախոսությունների չպետք է տրվեք... Պետք չէ Ձեզ ուրիշների հետ համեմատեք, և երբ բնությունը Ձեզ որպես չղջիկ է ստեղծել, Դուք չպետք է ցանկանաք Ձեզ ջայլամ երևակայել: Դուք երբեմն Ձեզ տարօրինակ եք պահում, հանդիմանում եք Ձեզ, որ այլ ճանապարհով եք ընթանում, քան մեծամասնությունը: Մոռացեք դա: Դուք նայում եք կրակի մեջ, նայում եք ամպերին, և հենց որ նախազգացումներ են այցելում ու ձայներն են սկսում խոսել Ձեր հոգում, այդժամ Դուք տրվում եք նրանց և Ձեզ բոլորովին հարց չեք տալիս, թե արդյոք պարոն ուսուցչին կամ պարոն հայրիկին կամ էլ բարեգութ Աստծուն ևս ընդունելի կամ հաճելի է լինում այն... Դրանով դու ինքդ քեզ սպանում-կործանում ես: Դրանով դու մակերևույթ ես բարձրանում, բրածո ու քարացած մեկը դառնում: Սիրելի Զինքլեր, մեր Աստվածը կոչվում է Աբրաքսաս, նա աստված է ու սատանա, նա իր մեջ ունի

և՛ լուսավոր և՛ խավար աշխարհը: Աբրաքսասը Ձեր գաղափարներից, Ձեր երազներից ոչ մեկի դեմ որևէ առարկություն չունի: Դուք սա երբեք մի՛ մոռացեք: Բայց նա լքում է Ձեզ, երբ Դուք մի գեղեցիկ օր առաքինի, անթերի ու օրինավոր մեկն եք դառնում: Այդժամ նա լքում է Ձեզ և սկսում է մի նոր կավածեփ սափոր որոնել՝ իր գաղափարները նրա մեջ եփելու համար:

Իմ բոլոր երազների շարքում ամենաթանկը այն մի երազն էր խավարչտին սիրո մասին: Հաճախ, շատ հաճախ էի ես նրա մասին երազում, թռչնանկար զինանշանի տակով ներս էի մտնում մեր հնամենի տունը, ցանկանում էի մորս փաթաթվել և նրա փոխարեն գիրկս էի առնում այն մարմնեղ, կիսատղամարդկային, կիսամայրական կնոջը, որի հանդեպ ես վախ էի տածում և սակայն դեպի որը ինձ այն բոցավառվող ու հրկեզ տենչանքն էր մղում: Այդ երազը ես երբեք չէի կարող իմ բարեկամին պատմել: Դրանից ես ձեռնպահ մնացի, անգամ երբ բոլոր մյուսների մասին սիրտս բացել էի նրա առաջ: Այն իմ անկյունն էր, իմ գաղտնիքը, իմ ապաստարանը:

Հենց որ ճնշվածությունն էր պաշարում ինձ՝ ես խնդրում էի Պիստորիուսին նվագելու ծերուկ Բուքստեհուդեի հնամենի Պասսակալիան: Երեկոյի մեջ թաթախված, խավար եկեղեցում այդժամ նստում էի ես ինքնամոռացության մեջ՝ այդ արտասովոր, հոգեպարար, ինքնասույզ ու ինքնալիր երաժշտությամբ հափշտակված, որ ամեն անգամ բարերար ներգործություն էր ունենում ինձ վրա ու ինձ ավելի պատրաստ դարձնում ունկնդիր լինելու հոգու ձայնին:

Երբեմն էլ մենք միառժամանակ, երբ երգեհոնի հնչյուններն արդեն մարած էին լինում, նստած էինք մնում եկեղեցում և հայացքներով հետևում բարձրաբերձ, սրաթեք պատուհանների մեջ հայտնվող ու դարձյալ կորսվող աղոտ լուսախաղին:

- Տարօրինակ է հնչում,- ասաց Պիստորիուսը,- որ մի ժամանակ ես աստվածաբան էի և ուր որ է պետք է քահանա ձեռնադրվեի: Բայց ես մեծ սխալ գործած կլինեի, եթե այդպես վարվեի: Քարոզիչ լինելն է իմ կոչումն ու իմ նպատակը: Միայն թե ես շատ շուտ գոհացա ինձանից ու ինձ Եհովայի տրամադրության տակ դրեցի՝ նախքան որ Աբրաքսասին կճանաչեի: Ա՜խ, բոլոր կրոններն էլ գեղեցիկ են: Կրոնը հոգի է, տարբերություն չկա, թե արդյոք քրիստոնեական ընթրիքի ես մասնակցում, թե ուխտագնացություն ձեռնարկում դեպի Մեքքա:

- Բայց Դուք հո կարո՞ղ էիք,- ենթադրելու պես վրա բերեցի ես,- իսկապես քահանա դառնալ:

- Ո՛չ Զինքլեր, ո՛չ: Ուրեմն ես պետք է սուտ խոսեի: Մեր կրոնը այնպես է գործադրվում, որ այն կարծես ոչինչ էլ չլինի: Այն այնպիսի տպավորություն է ստեղծում, որ ասես ուզեղածին

ստեղծագործություն լինի: Մայրահեղ անհրաժեշտության դեպքում ես դեռ կարող եմ կաթոլիկ լինել, բայց բողոքական քահանա՝ բնավ երբեք... Քիչ թվով իսկական հավատացյալներ կան (այդպիսիների ես ճանաչում եմ), որոնք հաճույքով կառչում են տառից, նրանց ես չեմ կարող օրինակի համար ասել, որ ասենք Քրիստոսը ինձ համար անձ չէ, այլ մի հերոս, առասպել, մի անլուր ու հսկայածավալ ուրվանկար, որի մեջ մարդկությունը ինքն իրեն պատկերված է տեսնում հավերժության որմին: Իսկ մյուսները, որոնք եկեղեցի են այցելում խելացի խոսք լսելու, պարտականություն կատարած լինելու կամ ոչնչից ետ չմնալու ու ոչինչ բաց չթողնելու համար և այդպես շարունակ, դե ես ի՞նչ կարող էի նրանց ասել: Դարձի՞ բերել նրանց, կարծու՞մ եք: Ես դա բոլորովին չեմ ուզում: Քարոզիչը չի ուզում դարձի բերել, նա ցանկանում է հավատացյալների մեջ՝ իր նմանների մեջ ապրել և ուզում է կրոնն ու արտահայտությունը դառնալ այն զգացումի, որից մենք մեր աստվածներին ենք ստեղծում:

Նա դադարեց խոսել: Հետո շարունակեց.- Մեր նոր հավատը, որի համար մենք հիմա Աբրաքսասի անունն ենք ընտրում, վայելչագեղ է, սիրելի բարեկամ: Նա այն լավագույնն է, որ մենք ունենք: Բայց նա դեռ մի ծծկեր երեխա է... Նրա թևերը դեռ չեն աճել: Ախ, կրոնն ինքնին դեռևս ամբողջ ճշմարտությունը չէ: Այն պետք է համընդհանրական դառնա, պետք է պաշտամունք ու հափշտակիչ գրավչություն դառնա, տոներ ու միստերիաներ ունենա...

Նա մտածմունքներին տրվեց ու խորասուզվեց իր մեջ:

- Չի՞ կարելի արդյոք միստերիաները նաև մենակ կամ նեղ շրջանակում կատարել,- հարցրեցի ես վարանումով:

- Իհարկե կարելի է,- գլխով արեց նա:- Ես արդեն վաղուց այդպես եմ անում: Ես պաշտամունքներ եմ կատարել, որի համար ստիպված եմ եղել տարիներով տաժանակիր բանտարկություն ու զրկանքներ կրել, երբ այդ մասին իմացվում էր: Բայց ես գիտեմ, որ դա դեռևս ողջ ճշմարտությունը չէ:

Հանկարծ նա ձեռքը խփեց ուսիս, այնպես, որ ես ցնցվեցի: - Երիտասարդ,- ասաց նա խորթափանցությամբ,- Դուք էլ միստերիաներ ունեք: Ես գիտեմ, որ Դուք երազներ պետք է ունենաք, որոնք ինձ չեք պատմում: Ես չեմ ուզում դրանք իմանալ: Բայց ես Ձեզ կասեմ. Դուք ապրում եք այդ երազներով, խաղում նրանց հետ, նրանց համար խորաններ եք կառուցում... Դա դեռ ամենակատարյալը չէ, բայց դա էլ ճանապարհ է: Արդյոք մենք՝ ես և Դուք ու մի քանի ուրիշները երբևէ կվերանորացնենք աշխարհը, դա դեռ կերևա: Մեր մեջ՝ մեր ներսում, սակայն, մենք պետք է ամեն օր այն վերանորոգենք, այլապես նա մեզ կլքի: Մտածե՛ք այդ մասին... Դուք տասնութ տարեկան եք, Զինքլեր,

Դուք փողոցային աղջիկների մոտ չեք վազում, բայց Դուք պետք է որ սիրային երազներ, սիրային տենչանքներ ունենաք: Հավանաբար այդպես է, քանի որ Դուք ինքներդ Ձեզանից վախենում եք: Մի՛ք վախենա... Այդ երազներն այն լավագույնն են, որ Դուք ունեք... Հավատացեք ինձ: Ես շատ բան կորցրեցի, որ Ձեր տարիքում իմ սիրային երազները բռնադատեցի: Չի կարելի այդպես վարվել: Երբ գիտես Աբրաքսասի մասին, այլևս չի կարելի այդպես անել: Մարդ չպետք է ոչնչից վախենա և ոչինչ արգելված համարի, այն, ինչը հոգին է մեր մեջ տենչում:

Սարսափած՝ ես առարկեցի նրան.- Բայց հո չե՞ս կարող ամեն ինչ անել, ինչ մտքովդ է անցնում... Չի կարելի անգամ մի մարդու սպանել հենց միայն այն բանի համար, որ նա ինչ-որ մեկի համար տհաճ է:

Նա ավելի մոտեցավ ու խոնարհվեց ինձ վրա:

- Նայած հանգամանքներին՝ դա էլ կարելի է: Դա ըստ էության մեծագույն մոլորություն է: Ես բնավ չէի ուզում ասել, որ Դուք պարզապես պետք է անեք ամենը, ինչը Ձեր ուղեղով է անցնում: Ո՛չ, բայց Դուք պետք է բոլոր այդ մտահղացումները, որոնց իրականացմանը, մի լավ ծանր ու թեթև անելուց հետո, տրամադրել եք Ձեզ, խոցելի դարձնեք ու վնասազերծեք, հեռու վանեք Ձեզանից և նրանց շուրջ բարոյախոսություններ անեք: Փոխանակ ինքդ քեզ կամ մեկ ուրիշին խաչին գամելու՝ կարելի է բաժակից տոնական մտքերով տոգորված գինի ըմպել և, զուգահեռաբար, զոհաբերության միստերիայի մասին խորհրդածել: Կարելի է, նաև առանց այդօրինակ ձեռնարկումների, սեփական հակումներն ու այսպես կոչված փորձություն-գայթակղություն-ները հարգամեծար սիրով բժշկել: Հետո նրանց առաջ ի ցույց դրեք իրենց իսկ իմաստը, և նրանք բոլորը իմաստով կլցվեն: Երբ կրկին անգամ մի ինչ-որ իսկապես խելահեղ կամ մեղսալից մի բան միտքներդ գա, Ձինքլեր, եթե Դուք ուզենաք ինչ-որ մեկին սպանել կամ Ձեր կողմից մի հերթական մեծագույն անվայելչություն թույլ տալ, այդժամ մի պահ մտածեք այն մասին, որ այդպես Աբրաքսասն է երևակայական խաղեր խաղում Ձեր մեջ... Այն մարդը, որին Դուք սպանել եք ուզում, բոլորովին էլ պարոն այսուայսինչը չէ, նա վստահաբար լոկ զգեստափոխ եղած ծպտյալ մեկն է: Երբ մենք ատում ենք մի մարդու, ապա ի դեմս նրա մենք ատում ենք մի բան, որը նաև մեր մեջ է նստած: Այն, ինչը մեր մեջ չկա, այն մեզ չի հուզում կամ վրդովում:

Պիստորիուսն ինձ երբեք այնպիսի մի բան չէր ասել, որն այսպես խորը ներթափանցած լիներ իմ ամենածածուկ շերտերը ու անողոքաբար խոցած լիներ ինձ: Ես անկարող էի պատասխանել: Այն, ինչը սաստկագույնս և իր ողջ արտառոցությամբ դիպչել էր ինձ, նրա այդ խորհուրդների նույնահունչությունն էր Դեմի-

անի խոսքերի հետ, որոնք ես տարիներ ի վեր իմ մեջ էի կրում: Նրանք իրար չէին ճանաչում և երկուսով էլ ինձ նույն բանն էին ասում:

- Առարկաները, որ մենք տեսնում ենք,- կամացուկ ասաց Պիստորիուսը,- այն նույն առարկաներն են, որ նաև մեր մեջ են: Չկա մեկ ուրիշ իրականություն, քան այն, որը մենք մեր մեջ ենք կրում: Այդ պատճառով էլ մարդկանց մեծամասնությունը իրականությունից դուրս է ապրում, որովհետև նրանք մեզանից դուրս գտնվող պատկերները որպես իրականություն են ընդունում և իրենք իրենց ներսում մշտամփոփյալ՝ աշխարհին բնավ խոսելու կամ ինքնարտահայտվելու հնարավորություն չեն ընձեռում: Այդպես կարելի է երջանիկ լինել: Բայց, երբ մեկ անգամ էլ այն մեկ ուրիշն ես ճանաչում, այլևս մեծամասնության ճանապարհով ընթանալու ընտրություն չես ունենում: Չինքլեր, մեծամասնության ճանապարհը հեշտ է ու թեթև, մերը՝ դժվար: Բայց մենք ուզում ենք ճանապարհ ընկնել:

Մի քանի օր անց, այն բանից հետո, երբ ես երկու անգամ ապարդյուն սպասել էի նրան, ուշ երեկոյան փողոցում հանդիպեցի, երբ նա միայնակ, սառը գիշերային քամուց երերալով, մի անկյունից դիմացս դուրս ելավ, ոտքերը մի կերպ քարշ տալով ու ամբողջովին հարբած: Ես չցանկացա ձայն տալ նրան: Նա անցավ իմ կողքով, առանց ինձ նայելու, և սևեռուն հայացքը հառել էր իր առաջ՝ բոցակեզ ու մենավորիկ աչքերով, որ ասես հետապնդելիս լիներ Անհայտից եկող խավարամած կանչին: Ես ողջ փողոցով մեկ հետևեցի նրան, նա առաջ էր ընթանում ասես անտեսանելի մոմլաթե մալուխին ամրակցված, մոլեռանդ և սակայն անհաստատ քայլքով, որպես մի ուրվական: Տխուր՝ ես քայլերս ուղղեցի դեպի տուն, դեպի իմ չլուծված երազները:

- Այդպես հիմա նա աշխարհն է նորոգում իր մեջ...,- մտածեցի ես և նույն պահին էլ զգացի, որ դա ստորագույն ու բարոյախոսությամբ ներծծված մտածության արգասիք էր: Ի՞նչ գիտեի ես նրա երազների մասին... Նա իր հարբածության մեջ գուցե շատ ավելի հաստատուն ճանապարհով էր ընթանում, քան ես իմ վեհերոտության:

Դասերի ընդմիջումներին երբեմն-երբեմն պատահում էր, որ դպրոցական ընկերներից մեկը, որին ես երբեք ուշադրության չէի արժանացրել, ինձ մերձենալու փորձեր էր անում: Դա մի փոքրամարմին, թույլ ու վտիտ տեսքով մանչուկ էր՝ կարմրաշիկավուն, նուրբ ու նոսր վարսերով, որն իր հայացքի մեջ ու պահվածքում ինչ-որ ինքնահատուկ բան ուներ: Մի երեկո, երբ ես տուն էի վերադառնում, նրբանցքում նա դարանակալ ինձ էր լրտեսում, թողեց որ ես անցնեմ իր կողքով, հետո հետևիցս

եկավ և կանգ առավ մեր տան դռան առաջ:

- Դու ինձանից ինչ-որ բա՞ն ես ուզում,- հարցրեցի ես:

- Ես միայն ուզում եմ քեզ հետ խոսել,- ասաց նա վեհերոտ ամոթխածությամբ:- Բարի եղիր ու մի քիչ քայլիր ինձ հետ:

Ես հետևեցի նրան և զգացի, որ նա խորապես հուզված էր ու սպասումներով լի: Նրա ձեռքերը դողում էին:

- Դու սպիրիտի՞ստ ես,- անսպասելիորեն հարցրեց նա:

- Ո՛չ, Քնաուեր,- ասացի ես ծիծաղելով:- Դրա հետ ես ոչ մի առնչություն չունեմ: Որտեղի՞ց դու այդ բանը մոգոնեցիր:

- Ուրեմն թեոսո՞ֆ ես:

- Դարձյա՛լ ոչ:

- Ա՜խ, այդպես փակ, ինքնամփոփ մի եղիր... Ես սակայն շատ լավ զգում եմ, որ քո մեջ մի ինչ-որ արտակարգ բան կա: Դա քո աչքերից է երևում: Ես վստահաբար հավատացած եմ, որ դու հարաբերություն ունես ոգիների հետ: Հետաքրքրասիրությունից ելնելով չէ, որ հարցնում եմ, Զինքլեր, ո՛չ... Ես ինքս էլ որոնող մեկն եմ, դու հո գիտես, և այնպես միայնակ եմ:

- Դե՛ պատմիր լսեմ,- ոգևորեցի ես նրան:- Ոգիների մասին ես գրեթե ոչինչ չգիտեմ, ես ապրում եմ իմ երազներում, երևի դու դա ես զգացել: Մյուս մարդիկ էլ են երազներում ապրում, բայց ոչ իրենց սեփական, դա է տարբերությունը:

- Այո՛, դա գուցե այդպես է,- շշնջաց նա:- Բանն էլ հենց այն է, թե ինչ տեսակ երազներ են դրանք, որոնցում ապրում ես: Դու վստահաբար լսե՞լ ես սպիտակ մոգության մասին:

Ես ստիպված էի բացասական պատասխան տալ:

- Դա այն է, երբ սովորում ես ինքդ քո վրա տիրապետություն հաստատել: Դու կարող ես անմահ դառնալ, նաև կախարդել: Դու երբե՞ք նման փորձեր կամ վարժություններ չես արել:

Այդ վարժանքների մասին իմ տված հետաքրքրասիրական հարցին նա սկզբում շատ խորհրդավորությամբ վերաբերվեց, այնպես որ ես շրջվեցի՝ գնալու մտքով, այդժամ նա իր գիտցածը ցուցադրել սկսեց:

- Օրինակի համար, երբ ես ուզում եմ քնել կամ ուշադրությունս մի կետի վրա կենտրոնացնել, այդժամ ես այդպիսի մի վարժություն եմ կատարում: Ես ինչ-որ բան եմ առմտածում, օրինակ մի բառ կամ անուն, կամ մի երկրաչափական պատկեր: Այդ նույնը հետո ես իմ ներսում եմ առմտածում, ամբողջ ուժով՝ ինչքան որ կարող եմ, ձգտելով այն իմ ներսում՝ գլխիս մեջ պատկերացնել, մինչև որ զգում եմ, որ նա այնտեղ է: Ապա ես այն առմտածում եմ պարանոցիս մեջ, և այդպես շարունակ, մինչև որ ամբողջությամբ դրանով եմ լցված լինում: Այնուհետև ես լիովին ամրաձիգ եմ դառնում ու այլևս ոչինչ չի կարող իմ անդորրը վրդովել:

Ես որոշ չափով հասկացա, թե ինչը նա նկատի ուներ: Սակայն զգացի նաև, որ նա ուրիշ մի բան էլ ուներ իր սրտում, նա արտասովոր կերպով հուզված էր ու ջղագրգիռ: Ես փորձեցի հարևանցիորեն շրջանցել նրա հարցը, և նա անմիջապես էլ ներկայացրեց իր առանձնահատուկ փափագ-խնդրանքը:

- Դու նաև ժուժկա՞լ ես ու չափավո՞ր,- հարցրեց նա ինձ վախվորած:

- Դու ի՞նչը նկատի ունես: Սեռակա՞ն կողմը:

- Այո՛, այո՛: Ես հիմա արդեն երկու տարի է ինչ ժուժկալ ու չափավոր կյանք եմ վարում, սկսած այն ժամանակվանից, երբ այդ ուսմունքի մասին իմացա: Մինչ այդ ես մոլություններին էի տրված, դու հո գիտես: Դու ուրեմն երբեք որևէ կնոջ հետ չե՞ս եղել:

- Ո՛չ,- ասացի ես:- Ես իմ ճշմարիտ ուզածը չեմ գտել:

- Բայց երբ դու գտնես նրան, որի մասին ասում ես, որ նա ճիշտ քո ուզածը պետք է լինի, այդժամ դու նրա հետ կքնե՞ս:

- Այո՛, իհարկե: Եթե նա դրան դեմ չլինի,- ասացի ես փոքրինչ հեգնախառն:

- Օ՛, այդ դեպքում, սակայն, դու սխալ ճանապարհի վրա ես... Ներքին ուժերը կարելի է զարգացնել միայն այն ժամանակ, երբ կատարելապես ժուժկալ ես մնում: Ես դա անում եմ ամբողջ երկու տարի շարունակ: Այս էլ արդեն երկու տարի և մեկ ամիս կլինի, եթե ոչ ավելի... Դա այնքան դժվար է... Երբեմն ես հազիվ եմ կարողանում ինձ զսպել:

- Լսի՛ր, Քնաուեր, ես չեմ կարծում, որ ժուժկալ ու զուսպ պահվածքը այդքան շատ կարևոր է:

- Գիտեմ,- պաշտպանվելու պես ասաց նա,- այդպես բոլորն են ասում: Բայց քեզանից ես դա չէի սպասում: Ով ուզում է բարձրագույն ոգեղեն ճանապարհով ընթանալ, նա պետք է մաքուր մնա, անպատճառ...

- Այո, ուրեմն այդպես էլ արա... Բայց ես չեմ հասկանում, թե ինչու՞ մեկը, որն իր սեռի վրա է բռնանում, «ավելի մաքուր» պետք է լինի, քան մեկ ուրիշը: Կամ դու կարո՞ղ ես սեռականը տարանջատես բոլոր մտքերից ու երազներից:

Նա կասկածող հայացքով ինձ էր նայում:

- Ո՛չ, ցավն էլ այն է, որ ոչ... Տե՛ր Աստված, և սակայն այդպես է պետք: Ես գիշերները երազներ եմ տեսնում, որոնք ինքս ինձ էլ անկարող եմ լինում պատմել... Սարսափելի երազներ...

Ես մտաբերեցի այն, ինչ Պիստորիուսն էր ինձ ասել: Բայց որքան էլ նրա խոսքերը ճիշտ համարեի, ես չէի կարող դրանց ընթացք տալ կամ ուրիշներին քարոզել, ես չէի կարող խորհուրդներ տալ, որոնք իմ սեփական փորձից չէին ծագում, և որոնց հետևելու համար ես ինքս էլ ինձ դեռևս հասունացած չէի

զգում: Ես պապանձվել էի ու դրանից ինձ նվաստացված ու ճնշված էի զգում, որովհետև ահա մեկը ինձանից խորհուրդ է հայցում, որին ես ոչինչ տալու չունեի:

- Ես ամեն ինչ փորձել եմ...,- հեծեծաձայն արտաբերեց Քնաուերը:- Ես արեցի այն, ինչ կարելի է անել, սառը ջրով, ձյունով, մարմնամարզությամբ ու վազքով, բայց ոչինչ չօգնեց: Ամեն գիշեր ես արթնանում եմ երազներից, որոնց մասին բոլորովին չեմ էլ մտածել: Եվ ամենազարհուրելին այն է, որ դրանց պատճառով ես սկսում եմ աստիճանաբար ամեն ինչ մոռանալ, այն, ինչը հոգևոր տքնանքների գնով սովորել էի: Այլևս երբեք գուցե ինձ չհաջողվի կենտրոնանալ կամ քուն մտնել, հաճախ ես ողջ գիշերը արթուն պառկած եմ մնում: Ես դրան երկար չեմ կարող դիմանալ: Եթե ես վերջապես չկարողանամ կռիվ տալ դրա դեմ, եթե զիջելու լինեմ և ինձ նորից անմաքրություններին հանձնեմ, այդժամ ես ավելի վատը կլինեմ, քան մյուսները, որոնք ընդհանրապես, բնավ այդ կռիվը չեն ունեցել: Հասկանու՞մ ես:

Ես գլխով հավանության նշան արեցի, բայց ոչինչ չէի կարող ասել: Նա սկսել էր ինձ ճանձրացնել, և ես ինքս ինձանից սարսափեցի, որովհետև նրա ակներև նեղվածությունը և կասկածը ինձ վրա դույզն-ինչ տպավորություն չէին գործում: Ես միայն մի բան զգացի. ես քեզ չեմ կարող օգնել:

- Ուրեմն դու ոչինչ չգիտե՞ս այս մասին,- վրա բերեց նա՝ հյուծված ու տխուր շեշտով:- Բնա՞վ ոչինչ: Սակայն պետք է մի ճանապարհ լինի... Քեզ դա ինչպե՞ս է հաջողվում:

- Ես քեզ ոչինչ չեմ կարող ասել, Քնաուեր: Այս հարցում մարդ չի կարող մեկը մյուսին օգնել: Ինձ ևս ոչ ոք չի օգնել: Դու նախ ինքդ պետք է սթափվես ու քո ճանապարհը գտնես, և ապա անես այն, ինչը իսկապես քո էությունից է բխում: Ուրիշ հնարավորություն չկա: Եթե ինքդ քեզ չես կարողանում գտնել, այդժամ դու չես կարող նաև որևէ մեծ գաղափարի ծառայել, ես այդպես եմ կարծում:

Հուսահատ ու անսպասելիորեն համբացած՝ փոքրիկն ինձ էր նայում: Հետո բոցավառվեց նրա հայացքը հանկարծական ու չարկամ ատելությամբ, ապա նա ինձ մի խեթ հայացք նետեց և մոլեգնած ճչաց. «Ա՛, դու քեզ սու՛րբ ես ձևացնում... բայց դու էլ քո մոլություններն ու արատներն ունես, ես դա գիտեմ... Դու իմաստունի պես ես քեզ պահում, բայց գողունի կառչում ես այն նույն աղտեղություններից, ինչպես ես և մյուսները... Դու խոզ ես, խո՛զ, ինչպես և ես: Մենք բոլորս էլ խոզեր ենք...

Ես հեռացա և նրան թողեցի ոտքի վրա կանգնած: Նա երկու, երեք քայլ գցեց իմ ետևից, հետո ընկրկեց, շրջվեց ու մի կողմ ճողոպրեց: Ես ինձ վատ էի զգում կարեկցանքի ու նողկանքի խառը զգացումից և չէի կարողանում թոթափել այդ զգացողու-

թյունը մինչև որ տանը՝ իմ փոքրիկ սենյակում, շուրջբոլորս շարեցի իմ մի զույգ պատկերները և կարոտաբաղձ հոգեկանությամբ տրվեցի սեփական երազներիս: Այստեղ անմիջապես էլ իմ երազը վերստին այցելեց՝ տան դռնակի ու զինանշանին առնչվող, մայրիկի ու այն օտար կնոջ մասին երազը, և ես տեսա այդ կնոջ դեմքը այնպես գերպարզորոշ, որ հենց նույն երեկոյան էլ սկսեցի նրա պատկերը նկարել:

Երբ մի քանի օր անց նկարն արդեն պատրաստ էր, մի քառորդ ժամի չափ էլ, ասես անգիտակցաբար, կախարդանքին տրված վերջին վրձնահարվածները հասցնելուց հետո երեկոյան կողմ ես այն կախեցի իմ պատին, սեղանի լուսամփոփն ուղղեցի նրա վրա ու կանգնեցի առջևը, որպես մի ոգու առաջ, որի հետ պետք է կռիվ տայի մինչև վճռական վախճանը: Դա մի դեմք էր՝ նախորդներին հիշեցնող, իմ բարեկամ Դեմիանին շատ նման, որոշ գծերով՝ նաև ինձ: Մի աչքը նկատելիորեն ավելի բարձր էր մյուսից, հայացքը սահելով անցնում էր իմ վրայով՝ ինքնախորասուզված, անհաղորդ ու անշարժացյալ քարացումի մեջ, ճակատագրով լեցուն:

Ես կանգնել էի նրա առաջ և ներքին լարվածությունից սառույց կտրել՝ մինչև կրծքիս խորքը: Ես հարցաքննում էի պատկերին, մեղադրում նրան, փաղաքշում, աղոթում նրա համար: Ես նրան կոչում էի մայր, կոչում էի սիրուհի, անվանում էի պոռնիկ ու անբարոյական քած, կոչում էի Աբրաքսաս: Այդ ընթացքում միտքս էին գալիս Պիստորիուսի, գուցե Դեմիանի խոսքերը. ես չէի կարողանում հիշել, թե երբ էին դրանք արտաբերվել, բայց թվում էր, որ ես դրանք նորից էի լսում: Այդ խոսքերը վերաբերում էին Աստծո հրեշտակի հետ Հակոբի կռվին ու ասում էին՝ «ես քեզ թույլ չեմ տա, բայց դու հետո ինձ կօրհնես»:

Լուսամփոփի փայլի մեջ պարուրված նկարն դեմքը կերպափոխվում էր ամեն անվանումի հետ: Դառնում էր լուսավոր ու պայծառ, դառնում սև ու խավար, գունատ կոպերը փակում էր սառած ու ընդարմացած աչքերի վրա, բացում կրկին ու շողշողացնում վառվռուն հայացքը. այն կին էր ու տղամարդ, աղջիկ էր ու մանկիկ, կենդանի, որ ցրվում-տարրալուծվում էր բիծ ու կտորտանքների կարկատանների մեջ, ապա կրկին վերստանում իր մեծությունն ու հստակությունը: Վերջում, հանձնվելով իմ ներքին ուժգին կանչին, ես փակեցի աչքերս և այժմ պատկերը տեսա իմ ներսում՝ իմ մեջ, ավելի զորեղ ու կորովի: Ես ուզում էի նրա առաջ ծունկի գալ, բայց այն այնքան շատ էր իմ մեջ ներծծված, որ ես այլևս անկարող էի այն ինձանից տարբերել, ասես այն ավելին էր, քան իմ սեփական ես-ը:

Այդժամ ես մի խուլ ու ծանր շառաչյուն լսեցի՝ ասես գարնանային փոթորկից փրցված, և դողում էի համակված մի աննկա-

բագրելի նոր զգացումով՝ վախի ու վերապրումի: Աստղերը մերթ ընդ մերթ բռնկվում էին իմ առաջ ու հանգչում, հիշողությունները ետ էին գնում մինչև ամենաառաջին, մոռացված մանկության ժամանակները, ու այդպես մինչև նախագոյացություններն ու արարչագործ էակների վաղնջական աստիճանները՝ հոծ զանգվածներով հորդում էին դեպի ինձ ու կողքովս շառաչելով անցնում: Բայց այն հիշողությունները, որոնք, ըստ էության, մինչև ամենածածուկ գաղտնատեսությունները վերարտադրում էին իմ ողջ կյանքը, չէին բավարարվում միայն երեկով ու այսօրով, նրանք ավելի հեռուն էին գնում, արտացոլում ապագան, ինձ կտրում-պոկում էին այսօրից ու նոր կենսաձևերի ու գոյացությունների մեջ արտանետում, որոնց պատկերները սարսափելիորեն պայծառ էին ու կուրացուցիչ, որոնցից և ոչ մեկը, սակայն, ավելի ուշ ես ոչ մի կերպ չէի կարողանում հիշել:

Գիշերը ես արթնացա խորը քնից, զգեստներս հագիս՝ ես լայնակի պառկած էի մահճակալին: Ես վառեցի լույսը, զգացի, որ պետք է մի շատ կարևոր բան հիշած լինեի, բայց ոչինչ չէի հիշում մի քանի ժամ առաջ տեսածից: Լույսը վառեցի և հիշողությունն աստիճանաբար վերականգնվեց: Ես նկարն էի փնտրում, այն այլևս կախված չէր պատից, ոչ էլ սեղանին էր դրված: Ես կարծես աղոտ կերպով մտաբերեցի, որ այն պետք է որ այրած լինեի: Կամ գուցե երա՞զ էր դա, ուր ես այն այրել էի ձեռքերիս մեջ ու մոխիրը կերել:

Մի մեծացունց անհանգստություն հալածում էր ինձ: Ես գլխարկս դրեցի, քայլեցի տան միջով ու դուրս եկա փողոց՝ ասես հարկադրանքով, վազում էի ու վազում փողոցներով ու հրապարակներով՝ կարծես փոթորկի շնչից ալեկոծվող, մթնդած եկեղեցու կողքով անցնելիս՝ ականջ պահեցի բարեկամիս ձայնին, անորոշ խավարի մեջ տենդագին ինչ-որ բան էի փնտրում՝ չիմանալով թե ինչ: Ես հայտնվեցի արվարձաններից մեկում, ուր պոռնկատներն էին շարքերով կանգնած, այս ու այնտեղ դեռ լույսեր էին վառվում: Ավելի հեռվում վեր էին խոյանում նորակառույցները ու աղյուսի կույտերը՝ կիսով չափ մոխրագույն ձյունով ծածկված: Հանկարծ մտաբերեցի այն օրը, երբ որպես մի երազային թափառաշրջիկ օտար մի ուժի կողմից հալածվում էի այս անապատի միջով, հիշեցի իմ հայրենական քաղաքի այն նորակառույց շինությունը, ուր մի օր ինձ քարշ տվեց իմ տանջարար Քրոմերը մեր առաջին հաշվեհարդարի կապակցությամբ: Նմանատիպ մի շինություն գորշ գիշերվա մեջ ահա խոյանում էր իմ առաջ, որը սև դռան անցքով դեպի ինձ էր բացվում: Այն ինձ ներս քաշեց, ես ուզում էի ճանապարհս շեղել և սայթաքեցի խիճ ու ավազի վրա. ձգողականությունը շատ ավելի ուժեղ էր, ես հարկադրված էի ներս մտնել:

Տախտակների ու ջարդուխուրդ արված աղյուսների վրայով երերալով՝ ես առաջ էի շարժվում ամայի տարածության միջով, պղտոր ու մառախլահեղց հոտ էր արձակվում չորուկ սառնությունից ու քարերից: Մի ավազակույտ կար այնտեղ, գորշապայծառ մի հողակտոր, ողջ մնացյալը թաղված էր խավարի մեջ:

Այստեղ սարսափահար մի ձայն կանչեց ինձ. «Աստծու սիրույն, Զի՛նքլեր, որտեղի՞ց հայտնվեցիր»:

Ու իմ կողքին խավարի միջից բարձրացավ-կանգնեց մի մարդ, փոքրիկ ու վտիտ մի տղա, ինչպես ոգի, և ես ճանաչեցի, մինչ իմ մազերը բիզ-բիզ էին կանգնել ցնցումից, իմ դպրոցական ընկերոջը՝ Քնաուերին:

- Ինչպե՞ս այստեղ հայտնվեցիր,- հարցրեց նա՝ ասես հուզմունքից խելագարված:- Դու ինչպե՞ս կարողացար ինձ գտնել:

Ես ոչինչ չէի հասկանում:

- Ես քե՛զ չէի փնտրում,- շփոթված ասացի ես. յուրաքանչյուր արտաբերված բառը ինձանից մեծ ջանքեր էր խլում և կըցկտուր դուրս գալիս իմ մեռելագույն ու ծանրացած, ասես սառցակալած շրթունքներից:

Նա ակնապիշ ինձ էր նայում:

- Զէի՞ր փնտրում:

- Ո՛չ: Ինձ այստեղ ձգեց: Դու ինձ կանչեցի՛ր, այո՞: Դու կարծես ինձ ձայնեցիր: Դու ի՞նչ ես անում այստեղ: Զէ՞ որ գիշեր է:

Զղաձիգ լարումով նա ինձ առավ իր բարալիկ ձեռքերի մեջ:

- Այո, գիշեր է: Շուտով կլուսանա: Օ՜ Զինքլեր, ուրեմն դու ինձ չես մոռացել... Դե եթե կարող ես՝ ներիր ինձ:

- Բայց ի՞նչը:

- Ախ, ես այնպես նողկալի պահեցի ինձ այն ժամանակ...

Միայն հիմա ես մտաբերեցի մեր խոսակցության մասին: Մի՞թե դա ընդամենը չորս-հինգ օր առաջ էր եղել: Այդ ժամանակվանից ի վեր, թվում էր, մի ամբողջ կյանք էր անցել: Բայց հիմա ես հանկարծ ամեն ինչ հասկացա: Ոչ միայն այն, թե ինչ էր մեր միջև տեղի ունեցել, այլ նաև, թե ինչու էի ես այստեղ հայտնվել և ինչ էր Քնաուերը ուզում անել այս կողմերում:

- Ուրեմն դու ուզում էիր ինքնասպա՞ն լինել, այո՞, Քնաուեր:

Նա սարսափահար եղած՝ քար կտրեց սառնությունից ու վախից կարկամած:

- Այո, ուզում էի: Զգիտեմ, թե արդյոք ես կկարողանայի դա անել: Ես ուզում էի սպասել լույսը բացվելուն:

Ես նրան հանգիստ թողեցի: Օրվա առաջին հորիզոնական ընկնող լույսի ճառագայթներն առկայծում էին անասելիորեն սառնաբույր ու տխրաթախիծ, գորշ քամիներում:

Պատանյակի ձեռքից բռնած՝ ես նրա հետ մի քանի քայլ առա-

ջացա: Իմ մեջ մի ձայն սկսեց խոսել. «Հիմա դու տուն կգնաս և ոչ ոքի ոչինչ չես ասի... Դու սխալ ճանապարհի վրա ես, մոլորված ուղղու... Մենք խոզեր չենք, ինչպես դու ես կարծում: Մենք մարդիկ ենք: Մենք Աստվածներ ենք ստեղծում և կռիվ ենք տալիս նրանց հետ, ու նրանք օրհնում են մեզ:

Լռելյայն մենք քայլում էինք կողք-կողքի, հետո բաժանվեցինք: Երբ ես տուն վերադարձա, արդեն լույսը բացվել էր:

Լավագույնը, որ ինձ վիճակվեց ապրել այն ժամանակներում Շբ.-ում, Պիստորիուսի հետ երգեհոնի հնչյունների կամ բուխարու կրակի առաջ անցկացրած ժամերն էին: Մենք միասին մի հունական տեքստ էինք կարդում Աբրաքսասի մասին, նա ինձ համար թարգմանաբար հատվածներ էր ընթերցում Վեդաներից և սովորեցնում էր ինձ սրբազան «Օմ»-ը արտասանել: Այնուհանդերձ այդ գիտնականությունները չէ, որ ներքուստ առաջ էին մղում ինձ, այլ ավելի շուտ ճիշտ հակառակը: Այն, ինչը հաճելիորեն ազդեցություն էր ունենում ինձ վրա ու իմ մեջ առաջխաղացում արձանագրում՝ ապրելու զգացողությունն էր, հարաճուն վստահությունն իմ սեփական երազների, գաղափարների ու նախազգացումների նկատմամբ, և շարունակաբար աճող գիտակցումն այն ուժի, որ ես իմ մեջ էի կրում:

Ամեն ինչում ես ու Պիստորիուսը հասկանում էինք իրար: Բավական էր միայն, որ ես կենտրոնացած նրա մասին մտածեի, վստահ էի լինում, որ նա այցելելու էր ինձ կամ նրանից մի լուր էի ստանալու: Ես կարող էի նրան էլ, ինչպես Դեմիանին, հարցուփորձ անել, առանց իսկ նրա ներկայության. բավական էր միայն, որ ես ամբողջ ուժով պատկերացնեի նրան և իմ հարցերը կենտրոնացված մտքերի ձևով նրան ուղղեի: Այդժամ հարցի մեջ առկա հոգևոր ողջ ներուժը պատասխանի ձևով վերադառնում էր ինձ: Միայն թե ոչ թե Պիստորիուսի կամ Մաքս Դեմիանի անձն էի իմ առաջ պատկերացնում, այլ իմ երազած ու նկարեն պատկերը, իմ Դևի, Դեմոնի տղամարդականացի ցնորական տեսիլը, որին ոգեկոչում էի ես: Այն այլևս լոկ իմ երազներում չէր ապրում և ոչ իսկ նկարեն թղթի վրա, այլ իմ մեջ, որպես տեսչալի մի պատկեր և իմ ինքնության վերընթաց բարձունք:

Անկրկնելի և երբեմն ծիծաղաշարժության աստիճան զավեշտական էին այն հանգամանքները, որոնցում ձախողակ անձնասպան Քնաուերը հայտնվում էր իմ առաջ: Այն գիշերվանից սկսած, երբ ես նրան առաքվեցի, կառչել էր նա ինձանից որպես հավատարիմ ծառա կամ շուն, ձգտում էր իր կյանքը իմի հետ կապել և կուրորեն հետևում էր ինձ: Նա ինձ մոտ էր գալիս տարբերինակ հարցերով ու ցանկություններով, ուզում էր հոգիներ տեսնել, ուզում էր կաբբալա սովորել, և չէր հավատում ինձ, երբ ես հավաստում էի, որ բոլոր այդ բաներից ես ոչինչ չէի

հասկանում: Նա հավատում էր ինձ ամեն ինչից առավել: Բայց տարօրինակն այն էր, որ նա հաճախակի իր արտասովոր ու հիմար հարցերով ինձ մոտ էր գալիս հենց այն ժամանակ, երբ կարիք էի զգում ինքս իմ մեջ մի հանգույց լուծելու, և այդժամ իր քմահաճ ու կամակոր մտահղացումներն ու տենչանքներն ինձ հաճախակի գլխաբառն էին ցուցանում, ասես մի վերջին հարվածով մղում տալիս լուծումները գտնելուն: Երբեմն նա ինձ համար ձանձրալի բեռ էր դառնում և տիրական խստությամբ հեռացվում էր, բայց ամեն դեպքում ես զգում էի. նա ևս ինձ էր ուղարկված, նաև նրանից էր գալիս այն, ինչը ե՛ս էի նրան տվել, կրկնապատիկը ինձնից արտածված՝ վերադարձվում էր ինձ, նա ևս ինձ համար առաջնորդ էր, կամ առնվազն՝ մի ճանապարհ: Խելացնոր գրքերն ու գրությունները, որ նա ինձ էր մատուցում և որոնց մեջ նա իր փրկությունն էր փնտրում, ինձ ավելին էին սովորեցնում, քան տվյալ պահին ես կարող էի գիտակցել:

Այդ Քնաուերը ժամանակ անց կորսվեց-չքացավ՝ բավարարություն չստանալով իմ ճանապարհից: Նրա հետ անիմաստ էր վիճաբանել կամ հակառակվել նրան: Ուրիշ էր սակայն Պիստորիուսի պարագան: Այդ բարեկամիս հետ, Շտ.-ում իմ դպրոցական ուսումնառության շրջանի ավարտվելուն մոտ, ես մի առանձնահատուկ բան ևս վերապրեցի:

Նաև ամենաանմեղ ու բարեհոգի մարդկանց էլ հազիվ թե թույլ է տրվում կյանքում մեկ կամ մի քանի անգամներ հակամարտության մեջ մտնել բարեպաշտության ու երախտագիտության գեղեցիկ առաքինությունների հետ: Ցուրաքանչյուր ոք պետք է մեկ անգամ մի քայլ կատարի, որը կբաժանի իրեն իր հորից, իր ուսուցիչներից, յուրաքանչյուր ոք պետք է ինչ-որ բան զգա մենակության անգութ դաժանությունից, անգամ, երբ մարդկանց մեծամասնությունը դրա ամենաչնչին մասն անգամ միայն ի զորու չի լինում տանելու, շուտով վերստին հատակը գահավիժելով: Իմ ծնողներից ու նրանց աշխարհից, իմ սիրասուն մանկության «լուսավոր» աշխարհից, ես դեռ չէի կտրվել այս իմ կռվի թոհուբոհի մեջ, այլ դանդաղորեն և գրեթե աննկատելիորեն օտարվել էի նրանցից ու հեռացվել: Դա ինձ ցավ էր պատճառում և դեպի հայրենի եզերք կատարած իմ այցելությունների ժամանակ այն ինձ հաճախ դառնագույն ժամեր էր պարգևում, բայց դա մինչև սիրտը չէր թափանցում և դեռ կարելի էր մի կերպ տանել:

Բայց այնտեղ, ուր ոչ թե սովորության ուժով, այլ սեփական ներքին մղումով մենք սեր ու պատկառանք էինք մատուցել, այնտեղ, ուր մենք սեփական սրտի մղումով երեխաներ ու բարեկամներ էինք եղել, այնտեղ, այն մի դառնաղի ու սարսափելի պահի էր վերածվում, երբ մենք անսպասելիորեն կարծում էինք,

թե ճանաչել էինք մեր միջի առաջ մղող այն հոսանքը, որ կուզենար մեզ հեռացնել սիրելիներից: Արդ՝ այնտեղ յուրաքանչյուր միտք, որ մերժում է բարեկամին ու ուսուցչին, թունավոր խայթոցով ուղղվում է մեր սեփական սրտի դեմ, այնտեղ յուրաքանչյուր պաշտպանական կամ հետամուղ հարված դիպչում է սեփական դեմքին: Այնտեղ նրան, ով կարծում էր, թե օրինավոր բարոյականություն էր ինքն իր մեջ կրել, հանկարծակի հայտնվում էին այնպիսի անուններ, ինչպես «անհավատարմություն» ու «երախտամոռություն»՝ որպես ամոթալի կանչեր ու այրվածքների հետքեր, ահա այնտեղ սարսափահար ու վախվորած սիրտը անհանգիստ ետ է փախչում դեպի մանկության առաքինությունների սիրելի հովիտները և չի կարող հավատալ այն բանին, որ նաև վերջնական խզումը պետք է տեղի ունենա, որ նաև այդ հոդակապ ջիլը պետք է կտրվի:

Ժամանակի ընթացքում, հակառակ դրան, իմ մեջ դանդաղորեն մի զգացում արմատացավ, իմ մեջ ցանկություն ծնվեց իմ բարեկամ Պիստորիուսին անպայման հենց որպես ինձ առաջնորդ կարգել: Այն, ինչը ես իմ մանկության շրջանի կարևորագույն ամիսներին էի վերապրել, այժմ այն վերադարձվել էր ինձ նրա հետ իմ ունեցած բարեկամությամբ, նրա խորհրդով, նրա մխիթարությամբ, նրա մտերմությամբ: Նրա միջից Աստված էր խոսում ինձ հետ: Նրա շուրթերից իմ երազները դեպի ինձ էին վերադառնում, պարզված ու ցուցանելու պես մեկնված: Նա ինձ վերադարձրեց իմ իսկ արիությունը, այն իմ մեջ ներարկեց: Ա՜խ, հիմա իմ մեջ դանդաղորեն գլուխ էր բարձրացնում նրան հակադրվելու իմ ներքին հարաճուն ձգտումը: Ես շատ ուսանելի բաներ էի լսում նրա խոսքերում, բայց ես ըմբռնեցի, որ նա իմ ամբողջության միայն մի մասն է հասկանում:

Մեր մեջ ոչ վեճ էր եղել, ոչ ցնցող տեսարաններ, ոչ անջրպետ և ոչ էլ՝ փոխադարձելու հաշիվներ: Ես նրան իսկապես անմեղ, բարեհոգի մի խոսք միայն ասացի, սակայն դա հենց այն ակընթարթն էր, երբ մեր հարազատ պատրանքը փշուր-փշուր եղավ ու գույնզգույն բեկորների մեջ տարրալուծվեց:

Նախազգացումն արդեն միառժամանակ ճնշում էր ինձ, բայց պարզորոշ զգացումի այն վերածվեց մի կիրակի օր՝ նրա հնաբույր աշխատասենյակում: Մենք պառկել էինք հատակին՝ կրակի առաջ, նա խոսում էր իր ուսանած միստերիաներից ու կրոնի ձևերից, որոնց մասին նա իր խորհրդածություններն էր անում և որոնց հնարավոր ճակատագիրը զբաղեցնում էր իրեն: Ինձ համար, սակայն, այդ ամենը ավելի շուտ զվարճալի ու հետաքրքրական էր պատկերանում, քան կենսական կարևորություն ունեցող, դրանցում իմ առաջ հառնում էր գիտական խորիմացությունը, հին աշխարհների փլատակների տակ խուզարկու, հոգ-

նեցուցիչ փնտրտուքը: Անսպասելիորեն ես մի գարշանք զգացի այդ ամբողջ արվեստի, առասպելաբանությունների այդ պաշտամունքի նկատմամբ, հնուց ավանդված հավատի տարաձևությունների հետ այդ խճանկարային աճպարարության հանդեպ:

- Պիստորիուս,- անսպասելիորեն ասացի ես՝ ինձ համար էլ անակնկալ ու սարսափազդու, պոռթկացող չարությամբ,- Դուք խոստացել էիք ինձ մի երազ պատմել, իրական մի երազ, որ դուք գիշերն էիք տեսել: Այն, ինչ Դուք հիմա խոսում եք, երիցս անիծյալ հնաբույր զառանցանք է...

Այդպես խոսելիս նա ինձ երբեք չէր տեսել, և ես ինքս էլ, նույն ակնթարթին, կայծակի արագությամբ ամոթ ու սարսափով զգացի, որ նրա ուղղությամբ արձակած այս իմ նետը, որը ճիշտ նրա սրտին դիպավ, իր իսկ սեփական զինանոցից էր վերցված, քանզի այս կարգի ինքնակշտամբանք-հանդիմանությունները, որոնք ես ծաղրական հնչերանգով պատահած ժամանակ լսում էի նրա շուրթերից, հիմա չարամտությամբ իրեն էի ուղղում ավելի սուր ձևով:

Նա զգաց դա վայրկենաբար ու անմիջապես խաղաղվեց: Ես վախը սրտումս նրան էի նայում ու նկատեցի նրա սարսափահար գունատվածությունը:

Երկար ու ծանր դադարից հետո նա մի նոր փայտ դրեց կրակի մեջ և հանգիստ ասաց.- Դուք միանգամայն իրավացի եք, Զինքլեր, Դուք խելացի տղա եք: Ես չպետք է Ձեր գլուխը լցնեմ հնոտի անպետքություններով:

Նա խոսում էր անչափ հանգիստ, բայց ես լսում էի վիրավորանքի ցավը նրա խոսքերում: Ի՜նչ էի ես արել...

Արցունքներս հոսելու վրա էին, ես ուզում էի դրությունը փրկել, փարվեի նրան, ուզում էի ներողություն խնդրել նրանից, իմ սերը հավաստել նրան, իմ նրբանուրբ երախտագիտությունը: Հուզախանդ խոսքեր էին միտքս գալիս, բայց ես անկարող էի դրանք արտաբերել: Ես մնացի պառկած, նայեցի կրակին ու լռեցի: Նա նույնպես լռեց, ու այդպես պառկած էինք մենք, և կրակը վառվելով իջնում էր ու նստում, և յուրաքանչյուր առկայծուն բոցի հետ ես զգում էի մի ինչ-որ գեղեցկության ու հոգեզմայլքի կայծակնացայտ մարումը, որ թռչում-անցնում էր ու այլևս չէր կարող վերադառնալ:

- Վախենամ, թե Դուք ինձ սխալ եք հասկանում,- վերջապես ասացի ես անչափ ճնշված, չոր ու կերկերուն ձայնով: Անմիտ ու անհեթեթ խոսքերի շարանն ասես մեքենայաբար դուրս էր գալիս իմ շուրթերից, ասես մի լրագրային վեպից ընթերցելիս լինեի:

- Ես Ձեզ շատ ճիշտ եմ հասկանում,- կամացուկ ասաց Պիստորիուսը:- Դուք իրավացի եք:- Նա դադար տվեց: Հետո դանդաղ շարունակեց.- Այնքանով, որքանով որ մարդս մեկ ուրիշի

հանդեպ կարող է իրավացի լինել:

Ո՛չ, ո՛չ, ձայնում էր ինձ ներսից, ես իրավացի չէի... բայց ասել ես ոչինչ չէի կարող: Ես գիտեի, որ իմ այդ մի հատիկ խոսքով ես նրան մատնացույց էի արել իր գլխավոր թուլությունները, նրա պակասներն ու խոցելի վերքերը: Ես դիպել էի այն կետին, ուր նա ինքն իր նկատմամբ էլ պետք է տարակուսներ ունենար: Նրա իդեալը «հազվագյուտ» մի բան էր, նա հետահայաց որոնող էր, ռոմանտիկ: Հանկարծ ես խորապես զգացի. այն, ինչ Պիստորիուսն էր եղել ինձ համար և ինչ ինձ էր տվել, նույնը նա չէր կարող ինքն իր համար լինել ու իրեն տալ: Նա ինձ մի ճանապարհ էր դուրս բերել, որը նաև իրեն՝ առաջնորդին, պետք է որ գերազանցելիս լիներ ու կխաճամփին թողներ նրան:

Աստված գիտե, թե ինչպես են նման խոսքերը ծնունդ առնում... Ես այն վատ իմաստով չէի ասել, գաղափար իսկ չունեի որևէ աղետի մասին: Ես մի բան էի արտաբերել, ինչը արտասանելու պահին ինքս էլ մինչև վերջ չէի հասկացել, ես մի փոքրիկ, ինչ-որ զավեշտական ու չարաճճի նախահարձակ միտք էի արտահեղել, ու այն ճակատագրականություն էր ձեռք բերել: Ես մի փոքրիկ, անզգույշ կոպտություն էի ինձ թույլ տվել, որը նրա համար դատ ու դատաստան էր դարձել:

Օ՛ այն ժամանակ ես որքան կցանկանայի, որ նա չարանար ինձ վրա, ինքնապաշտպանվեր, բղավեր ինձ վրա... Նա այդպես չվարվեց, դա ես ինքս իմ ներսում արեցի: Նա պետք է որ քմծիծաղելիս լիներ, եթե միայն կարողանար: Այն, որ նա չկարողացավ դա անել, դրանով իսկ ես լավագույնս համոզվեցի, թե ինչքան խորն էի նրան վիրավորել:

Այն, որ Պիստորիուսը իր հանդուգն ու անհամեստ աչակերտից ստացած հարվածը այդպես անխոս ընդունեց, որ նա լռեց ու ինձ խոսելու իրավունք տվեց, այն, որ նա իմ խոսքերը որպես ճակատագիր ընդունեց, դրանով իսկ նա ինքս իմ նկատմամբ առելի դարձրեց՝ իմ անխոհեմ թեթևամտությունը հազար անգամ ավելի մեծ ու ուռճացած ցուցադրել տալով: Հարվածելու պահին ես մտածեցի, թե մի ուժեղ ու ինքնապաշտպանված մեկին էի խփում, հիմա պարզվեց, որ նա մի խաղաղ ու համբերատար մարդ էր, անպաշտպան մեկը, որ լռելյայն անձնատուր եղավ:

Երկար ժամանակ մենք պառկած մնացինք մոխրացող կրակի առաջ, որի մեջ ամեն մի առկայծող կերպարանք, ամեն գալարվող ու կուչ եկող մոխրաքուլա իմ մեջ երջանկավետ ու գեղատեսիլ, պայծառ ժամեր էր ոգեկոչում և Պիստորիուսի հանդեպ իմ պարտավորվածության մեղքը ավելի ու ավելի հստակորեն ի ցույց գնում: Ի վերջո ես չկարողացա համակերպվել իրավիճակին, այն անտանելի է դառնում ինձ համար: Ես վեր կացա ու գնացի: Երկար կանգնած էի ես նրա դռան առջև, խավար սանդուղքին, բա-

վական ժամանակ դրսում կանգնած մնացի՝ տան առաջ սպասելով, թե գուցե նա կգար ու կընկերակցեր ինձ: Հետո քայլելով հեռացա ու ժամեր շարունակ վազում էի քաղաքով ու արվարձաններով, այգով ու անտառի միջով՝ մինչև ուշ երեկո: Եվ այն ժամանակ ես առաջին անգամ Կայենի նշանը զգացի իմ ճակատին:

Աստիճանաբար ես մտածմունքներիս տրվեցի: Իմ բոլոր մտքերը, բոլոր-բոլորը մեն-միակ նպատակ էին հետապնդում՝ մեղադրել ինձ և Պիստորիուսին պաշտպանել: Եվ բոլորը հակառակ վախճան էին ունենում: Ես հազար անգամ պատրաստ էի իմ տաքարյուն խոսքի համար զղջալու և ետ վերցնելու այն... բայց չէ՛ որ դա ճշմարիտ էր: Միայն հիմա ինձ հաջողվեց հասկանալ Պիստորիուսին, նրա կյանքի ողջ երազը աչքերիս առաջ կառուցել: Նա երազել էր քարոզիչ դառնալ, նոր կրոնը տարփողել, բարձրացմանը, սիրույն ու երկրպագությանը նոր կերպ հաղորդել, նոր խորհրդանիշներ կանգնեցնել: Բայց դա նրա կոչումը կամ պաշտոնը չէր: Նա ապրում էր չափազանց ջերմ ու կենսահաստատ տրվածության մեջ, նա ամենայն ճշգրտությամբ ճանաչում էր անցյալը, նա անչափ շատ գիտեր Եգիպտոսի մասին, Հնդկաստանի, Միթրայի ու Աբրաքսասի մասին: Նրա սերը կապված էր այն պատկերներին, որոնք երկիրը արդեն իսկ ճաշակել էր, դրա հետ մեկտեղ՝ իր ամենաներքին շերտերում նա շատ լավ գիտեր, որ նորը նորահայտ ու բոլորովին ուրիշ մի բան պետք է լիներ, որ աղբյուրները թարմ հողից պետք է դուրս հորդեն և ոչ թե հավաքածուներից ու գրադարաններից պեղվեն: Նրա պաշտոնը գուցե դեպի իրենց առաջնորդելու հարցերում մարդկանց օգնելն էր, ինչպես որ նա դա իմ նկատմամբ արեց: Զլսվածը, նոր աստվածներ մարդկանց տալը նրա պաշտոնը չէր:

Եվ այստեղ որպես մի սուր բոց իմ մեջ իմացության լույսը ճառագեց. յուրաքանչյուրի համար մի-մի «պաշտոն» կա նախագծված, բայց ոչ ոքի վիճակված չէ, որ ինքը իր համար այն կարողանա ընտրել, այն նորից վերասելու պես հաստատագրել ու իր ուզած ձևով այն կառավարել կարողանա: Կեղծ մոլորություն էր նոր աստվածների տենչանքը, կատարյալ մոլորություն էր աշխարհին ինչ-որ բան տալու ցանկությունը... Մեծահասակ մարդկանց համար չկար, չէր կարող լինել ոչ մի ուրիշ պարտականություն, քան այս մեկը. ինքն իրեն որոնել, վստահանալ սեփական ուժերի նկատմամբ, սեփական ճանապարհը խարխափումի մեջ դեպի առաջ մղել, միևնույն է, թե ուր կառաջնորդեր այն իրեն: Դա խորապես ցնցեց ինձ, և դա ինձ համար այդ վերապրված փորձության արգասիքն էր: Ես հաճախ էի խաղացել ապագայի պատկերների հետ, երազել այն դերերի մասին, որ կարող էին ինձ համար կանխորոշված ու նախապատրաստված լինել՝ բանաստեղծի կամ գուցե մարգարեի, նկարչի կամ մեկ այլ բանի: Այդ

ամենը ոչինչ էր: Ես այստեղ չէի բանաստեղծելու, քարոզելու կամ նկարելու համար, ո՛չ ես, ո՛չ էլ ուրիշ որևէ մեկը դրա համար չէր այստեղ գտնվում: Այդ ամենը զուտ իմիջիայլոց, պատահական հետևություն էր: Ցուրաքանչյուրի համար միայն մեկ ճշմարիտ մասնագիտություն գոյություն ուներ. ինքն իրեն գտնել, իրեն վերադառնալ: Նա կարող էր որպես բանաստեղծ կամ խելագար, որպես մարգարե կամ որճագործ մեկը իր կյանքն ավարտել, մնացյալը նրա գործը չէր, այո, դա վերջիվերջո անկարևոր էր ու նշանակությունից զուրկ: Իր խնդիրը սեփական ճակատագիրը գտնելն էր, ոչ թե իր ուզածը, այն իր մեջ ապրեցնելը՝ լիուլի ու ամբողջական: Ողջ մնացյալը կիսատ-պռատություն էր, խուսանավելու, գլուխն ազատելու փորձ, հետադարձ փախուստ՝ դեպի զանգվածների իդեալը, պատշաճող հարմարեցում ու վախ սեփական հոգու ներքին ձգտումների նկատմամբ: Այդ սարսափելի ու սրբազնական նորահայտ պատկերը հառնեց իմ առաջ, հարյուր անգամ նախազգացված ու գուշակված, գուցե հավանաբար շատ անգամներ արտահայտություն գտած և սակայն հիմա միայն վերապրված: Ես բնության մի նետվածք էի, նետվածք Անորոշի մեջ, գուցե Նորի, գուցե Ոչնչի մեջ, և այդ նետվածքը իր անդնդախոր հնությունից հունցելը, նրա կամքն իմ մեջ զգալը և այն ամբողջապես իմը դարձնելն էր միայն իմ միակ մասնագիտությունն ու կոչումը: Միմիայն դա...

Ես արդեն շատ էի մենակություն ճաշակել: Հիմա ես կռահելու պես նախազգում էի, որ դրա շատ ավելի խորը տարատեսակն էլ կար, և որ այն անխուսափելիորեն դեռ այցելելու էր:

Ես ոչ մի փորձ չէի ձեռնարկում Պիստորիուսին խաղաղեցնելու համար: Մենք մնում էինք բարեկամներ, բայց հարաբերությունները փոխվել էին: Միայն մեն-միակ անգամ մենք խոսեցինք այդ մասին, կամ իրականում հենց միայն նա էր խոսում: Նա ասաց.- Ես ցանկություն ունեմ քահանա դառնալու, Դուք դա գիտեք: Ես մեծագույն սիրով կուզենայի նոր կրոնի քահանա դառնալ, այն կրոնի, որի վերաբերյալ մենք կարծես որոշ պատկերացումներ ու գաղափարներ ունենք: Ես երբեք դա չեմ կարողանալու դառնալ, ես դա գիտեմ ու առաջ էլ գիտեի, առանց որ այդ բանը ինձ ամբողջապես խոստովանելու, արդեն երկար ժամանակ: Ես ուրիշ-ուրիշ քահանայական ծառայություններ էլ կանեմ, գուցե երգեհոնի վրա, գուցե մեկ այլ կերպ: Բայց ես պետք է մշտապես մի բանով շրջապատված լինեմ, ինչը ես գեղեցիկ ու սուրբ եմ համարում, երգեհոնային երաժշտություն ու միստերիա, խորհրդանիշ ու առասպել, դրանք պետք են ինձ և ես չեմ ուզում դրանք հեռացնել ինձանից: Դա իմ թուլությունն է: Որովհետև ես երբեմն իմանում եմ, Զինքլեր, ժամանակ առ ժամանակ գիտակցում, որ ես չպետք է նման ցանկություններ ու-

նենամ, որ դրանք չքեղություն են ու թուլության նշան: Շատ ավելի վեհ կլիներ, ավելի արդարացի, եթե ես պարզապես ճակատագրի տրամադրության տակ լինեի, առանց հավակնությունների: Բայց ես դա չեմ կարող, դա այն միակ բանն է, որ ես չեմ կարող: Միգուցե Դուք դա երբևէ կարողանաք: Դա շատ դժվար է, դա իսկապես այն միակ դժվար բանն է, որ կա, մանկիկս: Ես հաճախ եմ այդ մասին երազել, բայց ես չեմ կարող, այդ մտքից մարմնովս սարսուռ է անցնում. ես չեմ կարող այդպես ամբողջովին մերկ ու միայնակ կանգնել, ես էլ մի խեղճուկրակ, թուլակամ շուն եմ, որ մի փոքր ջերմություն ու սնունդ է փնտրում և առիթը ներկայանալուն պես՝ կուզենար իր նմանների մերձավորությունը զգալ: Ով իսկապես բոլորովին ոչինչ չի ուզում, բացի իր ճակատագրից, նա այլևս իր նմաններին չի գտնի, նա կանգնած է ամբողջովին մեն-մենակ ու հիմա միայն սառը աշխարհներն ու տիեզերքներն ունի իր շուրջբոլորը ամփոփ: Գիտեք, դա Հիսուսն է Գեթսեմանիի պարտեզներում: Շատ մարտիրոսներ են եղել և կան, որոնք հաճույքով իրենց գամել են տալիս խաչին, բայց նրանք էլ հերոսներ չեն, ազատագրվածներ չեն, նրանք էլ տենչում էին այն, ինչն իրենց սիրելի էր ու հարազատ, նրանք նախապատկերներ ունեին, իդեալներ: Իսկ ով լոկ ճակատագրի ճորտն է դառնում, նրան է ձգտում, նա այլևս ոչ նախատիպար ունի, ո՛չ իդեալներ, ո՛չ սիրելի բաներ, ո՛չ էլ մխիթարանք... Եվ իսկապես հենց այդ ճանապարհով պետք է մարդս ընթանա: Ինձ ու Ձեզ պես մարդիկ իսկապես միայնակ են, սակայն մենք, ամեն դեպքում, գտել ենք իրար, մենք ունենք մեր ծածուկ բավարարվածությունն ու փոխհատուցումը՝ մեկ ուրիշը լինելու, ըմբոստանալու, արտասովորն ուզենալու: Դրան նույնպես պետք է վերջ տրվի, եթե մեկը ցանկանում է ողջ ճանապարհը ամբողջությամբ անցնել: Նա կարիքը չունի նաև հեղափոխական, նախօրինակ, մարտիրոս կամ նախավկա լինելու: Չպետք է հորինաստեղծ գաղափարներ առմտածել:

Ո՛չ, չպետք է հորինաստեղծ միտք բանեցնել: Այն պետք էր երազել, պետք էր նախազգալ այն, կանխագուշակել: Մի քանի անգամներ դրա պես ինչ-որ բաներ ես ինքս էլ զգացել եմ իմ մեջ, երբ պատահում էր, որ բավականաչափ խաղաղ ժամեր էի գտնում: Այդժամ ես հայացք էի գցում իմ մեջ և տեսնում էի իմ ճակատագրի պատկերը՝ բաց ու սևեռուն աչքերում: Նրանք կարող էին իմաստնությամբ լիքը լինել, կարող էին խելագարությամբ լեցուն լինել, նրանք կարող էին սեր ճառագել կամ խորը չարություն, դա միևնույն էր: Դրանցից ոչ մեկը չպետք էր ընտրել, ոչինչ չպետք էր ցանկանալ: Կարող ես միայն ինքդ քեզ ուզենաս, միայն սեփական ճակատագիրդ: Դրանում Պիստորիուսը որպես առաջնորդ բավական առաջ էր գնացել:

Այն օրերին ես կույրի պես պտույտներ էի գործում, փոթորիկն էր շառաչում իմ մեջ, ամեն մի քայլը վտանգով էր հղի: Ես իմ առաջ այլ բան չէի տեսնում, քան միայն անդնդախոր խավարը, որի մեջ անցնում էին բոլոր մինչայժմյան ճանապարհները ու գահավեժ ընթացքով ցած տապալվում: Եվ իմ ներսում ես տեսա առաջնորդի պատկերը, որ Դեմիանին էր նմանվում և որի աչքերի մեջ իմ ճակատագիրն էր մեխված:

Ես մի թղթի վրա գրեցի. «Առաջնորդը ինձ լքեց: Ես կանգնած եմ համատարած խավարի մեջ: Ես ոչ մի քայլ չեմ կարող միայնակ անել: Օգնի՛ր ինձ...»:

Դա ես ուզում էի Դեմիանին ուղարկել: Բայց մի կողմ թողեցի: Ամեն անգամ, երբ ուզում էի դա անել, այն անհեթեթ ու անմիտ էր թվում: Բայց ես այն փոքրիկ աղոթքը անգիր գիտեի և հաճախ արտասանում էի ինքս իմ մեջ: Այն ուղեկցում էր ինձ ամեն ժամ: Ես կռահելու պես հասկացա, թե ինչ էր այդ աղոթքը:

Իմ դպրոցական ժամանակը վերջանալու վրա էր: Ես պետք է արձակուրդային ճամփորդություն ձեռնարկեի, հայրս էր այդ ծրագիրը հղացել, իսկ այնուհետև պետք է համալսարան գնայի: Թե ինչ բաժանմունք, դեռ չգիտեի: Ինձ թույլատրվել էր մեկ կիսամյակ փիլիսոփայություն ունկնդրել: Ցանկացած ուրիշ առարկայի առթիվ էլ ես նույնքան գոհ կլինեի:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՖՐԱՆՈՒ ԵՎԱ

Արձակուրդներին ես մի անգամ գնացի այն տունը, որտեղ տարիներ առաջ Մաքս Դեմիանն էր ապրել իր մոր հետ: Մի ծեր կին էր զբոսնում պարտեզում, ես խոսքի բռնվեցի նրա հետ ու տեղեկացա, որ տունն իրեն էր պատկանում: Ես հարցուփորձ արեցի Դեմիանի ընտանիքի մասին: Նա նրանց շատ լավ էր հիշում: Սակայն չգիտեր, թե որտեղ էին հիմա նրանք ապրում: Եվ քանի որ զգացել էր իմ հետաքրքրվածությունը, նա ինձ տուն տարավ, մի կաշեկազմ ալբոմ դուրս բերեց և ցույց տվեց ինձ Դեմիանի մոր լուսանկարը: Ես այլևս նրան գրեթե չէի կարողանում հիշել: Բայց երբ այժմ տեսա այդ փոքրիկ նկարը, սրտիս զարկերն ասես կանգ առան: Դա իմ երազային-ցնորք պատկերն էր... Այդ նա էր, հաղթանդամ ու մարմնեղ, գրեթե տղամարդկային կազմվածքով կանացի կերպարանքը, իր որդուն հար և նման, մայրության դիմագծերով, խստության շեշտերով, կրքոտության խորն ընկած կնիքով, գեղեցիկ ու գայթակղիչ, դև-դեմոն ու մայր, ճակատագիր ու սիրուհի: Այդ նա՛ էր...

Որպես վայրագ մի հրաշալիք նա անցավ իմ միջով, երբ ես

իմացա, որ իմ երազային ցնորք-պատկերը երկրի երեսին էր ապրում... Կար մեկը՝ մի կին, որի տեսքն իմ ճակատագրի գծերն էր իր մեջ կրում... Որտե՞ղ էր նա: Որտե՞ղ... Եվ նա Դեմիանի մայրն էր:

Դրանից շատ չանցած՝ ես մի ճամփորդություն ձեռնարկեցի: Մի արտասովոր ճամփորդություն... Ես առանց հանգստի ու դադար առնելու դեգերում էի ճամփեքին, մի վայրից մյուսը, ամեն մի հանկարծական մտահղացման ետևից ընկած, մշտապես ի խույզ այդ կնոջ: Լինում էին օրեր, երբ ես հանդիպում էի ազնիվ ու թափանցիկ կերպարանքների, որոնք նրան էին հիշեցնում, համահունչ էին նրան, հար և նման, որ հրապուրում ու քարշ էին տալիս ինձ անծանոթ քաղաքների փողոցներով, կայարանների ու երկաթուղային գնացքների միջով՝ ինչպես խճճված երազներում: Լինում էին ուրիշ օրեր, երբ ես գիտակցում էի, թե ինչ անօգուտ էր իմ փնտրտուքը: Այդժամ անգործ նստում էի մի ինչ-որ այգում, հյուրանոցի պարտեզում կամ սպասասենյակում և նայում էի իմ մեջ, իմ ներսը, փորձելով իմ միջի այդ պատկերը կենդանացնել: Բայց այժմ այն վեհերոտ ու ցնդելու պես հպանցիկ էր դարձել: Ես բնավ չէի կարողանում քնել, միայն անծանոթ տեսարանների միջով երկաթգծով ուղևորությունների ընթացքում մի քառորդ ժամվա չափով հաջողվում էր գլուխս մի տեղ դնել: Մեկ անգամ Ցյուրիխում մի կին սկսեց ինձ հետապնդել, մի գեղեցիկ, փոքր-ինչ կոշտ ու կոպիտ մեկը: Ես աչքիս ծայրով հազիվ միայն նրա կողմը նայեցի ու շարունակեցի ճամփաս, ասես նա օդեղեն լիներ: Ինձ ավելի հաճելի կլիներ անմիջապես մահանալ, քան թե հենց թեկուզ մեն-միակ ժամով մեկ այլ կնոջ ուշադրության արժանացնեի:

Զգում էի, որ իմ ճակատագիրը հետապնդում էր ինձ, զգում էի, որ բավարարումը շատ մոտ էր, և խելագարվում էի անհամբերությունից, որ ոչինչ չէի կարող դրա համար անել: Մի անգամ կայարաններից մեկում, կարծում եմ դա Ինսբրուկում պետք է պատահած լիներ, տեղից հենց նոր պոկված գնացքի պատուհանում մի կերպարանք տեսա, որն ինձ նրան հիշեցրեց, և օրեր շարունակ ինձ դժբախտ էի զգում: Անսպասելիորեն այդ կերպարանքը կրկին ինձ հայտնվեց գիշերային մի երազում, ես արթնացա իմ ձեռնարկած մարդաորսի անմտության, չփոթմունքի ու ամոթահարության գարշելի զգացումով և ուղիղ գծով ճամփա ընկա ետ դեպի տուն:

Մի քանի շաբաթ անց ես ընդունվեցի Հ-ի համալսարան: Ամեն ինչ հուսախաբ էր անում ինձ: Փիլիսոփայության պատմության վերաբերյալ դասախոսությունների շարքը, որ ես ունկնդրում էի, նույնպես իմաստազուրկ էր ու հաստոցային եղանակով արտադրված, ինչպես որ բարքն ու վարքը ուսանող երիտասարդու-

թյան: Ամենի ինչ կաղապարված էր, ամենքը վարվում էին մյուս-ների պես և մանկանման դեմքերին ջերմաշունչ երանավետու-թյան արտահայտությունն այնպե՛ս ցավալիորեն դատարկ ու պատրաստի թխվածության կերպարանք ուներ... Բայց ես ինձ ազատ էի զգում, ապրում էի խաղաղ ու գեղեցիկ քաղաքի ար-վարձանում գտնվող հին ու քարուքանդ եղած քարակուռ պա-տերի մեջ և սեղանիս վրա Նիցշեի մի քանի հատորյակներ էին դրված: Նրանով էի ապրում, զգում նրա հոգու մենակությունը, նրա ճակատագիրը, որն իրեն անզուսպ անկասելիությամբ առաջ էր մղում, տառապում էի նրա հետ և երջանիկ էի, որ կար մեկը, որն այնպես անողոք անգթությամբ անցել էր իր ճանապարհը:

Մի անգամ ուշ երեկոյան ես թափառում էի քաղաքի փողոց-ներում, աշնանային քամին փչում էր ու փչում, պանդոկներից լսում էի ուսանողական խմբերի ուրախ երգեցողությունը: Բաց լուսամուտներից վերև էին բարձրանում ծխախոտաբույր ամպա-քուլաները՝ ագուցված երգեցողության թանձր հորձանքին, բարձրաձայնող ու պիրկ, սակայն թեւազուրկ ու անկյանքորեն միակերպ:

Ես կանգնել էի փողոցի անկյունում և ունկնդրում էի, գիշ-երվա մեջ զույգ գարեջրատներից զիլ հնչում էր երիտասարդու-թյան ճչգրտորեն խաղարկվող կայտառ զվարթությունը: Ամենու-րեք նույնն էր՝ միահամուռության ոգին ու համատեղ նստելու հմայքը, ամենուրեք՝ ճակատագրի բեռնաթափումն ու փախուս-տը դեպի տաք օջախի գգվող մերձավորությունը...

Իմ ետևից երկու տղամարդիկ էին համրաքայլ անցնում: Ես նրանց խոսակցությունից մի պատառ լսեցի:

- Մի՞թե սա ճիշտ և ճիշտ նույն բանը չէ, ինչ և ջահելության զվարճատեղիները սեամորթների գյուղերում,- ասաց մեկը:- Ո՛չ մի տարբերություն, ամեն ինչ նույնն է, անգամ ծեծադաջվածք-ներն էլ այստեղ մոդայիկ են: Տեսե՛ք, սա՛ է երիտասարդ Եվրո-պան»:

Ձայնը զարմանալիորեն ինձ ծանոթ թվաց: Մութ փողոցներով քայլ գցելով՝ ես հետևեցի այդ զույգին: Մեկը մի ճապոնացի էր, փոքրամարմին ու նրբագեղ, լապտերներից մեկի ներքո ես տեսա նրա դեղնափայլ ժպտացող դեմքը շողշողալիս:

Այդժամ այն մյուսը նորից սկսեց խոսել:

- Հիմա Ձեզ մոտ Ճապոնիայում ևս այնքան էլ լավ չպետք է լինի: Մարդիկ, որ հոտի ետևից ընկած չեն վազում, ամենուրեք խիստ հազվագյուտ են դարձել: Այստեղ էլ այդպիսիններին մատների վրա կարելի է հաշվել:

Ցուրաքանչյուր բառը թափանցում էր իմ մեջ ուրախալի սարսափով: Ես ճանաչում էի խոսողին: Դա Դեմիանն էր:

Քամոտ գիշերվա մեջ, մութ փողոցներին տրված ես հետևում

էի նրան ու ճապոնացուն, լսում էի նրանց խոսակցությունը և ըմբռնչնում Դեմիանի ձայնի ելևէջումը: Այն դեռ պահպանել էր իր նախկին հնչեղությունը, առաջվա գեղեցիկ ինքնավստահությունն ու խաղաղությունը, և իշխանություն ուներ ինձ վրա: Հիմա ամեն ինչ լավ էր: Ես նրան գտել էի:

Քաղաքամերձ փողոցի ծայրը հասնելով՝ ճապոնացին հրաժեշտ տվեց ու մի տան դռան ետևում անհետացավ: Դեմիանը քայլում էր փողոցով դեպի ետ, ես կանգնել ու փողոցի մեջտեղում տնկված նրան էի սպասում: Սրտի տրոփյունով ես տեսա նրան իմ կողմը գալիս. ուղղաձիգ ու նրբագեղ քայլվածքով, դարչնագույն անձրևանոցն հագին, ձեռքում մի բարալիկ ձեռնափայտ բռնած: Նա գալիս էր, առանց որ համաչափ քայլքը փոխելու, ընդհուպ մոտեցավ ինձ, գլխարկը հանեց և ցույց տվեց ինձ իր լուսավոր դեմքը՝ բերանի խիստ ու վճռական գծերով; լայն ճակատին փայլող առանձնահատուկ պայծառությամբ:

- Դեմիա՛ն,- բղավեցի ես:

Նա ձեռքն ինձ երկարեց:

- Ա՜խ այդ դու ես, Զինքլեր... Ես սպասում էի քեզ:

- Ուրմն դու գիտեի՞ր, որ ես այստեղ եմ:

- Հաստատ չգիտեի, բայց վստահաբար հույս ունեի: Ես քեզ միայն այսօր երեկոյան տեսա, դու այս ամբողջ ընթացքում մեր ետևից էիր քայլում:

- Ուրեմն դու ինձ անմիջապես ճանաչեցի՞ր:

- Իհա՛րկե: Դու շատ քիչ ես փոխվել: Բայց արդեն նշանն ունես քո վրա:

- Նշա՞ն: Ի՞նչ նշան:

- Առաջներում մենք այն կոչում էինք Կայենի նշան, եթե դու դեռ հիշում ես: Դու այն միշտ ես ունեցել, դրա համար էլ ես քեզ հետ բարեկամացա: Բայց հիմա այն ավելի հստակվել ու պարզորոշ է դարձել:

- Ես դա չգիտեի: Կամ ճիշտն ասած՝ գիտեի... Մի անգամ ես քո պատկերն էի նկարել, Դեմիան, ու զարմացա, որ այն ինձ էլ էր նման: Դա նշա՞նն էր:

- Այո: Լավ է, որ դու հիմա այստեղ ես... Մայրս նույնպես շատ կուրախանա:

Ես սարսափեցի:

- Մա՞յրդ: Նա այստե՞ղ է: Բայց նա ինձ բնավ չի ճանաչում:

- Օ՜, նա քո մասին գիտե: Նա քեզ կճանաչի առանց իմ ներկայացնելու: Դու երկար ժամանակ քո մասին լուր չես տվել:

- Օ, ես հաճախ էի ուզում գրել, բայց չէր ստացվում: Միաժամանակ առաջ զգացի, որ ես քեզ շուտով պետք է գտնեմ: Ես ամեն օր դրան էի սպասում:

Նա ինձ թևանցուկ արեց և շարունակեց քայլել ինձ հետ:

Նրանից հանգստություն էր ճառագում և թափանցում իմ մեջ: Մենք շուտով շաղակրատում էինք առաջվա պես: Հիշեցինք դպրոցական տարիները, դավանաբանության դասերը, նաև երբեմնի այն դժբախտ համակեցությունը, այն ժամանակ՝ արձակուրդներին, միայն թե մեր միջև ստեղծված այն վաղուցվա կապվածության, Ֆրանց Քրոմերին առնչվող պատմության մասին, այժմ ոչ մի խոսք չփոխանակեցինք:

Հանկարծ մենք հայտնվեցինք մի տարօրինակ ու նախազգացումներով լի խոսակցությունների մեջտեղում: Այն ճապոնացու հետ Դեմիանի վարած խոսակցությանը համահունչ՝ մենք խոսում էինք ուսանողական կյանքից և այնքան խորացանք թեմայի մեջ ու այնպիսի գաղափարական դաշտ դուրս եկանք, որ կարծես շատ էլ չէր վերաբերում խնդրո առարկային, որից շատ էինք հեռացել: Սակայն Դեմիանի խոսքերից ելնելով՝ մի ներքին կապակցվածություն կար այդ ամենում:

Նա խոսում էր Եվրոպայի ոգու մասին և այդ ժամանակվա դրոշմանշանի: Ամենուր, ասում էր նա, իշխում է համախմբման ու հոտերի կազմավորման ոգին, բայց ոչ մի տեղ՝ ազատությունն ու սերը: Բոլոր այդ համախմբումների մեջ՝ սկսած ուսանողական միավորումներից ու երգչախմբերից մինչև պետությունները, կար մի հարկադրական կազմավորում, համակեցության ու միաբանության վախից ու անհանգստությունից դրդված մի բան ու նաև՝ սարսափից ու վարանքից, այն ներքուստ նեխած էր ու հնոտի և աղետաբեր փլուզումին մերձ:

- Միաբանությունը,- ասաց Դեմիանը,- գեղեցիկ բան է: Բայց այն, ինչը մենք ամենուր ծաղկելիս ենք տեսնում, բոլորովին էլ դա չէ: Այն նոր միայն պետք է ծնունդ առնի՝ առանձին մարդկանց մեկը մյուսի հետ համագործակցության արդյունքում և այն պետք է միաժամանակ աշխարհը վերափոխի: Մարդիկ փախչում են միմյանցից, որովհետև նրանք իրար նկատմամբ վախ են տածում, պարոններն իրենց համար, աշխատավորներն իրենց, ուսյալ-գիտնականներն իրենց... Իսկ ինչու՞ են նրանք վախենում, որովհետև մարդս ինքն իր հետ էլ համերաշխ չէ: Նրանք վախենում են, որովհետև նրանք երբեք իրենք իրենց չեն ճանաչել: Ազնիվ մարդկանց մի ընկերակցություն, որոնք իրենց միջի անծանոթի նկատմամբ վախ ունեն... Նրանք բոլորը զգում են, որ իրենց կյանքի օրենքներն այլևս ճիշտ համապատասխանության մեջ չեն գտնվում, որ իրենք հին կարգ ու բարքով են ապրում, ո՛չ նրանց կրոնները, ո՛չ էլ նրանց բարոյականությունը, այդ ամենից ոչ մեկը իրենց պահանջմունքին չի պատշաճում, այն, ինչը մեզ է հարկավոր: Հարյուր և ավելի տարիներ շարունակ Եվրոպան միայն սովորել է ու գործարաններ կառուցել... Նրանք ճշգրիտ գիտեն, թե քանի գրամ վառոդ է անհրաժեշտ մարդ սպա-

նելու համար, բայց նրանք չգիտեն, ինչպես են Աստծուն աղոթում, նրանք նույնիսկ չգիտեն էլ, թե ինչպես մարդս կարող է գոնե մեկ ամբողջ ժամով գոհ ու բավարարված զգալ իրեն: Մի անգամ մի այսպիսի ուսանողական պանդոկ... կամ էլ մի հաճույքի վայր, ուր հարուստ մարդիկ են հաճախում... անհույս բան է... սիրելի Զինքլեր, այդ ամենից որևէ հաճելի բանի սպասելիք չես կարող ունենալ: Այդ մարդիկ, որ այնպես վեհերոտությամբ միավորվում են, լի են վախով ու չարությամբ, ոչ մեկը մյուսին չի հավատում: Նրանք կառչած են իդեալներից, որոնք այլևս գոյություն չունեն, և քարծեծ են անում նրան, ով մի նոր բան է առաջարկում: Ես զգում եմ, որ անհաշտ հակառակություններ են ծնունդ առնում: Նրանք դեռ կգան, հավատա՛ ինձ, նրանք շատ շուտով վրա կհասնեն... Անշուշտ նրանք աշխարհը չեն «բարելավելու»: Թե արդյոք աշխատավորները իրենց գործարանատերերին կսպանեն, կամ արդյոք Ռուսաստանն ու Գերմանիան իրար վրա կկրակեն, դրանից միայն տերերը կփոխվեն: Բայց դա իզուր չի լինի: Այն ի ցույց կդնի այսօրվա իդեալների անարժեքությունը, մի մաքրազարդում տեղի կունենա՝ քարեդարյա աստվածներով: Այս աշխարհը, ինչպես որ այն հիմա կա, մեռնելու է, խորտակվելու է նա, և այդպես էլ կլինի:

- Այդժամ ի՞նչ կլինի մեզ հետ,- հարցրեցի ես:

- Մեզ հե՞տ: Օ՜, գուցե մենք էլ միասին կործանվենք: Սպանել կարող են նաև մեզ նմաններին: Միայն թե այդպիսով մեզ չեն կարող վերջ տալ: Այն բանի շուրջը, ինչը մեզանից կմնա, կամ էլ մեզանից նրանց շուրջը, որ կվերապրեն այդ աղետը, ապագայի հավաքական կամքը կժողովվի: Մարդկության կամքը առաջիկայում իրեն ի ցույց կդնի նրանց առաջ, ովքեր շատ ավելի բարձր էին գոռգոռում մեր Եվրոպայի անունը տալով, արդեն բավական երկար ժամանակից ի վեր՝ գիտության ու տեխնիկայի տոնավաճառներում: Եվ այնուհետև կպարզվի, որ մարդկության կամքը երբեք և ոչ մի տեղ նման չէ այսօրվա միաքանությունններին, պետություններին ու ժողովուրդներին, միավորումներին ու եկեղեցիներին: Այլ այն, ինչ բնությունն է մարդկությունից ուզում, առանձին մարդկանց մեջ է գրված, քո մեջ և իմ մեջ: Այն կար Հիսուսի մեջ, Նիցշեի մեջ: Այդ միայնակ, այլևս անհրաժեշտություն դարձած հոսանքների, ուղղությունների համար, որ անշուշտ ամեն օր մի այլ կերպ կարող են երևալ, գործելու տարածություն կլինի, երբ այսօրվա միավորումները կործանվեն:

Արդեն շատ ուշ էր, երբ մենք կանգ առանք գետափնյա պարտեզի առաջ:

- Մենք այստեղ ենք ապրում,- ասաց Դեմիանը:- Հնարավորին չափ շուտ մեզ այցելիր: Մենք քեզ շատ ենք սպասում:

Ես ուրախ քայլում էի իմ հեռվում մնացած տան ճանապար-

հի ցրտաշունչ դարձած գիշերվա միջով: Այս ու այնտեղ, քաղաքի փողոցներում աղմկում ու օրորվում էին տուն վերադարձող ուսանողները: Ես հաճախ եմ զգացել նրանց ծիծաղաշարժ ուրախության ու իմ միայնակ կյանքի հակադրությունը, հաճախ զրկվածության զգացումով, հաճախ էլ՝ հեգնախառն ծաղրանքով: Բայց ես դեռ երբեք այսօրվա պես խաղաղությամբ ու թաքչատես կորովով չէի զգացել, թե ինչքան քիչ էր այն ինձ վերաբերում, ինչ հեռու ու վաղուց մոռացված էր այդ աշխարհն ինձ համար: Ես հիշում էի իմ հայրենական քաղաքի պաշտոնյաներին, ծեր, արժանապատիվ պարոններին, որոնք կախ էին ընկնում կիսամյակներով գարեջնատներում անցկացրած իրենց հիշողություններից՝ որպես թե մի երջանկախոստում դրախտի ու կորսված «ազատության» հիշատակին իրենց ուսանողական տարիների պաշտամունքը կատարելով, ինչպես բանաստեղծները կամ մյուս ռոմանտիկներն են մանկությանը ձոներ նվիրում: Ամենուրեք նույնն էր... Ամենուր նրանք «ազատություն» և «երջանկություն» էին փնտրում, մի ինչ-որ տեղ՝ իրենց ետևում, անկեղծ ու ազնիվ երկյուղից դրդված՝ նրանք երբեմն-երբեմն մտաբերում էին իրենց սեփական պատասխանատվության մասին և նախազգուշացման պես հորդորներն ընդունում՝ իրենց սեփական ճանապարհին հայտնված: Մի քանի տարի շարունակ իրենց կյանքի ժամանակը կերուխումների մեջ էին անցկացնում ու ցնծագին հրճվանքի, և ապա, իրար ոտքերի տակ սողալով, դառնում էիր լուրջ պարոնայք՝ պետական ծառայության տարբեր ոլորտներում: Այո, դրանից փտախտի ու նեխածության հոտ էր փչում, և այդ ուսանողական անմտությունը նվազ հիմարամիտ էր ու հոռի, քան հարյուրավոր ուրիշները:

Սակայն երբ ես իմ հեռու բնակարանը հասա և անկողինս էի փնտրում, բոլոր այդ գաղափարները թռել էին ուղեղիցս և իմ ողջ զգացողությունը պրկված սպասում էր այն մեծ խոստումին, որ ինձ այս անցյալ դարձող օրն էր պարգևել: Ես վաղնևեթ կուզենայի Դեմիանի մորը տեսնել: Թող որ ուսանողներն իրենց պանդոկներում նստած մնային և իրենց դեմքերը նախշեին, թող աշխարհը նեխած հնոտի լիներ և իր կործանմանը սպասեր, դա ինձ չէր վերաբերում: Ես միայն նրան էի սպասում՝ մի նոր կերպարանքի մեջ իմ ճակատագրի հայտնությանը:

Ես խորը քնեցի մինչև ուշ առավոտ: Նոր օրը բացվեց ինձ համար որպես մի հանդիսավոր տոնական օր, որպիսին ես իմ մանկության ամանորյա տոնախմբություններից ի վեր այլևս երբեք չէի վերապրել: Ես լի էի ներքին անհանգստությամբ՝ առանց դույզն-ինչ վախվորածության նշույլի: Զգում էի, որ ինձ համար մի շատ կարևոր օր էր սկսվել, ես տեսնում ու զգում էի աշխարհն իմ շուրջը կերպափոխված, սպասումով լի, փոխկապակց-

ված ու հանդիսավոր, նաև կամացուկ թափվող աշնանային անձրևն էլ գեղեցիկ էր, խաղաղ ու տոնական՝ պարուրված լըրջմիտ ու զվարթատեսիլ երաժշտության խառնուրդով: Առաջին անգամը լինելով՝ արտաքին աշխարհը միանգամայն համահունչ էր իմ ներքինին, դա մի իսկական հոգու տոն էր, և հաճելի էր ապրելը: Ոչ մի տուն, ոչ մի ցուցափեղկ, փողոցում հանդիպած ոչ մի դեմք ինձ չէր շեղում կամ խանգարում, ամեն ինչ այնպես էր, ինչպես պետք է լիներ, այն չուներ դատարկված հայացքը առօրեականության ու սովորականի, այլ ամբողջապես սպասող բնությունն էր՝ ակնածանքով առլի ու ճակատագրին պատրաստ: Փոքր երեխա ժամանակ ես այդպես էի տեսել աշխարհը առավոտյան կողմ՝ մեծ տոնական օրերին, Քրիստոսի ծննդյան օրն ու Զատիկին: Ես չգիտեի, որ աշխարհն այդպես գեղեցիկ դեռ կարող էր լինել: Ես սովորել էի դրան՝ իմ ներսում ներամփոփված ապրելուն և բավարարվել նրանով, որ իմ միջի զգացմունքը այնտեղ՝ դրսում գտնվողին բախվելով, փշրվեր-անէանար, և փայլփլացող խայտաբղետ գունախաղի կորուստը անխուսափելիորեն կախման մեջ էր գտնվում մանկության կորստի հետ, և հոգու ազատությունն ու առնականությունը այդ նրբանուրբ շողի նշույլից հրաժարվելով, ինչ-որ տեղ պետք է փոխհատուցում գտներ: Հիմա ես, սքանչացած, տեսնում էի, որ այդ ամենը միայն թաքցված ու մթան մեջ ընկղմված էր եղել և միանգամայն հնարավոր էր, որ ազատագրված ու մանկական երջանկությունից հրաժարված մեկը տեսներ աշխարհը ճառագելիս և ըմբռշխներ մանկական տպավորությունների ներքնափայլը:

Եկավ այն ժամը, երբ ես նորից գտա քաղաքամարգ այգին, որի հարևանությամբ այս գիշեր հրաժեշտ էի տվել Մաքս Դեմիանին: Բարձրաբերձ, անձրևից գորշացած ծառերի ետևում թաքնված՝ կանգնած էր մի փոքրիկ տնակ, լուսավոր ու հանգստավետ, ես տեսա բարձր ու մանրիկ ծաղիկների թփերը՝ ապակե մեծ պատի թիկունքից բարձրացող, մաքրափայլ պատուհանների ետևում երևակվող մուգ ու խավարում թաղված սենյակների պատերը՝ նկարներով ու գրքաշարերով զարդարուն: Շքամուտքի դուռը առաջնորդում էր դեպի տաքացված սրահը, մի լուռումունջ, ծեր աղախին՝ սևազգեստ, սպիտակ գոգնոցով, ինձ առաջնորդեց դեպի ներս և վերցրեց անձրևանոցս:

Նա ինձ սրահում մենակ թողեց: Ես նայեցի շուրջս ու անմիջապես հայտնվեցի իմ երազների կենտրոնում: Վերևում՝ մուգ փայտե պատին, դռներից մեկի գլխավերևում, ապակու տակ դրված սև շրջանակի մեջ կախված էր մի քաջածանոթ նկար, իմ թռչունը՝ դեղնասոսկեգույն ճուռակի գլխով, որ աշխարհի կեղևի միջից թռչել էր ուզում: Ես հափշտակված կանգնած էի մնացել. իմ սրտում ուրախություն էր ու ցավ, որ կարծես այն ամենը,

ինչը ես մի ժամանակ ապրել էի ու վերապրել, այդ պահին դեպի ինձ էր վերադառնում՝ որպես պատասխան ու բավարարում: Կայծակի արագությամբ ես պատկերների մի ամբողջ բազմություն տեսա իմ հոգու մեջ՝ շարեշար անցնող. հայրենական տունը՝ դարպասի կամարի գլխավերևում հինավուրց, քարակուռ զինանշանով, մանուկ Դեմիանին, որ զինանշանն էր նկարում, ինքս ինձ՝ որպես երեխա, երկյուղածությամբ լի՝ իմ ընկեր Քրոմերի չարաղետ բռնադատությանը հանձնված, ինձ որպես պատանյակ, իմ դպրոցական փոքրիկ սենյակում՝ հանգստավետ սեղանին գամված՝ իմ կարոտաբաղձության թռչունը նկարելիս, խռովյալ հոգին իր սեփական թելերի ցանցի մեջ, ամեն-ամենը, ինչ որ եղել էր մինչև այս պահը, հնչում էր կրկին իմ մեջ, հաստատվում ու դրական պատասխան գտնում, հավանության արժանանում:

Թաց աչքերով ես սևեռուն նայում էի իմ պատկերած նկարին և հոգիս տնտղում: Հետո հայացքս ընկավ ներքև. թռչնապատկերի տակ բացված դռան միջակայքում կանգնած էր մի մարմնեղ կին՝ մուգ հանդերձանքի մեջ պարուրված: Այդ նա էր:

Ես անկարող էի մի բառ իսկ արտասանել: Նա՝ այդ պատվարժան ու գեղեցիկ կինը բարեկամաբար ժպտում էր ինձ մի հայացքով, որ շատ նման էր իր որդու դիմապատկերին՝ ժամանակից ու տարիքից վերացած և լի ոգեշունչ կամքով: Նրա հայացքը լիացում էր արտահայտում, նրա ողջույնը՝ հայրենադարձություն ու վերադարձ դեպի տուն: Լռելյայն ես ձեռքերս նրան երկարեցի: Նա երկուսն էլ առավ իր ամրակազմ ու ջերմ ձեռքերի մեջ:

- Դուք Զինքլերն եք: Ես անմիջապես Ձեզ ճանաչեցի: Բարի գալուստ Ձեզ:

Նրա ձայնը խորն էր ու ջերմաշունչ, ես ըմպեցի այն որպես քաղցր գինի: Եվ հիմա ես նայում էի նրա խաղաղավետ դեմքին, սև, ոչ այնքան խորն ընկած աչքերին, թարմությամբ բուրող ու հասուն շրթունքներին, լայն ու փառահեղ ճակատին, ուր նշանն էր դաջված:

- Որքա՜ն ուրախ եմ,- ասացի ես նրան ու ձեռքերը համբուրեցի:- Ինձ թվում է, որ ես իմ ողջ կյանքի ընթացքում մշտապես ճանապարհին եմ եղել ու հիմա վերջապես տուն եմ եկել:

Նա ժպտում էր մայրաբար:

- Մարդ երբեք տուն չի վերադառնում,- ասաց նա բարեկամաբար:- Բայց այնտեղ, ուր բարեկամացած ճանապարհները միահյուսվում են իրարու, այդժամ ողջ աշխարհը միառժամանակ հարազատ տան կերպարանքն է ընդունում:

Նա արտահայտում էր այն, ինչը ես զգացել էի դեպի իրեն ձգվող իմ անցած ճանապարհին: Նրա ձայնն ու նաև խոսքերը շատ էին հիշեցնում իր որդուն, և սակայն բոլորովին ուրիշ էին: Ամեն ինչ ավելի հասուն էր, ավելի ջերմ, ինքնին հասկանալի ու

ավելի բնական: Բայց ինչպես Մաքսը ժամանակին ոչ ոքի վրա երեխայի տպավորություն չէր գործում, այդպես էլ նրա մայրը բոլորովին էլ հասակն առած որդու մայր չէր երևում, այնպես երիտասարդ ու քաղցր էր շունչը՝ նրա դեմքի ու մազերի վրա թևածող, այնպես պիրկ ու անխորշում էր նրա ոսկեգենիկ մաշկն ու բերանն այնպես փթթուն: Է՛լ ավելի արքայական շուքով, քան իմ երազներում տեսել էի նրան, կանգնած էր նա իմ առաջ, և նրա մերձավորությունը սիրո երջանկությամբ էր բուրում, հայացքը լիացում պարգևում:

Սա էր այսպիսով այն նոր պատկերը, որի մեջ իմ ճակատագիրն էր ինձ երևակվում, ոչ այլևս խիստ, ոչ այլևս մենավոր, հասուն ու հրճվագին... Ես ոչ մի որոշում չէի ընդունում, խոստումներ չէի տալիս. ես հասել էի նպատակիս, մի բարձրագույն ճամփաբաժան-հանգրվանի, որից անդին՝ հետագա անցնելիք ճանապարհն էր հեռվում իր սքանչելիության մեջ իրեն ի ցույց դնում, ավետյաց երկրների իր ձգտման մեջ, ստվերածածկ, մոտալուտ երջանկության կատարներին հանգչող, բոլոր հաճույքների մերձամատույց պարտեզի զովքին տրված: Ինչ լինելու էր, թող լիներ, ես երջանիկ էի աչխարհում այդ կնոջը ճանաչելու համար, նրա ձայնն ըմբռչխնելու և նրա մերձավորությունը շնչելու համար: Թող որ նա ինձ մայր դառնար, սիրուհի, աստվածուհի, միայն թե միշտ լիներ... միայն թե իմ ճանապարհը մոտ լիներ նրան...

Նա հայացքը բարձրացրեց դեպի վերև՝ իմ նկարած ճուռակի պատկերին:

- Դուք մեր Մաքսին երբեք ավելի մեծ ուրախություն չեք պատճառել, քան Ձեր այս նկարով,- մտածկոտ ասաց նա:- Ինձ նույնպես: Մենք սպասում էինք Ձեզ, և երբ նկարը եկավ, այդժամ հասկացանք, որ Դուք դեպի մեզ բերող ճանապարհին էիք: Երբ Դուք փոքրիկ երեխա էիք, Զինքլեր, այդժամ մի օր որդիս դպրոցից տուն եկավ ու ասաց. այնտեղ մի տղա կա, որ ճակատին նշանն ունի, նա պետք է իմ ընկերը դառնա: Այդ Դուք էիք: Ձեզ դա հեշտությամբ չտրվեց, բայց մենք հավատում էինք Ձեզ: Մի անգամ էլ, երբ արձակուրդներին տուն էիք եկել, Դուք նորից Դեմիանին հանդիպեցիք: Դուք այնժամ մոտավորապես տասնվեց տարեկան էիք: Մաքսն ինձ պատմել է այդ հանդիպման մասին:

Ես ընդհատեցի.- Օ՛, նա այդ մասին պատմել է Ձեզ... Այն ժամանակ դա իմ տառապանքների բարձրակետն էր...

- Այո, Մաքսն ասաց ինձ. հիմա Զինքլերին ամենածանրն է սպասվում: Նա մեկ անգամ ևս փորձ է արել մի միաբանության մեջ ընդգրկվելու, նա նույնիսկ պանդոկների մշտական այցելուն է դարձել, բայց դա նրան չի հաջողվի: Նրա նշանը քողարկված է, բայց այն թաքուն այրում է նրան: - Այդպե՞ս էր, թե՞ ոչ:

- Օ՜, այո, այդպես էր, ճիշտ այդպես: Հետո ես գտա Բեատրիչեին և հետո վերջապես կրկին մի առաջնորդ հայտնվեց ինձ: Նրան կոչում էին Պիստորիուս: Միայն այդժամ ինձ պարզ դարձավ, թե ինչու էր իմ մանկությունն այդքան շատ կապված Մաքսի հետ, ինչու ես չէի կարող նրանից հեռանալ: Սիրելի տիկին, սիրելի մայրիկ, ես այն ժամանակ հաճախ էի կարծել, որ ես պետք է վերջ տայի կյանքիս: Արդյո՞ք բոլորի համար էլ այդ ճանապարհն այդպես դժվար է:

Նա ձեռքը սահեցրեց իմ մազերի վրայով՝ թեթև ինչպես օդը:

- Ծնվելը միշտ էլ դժվար է: Դուք հո գիտեք, թռչունը տառապում է ձվից դուրս գալու համար: Դուք դեպի ետ գնացեք, մտածեք ու հարցրեք Ձեզ. արդյո՞ք ճանապարհն այդքան դժվա՞ր էր, միայն դժվա՞ր: Այն նաև գեղեցիկ չէ՞ր: Դուք ավելի գեղեցի՞կը, ավելի հե՞շտը գիտեիք:

Ես տարուբերեցի գլուխս:

- Այն դժվար էր,- ասացի ես՝ ասես քնի մեջ,- այն դժվար էր մինչև որ երազը հայտնվեց:

Նա խոնարհվեց ու խորաթափանց հայացքով ինձ նայեց:

- Այո, մարդ պետք է իր երազը գտնի, այնուհետև ճանապարհը կհեշտանա: Բայց մշտառկա երազ գոյություն չունի, յուրաքանչյուր անգամ նորն է հերթափոխում հայտնվում և ոչ մեկից չի կարելի ամուր կառչած մնալ:

Ես շատ վախեցա: Գուցե սա մի նախազգուշացու՞մ էր: Ինքնապաշտպանությո՞ն: Բայց միևնույն է, ես պատրաստ էի առաջնորդվելու նրա կողմից՝ նպատակի մասին չհարցնելով:

- Զգիտեմ,- ասացի ես,- ինչքան երկար կտևի իմ երազը: Ես կուզենայի, որ այն հավերժ լիներ: Թռչունի պատկերի մեջ իմ ճակատագիրն է ինձ դիմավորել, որպես մայր և որպես սիրուհի: Նրան եմ ես պատկանում և ուրիշ ոչ ոքի:

- Այնքան ժամանակ, քանի դեռ երազը Ձեր ճակատագիրն է, այդքան ժամանակ Դուք պետք է նրան հավատարիմ մնաք,- լրջորեն հաստատեց նա:

Տխրության պես մի բան իջավ վրաս ու մի կարոտագին տենչանք՝ մահանալ այս դյութական ժամին: Ես զգում էի, որ արցունքներս անզուսպ հորդում էին իմ աչքերից, ինչքա՜ն անսահմանորեն երկար ժամանակ ես լաց չէի եղել՝ ինքս ինձ բռնադատելով: Կտրուկ շարժումով մի կողմ շրջվեցի նրանից, մոտեցա պատուհանին ու կուրացած աչքերով սափորի մեջ դրված ծաղիկների վրայով դեպի հեռուն հայացքս ուղղեցի:

Ետևումս լսում էի նրա ձայնը, այն հնչում էր սառնասիրտ հանդարտության մեջ և, սակայն, այնքան լիքը նրբենի մեղմությամբ, ինչպես մինչև պռունկը լիուլի գինով լցված գավաթը:

- Ձինքլեր, Դուք դեռ երեխա եք... Ձեր ճակատագիրը, այո,

սիրում է Ձեզ: Ժամանակ անց այն Ձեզ ամբողջությամբ կպատկանի, ինչպես որ Դուք եք այդ ուզում, եթե միայն հավատարիմ մնաք նրան:

Ես ստիպեցի ինձ ու նորից երեսս նրա կողմը շրջեցի: Նա ձեռքն ինձ տվեց:

- Ես մի քանի բարեկամներ ունեմ,- ժպտալով ասաց նա,- թվով շատ քիչ, շատ մոտիկ բարեկամներ, որոնք ինձ Ֆրաու Եվա են դիմում: Դուք էլ կարող եք ինձ այդպես կոչել, եթե ցանկանում եք:

Նա ինձ դեպի դուռը առաջնորդեց, բացեց այն ու հայացքով պարտեզը ցույց տվեց:- Մաքսին Դուք այնտեղ դրսում կգտնեք:

Բարձրաբերձ ծառերի տակ կանգնել էի ես չփոթահար ու ցնցված, չգիտեի՝ արթուն եմ, թե երազի մեջ: Հանդարտ կաթկթում էր անձրևը ծառերի ճյուղերից: Ես դանդաղաքայլ խորանում էի պարտեզի մեջ, որը գետափի երկայնքով դեպի հեռուն էր ձգվում: Վերջապես ես գտա Դեմիանին: Նա կանգնած էր պարտեզի տնակում, իրանը մինչև գոտկամասը մերկացրած՝ բռնցքամարտի վարժանքներ անելիս՝ կախ տված մի ավազապարկի առաջ:

Զարմացած՝ ես կանգ առա: Դեմիանը փառահեղ տեսք ուներ, լայն կրծքավանդակը, ամուր, առնական գլուխը, պրկված մկաններով բարձր պահած ձեռքերը ուժեղ էին ու եռանդուն, շարժումներն առաջ էին գալիս ազդրերից, ուսերից ու արմունկներից՝ հորդալով խաղացկուն աղբյուրների հանգույն:

- Դեմիան,- կանչեցի ես:- Դու այստեղ ինչո՞վ ես զբաղված:

Նա ուրախ ծիծաղեց:

- Պարապում եմ: Ես փոքրիկ ճապոնացուն բռնցքամարտ եմ խոստացել, այդ տղան կատվի պես ճկուն է ու շարժուն և, իհարկե, նաև նենգ ու խարդախ: Բայց նա ինձ չի հաղթելու: Նրա այդ փոքրիկ վիրավորանքի պարտքի տակ ես չեմ կարող մնալ:

Նա հագավ վերնաշապիկն ու սերթուկը:

- Դու արդեն եղա՞ր մորս մոտ,- հարցրեց նա:

- Այո, Դեմիան, ի՜նչ հրաշալի մայր ունես դու... Ֆրաու Եվան: Այդ անունը շատ է սազում նրան, նա կարծես բոլոր արարածների մայրը լինի:

Նա մի պահ մտածկոտ դեմքիս նայեց:

- Դու արդեն նրա անունը գիտե՞ս... Դու կարող ես հպարտ լինել, երիտասարդ... Դու առաջինն ես, ում նա արդեն առաջին իսկ ժամին իր անունն ասել է:

Այդ օրվանից սկսած՝ ես այդ տունն էի դուրսուներս անում որպես որդի և եղբայր, բայց նաև՝ որպես սիրահար: Երբ ետևիցս փակում էի դարպասը, կամ երբ պարտեզի բարձր ծառերը հեռվից հանկարծակի հայտնվում էին աչքերիս առաջ, ես հարուստ էի ու երջանիկ: Դրսում «իրականությունն» էր, դրսում տներն

էին ու փողոցները, մարդիկ ու հաստատությունները, գրադարաններն ու լսարանները, այստեղ ներսում, սակայն, սերն էր ու հոգին, այստեղ հեքիաթն ու երազն էին ապրում: Եվ սակայն մենք ամենևին էլ աշխարհից փակված չէինք մնում, մեր մտքերի ու զրույցների մեջ մենք հաճախ նրա ճիշտ կենտրոնում էինք ապրում, միայն թե մեկ ուրիշ դաշտում, մենք մարդկանց մեծամասնությունից սահմաններով բաժանված չէինք, այլ միայն տեսանելու մեկ ուրիշ կերպով: Մեր խնդիրն էր՝ աշխարհում մի կղզի լինել, գուցե մի նախօրինակ, համենայնդեպս՝ ապրելու մեկ ուրիշ հնարավորության մասին ծանուցանող: Ես՝ երկար ժամանակ մենակյացի կյանքով ապրածս, ծանոթանում էի այս մարդկանց միջև կազմավորվող հնարավոր միաբանությանը, մարդիկ, որոնք լիակատար մենակություն էին ճաշակել: Ես այլևս չէի տենչում երջանիկների ժամանակակարգով ապրել, նրանց ճաշասեղանին բազմել, գոհ ու երջանիկների տոնախմբություններին միանալ, իմ մեջ չէր պոռթկում նախանձն ու կարոտաբաղձությունը, երբ տեսնում էի մյուսների մեկտեղված միաբանությունները: Եվ կամաց-կամաց ես հաղորդակից դարձա նրանց գաղտնիքին, որոնք իրենց վրա «նշանն» էին կրում: Մենք՝ նշանակիրներս, իրավամբ կարող էինք աշխարհի համար տարօրինակ, ինչու չէ՝ նաև խելագար ու վտանգավոր դիտվել: Մենք արթնացածներն էինք, կամ արթնացողները, և մեր ձգտումը մշտապես ուղղված էր դեպի ավելի կատարյալ արթնությունը, մինչդեռ մյուսների ձգտումն ու երջանկության որոնումն ուղղված էր իրենց կարծիքները, իրենց իդեալներն ու պարտականությունները, իրենց կյանքն ու երջանկությունը ավելի ու ավելի սերտորեն հոտի հոգեբանությանը կապելուն: Այնտեղ էլ ձգտում կար, այնտեղ էլ կար ուժ ու մեծություն: Սակայն, մինչ մեր ըմբռնմամբ, մենք՝ նշանակիրներս, բնության կամքը նորահայտների, առանձնացած կենցաղավարողների ու ապագայում եկողների առաջ էինք պարզում, մյուսներն ապրում էին համառ դիմակայության կամքին ենթարկված: Նրանց համար մարդկությունը, որին նրանք սիրում էին այնպես, ինչպես մենք, մի ինչ-որ պատրաստի տրված բան էր, որ պետք էր պահպանել ու պաշտպանել: Մեզ համար մարդկությունը մի հեռավոր ապագա էր, դեպի որը մենք բոլորս ճանապարհ էինք ընկել, և որի կերպարանքը ոչ ոք չգիտեր, որի օրենքները գրված չէին ոչ մի տեղ:

Բացի տիկին Եվայից, Մաքսից ու ինձանից՝ մեր շրջանակին էին պատկանում մոտիկ ու հեռու վայրերում ծվարած այլ որոնողներ ևս՝ ամենատարբեր տեսակի: Նրանցից ոմանք յուրահատուկ կածանով էին ընթանում, բացառիկ նպատակներ էին իրենց առաջ դրել և կառչած էին իրենց առանձնահատուկ պատկերացումներին ու պարտականություններին, նրանց մեջ կային աստ-

դաբաշիներ ու կաբբալիստներ, նաև կոմս Տոլստոյի մի հետևորդ և բոլոր այն նուրբ ու վեհերոտ, վիրավորվող ու խոցելի մարդիկ, նոր հերձվածների հետևորդներ, հնդկական վարժանքների կատարողներ, խոտաճարակներ և ուրիշներ: Դրանց բոլորի հետ մենք իրականում հոգևոր ընդհանրություն չունեինք, բայց միայն այն, որ յուրաքանչյուրս հարգանք էր տածում մյուսների ծածուկ, կենսական երազի հանդեպ: Մյուսներն ավելի մոտ էին կանգնած մեզ, նրանք, որ մարդկության որոնմանը հետամուտ էին լինում ի դեմս անցյալի աստվածների ու ըղձալի տեսիլքների, նրանց մտածություններն ինձ հաճախ իմ Պիստորիուսին էին հիշեցնում: Նրանք իրենց հետ գրքեր էին բերում, մեզ համար թարգմանում հին լեզուներով գրված տեքստերը, մեզ ցույց տալիս հին խորհրդանիշների ու ծեսերի պատկերազարդումները և սովորեցնում էին մեզ տեսնել, որ մարդկության մինչայժմյան ողջ ունեցվածքը բաղկացած էր անգիտակից հոգու երազներից ծնված իդեալներից, երազներ, որոնցում խարխափելով, մարդկությունը որոնում է այդ գաղափարները՝ ձգտելով դրանք հարմարեցնել իր ապագայի հնարավոր պատկերացումներին: Այսպես մենք շտապ-շտապ քայլարշավում էինք հին աշխարհի զարմանահրաշ, հազարգլխանի աստվածների բազմաքանքար կաճառից՝ մինչև քրիստոնեական շրջադարձի այս աղջամուղջը: Մենք ծանոթացանք մենակյաց բարեպաշտների դավանանքներին և կրոնների հարաշրջիկ այլափոխումներին՝ ժողովրդից ժողովուրդ: Եվ մեր հավաքագրած այս հիմնանյութից մեզ անձնատուր եղավ ու մեր առաջ պարզվեց մեր ժամանակի և ներկայիս Եվրոպայի քննադատ ոգին, Եվրոպա, որն իր հրեշավոր ձգտումներում մարդկության գերհզոր, նորագույն զենքերն էր հորինաստեղծել, բայց և, ի վերջո, խորն ու մթնդած հոգու աղաղակող ամայացման մեջ գահավիժել: Քանզի այնպես եղավ, որ նա ողջ աշխարհին տիրելով, իր հոգին այդպիսով կորստյան մատնեց:

Այստեղ էլ կային ինչ-ինչ հույսերի ու փրկչագործ, սրբազնական ուսմունքների հավատացյալներ ու դավանողներ: Կային բուդդիստներ, որոնք ուզում էին Եվրոպան դարձի բերել, տոլստոյական երիտասարդություն և ուրիշ դավանանքներ: Մենք նրանց ունկնդրում էինք խիստ նեղ շրջանակում և այդ ուսմունքներից ոչ մեկը այլ կերպ չէինք ընկալում, քան խորհրդանշական այլաբանություններ: Մեզ՝ նշանակիրներիս, ապագայի կերտման ոչ մի հոգս կամ մտատանջություն չէր զբաղեցնում: Ամեն մի դավանանք, ամեն փրկչական ուսմունք մեզ արդեն ի սկզբանե թվում էր մեռած ու անօգուտ: Եվ մենք լոկ մի բան էինք որպես պարտականություն ու ճակատագիր ընկալում, այն, որ մեզանից յուրաքանչյուրը ինքն իր հետ այնպես միանգամայն ամբողջական լինի, իր մեջ գործող բնության ծլարձակ սաղմին

այնպես ամբողջովին հավատարիմ մնա և իր կամքով ապրի, որպեսզի անորոշ ու անհայտ ապագան մեզ բոլորիս ու յուրաքանչյուրիս պատրաստ գտնի ընդունելու այն, ինչն ինքը կուզենար մեր առաջ հրամցնել: Որովհետև դա էր, կխոսվեր այդ մասին, թե ոչ, մեր բոլորիս ներքնազգացողության մեջ միակ պարզորոշը, այն, որ նորի ծնունդը և ներկա աշխարհի աղետալի կործանումը մոտ էր և արդեն իսկ զգայելի: Մի անգամ Դեմիանն ինձ ասաց. «Այն, ինչ գալու է, անկանխագուշակելի է ու անմտածելի: Եվրոպայի հոգին մի գազան է, որ անսահմանորեն երկար պառկած էր չղթայակապ: Երբ նա ազատություն ձեռք բերի, նրա առաջին գործողությունները վստահաբար ամենագորովագութը չեն լինելու: Սակայն ճանապարհներն ու զարտուղիները այլևս անկարևոր են դառնում, երբ հոգու այն ճշմարիտ նեղությունը հայտնաբերվի, որն այս էլ այսքան երկար ժամանակվանից ի վեր մշտապես մոլորեցնում ու բթացնում է մեզ: Այդժամ մեր օրը կգա, այդժամ մեր կարիքը կունենան ոչ որպես առաջնորդների կամ նոր օրենսդիրների, նոր օրենքներ մենք այլևս երբեք չենք ունենալու, ավելի շուտ որպես հոժարակամ-պատրաստակամների, որպես այնպիսիների, որ պատրաստ են միասին գնալու և կանգնելու այնտեղ, դեպի ուր ճակատագիրն է կոչում: Տե՛ս, բոլոր մարդիկ պատրաստ են անհավատալին անելու, երբ նրանց իդեալները վտանգված են լինում: Բայց ոչ ոք չկա այնտեղ կազմ ու պատրաստ, երբ մի նոր իդեալ, մի նոր, գուցե զարհուրելի ու տագնապալի զարգացման աճի հուզախտն է դուռը բախում: Այն քչերը, որոնք այդժամ այնտեղ կլինեն ու միասնաբար կգնան, մենք ենք լինելու: Դրա համար ենք մենք նշանակնքված, ինչպես Կայենը. սարսափի ու ատելության սերմանանումով այն ժամանակվա մարդկությանը նեղմիտ հովվերգությունից դեպի ահասարս հեռուները առաջ մղելու համար: Բոլոր այն մարդիկ, որ ազդեցություն են գործել մարդկության ընթացքի վրա, բոլորն էլ անխտիր հենց միայն այն պատճառով էին դրան ընդունակ ու ներգործուն տեսակի, որովհետև նրանք պատրաստ էին ճակատագիրն ընդունելու: Դա վերաբերում է Մովսեսին ու Բուդդային, այդպես է և Նապոլեոնի ու Բիսմարկի պարագայում: Թե ինչ անդնդախոր ուժի է նա ծառայում, ինչ բևեռից է նա ղեկավարվում, այստեղ ընտրություն ասածը չի կարող դեր խաղալ: Եթե Բիսմարկը հասկանար և ընդուներ սոցիալ-դեմոկրատներին ու նրանց կողմը թեքվեր, ապա նա խելացի ազնվայր կլիներ, բայց ոչ երբեք ճակատագրի մարդ: Այդպես էր և Նապոլեոնի պարագայում, Կեսարի, Լոյոլայի, բոլոր-բոլորի... Մարդ դա պետք է մշտապես կենսաբանորեն և պատմական զարգացման ընթացքով պայմանավորված պատկերացնի... Երբ երկրագնդի երեսին տեղի ունեցած մեծագույն հեղաշրջումները ջրային կենդա-

նիներին ցամաք նետեցին, ցամաքայիններին էլ ջուրը թափեցին, այն ժամանակ էլ կային ճակատագրին ապավինած կենդանատեսակներ, որոնք նորը ու մինչ այդ չլսվածն ի կատար ածեցին և իրենց տեսակը փրկել կարողացան՝ շնորհիվ նոր պայմաններին հարմարվելու կարողության: Թե արդյո՞ք դրանք հատկապես այն նույն տարատեսակներն էին, որոնք մինչև այդ էլ իրենց տեսակի մեջ որպես պահպանողականներ ու ինքնապահպանման բնազդով օժտվածներ էին համարվում, կամ էլ, այլ կերպ ասած՝ շատ ավելի ինքնատիպ ու հեղափոխական տեսակներ, մենք դա չգիտենք: Բայց նրանք պատրաստ էին, և այդ պատճառով էլ կարողացան իրենց տեսակը նոր զարգացումներին հարմարեցնել ու այդպես փրկվել: Դա արդեն մենք գիտենք: Դրա համար էլ մենք ուզում ենք պատրաստ լինել»:

Այսօրինակ խոսակցությունների ժամանակ տիկին Եվան հաճախ ներկա էր գտնվում, սակայն անձամբ ինքը մեր այս զրույցներին չէր մասնակցում: Մեզանից յուրաքանչյուրի համար, որ իր մտքերն էր արտահայտում, նա լոկ ունկնդիր էր ու արձագանք՝ լի վստահությամբ ու հասկացողության ուժով, և այնպես էր թվում, որ ասես բոլոր մտքերը նրանից էին գալիս և դեպի նա վերադառնում: Ինձ համար երջանկություն էր նստել նրա կողքին, նրա ձայնը լսել և մասնակցություն ունենալ հասունության ու հոգու այն մթնոլորտին, որ շուրջառում էր նրան:

Նա անմիջապես զգում էր, երբ իմ մեջ մի ինչ-որ փոփոխություն, խռովք կամ նորացում էր գլուխ բարձրացնում: Ինձ այնպես էր թվում, որ քնի մեջ իմ տեսած երազներն ասես նրանից եկող ներշնչումներ լինեին: Ես հաճախ էի դրանց մասին պատմում նրան, և բոլորն էլ իրեն հասկանալի ու բնական էին թվում, չկար ոչ մի տարօրինակություն, որին նա չկարողանար հետևել հստակ զգացականությամբ: Միաժամանակ ես այնպիսի երազներ էի տեսնում, որոնք ասես մեր ամենօրյա վարած խոսակցությունների պատճենումները լինեին: Երազում տեսնում էի, որ ողջ աշխարհը խռովության մեջ էր և որ ես, միայնակ կամ Դեմիանի հետ միասին, ուժերս լարած մեծ ճակատագրին էի սպասում: Ճակատագիրը դեռևս մնում էր ծպտված, բայց ինչ-որ տեղ տիկին Եվայի դիմագծերն էր կրում, նրա կողմից ընտրված կամ մերժված լինել՝ դա՝ էր ճակատագիրը:

Երբեմն նա ժպտալով ասում էր. «Ձեր երազը ամբողջական չէ, Զինքլեր, Դուք լավագույն մասը մոռացել եք», և պատահում էր, որ ողջը նորից էր իմ միտքը գալիս և ես չէի կարողանում հասկանալ, թե ինչպես դա կարող էի մոռացած լինել:

Ժամանակ առ ժամանակ ես անբավարարվածություն էի զգում ու տենչանքների գրոհի առաջ՝ ընկճված: Ինձ թվում էր, որ ես այս վիճակն այլևս չէի կարող տանել, Եվային կողքիս տեսնել՝

առանց նրան ձեռքերիս մեջ առնելու: Դա ևս չվրիպեց նրա ուշադրությունից, նա անմիջապես նկատեց այդ: Երբ մի քանի օր շարունակ ես դադարեցի նրա տուն հաճախել և ապա հուզառատ խանդով նորից վերադարձա, նա ինձ մի կողմ տարավ ու ասաց. «Դուք չպետք է տրվեք այն տենչանքներին, որոնց չեք հավատում: Ես գիտեմ Դուք ինչ եք ցանկանում: Դուք պետք է կարողանաք հրաժարվել այդ ցանկություններից, կամ դրանք ամբողջապես ու իսկապես տենչաք: Երբ Դուք մեկ անգամ կարողանաք այնպես խնդրել, որ ամբողջ էությամբ վստահ լինեք լիացմանը, այդժամ բավարարումը անմիջապես վրա կհասնի: Դուք տենչանքներ եք ունենում և, սակայն, հետո նորից զղջում դրանց համար, այդ պատճառով էլ վախի զգացումն է Ձեզ պաշարում: Դա անպայման պետք է հաղթահարվի: Ես ուզում եմ Ձեզ մի հեքիաթ պատմել»:

Ու նա պատմեց ինձ մի պատանու մասին, որ մի աստղի էր սիրահարված: Նա կանգնում էր ծովափին, երկարում էր ձեռքերը և աղոթում աստղին, նա անրջում էր նրա մասին ու իր մտքերն ուղղում նրան: Բայց նա գիտեր, կամ կարծում էր, թե գիտեր, որ աստղը չէր կարող մի մարդու հետ համբուրվել կամ գրկախառնվել: Առանց հույսի ու բավարարման ակնկալիքի այդ աստղին սիրելը նա իր ճակատագիրն էր համարում, ու այդ մտքերից նա մի ամբողջ կյանքի բանաստեղծություն էր հյուսում՝ մերժումի ու անպատասխան սիրո, իրեն վիճակված անլուր տառապանքի մասին, որը նրան պետք է բուժեր ու մաքրագործեր: Բայց նրա բոլոր երազները աստղին էին վերաբերում: Մի անգամ գիշերով նա նորից կանգնած էր ծովափին, բարձր ծովախութի գագաթին, նայում էր աստղին ու այրվում նրա հանդեպ սիրուց: Եվ ակնթարթի մեջ նրա մեծագույն կարոտաբաղձությունը նրան տեղից պոկեց ու վերև նետեց և նա հայտնվեց դատարկության մեջ՝ աստղի դեմ-դիմաց: Բայց թռիչքի պահին անգամ կայծակի արագությամբ նրա մտքովն անցավ. բայց չէ՞ որ դա անհնար է... Հետո նա պառկած էր ներքևում՝ ծովափին հուջ ջախջախված տեսք ուներ: Նա չհասկացավ սիրո առեղծվածը: Եթե նա իր ճախրանքի պահին հոգու ուժ ունենար՝ աներկմիտ բավարարմանն հավատալու, նա դեպի վեր կխոյանար ու կմիաձուլվեր աստղին:

- Սերը չպետք է խնդրի,- ասաց նա,- ոչ էլ պահանջի: Սերը պետք է ուժ ունենա՝ ինքն իր նկատմամբ ինքնավստահ լինելու կորով: Այնուհետև այն այլևս ուրիշի կողմից հրապուրվելուն չի ձգտի, այլ ինքը նրան կձգի, կհրապուրի: Զինքեր, Ձեր սերը ինձանից է ձգվում: Եթե մի անգամ ձեր սերն ինձ ձգի, այդժամ ես կգամ: Ես չեմ ուզում նվերներ տալ, ես ուզում եմ հաղթված լինել:

Մեկ ուրիշ անգամ, սակայն, նա ինձ մի ուրիշ հեքիաթ պատ-

մեց: Կար-չկար մի սիրահար կար, որ ապրում էր հուսահատության գիրկն ընկած: Նա ամբողջովին ներքաշվել-ամփոփվել էր իր հոգու մեջ և կարծում էր սիրուց տոչորվում էր ինքը: Աշխարհը նրա աչքին չէր երևում, նա այլևս չէր նայում կապույտ երկնքին ու կանաչ անտառին, աղբյուրը չէր խոխոջում նրա համար, քնարը չէր հնչում նրա համար, ամեն-ամեն ինչ սուզվել-անէացել էր ու նա թշվառ ու խեղճ տառապանքին էր հանձնվել: Նրա սերը, սակայն, շարունակ աճում էր, և նա ավելի շուտ կուզենար մահանալ ու խորտակվել, քան թե կհրաժարվեր իր սիրած գեղեցիկ կնոջը տիրանալու մտքից: Այդժամ նա զգաց, թե ինչպես իր սերը ամեն ինչ վառել-ամայացրել էր իր մեջ, ու նա ողջ կորովը իր սրտում հավաքեց, ապա ձգե՛ց-ձգե՛ց և իր պաշտելի տիկինը անսաց նրա ուժին ու նա եկավ, տղան կանգնած էր լայն պարզած թևերով՝ նրան դեպի իրեն ձգելու վճռականությամբ: Սակայն երբ կինն իր առաջ կանգնեց, տղան այլևս կատարելապես վերափոխված էր, և սարսուռով ու սոսկանքով զգաց ու տեսավ, որ ինքը իրենից կորսված ողջ աշխարհը դեպի իրեն էր ձգել: Կինը կանգնեց նրա առաջ ու հանձնվեց նրան, երկինքը, անտառն ու աղբյուրը, ամեն-ամեն ինչ նոր գույներ ստացած, թարմ ու սքանչելի՝ նրան ընդառաջ եկան, բոլորն իրեն էին պատկանում, իր լեզվով խոսում: Ընդամենը մի կնոջ գրավելու, նրան հաղթելու դիմաց՝ հիմա նա ողջ աշխարհն ուներ իր սրտում, և երկնքի աստղերը շողշողում էին իր մեջ և հուրհրատում էր ցնծությունը իր հոգու խորքում: Նա սիրեց ու միաժամանակ ինքն իրեն վերագտավ: Մարդկանց մեծամասնությունը, սակայն, սիրո մեջ ինքն իրեն կորցնում է:

Տիկին Եվայի նկատմամբ տածած իմ սերը ինձ թվում էր իմ կյանքի մեն-միակ բովանդակությունը: Բայց ամեն օր նա ուրիշ կերպ էր երևում: Երբեմն կարծես ես հստակորեն զգում էի, որ այդ նրա անձը չէր, դեպի որը ձգվելով ձգտում էր իմ էությունը, այլ որ նա սոսկ իմ ներաշխարհի խորհրդանիշ-այլաբանությունն էր և ուզում էր ինձ միայն ավելի խորքերը ներքաշեր, իմ իսկ մեջ՝ դեպի իմ ներսն առաջնորդել: Հաճախ ես նրանից խոսքեր էի լսում, որոնք ասես ինձ հուզող ու այրող հարցերի առթիվ հնչած իմ ենթագիտակցության պատասխանները լինեին: Հետո կրկին պահեր էին լինում, երբ ես նրա կողքին այրվում էի զգայական տենչանքից ու համբուրում էի այն առարկաները, որոնց նա հպվել էր: Եվ աստիճանաբար զգայականն ու անզգայական սերը, իրականությունն ու խորհրդանիշը համատեղվեցին: Հետո պատահեց այն, որ ես իմ տանը՝ սենյակումս նստած, նրա մասին էի մտածում՝ խաղաղ ինքնասուզման մեջ ընկղմված, և այդժամ կարծես նրա ձեռքը իմ ձեռքի մեջ էր, նրա շուրթերի հպումն էի զգում իմ շուրթերին: Կամ նրա մոտ եղած ժամանակ

նայում էի նրա դեմքին, խոսում էի հետը ու նրա ձայնը լսում, և սակայն չէի հասկանում՝ արդյոք դա իրական էր, թե երազ: Իմ մեջ մի նախազգացում ծնվեց, թե մարդս կարող է իր սիրույն տեսականորեն ու ամբողջության մեջ տիրապետել: Մի գրքի ընթերցանության պահին ինձ մի նոր իմացություն այցելեց, դա մի նույնպիսի զգացողություն էր, ինչպես տիկին Եվայի համբույրը: Նա չոյում էր իմ մազերն ու ժպտում ինձ իր հասուն, անուշաբույր ջերմությամբ, և ես այն նույն զգացումն ունեցա, որ կարծես ինքս իմ մեջ մի առաջընթաց էի ապրել: Այն ամենը, ինչ կարևոր էր ինձ համար ու ճակատագիր, ընդունակ էր նրա կերպարանքն ընդունելու: Եվան կարող էր իմ յուրաքանչյուր մտքի մեջ փոխարկվել և իմ յուրաքանչյուր զգացողությունը կարող էր նրան վերածվել:

Ծնողներիս մոտ անցկացրած ամանորյա արձակուրդների ընթացքում ինձ մի պահ վախը պաշարեց, քանի որ կարծում էի, որ երկու շաբաթ շարունակ տիկին Եվայից հեռու ապրելն անտանելի տառապանք էր լինելու ինձ համար: Բայց տառապանքներ ես չունեցա, այնպես հիասքանչ էր տանը նստել ու նրա մասին մտածել: Երբ ես վերադարձա Հ., դեռ մի երկու օր էլ նրա տուն չայցելեցի, որպեսզի ըմբոշխնեի նրա զգայական ներկայությունից արտածվող իմ այս վստահությունն ու անկախությունը: Ինձ նաև երազներ էին հաճախում, որոնցում նրա հետ իմ միավորումը նորանոր կերպափոխություններ էր ստանում: Նա մի ծով էր, որի մեջ ես հորդալով թափվում էի: Մի աստղ, ու ես ինքս էլ ասես մի աստղ լինեի՝ դեպի նրան գնալու ճանապարհին առկայծող, և մենք հանդիպում էինք իրարու ու զգում էինք մեր ներքին մղումը իրար նկատմամբ, մնում էինք կողք-կողքի ու երանության մեջ պտտվում միմյանց շուրջը՝ հար և ընդմիշտ մերձակա, թանձր ու հնչեղ շրջապտույտում միավորված:

Այս երազը ես նրան պատմեցի, երբ առաջին անգամ նորից այցելեցի նրան:

- Գեղեցիկ երազ է,- հանդարտ ասաց նա:- Իրականացրե՛ք այն...

Գարնան նախաշեմին ինձ մի օր վիճակվեց, որը ես երբեք չեմ մոռանա: Ես ներս մտա սրահ, լուսամուտը բաց էր ու մի գաղջ ու գոլ օդի շիթ սենյակի տարածության մեջ հիացինտների ծանր բուրմունքն էր արտահեղում: Քանի որ ոչ ոք չէր երևում, ես աստիճաններով դեպի Դեմիանի աշխատասենյակը բարձրացա: Կամացուկ ծեծեցի դուռն ու ներս մտա, առանց որ, հակառակ իմ սովորության, կանչի սպասելու:

Սենյակը խավար էր, բոլոր վարագույրներն իջեցված էին: Դեպի հարևան սենյակը տանող դուռը բաց էր, այնտեղ, ուր Դեմիանը մի քիմիական լաբորատորիա էր շինել: Այնտեղից թա-

փանցում էր գարնանային արևի պայծառ, սպիտակ լույսը, որ փայլփլում էր անձրևած ամպերի արանքից: Ես կարծում էի այնտեղ ոչ ոք չկար ու վարագույրներից մեկը ետ քաշեցի:

Այնտեղ՝ վարագուրածածկ պատուհանի մոտ, մի փոքրիկ աթոռակի վրա ես Մաքս Դեմիանին նստած տեսա, կուչ եկած և տարօրինակ ձևով այլափոխված, հանկարծ՝ կայծակի պես մի զգացում անցավ իմ միջով. ես այդ բանը մեկ անգամ արդեն վերապրել էի... Նրա բազուկները անշարժ կախ էին ընկած, ձեռքերը խաչաձև ծալած, ես տեսա նրա փոքր-ինչ առաջ թեքված դեմքը, բաց աչքերը՝ անկենդան ու մեռած, ակնաբիբի մեջ առկայծում էր մի փոքրիկ, վառվռուն լույսի մեռած արտացոլքը, ասես մի կտոր ապակու մեջ: Գունատ դեմքը ինքն իր մեջ էր խորասուզված՝ առանց որևէ արտահայտության նշույլի, մի սոսկալի քար-անշարժություն, ասես տաճարի ճակատամուտքի հնամենի կենդանական դիմակը հիշեցնող: Նա կարծես չէր շնչում:

Հիշողությունն ինձ խորը սահմռկանք պատճառեց. այսպես, ճիշտ այսպես ես նրան մեկ անգամ արդեն տեսել եմ, շատ տարիներ առաջ, երբ ես դեռ փոքրիկ երեխա էի: Այն ժամանակ էլ նրա աչքերն այսպես սևեռուն շրջված էին դեպի ներս, ձեռքերն անկյանք ընկած էին իրար կողքի, մի ճանճ էր ետուառաջ անում դեմքի վրա: Այն ժամանակ, դա հավանաբար մի վեց տարի առաջ կլիներ, նա ճիշտ այսպես ծեր ու ժամանակից վերացած տեսք ուներ, այսօր նրա դեմքին երևակվող խորշոմները կատարելապես նույնն էին:

Սարսափից քարացած՝ ես կամացուկ դուրս եկա սենյակից ու աստիճաններով ցած իջա: Սրահում հանդիպեցի տիկին Եվային: Նա գունատ էր ու կարծես հոգնած, ես նրան այդ վիճակում դեռ չէի տեսել, մի ստվեր թռավ-անցավ պատուհանի միջով, վառվռուն, ճերմակին տվող արևը հանկարծակի անհետացավ:

- Ես Մաքսի մոտ էի,- արագ-արագ չշնչացի ես:- Ինչ որ բա՞ն է պատահել: Նա քնած է կամ ինքնախորասուզված, ես չգիտեմ, ես առաջներում մեկ անգամ էլ եմ նրան այդ վիճակում տեսել:

- Բայց դու հո նրան չարթնացրի՞ր,- դյուրագրգիռ հապճեպությամբ վրա բերեց նա:

- Ոչ: Նա ինձ չէր լսում: Ես անմիջապես էլ ցած իջա: Տիկին Եվա, ասացեք ինձ, ի՞նչ է պատահել նրան:

Նա դաստակի արտաքին մասով չփեց ճակատը:

- Հանգիստ եղեք: Ջինքլեր, նրան ոչինչ չի պատահել: Նա ինքն իր մեջ է քաշվել: Դա երկար չի տևի:

Նա վեր կացավ ու դուրս եկավ պարտեզ, թեև արդեն սկսել էր անձրևել: Ես զգացի, որ չպետք է նրան ուղեկցեի: Այդպես ես ետուառաջ էի անում սրահով մեկ, շնչում էի թմրեցուցիչ բույր արձակող հիացինտները, ակնդետ նայում էի դռան վերևի

իմ թռչնապատկերին ու ներշնչում սրտնեղության զգացողությամբ ներծծված տարօրինակ ստվերը, որով տունը լցված էր այս առավոտ: Ի՞նչ էր դա: Ի՞նչ էր պատահել:

Տիկին Եվան շուտով վերադարձավ: Անձրևի կաթիլները կախ էին ընկել նրա մուգ մազերից: Նա նստեց իր բազկաթոռին: Հոգնությունն էր հանգրվանել նրանում: Ես մոտեցա նրան, խոնարհվեցի ու համբուրեցի նրա մազերի միջից երևակվող ջրակաթիլները: Նրա աչքերը պայծառ էին ու խաղաղ, բայց կաթիլները իմ շուրթերին արցունքի համ ունեին:

- Պե՞տք է ես նրա ետևից բարձրանամ,- շշնջալով հարցրեցի ես:

Նա թույլ ժպտաց:

- Դուք հո փոքր երեխա՞ չեք, Զինքլեր...,- բարձրաձայն ու հորդորական հնչերանգով նետեց նա, ասես ինքն իր մեջ էլ մի արգելք կոտրելիս լիներ:- Ավելի լավ է հիմա գնացեք, ավելի ուշ նորից կգաք, հիմա ես չեմ կարող Ձեզ հետ խոսել:

Ես դուրս եկա ու վազում էի տանից ու քաղաքից հեռու՝ դեպի լեռը, մանր անձրևը շեղակի խփում էր դեմքիս, ամպերը՝ ծանր ճնշման տակ, ասես վախվորած՝ ցածրացել ու կողքովս էին անցնում: Ներքևում գրեթե քամի չկար, բարձունքում այն կարծես փոթորկի պես գրոհելիս լիներ, պողպատյա ամպերի մոխրագույնից արևը բազմաթիվ անգամներ գունատվեց ու նորից պայծառացավ:

Հետո երկնքի խորքերից մի փխրաթեթև ու դեղին ամպի ծվեն պոկվեց ու ցած սահեց, այն կանգ առավ մոխրագույն պատի առաջ և քամին, մի քանի վայրկյանների ընթացքում, դեղինից ու կապույտից մի պատկեր կազմեց, հսկայական մեծության մի թռչուն, որը կապտասև խառնաշփոթից պոկվեց ու լայնարձակ թևաբախումներով երկնքի մեջ անհետացավ: Հետո փոթորիկը լսելի եղավ, և անձրևը, կարկուտի հետ միախառնված, ճարճատելով ներքև էր թափվում: Մի կարճատև, անհավանական ու սարսափելիորեն հնչեղ որոտմունք շառաչում էր ծածկված տեսարանի վրա, անմիջապես հետո նորից արևի մի փայլատակում թափանցեց, և մերձակա լեռների վրա, շագանակագույն անտառի գլխավերևում շողշողում էր գունատ ու անիրական, փայլատ ձյունը:

Երբ ես, ջուր կտրած ու քամահար, ժամեր անց ետ վերադարձա, Դեմիանն ինքը տան դուռը բաց արեց իմ առաջ:

Նա ինձ ուղեկցեց դեպի իր սենյակը, լաբորատորիայում մի գազալապտեր էր վառվում, շուրջը թղթեր էին շաղ տված, երևում էր նա աշխատելիս էր եղել:

- Նստիր,- առաջարկեց նա,- հոգնած կլինես, զզվելի եղանակ էր, երևում է բավականին երկար ժամանակ դրսում ես անցկաց-

րել: Հիմա թեյը կբերեն:

- Այսօր ինչ-որ բան է պատահել,- սկսեցի ես վարանելով,- դա չի կարող միայն կայծակ-որոտից առաջ եկած լինել:

Նա ինձ նայեց քննախույզ հայացքով:

- Դու ինչ որ բա՞ն ես տեսել:

- Այո: Մի պահ ամպերի մեջ ես պարզորոշ մի պատկեր տեսա:

- Ի՞նչ պատկեր:

- Դա մի թռչուն էր:

- Ճուռա՞կը: Այո՞: Քո ցնորք-թռչու՞նը:

- Այո, դա իմ ճուռակն էր: Նա դեղին էր ու վիթխարահսկա և սլացավ դեպի կապտասև երկնքի խորքերը:

Դեմիանը խորը արտաշնչեց:

Դուռը թակեցին: Մեր աղախինը թեյ մատուցեց:

- Վերցրու՛, Զինքլեր, խնդրեմ: Կարծում ես, որ այդ թռչունը դու պատահաբա՞ր չես տեսել:

- Պատահաբա՞ր: Այդպիսի բաներ պատահաբա՞ր են տեսնում:

- Դե լավ, ոչ: Դա ինչ-որ բան է նշանակում: Գիտե՞ս, թե ինչ:

- Ո՛չ: Ես զգում եմ միայն, որ այն մի ցնցում է նշանակում, մի քայլ դեպի ճակատագիրը: Կարծում եմ, այն մեզ բոլորիս է վերաբերում:

Նա դյուրագրգիռ ետուառաջ էր քայլում:

- Մի քայլ դեպի ճակատագիրը...,- բարձրաձայն բղավեց նա:- Նույն բանը ես այսօր երազումս տեսա, մայրս էլ երեկ մի նախազգացում էր ունեցել, որ նույնն էր ասում: - Երազումս տեսա, որ բարձրանում էի հենասանդուղքով՝ ծառաբունը կամ աշտարակն ի վեր: Երբ արդեն վերևում էի, տեսա ողջ հողաշերտը, մի մեծ հարթավայր, քաղաքներով ու գյուղերով՝ կրակի մատնված: Ես հիմա չեմ կարող ողջը պատմել, ինձ համար դեռ ամեն ինչ պարզ չէ:

- Կարծում ես երազը քե՞զ է վերաբերում,- հարցրեցի ես:

- Ի՞նձ: Իհարկե: Ոչ ոք իրեն չվերաբերող բաների մասին երազ չի տեսնում: Բայց դա միայն ինձ չի վերաբերում, դու ճիշտ ես: Ես բավական ճշգրտորեն զգացնում եմ այն երազները, որոնք իմ սեփական հոգու շարժումներն են ծանուցում, և նրանք, այն հազվադեպները, որոնցում ողջ մարդկության ճակատագիրն է ակնարկվում: Ես հազվադեպ եմ նման երազներ տեսել, և չի եղել մեկը, որի մասին կարողանայի ասել, թե այն մի մարգարեություն է եղել և ի կատար չի ածվել: Ցուցումները շատ անորոշ են: Բայց մի բան ես գիտեմ, ես երազումս տեսա այն, ինչը միայն ինձ չէ, որ վերաբերում է: Այդ երազն իսկապես պատկանում է այն մյուսներին, առաջիներում իմ տեսածներին, որոնց շարունակությունն էր նա: Դրանք այն երազներն են, Զինքլեր, որոնց առնչությամբ ես նախազգացումներ եմ ու-

նենում, այդ մասին ես քեզ արդեն պատմել եմ: Որ մեր աշխարհը իսկապես նեխած է, մենք դա գիտենք, բայց դա դեռ հիմք չէր կարող լինել նրա կործանումը կամ դրա պես մի բան մարգարեանալու համար: Բայց տարիներ ի վեր ես տեսել եմ երազներ, որոնցից այն եզրակացությանն եմ հանգել, զգացել եմ, կամ ինչպես կուզես, որոնցից ես այն զգացողությունն ունեմ, որ մեր այս ծերուկ աշխարհի խորտակումը մոտենում է: Սկզբում դրանք դեռևս շատ թույլ, հեռակա նախազգացումներ էին, բայց գնալով ավելի ու ավելի պարզորոշ ու ուժգնացող դարձան: Ես միայն մի բան գիտեմ, այն որ ինչ-որ մեծ ու սարսափելի բան է մոտենում, որը նույնքան ինձ է վերաբերում, որքան և մյուսներին: Չինքլեր, մենք դեռ վերապրելու ենք այն, ինչի մասին առաջներում երբեմն խոսել ենք... Աշխարհն ուզում է վերանորացվել: Մահվան հոտ է փչում: Ոչ մի նոր բան առանց մահվան առաջ չի գալիս: Այն շատ ավելի սարսափելի է, քան որ նույնիսկ ես էի մտածում:

Սարսափահար եղած ու ակնապիշ՝ ես նրան էի նայում:

- Դու կարո՞ղ ես քո երազի մնացած մասն էլ ինձ պատմել,- աղաչեցի ես՝ երկյուղը դեմքիս:

Նա տարուբերեց գլուխը:

- Ոչ:

Դուռը բացվեց ու տիկին Եվան ներս մտավ:

- Դուք որ այսպես իրար կողք-կողքի նստած զրուցում եք, երեխաներ, պետք է որ ձեզ մոտ տխուր չլինի, այնպես չէ՞:

Նա թարմացած տեսք ուներ ու այլևս հոգնած չէր երևում: Դեմիանը ժպտաց նրան, նա մեզ մոտ եկավ ինչպես մայրը՝ ահաբեկված երեխաների մոտ:

- Մենք տխուր չենք, մայրիկ, մենք միայն փորձում էինք այս նոր ժամանակների առեղծվածը քննել: Բայց դա կարևոր չէ: Այն, ինչ ուզում է գալ, հանկարծակի կհայտնվի, իսկ այն, ինչի գիտենալու կարիքը մենք ունենք, մենք գրան փորձով վերահասու կլինենք:

Բայց տրամադրությունս վատ էր, և երբ ես հրաժեշտ տվեցի ու միայնակ անցնում էի սրահով, հիացինտի բույրն ինձ թոշնած, անհաճո ու մեռելահամ թվաց: Մեր միջև մի տարի էր անցել:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՍԿԻԶԲՆ ՎԱԽՃԱՆԻ

Ես գործերս այնպես դասավորեցի, որ ամառային կիսամյակն էլ Հ.-ում մնալ կարողանամ: Տանը մնալու փոխարեն՝ մենք հիմա գրեթե միշտ գետափնյա պարտեզում էինք օրերն անցկաց-

նում: Ճապոնացին, որն ի դեպ բռնցքամարտում իսկապես տանուլ տվեց, հեռացել էր, տոլստոյականն էլ չկար: Դեմիանը մի ձի էր ձեռք բերել և տոկուն հաստատակամությամբ ամեն օր թամբին նստած՝ ձիավարում էր: Ես հաճախ էի նրա մոր հետ մենակ լինում:

Երբեմն ես զարմանում էի իմ կյանքի խաղաղ ընթացքի կապակցությամբ: Ես այնքան երկար էի վարժվել մենակ մնալուն, հրաժարումին անձնատուր լինելուն, տառապանքներիս հետ մղվող հոգնեցնող ու ջլատիչ կռվին, որ Հ.-ում անցկացրած այս ամիսներն ինձ մի երազային, ցնորական կղզի էին պատկերանում, ուր ես ապրում էի հարմարավետության ու մոգական դյութանքի մեջ՝ հիասքանչ ու հաճելի առարկաներին ու զգացմունքներին հանձնված: Ես նախազգում էի, որ սա այն նոր, բարձրագույն միաբանության մայրամուտն ու վախճանն էր, որի մասին մենք մտածում էինք: Ժամանակ առ ժամանակ մի խորը թախիծ էր համակում ինձ իմ այս երջանկության առիթով, որովհետև քաջ գիտեի, որ դա չէր կարող երկար տևել: Ինձ վիճակված չէր երկար շնչել՝ լիացումին ու բավականությանն հանձնված, ինձ հարկավոր էր տառապանք ու խռովք: Զգում էի. օրերից մի օր ես արթնանալու էի այս գեղեցիկ սիրո պատկերներից ու նորից միայնակ մնալու, ամբողջովին մենակ, այն մյուսների սառն աշխարհում, ուր ինձ լոկ մենակություն ու կռիվ էր սպասում, բայց, քավ լիցի, ոչ երբեք անդորր կամ համակեցություն:

Այնուհետև կրկնապատկված քնքշությամբ ես տրվեցի տիկին Եվայի մերձավորությանը, ուրախ, որ իմ ճակատագիրը դեռ շարունակում էր մշտապես այս գեղեցիկ, խաղաղ գծերը կրել:

Ամառային շաբաթներն անցան արագ ու թեթևասահ, կիսամյակն արդեն վերջանալու վրա էր: Առջևում շուտով հրաժեշտն էր մեզ սպասում, ես չպետք է այդ մասին մտածեի և չէի էլ մտածում, այլ կառչել էի ինձ վիճակված գեղեցիկ օրերից, ինչպես թիթեռնիկը մեղրատու ծաղկից: Դա իմ կյանքի երջանիկ ժամանակն էր, իմ կյանքի առաջին լիացումն ու անդամակցումը միաբանության ուխտին. ի՞նչ էր դրան հետևելու: Ես կրկին պետք է կռիվ տալով, մեծ դժվարությամբ ճանապարհ հարթեի, տառապեի կարոտից, երազներ ունենայի ու միայնակ մնայի:

Օրերից մի օր այդ նախազգացումն այնպես ուժգին պաչարեց ինձ, որ տիկին Եվայի նկատմամբ իմ սերը հանկարծակի ցավեցնելու աստիճան բոցավառվեց: Աստված իմ, երբ է լինելու, որ ես այլևս նրան չտեսնեմ, չլսեմ նրա ինքնահաստատուն, նրբագեղ քայլքը տան սրահներում, իմ սեղանին չգտնեմ այլևս նրա ծաղիկները... Եվ ինչի՞ էի ես հասել: Ես երազել էի ու հաճելի զգացողության մեջ օրորվել, փոխանակ նրան նվաճելու, փոխանակ պայքարելու նրա համար, նրան առհավետ իմը դարձնելու... Այն

ամենը, ինչ նա ժամանակին ասել էր ճշմարիտ սիրո մասին, հանկարծ միտքս եկավ, հարյուրավոր նրբագեղ, հորդորիչ խոսքեր, հարյուրավոր մեղմաշշունջ, գայթակղիչ հրապուրանքներ, գուցե խոստումներ: Դրանցից ո՞րն էի ես ուշադրության առել: Ոչինչ: Ոչ մեկը:

Ես կանգնել էի սենյակիս մեջտեղում, ողջ գիտակցությունս ի մի ժողովել ու մտածում էի Եվայի մասին: Ես ուզում էի իմ հոգու բոլոր ուժերը լարել, որպեսզի նրան զգացնել տայի իմ սիրո մասին, նրան դեպի ինձ գրավեի: Նա պետք է գար ու իմ գրկախառնումը տենչար, իմ համբույրը պետք է նրա հասուն, սիրող շրթունքներին անկշտում ու անհագ գրգիռը դրոշմեր:

Ես կանգնել ու լարված սպասում էի, մինչև որ ձեռքիս մատներից սկսած մինչև ոտնաթաթերս սառցակալեցի: Զգում էի, որ ուժերս լքում են ինձ: Մի քանի վայրկյան շարունակ ես իմ մեջ մի ինչ-որ բան ամուր ու կիպ իրար էի սեղմել, միակցել, մի ինչ-որ լուսավոր ու թարմաշունչ բան. մի պահ ես այն զգացումն ունեցա, թե մի բյուրեղ եմ կրում սրտիս մեջ, և գիտեի, որ դա իմ ճան էր: Սառնությունը բարձրացավ մինչև իմ կուրծքը:

Երբ սարսափելի լարումից արթնացա, զգացի, որ ինչ-որ բան էր կատարվելու: Ես մահու չափ հյուծված ու գերհոգնած էի, բայց պատրաստ էի Եվային տեսնելու սենյակ մտնելիս՝ բոցավառ ու զմայլված:

Կճղակների դոփյունը, փողոցից ձգվելով, աստիճանաբար մոտենում էր՝ մրճահարության հանգույն, ապա ավելի մոտիկից ու ուժգնորեն հնչեց, դադարեց հանկարծ: Ես դեպի լուսամուտն ինձ գցեցի: Ներքևում Դեմիանը ցած էր իջնում ձիուց: Ես ընդառաջ վազեցի:

- Ի՞նչ է եղել, Դեմիան: Մայրիկիդ հո ոչինչ չի՞ պատահել:

Նա իմ խոսքերը չէր լսում: Նա շատ գունատ էր, և ճակատի երկու կողմերից քրտինքն էր վազում այտերի վրայով: Նա կապեց իր քրտնաթորած ձիու սանձը այգու ցանկապատից, ձեռքս բռնեց ու ինձ հետ փողոցով ցած իջավ:

- Դու արդեն տեղյա՞կ ես:

Ես ոչինչ չգիտեի:

Դեմիանը սեղմեց ձեռքս և դեմքը իմ կողմը դարձրեց՝ մթընդած, կարեկցական, տարօրինակ հայացքով:

- Այո, փոքրիկս, հիմա ուր որ է սկսվելու է: Դու պետք է տեղյակ լինես Ռուսաստանի հետ մեծ լարվածության մասին...

- Ի՞նչ: Պատերա՞զմ: Ես դրան երբեք չէի հավատում:

Նա խոսում էր կամացուկ, թեև մոտակայքում ոչ ոք չկար:

- Այն դեռևս հայտարարված չէ: Բայց պատերազմն արդեն սկսվելու վրա է: Դրանում կարող ես վստահ լինել: Այն ժամանակվանից սկսած՝ ես այդ խնդրով քեզ այլևս չէի անհանգստաց-

րել, բայց այս ընթացքում ես երեք անգամ նոր նախանշաններ եմ տեսել: Այսպիսով՝ աշխարհի կործանում, երկրաշարժ, կամ հեղափոխություն կամ դրա նման մի բան չկա: Պատերազմ է լինելու: Ա՛յ կտեսնես, թե ինչպես է այն պայթելու... Մարդկության համար դա մի իսկական երանություն է լինելու, այսօր արդեն ամեն ոք ուրախանում է նրա սանձազերծման առթիվ, այնքան որ նրանց համար անտանելի է կյանքը դարձել: Բայց դու կտեսնես, Զինքլեր, որ դա միայն սկիզբն է: Հավանաբար մեծ պատերազմ է լինելու, մի շատ ահավոր պատերազմ: Բայց դա էլ միայն սկիզբն է: Նո՛ր է սկսվում, և այդ նորը նրանց համար, որ հնից են կառչած, զարհուրելի է լինելու: Դու ի՞նչ ես անելու:

Ես չփոթված էի, այդ ամենն ինձ համար դեռևս օտարոտի ու անհավանական էր հնչում:

- Չգիտեմ, իսկ դու՞:

Նա ուսերը թոթվեց:

- Եթե զորակոչ լինի, ես զինվորական ծառայության կմտնեմ: Ես լեյտենանտ եմ:

- Դու՞: Ես այդ մասին ոչինչ չգիտեի:

- Այո, դա պայմաններին հարմարվելու իմ ձեռնարկած քայլերից մեկն էր: Դու գիտես, արտաքուստ ես երբեք, հաճույքների իմաստով աչքի չեմ ընկել և ավելի շուտ ամեն ինչ անում էի քաղաքավարի լինելու համար: Ինձ թվում է՝ արդեն ութ օր է ես մարտադաշտում եմ:

- Աստծու սիրույն:

- Դե՛, փոքրիկս, դու չպետք է դա զգացական խանդով ընդունես: Անշուշտ ինձ համար հաճելի բան չի լինելու կենդանի մարդկանց վրա հրազենային կրակ բացելու կարգադրություններ տալը, բայց դա երկրորդական խնդիր է: Հիմա մեզանից յուրաքանչյուրը պետք է մեծ շրջապտույտի մեջ ներգրավվի: Դու նու՛յնպես: Դու վստահաբար կզորակոչվես:

- Իսկ քո մայրի՞կը, Դեմիան:

Միայն հիմա ես նորից մտաբերեցի այն, ինչը մի քառորդ ժամ առաջ իմ միտքն էր զբաղեցրել: Ինչպե՞ս էր աշխարհը կերպափոխվել... Ես իմ ողջ ուժը ի մի էի ժողովել ամենաաղցր պատկերին թախանձելու համար, և հիմա ճակատագիրն ինձ անսպասելիորեն նորովի էր նայում՝ սպառնականորեն զարհուրելի դիմակի միջից:

- Մա՛յրս: Ախ, նրա մասին չպետք է մտահոգվել: Նա հաստատուն է, շատ ավելի ինքնավստահ, քան այսօր աշխարհիս երեսին եղող որևէ բան: Դու նրան այդքան չա՞տ ես սիրում:

- Դու դա գիտեի՞ր, Դեմիան:

Նա ժպտում էր պայծառ ու ազատագրված հայացքով:

- Փոքրիկս... Իհարկե գիտեի: Դեռևս ոչ ոք իմ մայրիկին տի-

կին Եվա չի ասել՝ առանց նրան սիրելու: Ի դեպ՝ այդ ինչպե՞ս եղավ: Դու նրան կամ ինձ էիր այսօր կանչում, այնպես չէ՞:

- Այո, ես կանչում էի... Տիկին Եվային:

- Նա դա զգացել էր: Նա ինձ անսպասելիորեն դուրս հրավիրեց, ես պետք է քեզ մոտ գայի: Ես նրան հենց այն է Ռուսաստանի մասին պատմող լուրերից էի պատմում:

Մենք ետ դարձանք և այլևս շատ քիչ էինք խոսում, նա արձակեց ձիու կապը ու թամբին նստեց:

Վերևի իմ սենյակում միայն զգացի, թե որքան հյուծված էի ես Դեմիանի բերած լուրից և դեռ ավելի շատ՝ նախընթաց լարվածությունից: Ուրեմն տիկին Եվան լսել էր ինձ... Ես հասու էի եղել նրան իմ սրտի մտոք: Նա անձամբ գալու կլիներ... եթե... Ինչ սքանչելի էր այդ ամենը, և որքա՜ն գեղեցիկ իսկապես... Հիմա պատերազմ պետք է բռնկվեր: Հիմա ուր որ է պետք է սկսեր այն, ինչի մասին մենք շատ հաճախ էինք խոսել: Եվ Դեմիանը այնպե՜ս էր այդ ամենը նախազգում: Ինչ տարօրինակ էր, որ հիմա աշխարհի հորձանքը այլևս երբեք մեր կողքո՛վ չէր անցնելու, այլ անսպասելիորեն հենց ուղղակի մեր սրտի միջով, արկածներն ու վայրի ճակատագրերը ձայնում էին մեզ և այժմ կամ շատ շուտով վրա էր հասնելու այն պահը, երբ աշխարհը մեր կարիքն էր ունենալու, մե՛ր, ում մեջ նա ուզենալու էր կերպափոխվել: Դեմիանն իրավացի էր, դա չպետք էր զգացական խանդով ընդունել: Տարօրինակն այն էր միայն, որ այնպիսի մի մենավոր բան, ինչպիսին «ճակատագիրն» էր շատ-շատերի, հիմա ես ողջ աշխարհի հետ միասին պետք է վերապրեի: Լավ ուրեմն...

Ես դրան պատրաստ էի: Երեկոյան, երբ քայլում էի քաղաքով, ամենուրեք, ամեն անկյունից աղմուկներ էին լսվում մեծ հուզախռովության մասին: Ամենուրեք այդ բառն էր՝ «պատերազմ»...

Ես եկա տիկին Եվայի տուն, երեկոյան կողմ մենք նստած էինք պարտեզի տնակում: Ես միակ հյուրն էի: Ոչ ոք չէր խոսում պատերազմի մասին: Միայն ավելի ուշ, մինչ ես պատրաստվում էի հրաժեշտ տալ, տիկին Եվան ասաց. «Սիրելի Զինքլեր, Դուք այսօր կանչում էիք ինձ: Դուք գիտեք, թե ինչու ես ինքս չեկա: Բայց մի մոռացեք. Դուք հիմա տիրապետում եք կանչին, և երբ էլ որ Դուք ինչ-որ մեկի կարիքն ունենաք, որը նշանն է կրում, այդժամ նորից ձայն տվեք...

Նա վեր կացավ ու հեռացավ այգու մթնշաղի միջով: Փառահեղորեն, խոշորաքայլ ընթանում էր խորհրդավոր կինը՝ լուսակյաց ծառերի միջով, և նրա գլխավերևում առկայծում էին փոքրիկ ու նուրբ աստղաբույլերը:

Ես մոտենում եմ վերջին: Իրադարձությունները իրենց խելահեղ, աճապարող ընթացքն էին բռնել: Շուտով պատերազմ սկսվեց, և Դեմիանը, տարօրինակ ու օտարոտի համազգեստի մեջ՝ արծաթադարչնագույն վերարկուով, ճանապարհ ընկավ: Ես նրա մորը ուղեկցեցի տուն: Շուտով ես նույնպես նրան հրաժեշտ տվեցի, նա համբուրեց շրթունքներս և մի պահ ինձ իր կրծքին սեղմած պահեց, նրա մեծ աչքերը վառվում էին իմ աչքերի դեմ-հանդիման:

Բոլոր մարդիկ ասես եղբայրացած լինեին: Նրանք մտածում էին հայրենիքի ու պատվախնդրության մասին: Բայց այդ ճակատագիրն էր, որի հայացքի մեջ մի պահ միայն բոլորը նայեցին ակնդետ ու անթաքույց: Երիտասարդներ էին գալիս զորանոցներից, գնացքներից իջնում ու բարձրանում, և շատերի դեմքերին ես մի նշան էի տեսնում, ոչ այն, որ մերն էր, այն գեղեցիկ ու արժանապատիվ խարանանշանը, որ սեր ու մահ էր նշանակում: Ես նույնպես ինձ անծանոթ մարդկանց գրկախառնումներին արժանացա, հասկացա այն ու հաճույքով պատասխանում էի նրանց: Դա մի արբեցում էր, որով լցված էին նրանք, ոչ երբեք ճակատագրի կամոք, բայց արբեցումը ազատարար էր, այդ պատճառով էլ՝ հուզիչ, նրանք բոլորն իրենց այդ կարճառոտ, հուզախանդ հայացքը հառել էին ճակատագրի աչքերին:

Արդեն գրեթե ձմեռ էր, երբ ես ռազմադաշտ եկա:

Սկզբում ես, չնայած փոխհրաձգության զգայացունց պատկերներին, հուսախաբ եղա: Առաջներում ես հաճախ էի այդ մասին մտածել, թե ինչու՞ մարդս այդքան հազվադեպ է կարողանում ապրել մի իդեալի համար: Հիմա տեսնում էի, որ շատ շատերը, բոլոր-բոլոր մարդիկ ընդունակ էին իդեալի համար մեռնելու: Միայն թե դա չպետք է անձնական, ազատ ընտրության իդեալ լիներ, այլ մի համընդհանուր ու հանձնառու մեկը:

Ժամանակի ընթացքում սակայն համոզվեցի, որ ես թերագնահատել էի մարդկանց: Ինչքան շատ էր ծառայությունն ու համընդհանրական վտանգը նրանց միավորում, այնքան ես ավելի հաճախ էի տեսնում շատ-շատերի՝ ապրողների ու մահացողների, ճակատագրի կամքին փառահեղ մերձեցումը: Շատ-շատերը, ոչ միայն հարձակման ժամանակ, այլ ցանկացած պահի հաստատուն, դեպի հեռուն ուղղված, ասես փոքր-ինչ համակված հայացք ունեին, որ ոչինչ չգիտեին նպատակների մասին և մի բան էր միայն նշանակում՝ կատարյալ նվիրվածություն հրեշավոր սարսափին: Թող նրանք հավատային ու մտածեին, թե իսկապես ինչ էին իրենք ուզում, նրանք միշտ պատրաստ էին, օգտագործելի էին նրանք, նրանցից ապագան էր կազմավորվելու: Եվ ինչքան ավելի համառորեն էր աշխարհը դիրքավորված թվում գեպի պատերազմն ու հերոսականությունը, պատվախնդրությունն ու մյուս-

մյուս հնավանդ իդեալները, ինչքան ավելի հեռու ու անհավանական էր հնչում կարծեցյալ մարդկայնության յուրաքանչյուր ձայնը, այդ ամենը միայն մակերեսն էր շոշափում, ինչպես որ պատերազմի արտաքին ու քաղաքական նպատակների խնդիրն էր հենց միայն մակերեսին մնում: Խորքում կար մի բան՝ դառնալիության վիճակում: Նոր մարդկության պես մի ինչ-որ բան: Որովհետև ես շատերին էի կարողանում տեսնել, նրանցից ոմանք մահանում էին իմ կողքին, նրանք, որոնց համար գիտակցություն ասած բանը զգացական էր դարձել, որոնց համար ատելությունն ու կատաղի մոլուցքը, մարդասպանությունն ու ոչնչացումը կոնկրետ առարկաների հետ կապ չունեին: Ո՛չ, առարկաները, ինչպես որ նպատակները, միանգամայն պատահական են: Նախասկզբնական զգացմունքները, նաև ամենավայրենի տեսակի, թշնամուն չէին վերաբերում, նրա արյունոտ գործը միայն ներքինի արտահեղումն էր, իր մեջ երկփեղկված հոգու, որն ուզում էր մոլեգնությամբ սլանալ, մահ սփռել ու սպանել, ոչնչացնել ու մեռնել, որպեսզի վերստին ծնվել կարողանա: Մի հսկայական թռչուն կռիվ էր տալիս ձվի հետ, և ձուն աշխարհն էր, և աշխարհը պետք է ավերակների վերածվեր:

Մեր գրաված ագարակի առաջ, նախագարնանային մի գիշեր, ես պահակ էի կանգնել: Քմահաճ դեզերի միջով մի թույլ քամի էր անցնում, բարձր, ֆլանդրական երկնակամարում սրարշավում էին ամպերի զորաշարքերը, նրանց ետևում, ինչ-որ տեղ, լուսնի մի նախազգացում կար: Ողջ օրվա ընթացքում ես անհանգիստ ապրումներ էի ունեցել, մի ինչ-որ հոգս վրդովում էր ինձ: Հիմա, իմ խավար ժամապահության ընթացքում, ես սրտագինս կարոտով մտածում էի իմ մինչայժմյան կյանքի պատկերների մասին, տիկին Եվայի, Դեմիանի: Ես կանգնել էի՝ հենված բարդու բնին ու սևեռումով նայում էի շարժվող երկնքին, որի ծածուկ ցնցվող լուսավորումները շուտով մեծդի, ուռչող պատկերների հերթափոխի էին վերածվելու: Իմ երակազարկի տարօրինակ նրբության մեջ, քամու ու անձրևի հանդեպ իմ մաշկի անզգայության մեջ, առկայծող ներքին արթնության մեջ ես զգում էի, որ մի առաջնորդ կար իմ կողքին:

Ամպերի մեջ մի մեծ քաղաք էր երևում, որից միլիոնավոր մարդիկ էին դուրս թափվում՝ տարածվելով ընդարձակ բնանկարի երազային հեռաստանում: Նրանց մեջտեղում մի հզոր աստվածային կերպարանք հայտնվեց, մազերի մեջ առկայծող աստղերով, վիթխարահսկա՝ ինչպես լեռը, տիկին Եվայի ուրվագծերով: Նրա մեջ սահեցին-անհետացան մարդկանց խմբերը, ինչպես հրակայական քարանձավի խոռոչի մեջ, ու իսպառսպուռ կորսվեցին: Աստվածուհին կուչ էր եկել էր գետնի վրա, պայծառ շողշողում էր խարանակիր նշանը նրա ճակատին: Մի երազ թվաց թե տիրա-

պետություն ուներ նրա վրա, նա փակեց աչքերը, և նրա մեծդի կերպարանքը ծռմռվում էր անտանելի ցավից: Հանկարծ նա բարձր ճչաց, և նրա ճակատից ճայթելով՝ տրաք-տրաք եղան, պայթեցին աստղերը, հարյուր-հազարավոր լուսաչող աստղեր, որոնք ճախրելու պես տարուբերվում էին սքանչելի կամարների ու կիսաշրջանների մեջ՝ սևմութ երկնքի գլխավերևում:

Աստղերից մեկը պայծառ ու զիլ հնչումով ուղիղ դեպի ինձ էր շառաչում, կարծես ինձ փնտրելիս լիներ: Հետո նա ոռնոց արձակելով՝ ճարճատելով պայթեց՝ հազարավոր մանր կայծերի բաժանվելով, այն իմ միջով պատռելով անցավ, ինձ դեպի վերև քաշեց ու նորից գետնին տապալվեց, շանթ ու որոտմունքով աշխարհը կործանվեց իմ գլխավերևում:

Ինձ գտան բարդու կողքին, հողով ծածկված ու բազմաթիվ վերքերով:

Ես պառկած էի մի նկուղում, թնդանոթները տրաք-տրաք էին գալիս իմ գլխավերևում: Հետո պառկած էի մի սայլակում, որն ինձ քարշ էր տալիս դատարկ ու խորդուբորդ դաշտերի միջով: Ես հիմնականում քնած էի կամ գիտակցությունս կորցրած: Բայց ինչքան ավելի խորն էի քուն մտած լինում, այնքան ավելի ուժգին էի զգում, որ ինչ-որ մի բան քաշում է ինձ, որ ես մի ուժի եմ հետևում, որը տեր ու տիրական էր ինձ վրա:

Ես պառկած էի մի ախոռում՝ ծղոտների վրա, մութ էր, մեկը ձեռքիս դիպավ: Բայց իմ ներքինը ուզում էր շարունակվել, այն ավելի ուժեղ էր ինձ հեռու քաշում: Նորից ես պառկած էի մի սայլակում, ավելի ուշ պատգարակի կամ շարժասանդուղքի վրա, շարունակ ավելի ուժեղ էի ես զգում այն, որ ինչ-որ տեղից կարգադրում էին ինձ, և այլ բան չէի զգում, քան մի ձգտում՝ վերջապես դեպի այնտեղ գնալու:

Այնտեղ ես նպատակիս մոտ էի: Գիշեր էր, ես լիակատար գիտակից վիճակում էի, նույնիսկ էլ ավելի ուժեղ էի զգում այդ ձգտումն ու մղումը իմ մեջ: Հիմա ես պառկած էի մի սրահում, մահիճս գցված էր գետնատարած անկողնում, և զգում էի, որ ես այնտեղ էի, որտեղից որ կանչում էին ինձ: Ես շուրջս նայեցի, ներքնակիս հենց կողքին գցված էր մեկ ուրիշը և ինչ-որ մեկը պառկած էր վրան, նա առաջ էր թեքվել ու ինձ էր նայում: Նա նշանն ուներ ճակատին: Այդ Մաքս Դեմիանն էր:

Ես չէի կարողանում խոսել, նա էլ չէր կարողանում կամ չէր ուզում: Նա միայն ինձ էր նայում: Նրա դեմքին ընկած էր ազդալապտերի ցոլքը, որ կախված էր նրանից վերև՝ պատին: Նա ժպտում էր ինձ.

Անսահմանորեն երկար ժամանակ նա շարունակ ակնդետ իմ աչքերի մեջ էր նայում: Դանդաղորեն նա իր դեմքը մոտեցրեց ինձ՝ մինչև որ մենք գրեթե իրար դիպանք:

- Զինքլեր..., ասաց նա շշնջոցով:

Ես նրան աչքերով նշան արեցի, որ հասկանում եմ իրեն:

Նա նորից ժպտաց, ասես կարեկցելու պես:

- Փոքրիկ տղա...,- ասաց նա ժպտալով:

Նրա բերանը հիմա իմին շատ մոտ էր գտնվում: Կամացուկ նա շարունակեց խոսել:

- Դու դեռ հիշու՞մ ես Ֆրանց Քրոմերին,- հարցրեց նա:

Ես թարթեցի աչքերս նրան ի պատասխան, և դժվարությամբ, բայց նույնպես ժպտացի:

- Փոքրիկ Զինքլեր, զգույշ եղիր... Ես պետք է մեկնեմ: Դու գուցե մեկ անգամ էլ իմ կարիքն ունենաս, Քրոմերի կամ մեկ ուրիշ առիթով: Երբ այդժամ ինձ կանչես, ես այլևս չեմ գա այնպես կոպտորեն ձիու վրա նստած կամ երկաթգծով: Այդժամ դու պետք է քո մեջ՝ ներսդ ունկնդրես, այդժամ դու կնկատես, որ ես քո մեջ եմ, քո ներսում: Հասկանու՞մ ես: Եվ մի բան էլ... Տիկին Եվան ասաց, որ եթե քեզ վատ վիճակում գտնեմ, ապա ես պետք է քեզ նրա կողմից ուղարկված համբույրը փոխանցեմ, որը նա ինձ էր ի պահ տվել... Աչքերդ փակիր, Զինքլեր...

Ես հնազանդ փակեցի աչքերս, մի թեթև համբույր զգացի իմ շրթունքներին, որոնց վրա ես միշտ մի պստլիկ արյուն էի ունենում, որը երբեք չէր ուզում պակասել: Այնուհետև ես քնեցի:

Առավոտյան ինձ արթնացրեցին, պետք է վիրակապերս փոխեին: Երբ ես վերջապես արդեն արթուն էի, արագորեն դեպի հարևան ներքնակը շրջվեցի: Վրան մի անծանոթ մարդ էր պառկած, որին ես երբեք չէի տեսել:

Վիրակապվելը ցավեցնող էր: Ամենը, ինչ դրանից հետո տեղի ունեցավ ինձ հետ, ցավեցնող էր: Բայց երբ երբեմն-երբեմն ես գտնում էի բանալին և ամբողջովին ինքս իմ մեջ՝ իմ ներսը խորասուզվում, այնտեղ, ուր մութ հայելու մեջ ճակատագրի պատկերներն էին ննջում, այդժամ ինձ պետք էր լինում միայն խոնարհվել սև հայելու վրա ու ես տեսնում էի իմ սեփական պատկերը, որն այժմ ամբողջապես Նրա՛ն էր նմանվում, Նրա՛ն, իմ բարեկամին ու առաջնորդին:

ՍԻԴՀԱՐԹԱ

Հնդկական բանաստեղծություն



ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ԲՐԱՀՄԱՆՈՐԴԻՆ

Տան ստվերում, նավակներին մերձ գետափնյա արևի ներքո, խեժառատ անտառի ստվերախիտ թավուտներում, թզենու հովանու տակ հասակ առավ Սիդհարթան, բրահմանի գեղեցկատես որդին, պատանի բազեն, Գովինդայի հետ միասին՝ իր ընկերոջ, բրահմանորդու: Արևն իր շառագույնն էր տալիս նրա ճերմակափառ ուսերին՝ լողանալիս, սրբազան լվացումների ժամանակ, սուրբ զոհաբերումներ մատուցելիս: Մանգոյի այգեստանում ստվերն էր ծորում նրա սևաթույր աչքերի մեջ՝ մանկահասակ տղաների հետ խաղալիս, մոր երգեցողության, սրբազան զոհաբերությունների ժամանակ, իր ամենագետ հոր խրատաբանությունների միջոցին, իմաստունների զրույցներն ունկնդրելիս: Արդեն վաղուց էր Սիդհարթան մասնակցում իմաստունների խոսք ու զրույցին, Գովինդայի հետ խոսքարվեստի մրցույթներում վարժվում էր նա, Գովինդայի հետ միասին վարժվում էր հայեցողությունների արվեստում՝ ինքնախորասուզմանն ի խնդիր: Նա արդեն գիտակցելով ու համրաձայն կարողանում էր Օմն արտաբերել, բառերի բառը, այն համրաձայն արտասանել իր ներսում՝ շունչը պահելով, ապա և համրաձայն արտաշնչումով իր միջից ի դուրս արտաբերել, կենտրոնացած, սևեռուն հոգով, ճակատը լուսաճառագած հստակ մտածության ոգեփայլի մեջ: Նա արդեն կարողանում էր իր էության խորքերում Աթմանը գիտակցել, անխաթարն ու անանցը, տիեզերքի հետ մեկտեղվածը, մեկ դարձածը:

Հրճվանքն էր ծփում նրա հոր սրտում իր որդու համար, ուսյալ, գիտության ծարավի խորագետ մի իմաստուն ու քարոզիչ էր նա տեսնում որդու մեջ բնավորված, մի իշխան՝ բրահմանների մեջ:

Օրհնանքն էր ճախրում նրա մոր կրծքի տակ, երբ նա որդուն էր նայում, տեսնում նրան քայլ գցելիս, նրա նիստուկացը, Սիդհարթային՝ ամրակազմ ու գեղեցիկ, իր բարալիկ ոտքերի վրա ամրաքայլ ընթացողին, ամենակատարյալ պատվարժանությամբ իրեն ողջունողին:

Սերն էր բորբոքվում բրահմանների նորատի դուստրերի սրտերում, երբ Սիդհարթան ընթանում էր քաղաքի նրբափողոցներով, լուսափայլ ճակատով, արքենական հայացքով, բարալիկ կոնքազդրերով:

Սակայն բոլորից ավելի նրան սիրում էր Գովինդան՝ իր բարեկամը, բրահմանորդին: Նա սիրում էր Սիդհարթայի հայացքն ու նրբագեղ ձայնը, սիրում էր նրա քայլվածքն ու շարժուձևերի կատարյալ վայելչագեղությունն ու արժանապատվությունը, սի-

ում էր այն ամենը, ինչ Սիդհարթան ասում էր ու անում, բայց ամենից ավելի սիրում էր նրա հոգին, նրա վեհ ու կրակոտ գաղափարները, վառվռուն կամքը, նրա բարձր կոչումը: Գովինդան գիտեր, որ սովորական բրահման չէր դառնալու իր բարեկամը կամ զոհաբերություններ կատարող ծույլ պաշտոնյա, անեծք ու նզովք չռայլող գծուծ առևտրական, սնափառ ու դատարկախոս ճառասաց, ո՛չ իսկ չարամիտ ու խարդավանող քուրմ, ինչպես որ նա չէր լինելու բարեմիտ ու տխմար մի ոչխար՝ բազմագլուխ հոտի մեջ: Ո՛չ, և սակայն ինքը՝ Գովինդան ևս չէր ցանկանում այդպիսին դառնալ, սովորական մի բրահման, որպիսիք հազարավորները կան: Նա ցանկանում էր հետևել Սիդհարթային, իր սիրելիին, սքանչելիին: Եվ երբ Սիդհարթան օրերից մի օր աստված դառնա, երբ նա երբևիցե մուտք գործի ճաճանչափայլների մոտ, այդժամ Գովինդան կուզենար հետևել նրան՝ որպես նրա բարեկամը, նրա ուղեկիցը, որպես նրա սպասավորն ու նիզակակիրը, նրա ստվերը:

Այսպես բոլորը սիրում էին Սիդհարթային: Բոլորին նա երջանկացնում էր, բոլորին մխիթարում էր նա:

Բայց ինքը՝ Սիդհարթան, երջանկությանն անհաղորդ էր, անմասն՝ մխիթարություն ասածին: Թափառելով թզենյաց այդու վարդագույն կածաններում, նստոտելով հայեցության մարգագետնի լուրթ ստվերներում, ապաշխարության լոգարանում ամենօրյա լվացումներ կատարելով, զոհաբերություններ մատուցելով մանգոյի այգեստանի ստվերահեղց խորաստաններում, շարժուձևերի մեջ՝ կատարյալ առաքինությամբ, բոլորի կողմից սիրված լինելով և բոլորին երջանկացնելով, իր սրտի մեջ, սակայն, նա երջանկություն չէր գտնում: Գետի հոսանուտ ջրերից, գիշերային լուսատուների առկայծումներում, արեգակի ճառագայթների փայլատակումներում այցելում էին նրան երազները, գրոհում անդուլ, հուզախռիվ մտքերը: Անուրջներն ու հոգու տագնապները այցելում էին նրան նաև խնկարկման զոհաբերության ծխաքուլաներից, Ռիգվեդայի ընթերցանությունների չընչառությունից, հին բրահմայական ուսմունքների կաթիլներից:

Սիդհարթան սկսեց տառապել իր մեջ բնավորված անբավարարվածությունից: Նա սկսեց զգալ և հասկանալ, որ իր հոր սերը, իր մոր սերը ու նաև իր ընկերոջ՝ Գովինդայի սերը բավական չեն, որպեսզի մշտնջենապես ու մեկընդմիշտ երջանկացնեն իրեն, խաղաղեցնեն ու բավարարեն իրեն: Նա արդեն կանխազգալու պես սկսել էր հասկանալ, որ իր հարգամեծար հայրն ու իր մյուս ուսուցիչները, իմաստուն ու խորագետ բրահմանները իրեն արդեն իսկ հաղորդել են իրենց իմաստնության մեծագույն ու լավագույն մասը, որ նրանք արդեն լիուլի, բերնեբերան լցրել են իր անհագուրդ անոթը, բայց անոթն այդ ամբողջությամբ դեռ

չէր լցվել, միտքը բավարարված չէր, հոգին՝ խաղաղված, սիրտը մխիթարված չէր: Լվացումները հիանալի էին, բայց եղածը սոսկ ջուր էր, որով մեղքերը չես մաքրի, նրանք չէին հագեցնում հոգու ծարավը, չէին բուժում սրտի տագնապները: Հրաշալի էին սրբազան զոհաբերություններն ու աստվածներին ուղղված աղոթքները, բայց արդյո՞ք այդ ամենը բավարար էր: Արդյոք զոհաբերությունները երջանկություն՞ էին պարգևում: Եվ կամ աստվածներին ուղղված աղոթքները: Իսկապե՞ս աշխարհի արարիչը Պրաջապատին էր: Թե՞ դա Աթմանն էր, Նա, Միակը, համընդգրկուն Եզակին: Արդյոք աստվածնե՞րն էլ արարածներ չեն, ստեղծված ինչպես ես և դու, ժամանակին ենթակա, հպատակ ու անցավոր... Այդ դեպքում արդյոք հարի՞ր էր, արդարացի՞ էր արդյոք, իմաստ ունե՞ր կամ արժե՞ր արդյոք աստվածներին զոհեր մատուցանել: Ուրիշ էլ ու՞մ զոհաբերում մատուցել, ու՞մ երկիր պագանել, եթե ոչ Նրան՝ Միակ-Եզակիին, Աթմանին: Իսկ որտե՞ղ փնտրել Նրան, որտե՞ղ էր բնակվում Աթմանը, որտե՞ղ էր տրոփում նրա հավերժական սիրտը, որտե՞ղ, եթե ոչ սեփական Եսի մեջ, այն ծածուկ, նվիրական խորքի մեջ պարփակ, այն անոչնչացնելիի, այլև անխորտակելիի տիրույթում, որ յուրաքանչյուր ոք կրում է իր մեջ: Բայց որտե՞ղ էր, որտե՞ղ էր այդ Եսը, այդ սրբազնական ներքինը, այդ ամենավերջինը, որ նաև սկիզբն է ամենայն ինչի: Այն ոչ մարմնում է, ոչ արյան մեջ, ոչ մտքում է, ոչ էլ գիտակցության մեջ, ինչպես ամենից իմաստնագույններն են ուսուցանում: Ուրեմն որտե՞ղ է այն: Կա՞ արդյոք մեկ այլ ճանապարհ ներթափանցելու այնտեղ՝ այդ Եսի մեջ, ի՛մ մեջ, Աթմանի մեջ, մի ճանապարհ, որն արժեր որոնել: Ավա՜ղ, ոչ ոք չէր կարող մատնացույց անել, նշել այդ ուղին, ոչ ոք չգիտեր այն, ո՛չ հայրը, ո՛չ ուսուցիչներն ու իմաստունները, ո՛չ էլ սրբազան զոհաբերության երգեցողությունները: Նրանք ամեն ինչ գիտեին՝ բրահմաններն ու նրանց սուրբ գրությունները, ամեն, ամենայն ինչ, նրանք ամեն ինչից քաջատեղյակ էին, նույնիսկ ավելին գիտեին, շատ ավելին, քան նույն այդ ամեն ինչն էր, աշխարհի արարչագործումը, խոսքի ծագումը, կերակուրների, շընչելու և արտաշնչելու առաջացումը, զգացմունքների կարգն ու հարաբերակցությունը, աստվածների արարքները, այսպես նրանք անսահմանորեն շատ բան գիտեին, բայց ի՞նչ արժեք ուներ նրանց այդ գիտցածը, եթե չգիտես, չես ճանաչում Միակն ու Եզակին, կարևորագույնը, միակ կարևորը:

Ճիշտ է, սուրբ գրքերի բազմաթիվ քերթվածներում, հատկապես Սամավեդայի ուպանիշադներում խոսվում է այդ ծածուկ, նվիրականի մասին, նախասկզբնականի, որքա՜ն հրաշալի են այդ քերթվածները... «Քո հոգին ամբողջ աշխարհն է», գրված է այնտեղ ու նաև ասվում է, որ մարդս քնի մեջ, խորը քուն մտած մի-

ջոցին մուտք է գործում իր նվիրական իղձերի խորխորատը՝ իր Եսի մեջ ու այնտեղ ապրում Աթմանի մեջ: Հիասքանչ իմաստնություն է պարփակված այդ քերթվածներում, ամենագիտունների ողջ իմաստնությունն առկա է այստեղ՝ ի մի ժողովված, մոգական խոսքերի մեջ արտահայտված, մաքրամաքուր՝ ինչպես մեղուների հավաքած մեղրը: Ո՛չ, չի կարելի թերագնահատել և մեծագույն հարգանքով չվերաբերվել գիտելիքի այն հսկայական պաշարին, որ ամփոփված է այստեղ՝ իմաստուն բրահմանների անթիվ-անքանակ սերունդների կողմից ժողովված ու պահպանված: Բայց որտե՞ղ են այդ բրահմանները, որտե՞ղ են այդ իմաստնության քուրմերը, բոլոր այդ իմաստուններն ու անձնվեր ճգնավորները, որոնց հաջողվել է ոչ միայն հասու լինել այդ բարձրագույն գիտելիքին, այլև կյանքի կոչել այն: Որտե՞ղ է այն հրաշագործ գիտունը, որն ի զորու էր, քնին անձնատուր եղած միջոցին, Աթմանին իր այդ տրվածությունը փոխադրել արթմնի գոյավիճակի մեջ, կյանքի կոչել, գործողության մեջ դնել այն, վերածել խոսքի ու գործի: Շատուշատ արժանապատիվ բրահմանների էր ճանաչում Սիդհարթան, ամենից առաջ՝ իր հորը, մաքրության մարմնացումին, ամենագետին, արժանապատիվների մեջ ամենապատվարժանին: Երկրպագության արժանի էր իր հայրը, նրա նիստուկացն ու վարքը ներշնչված էին հեզությամբ ու առաքինությամբ, նրա կյանքը մաքուր էր, խոսքն իմաստուն, նրբանուրբ ու ազնվական գաղափարներն էին բնավորված նրա ճակատի ներքո, սակայն նա նույնպես, այդ ամենագետը, արդյոք երանության մե՞ջ էր ապրում, հա՞ճտ էր արդյոք ինքն իր հետ, միթե նա՞ էլ որոնող ու ծարավի մեկը չէր: Արդյոք նա նու՞յնպես, իր իմացության ծարավը հագեցնելու համար, ժամանակ առ ժամանակ չէր դիմում սրբազան սկզբնաղբյուրներին՝ զոհաբերումներին, սուրբ գրքերի մասունքներին, բրահմանների հետ մտքերի փոխանակմանը: Ինչու՞ էր նրան՝ այդ անբասիր ու անպարսավելի մարդուն անհրաժեշտ ամեն օր մեղքերը քավելուն ի խնդիր լվացումների համար հոգ տանել, ամեն օր ողջը նորից ու կրկին վերսկսել: Միթե Աթմանը չի՞ ապրում նրա մեջ, մի՞թե նրա իսկ սրտու՞մ չի հոսում սկզբնաղբյուրը: Հենց նրան, այդ սկզբնաղբյուրն է անհրաժեշտ գտնել սեփական Եսի մեջ, նրա նկատմամբ է հարկավոր տիրապետություն հաստատել: Ողջ մնացյալը սոսկական որոնում է, զարտուղի ոլորանների փնտրտուք, մոլորություն:

Այսպիսին էին Սիդհարթայի մտածությունները, սրանք էին նրան մտատանջում, տառապանք պատճառում:

Հաճախ էր նա արտասանում Ջհանդոգյայի մի ուպանիշադի խոսքերը. «Ճշմարիտ եմ ասում, բրահմանի անունը Սատյամ է, ճշմարտապես, ով հասու է գրան, նա ամենայն օր մտնում է երկ-

նային թագավորությունը»: Հաճախ այդ երկնային աշխարհը, թագավորությունը նրան շատ մոտիկ էր թվում, սակայն ոչ մի անգամ իրեն չէր վիճակվում ամբողջապես հասնել նրան, լիուլի հագուրդ տալ իր ծարավին: Եվ բոլոր իր գիտցած ու ճանաչած իմաստունների ու իմաստնագուններին մեջ, որոնց ուսմունքներին ու խրատներին անսում էր ինքը, չկար մեկը, որ ամբողջովին հասած լիներ այդ երկնային թագավորությանը, լիուլի հագեցրած լիներ իր այդ հավերժական ծարավը:

- Գովինդա,- մի անգամ Սիդհարթան ասաց իր ընկերոջը,- Գովինդա, սիրելիս, հետևի՛ր ինձ, գնանք բանանի ծառի տակ՝ միասին ինքնախորասուզման վարժությամբ պարապենք:

Եվ նրանք ուղևորվեցին դեպի բանանի ծառը, նստոտեցին նրա տակ, այստեղ, ահա՛, Սիդհարթան, նրանից մի քսան քայլ հեռավորության վրա՝ Գովինդան: Սիդհարթան՝ նստելով ծառի տակ, Օմը արտաբերելուն պատրաստ, շշնջաձայն արտասանեց բանաստեղծությունը.

Օմը աղեղն է, հոգին՝ նետը,
Բրահման՝ նետի նպատակը,
Թիրախին դու պետք է անվրեպ խփես:

Երբ ինքնախորասուզման վարժանքին հատկացված ժամանակն իր լրումին հասավ, Գովինդան ոտքի կանգնեց: Արդեն երեկոն իջել էր և ժամանակն էր անցնելու երեկոյան լվացումներին: Նա ձայնեց Սիդհարթային: Սիդհարթան որևէ կերպ չարձագանքեց: Նա նստած էր՝ ամբողջովին ինքնախորասուզված, նրա հայացքն անշարժացած, սևեռված էր հեռու-հեռավոր մի կետի, նրա լեզվի ծայրը դուրսն-ինչ դուրս էր ցցված ատամների արանքից, և կարծես չէր շնչում: Այսպես նստած էր նա, խորասուզված հայեցումի մեջ, Օմը առմտածելով, նրա հոգին որպես մի նետ նպատակաուղղված էր դեպի բրահման:

Օրերից մի օր սամանաներն էին անցնում այն քաղաքով, ուր Սիդհարթան էր ապրում: Դրանք ուխտագնաց ճգնավորներ էին, երեք չորացած, հանգած տղամարդիկ, ո՛չ ծեր, ո՛չ երիտասարդ, փոշեծածկ ու արյունամած ուսերով, գրեթե մերկանդամ, արևից շոգեվառված, մենակությամբ շուրջառված, աշխարհի հանդեպ օտար ու թշնամանքով լեցուն, օտարոտի ու վտիտ շնագայլեր՝ մարդկանց աշխարհում: Համրախոս կրքի տաք շնչառությունն էր փչում նրանցից, հյուծախտավոր աշխարհաթողությունն ու անկարեկից ինքնահրաժարումը:

Երեկոյան, ինքնահայեցումի ժամից հետո, Սիդհարթան խոսքն ուղղեց առ Գովինդան.

- Առավոտյան վաղ, բարեկամս, Սիդհարթան կմիանա սամանաներին: Նա ինքն էլ սամանա կդառնա:

Գովինդան գունատվեց՝ այդ խոսքերը լսելուն պես և իր բարե-

կամի անշարժացած հայացքում կարդաց անտեղիտալի վճիռը, անկասելի՝ ինչպես աղեղից արձակված նետը: Անմիջապես, առաջին իսկ հայացքից Գովինդան մեկընդմիշտ հասկացավ. ահա՛, սկսվեց, հիմա արդեն Սիդհարթան ոտք է կոխում իր ճանապարհը, նրա ճակատագիրն արդեն իր ընթացքի մեջ է մտնում, նրա հետ էլ՝ իմը: Եվ նա գունատվեց՝ ինչպես բանանի չորուկ կեղևամաշկը:

- Ո՛վ Սիդհարթա,- կանչեց նա,- թույլ կտա՞ արդյոք քո հայրը:

Սիդհարթան հայացքը նրան ուղղեց՝ ասես քնից նոր-նոր արթնացած: Նետընթաց արագությամբ նա կարդաց, թե ինչ էր կատարվում Գովինդայի հոգում, կարդաց նրան պաչարած սարսափը, նրա հնազանդ համակերպությունը:

- Ո՛վ Գովինդա,- ցածրաձայն խոսեց նա,- եկ դատարկ բաների վրա խոսքեր չշռայլենք: Վաղն առավոտյան, լույսը ծագելուն պես, ես կսկսեմ իմ սամանայական կյանքի շրջանը: Այդ մասին այլևս ոչ մի խոսք:

Սիդհարթան մտավ այն սենյակը, ուր կեղևաթելից հյուսկեն խսիրի վրա նստած էր իր հայրը, անցավ հոր հետևը և մնաց այնտեղ կանգնած այնքան ժամանակ, մինչև որ հայրը զգաց, որ ինչ-որ մեկը կանգնած է իր թիկունքում: Ու բրահմանն ասաց.

- Դու՞ ես, Սիդհարթա: Դե խոսի՛ր, ինչի համար որ եկել ես:

Սիդհարթան ասաց.

- Քո թույլտվությամբ, հա՛յր իմ: Ես եկել եմ ասելու քեզ, որ ցանկանում եմ առավոտյան լքել քո տունը և ընկերանալ ճգնավորներին: Իմ սիրտն ինձ մղում է սամանա դառնալ: Ես շատ կուզենայի, որ հայրս դրան չընդդիմանար:

Բրահմանը լռեց, լռեց այնքան ժամանակ, որ փոքրիկ պատուհանի մեջ առկայծող աստղերը տեղաշարժվեցին ու փոխեցին իրենց դասավորությունը, մինչև որ սենյակում շարունակվող տեվական լռությունն իր ավարտին հասավ: Համրացած ու անշարժ կանգնած էր որդին՝ ձեռքերը խաչակնքած, համրացած ու անշարժ նստած էր խսիրի վրա հայրը, և աստղերը շարունակում էին իրենց համրաքայլ ընթացքը երկնակամարում: Հանկարծ հայրը խոսեց.

- Բրահմաններին վայել չէ խիստ ու զայրացկոտ խոսքեր ասել: Սակայն անկամորդ զայրույթն է ցնցում իմ սիրտը: Ես չէի ցանկանա այդ խնդրանքը երկրորդ անգամ լսել քո շուրթերից:

Դանդաղ նստած տեղից վեր բարձրացավ բրահմանը, Սիդհարթան լուռումունջ կանգնած էր՝ խաչած ձեռքերով:

- Էլ ինչի՞ ես սպասում,- հարցրեց հայրը:

Սիդհարթան վրա բերեց,- Դու շատ լավ գիտես...

Զայրույթը սրտում՝ հայրը դուրս եկավ սենյակից, մոլեգնու-

թյան մեջ որոնեց-գտավ իր անկողինն ու ընկողմանեց:

Մեկ ժամ անց, քանի որ այդպես էլ քուն չիջավ նրա աչքերին, բրահմանը վեր կացավ, ետուառաջ քայլեր գցեց ու դուրս եկավ տնից: Սենյակի փոքրիկ պատուհանից նա ներս նայեց, այնտեղ նա տեսավ Սիդհարթային՝ նախկին դիրքով կանգնած, ձեռքերը խաչած, անդրդվելիորեն անշարժացած: Մթնշաղի մեջ գունատ կայծկլտում էր նրա լուսավոր վերնազգեստը: Ջայրությունը սրտում՝ հայրը վերադարձավ իր ննջատեղին:

Մեկ ժամ էլ չէր անցել, քանի որ այդպես էլ քուն չիջավ նրա աչքերին, բրահմանը նորից վեր կացավ, ետուառաջ քայլեց, տնից դուրս եկավ ու տեսավ, որ լուսինը հայտնվել է: Սենյակի պատուհանից նա ներս նայեց, այնտեղ կանգնած էր Սիդհարթան՝ անշարժացած ու անդրդվելի, խաչված ձեռքերով, լուսնի լույսն էլ վետվետում էր նրա մերկ սրունքներին: Մտահոգ սրտով հայրը վերադարձավ իր քնարանը:

Այսպես նա նորից եկավ մեկ ժամից, հետո էլ՝ երկու ժամից, նայում էր պատուհանի մեջ, ուր կանգնած էր Սիդհարթան՝ լուսնաթաթախ, աստղալույսի ու խավարի մեջ ողողված: Հետո ժամեր անց շարունակ գալիս էր նա, լռելյայն նայում սենյակից ներս, տեսնում անդրդվելիորեն կանգնածին, նրա սիրտը զայրույթով էր լցվում, տագնապում էր նրա սիրտը, լցվում ցավ ու կարեկցանքով:

Եվ տվնջյանը նախորդող վերջին գիշերաժամին, մինչ օրը կսկսվեր, նա կրկին վերադարձավ, ներխուժեց սենյակ ու տեսավ պատանուն նույն դիրքում կանգնած, որն այս անգամ նրան թվաց ավելի մեծացած ու օտարոտի:

- Սիդհարթա,- ասաց նա,- էլ ինչի՞ ես սպասում:
- Դու լավ գիտես:
- Դու այդպես մնալու ես կանգնած ու սպասելու ես մինչև օրը բացվի, հետո կեսօր լինի ու երեկոն իջնի՞:
- Ես կանգնած կմնամ ու կսպասեմ:
- Դու կհոգնե՞ս, Սիդհարթա:
- Կհոգնե՛մ:
- Դու կհանգչե՞ս մահագուշակ թմբիրի մեջ, Սիդհարթա:
- Ո՛չ, ես թմբիրին չեմ տրվի:
- Դու կմահանա՞ս, Սիդհարթա:
- Ես կմահանա՛մ:
- Դու նախընտրում ես մահանալ, քան թե հո՞րդ հնազանդվել:
- Սիդհարթան միշտ էլ հնազանդ է եղել իր հորը:
- Ուրեմն դու հրաժարվու՞մ ես քո նկրտումից:
- Սիդհարթան կանի այնպես, ինչպես հայրը կկարգադրի:

Օրվա առաջին լույսի ծվենն ընկավ սենյակից ներս: Բրահմանը նկատեց, որ Սիդհարթայի ծնկները թեթևակի դողում են:

Բայց Սիդհարթայի դեմքին նա դող չտեսավ, աչքերը նայում էին հեռուն: Հանկարծ հայրը հասկացավ, որ Սիդհարթան այս պահից ի վեր այլևս իր հետ չէ և հեռացել է հայրենի տնից, որ նա այլևս լքել է իրեն:

Հայրը ձեռքով դիպավ Սիդհարթայի ուսին:

- Դու անտառ կգնաս,- ասաց նա,- ու սամանա կդառնաս: Եթե անտառում դու երանություն գտնես, ե՛կ և ինձ էլ սովորեցրու այն: Եթե հուսախաբություն ճաշակես, վերադարձիր և մենք նորից միասին զոհեր կմատուցենք աստվածներին: Դե հիմա գնա, համբուրիր մորդ, ասա նրան ուր ես գնում: Իսկ ինձ համար ժամ է արդեն իջնելու գետափ ու առաջին լվացումը կատարել:

Նա ձեռքը ետ տարավ որդու ուսից ու դուրս եկավ: Սիդհարթան մի պահ երերաց, երբ փորձեց առաջին քայլն անել: Բայց նա տիրապետություն հաստատեց իր անդամների վրա, խոնարհվեց հոր առաջ և ուղևորվեց մոր մոտ՝ անելու ու ասելու համար այն, ինչպես որ հայրն էր կարգադրել:

Երբ օրվա առաջին լույսի բացվելուն պես՝ անզգայացած ու ընդարմացած ոտքերով, դեռևս քնի մեջ ընկղմված նա քաղաքն էր լքում, վերջին խրճիթի սովերների միջից պոկվեց ու ուխտավորին միացավ մի աղոտ նշմարելի կերպարանք, որ Գովինդան էր:

- Դու եկար,- ասաց Սիդհարթան ու ժպտաց:

- Ես եկա,- ասաց Գովինդան:

ՍԱՄԱՆԱՆԵՐԻ ՄՈՏ

Նույն օրվա երեկոյան նրանք հասան ճգնակյացներին՝ չորացած սամանաներին և առաջարկեցին իրենց նրանց ուղեկիցն ու հնազանդ աշակերտները դառնալ:

Նրանց առաջարկն ընդունելության արժանացավ:

Սիդհարթան իր հանդերձանքը նվիրեց փողոցում պատահած մի աղքատ բրահմանի: Իր մարմնի վրա Սիդհարթան կրում էր միայն ամոթուջքի ծածկագոտին և որպես պարզ ծածկոց ծառայող հողագույն, ցանցկեն մի ձորձ: Նա այժմ օրական միայն մեկ անգամ էր սնվում, ընդ որում՝ եփած կերակուր բնավ չէր ընդունում: Տասնհինգ օր շարունակ նա ծոմ պահեց: Հետո էլ՝ քառասուն օր անընդմեջ ծոմ պահեց նա: Նրա մարմինը նվազեց-հյուծվեց, այտերը ներս ընկան: Կիզիչ անուրջները կրակի քուլաների պես դուրս հորդացին նրա լայնացած ակնախոռոչներից, չորությունից ճաքճքած նրա մատներին երկարուկ եղունգներ էին աճել, կզակը պատվել էր չորուկ, գզգզված մորուքով: Նրա հայացքը կարծրանում էր կանանց հանդիպելիս, շրթունքները ծամածռվում էին նողկանքի զգացումից, երբ նա անցնում էր քաղաքի փողոցներով՝ գեղեցիկ հագնված մարդկանց հարևանու-

թյամբ: Նա տեսնում էր վաճառականներին՝ առևտուր անելիս, իշխաններին՝ որսի շտապելիս, մահացածների վրա սգացող հարազատներին, իրենց փաղաքշանքներն առաջարկող պոռնիկներին, հիվանդի համար հոգացող բժիշկների, քուրմերի, որ հունձքի ժամանակն են որոշում, իրար սիրատածող ու փաղաքուշ սիրահարների, նորածիններին կերակրող մայրերի, և ոչինչ, ոչինչ նա արժանի չէր համարում իր հայացքին, այդ ամենը սուտ էր, խաբեություն, ողջը գարշահոտող կեղծիք էր, ողջը միայն թվացյալ իմաստ էր պարունակում, կեղակարծ երջանկություն ու գեղեցկություն, ողջը բուրում էր անգիտակից փտախտով ու նեխահոտությամբ: Դառնապատիր համ ուներ աշխարհը: Ողբ ու տառապանք էր կյանքը:

Մի նպատակ էր կանգնած Սիդհարթայի առաջ, մեն մի նպատակ. դատարկվել ամեն ինչից, իր միջից դուրս մղել ամենայն ձգտում ու ցանկություն, ձերբազատվել երազներից, հրաժարվել ուրախություններից ու տառապանքից: Ինքն իրենից հեռանալ-անէանալ, դադարել սեփական եսը զգալուց, դատարկված սրտի համար հանգիստ գտնել, ինքնաձերբազատված ու ինքնօտարված մտքի մեջ պատրաստ լինել ընդունելու հրաշքը, սա՝ էր նրա նպատակը: Երբ ողջ եսը հաղթահարված ու մահացած լիներ, երբ արտում բույն դրած բոլոր ցանկություններն ու մղումները մարած լինեին, այդժամ արդեն պետք է ծնունդ առներ այն ամենակատարյալը, այն նվիրական բանը, որն այլևս եսը չէ, մեծահսկա դաղտնիքը:

Լռելյայն կանգնած էր Սիդհարթան արեգակի ուղղաձիգ ընկնող ճառագայթների ներքո, ցավից այրվելով, ծարավից տոչորվելով, և կանգնած մնաց այնքան ժամանակ, մինչև որ դադարեց այլևս ոչ ցավ զգալ և ոչ էլ ծարավ: Լուռումունջ կանգնած էր նա հորդառատ թափվող անձրևի տեղատարափի տակ, նրա մազերից ջուրն էր ծորում՝ սառցակալող ուսերն ի վար, ցրտահարված կոնք ու ոտքերից սահում ցած, ապաշխարողն անշարժացած կանգնել էր, մինչև որ ուսերն ու ոտքերը այլևս դադարեցին մրսել, ասես անզգայացան ու խաղաղություն իջավ նրանց վրա: Լռելյայն պպզում էր նա փշաստատակավոր թփերի մեջ, շոգեխաշված մաշկից արյունն էր կաթիլ-կաթիլ ծորում, թարախակալած պալարներից շարավն էր արտասորում, բայց Սիդհարթան շարունակում էր նույն դիրքում նստած մնալ, ասես քարացած լիներ ու անշարժացած, մինչև որ արյունն այլևս դադարեց հոսելուց, ոչինչ այլևս չէր ծակում, ոչինչ չէր այրում:

Սիդհարթան նստել էր ուղղաձիգ դիրք ընդունած և սովորում էր շնչառությունը խնայել, սովորում էր նվազ շնչառությամբ բավարարվել, ապա և ընդհանրապես կանգնեցնել շնչառությունը: Շնչառությանը զուգահեռ նա միաժամանակ վարժվում էր

հանգստացնել սրտի խփոցները, պակասեցնել դրանք՝ հասցնելով նվազագույնի, մինչև որ սիրտը գրեթե կանգ առնելու աստիճան դադարեր տրոփելուց:

Ավագ սամանաներից ուսանելով՝ վարժվում էր Սիդհարթան ինքնահրաժարման արվեստին, ինքնախորասուզմանը, սամանայական նոր կարգերին: Մի ձկնկուլ թռավ բամբուկի անտառի վրայով, և Սիդհարթան ընդունեց ձկնկուլին իր հոգու մեջ, թռավ-անցավ անտառի ու սարերի վրայով, դարձավ ինքն էլ մի ձկնկուլ, որ խժռում էր գորտերին, տառապում էր ձկնկուլների սովով, խոսում էր՝ ընդօրինակելով ձկնկուլների կռկռոցը, մահանում ձկնկուլների մահով: Մի սատկած շնագայլ էր պառկած ավազուտ ափին և Սիդհարթայի հոգին սահեց նրա դիակի մեջ, դարձավ շունչը փչած մի շնագայլ, որ պառկել էր ծովեզերին, ուռչել-փքվել, գարշահոտում էր ու ապականում շուրջբոլորը, հետո բորենիների կողմից պատառոտվեց, ցին-ուրուրների կողմից մաշկազերծ արվեց, կմախքի վերածվեց, դարձավ փոշի ու տարածվեց արձակ դաշտերի մեջ: Հետո Սիդհարթայի հոգին վերադարձավ, մահացավ, ապականություն սփռեց, փոշիացավ, շրջապտույտի պղտոր հափշտակության մեջ բույրն իր արձակեց և դարանակալ սպասում էր՝ նորանոր բացահայտումների կարոտ, ինչպես որսորդն է գիրքավորվում դատարկ սպասումին տրված, ուր հարկ էր շունչը պահել ու արյան շրջանառությունը կանգնեցնել, ուր սկիզբ էր առնում պատճառներից ու տառապանքից զերծ հավերժությունը: Նա սպանում էր իր մեջ ծնունդ առնող մտքերը, սպանում էր հիշողությունը, նա ճողոպրում էր իր եսից՝ հազարավոր օտար կերպարանքներ ընդունելով, դառնալով մեկ գազան, մեկ մեռելոտի, քար ու փայտ, դառնում էր ջուր, և ամեն անգամ արթնանալով վերադառնում էր իրեն, թվում էր մերթ արև ու մերթ էլ լուսին, հետո վերադառնում էր իր եսին, տարուբերվում շրջապտույտի ոլորաններում, ծարավից տոչորվում, հաղթահարում էր այն, հետո նորից ծարավի մատնվում:

Շատ բան սովորեց Սիդհարթան սամանաների մոտ, ուսանեց շատուշատ ճանապարհներ, որ մարդուս սովորեցնում էին հեռանալ սեփական եսից: Ինքնահրաժարման ճանապարհը նա անցնում էր ցավի միջով, կամավոր տառապանքի տրվելու ու ցավի հաղթահարման միջոցով, հաղթահարելով սովը, ծարավն ու հոգնությունը: Եսից հրաժարման ճանապարհը նա անցնում էր հայեցողական վարժանքների միջոցով, բազմապեսակ պատկերացումներին ու իմաստներին մտահաստ էր լինում անամեջ առմբտածումներին ապավինելով: Այս և մյուս ճանապարհներով նա սովորում էր ընթանալ, հազարավոր անգամներ նա լքեց իր եսը, ժամեր ու օրեր շարունակ նա տևականորեն մնաց ոչ-եսի մեջ: Սակայն որքան էլ ճանապարհները հեռացնում էին եսից, վերջի-

վերջո նրանք մշտապես գալիս-դեմ էին առնում այդ նույն եսին: Որքան էլ Սիդհարթան հազարավոր անգամներ խուսափեր իր եսից, միառժամանակ բնակություն հաստատելով ոչնչի մեջ, կենդանու կամ քարի մեջ, վերադարձն անխուսափելի էր, անխուսափելի էր ժամը, երբ նա վերադտնում էր ինքն իրեն՝ արեգակի կամ լուսնի ճառագայթների ներքո, ստվերներում կամ անձրևի տակ, կրկին վերստանալով ինքն իրեն, դառնալով նույն Սիդհարթան, վերստին զգայելով նախասահմանված շրջապտույտի տառապանքների շղթան:

Նրա կողքին ապրում էր Գովինդան, իր ստվերը, անցնում էր նույն ճանապարհը, ենթարկվում միևնույն կտտանքերին: Հազվադեպ էին նրանք իրար հետ զրուցում այնպիսի բաների մասին, որոնք ծառայության ու վարժանքների պահանջներից անդին էին: Երբեմն-երբեմն երկուսով անցնում էին գյուղերի միջով՝ իրենց ու իրենց ուսուցիչների համար կերակուր մուրալու նպատակով:

- Ի՞նչ ես դու մտածում, Գովինդա,- իրենց այդ մուրացկանության ուղևորություններից մեկի ժամանակ հարցրեց Սիդհարթան,- ի՞նչ ես կարծում, արդյո՞ք մենք առաջ ենք գնացել: Հասե՞լ ենք մեր նպատակին:

Գովինդան պատասխանեց ու ասաց,- Մենք սովորեցինք և շարունակում ենք սովորել: Դու մեծ սամանա կդառնաս, Սիդհարթա: Դու շատ արագ յուրացրիր բոլոր խստավարժանքները, ծեր սամանաները հաճախակի զարմացք ապրեցին քո առիթով: Դու սուրբ կդառնաս, ո՜վ Սիդհարթա:

Ասաց Սիդհարթան,- Ինձ այդպես չի թվում, բարեկամս: Այն, ինչը ես այս օրերին սովորեցի սամանաների մոտ, ո՜վ Գովինդա, այդ ամենը շատ արագ ու հեշտությամբ կարող էի ինքնուրույն էլ սովորել: Գառնկական թաղամասի յուրաքանչյուր պանդոկում, բարեկամս, կառապանների ու վեգ խաղացողների շրջապատում ես այդ ամենը կսերտեի:

Ասաց Գովինդան,- Սիդհարթան անշուշտ կատակում է ինձ հետ: Ինչպե՞ս դու կարող էիր ինքնախորասուզումը, շնչառության պահումը, ոսվի ու ցավի նկատմամբ անզգայունակությունը սովորել այդ առուապյալների մոտ:

Եվ Սիդհարթան կամացուկ ասաց, ասես ինքն իր հետ խոսելիս լիներ.

- Ի՞նչ է ինքնախորասուզումը: Ի՞նչ ասել է մարմնից հրաժարումը: Ի՞նչ է ծոմ պահելը կամ ի՞նչ ասել է շնչառության կանգառումը: Դա փախուստ է եսից, դա մի կարճատև փախուստ է սեփական եսի կեցության տառապանքներից, կյանքի անիմաստության ու ցավի հանգեպ մի կարճաժամկետ ինքնաթմրեցում: Այդ նույն փախուստը, այդ նույն ժամանակավոր ընդարմացու-

մը եզնարածը գտնում է իշևանատանը, երբ նա մի քանի գավաթ բրնձագինի է ըմբոշխնում կամ էլ՝ եփ գալուց թթվեցված կոկոսի կաթ: Այդժամ նա այլևս իր եսը չի զգում, այդժամ նա այլևս չի զգում կյանքի տառապանքները, այդժամ նա ժամանակավորապես ընդարմացում է գտնում: Բրնձագինու գավաթի վրա նիրհած միջոցին նա գտնում է նույն բանը, ինչ Սիդհարթան ու Գովինդան են գտնում, երբ երկարատև վարժանքների արդյունքում նրանք հեռանում են իրենց մարմնավոր թաղանթից և բնակություն հաստատում ոչ-եսի մեջ: Այսպես է հարցը դրված, ո՛վ Գովինդա:

Եվ ասաց Գովինդան.

- Հիմա դու այդպես ես խոսում, ո՛վ բարեկամ, սակայն շատ լավ գիտես, որ Սիդհարթան բնավ էլ եզնարած չէ և ոչ էլ սամանան՝ հարբեցող: Ճիշտ է, հարբեցողը ընդարմացում է գտնում, ճիշտ է, նա ժամանակավոր ապաստարան ու հանգիստ է գտնում, բայց նրա ինքնախաբկանքը շուտով ցնդում-անցնում է ու նա վերստին հայտնվում է իր նախկին վիճակում, դրանից նա ավելի իմաստուն չի դառնում, ճանաչողական գիտելիքներ չի հավաքում, ավելի բարձր աստիճանի չի բարձրանում:

Եվ Սիդհարթան ժպիտով պատասխանեց դրան.

- Ես չգիտեմ, ես երբեք հարբեցող չեմ եղել: Բայց այն, որ ես՝ Սիդհարթաս, իմ վարժանքներում ու ինքնասուզումներում միայն կարճ ժամանակով եմ ընդարմացում գտնում և նույնքան հեռու եմ գտնվում իմաստնությունից ու փրկությունից, ինչպես որ մորս որովայնում պահ տված երեխայության միջոցին, դա ես գիտեմ, Գովինդա, ես դա գիտեմ:

Մեկ ուրիշ անգամ էլ, երբ Սիդհարթան Գովինդայի հետ լքեց անտառը՝ գյուղերից մեկում իրենց եղբայրների ու ուսուցիչների համար մի քիչ կերակուր մուրալու նպատակով, Սիդհարթան սկսեց խոսել և ասաց.

- Հիմա՞ ինչ կասես, Գովինդա, հիմա մենք ճշմարիտ ճանապարհի վրա՞ ենք: Այժմ արդեն մենք ընդհուպ մոտեցե՞լ ենք ճանաչողությանը, բարձրագույն գիտակցությանը: Մոտեցե՞լ ենք արդյոք փրկությանը: Իսկ գուցե մենք բնավ էլ շրջանակի մեջ չենք ընթանում, մենք, որ շրջապտույտից ազատվել, փախչել էինք մտածում:

Գովինդան պատասխանեց և ասաց.

- Մենք շատ բան սովորեցինք, Սիդհարթա, բայց դեռ շատ բաներ էլ կան սովորելու: Մենք շրջանակի մեջ չենք ընթանում, մենք դեպի վերև ենք ընթանում, շրջանակը մի ոլորապտույտ պարույր է, որոշ աստիճաններ մենք արդեն բարձրացել ենք:

Պատասխանեց Սիդհարթան.

- Ի՞նչ տարիքի կլինի, քո կարծիքով, մեր ամենատարեց սամա-

նան, մեր պատվարժան ուսուցիչը:

Խոսեց Գովինդան.

- Ամենածեր սամանան գուցե կլինի մի վաթսուն տարեկան:

Սիդհարթան վրա բերեց.

- Նա արդեն բոլորել է իր վաթսուն տարին, բայց Նիրվանային դեռ չի հասել: Նա կդառնա յոթանասուն տարեկան, ապա և ութսուն, ես ու դու էլ, մենք ևս կծերանանք ու կշարունակենք վարժանքներ կատարել, ծոմ պահել ու մեդիտացիաներ անել: Բայց Նիրվանային մենք չենք հասնի, ո՛չ նա, ո՛չ էլ մենք: Ո՛վ Գովինդա, ես կարծում եմ, որ գոյություն ունեցող բոլոր սամանաներից գուցե և ոչ ոք, ո՛չ մեկը Նիրվանային չի հասնի: Մենք գտնում ենք մխիթարություններ, սփոփանք, մենք գտնում ենք ընդարմացումներ, ուսանում հմուտ ճարտարություններ, որոնցով ինքներս մեզ խաբում ենք: Սակայն ամենակարևորը՝ ուղիների ուղին, մենք այդպես էլ չենք գտնում:

- Դու չե՞ս կարող,- խոսեց Գովինդան,- այդօրինակ սարսափելի բառեր չարտասանել, Սիդհարթա... Ինչպե՞ս կարող է պատահել, որ այդքան գիտուն այրերի մեջ, այդքան բրահմանների, այդքան շատուշատ կորովի ու արժանապատիվ սամանաների մեջ, այդքան որոնողների, եռանդուն ինքնասույզների թվում, այդքան սուրբ մարդկանց մեջ ոչ ոք ուղիների ուղին չգտնի:

Սիդհարթան սակայն խոսեց մի այնպիսի ձայնով, որն իր մեջ այնքա՛ն տխրություն ու ինքնահեգնանք էր պարունակում, անչափ կամացուկ, փոքր-ինչ տխուր, մի քիչ էլ ծաղրական ու հեգնախառն հնչերանգով.

- Շուտով, Գովինդա, քո բարեկամը կթողնի սամանաների այս ուղին, որը նա այս էլ այսքան երկար ժամանակ քեզ հետ միասին անցել է: Ես տոչորվում եմ ծարավից, ո՛վ Գովինդա, և այս երկարաձիգ սամանայական ուղում իմ ծարավը դույզն-ինչ չպակասեց: Ես մշտապես ծարավի եմ եղել առ ճանաչողությունը, ես մշտապես հարցականներով լեցուն եմ եղել: Ես հարցափորձ եմ արել բրահմաններին, տարիներ շարունակ, հարցախուզել սուրբ Վեդաներին, նույնպես տարիներ շարունակ, հեզաբարո սամանաներին եմ հարցումներ ուղղել, երկար ու ձիգ տարիներ շարունակ: Գուցե, ո՛վ Գովինդա, նույնքան լավ և ճիշտ կլիներ, նույնքան խելամիտ ու կազդուրիչ կլիներ, եթե ես ունգեղջյուրթուչունին կամ շիմպանզեներին հարցախույզ արած լինեի: Երկար ժամանակ ինձանից պահանջվեց և դեռ վերջին չեմ հասել այս մեն-միակ բանը հասկանալու համար, ո՛վ Գովինդա. այն, որ հնարավոր չէ որևիցե բան սովորել... Ես կարծում եմ, որ իրականում չկա, գոյություն չունի այն բանը, ինչը մենք «սովորել» ենք անվանում: Կա, գոյություն ունի, բարեկամս, միայն մի՛ գիտելիք, որն ամենուր է և դա Աթմանն է, այն իմ մեջ է և քո մեջ

և յուրաքանչյուր էակի մեջ: Եվ ահա ես սկսում եմ հավատալ, որ ճանաչողությունը, գիտությունը չունի ավելի կատաղի թշնամի, քան գիտենալու ցանկությունն է, քան սովորելը:

Այդժամ Գովինդան կանգ առավ ճանապարհի մեջտեղում, բարձրացրեց ձեռքերն ու ասաց.

- Սիդհարթա, դու չե՞ս կարող քո ընկերոջը նման ճառերով չվախեցնել... Քո խոսքերն, իսկապես, վախ են արթնացնում իմ սրտում: Դու միայն մտածիր. էլ ու՞ր մնաց աղոթքի սրբությունը, ու՞ր մնաց բրահմանական դասի արժանապատվությունը, ու՞ր մնաց սամանաների սրբազնությունը, եթե այդ ամենը այնպես լիներ, ինչպես դու ես ասում, եթե ուսուցում գոյություն չունենար... Ի՞նչ կլիներ, ո՜վ Սիդհարթա, ի՞նչ կլիներ այն ամենի հետ, ինչը սուրբ է երկրիս երեսին, ինչն արժեքավոր է ու մեծարանքի արժանի...

Եվ Գովինդան մի հատված մրմնջաց ինքն իր համար, Ուպանիշադից մի *կտոր*.

Ով խորհրդածելով, մաքրամաքուր մտքով,
խորասուզվում է Աթմանի մեջ,
Խոսքերի միջոցով անարտահայտելի է
նրա սրտի երանությունը:

Սակայն Սիդհարթան լուռ էր: Նա մտածում էր այն խոսքերի մասին, որոնք Գովինդան ուղղել էր իրեն, խորհրդածում էր այդ խոսքերի շուրջ մինչև ամենավերջին հնչյունը:

Այո, մտածում էր նա, գլուխը խոնարհած դիրքով կանգնած, ի՞նչ է մեզ մնում այն ամենից, ինչը մեզ սուրբ է պատկերանում: Ի՞նչ է մնում: Կա՞ պիտանացու մի բան: Եվ նա տարուբերում էր գլուխը:

Սամանաների մոտ ապրելու ու վարժանքներ կատարելու երեք տարին լրանալուն պես, առաջին անգամը լինելով, ինչ-ինչ դուզնաքյա ու զարտուղի ճանապարհներով, երկու պատանիներին հասավ մի լուր կամ ասեկոսե, գուցե առասպել. հայտնվել էր մեկը, որին կոչում էին Գոթամա՝ Վեհագույնը, Բուդդան, որն իր մեջ հաղթահարել էր աշխարհի տառապանքը և կանգնեցրել վերածնությունների, վերամարմնացումների անիվը: Ուսուցանելով, պատանիներով շրջապատված, նա թափառում էր երկրով մեկ, աշխարհից աշխարհ, առանց կայքի, տնանկ, անկողակից, ճգնակյացի դեղին թիկնոցով, բայց կայտառ ճակատով, երանելի մեկը, և բրահմաններն ու իշխանները խոնարհվում էին նրա առաջ ու նրան աչակերտ դառնում:

Այս առասպելը, այս ասեկոսեն, այս հեքիաթը տարփողվում էր այս ու այնտեղ, հույզ ու խանդ սփռելով շուրջբոլորը, քաղաքներում բրահմաններն այդ մասին էին խոսում, անտառներում՝ սամանաները, ամենուր և մշտապես հնչում էր Գոթամայի անու-

նը՝ Բուդդայի, պատանիների ականջներում, չարերի ու բարիներ-
ի, դրվատական փառաբանությունների ու պարսավանքի տես-
քով:

Ինչպես որ մի երկրում ժանտախտն է տիրապետություն հաս-
տատում, և լուրը սկսում է թևածել, այս ու այնտեղ անպայման
հայտնվում է մեկը, մի իմաստուն, գիտուն մի այր, որի խոսքն
ու հագագը բավական են, որպեսզի ապաքինեն յուրաքանչյուր
վարակվածի, և ինչպես որ այնուհետև այդ լուրը կտրում-անց-
նում է երկրով մեկ, և ամեն ոք նրանից է խոսում, շատերն հա-
վատում են, շատերն էլ կասկածում, շատերն էլ, սակայն, շուտով
ճանապարհ են ընկնում իմաստունին, փրկչին որոնելու, այդպես
էլ՝ երկրով մեկ կտրեց-անցավ այն առասպելը, այն բուրումնա-
վետ ասքը Գոթամայի՝ Բուդդայի մասին, Սաքյա ցեղից սերող
իմաստունի: Հավատացողներն ասում էին, որ նա տիրապետում
էր բարձրագույն ճանաչողությանը, նա հիշում է իր նախկին
կյանքը, նա հասել էր Նիրվանային և այլևս երբեք չէր վերա-
դառնալու շրջապտույտի մեջ, այլևս երբեք չէր ընկղմվելու կեր-
պարանքների պղտոր հորձանուտը: Շատուշատ հիասքանչ ու
անհավատալի բաներ էին պատմվում նրա մասին, նա հրաշքներ
էր գործել, սատանային հաղթել, խոսել էր աստվածների հետ:
Նրա թշնամիներն ու չհավատացողները, սակայն, ասում էին, որ
այդ Գոթաման կեղծ գայթակղիչ է, նա իր օրերն անցկացնում է
բարեկեցության մեջ, արհամարհում էր զոհաբերումները, բնավ
ուսյալ կամ գիտուն մեկը չէր, ոչ խստավարժանքների էր տիրա-
պետում, ոչ էլ՝ ինքնաձաղկմանը:

Քաղցր էր հնչում Բուդդայի մասին պատմվող զրույցը, կա-
խարդանքն էր բուրում այդ պատմություններից: Հիվանդ էր աշ-
խարհը, ծանր էր կրել կյանքի բեռը. և ահա, տե՛ս, թվաց թե ուր
որ է մի աղբյուր է ցայտելու, թվաց սուրհանդակի կանչն է օդի
մեջ հնչում, սփոփիչ, փխրաբեկ, լի ազնվածին խոստումներով:
Ամենուր, ուր էլ որ Բուդդայի մասին պատմող զրույցը հնչելիս
լիներ, ամենուրեք, Հնդկաստանի բոլոր երկրամասերում, պատա-
նիները սրում էին ականջները, կարոտախտի պես մի բան զգա-
յելով, հույսով էին լցվում, և քաղաքների ու գյուղերի բրահմա-
նորդիների շրջանում յուրաքանչյուր ուխտավոր ու օտարական
մեծարանքի ու բարիողջույնի էր արժանանում, եթե նա լուր էր
բերում նրա մասին, նրա՝ Վեհագույնի, Սաքյամունիների տոհ-
մից սերողի վերաբերյալ:

Զրույցը թափանցեց նաև անտառաբնակ սամանաների շարքե-
ը, հասավ նաև Սիդհարթային, նաև Գովինդային գտավ թևածող
զրույցը, դանդաղ, կաթիլ առ կաթիլ, յուրաքանչյուր կաթիլը
հույսով ծանրացած, յուրաքանչյուր կաթիլը ծանրացած տարա-
կուսանքից: Նրանք քիչ էին խոսում այդ մասին, քանի որ սամա-

նաներից ամենատարեցը այդ առասպելի հանդեպ բարեկամաբար չէր տրամադրված: Նա ենթադրում էր, որ այդ կարծեցյալ Բուդդա կոչվածը նախկինում մի ճգնավոր պետք է եղած լիներ, անտառաբնակ մեկը, որն հետագայում բարեկեցությանն ու աշխարհային հաճույքներին էր վերստին վերադարձել, այնպես որ այդ Գոթաման նրան բնավ չէր հետաքրքրում:

- Ո՛վ Սիդհարթա,- մի անգամ խոսեց Գովինդան իր բարեկամի հետ:- Այսօր ես գյուղ էի այցելել, և բրահմաններից մեկն ինձ իր տուն հրավիրեց ու նրա հարկի ներքո ես հանդիպեցի Մագադհայից եկած մի բրահմանորդու, որն իր սեփական աչքերով էր տեսել Բուդդային և լսել նրա քարոզը: Ճշմարիտ եմ ասում, կրծքիս տակ շնչառությունս ցավեցնելու չափ ճնշեց ինձ, ու ինքս ինձ մտածեցի. արդյո՞ք ինձ էլ, արդյոք մեզ երկուսիս էլ, Սիդհարթային ու ինձ, բախտ կվիճակվի այդ կատարյալ սուրբ մարդու բերանից նրա ուսմունքը լսել... Դե խոսի՛ր, բարեկամ, չգնա՞նք մենք էլ այնտեղ՝ լսելու համար Բուդդայի ուսմունքը նրա իսկ շուրթերից:

Սիդհարթան ասաց.

- Ո՛վ Գովինդա, ես մշտապես կարծել եմ, թե Գովինդան կմնա սամանաների մոտ, ես միշտ հավատացած եմ եղել, թե դա է նրա նպատակը. դառնալ վաթսուն, յոթանասուն տարեկան և մշտապես զբաղվել սամանաների մշակած ճարտարարվեստով ու խըստավարժանքներով: Բայց, արի ու տես, որ ես Գովինդային լավ չեմ ճանաչել, շատ քիչ բան եմ իմացել նրա սրտի մասին: Հիմա, թանկագինս, դու ուրեմն ուզում ես մի նոր ուղի բացել և գնալ այնտեղ, ուր Բուդդան է իր ուսմունքը քարոզում:

Գովինդան ասաց.

- Դու միայն հեգնում ես: Դու դեռ չա՞տ պետք է այդպես հեգնանքով խոսես... Բայց արդյոք քո մեջ էլ ցանկություն կամ փափագ չի՞ արթնացել լսելու այդ ուսմունքը: Եվ դու չէի՞ր, որ մեկ անգամ ինձ ասացիր, թե դու այլևս երկար չպետք է ընթանաս սամանաների ճանապարհով:

Այդժամ Սիդհարթան ժպտաց միայն իրեն հատուկ ժպիտով, ընդ որում՝ նրա ձայնի հնչողությունը տխրության ու հեգնանքի խառը նրբերանգներ ընդունեց, ու նա ասաց.

- Դու շատ ճիշտ, իսկապես ճիշտ խոսեցիր, Գովինդա, և ճիշտ հիշեցիր այն, ինչը նաև ինձ հիշեցրիր: Բայց այդ դեպքում դու այն մյուսն էլ կարող էիր հիշել, որ ինձանից էիր լսել, այն, որ ես թերահավատությամբ եմ վերաբերվում և հոգնել եմ ամեն տեսակ ուսմունքներից ու ուսուցողություններից, և որ իմ հավատը քիչ վստահություն է տածում այն խոսքերի նկատմամբ, որոնք ուսուցիչների միջոցով են մեզ լսելի դառնում: Բայց թող այդպես լինի, սիրելիս, ես պատրաստ եմ այդ ուսմունքը լսելու,

չնայած ես իմ սրտի մի անկյունում կարծում եմ, որ մենք արդեն իսկ ճաշակել ենք այդ ուսմունքի լավագույն պտուղը:

Խոսեց Գովինդան.

- Քո պատրաստակամությունից փառավորվում է իմ սիրտը: Բայց ասա՛ ինձ, ինչպե՞ս է դա հնարավոր: Ինչպե՞ս կարող է Գոթամայի ուսմունքը, դեռևս այն չունկնդրած, արդեն իսկ մեզ պարգևած լինի իր լավագույն պտուղը:

Խոսեց Սիդհարթան և ասաց.

- Եկ մենք ճաշակենք այդ պտուղը, իսկ մնացյալը թող սպասի, Գովինդա... Այդ պտուղը, սակայն, որի համար մենք արդեն իսկ երախտապարտ ենք Գոթամային, կայանում է նրանում, որ այն մեզ կտրել-հեռացնել է տալիս սամանաներից... Թե արդյոք այն մեզ ուրիշ-ուրիշ, ավելի լավ բանե՞ր էլ է ընծայելու, բարեկամս, ե՛կ դրան հանգիստ սրտով սպասենք:

Նույն օրն ևեթ սամանաներից ամենատարեցին Սիդհարթան տեղեկացրեց իր որոշման մասին, այն, որ ինքը ցանկանում է լքել նրան: Նա ամենատարեց սամանային այդ մասին տեղյակ պահեց ամենայն քաղաքավարությամբ ու համեստությամբ, որպիսին պատշաճում է պատանիներին ու աշակերտներին: Սամանան սակայն զայրացավ, կատաղության գիրկն ընկավ, լսելով, որ երկու պատանիներն էլ ուզում են իրեն լքել, բարձրաձայն գոռգոռաց, լուտանքներ տեղաց, հանդիմանական արտահայտություններ թույլ տվեց նրանց հասցեին:

Գովինդան վախեցավ ու չփոթության մեջ ընկավ, Սիդհարթան, սակայն, շրթունքները մոտեցրեց Գովինդայի ականջին ու կամացուկ շշնջաց.

- Հիմա ես ծերունուն ցույց կտամ, որ ես ինչ-որ բան, համենայնդեպս, սովորել եմ իրենից:

Քանի որ նա շատ մոտ էր կանգնած սամանային, հոգին կրծքի տակ հավաքած՝ իր հայացքով նա որսաց ծերունու հայացքը, հմայեց նրան, սպանեց, կամազրկեց նրան, ենթարկեցրեց իր կամքին, հրամայելու պես կարգադրեց նրան անձայն անելու այն, ինչ ինքը նրանից պահանջում էր: Ծերունին պապանձվեց, նրա հայացքը սառեց, կամքը կաթվածահար եղավ, ձեռքերը անուժ կախ ընկան, այդպես ուժատ ու անզոր նա ենթարկվեց Սիդհարթայի կախարդանքին: Սիդհարթայի մտքերն, այսպիսով, տիրապետություն հաստատեցին սամանայի վրա, հաղթեցին նրան, և վերջինս պետք է կատարեր այն, ինչ այդ մտքերն էին կարգադրում: Այսպես ծերունին մի քանի անգամ գլուխը խոնարհեց, օրհնության բարեբանյալ շարժումներ արեց, կակազելով՝ ճանապարհի բարեմաղթանքներ ուղղեց պատանիներին: Վերջիններս էլ երախտագիտությամբ պատասխանեցին՝ գլխահակ խոնարհումով, կրկնեցին իրենց ցանկությունը, հրաժեշտի ողջույններ ար-

տաբերելով ետ-ետ քաշվեցին ու հեռացան:

Ճանապարհին Գոթաման ասաց.

- Ո՛վ Սիդհարթա, դու սամանաների մոտ ավելին ես սովորել, քան ես կարծում էի: Դա շատ դժվար է, անչափ դժվար բան է զառամյալ սամանային հմայելը: Իսկապես, եթե դու այնտեղ մնալու լինեիր, շատ շուտով կսովորեիր նաև ջրերի վրայով քայլել:

- Ես բնավ չեմ տենչում և չեմ երազում ջրերի վրայով քայլել,- ասաց Սիդհարթան:- Թող այդ տարեց սամանաները իրենց այդ ճարտարարվեստով գոհանան:

ԳՈԹԱՄԱ

Սավաթհի քաղաքում յուրաքանչյուր երեխա գիտեր վսեմափայլ Բուդդայի անունը և ամեն տուն պատրաստ էր պատանի Գոթամայի՝ լռելյայն խնդրարկուի ողորմության թասը լցնել: Քաղաքի մերձակայքում գտնվում էր Գոթամայի նախասիրած բնակատեղին՝ Ցեթավանա կոչված այգին, որը մեծահարուստ վաճառական Անաթապինդիկան՝ Վեհագույնի հավատարիմ երկրպագուն, նվիրաբերել էր նրան ու նրա հետևորդ-աշակերտներին:

Դեպի այդ վայրն էին մատնանշում բոլոր պատմություններն ու պատասխանները, որոնց մասին վիճակվեց տեղեկանալ երկու պատանի ուխտավորներին՝ իրենց որոնումների ճանապարհին: Եվ երբ նրանք ժամանեցին Սավաթհի, առաջին իսկ պատահած տանը, որի առջև նրանք խնդրարկուի կերպարանքով կանգ էին առել, կերակուր առաջարկվեց, և նրանք ընդունեցին կերակուրը և Սիդհարթան հարց ուղղեց կնոջը, որն իրենց ուտելիք մատուցեց.

- Հաճույքով, ո՛վ դու բարեգութ կին, մեծագույն հաճույքով մենք կուզենայինք տեղեկանալ, թե որտեղ է հանգրվանում Բուդդան, Վեհագույնը: Մենք անտառաբնակ երկու սամանաներ ենք և եկել ենք տեսակցելու նրան՝ Կատարելագույնին, ու նրա շուրթերից ընդունելու ուսմունքը:

Կինը խոսեց և ասաց.

- Իսկապես դուք այստեղ ճիշտ տեղում եք իջևանել, դուք՝ անտառաբնակ սամանաներդ: Իմացած եղեք, որ Ցեթավանայում, Անաթապինդիկայի պարտեզում է հանգրվանում Վեհագույնը: Այնտեղ դուք, ուխտավորներդ, կարող եք գիշերել, քանզի այնտեղ բավարար տեղ կա անհաշվելի թվով մարդկանց համար, որոնք շարունակ այստեղ են գալիս ու գալիս, որպեսզի նրա բերանից լսեն ուսմունքը:

Այս խոսքերի վրա Գովինդան ուրախացավ ու հրճվագին բղավեց.

- Ցնծությո՛ւն, այսպես ուրեմն մենք մեր նպատակին հասել

ենք և հասել ենք մեր ճանապարհի ավարտին... Բայց ասա՛ մեզ, ո՞վ դու մայրդ ուխտագնացների, դու ճանաչու՞մ ես նրան՝ Բուդդային, դու տեսե՞լ ես նրան քո սեփական աչքերով:

Կինն ասաց.

- Շա՛տ անգամներ եմ ես տեսել նրան, Վեհագույնին: Շատ օրեր եմ նրան տեսել, երբ նա քայլում էր փողոցներով ու նըրբանցքներով, լուռ ու մունջ, դեղին թիկնոցը հագին, թե ինչպես էր նա տնակների դռների մոտ իր ողորմության թասը մեկնում, և ինչպես էր լեցուն թասը իր շուրթերին մոտեցնում:

Հմայված լսում էր Գովինդան և էլի շատուշատ բաների մասին էր ցանկանում հարցուփորձ անել ու պատասխաններ լսել: Սակայն Սիդհարթան զգուշացնում էր, որ չպետք է ժամանակ վատնել, հարկավոր էր գնալ: Նրանք շնորհակալություն հայտնեցին ու շարժվեցին և գրեթե կարիքը չունեցան ճանապարհը հարցնելու, քանզի Գոթամայի ընկերակցությունից բավական թվով ուխտավորներ ու հոգևորականներ ճամփա էին ընկել դեպի Յեթավանա: Եվ չնայած երկու ընկերները միայն գիշերվա կողմ տեղ հասան, երբ խմբվածներից շատերն էին բացականչում ու հարցուփորձ անում՝ որևէ իշևանում գիշերատեղի հայցելով, հենց նույն միջոցին էլ նրանց մշտական օթևան տրամադրվեց: Իրենց կյանքն անտառներում անցկացրած ու խստավարժ երկու սամանները արագորեն խաղաղավետ մի օթևան գտան ու մինչև առավոտ այնտեղ հանգիստ վայելեցին:

Արեգակի ծագելուն պես նրանք ականատեսը եղան և շատ զարմացան, թե հավատացյալների ու հետաքրքրասերների ինչպիսի մի հսկայական բազմություն էր այնտեղ գիշերն անցկացրել: Հիասքանչ պարտեզի բոլոր ճանապարհներին թափառում էին կրոնավորները դեղին տարազով, նրանք նստոտած էին ծառերի տակ, այս ու այնտեղ, խորասուզված հայեցողության մեջ կամ հոգևոր զրույցների բռնված, ստվերաշատ պարտեզն ասես մի քաղաք լիներ, լեփլեցուն մարդկանցով՝ մեղուների պարսի հանգույն: Հոգևորականների մեծամասնությունը օթևաններից դուրս էր թափվել՝ ողորմության թասերը ձեռքերին բռնած և ուղևորվում էր դեպի քաղաք, այնտեղ՝ կեսօրվա ճաշի համար, օրվա մեջ միակ անգամ սնունդ ընդունելուն հատկացված ժամանակը, կերակուր մուրալու: Բուդդան ինքն էլ, Վեհագույնը, լույսը բացվելուն պես մասնակցում էր կեսօրվա համար կերակուր մուրալու հանդեսին:

Սիդհարթան տեսավ նրան ու անմիջապես ճանաչեց, ասես աստվածներից մեկը նրան ցույց տվեց իրեն: Նա տեսավ նրան՝ համեստ ու հասարակ մի մարդու, դեղին սքեմ հագած, ողորմության թասը ձեռքում պահած, հանդարտ ու լուռ ընթանալիս:

- Նայի՛ր այստեղ,- կամացուկ ասաց Սիդհարթան Գովինդա-

յին,- ահա՛, ահա՛ նա՝ Բուդդան:

Գովինդան ուշիուշով նայում էր դեղին սքեմազգեստ հոգևորականին, որն ասես ոչնչով չէր տարբերվում հարյուրավոր այլ վանականներից: Գովինդան նույնպես շատ շուտ ճանաչեց նրան. ահա՛ նա: Եվ նրանք հետևեցին նրան և ուշադիր զննում էին:

Բուդդան քայլում էր իր ճանապարհով, համեստ ու լուռ, մտածություններին մեջ ընկղմված, նրա խաղաղված դեմքը ոչ այն է ուրախություն էր արտահայտում, ոչ էլ տխրություն, և թվում էր, թե նրա ներսում մի ժպիտ էր քարացել: Ծպտյալ ժպիտը դեմքին, հանդարտ ու խաղաղ, առողջ երեխայի նմանողությամբ, շրջում էր Բուդդան, սքեմազգեաց, և քայլերը գցում էր այնպես, ինչպես իր բոլոր վանականները, խստիվ համաձայն հրահանգներին: Սակայն նրա դեմքից ու քայլվածքից, նրա խաղաղ ու խոնարհ հայացքից, նրա լուռ կախ ընկած ձեռքից, ինչպես և այդ խաղաղության մեջ կախ ընկած ձեռքի յուրաքանչյուր մատից խաղաղություն էր ծորում, նրանցում խոսում էր կատարելությունը՝ ոչինչ չորոնող, ոչնչի չընդօրինակող, մեղմ ու հեզ շընչում էր անթոչնելի հանգստավետության մեջ, անթորշոմելի լույսի մեջ թաթախված, անխաթար խաղաղությանն անձնատուր:

Այսպես քայլում էր Գոթաման քաղաքի ուղղությամբ՝ ողորմություն մուրալու, և զույգ սամանաները ճանաչեցին նրան հենց միայն նրան պաշարած կատարելագույն խաղաղությունից, նրա կերպարանքի հանդարտությունից, որի մեջ ոչ որոնում կարելի էր նկատել, ոչ ցանկություն, ոչ ընդօրինակման տենչ, ոչ իսկ ճիգ ու ջանք, բայց միայն լույս ու խաղաղություն:

- Այսօր մենք ուսմունքը կլսենք նրա շուրթերից,- ասաց Գովինդան:

Սիդհարթան պատասխան չտվեց: Նա քիչ էր հետաքրքրված այդ ուսմունքով, նա չէր կարծում, թե այն մի ինչ-որ նոր բան էր սովորեցնելու իրեն, սակայն նա ևս, ինչպես Գովինդան, շատուշատ անգամներ, այս ու այնտեղից իմացել էր Բուդդայի այդ ուսմունքի բովանդակության մասին, թող որ թեկուզև երկրորդ կամ երրորդ ձեռքից ստացած տեղեկություններից: Բայց նա ուշադիր նայում էր Գոթամայի գլխին, նրա ուսերին, նրա ոտքերին, նրա հանդարտ կախ ընկած ձեռքին, ու իրեն թվաց, թե այդ ձեռքի յուրաքանչյուր մատի յուրաքանչյուր հատված հենց ինքը ուսմունքն էր որ կար, նրանցում խոսում էր, շնչում, բուրում էր ու փայլատակում ճշմարտությունը: Այդ մարդը, Բուդդան ճշմարտացի էր մինչև իր մատների ծայրը: Այդ մարդը սուրբ էր: Սիդհարթան երբեք ոչ ոքի այդպես չէր հարգել, երբեք ոչ մի մարդու այդպես չէր սիրել, ինչպես այս մեկին:

Երկուսով հետևեցին Բուդդային մինչև քաղաք ու լռելյայն

ետ վերադարձան, քանզի որոշել էին այդ օրը կերակուրից հրաժարվել: Նրանք տեսան Գոթամային վերադառնալիս, տեսան նրան իր հետևորդների շրջապատում կերակուր ընդունելիս, նրա կերածը թռչուններին անգամ չէր կշտացնի, ապա նրան տեսան՝ արդեն ընկողմանած մանգոյի ծառի ստվերներում:

Սակայն երեկոյան կողմ, երբ կեսօրվա տապը տեղի էր տվել ու ճամբարում ամեն ինչ կենդանության շունչ էր առել, բոլորը սկսեցին հավաքվել Բուդդայի ուսմունքը ունկնդրելու: Նրանք լսում էին նրա ձայնը, որը նույնպես կատարելությամբ էր ճառագում, կատարելապես հանգստավետ ու խաղաղ: Գոթաման ուսուցանում էր տառապանքի ուսմունքը, տառապանքի ծագման մասին էր բարբառում, տառապանքից ձերբազատման մասին: Հանդարտ ու պարզ հոսում էր նրա խաղաղարար խոսքը: Տառապանք էր կյանքը, աշխարհը լի էր տառապանքով, սակայն տառապանքներից փրկությունը այլևս գտնված էր. փրկությունը գըտնում էր նա, ով Բուդդայի ճանապարհով էր ընթանում:

Հեզաբարո, սակայն հաստատակամ ձայնով էր խոսում Վեհագույնը, ուսուցանում էր չորս գլխավոր ճշմարտությունների մասին, մեղքերի քավության ուղենադամ ուղու: Համբերատար անցնում էր նա ուսմունքի մատուցման սովորական ճանապարհով՝ օրինակների ու կրկնությունների միջոցով, լուսավոր ու խաղաղ ճախրում էր նրա ձայնը ունկնդիրների գլխավերևում՝ որպես լույս, որպես աստղալից երկինք:

Երբ Բուդդան, այն պահին, երբ արդեն գիշերն իջել էր, եզրափակեց իր ճառը, ուխտավորներից ոմանք առաջ եկան ու խնդրեցին իրենց ընդգրկել ընկերակցության շարքերը, իրենց ապաստանը գտնելով ուսմունքի մեջ: Եվ Գոթաման ընդունելով նրանց ասաց.

- Դուք լսեցիք ուսմունքը, լսեցիք, թե ինչ է այն քարոզում: Եկե՛ք, ուրեմն դեպի մեզ և ապրեք սրբության մեջ, եթե ուզում եք վերջ տալ բոլոր տառապանքներին:

Եվ ահա Գովինդան, որ միշտ հեզ էր ու խոնարհ, առաջացավ ու ասաց.

- Ես էլ եմ ցանկանում հետևորդը դառնալ Վեհագույնի ու նրա ուսմունքի:.

Այս ասելով՝ նա խնդրեց իրեն էլ ընդունել աշակերտների մեջ ու նրա խնդրանքը բավարարվեց:

Այն բանից հետո, երբ Բուդդան իր գիշերային հանգիստն էր վայելում, Գովինդան դարձավ Սիդհարթային ու ձայնի եռանդուն հնչերանգով ասաց.

- Ինձ վայել չէ, Սիդհարթա, հանդիմանել քեզ: Բայց մենք երկուսս էլ ուշիուշով լսեցինք Վեհագույնին, և երկուսս էլ ուսմունքն ընդունեցինք: Գովինդան ունկնդրեց ուսմունքը և ան-

դամագրվեց այդ ուսմունքի հետևորդներին: Սակայն դու՛, հարգարժան, մի՞թե դու չես ուզում փրկության ուղով ընթանալ: Էլ ինչու՞ ես հապաղում, ինչի՞ ես սպասում:

Սիդհարթան ասես քնից արթնացավ, երբ Գովինդայի խոսքերը լսեց: Նա երկար-երկար նայեց Գովինդայի դեմքին: Հետո հանդարտ խոսեց, հեգնանքից զերծ ձայնով.

- Գովի՛նդա, բարեկա՛մս, հիմա դու քայլ կատարեցիր և քեզ համար ճանապարհ ընտրեցիր: Ո՛վ Գովինդա, դու միշտ իմ ընկերն ես եղել, մշտապես ինձանից մի քայլ ետ ես քայլել: Ես հաճախ եմ մտածել. միթե մեկ անգամ էլ Գովինդան միայնակ ինքնուրույն մի քայլ չի՞ կատարելու, առանց ինձ, սեփական հոգու թելադրանքով: Բայց ահա՛, հիմա դու տղամարդ ես դարձել և ինքդ ես քո ճանապարհն ընտրում: Թող որ այդպես դու քո ճանապարհը մինչև վերջ գնաս, թող որ դու գտնես փրկությունը...

Գովինդան, բարեկամի խոսքերից անակնկալի եկած և ասվածը լավ չհասկանալով՝ անհամբերության շեշտով կրկնեց իր հարցը.

- Դե խոսի՛ր, խնդրում եմ քեզ, սիրելիս: Ասա՛ ինձ, ասա՛, որ այլ կերպ չի էլ կարող լինել, ասա՛, որ դու նույնպես, իմ ուսյալ բարեկամ, ապաստան կգտնես վսեմափայլ Բուդդայի ուսմունքի մեջ..

Սիդհարթան ձեռքը դրեց Գովինդայի ուսին.

- Դու չլսեցիր իմ օրհնությունը, ո՛վ Գովինդա: Ես այն նորից եմ կրկնում. Թող որ այդպես դու քո ճանապարհը մինչև վերջ գնաս, թող որ դու գտնես փրկությունը...

Այդ պահին Գովինդան հասկացավ, որ իր ընկերը լքել է իրեն ու նա սկսեց հեկեկալ:

- Սիդհա՛րթա,- ճչաց նա բողոքավոր ձայնով:

Սիդհարթան բարեկամաբար ասաց նրան.

- Մի՛ մոռացիր, Գովինդա, որ դու հիմա Բուդդայի սամանաների թվին ես պատկանում.. Դու հրաժարվել ես քո հայրենի եզերքից, հայենական տնից ու ծնողներից, հրաժարվել ես քո դասից ու սեփականությունից, հրաժարվել ես քո սեփական կամքից, հրաժարվել ես բարեկամությունից ու ընկերությունից: Այդպիսին է քո ընտրած ուսմունքի պահանջը, այդպիսին է Վեհագույնի կամքը: Դու ի՛նքդ ես դա ցանկացել: Վաղն առավոտյան, ո՛վ Գովինդա, ես քեզանից կհեռանամ:

Դեռ երկար թափառում էին բարեկամները մարգագետիններում, հետո երկար պառկեցին խոտերին, բայց աչքերին քուն չէր գալիս: Եվ նորից ու նորից Գովինդան շարունակ հարցերի տարափ էր տեղում իր բարեկամին, խնդրում էր իրեն ասել, թե ինչու՞ նա չի ցանկանում անդամակցել Գոթամայի ուսմունքին, ի՞նչ սխալմունք կամ պակասություն է տեսնում նրա ուսմունքի մեջ: Սիդհարթան, սակայն, ամեն անգամ հրաժարվում էր պա-

տասխանել նրան և ասաց.

- Հանգստացի՛ր, Գովինդա... Շա՜տ լավն է Վեհագույնի ուսմունքը, ինչպե՞ս ես կարող եմ նրա մեջ թերություն կամ պակասություն գտնել:

Վաղ առավոտյան Բուդդայի հետևորդներից մեկը, նրա ամենատարեց վանականներից մեկն անցնում էր պարտեզի միջով, իր մոտ կանչելով բոլոր նրանց, որոնք, նորեկներ լինելով, անդամագրվել էին ուսմունքին, որպեսզի նրանց դեղին հանդերձանք հագցներ ու տեղյակ պահեր նրանց իրենց համքարության առաջին կանոնների ու պարտականությունների մասին:

Այդժամ Գովինդան պոկվեց տեղից, մեկ անգամ ևս գրկեց-համբուրեց իր պատանեկության ընկերոջն ու միացավ նորաթուխ անդամների շարքերին:

Սիդհարթան, սակայն, մտասույզ թափառում էր պարտեզում:

Հանկարծ նրա դեմ ելավ Գոթաման, Վեհագույնը, ու երբ Սիդհարթան երկյուղած մեծարանքով ողջունեց նրան՝ Բուդդային, և քանի որ նրա հայացքն այնպես լի էր բարությամբ ու խաղաղությամբ, պատանին դրանից քաջությամբ լցվեց և Վեհագույնից թույլտվություն հայցեց իրեն դիմելու: Վեհագույնը լռելյայն գլխով համաձայնության նշան արեց:

Սիդհարթան խոսեց և ասաց.

- Երեկ, ո՜վ Վեհագույն, ինձ բախտ վիճակվեց ունկնդիր լինելու քո հրաշափառ ուսմունքին: Իմ բարեկամի հետ միասին ես այստեղ եմ եկել հեռու-հեռվից՝ ուսմունքը լսելու նպատակով: Եվ այժմ իմ բարեկամը մնալու է քո աշակերտների հետ, քեզ մոտ է նա իր ապաստանը գտել: Իսկ ես պետք է վերստին շարունակեմ իմ ուխտագնացությունը:

- Ինչպես հարմար կգտնես,- քաղաքավարի պատասխանեց Վեհագույնը:

- Շատ չոր ստացվեց խոսքս,- շարունակեց Սիդհարթան,- բայց ես չէի ցանկանա լքել Վեհագույնին՝ առանց որ ինձ պաշարած մտքերը ազնվաբար նրան հաղորդելու: Արդյո՞ք Վեհագույնը մի կարճ ակնթարթ միայն ինձ իր ուշադրությանը կարժանացնի:

Բուդդան լռելյայն գլխով համաձայնության նշան արեց:

Սիդհարթան ասաց.

- Ո՜վ Վեհագույն, քո ուսմունքի մեջ ինձ ամենից շատ մի բան զարմանք պատճառեց: Քո ուսմունքում ամեն-ամեն ինչ կատարելապես պարզ է ու համոզիչ: Դու աշխարհը ցույց ես տալիս որպես մի կատարյալ, երբեք և ոչ մի տեղ չխզված շղթա, որպես մի հավերժական հերթափոխ, կազմված պատճառից ու հետևանքներից: Երբեք և ոչ ոքի կողմից դա այդպես պարզ չի տեսնվել կամ գիտակցվել, երբեք այն այդպես անառարկելիորեն ապացուցված չի եղել: Ցուրաքանչյուր բրահմանի սիրտը կրծքի տակ

իսկապես որ պետք է ոգևորությունից տրոփի, երբ նա, քո ուսմունքի միջով աշխարհին է նայում որպես մի կատարյալ փոխկախվածությունների շղթայի, առանց բացթողումների, հստակ ու վճիտ՝ ինչպես բյուրեղը, որը կախված չէ պատահական դիպվածներից, կախված չէ աստվածներից: Ուրիշ հարց է, թե արդյոք աշխարհը բարի է, թե չար, նրանում ընթացող կյանքը տառապանք է, թե երջանկություն, այստեղ դա կարևոր չէ, դա նույնիսկ երևի թե էական էլ չէ: Սակայն աշխարհի միասնությունը, իրադարձությունների փոխկապակցվածությունը, բոլոր տեսակի մեծ ու փոքրի ենթակայությունը միևնույն հորձանքին, պատճառների, սկզբնավորման ու վախճանի միևնույն օրենքին, սա է, որ ամենապայծառ հստակությամբ ճառագում է քո վսեմաշուք ուսմունքից, ո՜վ Կատարելագույնդ: Այժմ սակայն, համաձայն քո իսկ ուսմունքի, պարզվում է, որ բոլոր իրերի միասնականությունն ու բնական ժառանգորդությունը մի կետում ընդհատվել-խզվել է, մի փոքրիկ սողանցքից այս միասնականության աշխարհն է ներխուժել օտար մի բան, նորահայտ մի բան, այնպիսի մեկը, որ մինչ այժմ գոյություն չի ունեցել, և որը, հետևաբար, անկարելի է ցուցանել կամ ապացուցել. և դա աշխարհի հաղթահարման, փրկության ու ապաշխարության քո ուսմունքն է: Այդ պստլիկ անցքի պատճառով, այդ աննշան թվացող խզման հետևանքով, սակայն, այդ ողջ հավերժական ու միասնական աշխարհի օրենքը վերստին խախտված է և ուժը կորցրած: Այստեղ ես հայցում եմ քո ներողամտությունը իմ այս առարկության կապակցությամբ:

Լուռ ու հանգիստ Գոթաման լսեց նրան: Իր հեզ, բարեհունչ ու վճիտ ձայնով այսպես խոսեց Կատարյալը.

- Դու լսեցիր ուսմունքը, ո՜վ բրահմանորդի, և փա՛ռք քեզ, որ այդքան խորը ընկալեցիր այն: Դու նրանում մի ճեղքվածք, սխալմունք գտար: Շարունակի՛ր ավելի խորանալ նրա մեջ: Բայց զգուշացի՛ր, խուսափի՛ր, ո՜վ դու հետաքրքրասեր, կարծիքների թավուտներից և բառերի կռվից: Խնդիրը կարծիքներին չի վերաբերում, ինչպիսին էլ նրանք լինեն, գեղեցիկ կամ տգեղ, խելացի, թե անմիտ, ամեն ոք ազատ է ընդունելու դրանք կամ մերժելու: Այն ուսմունքը, որը սակայն դու ինձանից լսեցիր, կարծիք չէ, և այն նպատակ չի հետապնդում բացատրելու աշխարհը հետաքրքրասերների համար: Նրա նպատակն ուրիշ է. քավությունը, տառապանքից ազատումը: Սա՛ է, ինչ ուսուցանում է Գոթաման, և ոչ թե մեկ այլ բան:

- Խնդրում եմ, դու ինձ վրա մի բարկացիր, Վեհագու՛նդ,- ասաց պատանյակը:- Վիճելու համար չէր, բառերի պատճառով քեզ հետ վիճաբանելու համար չէր, որ ես այդպես խոսեցի քեզ հետ: Հազար անգամ դու իրավացի ես, խնդիրն իսկապես կար-

ծիքներին չի վերաբերում: Բայց թու՛յլ տուր ինձ մի բան էլ ասեմ. ես վայրկյան անգամ չեմ տարակուսել քո առնչությամբ, ես վայրկյան անգամ չեմ կասկածել, որ դու իսկապես Բուդդան ես, որ դու հասել ես նպատակին, բարձրագույն նպատակին, որի համար տասնյակ հազարավոր բրահմաններ ու բրահմանորդիներ ճանապարհ են ընկել: Դու գտել, հայտնաբերել ես մահվանից փրկությունը: Դու դրան հասել ես քո սեփական որոնումների միջոցով, քո՛ իսկ անցած ճանապարհի շնորհիվ, քո՛ մտածությունների, ինքնասուզումների, ճանաչողության, պայծառատեսության շնորհիվ: Բայց ո՞չ երբեք մի ինչ-որ օտար ուսմունքի սերտման միջոցով... Եվ, այսպիսին է իմ միտքը, ո՜վ Վեհագույն, ոչ ոք չի կարող հասնել փրկության՝ շնորհիվ որևէ ուսմունքի: Ոչ ոքի, ո՜վ Վեհագույնդ, դու չես կարող բառերի ու խրատուսույցների միջոցով հաղորդել ու արտահայտել այն, ինչը քեզ վիճակվել է վերապրել քո պայծառատեսության պահին... Շա՜տ բան է իր մեջ բովանդակում պայծառատես Բուդդայի ուսմունքը, շատ-շատերին այն կուսուցանի ճիշտ և արդարամիտ ապրելու արվեստը, չարից խուսափելու գիտությունը: Միայն մի բան կա, որ պակասում է այդ այնքան պարզ ու այնքան բարձրուվեհ ուսմունքին. այն իր մեջ չի բովանդակում, նրա մեջ բացահայտված չէ այն բանի գաղտնիքը, թե ի՛նչ է Վեհագույնն ինքը վերապրել, միայնումիայն նա՝ հարյուր հազարավորների մեջ: Ահա՛ թե ես ինչ էի մտածում և ինչ հասկացա ուսմունքն ունկնդրելիս: Սա է պատճառը, որ ես որոշեցի վերստին շարունակել իմ որոնումները և ճանապարհ ընկնել, բնավ ոչ այն նպատակով, որ մեկ ուրիշ, ավելի լավ ուսմունք գտնեմ, քանզի ես արդեն գիտեմ, որ այդպիսին չկա, այլ որպեսզի բոլոր ուսմունքներին ու բոլոր ուսուցիչներին մնաս բարով ասեմ ու միայնակ մնալով, մենության մեջ իմ նպատակին հասնեմ և կամ վախճանվեմ: Սակայն շատ հաճախ ես դեռ կվերհիշեմ այն օրն ու ժամը, ո՜վ Վեհագույնդ, երբ իմ աչքերը սուրբիդ տեսան:

Բուդդան խոնարհ հայացքը հառել էր գետնին, խաղաղ, կատարյալ անվրդովությամբ էր ճառագում նրա անթափանց ու անորսալի դեմքը:

- Թող որ քո մտքերը հանկարծ մոլորություն դուրս չգան,- դանդաղ, ծոր տալով խոսեց Վեհագույնը:- Ես քեզ ցանկանում եմ, որ դու հասնես քո նպատակին... Բայց, ասա՛ ինձ, դու տեսա՞ր իմ սամանաների բազմությունը, իմ բազմահազար եղբայրներին, որոնք ապաստան են գտել իմ ուսմունքի մեջ: Եվ դու կարծում ես, օտարական սամանա, կարծում ես, որ նրանց բոլորի համար ավելի լավ կլինի հրաժարվե՞ն այդ ուսմունքից և վերադառնան աշխարհիկ կյանքի՞ն, որ լի է ամեն տեսակի կրքերո՞վ:

- Ես շատ հեռու եմ նման գաղափարից,- բացականչեց Սիդհարթան:- Թող նրանք բոլորը հավատարիմ մնան ուսմունքին, թող հասնեն իրենց նպատակին: Ինձ չի պատշաճում դատել ուրիշներին: Միայն ինձ համար, միայնումիայն ի՛նձ համար հարկ է որ ես դատավճիռ կայացնեմ, ընտրել մի բան, մերժել մյուսը: Մենք, սամանաները, որոնում ենք ազատագրվելու ուղին, ո՛վ Վեհագույնդ: Եթե ես դառնամ մեկը քո աշակերտներից, ո՛վ Վսեմափայլ, ապա վախենում եմ, որ իմ եսը միայն արտաքուստ, լոկ թվացյալ իմաստով հանգիստ կառնի ու փրկություն կգտնի, իսկ իրականում այն կշարունակի ապրել և նույնիսկ գուցե ավելի կմեծանա, կաճի, քանզի այդ դեպքում հենց ինքը՝ ուսմունքը և նրա նկատմամբ իմ հավատարմությունը, քո հանդեպ իմ տածած սերը և վանականների համայնքային կյանքը կդառնան իմ եսը...

Կիսաժպիտը դեմքին, անվրդով պայծառությամբ ու բարյացկամությամբ Գոթաման նայեց օտարականի հայացքի մեջ ու հրաժեշտ տվեց նրան՝ գրեթե անտեսանելի շարժումով:

- Խելացի ես դու, ո՛վ սամանա,- նկատեց Վսեմափայլը:- Եվ գիտես խելացի խոսել, բարեկամս: Զգուշացի՛ր, սակայն, չափից ավելի խելամտություններ արտահայտելուց:

Ասելուն պես՝ Բուդդան շրջվեց ու հեռացավ, սակայն նրա հայացքն ու կիսաժպիտը հավերժ դաջվեցին-մնացին Սիդհարթայի հիշողության մեջ:

- Ես երբեք չեմ տեսել այսպիսի մի մարդու, որն այդօրինակ հայացք ու ժպիտ ունենար, որ այդպիսի նիստուկացի տիրապետեր,- մտածեց Սիդհարթան,- ինքս էլ կուզենայի նրա հայացքն ու ժպիտն ունենալ, նրա նման նստել ու քայլել իմանայի, այնպես անբռնազբոս ու ազատ, այնպես արժանապատիվ, ծածուկ ու բացազատ, մանկան նման պարզ ու խորհրդավոր: Այդպես իրականում կարող է նայել ու քայլել միայն այն մարդը, որին վիճակվել է ներթափանցել իր եսի ամենաթաքուն խորխորատները: Ուրեմն ես էլ կփորձեմ հասնել իմ եսի ամենախոր շերտերը:

- Ես տեսա մի մարդու,- շարունակում էր մտածել Սիդհարթան,- միակ մարդուն, որի առաջ պետք է հայացքս խոնարհեի: Ուրիշ էլ ո՛չ ոքի առաջ ես այլևս չեմ ցանկանում հայացքս խոնարհել, ո՛չ ոքի: Այլևս ոչ մի ուսմունք չի կարող ինձ գայթակղել, եթե այս մարդու ուսմունքը չկարողացավ ինձ իրեն ենթարկել:

- Ինձ թալանեց, կողոպտեց Բուդդան,- մտածում էր Սիդհարթան,- նա ինձ շատ բանից զրկեց, բայց շատ բաներ էլ պարգևեց նա ինձ: Նա ինձանից խլեց իմ ընկերոջը, այն մարդուն, որն հավատում էր ինձ և որն այլևս իրեն է հավատում, նա՛, որ իմ ստվերն էր ու հիմա Գոթամայի ստվերը դարձավ: Փոխարենը, սակայն, նա ինձ նվիրեց Սիդհարթային, նվիրեց հենց ինձ:

Երբ Սիդհարթան լքեց պարտեզը, թողնելով այնտեղ Բուդդային՝ Կատարյալին, թողնելով այնտեղ Գովինդային՝ իր ընկերոջը, այդ պահին նա զգաց, որ այդ պարտեզում նա թողել էր նաև իր նախկին կյանքը, և հրաժեշտ էր տվել նրան՝ իր նախկին կյանքին: Այդ զգացողությունը այնպես համակեց նրան, որ նա այլևս անկարող էր որևէ այլ բանի մասին մտածել: Դանդաղ ընթանալով իր ճանապարհով՝ նա ցանկանում էր հասկանալ ինքն իրեն, ինչպես մի մարդ, որ սուզվել էր խորը ջրի մեջ, նա խորացավ մինչև այդ զգացողության հատակը, մինչև նրա սկզբնապատճառները, քանզի կարծում էր, որ պատճառների ճանաչման մեջ է հենց մտածողության նպատակը: Միայն այդ պայմանով զգացողությունները դառնում են ճանաչողություն ու չեն կորչում, այլ էություն են ձեռք բերում և սկսում են ճառագել այն լույսը, որ պարփակված է իրենց մեջ:

Դանդաղ ընթանալով իր ճանապարհով՝ Սիդհարթան ընկել էր մտածությունների գիրկը: Նա հասկացավ, որ ինքն այլևս դադարել էր պատանի լինելուց, տղամարդ էր դարձել: Նա հասկացավ, որ ինչպես օձն է իր կաշին փոխում, ինքն էլ իր վրայից նետել է մի բան, որն իր ողջ պատանեկության ընթացքում իր ուղեկիցն էր եղել, իրեն է պատկանել. ազատվել էր ուսուցիչ ունենալու և այլոց ուսմունքներին հետևելու ցանկությունից: Իր ճանապարհին հանդիպած վերջին ուսուցչին, վսեմագույն և իմաստնագույն ուսուցչին, սրբազան Բուդդային ինքը լքել էր, հարկադրված բաժանվել էր նրանից, անկարող լինելով ընդունելու նրա ուսմունքը:

Ավելի դանդաղեցնելով իր ընթացքը, մտքերի մեջ խորասուզված՝ նա ինքն իրեն հարցնում էր.

- Բայց իսկապես ի՞նչ էիր դու ցանկանում սովորել ուսուցիչներից ու նրանց ուսմունքներից, և այդ ի՞նչն էր, որ ինչքան էլ նրանք փորձեցին քեզ սովորեցնել, սակայն այդպես էլ չկարողացան սովորեցնել քեզ:- Եվ նա գտավ պատասխանը,- սեփական եսի, նրա իմաստի ու էության ճանաչողությունը, ահա՛ թե ինչի էի ես ձգտում, ինչ էի ցանկանում սովորել: Ես ուզում էի ազատվել նրանից, հաղթահարել իմ եսը: Բայց այդ բանը ես չկարողացա անել, ես կարողացա լոկ մոլորեցնել նրան, փախչել նրանից, թաքնվել նրանից: Իսկապես, աշխարհում ոչինչ այնքան չէր զբաղեցնում իմ միտքը, որքան իմ այդ եսը, այն հանելուկը, որ ես ողջ եմ, ապրում եմ, այն, որ ես բոլոր մյուսներից տարբեր ու առանձնակի մի բան եմ ինձանից ներկայացնում, որ ես Սիդհարթան եմ... Եվ աշխարհում ոչ մի բանի մասին ես այնքան ավելի քիչ չգիտեմ, որքան Սիդհարթայի մասին...

Դանդաղորեն ընթացողն ու մտածությունների տրվածը կանգ առավ՝ այդ վերջին մտքից ցնցված, և այդ մտքից անմիջապես էլ մեկ ուրիշը ծնվեց. այն, որ ես ոչինչ չգիտեմ իմ մասին, որ Սիդ-հարթան ինձ համար մնում էր օտար ու անծանոթ մեկը, գալիս է մեն-միակ պատճառից, այն որ ես վախենում էի ինքս ինձանից, փախչում էի ինքս ինձանից... Ես փնտրում էի Աթմանը, փնտ-րում էի բրահմանը, ես կամենում էի իմ եսը բաժան-բաժան անել, մասերի բաժանել, մաքրել բոլոր թաղանթներից, որպեսզի նրա անծանոթ խորխորատներում գտնել կարողանայի բոլոր այդ թա-ղանթների սրտամիջուկը՝ Աթմանին, կյանքը, աստվածայինը, նախասկզբնատուին: Ընդսմին, այդ փնտրտուքի մեջ, սակայն, ես ինքս ինձ կորցրեցի:

Սիդհարթան բացեց աչքերը և շուրջբոլորը նայեց, ժպիտը փայլեց նրա դեմքին և երկարատև քնից հետո արթնացումի զգա-ցումը հորձանք տվեց նրա մեջ ու ծառս եղավ: Եվ նա սկսեց ավելի ու ավելի արագ քայլեր գցել, որպես մի տղամարդ, որը գիտե, թե ինչ պետք է ինքը անի:

- Օ՛,- մտածեց նա՝ թեթևացած շունչ քաշելով,- հիմա ես այլևս թույլ չեմ տա, որ Սիդհարթան խույս տա ինձանից: Ես այլևս իմ մտքերն ու կյանքը չեմ նվիրաբերելու Աթմանին ու աշխարհա-յին տառապանքին: Ես այլևս ինձ չեմ սպանելու ու քայքայելու պես կտոր-կտոր անելու, որպեսզի ավերակների ետևում ինչ-ինչ գաղտնիք գտնեմ: Ես այլևս չեմ ղեկավարվելու ոչ Ցոգա-վեդա-յով, ոչ Աթհարվա-վեդայով, ոչ ճգնակեցությամբ կամ որևէ այլ ուսմունքով: Ինքս ինձ մոտ ես պետք է ուսանեմ, ես ուզում եմ ինքս իմ աշակերտը լինել, ինքս ինձ ճանաչել, գաղտնիքը, որ կոչվում է Սիդհարթա:

Նա զմայլված իր շուրջն էր նայում, ասես առաջին անգամ էր աշխարհը տեսնում: Ի՜նչ գեղեցիկ էր աշխարհը, բազմազան ու գունագեղ, զարմանահրաշ ու առեղծվածային էր աշխարհը... Մի տեղ կապույտ էր, մեկ այլ տեղ՝ դեղին, երրորդում կանաչ, եր-կինքն էր հոսում ու գետը, զառիվեր խոյանում էին անտառն ու լեռը, ողջը գեղեցիկ էր, ամեն-ամեն ինչ առեղծվածային էր ու կախարդական, և այդ ողջ հրաշքի ճիշտ մեջտեղում կանգնած էր ինքը՝ Սիդհարթան, արթնացողը, ինքն իրեն վերադարձի ճանա-պարհին: Այդ ամենը, բոլոր այդ գեղինն ու կապույտը, գետն ու անտառը, առաջին անգամը լինելով, մուտք էր գործում Սիդհար-թայի մեջ՝ նրա աչքերի միջով: Այդ ամենը այլևս Մարայի կախար-դությունը չէր կամ Մայայի շղարշաքողը, երևույթների աշխար-հի իմաստազուրկ ու պատահական բազմաբեռնությունը, որ այն-քան ատելի էր խորագետ բրահմանի համար, որն արհամարհում, անտեսում էր բազմազանությունը, որոնելով միասնականը: Կա-պույտը կապույտ էր, գետը գետ, և թեկուզ կապույտի ու գետի

մեջ, Սիդհարթայի մեջ ծպտված ապրում էր միասնականն ու աստվածայինը, սակայն, չէ՞ որ հենց դրանում է աստվածայինի հատկությունն ու իմաստը. այստեղ դեղին լինել կամ կապույտ, այնտեղ՝ երկինք, ահա այնտեղ՝ անտառ, իսկ այստեղ էլ՝ Սիդհարթա: Իմաստն ու էությունը երբեք ինչ-որ տեղ, իրերից զատ, նրանցից դուրս չեն եղել, այլ հենց նրանց մեջ ամփոփված, ամեն-ամեն ինչում, ամենագո:

- Եվ ինչքա՜ն խուլ ու բութ էի ես,- մտածեց Սիդհարթան՝ քայլերն արագ-արագ գցելով:- Երբ մեկը մի ձեռագիր է ընթերցում և ցանկանում է հասկանալ նրա իմաստը, նա երբեք չի արհամարի կամ ատի նշաններն ու տառերը և նրանց չի կոչի խաբկանք, մոլորություն, պատահականություն կամ անարժեք թաղանթ, այլ նա կընթեռնի դրանք՝ տառ առ տառ, սիրով կլցվի նրանց նկատմամբ, ամեն տառի ու նշանի հանդեպ: Մինչդեռ ես, որ ցանկանում էի ընթեռնել աշխարհի և իմ սեփական էության գիրքը, մի ինչ-որ նախապես ենթադրյալ իմաստի սիրույն արհամարհանքով էի նայում նշաններին ու տառերին, երևույթների աշխարհը ես կոչում էի մոլորություն ու խաբկանք, իմ աչքն ու իմ լեզուն անվանում էի պատահական ու արժեզուրկ երևույթներ: Օ՜ ոչ, դա արդեն անցյալին է պատկանում, ես արդեն արթնացել եմ, ես իսկապես որ արթնացել եմ, ես հենց միայն այսօր եմ ծնվել:

Իր խորհրդածությունների ծիրում հասնելով այդ կետին՝ Սիդհարթան անսպասելիորեն կանգ առավ, ասես ոտքերի տակ պառկած օձից ցնցվելով:

Հանկարծ մի բան էլ նրա համար պարզ դարձավ. ինքը, որ իսկապես արթնացել ու նորից էր ծնվել, հետևաբար պետք է իր կյանքը ևս ամենասկզբից սկսեր: Երբ նա այդ նույն առավոտյան լքում էր Ցեթավանայի պարտեզը, այն Վեհագույնի պարտեզը, արդեն կիսով չափ արթնացած, արդեն դեպի ինքն իրեն վերադառնալու ճանապարհին էր, նպատակադրվել էր, ինչն իրեն այնքա՜ն բնական ու ինքնին հասկանալի թվաց, այդքան երկար տարիներ ճգնակեցությանը տրվելուց հետո վերադառնալ հայրենի տուն, իր հոր մոտ: Բայց հիմա, այն նույն պահին, երբ նա կանգ էր առել՝ ասես ոտքերի տակ պառկած օձից ցնցվելով, նրա մեջ արթնացավ հետևյալ գիտակցությունը.- Բայց չէ՞ որ ես այլևս այն չեմ, ինչ էի առաջ, ես այլևս ճգնավոր չեմ, ես այլևս քուրմ չեմ, ոչ էլ բրահման: Ուրեմն ի՞նչ պետք է անեմ տանը, հորս հարկի տակ: Նորի՞ց սովորեմ, զոհե՞ր մատուցեմ: Ինքնախորասուզման արվեստի՞ն վարժվեմ: Բայց այդ ամենին ես արդեն հրաժեշտ եմ տվել, այդ ամենն այլևս տեղ չունի իմ ճանապարհին:

Անշարժացած՝ կանգ առավ Սիդհարթան, ասես գետնին գամված: Միայն մի պահ, շունչ քաշելու չափ տևած մի վայրկյան նրա սիրտը կանգ առավ, նա զգաց, թե ինչպես իր սիրտը, փոք-

րիկ մի թռչունի, գազանիկի կամ ճագարի նման սառչեց ու կծկվեց կրծքի տակ՝ այն մտքից սարսռած, թե որքա՜ն միայնակ է ինքը: Տարիներ շարունակ նա ապրել էր անհայրենիք և չէր զգացել դա: Հիմա նա զգաց դա: Այդ ողջ ընթացքում, իր ինքնախորասուզման ամենախորը պահերին անգամ նա միշտ եղել ու մնացել էր իր հոր որդին, մնացել էր բրահման, բարձր դասին պատկանող մեկը, ուսյալ ու գիտուն: Հիմա նա ընդամենը Սիդհարթան էր, ճիշտ է՝ արթնացած, բայց միայն այդքանը: Նա խորը շունչ քաշեց և ցրտից սարսռաց: Ոչ ոք այնպես մենակ չէր, ինչպես ինքը: Բոլոր բարձր դասի ներկայացուցիչները, բոլոր արհեստավորները պատկանում էին իրենց ու միայն իրենց դասին, ապաստան էին գտնում իրենց նմանների մոտ՝ ազնվացեղների կամ արհեստագործների, կիսում էին նրանց կյանքը, խոսում նրանց լեզվով: Չկար մի բրահման, որն իրեն բրահմանների դասին չհատկացներ և չապրեր նրանց հասարակության մեջ, չկար մի ճգնավոր, որն ապաստան չգտներ սամանաների միջավայրում, անգամ մարդկանցից մեկուսացած անտառաբնակ ճգնավորը ամբողջապես մենակ չէր, նա էլ էր շփվում իր նմանների հետ, նա էլ էր մի ինչ-որ դասի պատկանում, մի ընկերակցության, որը նրա համար փոխարինում էր հայրենիքը: Գովինդան վանական դարձավ և հազարավոր վանականներ նրա եղբայրներն էին, կրում էին նույն հանդերձանքը, ինչ ինքը, հավատում էին նույն բանին, խոսում էին նույն լեզվով: Սակայն ինքը, Սիդհարթան, ու՞մ էր նա պատկանում: Ո՞ւմ հետ նա պետք է իր կյանքը կիսեր: Ո՞ւմ հետ պետք է ընդհանուր լեզու գտներ:

Այդ պահից ի վեր, երբ նրան շրջապատող աշխարհն ասես հալվեց-անհետացավ, երբ նա միայնակ մնաց, ինչպես երկնքի աստղը, հոգևոր սառնության ու ընդարմացման, հոգեկան անկման այդ ակնթարթին Սիդհարթան դուրս լողաց՝ առաջվանից ավելի ամուր ու կարծրացած հսով: Նա զգաց, որ դա արթնացման վերջին ոգորումն էր, ծնվելու վերջին սարսռացող ցնցումը: Դրանից հետո նա անմիջապես ճանապարհ ընկավ, արագացրեց քայլերը և անհամբերությամբ առաջ էր սլանում, բայց ոչ թե դեպի տուն, հոր մոտ՝ այլ հեռանում էր իր անցյալ կյանքից:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՔԱՄԱԼԱ

Սիդհարթան միշտ մի նոր բան էր սովորում իր ճանապարհի յուրաքանչյուր քայլափոխին, քանի որ աշխարհը փոխակերպվել էր, և իր սիրտն էլ կախարդված էր: Նա տեսնում էր արևի ծագումը անտառոտ լեռան թիկունքից և նրա մայրամուտը հեռավոր արմավենիների ծովափին նշմարվող հորիզոնի ետևում: Գիշերները նա տեսնում էր աստղերի ընթացքը երկնքում, լուսնեղջույրը, որ լողում էր կապույտի մեջ՝ որպես մի նավակ: Տեսնում էր ծառերը, աստղերը, կենդանիներին, ամպերը, ծիածանը, ժայռածերպերը, խոտասեզերը, ծաղիկները, աղբյուրն ու գետը, վաղորդայնի թփուտների մեջ փայլատակող ցողը, հեռվում երևակվող կապտաթույր ու սպիտակափառ լեռները, թռչունների երգեցողությունն ու մեղուների բզզոցը, արծաթագույն բրնձի դաշտերում թևածող քամու շշունջը: Այդ ամենը, հազարածալ ու բազմաբղետ, միշտ էլ գոյություն է ունեցել, նախկիններում էլ արեգակն ու լուսինը մշտապես փայլատակել են, գետերն աղմկել ու մեղուներն իրենց բզզոցն են արձակել, սակայն, այն երբեմնի ժամանակներում, այդ ամենը Սիդհարթայի համար այլ բան չի եղել, քան հպանցիկ մի երևույթ, պատրանքով բուրող տեսախաբություն, որ ժամանակ առ ժամանակ երևակվում էր իր աչքերի առաջ, որոնց կասկածելի գոյության հանդեպ հարկ էր լոկ աչք փակել և որը հենց միայն այն նպատակով գոյություն ուներ, որպեսզի խզվեր ու ոչնչացվեր մտածողության կողմից, քանզի դա էություն չէր, քանզի էությունները գտնվում էին հասանելիի, տեսանելիի սահմաններից անդին: Այժմ, սակայն, նրա ազատագրված հայացքը կանգ էր առնում այն ամենի վրա, ինչն ընկած էր այս կողմում, նա տեսնում ու ճանաչում էր տեսանելին, հայրենիք էր փնտրում այս աշխարհում, իրերի էությունները չէր փնտրում, չէր ձգտում դեպի այնկողմնայինը: Գեղեցիկ էր աշխարհը, երբ մարդս այն ընկալում է այնպես, ինչպիսին այն կա, այդպես՝ առանց որոնելու, այնպես պարզ ու մանկամտորեն: Գեղեցիկ էին լուսինն ու աստղերը, սքանչելի էին աղբյուրն ու ծովեզերքը, անտառն ու ժայռը, այծերն ու ոսկեթև բզեզները, ծաղիկներն ու թիթեռնիկները: Որքա՜ն հիասքանչ ու սիրելի էր քայլել այդ աշխարհով, մանկան պես, արթնացած, հոգին պարզած ամենայն մերձավորին, հաշտ ու խաղաղ, առանց տարակուսի դույզն-ինչ նշույլի: Արևն այլ կերպ էր գլուխդ այրում, մեկ ուրիշ կերպ էին զովություն պարգևում անտառի ստվերները, ուրիշ կերպ էին բուրում աղբյուրն ու գետնափոր ջրապահեստը, սեխն ու բանանները: Օրերն ավելի կարճ էին թվում, գիշերները՝ շուտանցիկ, ժամերն իրար ետևից թռչում էին ու անհետանում,

ինչպես ծովում լողացող առագաստը, և առագաստի ներքո նավն էր՝ գանձերով լի, հաճույքներով լեփլեցուն: Սիդհարթան տեսավ կապիկների մի թափառախումբ, որ թրև էր գալիս անտառի բարձրաբերձ կամարի ներքո, բարձրուղեշ ճյուղերի մեջ, լսում էր նրանց վայրի, վավաշոտ երգեցողությունը: Սիդհարթան տեսավ, թե ինչպես է խոյը հետապնդում մաքիին ու զուգավորվում նրա հետ: Տեսավ, թե ինչպես էր եղեգնուտին սահմանակցող լճակում երեկոյան քաղցը հագեցնելու համար որսի դուրս եկել շնաձուկը, ինչպես էին նրա առջևից փախչում երիտասարդ ձկնիկները, որ, վախը սրտներում, ժամանակ առ ժամանակ, ամբողջ վտառներով ցատկոտում էին լճակի մակերևույթին՝ փայլեցնելով իրենց ոսկե թեփուկները: Ուժ ու խանդավառ կիրք էր ճառագում շուրջբոլորը՝ ձկնորսի կատաղի ու ինքնամոռաց ընթացքից գոյացած ջրակոհակներից:

Այդ ամենը մշտապես եղել է և ինքը առաջներում չի էլ նկատել դա, նա այդ ամենին ներկա կամ մասնակից չի եղել: Հիմա ինքն այդ ամենին մասնակից է ու ներկա, ինքը պատկանում է դրան: Իր հայացքի միջով սահում-անցնում էին լույսն ու ստվերը, իր սրտի միջով անց էին կենում աստղերն ու լուսինը:

Ճանապարհին Սիդհարթան մտաբերում էր նաև այն ամենը, ինչ ինքը վերապրել էր Յեթավանայի պարտեզներում, ուսմունքը, որն այնտեղ ինքը լսել էր, աստվածային Բուդդայի, Գովինդայի հետ իր հրաժեշտը, Վեհագույնի հետ իր ունեցած զրույցը: Նա կրկին վերհիշեց Վեհագույնի հետ իր զրույցի մանրամասները, այն խոսքերը, որ ինքը ասել էր նրան, բառ առ բառ, և զարմանքով նկատեց, որ այն ժամանակ ասել ու խոսել էր բաների մասին, որոնց վերաբերյալ այնժամ ինքը հստակ պատկերացում անգամ չուներ, նույնիսկ չգիտեր էլ դրանց մասին: Այն, ինչ ինքն այն ժամանակ ասել էր Գոթամային, որ Բուդդայի գանձն ու գաղտնիքը ոչ թե նրա ուսմունքն էր, այլ այն անարտահայտելին ու ուսուցման չտրվողը, ինչը նա երբևէ զգացել ու վերապրել էր իր պայծառատեսության պահին, հենց դա էր, որ ինքն այժմ ըսկըսել էր վերապրել: Նա հիմա ինքն իրեն պետք է վերապրեր: Իրականում նա շատ վաղուց գիտեր, որ իր եսը Աթմանն էր, որը ծագում էր այն նույն հավերժական էությունից, ինչ և բրահման: Բայց ինքը, իրականում, այն երբեք չէր գտել, որովհետև ինքը այն մտքի ցանցով էր ցանկացել որսալ: Եթե իսկապես մարմինը չէր այդ եսը և ոչ էլ զգացմունքների խաղը, ապա հաստատապես այդպիսիք չէին կարող լինել ո՛չ միտքը, ո՛չ բանականությունը, ո՛չ սովորովի իմաստնությունը, ո՛չ եզրահանգումներ անելու ձեռքբերովի արվեստը, ո՛չ էլ արդեն իսկ մտածված բաներից նորանոր մտքեր հղանալու կամ հյուսելու ունակությունը: Ո՛չ, մտածությունների այդ աշխարհն էլ դեռևս այսրկողմնային չէր,

և բոլորովին անիմաստ էր սպանել զգացմունքի պատահականության ծնունդ հանդիսացող եսը, փոխարենը ուժերը ներածի չափով սնուցանելով մտքերի, սովորության գիտելիքների պատահական եսը: Երկուսն էլ՝ ինչպես մտքերը, այնպես էլ՝ զգացմունքները, գեղեցիկ բաներ էին, որոնց թիկունքում թաքնված էր ողջի ու ամենի իրական իմաստը, երկուսին էլ, թե՛ մեկին թե՛ մյուսին հարկավոր էր ունկնդրել, խաղալ նրանց հետ, նրանց ոչ պետք էր անտեսել, ոչ էլ թերագնահատել, երկուսի մեջ էլ հարկավոր էր լսել նրանց խորքերում հնչող ծածուկ ձայները: Եվ նա վճռել էր ընթանալ դեպի այնտեղ, ուր իրեն առաջնորդում էր իր ներքին ձայնը և չմնալ այնտեղ, ինչից իրեն ետ էր պահում այդ նույն ներքին ձայն կոչվածը: Ինչու՞ էր Գոթաման այն ժամանակ, այն բարձրագույն պահին, նստել Բո ծառի տակ, երբ նրան պայծառատեսությունն այցելեց: Նա լսել էր ձայնը, իր սեփական սրտի ձայնը, որն իրեն կարգադրել էր հանգիստ առնել այդ ծառի ներքո, և նա հետ կանգնեց, հրաժարվեց իր մարմնի ինքնաձաղկումից, զոհեր մատուցելուց, լվացումներից ու աղոթքներից, որոշեց ուտել ու խմել, քնանալ ու երազներին տրվել, նա անսաց իր ներքին ձայնին: Այդպես հլու-հնազանդ անսալ, բայց ոչ արտաքին հրամանին, այլ միայն ներքին ձայնին, պատրաստ լինել դրան, դա հիանալի էր, անհրաժեշտություն էր դա, մինչդեռ ողջ մնացյալը բնավ անհրաժեշտություն չէր:

Գիշերը, երբ նա քուն էր մտած գետն անցկացնող լաստանավորդի ծղոտե հյուղակում, Սիդհարթան մի երազ տեսավ. Գովինդան կանգնած էր նրա առաջ՝ ճգնավորի դեղին սքեմ զգեցած: Գովինդան տխուր տեսք ուներ և նույն տխուր շեշտով էլ հարցրեց. «Ինչու՞ դու ինձ լքեցիր»: Այդժամ ինքը գրկեց, համբուրեց Գովինդային, ձեռքը նրա ուսովը գցեց, և մինչ նա բարեկամին սեղմել էր իր կրծքին ու համբուրում էր նրան, վերջինս այլևս Գովինդան չէր, այլ մի կին, և այդ կնոջ հանդերձանքի տակից դուրս էր ցցվել հասուն ու առլեցուն կուրծքը, որի կողքին պառկել էր Սիդհարթան, խմում էր ու խմում, քաղցր ու ուժգնահամ ուներ այդ կրծքի կաթը: Այն կնոջ ու տղամարդու համ ուներ, բուրում էր արևով ու անտառով, կենդանիներով ու ծաղիկներով, զանազան տեսակի մրգերով ու հաճույքներով: Այն հարբեցնում էր ու թմրեցնում գիտակցությունը: Երբ Սիդհարթան արթնացավ, հյուղակի դռնակից երևաց գետակի գունատ լուսափայլը, իսկ անտառում բարձր ու զիլ հնչում էր թուխ բվեճի արձակած կռինչը:

Օրը բացվելուն պես Սիդհարթան խնդրեց իր հյուրընկալին, լաստավարին, իրեն գետի հանդիպակաց ափը փոխադրել: Լաստանավորդը նրան նստեցրեց գետափին կապված բամբուկից հյուսկեն լաստամակույկին ու տեղափոխեց դիմացի ափը: Վա-

ղորդայնի լույսերի մեջ թաթախված կարմրին տվող փայլեր էր արձակում ընդարձակ փռված ջրազանգվածը:

- Շա՜տ գեղեցիկ գետ է,- ասաց նա իր ուղեկցին:

- Այո՛,- վրա բերեց լաստավարը,- անչա՜փ գեղեցիկ է, ես այն ամեն ինչից շատ եմ սիրում: Ես հաճախ եմ ունկնդրել նրան, հաճախ եմ նայել նրա աչքերի մեջ և ամեն անգամ նորանոր բաներ եմ սովորել նրանից: Գետից կարելի է շատ բան սովորել:

- Ես չնորհակալ եմ քեզանից, իմ բարերար,- ասաց Սիդհարթան, երբ նա արդեն դիմացի ափին իջևանեց:- Ես նվեր չունեմ քեզ ընծայելու, սիրելիս, ոչ էլ կարող եմ ուրիշ կերպ վարձահատույց լինել քեզ: Ես մի անհայրենիք թափառաշրջիկ եմ, տնանկ մի բրահմանորդի ու սամանա:

- Ես ինքս էլ գլխի ընկա, թե ով ես դու,- ասաց լաստավարը,- ես քեզանից վարձ չեմ ակնկալում և ոչ էլ՝ որևէ ընծա: Դու իմ նվերը մեկ ուրիշ անգամ կտաս:

- Դու այդպե՞ս ես կարծում,- զվարճախոսեց Սիդհարթան:

- Վստահաբա՛ր: Ես դա էլ եմ գետից սովորել. ամենքը վերադառնում են... Դու՛ էլ, սամանա, մի օր կվերադառնաս: Դե մնաս բարով... Քո բարեկամությունը թող ինձ ընծա լինի: Ամեն անգամ հիշիր ինձ՝ աստվածներին զոհեր մատուցելիս:

Ժպտադեմ՝ նրանք բաժանվեցին իրարից: Փայլատակող ժպիտն աչքերում՝ Սիդհարթան հրճվանք էր ապրում լաստավարի մերձակցության ու բարեկամական պահվածքի համար: «Նա կարծես Գովինդան լինի»,- ժպտադեմ մտածեց նա,- «բոլոր մարդիկ, ում ես հանդիպել եմ իմ ճանապարհին, ասես Գովինդան լինեն: Բոլորը երախտապարտ են ու չնորհակալ, թեև իրենց նկատմամբ է պատշաճում չնորհապարտ լինել: Բոլորը հարգանքով են լցված, բոլորը հաճույքով ցանկանում են բարեկամ լինել, հաճույքով են հնազանդվում և խորհրդածում են հնարավորինս քիչ: Մարդիկ նման են երեխաների:

Կեսօրվա կողմ նա մի գյուղակում հայտնվեց: Փողոցներում, կավաշեն տնակների առաջ վազվզում էին երեխաները, խաղում սեխի կճեպներով ու խխունջներով, բղավում էին ու իրար հետ գզվռտվում, սակայն օտարական սամանային տեսնելուն պես՝ վախվորած մի կողմ քաշվեցին: Գյուղակի ծայրում մի ճանապարհ էր անցնում աղբյուրի կողքով, իսկ աղբյուրի եզրին մի կին էր ծունկի եկել ու լվացք էր անում: Երբ Սիդհարթան ողջունեց նրան, կինը գլուխը բարձրացրեց և ժպտադեմ նրա կողմը նայեց, այնպես որ Սիդհարթան նկատեց նրա աչքի մեջ փայլատակող սպիտակուցի պեծպեծանքը: Նա կնոջը ողջունեց ճամփորդող վանականներին հատուկ սովորական օրհնաբանությամբ ու հարցրեց, թե դեռ որքան երկար է ճանապարհը մինչև մեծ քաղաքը: Այդժամ կինը տեղից վեր կացավ, ոտքի կանգնեց, մո-

տեցավ նրան, այնպե՛ս գեղեցիկ էին փայլում կնոջ խոնավ շրթունքները նրա երիտասարդ դեմքի վրա: Դեռատի կինը սկսեց կատակաբանել նրա հետ և հարցրեց, թե արդյո՞ք ճամփորդը քաղցած չէ, ճի՞շտ է արդյոք, որ սամանները միայն անտառներում են գիշերում և նրանց արգելված է կանանց հետ հարաբերվել: Ասելուն պես՝ կինը նրա աջ ոտքն առավ իր ձախ ոտքի մեջ և այնպիսի մի շարժում արեց, որպիսին կանայք անում են, երբ հրավիրում են տղամարդուն փաղաքուշ սիրախաղի, ինչը դասագրքերն անվանում են «ծառամագլցման արվեստ»: Սիդհարթան զգաց, թե ինչպես է արյունը եռ գալիս իր մեջ, և քանի որ այդ պահին նա մտաբերեց իր տեսած երազը, նա փոքր-ինչ խոնարհվեց կնոջ վրա և շրթունքներով հպվեց նրա կրծքի սրածայր պտուկին: Իսկ երբ բարձրացրեց աչքերը ու նայեց կնոջ ժպտացող դեմքին, այնտեղ նկատեց կրքոտության կնիքը և նեղացած աչքերում՝ ցանկասեր կարոտախտը:

Սիդհարթան ևս համակվեց ըղձատենչ կարոտախտով ու սեռերի մոլուցքով: Բայց քանի որ ինքը դեռևս երբեք որևէ կնոջ մատով դիպած չկար, մի պահ միայն վարանեց, մինչդեռ նրա ձեռքերն արդեն իսկ պատրաստ էին գրկելու կնոջը: Եվ հենց այդ պահին նրա մարմնով սարսուռ անցավ ու նա ընկալեց իր ներքին ձայնը, որն ասում էր՝ «ոչ»: Եվ անմիջապես էլ դեռատի կնոջ ժպտուն դեմքը նրա համար կորցրեց իր ողջ գրավչությունը և նա տեսավ միայն սեռական մոլուցքով, կտղանքով բռնված կնոջ խոնավությամբ բուրող կենդանական դեմքը: Նա քնքշորեն շոյեց կնոջ այտը, հետո կտրուկ շրջվեց ու ճկուն սահքով անհետացավ՝ հուսախաբությանն անձնատուր կնոջից թաքնվելով բամբուկի մարգագետնում:

Նույն օրը՝ երեկոյան դեմ նա հասավ մեծ քաղաքի դարպասների մոտ և շատ ուրախացավ, քանի որ ձգտում էր մարդկանց հետ շփվել: Երկար ժամանակ էր նա ապրել անտառներում և լաստավարի ծղոտե հյուղակն այդ ամբողջ ընթացքում եղել էր այն միակ ծածկը, որի ներքո ինքը գիշերներ էր անցկացրել:

Քաղաքի մատույցներում, գեղեցիկ ցանկապատով շրջանակված այգեստանի մերձակայքում, ճամփորդի դեմ հանդիման հայտնվեց զամբյուղներով ծանրաբեռնված սպասուհիների ու սպասավորների փոքրիկ թափորը: Նրանց ճիշտ և ճիշտ մեջտեղում, չորս ծառաների ուսնած բազմաթղեթ ու նկարեն պատգարակի վրա, կարմիր բարձերին թիկնեթեկին տված, արևից պաշտպանող գունագեղ գահածածկույթի ստվերում բազմած էր մի տիկին, նրանց տիրուհին: Սիդհարթան կանգ առավ աչք չոյող այգեստանի մուտքի առաջ և ուշիուշով նայում էր թափորի երթին, տեսավ ծառաներին, սպասուհիներին, կողովները, տեսավ գահածածկույթը և նրա ներքո բազմած տիկնոջը: Սևաթույր

վարսերի բարձր սանրվածքի տակ նա տեսավ լուսաճառագ, նրբանուրբ ու խելացի մի դեմք, վառ կարմիր բերանը՝ ասես նորաբաց թուզ հիշեցնող, գեղամշակված ու սնգույրով գծաներկված բարձրաղեղ ունքերը, սևաթույր աչքերը՝ խելացի ու զգոն, լուսապայծառ երկար պարանոցը, որ վեր էր խոյանում կանաչ ու ոսկեգույն վերնազգեստից, հանդարտ կախ ընկած լուսավոր ձեռքերը՝ երկարուկ ու բարալիկ, հոդախաղերին ընդելուզված ոսկեձուլ ու լայն ապարանջաններով:

Սիդհարթան տեսավ նրա գեղեցկությունը և նրա սիրտը հրրճվանքից ուռչեց: Նա խորը գլուխ տվեց, երբ գահավորակը իրեն մոտեցավ և վերստին ուղղվելով՝ հայացքը սևեռեց այդ լուսավոր ու նրբենի դեմքին, մի պահ նրա հայացքը գամվեց կնոջ խելամիտ, բարձր ու կամարաձև ունքերի տակ երևակվող աչքերին, ներշնչելով իրեն անծանոթ անուշահոտությունների զգլխիչ բույրը: Կինը ժպիտով պատասխանեց նրա երկրպագության ցույցերին և մի ակնթարթ անց նա այլևս անհետացավ պարտեզում, նրա հետևից էլ՝ իր սպասավորները:

- Ահա՛ ես մուտք եմ գործում այս քաղաքը,- մտածեց Սիդհարթան,- մի այսպիսի հմայիչ նախանշանի ներքո:

Նա ցանկություն ունեցավ անմիջապես ոտք դնել պարտեզի ցանկապատից ներս, բայց զսպեց իրեն, և միայն այժմ նա հասկացավ, թե ինչպես էին, մուտքի մոտ իրեն նայում ծառաներն ու սպասուհիները, որքա՛ն արհամարհանք, անվստահություն ու նողկանք կար նրանց հայացքում:

- Չէ՞ որ ես դեռ սամանա եմ,- մտածեց նա,- ես դեռ ճգնավորի ու մուրացկանի տեսք ունեմ: Ինձ այլևս չի կարելի այս տեսքով մնալ, այս կերպարանքով ես չեմ կարող պարտեզի մուտքից ներս մտնել:

Ու նա ծիծաղեց:

Ճանապարհին պատահած առաջին անցորդին հարցուփորձ արեց պարտեզի ու այն տիկնոջ վերաբերյալ և իմացավ, որ դա հանրահայտ կուրտիզանուհի, դշխո Քամալայի այգեստանի ապարանքն է և որ այգեստանից բացի՝ մի տուն էլ նա քաղաքում ունի:

Այնուհետև Սիդհարթան մուտք գործեց քաղաք: Հիմա նա հստակ նպատակ ուներ:

Իր այդ նպատակին հետամուտ՝ նա ներքաշվեց քաղաքային կյանքի մեջ, խառնվեց փողոցային ամբոխին, շրջում էր հրապարակներում, հանգիստ առնում գետափնյա քարե աստիճաններին: Երեկոյան կողմ նա բարեկամացավ վարսավիրի մի ենթավարպետի հետ, որին նա առաջին անգամ տեսավ նկուղի ստվերներում աշխատելիս, ապա հանդիպեց Վիշնուի տաճարում՝ աղոթելիս, որին ինքը պատմեց Վիշնուի ու Լակշմիի մասին զրույցը: Գիշե-

ը նա անցկացրեց գետափնյա նավակների հարևանությամբ, իսկ առավոտ վաղ, նախքան վարսավիրի կրպակում կհայտնվեին առաջին հաճախորդները, ենթավարպետի մոտ նա սափրել տվեց իր մորուքը և կտրատել տվեց վարսերը, հարդարեց ու օծեց նրբանուրբ յուղերով: Հետո գնաց ու լողացավ գետում:

Երբ ուշ երեկոյան գեղեցկուհի Քամալան, իր գահավորակին բազմած, մոտենում էր այգեստանին, Սիդհարթան կանգնել էր մուտքի դռան մոտ, գլուխ խոնարհեց նրա առաջ և դշխոն պատասխան նշան արեց նրան: Հետո էլ՝ թափորի վերջից ընթացող սպասավորին ակնարկեց մի պահ սպասել և վերջինիս խնդրեց հաղորդել իր տիրուհուն, որ նրա հետ զրուցել է ցանկանում երիտասարդ բրահմանը: Միառժամանակ անց՝ սպասավորը վերադարձավ և առաջարկեց նրան հետևելու իրեն, լռելյայն ուղեկցեց նրան դեպի այն տաղավարը, ուր օթոցին ընկողմանած էր Քամալան ու Սիդհարթային մենակ թողեց նրա հետ:

- Այդ դու չէի՞ր, որ երեկ էլ կանգնած էիր դրսում ու ողջունեցիր ինձ,- հարցրեց Քամալան:

- Այո՛, ես երեկ էլ քեզ տեսա ու ողջունեցի:

- Բայց երեկ դու կարծես փոչոտ մորուք ունեիր ու երկար մազեր:

- Միանգամայն ճիշտ է, դու շատ ճիշտ ես ամեն ինչ նկատել: Դու տեսել ես Սիդհարթային, բրահմանորդուն, որ լքել էր իր հայրենիքը՝ սամանա դառնալու նպատակով և երեք տարի շարունակ այդպիսին է եղել: Այժմ, սակայն, ես թողել եմ այդ ճանապարհը ու եկել եմ այս քաղաքը, և առաջին մարդը, որն ինձ հանդիպեց մինչև քաղաք մտնելը, դու՛ էիր: Եվ ահա՛ թե ես ինչ եմ ցանկանում քեզ ասել, ո՛վ Քամալա: Դու առաջին կինն ես, որի հետ Սիդհարթան խոսում է այլ կերպ, քան խոնարհած հայացքով: Ես այլևս երբեք աչքերս ցած չեմ խոնարհի, եթե գեղեցկուհի կնոջ հանդիպելու լինեմ:

Քամալան ժպտաց և սկսեց խաղալ սիրամարգի փետուրներից հյուսկեն իր հովհարով: Եվ հարցրեց.

- Եվ միայն դա ասելու համա՞ր է Սիդհարթան ինձ մոտ եկել:

- Այո՛, քեզ դա ասելու համար ու նաև շնորհակալություն հայտնելու, որ դու այդքան գեղեցիկ ես: Եվ եթե դու կընդունես, ապա ես քեզ կխնդրեի, Քամալա, լինել իմ ընկերուհին ու ուսուցիչը, քանզի ես դեռևս բնավ չեմ տիրապետում այն արվեստին, որի մեջ դու վարպետ ես:

Այստեղ Քամալան բարձրաձայն ծիծաղեց:

- Ինձ հետ դեռ երբեք նման բան չի պատահել, բարեկամս, որ անտառաբնակ սամանան այցելի ինձ և ուզենա սովորել ինձ մոտ: Ինձ հետ դեռ երբեք չի պատահել, որ երկար մազերով, մաշված ու պատառոտված ամոթույքի կապով սամանան իմ ոտքը գա...

Շատ պատանիներ են ինձ մոտ գալիս, նրանց թվում նաև բրահմանորդիներ, բայց նրանք ներկայանում են գեղեցիկ հանդերձանքով, նրբաճաշակ ոտնամաններով, անուշահոտություններ արձակող վարսերով և լիքը դրամապանակներով: Ահա այսպիսի՛ պատանյակներ են ինձ այցելում, ո՛վ սամանա:

Խոսեց Սիդհարթան.

- Ահա՛ և քեզանից ես սովորեցի իմ առաջին դասը: Երեկ էլ ես մի դաս ստացա: Ես արդեն մորուքս սափրել տվեցի, մազերս հարդարեցի ու յուղերով օծեցի: Հիմա արդեն ինձ քիչ բան է պակասում, ո՛վ գեղեցկուհիդ, գեղեցիկ հանդերձանք, նրբանուրբ ոտնամաններ, քսակի մեջ փող: Իմացա՛ծ եղիր, որ Սիդհարթան շատ ավելի դժվար խնդիրներ է իր առաջ դրել և ոչ միայն նման դատարկ բաներ, ու հասել է իր նպատակներին: Դե ինչպե՞ս է հնարավոր, որ ես չհասնեմ այն նպատակին, որը դեռ երեկ եմ իմ առաջ դրել. դառնալ քո ընկերը ու քեզանից սովորել սիրո հաճույքները... Դու կտեսնես, Քամալա, թե ես ինչ ընդունակ աշակերտ եմ, ես շատ ավելի դժվար բաներ եմ սովորել, քան այն, որ դու ինձ պետք է սովորեցնես: Ուրեմն ասա ինձ. Սիդհարթա, այն, ինչ դու այս պահին ունես, դեռ բավարար չէ, մազերդ թեև յուղերով են օծված, սակայն դու դեռ հագուստ չունես, չունես ոտնամաններ, առանց փող...

Քամալան ծիծաղից թուլացած բացականչեց.

- Ո՛չ, թանկագինս, այդքանը դեռ բավարար չէ: Սիդհարթան պետք է զգեստներ ունենա, գեղեցիկ հանդերձներ ու ոտնամաններ, գեղեցկակար ոտնամաններ, և շատ փող դրամապանակում և ընծաներ Քամալայի համար: Հիմա դու ամեն ինչ գիտե՞ս, անտառաբնակ սամանա: Լա՛վ մտապահիր դա, և չմոռանաս:

- Ես ամեն ինչ շատ լավ հասկանում եմ,- բացականչեց Սիդհարթան,- ինչպե՞ս կարող եմ ես չհիշել մի բան, ինչն ասվում է քո շրթունքներից... Քո բերանն ասես մի նորաբաց ու թարմ թուզ լինի, Քամալա: Իմ բերանն էլ կարմիր է ու թարմ, այն շատ հարմար կգա քոնին, ա՛յ կտեսնես: Բայց ասա՛ ինձ, գեղեցկուհի Քամալա, մի՞թե դու բնավ չես վախենում անտառաբնակ սամանայից, որն եկել է սիրո դասեր առնելու:

- Ինչու՞ ես պետք է վախենամ մի սամանայից, անտառից եկած մի հիմար սամանայից, որն եկել է չնագայլերի մոտից և դեռ բոլորովին չգիտի, թե ինչ ասել է կին:

- Օ՛, նա շատ ուժեղ է, այդ սամանան, և ոչնչից վախ չունի: Նա կարող էր քեզ ուժով տիրանալ, գեղեցկուհի աղջիկ: Նա կարող էր առևանգել քեզ, քեզ մեծ տառապանք պատճառել...

- Օ՛ ո՛չ, սամանա, ես դրանից չեմ վախենում: Արդյո՞ք որևէ սամանա կամ բրահման վախենում է այն բանից, որ կարող է գալ մեկը, որ կբռնի նրան ու կառևանգի նրանից նրա գիտելիքները,

ազնվաբարոյությունը, նրա խորագիտությունը: Բնավ ո՛չ, քանի որ այդ ամենը նրա անստարելի սեփականությունն է, որից նա բաժին է հանում միայն այնքանը ու այն չափով, որքան ինքն է ցանկանում և ում որ ինքն է կամենում: Նույնը վերաբերում է նաև Քամալային ու սիրո հաճույքներին: Գեղեցիկ է ու կարմիր Քամալայի բերանը, բայց փորձի՛ր միայն համբուրել այն Քամալայի կամքին հակառակ, մի կաթիլ քաղցրություն իսկ դու չես զգա այդ համբույրի մեջ, որն ուրիշ հանգամանքներում այնքա՛ն շատ կարող է պարգևել այդ բարիքից... Դու խելացի ես ու ընդունակ, Սիդհարթա, ուրեմն իմացի՛ր և սա. սերը կարելի է մուրալ, գնել, որպես ընծա ստանալ, գտնել ճանապարհին ընկած, սակայն առևանգել կամ ուժով տիրանալ նրան հնարավոր չէ: Այդպես դու սխալ ուղու վրա կընկնես: Օ ո՛չ, ափսոս կլիներ, որ քեզ պես գեղեցիկ պատանին, խնդրին բոլորովին սխալ կողմից մոտենար...

Սիդհարթան ժպիտը դեմքին խոնարհվեց ու ասաց.

- Իսկապես ափսոս կլիներ, Քամալա, դու միանգամայն իրավացի ես: Ափսոսանքի արժանի բան կլիներ... Ո՛չ, ես չեմ ուզում զրկվել քո շուրթերից ծորացող քաղցրության ոչ մի կաթիլից, բայց դու՝ էլ պետք է ճաշակես իմ շուրթերի քաղցրությունը: Ուրեմն այսպե՛ս. Սիդհարթան կվերադառնա, երբ նա կունենա այն ամենը, ինչն այս պահին պակասում է նրան՝ հանդերձանք, ոտնամաններ, փող: Սակայն, ասա՛ ինձ, գեղեցկուհի Քամալա, դու չե՞ս կարող ինձ մի հարցում մի փոքրիկ խորհուրդ էլ տալ:

- Խորհո՞ւրդ: Ինչի՞ կապակցությամբ: Իսկ ինչու՞ խորհուրդ չտալ թշվառական, տգետ սամանային, որ գալիս է անտառաբնակ շնագայլերի մոտից:

- Դե մի խորհուրդ տուր ինձ, սիրելիդ իմ Քամալա. ու՞ր գնամ, որպեսզի ամենաշտապ ձևով կարողանամ ձեռք բերել թվարկածդ այդ երեք բաները:

- Բարեկա՛մ, դա շատ-շատերը կուզենային իմանալ: Դու պետք է անես այն, ինչ սովորել ես և դրա դիմաց որպես վարձ փող պահանջես, հանդերձանք ու ոտնամաններ: Աղքատ մարդու համար փող վաստակելու այլ ճանապարհ չկա: Իսկ դու ի՞նչ կարող ես անել:

- Ես կարող եմ առմտածել: Կարող եմ սպասել: Կարող եմ ծոմ պահել:

- Միայն այդքա՞նը, ուրիշ ոչի՞նչ:

- Ոչինչ: Ի դեպ, ես կարող եմ նաև բանաստեղծություններ հորինել: Դու համաձա՞յն ես, որ ես մի բանաստեղծություն արտասանեմ և փոխարենը դու ինձ մի համբույր տաս:

- Համաձա՛յն եմ, եթե քո բանաստեղծությունը գուր գա ինձ: Դե արտասանի՛ր այն:

Եվ Սիդհարթան, փոքր-ինչ մտածելուց հետո, արտասանեց այս բանաստեղծությունը.

Ստվերախիտ այգին մտավ գեղեցկուհի Քամալան:
Մուտքի առաջ կանգնած էր այն թուխ պատանին՝ սամանան:
Եվ լոտոսի գեղեցկագույն ծաղիկն հանկարծ տեսնելով՝
Նա խոնարհվեց ու Քամալան ժպտաց նրան ի ողջույն:
Եվ պատանին խորհեց. աստծուն աղոթելուց ավելի
Հաճելի է համբույր քաղել շուրթերից Քամալայի:

Ափերն ուժգին իրար խփելով ծափ զարկեց Քամալան, այնպես որ ոսկեկուռ ապարանջանները զրնգացին:

- Քո բանաստեղծությունը չա՛տ գեղեցիկ է, թուխ սամանա, և ես իսկապես ոչինչ չեմ կորցնի, եթե դրա դիմաց քեզ մի համբույր տամ:

Նա հայացքով պատանուն իր կողմը գրավեց, վերջինս էլ՝ իր դեմքը խոնարհելով նրա դեմքին, շրթունքները սեղմեց նրա շրթունքներին, որ նորաբաց թուզ լինեին կարծես: Քամալայի համբույրը շատ երկար էր, և խորադրոշմ զարմանքով Սիդհարթան զգաց, թե ի՛նչ իմաստուն ձևով էր նա իրեն ուսուցանում, ի՛նչ խելացի էր Քամալան, ինչպե՛ս էր նա կառավարում իրեն՝ մեկ ետ պահելով ու մեկ էլ իր կողմը գրավելով, զգաց, որ այդ առաջին համբույրին դեռ հետևելու է հմտորեն մշակված ու փորձված համբույրների մի ամբողջ շարք, մեկը մյուսից բոլորովին տարբեր, որոնք դեռ սպասում էին իրեն, որոնք ինքը դեռ ճաշակելու էր: Խորը շունչ քաշելով՝ նա մնաց տեղում կանգնած, երեխայի պես սքանչանալով՝ սովորելու արժանի գիտելիքի այն քանակի առթիվ, որ նոր միայն բացվում էր իր աչքերի առջև:

- Քո բանաստեղծության տողերը չա՛տ գեղեցիկ են,- բացականչեց Քամալան,- եթե ես շատ հարուստ լինեի, դիմացը ես քեզ ոսկե մետաղադրամներ կտայի: Բայց քեզ համար անչափ դժվար կլինի քո այդ բանաստեղծություններով այնքան շատ փող վաստակել, որքան քեզ անհրաժեշտ է: Իսկ փող քեզ շատ է պետք լինելու, եթե դու ցանկանում ես դառնալ Քամալայի ընկերը:

- Ի՛նչ լավ ես դու կարողանում համբուրել, Քամալա,- մրմնջաց Սիդհարթան:

- Այո՛, դա ես կարողանում եմ անել: Դրա համար էլ ես պակասություն չեմ զգում ո՛չ հանդերձանքի, ո՛չ ոտնամանների, ապարանջանների և բազմաթիվ ուրիշ-ուրիշ գեղեցիկ իրերի հարցում: Բայց դու՞ ինչ կարող ես անել: Մի՞թե դու բացի մտածելուց, ծոմ պահելուց ու բանաստեղծություններ հորինելուց ուրիշ ոչինչ չգիտես:

- Ես գիտեմ նաև զոհ մատուցելու ժամանակ ասվող երգեր,- ասաց Սիդհարթան,- բայց ես այլևս չեմ ուզում երգել դրանք: Ես գիտեմ նաև կախարդական խոսքեր, բայց ես այլևս չեմ ուզում

դրանք արտաբերել: Ես սուրբ գրքերի ընթերցանությամբ եմ պարապել...

- Կա՛նգ առ, բավակա՛ն է,- ընդհատեց նրան Քամալան:- Դու կարդա՛լ գիտես: Իսկ գրե՛լ...

- Իհա՛րկե ես դա գիտեմ: Շատերը գիտեն դա:

- Մեծամասնությունը դա չգիտի: Ես էլ չգիտեմ: Դա շատ լավ է, որ դու գրել և կարդալ գիտես, շա՛տ լավ է: Կախարդական խոսքերն էլ քեզ կարող են դեռ պետք գալ:

Այդ պահին մոտ վազեց սպասուհիներից մեկը և ինչ-որ բան շշնջաց տիրուհու ականջին:

- Հիմա ինձ մոտ մարդ է գալու,- բացականչեց Քամալան:- Շու՛տ հեռացի՛ր այստեղից, Սիդհարթա, ոչ ոք քեզ չպետք է տեսնի այստեղ, սա լա՛վ հիշիր: Վաղը մենք նորից կտեսնվենք:

Իսկ սպասուհուն կարգադրեց պատվարժան բրահմանին մի ճերմակ թիկնոց տալ: Զիմանալով նույնիսկ, թե ինչպես դա տեղի ունեցավ, Սիդհարթան ենթարկվեց սպասուհուն, որը նրան սրահից դուրս ուղեկցեց, զարտուղի ճանապարհներով նրան բերեց այգու մեջ գտնվող փոքրիկ տնակը, մի ձեռք վերնազգեստ տվեց, առաջնորդեց դեպի թփուտը, թախանձագինս խնդրելով, առանց որևէ այլևայլության, անմիջապես լքել այգեստանի ցանկապատված տարածքը:

Նա հաճույքով ենթարկվեց հրահանգին: Անտառին վարժված լինելով՝ Սիդհարթան անաղմուկ կտրեց-անցավ այգեստանը և ցանկապատի վրայով մյուս կողմն անցավ: Գոհ ու բավարարված տեսքով նա վերադարձավ քաղաք, թևքի տակ սեղմած ծալված զգեստը: Մի օթևանում, ուր եկվորներն են գիշերում, նա կանգնեց դռան առջև, լուռ խնդրելով կերակրել իրեն ու լռությամբ էլ ընդունեց իրեն մեկնված բրնձե թխվածքը: Գուցե հենց վաղվանից սկսած, մտածում էր նա, ես այլևս ոչ մեկից ուտելիք չեմ մուրա:

Հանկարծ նրա մեջ հպարտությունը ճառագեց: Նա այլևս սամանա չէր և իրեն վայել չէր ողորմություն խնդրել: Բրնձե թխվածքը, դեռ չճաշակած, նա տվեց մի շան ու մնաց առանց կերակուր:

- Ի՜նչ պարզ ու հասարակ է կյանքը, որ վարում են այս աշխարհում մարդիկ,- մտածեց Սիդհարթան:- Նրանում ոչ մի դժվարություն չկա: Ամեն ինչ շատ ավելի ծանր էր, դժվար և վերջիվերջո անհույս, երբ ես դեռ սամանա էի: Իսկ հիմա ամեն ինչ հեշտ է, նույնքան հեշտ, որքան համբույրի դասը, որ ինձ Քամալան տվեց: Ես պետք է ձեռք բերեմ հանդերձանք ու փող, ուրիշ ոչինչ, դրանք փոքրիկ ու մոտակա նպատակներ են և չեն կարող իմ քունը խանգարել:

Նա ավելի վաղ էլ հարցուփորձ էր արել Քամալայի քաղաքա-

յին տան մասին և հենց հաջորդ օրն էլ ներկայացավ այնտեղ:

- Ամեն ինչ լավ է,- այս բացականչությամբ դիմավորեց նրան Քամալան:- Քեզ սպասում են Կամասվամիի մոտ, նա մեր քաղաքի ամենահարուստ վաճառականն է: Եթե դու նրան դուր գաս, նա քեզ իր մոտ ծառայության կվերցնի: Խելացի՛ եղիր, թխամաշկ սամանա: Ես այնպես կազմակերպեցի, որ քո մասին նրան ուրիշները պատմեին: Սիրալիր եղիր նրա հետ, նա շատ հզոր է և ազդեցիկ: Բայց շատ էլ համեստություն չխաղաս... Ես չեմ ուզում, որ դու նրա ծառան դառնաս, դու պետք է նրա հետ հավասարը հավասարի պես լինես, այլապես ես գոհ չեմ լինի քեզանից: Կամասվամին սկսում է ծերանալ և նրան հանգիստ է անհրաժեշտ: Եթե դու նրան դուր գաս, նա քեզ շատ բան կվստահի:

Սիդհարթան շնորհակալություն հայտնեց ու ժպտաց, Քամալան իմանալով, որ նա երկու օր է ինչ ոչինչ չի կերել, կարգադրեց նրան հաց ու մրգեղեն մատուցել և հյուրասիրեց նրան:

- Քո բախտը բանում է,- ասաց Քամալան հրաժեշտ տալիս,- քո առաջ իրար ետևից բացվում են դռները: Ինչպե՞ս դա կարելի է բացատրել: Գուցե դու ինչ-ինչ կախարդական հնարքների՞ ես տիրապետում:

Ինչին Սիդհարթան պատասխանեց.

- Երեկ ես քեզ ասացի, որ ես գիտեմ առմտածել, սպասել ու ծոմ պահել, իսկ դու ասացիր, որ դրանք ոչ մի բանի համար պիտանի չեն: Մինչդեռ դրանք նույնիսկ շատ պետքական կարող են լինել, Քամալա, դու դեռ կտեսնես: Դու կտեսնես ու կհամոզվես, որ անտառաբնակ, հիմար սամանաները շատուշատ բաներ գիտեն և կարող են շատ գեղեցիկ բաներ անել, որպիսիք դուք չեք կարող: Դեռևս երկու օր առաջ ես մի ցնցոտիավոր, չքավոր մեկն էի, բայց արդեն երեկ ես համբուրեցի Քամալային, իսկ շուտով ես վաճառական կդառնամ, փող կունենամ և բոլոր այն բաները, ինչին դու այդքան մեծ կարևորություն ես տալիս:

- Այդպես է, որ կա, բայց ի՞նչ էր լինելու քեզ հետ առանց ինձ: Ի՞նչ էիր դու անելու, եթե Քամալան չօգներ քեզ:

- Սիրելի Քամալա,- ասաց Սիդհարթան՝ ողջ մարմնով մեկ ձգվելով,- երբ ես քեզ մոտ, քո այգեստանը եկա, ես առաջին քայլը կատարեցի: Այն ժամանակ ես իմ առաջ համառ նպատակ դրեցի՝ սովորել սիրո գիտությունը ամենագեղեցիկ կնոջ մոտ: Եվ հենց այն նույն վայրկյանից, երբ իմ մեջ ծնվեց այդ նպատակը, ես արդեն գիտեի, որ կարողանալու եմ այն իրագործել: Ես գիտեի, որ դու ինձ կօգնես, ես դա գիտեի քո առաջին իսկ հայացքից, այն, որ դու ուղղեցիր ինձ այգեստանի մուտքի մոտ:

- Իսկ եթե ես դա չցանկանայի՞:

- Բայց դու այդ բանը ցանկացար: Նայի՛ր, Քամալա. երբ դու ջրի մեջ քար ես նետում, ապա այն շատ արագ, ամենակարճ ճա-

նապարհով ջրի հատակն է ընկղմվում: Նույն կերպ է վարվում նաև Սիդհարթան, երբ նա իր առջև որևէ նպատակ է դնում: Սիդհարթան ոչինչ չի անում, նա միայն սպասում է, մտածում, ծոմ պահում, բայց նա անցնում է աշխարհի իրերի ու գոյացությունների միջով, ինչպես որ քարն է անցնում ջրի միջով, դրա համար ոչինչ չանելով, անգամ չնչին մի շարժում: Նա տրվում է իրեն ձգող ուժին, թողնում, որ ինքը ցած ընկնի: Նրա նպատակն արդեն ինքնին ձգում-տանում է իրեն, քանի որ նա չի թողնում իր սրտի մեջ ներթափանցել որևիցե մի բան, ինչը կարող էր հակառակվել հետապնդվող նպատակին: Ահա սա՛ է, որ Սիդհարթան սովորել է սամանաների մոտ: Սա այն է, ինչը տխմարները կախարդանք են անվանում և երևակայում են, թե այդ մոգական ուժը ձեռք է բերվում դևերի օգնությամբ, սակայն դևերը, որպես այդպիսիք, այստեղ դեր չունեն, դրանք իրականում գոյություն էլ չունեն: Ցուրաքանչյուր ոք կարող է հմայել, յուրաքանչյուր ոք կարող է հասնել իր նպատակին, եթե միայն նա ընդունակ է մտածելու, սպասելու ու ծոմ պահելու:

Քամալան ուշադիր լսում էր նրան: Նրան դուր էր գալիս Սիդհարթայի ձայնը, նա սիրում էր նրա աչքերի մեջ արտահայտված հայացքը:

- Գուցե այդ ամենը հենց այդպես է,- կամացուկ ասաց նա,- ինչպես դու ես ասում, բարեկամս: Բայց գուցե դա նաև նրանից է գալիս, որ Սիդհարթան պարզապես գեղեցիկ տղամարդ է, որ նրա հայացքը դուր է գալիս կանանց և այդ պատճառով էլ երջանկությունը ընդառաջում է նրան:

Սիդհարթան համբուրեց նրան ու հրաժեշտ տվեց:

- Թող այդպես լինի, իմ ուսուցչուհի: Ես կուզենայի, որպեսզի իմ հայացքը մշտապես դուր գար քեզ, որպեսզի դու ինձ մշտապես երջանկություն պարգևեիր...

ԵՐԵԽԱ-ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

Սիդհարթան գնաց վաճառական Կամասվանիի մոտ. դա մի հարուստ, շքեղ առանձնատուն էր: Թանկարժեք ուղեգորգերով զարդարված սրահների միջով սպասավորները նրան ուղեկցեցին մինչև այն սրահը, ուր նա պետք է տանտիրոջը սպասեր:

Կամասվանին ներս մտավ: Նա մի աշխույժ, ամրակազմ տղամարդ էր, փայլելու աստիճան ճերմակած մազերով, խելացի, զգուշավոր աչքերով, հստակ ընդգծված բերանով: Տանտերն ու հյուրը բարեկամաբար ողջունեցին միմյանց:

- Ինձ ասացին,- սկսեց վաճառականը,- որ դու բրահման ես, գիտուն մեկը, սակայն դու ցանկանում ես ծառայության անցնել մի վաճառականի մոտ: Ուրեմն դու կարիքավոր ես, ինչ-ինչ դրժ-

վարությունների մեջ ես, եթե աշխատանք ես փնտրում վաճառականի մոտ:

- Ո՛չ,- ասաց Սիդհարթան,- ես կարիքի մեջ չեմ և երբևէ նման վիճակներում չեմ եղել: Ուզում եմ քեզ տեղեկացնել, որ ես սամանաների մոտից եմ գալիս, որոնց շրջապատում ես ապրել եմ երկար ժամանակ:

- Եթե դու գալիս ես սամանաների մոտից, ինչպե՞ս կարող ես կարիքի մեջ չլինել: Չէ՞ որ սամանաները լիովին զուրկ են սեփական միջոցներից:

- Ես էլ եմ չքավոր,- ասաց Սիդհարթան,- եթե դու դա նկատի ունես: Ես իսկապես ոչ մի ունեցվածք չունեմ: Սակայն ես դրան ինքնակամ եմ գնացել, հետևաբար ես կարիքավոր չեմ:

- Ի՞նչ միջոցներով ես դու ուզում ապրել, եթե ոչինչ չունես:

- Ես այդ մասին դեռ չեմ մտածել, պարոն: Ես ավելի քան երեք տարի շարունակ ունեզուրկ եմ եղել և երբեք չեմ մտածել այն մասին, թե ինչ միջոցներով եմ ապրելու:

- Ուրեմն դու ապրել ես ուրիշների ունեցվածքի հաշվին:

- Հավանաբար այդպես է: Բայց վաճառականներն էլ են ապրում ուրիշների ունեցվածքի հաշվին:

- Լա՜վ ասացիր: Սակայն վաճառականը ուրիշների ունեցածը անվճար կամ ձրի չի վերցնում, դրա դիմաց նա իր ապրանքն է տալիս:

- Իրականում դա միայն այդպես թվում է: Բոլորն էլ տալիս են ու առնում, սա է կյանքը:

- Բայց թույլ տուր ինձ մի բան էլ հարցնել, եթե դու ոչինչ չունես, ապա այդ դեպքում ի՞նչ ես ուզում տալ:

- Ամեն ոք տալիս է այն, ինչ ունի: Զինվորականը տալիս է իր ուժը, վաճառականն իր ապրանքը, ուսուցիչը՝ գիտելիք, գյուղացին՝ բրինձ, ձկնորսը՝ ձուկ:

- Շա՜տ լավ: Իսկ դու ի՞նչ կարող ես տալ: Ի՞նչ է քո սովորածը, դու ի՞նչ կարող ես անել:

- Ես կարող եմ մտածել: Ես կարող եմ սպասել, կարող եմ ծոմ պահել:

- Միայն այդքա՞նը, ուրիշ ոչի՞նչ:

- Իմ կարծիքով՝ այդքանը միայն:

- Իսկ ի՞նչ օգուտ կա դրանից: Օրինակի համար, ի՞նչ օգուտ կա ծոմ պահելուց, ո՞րն է դրա իմաստը:

- Այն շատ լավ բան է, պարոն: Երբ մի մարդ ուտելու ոչինչ չունի, ապա ծոմ պահելը, ժուժկալությունը ամենախելամիտ բանն է, որ նա կարող է անել: Օրինակի համար, եթե Սիդհարթան սովորած չլիներ ժուժկալության կամ ծոմ պահելու արվեստը, ապա նա այսօր արդեն ստիպված էր լինելու ինչ-որ աշխատանք գտնել, մեկի մոտ ծառայության մտնել, քեզ մոտ կամ մեկ

ուրիշի, քանի որ այդ քայլին դիմելուն նրան քաղցը կստիպեր: Իսկ Սիդհարթան հիմա կարող է հանգիստ սպասել, նրա համար անհամբերություն ասած բանը գոյություն չունի, նրա համար ծայրահեղ անհրաժեշտություն ասածը չկա, նա կարող է երկար ժամանակ սովին դիմանալ և ընդամենը գոհ լինել: Դրա համար, պարոն, ծոմապահությունը, ժուժկալությունը լավ բան է:

- Դու իրավացի ես, սամանա: Սպասի՛ր մի վայրկյան:

Կամասվամին դուրս եկավ ու վերադարձավ ձեռքին մի թղթափաթեթ, որը նա մեկնեց իր հյուրին ու հարց տվեց.- Դու սա կարո՞ղ ես կարդալ:

Սիդհարթան ուշիուշով զննեց թղթերի փաթեթը, որում առևտրական մի պայմանագիր էր գրված, և սկսեց բարձրաձայն ընթերցել նրա բովանդակությունը:

- Հրաշալի՛ է, ասաց Կամասվամին:- Դու կարո՞ղ ես ինձ համար այս թղթի վրա մի բան գրել: Նա Սիդհարթային մեկնեց մի թերթոն ու մի գրչակոթ, որի վրա Սիդհարթան ինչ-որ բան գրեց ու վերադարձրեց տանտիրոջը:

Կամասվամին կարդաց. «Գրելը լավ բան է, մտածելը ավելի լավ է: Խելքը լավ է, համբերությունը շատ ավելի լավ բան է»:

- Դու հրաշալի ես գրում,- գովեց նրան վաճառականը:- Մենք դեռ շատ բան կունենանք խոսելու: Իսկ այսօր ես խնդրում եմ քեզ եղի՛ր իմ հյուրը և բնակվիր իմ տանը:

Սիդհարթան շնորհակալությամբ ընդունեց հրավերը, և այդ օրվանից նա ապրում էր վաճառականի տանը: Նրան գեղեցիկ հանդերձանք ու ոտնամաններ տվեցին, ամեն օր սպասավորը նրա համար լոգանքի պատրաստություն էր տեսնում: Օրական երկու անգամ նրան հրավիրում էին ճոխ խնջույքի, Սիդհարթան սակայն օրական միայն մեկ անգամ էր կերակուր ընդունում, ընդ որում՝ ո՛չ միս էր օգտագործում և ո՛չ էլ գինի: Կամասվամին պատմում էր նրան իր առևտրական գործերի մասին, ցույց էր տալիս իր ապրանքներն ու պահեստները, տեղյակ պահում իր հաշիվներից: Սիդհարթան շատ նորանոր բաներ սովորեց, նա ավելի շատ լսում էր, քան խոսում: Եվ մտաբերելով Քամալայի խոսքերը, նա վաճառականի մոտ իրեն երբեք որպես ենթակա չէր պահում և ստիպում էր նրան իրեն վերաբերվել որպես հավասարի, անգամ ավելի քան հավասարի հետ: Կամասվամին ջանասիրաբար էր զբաղվում իր առևտրական գործարքներով, հաճախ էլ՝ կրքոտ խանդավառությամբ, մինչդեռ Սիդհարթան այդ ամենին նայում էր որպես մանկական խաղի, ջանում էր հնարավորինս լավ տիրապետել խաղի կանոններին, բայց բուն խաղի նկատմամբ միանգամայն անտարբեր էր:

Կամասվամիի հարկի ներքո բնակություն հաստատելուց շատ չանցած՝ շուտով Սիթհարթան սկսեց օգնել վաճառականին նրա

առևտրական գործերում: Սակայն ամեն օր, պայմանավորված ժամին, նա այցելում էր գեղեցկուհի Քամալային, լավ հագնված ու նրբենի ոտնամաններով, և շուտով սկսեց նրան ընծաներ մատուցել: Շատ բաներ սովորեցրին Սիդհարթային Քամալայի ալ կարմիր, խելացի շրթունքները: Շատուշատ բաներ սովորեցրեց նրան Քամալայի նուրբ ու ճկուն ձեռքը: Սիրո մեջ դեռևս երեխա ու սկսնակ լինելով և ավելի շատ հակված կուրամիտ ու անկուշտ հաճույքներին՝ ասես անհատակ անդունդին տրված, նա Քամալայից հիմնավորապես սովորեց այն հիմնարար կանոնը, ըստ որի չի կարելի հաճույք ստանալ՝ առանց որ ինքդ այն կտաս, և որ յուրաքանչյուր շարժում, յուրաքանչյուր փաղաքշանք, յուրաքանչյուր շփում, յուրաքանչյուր հայացք, անգամ մարմնի վրայի յուրաքանչյուր փոքրիկ մասնիկ իրենց գաղտնիքն ունեին, որը կյանքի կոչումը գիտեցողին մեծագույն երջանկություն է պարգևում: Կինը սովորեցրեց նրան, որ սիրահարները սիրո տոնահանդեսից՝ հետո չպետք է բաժանվեն իրարից՝ առանց փոխադարձ սքանչացում արտահայտելու միմյանց նկատմամբ, յուրաքանչյուրը պետք է հավասարապես և՛ պարտվածի և՛ հաղթողի տպավորություն թողնի, այնպես որ նրանցից ոչ ոքի մոտ չծնվի հագեցումի ու դատարկության զգացումը, և այն տհաճ զգացողությունը, թե ինքն ի չարս է գործադրել կամ օգտվել է դիմացինի թուլությունից և կամ ինքն է անթաքույց ենթարկվողականություն ցուցաբերել: Զմայլելի ժամեր էր նա անցկացնում գեղեցկուհի ու խելացի դշխոյի ընկերակցությամբ: Սիդհարթան դարձավ նրա աշակերտը, նրա սիրեցյալը, նրա ընկերը: Նրա՛, Քամալայի մեջ էր ամփոփված իր ներկայիս կյանքի արժեքն ու իմաստը, այլ ոչ թե Կամասվամիի առևտրական գործերում:

Վաճառականը նրան հանձնարարեց կարևորագույն նամակների գրության ու պայմանագրերի կազմման գործը և կամաց-կամաց ընտելացավ բոլոր կարևերագույն հարցերը նրա հետ քննարկելուն: Նա շուտով նկատեց, որ թեև Սիդհարթան քիչ բան է հասկանում բրնձից ու բրդեղենից, նավագնացությունից ու առևտրից, բայց նրա ձեռքը երջանկաբեր էր, և որ Սիդհարթան իրեն՝ վաճառականին, գերազանցում էր իր հանգստավետ բնավորությամբ ու հավասարակշռվածությամբ, ինչպես նաև մարդկանց լսելու ու նրանց ճանաչելու արվեստում:

- Այս բրահմանը,- մի անգամ ասաց նա իր մի բարեկամին,- իսկական վաճառական չէ և երբեք այդպիսին չի դառնա, նրա սիրտն ի զորու չէ կրքոտ հետաքրքրվածությամբ վերաբերվել գործերին: Բայց նա տիրապետում է գաղտնիքին այն մարդկանց, որոնց հաջողությունն է հետապնդում կրնկակոխ, դա գուցե երջանիկ աստղի տակ ծնված լինելուց է, կամ էլ նա մի ինչ-որ կախարդանքի է տիրապետում: Հնարավոր է նաև, որ այդ գաղտնի-

քը նա սովորել է սամանների մոտ ուսանելիս: Ես նկատել եմ, որ գործարքները նրա համար ասես խաղ ու պար լինեն, դրանք իրեն բնավ չեն գայթակղում, հետաքրքրում, չեն ենթարկում իրենց, անհաջողություններից վախ չունի, կորուստները նրան չեն մտահոգում:

Բարեկամն այսպիսի խորհուրդ տվեց վաճառականին,- Նրան մի բաժնեմաս տուր այն գործերից, որ նա քեզ համար կատարում է, ասենք չահաբաժնի մեկ երրորդը, բայց և ասա՛ նրան, որ ինքը հավասար չափով պատասխանատու է լինելու նաև կորուստների համար, եթե այդպիսիք լինեն: Այդ դեպքում նա ավելի մեծ կըրքոտությամբ գործին կկպչի:

Կամասվամին հետևեց բարեկամի խորհրդին: Սակայն Սիդհարթան առաջվա պես անհոգ էր: Երբ գործարքը չահութաբեր էր լինում, նա անտարբերությամբ վերցնում էր իր բաժնեմասը, իսկ երբ վնաս էին կրում, նա ծիծաղելով ասում էր. «Այ քեզ բա՛ն: Ուրեմն մի տեղ սխալ է տեղի ունեցել»:

Թվում էր, թե իրականում նա գործերին շատ անտարբեր էր վերաբերվում: Մի անգամ նա ուղևորվեց գյուղերից մեկը՝ այնտեղ բրնձի բերք գնելու համար: Բայց երբ գյուղ հասավ, պարզվեց, որ բրինձն արդեն վաճառվել է մեկ այլ առևտրականի: Չնայած դրան՝ Սիդհարթան մի քանի օր մնաց այդ գյուղում, հյուրասիրում էր գյուղացիներին, երեխաներին պղնձադրամներ բաժանում, մասնակցեց գյուղական մի հարսանիքի և վերադարձավ տուն իր ճամփորդությունից անչափ գոհ: Կամասվամին հանդիմանեց նրան, որ նա անմիջապես տուն չէր վերադարձել և իզուր տեղը ծախսել էր ժամանակն ու դրամը: Սիդհարթան պատասխանեց.

- Ինձ մի՛ հանդիմանիր, սիրելիդ իմ բարեկամ: Հայհոյելով երբեք ոչնչի չես հասնի: Եթե ես քեզ նյութական վնաս եմ պատճառել, ապա ես այն ինձ վրա եմ վերցնում: Բայց անձամբ ես ուղևորությունից չափազանց գոհ եմ: Ես ծանոթացա ամենատարբեր մարդկանց հետ, բարեկամացա մի բրահմանի հետ, երեխաները խաղում էին իմ ծնկների վրա, գյուղացիներն ինձ ցույց տվեցին իրենց դաշտերը, ինձ ոչ ոք որպես վաճառականի չէր վերաբերվում:

- Այդ ամենը իսկապես շատ հիանալի է,- ակամա բացականչեց Կամասվամին,- բայց չէ՞ որ իրականում դու վաճառական ես, համենայնդեպս, ես այդպես եմ կարծում... Թե՞ դու այնտեղ էիր գնացել պարզապես քո հաճույքի համար:

- Դե իհարկե,- ծիծաղեց Սիդհարթան,- իհարկե ես այնտեղ էի գնացել իմ հաճույքի համար: Ուրիշ էլ ինչի՞ համար կարող էի ես այնտեղ գնալ: Ես ծանոթացա նոր մարդկանց ու վայրերի հետ, վայելեցի իմ հանդեպ ցուցաբերված բարեկամության ու

վստահության ցույցերը, մեկի հետ բարեկամացա: Ահավասիկ, ինքդ դատի՛ր, սիրելիս, եթե իմ փոխարեն Կամասվամին լիներ, ապա իմանալով, որ գործարքը կայանալ չի կարող, որովհետև գնելու բան չկա, նա անմիջապես էլ զայրացած ու փութով տուն կվերադառնար և այդ ժամանակ փողն ու ժամանակը իսկապես որ զուր տեղը վատնված կլինեին: Իսկ ես այնտեղ մի քանի հաճելի օրեր անցկացրի, ինչ-ինչ բաներ սովորեցի, երջանկությունը ճաշակեցի, հետո էլ՝ ոչ ինձ, ոչ էլ ուրիշներին չվնասեցի նյարդայնության ու շտապողականության պատճառով: Եվ եթե օրերից մի օր ես նորից այնտեղ գնամ, ասենք՝ ուշ բերքի գնման կամ որևէ մեկ այլ նպատակով, ապա բարյացկամ մարդիկ ինձ կընդունեն բարեկամաբար և ուրախությամբ, և ես գոհացած կլինեմ, որ այն անգամ ցավ չապրեցի և չշտապեցի հեռանալ: Ուրեմն հանգստացի՛ր, բարեկամս, և քեզ մի՛ կեղեքիր կշտամբանքների տեղատարափով... Եթե օրերից մի օր դու համոզվես, որ Սիդհարթան քեզ վնաս է բերում, այդժամ միայն մի բառ ասա և Սիդհարթան իր ճանապարհով կգնա: Իսկ մինչ այդ՝ ե՛կ մեկս մեկիցս գոհանանք ու շնորհակալության մեջ ապրենք:

Ապարդյուն էին նաև վաճառականի փորձերը ապացուցելու Սիդհարթային, որ նա իր՝ Կամասվամիի հացն է ուտում: Սիդհարթան առարկեց, ասելով, որ ինքն իր սեփական հացն է ուտում, ավելին, որ իրենք երկուսն էլ ուրիշների հացն են ուտում, այն հացը, որ պատկանում է բոլորին: Սիդհարթան երբեք ականջ չէր դնում Կամասվամիի հոգսերին, կարեկցանք չէր ցուցաբերում, իսկ հոգսեր Կամասվամին շատ ուներ: Եթե նրա ձեռնարկած գործերից որևէ մեկին ձախողվելու վտանգ էր սպառնում, երբ կասկած էր առաջանում, որ ուղարկված ապրանքը ճանապարհին կորել է կամ որ պարտատուներից մեկը կարող է և վճարունակ չլինել, Կամասվամին երբեք չէր հաջողվում համոզել իր աշխատակցին, որ նա իր ցավին դարման կանի, եթե բարձրաձայն իր ցասումն ու մտահոգությունն արտահայտի այդ առթիվ, գլուխը բռնած ման գա՝ ճակատը կնճռոտելով, անքուն գիշերներ լուսացնի: Երբ մի անգամ Կամասվամին նրան չշպռեց, ասելով, որ այն ամենը, ինչ ինքը գիտի, իրենից է սովորել, Սիդհարթան պատասխանեց.

- Ի՞նչ է, դու էլ ուրիշ հաջող կատակ չունե՞ի ինձ հրամցնելու... Քեզանից ես սովորել եմ, թե ինչ արժե մի կողով ձուկը, որքան տոկոս կարելի է վերցնել պարտքով տված դրամի դիմաց: Սա է քո ողջ գիտությունը: Ես քեզանից չեմ մտածել սովորել, թանկագի՛ն Կամասվամի, դու ավելի լավ կանեիր այդ բանն ինձանից ուսանել:

Անշուշտ Սիդհարթայի հոգին առևտրով էր հրապուրված: Նա առևտրով զբաղվում էր միայն այն պատճառով, որ այն դրամ էր

բերում Քամալայի համար, և այդ դրամը շատ ավելին էր, քան անհրաժեշտ էր իրեն: Իսկ ընդհանրապես՝ Սիդհարթայի հետաքրքրությունն ու կարեկցանքն էին շարժում այն մարդիկ, որոնց գործերը, զբաղմունքներն ու հոգսերը, հրճվանքներն ու մոլորությունները առաջներում էլ խորթ էին եղել իրեն և իրենից հեռու, ինչպես լուսինը: Որքան էլ իրեն հաջողվում էր բոլորի հետ խոսել, բոլոր մարդկանց հետ միասին ապրել, նրանցից նոր բաներ սովորել, սակայն նա շատ լավ հասկանում էր նաև, որ կար մի բան, ինչը բաժանում էր իրեն այդ մարդկանցից և այդ բաժանարարը իր սամանայական էությունն էր: Նա տեսնում էր, թե ինչ երեխայական կամ զուտ կենդանական կյանքով էին ապրում մարդիկ, որոնց նա միաժամանակ և՛ սիրում էր և՛ ատում: Նա տեսնում էր, թե ինչպես են նրանք ջանքեր թափում, տառապում ու ճերմակելով-ծերանում են իրերի պատճառով, իրեր, որ նրա կարծիքով, դրան չարժեին, փողի համար, մանր-մունր հաճույքների, չնչին պատիվների արժանանալու համար: Նա տեսնում էր, թե ինչպես են նրանք հանդիմանում ու վիրավորում միմյանց, ինչպես են տնքում ցավերից, որոնք սամանան ծիծաղելով է կրում, ինչպես են տառապում զրկանքներից, որոնք սամանան չի էլ զգում:

Նա բարյացկամ էր ամեն ինչի հանդեպ, հավասարապես բարյացկամ ու բաց այն ամենի հանդեպ, ինչ մարդիկ իրեն էին հրամցնում: Նա անտարբեր բարյացկամությամբ էր ընդունում վաճառականին, որն իրեն կտավ էր առաջարկում, պարտատուին, որը նոր պարտք էր նրանից խնդրում կամ պարտքի գիշում ակնկալում, չքավորին, որը ժամերով պատմում էր իրեն իր աղքատության պատմությունը, որը, սակայն, ամենահետին սամանայի կեսի չափ անգամ աղքատ չէր: Մեծահարուստ օտարերկրացի վաճառականի հանդեպ նա իրեն պահում էր այնպես, որպես թե նա իր ծառան լիներ, որ սափրում էր իրեն, որպես փողոցային մանրավաճառ կամ փերեզակ, որին ինքը թույլ էր տալիս մի քանի գրոշով խաբել իրեն՝ բանանի գնի որոշման մեջ: Երբ Կամաավամին նրա մոտ էր գալիս հերթական անգամ իր հոգսերից բողոքելու կամ հանդիմանելու նրան ինչ-որ գործարքի մեջ թերանալու կապակցությամբ, այդժամ նա հետաքրքրությամբ ու երջանիկ ժպիտով լսում էր նրան՝ զարմանքի արտահայտությունը դեմքին, ցանկանալով հասկանալ նրան, մասամբ համաձայնվելով նրա հետ, բայց միայն այնքան, որքան անհրաժեշտ էր համարում և շրջվում էր նրանից ու դեմքով դառնում դեպի սեփական կրիքներից հեծող հերթական այցելուն: Իսկ նրա մոտ շատերն էին գալիս, ոմանք՝ առևտրական գործերով, մյուսները՝ նրանից մի բան փախցնելու նպատակով, ուրիշները՝ իրենց նկատմամբ նրա մեջ կարեկցանք արթնացնելու ակնկալիքով, շատերն էլ՝ պարզա-

պես խորհուրդ էին հայցում նրանից: Եվ նա խորհուրդներ էր շռայլում, կարեկցում, նվերներ անում, թույլ էր տալիս, որ իրեն մի քիչ խաբեն, և այդ ողջ խաղն ու այն կրքոտությունը, որով բոլոր այդ մարդիկ տրվում էին այդ խաղին, նույնքան շատ էին զբաղեցնում նրա միտքը, ինչպես առաջներում աստվածներն ու բրահմանների ուսմունքն էր զբաղեցնում իրեն:

Ժամանակ առ ժամանակ իր կրծքի տակ նա զգում էր մի շատ թույլ, մահացող ձայն, մե՛րթ զգուշացնող, մե՛րթ էլ՝ հանդիմանող, բայց այնքա՜ն կամացուկ, որ նա հազիվ միայն կարողանում էր լսել այն: Այդժամ, մի կարճառոտ ժամանակամիջոց նրա մեջ արթնանում էր այն գիտակցությունը, որ ինքը մի տարօրինակ կյանքով է ապրում, որ այն ամենը, ինչ ինքն անում է, ընդամենը մի դատարկ խաղ է, ու թեև նա իրեն ուրախ է զգում, երբեմն էլ նույնիսկ երջանիկ, սակայն իրական, բուն կյանքն անցնում է նրա կողքով և իրեն չի դիպչում: Ինչպես որ ձեռնածուն է գընդակներով խաղում, այդպես նա խաղում էր իր առևտրական գործարքների հետ, իրեն շրջապատող մարդկանց հետ, նայում էր նրանց, զվարճանում նրանցով: Բայց սրտի խորքում, այնտեղ, ուր իր էության մշտնջենական աղբյուրն էր տրոփում, նա այս կյանքում ներկա չէր: Այդ աղբյուրը հոսում էր մի ինչ-որ տեղ, հեռուներում, հոսում էր ու հոսում, նրան բոլորովին անտեսանելի, հոսում էր ու շարունակ հեռանում և այլևս ոչ մի ընդհանուր բան չուներ իր կյանքի հետ: Այդ մտքերը մի քանի անգամ վախ արթնացրին նրա մեջ և սրտի խորքում ափսոսանք առաջացավ առ այն, որ ինքն այլևս չի կարող սրտով մասնակիցը դառնալ կյանքի այդ բոլոր մանկական մանրուքներին, նրանց վերաբերվել կրքոտ խանդավառությամբ, և նրա մեջ ցանկություն արթնացավ իսկապե՛ս ապրել, աշխատել, այս կյանքի իրական հաճույքը վայելել, և ոչ թե լինել նրա հասարակ հանդիսատեսը:

Բայց ամեն անգամ նա վերադառնում էր գեղեցկուհի Քամալայի մոտ, ուսանում էր սիրո արվեստը, վարժվում ու տրվում հաճույքի պաշտամունքին, որում, ավելի քան ուրիշ որևէ տեղ, տալն ու առնելը դառնում են մեկ միասնություն, իրարից անբաժան: Նա զրուցում էր գեղեցկուհու հետ, սովորում նրանից, խորհուրդներ տալիս ու խորհուրդներ առնում: Քամալան իրեն ավելի լավ էր հասկանում, քան ժամանակին՝ Գովինդան. այդ գեղեցկուհին իրեն ավելի էր նման ու հոգեհարազատ:

Մի անգամ Սիդհարթան ասաց նրան.- Դու ինձ նման ես, դու տարբեր ես բոլոր մյուս մարդկանցից: Դու Քամալան ես, և միայն այդքանը, քո մեջ, քո ներսում կա մի խաղաղ ապաստարան, ուր դու կարող ես մուտք գործել ցանկացած պահի և զգաս քեզ որպես քո տանը: Ես նույնպես դա կարող եմ անել: Շատ քիչ մարդիկ ունեն այդ ապաստանը, մինչդեռ բոլորն էլ կարող էին

այն ունենալ:

- Բոլոր մարդիկ չէ, որ խելացի են,- ասաց Քամալան:

- Ո՛չ,- ասաց Սիդհարթան,- խոսքը խելքին չի վերաբերում: Կամասվամին նույնքան խելացի է, որքան ես, սակայն իր մեջ չունի այդ ապաստան կոչվածը: Ուրիշները, սակայն, որոնք խելքի իմաստով տակավին երեխաներ են, ունեն դա: Մարդկանց մեծ մասը, Քամալա, նման է ընկնող տերևի, նրանք ճախրում են օդում, պտույտներ են գործում քամու բերանն ընկած, բայց վերջիվերջո գետնին են ընկնում: Մյուսները, սակայն, շատ քչերը, նման են աստղերի, նրանք ընթանում են խիստ որոշակի և ամրակուռ ուղիով և ոչ մի քամի չի կարող հասնել նրանց և ստիպել շեղվել ճանապարհից: Նրանք իրենց մեջ են կրում իրենց օրենքներն ու իրենց ուղին: Բոլոր իմ ճանաչած գիտուններից ու սամանաներից, որոնց ես շատ եմ հանդիպել իմ կյանքի ճանապարհին, միայն մեկը կար այդ տեսակին պատկանող, կատարյալ մեկը, որին ես երբեք չեմ կարող մոռանալ: Դա այն նույն Գոթամա է, Վեհագույնը, այն մեծագույն ուսմունքի հռչակողն ու նախակարապետը: Հազարավոր երիտասարդներ ամեն օր լսում են նրա ուսմունքը, յուրաքանչյուր ժամ հետևում նրա հրահանգներին, բայց նրանք բոլորը ընկնող տերևներ են, նրանք իրենց մեջ չեն կրում այդ ուսմունքն ու օրենքը:

Քամալան նրան էր զննում ժպիտը դեմքին:

- Դու նորից նրա մասին ես խոսում,- ասաց նա,- քո մեջ նորից սամանայական մտքեր են:

Սիդհարթան լռեց, ու նրանք տրվեցին սիրախաղին, այն երեսուն թե քառասուն խաղերից մեկին, որ գիտեր Քամալան: Նրա մարմինը ճկուն էր, ինչպես հովազի մարմինը, ինչպես որսորդի աղեղը: Ով նրա մոտ էր սովորել սիրո արվեստը, նրա առաջ բաց էին բոլոր հաճույքները, բոլոր գաղտնիքները: Երկար ժամանակ նա խաղում էր Սիդհարթայի հետ, փաղաքշում նրան, մերթ գրավում նրան, մերթ՝ վանում, ուժով տիրանալով նրան, փաթաթվում նրան ամբողջությամբ, հրճվում նրա վարպետությամբ, մինչև որ նա իրեն պարտված էր զգում և ուժասպառ հանգիստ առնում Քամալայի կողքին:

Հետերան խոնարհվեց նրա վրա, երկար նայեց նրա դեմքին, նրա հոգնած աչքերին:

- Դու լավագույնն ես սիրահարների մեջ,- մտածկոտ ասաց նա,- լավագույնը բոլոր իմ տեսածների մեջ: Դու բոլորից ուժեղ ես, ճկուն ես ու նախահարձակ: Դու շատ լավ ես յուրացրել իմ ուսմունքը, Սիդհարթա: Մի օր, երբ ես ավելի մեծացած լինեմ, ես կուզենամ քեզանից երեխա ունենալ: Սակայն, ամեն դեպքում, դու դեռ սամանա ես մնացել, սիրելիս, դու ինձ բնավ չես սիրում, դու ոչ ոքի չես սիրում: Այդպես չէ՞:

- Շատ հնարավոր է, որ այդպես է,- հոգնած պատասխանեց Սիդհարթան.- Ես քո նման եմ: Չէ՞ որ դու էլ չես սիրում, հակառակ դեպքում՝ դու ինչպե՞ս կարող էիր սիրուն որպես արվեստի վերաբերվել: Մեզ նման մարդիկ, հավանաբար, անկարող են սիրել: Երեխա-մարդիկ դա կարող են անել, դա նրա՛նց գաղտնիքն է:

ՍԱՆՍԱՐԱ

Երկար ժամանակ Սիդհարթան ապրում էր աշխարհիկ հաճույքներին տրված կյանքով, առանց որ ամբողջովին անձնատուր լինելու նրան: Զգացմունքները, որ նա սպանել էր սամանաների հետ բնակության կրակոտ տարիներին, արթնացել էին, նա ճաշակեց հարստությունը, ըմբոշխնեց ցանկասիրական կիրքը, վայելեց իշխանությունը: Սակայն իր սրտում նա դեռևս սամանա էր մնացել, ինչպես դա ճիշտ նկատեց խելացի Քամալան: Այժմ ևս մտածելու արվեստը, սպասումն ու ժուժկալ ծոմապահությունը, որոնց տակավին հակված էր իր կյանքը, դեռ շարունակում էին տիրապետություն ունենալ նրա վրա, այժմ էլ աշխարհիս երեսին ապրող մարդիկ՝ երեխա-մարդիկ, օտար էին իրեն, ինչպես որ ինքն էր նրանց համար խորթ ու օտարոտի:

Տարիներն անցնում էին, առաջ սլանում, և նա այդ ազատ ու հաճույքներով լեցուն կյանքին տրված՝ չէր զգում նրանց ընթացքը: Նա մեծ հարստություն դիզեց, վաղուց արդեն Սիդհարթան սեփական առանձնատուն ուներ, սպասավորներ և մի պուրակ քաղաքից դուրս, գետափին: Մարդիկ սիրում էին նրան, նրանք այցելում էին նրան, երբ կարիքն ունեին դրամի կամ խորհրդի: Բայց ոչ ոք մտերիմ չէր նրա հետ, բացի Քամալայից:

Այն բարձր, լուսավոր արթնացումը, որը մի ժամանակ, իր պատանեկության ծաղկման շրջանում, ապրել էր նա, այն օրերին, որոնք հաջորդեցին Գոթամայի քարոզին ու Գովինդայից բաժանմանը, այն ժամանակվա նրա այն հպարտ մենությունը և անկախությունը բոլոր տեսակի ուսմունքներից ու ուսուցիչներից, զգոնությունը՝ իր սրտում բնավորված աստվածային ձայնի հանդեպ, այդ ամենը որպես անցողիկ մի բան ներկայացավ և կամաց-կամաց ետ մղվեց դեպի հիշողության հեռավոր ծալքերը: Հեռվում ցածրաձայն խոխոջում էր այն սրբազան աղբյուրը, որն առաջներում այնքա՛ն մոտիկ էր և ժամանակին իր մեջ էր կարկաչում: Այն ամենից, ինչ ինքը գիտեր, շատ բաներ նա սովորել էր սամանաներից, սովորել էր Գոթամայի քարոզներից, ուսանել իր հորից ու բրահմաններից, որոնք դեռ երկար ժամանակ մնացել էին նրա մեջ. խաղաղաբարո ապրելաձևը, սերը մտածողության հանդեպ, ինքնախորասուզման ժամերը, իր անձի, սեփական

եսի մասին գաղտնի գիտելիքները, այն հավերժական եսի, որը ոչ մարմնավոր է, ոչ էլ՝ գիտակցություն: Այս ամենից շատուշատ բաներ էին մնացել նրա մեջ, սակայն մեկը մյուսի հետևից սուզվել էին անդնդախոր վիհն ու փոշով ծածկվել: Բրուտագործի բոլորակի նման, որ մեկ անգամ շարժման մեջ դրվելով՝ դեռ երկար պահպանում է իրեն հաղորդված արագությունը և որոշ ժամանակ անց միայն անզգայելի կերպով, կամաց-կամաց դանդաղեցնում է իր ոլորապտույտը մինչև վերջնական կանգառը, այդպես էլ Սիդհարթայի հոգում երկար ժամանակ շարունակվում էր պտտվել ճգնակեցության անիվը, մտածողության թափանիվը, ճանաչողության անիվը: Այն դեռ հիմա էլ շարունակում էր պտտվել, սակայն շատ դանդաղ, տատանումներով, և ուր որ է կանգ էր առնելու վերջնականապես: Ինչպես որ խոնավությունն է ներթափանցում մահացող ծառացողունի խորքը, կամաց-կամաց ներծծվելով նրա մեջ և փտախտ առաջ բերելով, այդպես էլ՝ աշխարհն ու ծուլությունը կամաց-կամաց թափանցեցին Սիդհարթայի հոգու մեջ, աստիճանաբար լցնելով այն, ծնունդ տալով ծանրության ու հոգնածության զգացողություններին, քուն բերելով նրա վրա: Փոխարենը նրա մեջ արթնացան զգացմունքներն ու ցանկությունները, դրանք կենդանություն ստացան, նա շատ բան սովորեց, շատ-շատերն էլ փորձով իմացավ:

Սիդհարթան սովորեց առևտուր անել, մարդկանց նկատմամբ իշխանություն բանեցնել, կանանց հետ հաճույք վայելել: Նա սովորեց գեղեցիկ հանդերձներ կրել, կարգադրություններ անել սպասավորներին, լոգանք ընդունել անուշաբույր յուղաջրերում: Սովորեց ճաշակել նուրբ ու համեղ պատրաստված կերակուրներ, նաև ձուկ, կենդանիների ու թռչնի միս, համեմունքներ ու քաղցրավենիք, և գինի խմել, որ ծնող-մայրն է ծուլության ու մոռացության: Նա սովորեց զառ գցել ու ճատրակ խաղալ, պարուհիներին նայել, օգտվել պատգարակից, փափուկ անկողնում քնել: Բայց, չնայած այդ ամենին, նա իրեն տարբեր էր համարում մյուս մարդկանցից, նրանցից շատ ավելի բարձր, դեռ շարունակում էր նրանց նայել թեթևակի հեգնանքով, դուլզն-ինչ արհամարհական ու նողկանքի զգացումով, այն նույն քամահրանքով, որ սամանան է տածում աշխարհաբնակների հանդեպ: Երբ Կամասվամին վատառողջ էր լինում կամ բորբոքված, երբ նա իրեն ինչ-որ մեկի կողմից վիրավորված էր զգում, գլուխը կորցրած իր վաճառականական հոգսերից, Սիդհարթան դրան միայն հեգնանքով էր վերաբերվում: Սակայն դանդաղորեն, աննկատ կերպով, անձրևների ու հունձքի, քաղհանման եղանակների իրարահաջորդող ընթացքների հետ միասին, նրա հեգնանքը գնալով ավելի ու ավելի էր գունատվում, գերազանցության զգացողությունն էլ՝ ավելի թուլանում: Կամաց-կամաց, օրըստօրե աճող իր հարստու-

թյուններին զուգահեռ, Սիդհարթան ինքն էլ երեխա-մարդկանց հատուկ բնութագրական գծեր յուրացրեց, ինչ-ինչ բաներ՝ նրանց մանկականությունից ու անհանգստություններից: Եվ սակայն ինքը նախանձում էր նրանց, այնքան ավելի ուժգին էր նախանձում, որքան ավելի էր նմանվում նրանց: Նա նախանձում էր նրանց այն բանի համար, ինչը պակասում էր իրեն, բայց նրանք ունեին. այն կարևորությունը, որ նրանք հատկացնելու պես վերագրում էին իրենց կյանքի բոլոր դրսևորումներին, նրանց ուրախությունների ու տագնապների կրքոտ խանդավառությանը, նրանց հավերժական սիրահարվածության հեզաբարո, բայց քաղցր երջանկությանը: Իրենք իրենց, իրենց կանանց, իրենց երեխաներին, պատվին կամ փողին, ծրագրերին կամ հույսերին մշտապես սիրահարված էին այդ մարդիկ: Բայց նա հենց դրանք էլ չյուրացրեց այդ մարդկանցից, հենց դրանք, այդ մանկամիտ ուրախություններն ու երեխայական խենթությունները չսովորեց նրանցից, այլ յուրացրեց լոկ այն տհաճ գծերը, որոնք ինքն ատում էր նրանց մեջ: Գնալով ավելի հաճախ էր պատահում, որ հասարակական միջավայրում անցկացրած երեկոյին հաջորդող առավոտյան նա երկար ժամանակ պառկած էր մնում անկողնում, իրեն մի տեսակ ճնշված ու հոգնած զգալով: Պատահում էր, որ նեղսրտում էր նա ու անհամբեր դառնում, երբ Կամասվամին ձանձրացնում էր իրեն իր հավերժական հոգսերով: Պատահում էր, որ նա բարձրաձայն ծիծաղում էր ու քրքջոց արձակում, երբ զառախաղում տանուլ էր տալիս: Նրա հայացքը դեռևս շատ ավելի խելացի էր ու ոգեշունչ, քան մյուսներինը, բայց ժպիտն ավելի հազվադեպ էր հայտնվում այնտեղ, և կամաց-կամաց նրա դեմքի վրա դաջվեց այն նույն արտահայտությունը, որն այնքան հաճախ հանդիպում է մեծահարուստ մարդկանց դեմքերին. դժգոհության, հիվանդոտության, ընկճվածության, ծուլության, անսրտության ցուցադրությունները: Հարուստներին հատուկ հոգու հիվանդությունը աստիճանաբար պաչարեց նաև Սիդհարթային:

Որպես մի նուրբ չղարշաքող, գերնոսր մշուշի տեսքով հոգնությունն իջավ Սիդհարթայի վրա, դանդաղ, բայց ամենայն հաջորդ օր դառնալով ավելի խիտ, ամսեամիս՝ ավելի պղտոր ու մռայլ, տարեցտարի՝ ավելի ծանր: Ինչպես նոր զգեստն է ժամանակի ընթացքում հնանալով՝ մաշվում, աստիճանաբար կորցնելով իր գեղեցիկ գույնը, բծեր է ձեռք բերում, ավելորդ ծալքեր ստանալով՝ տեսքից ընկնում, յուրաքանչյուր պահի պատռվելու պատրաստ, այդպես էլ՝ նոր կյանքը, որ Սիդհարթայի համար սկսվեց Գովինդային հրաժեշտ տալու պահից ի վեր, տարիների ընթացքում կորցրեց իր փայլն ու գույնը, վրան բարդվեցին բծեր ու ծալքեր, թեև խորքում՝ դեռևս ծպտված, սակայն, այս

ու այնտեղ, իրենց նողկալի կերպարանքն արդեն երբեմն-երբեմն ցոլացնելով, որ մարդուս հուսախաբությունն ու զզվանքն էին չարժում: Սիդհարթան դա չէր տեսնում: Նա միայն նկատեց, որ այն վճիտ ու ինքնավստահ ներքին ձայնը, որը մի ժամանակ արթնացել էր իր մեջ և ղեկավարել էր իրեն իր կյանքի այն շողարձակող ժամանակներում, հիմա ինչ-որ չի լսվում, լռել է:

Աշխարհը կլանեց նրան՝ հաճույքները, զգայականությունը, ծուլությունը, և ամենավերջում էլ՝ այն մեծագույն արատը, որը նա ամենաանհեթեթն էր համարում և որին ինքը վերաբերվում էր մեծագույն արհամարհանքով ու հեգնանքով. ընչաքաղց ագահությունը: Վերջիվերջո նրան կլանեցին նաև սեփականատիրության մոլուցքը, ունեցվածքն ու հարստությունը, այդ ամենը դադարեց այլևս նրա համար խաղ ու մանրուք լինելուց, դարձավ շղթա ու բեռ: Տարօրինակ ու նենգմիտ խարդավանքով Սիդհարթան ընկավ այդ վերջին ու ամենանողկալի կախվածության ծուղակը, և դա չնորհիվ զառախաղի: Այն ժամանակվանից ի վեր, ինչ նա դադարել էր հոգով սամանա լինելուց, փողով ու թանկարժեք զարդեղենով խաղալը, որին սկզբնական շրջանում նա տրվում էր ժպիտով ու անփույթ քամահրանքով, որպես թե երեխա-մարդկանց շրջանում ընդունված, դատարկ զվարճալիքի, կամաց-կամաց նրա համար անդիմադրելի կիրք դարձավ: Նա դարձավ թունդ խաղամոլ, որի հետ շատ քչերն էին համարձակվում մրցասպարեզ մտնել, այնքան որ բարձր ու տրամաբանությանը չտրվելու աստիճան հանդուգն էին նրա պատվիրած խաղագումարները: Նա խաղում էր մի մարդու նման, որն ասես խլացնել էր ցանկանում իր սրտի տառապանքները: Պարտություններն ու ատելի փողերի մսխումը չարախինդ ուրախություն էին պարգևում նրան, ուրիշ կերպ նա անկարող էր հստակորեն ու հեգնական մատուցմամբ ցուցադրելու իր արհամարհանքը հարստության՝ վաճառականական աշխարհի այդ կուռքի հանդեպ: Ինքն իրենից զզվելով, ինքնահեգնանքի տրվելով՝ նա մեծ խաղագումարներ էր դնում, անխնա ու անողորմ կերպով հաղթում էր հազարավորների, սնանկացնում նրանց, և ինքն էլ խոշոր գումարներ էր տանուլ տալիս, դրամ, թանկարժեք զարդեղեն, տանուլ տվեց անգամ իր քաղաքամերձ տունը, նորից ետ շահեց այն, նորից տանուլ տվեց: Այդ տագնապալի, սիրտ մաշող վախի զգացումը, որ պաշարում էր նրան զառերը նետելու պահին՝ խոշոր խաղագումարների համար պայքարի ընթացքում, իր համար անչափ թանկագին զգացում էր, նա սիրում էր դա՝ ջանալով մշտապես վերաթարմացնել այն իր մեջ, ուժգնացնել, թեժացնել այն ավելի ու ավելի, քանի որ միայն այդ սուր զգացողությունների մեջ էր ինքը երջանկության պես մի բան գտնում, արբեցումի պես մի բան, մի ինչ-որ գերակա ինքնազգացողություն՝ իր կյան-

քի կուշտ, անգույն ու խամրած բավիղներում: Այսպես՝ ամեն անգամ մեծ գումարներ տանուլ տալուց հետո, նա ստիպված էր լինում մեծ հարստությունների ձեռքբերելուն հետամտել, հարկադրված էր զգում ավելի եռանդուն ջանասիրությամբ առևտրով զբաղվել, պարտատուների նկատմամբ ավելի խիստ էր դառնում, քանզի ցանկանում էր շարունակել խաղը, փողերը քամուն տալ՝ ցույց տալու համար իր արգահատանքը հարստության հանդեպ: Պարտվելիս՝ Սիդհարթան կորցնում էր ինքնատիրապետումը, հոգեկան հանգստությունը, կորցնում էր համբերությունը անպարտաճանաչ պարտատուների նկատմամբ, կորցրեց նաև իր բարեհաճությունը աղքատների հանդեպ, դադարեց բավականություն ստանալ իրեն դիմողներին նվերների տեսքով փող բաժանելուց: Նա, որ մոլախաղի ժամանակ միանգամից տասնյակ հազարներ էր տանուլ տալիս ու այդ ընթացքում՝ ծիծաղում, առևտրական գործերում դարձավ ավելի կծծի ու մանրախնդիր, անգամ գիշերներն էլ՝ երազի մեջ փող էր տեսնում... Ամեն անգամ, երբ նա արթնանում էր այդ նողկալի, չարահմա դյութանքներից ու իր ննջարանի պատից կախ հայելու մեջ տեսնում իր դեմքը՝ ծերացած ու այլայլված, և երբ նրա վրա արշավում էին ամոթն ու գարշանքը, նա նորից փախուստի էր դիմում, նետվում բախտախաղի որոգայթների մեջ, վերստին տրվելով ցոփ ու չվայտություններին, գինարբուքի թմրեցնող խանդին, ու այնտեղից էլ իրեն գցում փող կուտակելու, ունեցվածք դիզելու մարմաջի գիրկը: Այդ անիմաստ շրջապտույտի բովում եփ գալով՝ նա հյուծվեց, սպառեց իրեն, զառամյալ ու հիվանդոտ կերպարանք ստացավ:

Բայց մի անգամ Սիդհարթան երազի մեջ նախազգուշացումարթնացման պես մի բան տեսավ: Երեկոյան կողմ նա եղել էր Քամալայի մոտ, նրա հրաշագեղ հաճույքների այգում: Նրանք նստել էին ծառերի *տակ* ու զրուցում էին, և Քամալան, որ մըտքերի մեջ էր ընկղմված, խոսքեր ասաց, որոնց մեջ տխրություն ու հոգնածություն զգացվեց: Նա Սիդհարթային խնդրեց պատմել Գոթամայի մասին և ոչ մի կերպ չէր կարողանում կտրվել այդ պատմությունից, նրանից, թե որքա՜ն մաքուր էր նրա հայացքը, ի՜նչ խաղաղ ու գեղեցիկ էին նրա շրթունքները, որքա՜ն բարի էր նրա ժպիտը, ի՜նչ հանգստավետ էր նրա քայլվածքը: Քամալայի դրդմամբ երկար-բարակ պատմում էր Սիդհարթան վսեմափառ Բուդդայի մասին, հանկարծ Քամալան հոգոց հանեց և վերջապես ասաց.

- Կգա այն ժամանակը, գուցե շատ շուտով, երբ ես նույնպես կհետևեմ այդ Բուդդային: Ես նրան կնվիրաբերեմ իմ այգին և իմ ապաստանը կգտնեմ նրա ուսմունքի մեջ:

Ասելուն պես Քամալան սկսեց փաղաքշել Սիդհարթային, ներ-

քաշեց սիրախաղի մեջ և ցավեցնող կրքոտությամբ սեղմեց նրան իր կրծքին, արտասուքով ու կրակոտ փաղաքշանքներով նա կարծես մի վերջին անգամ ցանկանալիս լիներ այդ մարմնական, անցողիկ, երանավետ հաճույքից քամել քաղցրության վերջին կաթիլը: Սիդհարթան երբեք այնպես հստակորեն չէր գիտակցել, թե որքան հարազատ էին իրար ցանկասիրությունն ու մահը: Հետո նա պառկել էր Քամալայի կողքին, որի դեմքը հանգչում էր իրենին այնքան մոտ, ինքը պարզ տեսավ այդ դեմքը, այնքան պարզ, ինչպես երբեք, նրա աչքերի տակ ու շրթունքների անկյունում նա կարդաց դաժան գրանշաններ՝ նրբանուրբ գծագրություններից ու հազիվ նշմարելի կնճիռներից կազմված, որ հիշեցնում էին աշնան ու ծերության մասին: Սիդհարթան ինքն էլ, որ արդեն չորրորդ տասնամյակն էր ոտք դրել, մեկ անգամ չէ, ինչ այս ու այնտեղ ճերմակ վարսեր էր նկատել իր սև գլխին: Հոգնածությունն էր տպված Քամալայի գեղեցիկ դեմքին, անցած երկար ճանապարհի հոգնությունը, ճանապարհ, որ զուրկ էր եղել երջանկավետ նպատակից, հոգնությունն ու սկիզբ առած թոշնանքը, թաքուն, դեռևս չարտահայտվող, գուցե դեռ չգիտակցվող տագնապը. վախը ծերության հանդեպ, աշնան, վախը մահվան անխուսափելիության հանդեպ: Սիդհարթան հոգոց հանելով հրաժեշտ տվեց նրան՝ հոգին լիքը թախիծով ու անասելի տագնապով:

Սիդհարթան գիշերն անցկացրեց իր տանը՝ պարուհիների ու գինու ընկերակցությամբ, ընդսմին՝ իր զվարճասեր ընկերուհիների հանդեպ իրեն բարձր ու հպարտ պահելով, մի կեցվածք, որը սակայն, այլևս անբնական էր թվում, շատ գինի խմեց և միայն կեսգիշերից բավական անց՝ հեռացավ հանգիստ առնելու, հոգնած ու միաժամանակ գրգռված, ուր որ է հեկեկալու ու հուսահատության գիրկն ընկնելուն պատրաստ: Երկար ժամանակ ապարդյուն քնել էր ուզում, սիրտը նվվում էր անտանելի թախծից և ինքն ամբողջությամբ լցված էր նողկանքով ու հեղձանքի զգացողությամբ. նրան զզվանք էր պատճառում գինու գոլ ու ատելի համը, երաժշտության անիմաստ քաղցրմեղցրությունը, մերկանդամ պարուհիների համբ ժպիտը, նրանց վարսերից ու կրծքերից տարածվող դառնաբույրը: Բայց ավելի մեծ նողկանքով էր նա լցված իր անձի նկատմամբ, իր անուշաբուրող մազերի, իր բերանից տարածվող գինու բույրի, իր մաշկի թոշնածության ու չորության հանդեպ: Ինչպես մի մարդ, որը կուշտուկուռ ուտել-խմելուց հետո միայն սիրտ թափելով կարող է ազատվել իր միջի ավելցուկից, չնայած այդ միջամտության պատճառած ցավին, ուրախանալով դրա արդյունքում վերստացած թեթևությունից, այդպես էլ Սիդհարթան՝ անքնությունից տառապած, զզվանքի անտանելի հորձանքի մեջ խեղդվելով, տեն-

չալով տենչում էր ազատագրվել այդ սովորույթներից ու հաճույքներից, այդ անիմաստ կյանքից, ինքն իրենից: Միայն լուսաբացին, երբ փողոցում, ուր կանգնած էր իր քաղաքային տունը, գործարար կյանքը սկսեց արթնանալ ու փողոցը աշխույժով լցվեց, նա ընդամենը մի քանի վայրկյան մոռացության գիրկն ընկավ, մի տեսակ թոթափեց հոգնությունը ու կարծես ընկղմվեց քնի մեջ: Եվ հենց այդ վայրկյաններին մի երազ այցելեց նրան:

Քամալայի ապարանքում դրված ոսկե վանդակի մեջ մի պլստլիկ, հազվագյուտ թռչուն էր նստած: Նա երազում տեսավ այդ թռչնակին, տեսավ, թե ինչպես այդ թռչունը, որ մշտապես երգում էր լուսաբացին, հանկարծ լռել էր՝ սկվել: Նա զարմացած մոտեցավ վանդակին ու տեսավ, որ փոքրիկ թռչնակը մահացած է ու փայտացած ընկել է հատակին: Նա դուրս կորզեց թռչնակին վանդակից, միառժամանակ պահեց ձեռքերի մեջ ու նետեց փողոց, և նույն վայրկյանին սարսափելի մի վախ բնավորվեց նրա մեջ, նրա սիրտը կծկվեց ցավից, կարծես այդ անշնչացած թռչունի հետ միասին նա դուրս նետած լիներ իր միջի ողջ արժեքավորն ու լավագույնը:

Երազից սթափվելով՝ նա պարուրված զգաց խորը թախիծով: Անմիտ ու անհեթեթ ես անցկացրի իմ կյանքը, մտածեց նա, ոչ մի կենդանի բան, ոչ մի թեկուզև արժեքավոր կամ պահպանելու արժանի բան չէր մնացել նրա ձեռքերում: Նա կանգնած էր միայնակ, դատարկ ձեռքով, որպես մի վերջին ճիգով ափ նետված նավաբեկյալ:

Մռայլ տրամադրությամբ Սիդհարթան ուղևորվեց իրեն պատկանող հաճույքների այգին, դարպասները փակեց իր ետևից ու նստեց մանգոյի ծառի տակ: Սրտում մահացու թախիծ և կրծքի տակ վախ ու զզվանք՝ նա նստել էր ու զգում էր, որ ինչ-որ բան մահանում էր իր մեջ, թոշնում, մոտենում իր վախճանին: Կամաց-կամաց նա ժողովեց իր խոհերը և մտքի մեջ մեկ անգամ էլ անցկացրեց իր կյանքի ողջ ճանապարհը, սկսած առաջին օրերից, որոնց հիշատակները դեռ մնացել էին նրա հիշողության ծալքերում: Այդ ե՞րբ է եղել, որ նա իրեն երջանիկ էր զգացել, և արդյո՞ք ինքը երբևէ ճաշակել է իսկական երանությունը: Օ՜ այո, այդ բանը նա քանիցս է ճաշակել: Ճաշակել է մանուկ հասակում, երբ իրեն հաջողվել էր բրահմանների գովասանքին արժանանալ՝ սուրբ գրքերից հատվածներ արտասանելու արվեստում իր հասակակիցներին գերազանցելու համար, երբ ինքն աչքի էր ընկել գիտունների հետ բանավեճերում, կամ որպես քուրմի օգնական՝ զոհաբերություններ կատարելիս: Այդժամ նա զգացել էր իր սրտում. «Դու ուղի ունես անցնելու, ուղի, որին դու կոչված ես, քեզ աստվածներն են սպասում»: Հետո էլ՝ պատանեկան տարիքում, երբ իր խորհրդածությունների ծիրում նա մշտապես

ավելի ու ավելի բարձր նպատակ էր դնում իր դիմաց, որ բարձրացնում էր իրեն՝ իր նման առաջ ընթանալ ցանկացող ընկերների բազմությունից, երբ ինքը, տառապանքների տրվելով, ձգտում էր մտահասու լինել բրահմային, երբ, ամեն անգամ, ձեռք բերած նոր գիտելիքը դրդում էր նրան ավելին հասնելու... Դեռևս այնժամ, չնայած ուսման ծարավին, չնայած իր կրած բոլոր տառապանքներին, ինքն ունեցել է այդ զգացումը. «դեպի առաջ, դեպի վեր...»: Նա լսեց այդ նույն ձայնը, երբ լքում էր իր հայրենի եզերքը և սամանաների կյանքն ընտրում, երբ սամանաներից հեռանում էր Կատարյալի մոտ, երբ վերջինից էլ հեռացավ դեպի անհայտություն: Եվ արդեն որքա՜ն երկար ժամանակ էր, ինչ ինքը չէր լսել այդ ձայնը, որքա՜ն ժամանակ էր, որ նոր բարձունքներ չէր մագլցել, որքան հարթ ու անապատային էր դարձել նրա ճանապարհը և որքան երկար տարիներ էր քայլել այդ ճանապարհով, առանց բարձր նպատակի, առանց տենչանքի, առանց բարձունքներ նվաճելու, բավարարվելով միայն մանը-մունը ուրախություններով և սակայն երբեք լիարժեք բավարարություն չստանալով... Բոլոր այդ տարիներին, ինքն էլ այդ մասին չմտածելով, նա երազում ու ձգտում էր դառնալ մի այնպիսի մարդ, ինչպես բոլորը, ինչպես այդ մարդ-երեխաները, և սակայն իր կյանքը շատ ավելի աղքատիկ ու անբովանդակ եղավ, քան այդ մարդկանց կյանքն էր, քանի որ նրանց նպատակները, նրանց հոգսերը իրեն չէին մտահոգում: Քանի որ Կամասվամիի նման մարդկանցով բնակեցված այդ աշխարհը նրա համար միայն խաղ էր, պար, որ դիտում ես, կատակերգություն: Միայն Քամալան էր իր համար ճանապարհ, իր համար սիրելի ու արժեքավոր, բայց արդյո՞ք նա այդպիսին էլ մնացել է առ այսօր: Պե՞տք է նա դեռ իրեն, կամ ինքը նրան: Գուցե իրենք միմյանց հետ ընդամենը մի անվերջանալի խաղ են խաղում: Արժե՞ արդյոք դրա համար ապրել: Ո՛չ, դրա համար չարժե ապրել... Այդ խաղը կոչվում էր սանսարա, մանկական մի խաղ, խաղ, որը կարելի էր մեկ, երկու անգամ խաղալ, տասը անգամ, բայց մշտապես, անվերջ խաղա՞լ կլինի... Կարելի՞ բան էր դա...

Եվ Սիդհարթան անմիջապես հասկացավ, որ խաղն ավարտված է, որ ինքն ի վիճակի չէ շարունակելու այն: Նրա մարմնով սարսուռ անցավ, նա զգաց, որ իր ներսում ինչ-որ մի բան մահացավ:

Այդ ամբողջ օրը նա նստել էր մանգոյի ծառի տակ, հիշում էր հորը, հիշում էր Գովինդային, Գոթամային էր հիշում: Մի՞թե ինքը լքել էր նրանց բոլորին մի ինչ-որ Կամասվամի դառնալու համար: Նա դեռ նստած էր մանգոյի ծառի տակ, երբ գիշերը վրա հասավ: Երբ գլուխը բարձրացնելով աստղերին նայեց, մի միտք ծագեց նրա ուղեղում. «Ահա ես նստած եմ իմ մանգոյի ծառի տակ, իմ իսկ պարտեզում»: Նա ծիծաղեց իր այդ մտքի վրա, մի՞-

թե իսկապես անհրաժեշտ էր, ճի՞շտ էր արդյոք, թե դա անհեթեթ մի խաղ էր, այն, որ ինքը մանգոյի ծառ ուներ, որը գտնվում էր իր սեփական պարտեզում:

Դրա հետ էլ նա հաշիվները փակեց, դա ևս մեռավ նրա մեջ: Նա տեղից վեր կացավ, հրաժեշտ տվեց մանգոյի ծառին, հրաժեշտ տվեց պարտեզին: Եվ որովհետև ամբողջ օրը ոչինչ չէր կերել, խիստ քաղցածություն զգաց և հիշեց իր քաղաքային տան մասին, իր ննջարանի ու անկողնու, կերակուրներով լեցուն սեղանի մասին: Նա ժպտաց հոգնատանջ ժպիտով, ցնցեց մարմինը և հրաժեշտ տվեց այդ ամենին:

Նույն գիշերն էլ Սիդհարթան լքեց իր պարտեզը, լքեց քաղաքը և այլևս երբեք այնտեղ չվերադարձավ: Երկար օրեր շարունակ Կամասվամին նրա որոնումն էր կազմակերպել, կարծելով, թե Սիդհարթան պետք է որ ավազակների ձեռքն ընկած լինի: Սակայն Քամալան որոնման ոչ մի փորձ չձեռնարկեց: Տեղեկանալով, որ Սիդհարթան անհետացել է, նա նույնիսկ չզարմացավ: Չէ՞ որ ինքը միշտ էլ սպասում էր այդ օրվան: Քանի որ նա, ինչպես եղել, այնպես էլ մնացել էր սամանա, տնանկ մի ուխտավոր ու թափառական: Հատկապես նա այդ զգացողությունն ունեցավ վերջին տեսակցության ժամանակ: Եվ չնայած կորստյան ցավին՝ հիմա նա ուրախ էր, որ այն վերջին անգամ ինքը նրան այնպես ամուր սեղմեց իր կրծքին, հավատացած լինելով, որ ամբողջովին նրան էր պատկանում, ներծծված էր նրանով:

Սիդհարթայի անհետանալու մասին առաջին իսկ լուրն առնելով՝ նա մոտեցավ պատուհանին, ուր ոսկե վանդակի մեջ ինքը մի հազվագյուտ երգեցիկ թռչուն էր պահում: Նա բացեց վանդակի դռնակը, դուրս կորզեց թռչնակին ու բաց թողեց նրան: Նա երկա՛ր-երկա՛ր նայեց թռիչքի ցնծությամբ տարված թռչնակի ետևից: Այդ օրվանից սկսած նա դադարեց հաճախորդներ ընդունելուց և տունը փականի տակ դրեց: Միառժամանակ անց, սակայն, նա նախազգացում ունեցավ, որ Սիդհարթայի հետ վերջին տեսակցությունից հետո ինքը հղիացել է:

ԳԵՏԱՓԻՆ

Սիդհարթան քաղաքից հեռացել ու թափառում էր անտառում: Նա հասկացել էր, որ ինքն այլևս անկարող է վերադառնալ, որ կյանքը, որն ինքն ապրել է այսքան երկարուձիգ տարիներ շարունակ, վերջացել է... Այդ կյանքը նա ճաշակեց ու մինչև կոկորդը կուշտ էր այլևս: Մահացել էր երգեցիկ թռչունը, որին ինքը տեսել էր երազում: Մահացել էր թռչունը իր սեփական սրտում: Նա շատ խորն էր թաղվել սանսարայի մեջ, բոլոր կողմե-

րից նա իր մեջ էր ներծծում նողկանքն ու մահը, ինչպես որ սպունգն է ջուրը ներծծում՝ մինչև լիակատար հագեցումը: Եվ հիմա նա լեցուն էր այդ ամենով՝ տառապանքով ու մահասարսուռ նողկանքով, և աշխարհում չկար ոչինչ, որ կարող էր հրապուրել, ուրախացնել, սփոփել նրան:

Միայն մեկ տենդագին ցանկություն էր նրա մեջ կենդանի մնացել. չմտածել այլևս սեփական անձի մասին, խաղաղվել, մահանալ: Ու՞ր էր թե մի որոտ պայթեր երկնքում ու չանթահար աներ իրեն... կամ մի վագր հարձակվեր ու խժռեր իրեն... Ու՞ր էր թե գտնվեր որևիցե գինի կամ թույն, որը կանզգայացներ նրան, քուն ու մոռացություն կբերեր իր աչքերին, և բնավ երբեք՝ արթնացում... Քանզի չկար մի աղտեղություն, որով ինքը աղտոտված չլիներ, գոյություն չուներ մի այնպիսի մեղք ու խելագարություն, որ նա գործած կամ կատարած չլիներ, չկար մի այնպիսի հոգեկան տառապանք, որ նա քարդած չլիներ իր վրա: Մի՞թե այդքանից հետո դեռ կարելի էր ապրել: Հնարավո՞ր էր արդյոք առաջվա պես շնչել, քաղց զգալ, նախկինի պես կերակուր ընդունել, քնել, կնոջ հետ կողակցել: Արդյո՞ք այդ շրջապտույտն իր համար արդեն իսկ սպառված ու ավարտված չէր:

Սիդհարթան հասավ անտառով հոսող մեծ գետին, այն նույն գետին, որով մի ժամանակ, երբ ինքը դեռևս երիտասարդ էր ու վերադառնում էր Գոթամայի քաղաքից, իրեն այս ափը անցկացրեց լաստավարը: Գետի մոտ նա դադար առավ, անվճռական կանգնած էր գետափին: Հոգնածությունն ու սովը հյուծել էին նրան, և ու՞ր պետք է ինքը գնար, ինչու՞ գնար, այդ ո՞ր մի նպատակի համար: Ո՛չ, նրա համար չկար այլևս որևէ նպատակ, չկար ոչինչ, բացի այն խորը, տառապալից ու տենդագին ցանկությունից՝ թոթափելու այս ողջ մղձավանջը, դուրս թքելու այդ անգոսնած գինին, վերջ տալու այս խղճուկ ու ամոթալի կյանքին:

Գետափին կախ էր ընկած մի ծառ, մի կոկոսենի, որի ցողունին ուսով հենվեց Սիդհարթան, գրկեց այն և ակնդետ նայում էր կանաչ ջրերին, որ հոսում ու հոսում էին նրա հայացքի առաջ: Նա նայում էր, նայում և ավելի ու ավելի լցվում սեփական հենքից կտրվելու ու ջրերին անձնատուր լինելու ցանկությամբ: Սարսափելի դատարկությունն էր ջրերի խորքից ցոլանում իր դեմ, որին պատասխանում էր իր սրտի միջի դատարկությունը: Այո՛, նա վերջին սահմանին էր հասել: Իրեն ուրիշ ոչինչ չէր մնացել անելու, քան ջնջելու իրեն կյանքի գրքից, ջարդուփշուր անելու իր կյանքի ձախողված պատկերը, նետելու այն քմծիծաղ տվող աստվածների ոտքերի առաջ: Ահա՛ այն՝ սիրտ թափելու ներգործուն միջոցը, որ որոնում էր ինքը. մահանա՛լ, կոտրել կաղապարը, որ նա ատում էր: Թող ինքը կերաբաժին դառնա ձկներին, այդ շուն Սիդհարթան, խելացնորը, թող ձկները կտոր-կտոր

անեն այդ զազրելի, փտած մարմինը, այդ նեխահոտող ու բռնաբարված հոգին... Թող նրան խժռեն ձկներն ու կոկորդիլոսները, թող դևերը մաս-մաս անեն այն...

Այլայլված ու ծամածռված դեմքով նա նայում էր ջրի մեջ, տեսավ իր արտացոլանքը և թքեց այնտեղ: Ապա հոգնած ու հյուծված՝ ձեռքը ետ քաշեց ծառացողունից և փոքր-ինչ ձգվեց՝ ուղիղ գծով դեպի ջուրը նետվելու՝ խորասուզվելու նպատակով: Աչքերը փակ՝ նա ուր որ է արդեն պատրաստվում էր ընդառաջ գնալ մահվանը:

Բայց այդ պահին նրա հոգու հեռավոր գաղտնարաններից, նրա հոգնատանջ ու սմքած կյանքի հին-հին խորխորատներից մի հնչյուն պոկվեց: Դա ընդամենը մի բառ էր, մի վանկ, որը նա դողդոջուն ձայնով մրմնջաց իր քթի տակ՝ բնավ չգիտակցելով, բոլոր բրահմայական աղոթքները սկզբնավորող ու եզրափակիչ հնամենի բառը, սրբազան «Օմ»ը, որը մոտավորապես նշանակում է «կատարյալ» կամ «կատարելություն»: Եվ այն նույն պահին, երբ «Օմ» հնչյունը դիպավ Սիդհարթայի ականջին, նրա քնած միտքը հանկարծ արթնացավ և գիտակցեց իր արարքի ողջ անհեթեթությունը:

Սիդհարթան սարսափից ցնցվեց: Ահա թե ինքը ուր է հասել... Այնքան էր նա շեղվել իր ուղուց, այնպես էր ամեն ինչ մոռացել՝ իր ամբարած գիտելիքները, որ ինքն արդեն մահ էր որոնում, որ նրա մեջ ցանկություն էր ծնվել, աճել ու հասունացել, երեխայական մի ցանկություն՝ հանգստություն գտնել սեփական մարմնի ոչնչացման գնով... Այն, ինչը չարեցին վերջին ժամանակների բոլոր այդ տառապանքները, ողջ սթափմունքը, այդ ողջ հուսահատությունը, տեղի ունեցավ հենց այդ նույն պահին, երբ Օմը ներխուժեց նրա գիտակցության մեջ, նա ուշքի եկավ, նրա առաջ փայլատակեց իր այդ թշվառ իրավիճակից դուրս գալու ելքը ու նա ճանաչեց իրեն պաշարած մոլորությունը:

- Օ՛մ,- շշնջաց նա.- Օ՛մ...

Արտաբերելով այն՝ նա վերհիշեց բրահման, գիտակցեց կյանքի անկործանելիությունը, մտաբերեց այն ողջ աստվածայինը, որ մոռացել էր:

Այդ ամենը ընդամենը մի պահ միայն տևեց, կայծակի պես մի ակնթարթ փայլեց ու անհայտացավ: Սիդհարթան պառկեց հողին, կոկոսի ծառի ստորոտին, հոգնածությունից ջարդված, Օմը շշընջալով, նա գլուխը դրեց ծառարմատներին և խորը քուն մտավ:

Խորն էր նրա քունը, առանց երազների, երկար ժամանակից ի վեր նա այդպիսի քուն չէր վայելել: Երբ մի քանի ժամ անց նա արթնացավ, թվաց, թե տասը տարի էր անցել, նա լսում էր ջրերի լուռ քչքչոցը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որտե՞ղ է ինքը և ո՞վ է իրեն այստեղ բերել: Աչքերը լայն բաց

արեց, զարմանքով իր գլխավերևում տեսավ ծառերն ու երկինքը, և վերհիշեց, թե որտեղ է ինքը և ինչպես է այստեղ ընկել: Բայց միանգամից չկարողացավ հիշել, դրա համար որոշ ժամանակ պահանջվեց, անցյալը նրան միառժամանակ պատկերացավ ասես մշուշով պատված, թվաց իրեն այնքան հեռու, այնքան անվերջանալիորեն հեռու, անսահմանորեն անտարբեր: Նա գիտակցում էր միայն, որ իր նախկին կյանքին (արթնացող գիտակցության առաջին պահերին այդ նախկին կյանքը նրան թվաց որպես անցած-գնացած մարմնավորումներից մեկը, իր ներկայիս եսի նախկին գոյություններից մեկը), անցած կյանքին ինքը վաղուց հրաժեշտ է տվել, և որ զզված ու տառապանքով լեցուն՝ նա ցանկանում էր նույնիսկ վերջ տալ բուն իսկ կյանքին, սակայն ինչոր գետի մոտ աճող կոկոսի ծառի տակ վերագտավ իրեն, սրբազան Օմը շուրթերին, հետո քնեց ու արթնացավ որպես մի նոր մարդ, որ նոր հայացքով էր աշխարհին նայում: Նա կամացուկ չշնչաց Օմ բառը, որն արտաբերելով ինքը քուն էր մտել, ու նրան թվաց, թե իր այդ ողջ երկարատև քունը ոչ այլ ինչ է եղել, քան Օմն արտասանելու, Օմն առմտածելու երկարատև ու գերկենտրոնացած մի արտաբերում, խորասուզում և լիուլի տարրալուծում այդ մի հատիկ Օմի մեջ, անանունի, կատարյալի մեջ:

Բայց իսկապես ի՞նչ հրաշալի քուն էր դա... Երբեք քնից հետո նա իրեն այնպես թարմ չէր զգացել, այդպես նորացված ու երիտասարդացած... Գուցե իսկապե՞ս ինքը մահացել էր, հանդերձյալ աշխարհ գնացել և նոր կերպարանքով վերստին ծնունդ առել: Բայց ո՛չ, նա ճանաչում էր իրեն, ճանաչում էր իր ձեռքերն ու ոտքերը, ճանաչում էր այն տեղը, ուր ինքը պառկած էր, ճանաչեց նույն այդ եսը իր կրծքի տակ, այդ Սիդհարթային՝ ինքնահաճ ու տարօրինակ, բայց այդ նույն Սիդհարթան ամեն դեպքում փոխակերպվել էր, վերանորացվել, զարմանալիորեն քունն առած, սքանչելիորեն զգոն ու արթմնի, զվարթատեսիլ ու հետաքրքրասիրությամբ լի:

Սիդհարթան տեղից վեր կացավ ու տեսավ, որ դիմացը մի մարդ էր նստած, օտար մեկը, մի վանական էր՝ դեղին հանդերձանքով, սափրած գլխով, հայեցողության մեջ ընկղմված: Նա ուշադիր զննեց այդ մարդուն, որի ոչ միայն գլխի մազերն էին սափրած, այլև մորուքը և շուտով ի դեմս նրա ճանաչեց Գովինդային՝ իր պատանեկության ընկերոջը, այն Գովինդային, որն ապաստան էր գտել վսեմափայլ Բուդդայի ուսմունքի մեջ: Գովինդան նույնպես ծերացել էր, բայց նրա դեմքը պահպանել էր իր նախկին արտահայտությունը, այն ջանասիրություն էր արտահայտում, հավատարմություն, որոնում, վախվորածություն: Իսկ երբ Գովինդան, զգալով իրեն ուղղված հայացքը, աչքերը բացեց ու նայեց դիմացինին, Սիդհարթան հասկացավ, որ Գովին-

դան չճանաչեց իրեն: Գովինդան իր ուրախությունն արտահայտեց, որ նա արթնացել էր, ակնհայտորեն նա վաղուց էր այստեղ նստած՝ սպասելով նրա արթնացմանը, թեև չէր ճանաչում նրան:

- Ես քնել էի,- ասաց Սիդհարթան,- դու ինչպե՞ս ես այստեղ հայտնվել:

- Դու քնած էիր,- պատասխանեց Գովինդան,- Լավ չէ այսպիսի վայրերում քնել, ուր օձեր են վխտում ու անտառային գազաններ հաճախ կարող են պատահել: Ես, պարոն, Վեհագույն Գոթամայի՝ Շաքյամունի Բուդդայի աշակերտներից եմ, և վանականների մի խմբի հետ անցնում էի այս կողմերով, երբ քեզ պառկած տեսա ու քնած, ահա այստեղ, ուր քնելը վտանգավոր է: Ես փորձեցի արթնացնել քեզ, պարոն, բայց նկատելով, որ քո քունը շատ խորն է, ես հետ մնացի մերոնցից ու դադար առա քո կողքին: Բայց փոխանակ քեզ հսկելու, ինքս էլ, ըստ երևույթին, քնով ընկա: Ես վատ կատարեցի իմ պարտականությունը, հոգնածությունը հաղթեց ինձ: Բայց քանի որ դու արդեն արթնացել ես, թույլ տուր ինձ գնալ՝ հասնելու իմ եղբայրներին:

- Շնորհակալություն, սամանա, իմ քունը հսկելու համար,- խոսեց Սիդհարթան:- Բարի եք դուք, Վեհագույնի աշակերտներդ... Հիմա դու իհարկե կարող ես գնալ...

- Ես գնամ, պարոն: Քեզ բարի առողջություն եմ ցանկանում:

- Շնորհակալ եմ քեզ, սամանա:

Գովինդան ողջույնի նշան արեց ու ասաց.- Ո՛ղջ եղիր:

- Ցտեսությո՛ւն, Գովինդա,- ասաց Սիդհարթան:

Վանականը կանգ առավ:

- Թույլ տուր ինձ հարցնել, պարոն, որտեղի՞ց դու գիտես իմ անունը:

Այստեղ Սիդհարթան ժպտաց:

- Ես քեզ գիտեմ, Գովինդա, դեռևս այն ժամանակվանից, երբ դու ապրում էիր քո հայրական հյուղակում, երբ մենք միասին բրահմանների դպրոցն էինք հաճախում, զոհեր մատուցելու արարողություններից, սամանաների մոտ մեր համատեղ տարիներից մինչև այն ժամը, երբ Ցեթավանայի պարտեզում դու քո ապաստանը գտար Վեհագույնի մոտ:

- Դու Սիդհարթան ես,- բարձրաձայնեց Գովինդան:- Հիմա ես քեզ ճանաչեցի և չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես միայն կարող էի քեզ անմիջապես չճանաչել: Ողջու՛յն քեզ, Սիդհարթա, մեծ է իմ ուրախությունը վերստին քեզ տեսնելու համար:

- Ես ևս շատ ուրախ եմ քեզ տեսնելու համար: Դու հսկում էիր ինձ քնած ժամանակ, ընդունիր իմ երախտագիտությունը մեկ անգամ ևս, թեև պահապանի կարիքը ես չունեի: Ու՞ր ես ուղևորվում, բարեկամս:

- Ոչ մի տեղ: Մենք վանականներս մշտապես ճանապարհին

ենք, քանի դեռ անձրևների ժամանակը չի եկել, մենք անընդհատ տեղից տեղ ենք փոխադրվում, ապրում ենք համաձայն հրահանգների, ուսմունքն ենք քարոզում, ողորմություն մուրում և շարունակ առաջ ընթանում: Մենք միշտ էլ այսպես ենք ապրել: Իսկ դու՛, բարեկամս, դու՛ ուր ես գնում:

- Ես, ինչպես և դու, բարեկամս, ոչ մի տեղ չեմ գնում: Ես գնում եմ ոչ մի տեղ: Ես ընդամենը ճանապարհ եմ գնում, ես ուխտավոր եմ:

Գովինդան ասաց.

- Դու ասում ես, որ ուխտավոր ես և ես հավատում եմ քեզ: Բայց ներողություն, Սիդհարթա, դու նման չես ուխտավորի: Դու հարուստի հանդերձանք ես կրում, ոտնամաններդ էլ թանկարժեք են, և մազերդ, որ բուրում են անուշահոտ օծանելիքով, ուխտավորի մազեր չեն, սամանաների մազերն այդպիսին չեն:

- Ճիշտ է, թանկագինս, դու ամեն ինչ նկատում ես, քո սուր աչքն ամեն ինչ տեսնում է: Բայց ես քեզ չասացի, թե ես սամանա եմ: Ես միայն ասացի, որ ուխտավոր եմ ու ճամփորդում եմ: Եվ դա այդպես է. ես ճամփորդում եմ:

- Դու ճամփորդում ես,- ասաց Գովինդան,- բայց քչերն են ճամփորդում նման հագուստով, այսպիսի ոտնամաններով, այդպիսի մազերով: Երկար տարիներ է, ինչ ես ճամփորդում եմ աշխարհով մեկ և քեզ նման ուխտավորի բնավ հանդիպած չկամ:

- Հավատում եմ քեզ, Գովինդա, որ երբեք չես հանդիպել: Բայց այսօր, հենց հիմա դու մի այդպիսի ուխտավորի հանդիպեցիր, ահա՛ այսպիսի ոտնամաններ հագած, այսպիսի հանդերձանքով: Հիշի՛ր, սիրելիս, ամեն ինչ անցողիկ է երևույթների աշխարհում, անցողիկ են նաև մեր հանդերձանքները, մեր մազերի սանրվածքը, անցողիկ են մազերն իրենք էլ ու մեր մարմինը: Ես հարուստի զգեստներ եմ հագնում, դու ճիշտ նկատեցիր: Ես դրանք հագնում եմ, որովհետև ինքս էլ հարուստ եմ եղել, մազերիս օծանելիք եմ քսել ինչպես աշխարհաբնակ մարդիկ ու զվարճալիքների սիրահարները, որովհետև ես էլ նրանցից մեկն եմ եղել:

- Իսկ հիմա, Սիդհարթա, ո՞վ ես դու հիմա:

- Չգիտեմ, այդ մասին ես գիտեմ այնքան, որքան դու: Ես թափառում եմ այս ու այնտեղ: Ես հարուստ մարդ էի, բայց այժմ այդպիսին չեմ: Իսկ թե ինչ կլինեմ վաղը, չգիտեմ:

- Դու կորցրե՞լ ես քո հարստությունը:

- Ես այն կորցրել եմ կամ, ավելի ճիշտ, նա՛ է ինձ կորցրել: Ես այլևս հարստություն չունեմ: Արագ է պտտվում վերամարմնացումների անիվը, Գովինդա: Ու՞ր է բրահման Սիդհարթան: Ու՞ր է սամանա Սիդհարթան: Ու՞ր է հարուստ Սիդհարթան: Արագ է փոփոխվում ողջ անցողիկը, Գովինդա, ինքդ էլ գիտես:

Գովինդան երկա՛ր նայում էր պատանեկության ընկերոջը՝ տարակուսած հայացքով: Հետո խոնարհաբար ողջունեց, ինչպես ողջունում են երևելիներին ու գնաց իր ճանապարհով:

Ժպտադեմ՝ Սիդհարթան նայում էր հեռացող վանականի հետևից, ինքը դեռևս սիրում էր նրան, այդ հավատարիմ, անվճռական մարդուն: Եվ ինչպե՞ս նա կարող էր այդ պահին, իր հրաշալի քնին հաջորդած այս մոգական վայրկյանին՝ ամբողջովին լցված Օմով, ինչպե՞ս կարող էր չսիրել որևէ մեկին կամ ինչ-որ բան: Հենց դրա մեջ էր ամփոփված կախարդանքը, այն փոխակերպությունը, որ կատարվել էր իր հետ քնի ժամանակ և շնորհիվ Օմի, այն, որ ինքը սիրում էր ամենքին ու ամեն ինչ, որ ինքը սիրով էր լցված ամենի հանդեպ, ինչն իր աչքովն էր ընկնում: Եվ հենց դրանում էր, ինչպես հիմա իրեն թվում էր, իր նախկին հիվանդությունը, այն, որ ինքը ոչ ոքի ու ոչինչ չէր սիրում:

Ժպիտը դեմքին նայում էր Սիդհարթան հեռացող վանականին: Քունը նրա մեջ ուժ էր ներարկել, սակայն, փոխարենը քաղցն էր տանջում նրան, քանզի արդեն երկու օր էր, ինչ նա ոչինչ չէր կերել, և վաղուց անցել էին այն ժամանակները, երբ ինքը անզգայուն էր քաղցի հանդեպ: Ցավով, բայց նաև ժպիտով նա հիշեց այդ ժամանակները: Այնժամ, մտաբերեց նա, Քամալայի առջև ինքը երեք բանով էր պարծենում, տիրապետում էր երեք ազնվագույն ու ամենահաղթ արվեստներին. ժուժկալություն, սպասում, մտածում: Դրանում էր նրա հարստությունը, նրա ուժն ու հզորությունը, նրա ամրակուռ հենապատվարը: Իր երիտասարդության ջերմեռանդ, ջանադիր տարիներին նա ուսանել էր այդ երեք արվեստները և ուրիշ ոչինչ: Եվ հիմա կորցրել էր դրանք, դրանցից այլևս ոչ մեկն իրեն չէր պատկանում, ո՛չ ժուժկալ ծոմապահությունը, ո՛չ համբերատար սպասումը, ո՛չ էլ մտածելու կարողությունը: Նա այդ ամենը զոհաբերել է հանուն ինչ-որ տառապանքների, հանուն անցողիկի, զգայական հաճույքների, ազատ ու բարեկեցիկ կյանքի, հանուն հարստության... Իսկապես որ տարօրինակ ընթացք ունեցավ իր կյանքը: Եվ հիմա, համենայնդեպս այդպես է թվում, ինքն էլ մի իսկական երեխա-մարդ է դարձել, ինչպես բոլորը:

Սիդհարթան շարունակում էր մտածել իր ներկա վիճակի մասին: Նրա համար հիմա դժվար էր մտածելը, ըստ էության ինքը ցանկություն չուներ մտածելու, սակայն հարկադրում էր իրեն այդ բանն անել:

- Հիմա,- մտածում էր նա,- երբ բոլոր այդ անցողիկ բաները նորից լքել են ինձ, հիմա ես նորից կանգնած եմ արևի ներքո, ինչպես մի ժամանակ, երեխայական տարիքում եմ կանգնած եղել, և ոչինչ իմը չէ, ոչինչ չգիտեմ, ոչնչի ընդունակ չեմ, դեռ ոչ մի գիտելիքի չեմ տիրապետում: Ի՜նչ հրաշալի ու զարմանա-

լի է դա... Այժմ, երբ երիտասարդությունս արդեն անցել է, երբ վարսերս կիսով չափ սպիտակել են, երբ ուժերս տեղի են տալիս, հիմա ես մանկան նման ողջը սկսում եմ ամենասկզբից... Նա նորից ակամա ժպտաց: Այո՛, զարմանալի էր իր ճակատագիրը... Իր կյանքն արդեն զառիվայր էր ընթանում, և ինքն ահա կանգնած էր աշխարհի դեմ հանդիման՝ դատարկաձեռն, մերկանդամ ու կատարյալ անգիտության մեջ: Բայց այդ բանի գիտակցումից նա որևէ ցավ չէր զգում, օ ո՛չ, նրա մեջ նույնիսկ ծիծաղելու ցանկություն առաջացավ, ծիծաղ ամեն ինչի հանդեպ՝ իր հանդեպ, այդ տարօրինակ, անհեթեթ ու խելացնոր աշխարհի հանդեպ:

Քո կյանքն արդեն ցած է գլորվում զառիթափ ընթացքով,- ասաց նա ինքն իրեն ու ծիծաղեց իր այդ մտքի առնչությամբ: Բայց հանկարծ նրա հայացքն ընկավ գետին ու նա տեսավ, որ գետի ջրերն էլ ցած են հոսում և սակայն ջրերն այդ խայտալով երգում են՝ ուրախ ու զվարթ: Դա դուր եկավ նրան, նա բարեկամաբար ժպտաց գետակին: Բայց չէ՞ որ սա հենց այն նույն գետն է, որի մեջ մի ժամանակ ինքն ուզում էր խեղդվել, սրանից մի հարյուր տարի առաջ, թե՞ դա ինքը երազի մեջ էր տեսել:

Իսկապես որ զարմանալի ընթացք ունեցավ իմ կյանքը,- մտածում էր նա,- զարմանալի ոլորաններով այն ընթացավ: Երեխա ժամանակ ես գործ ունեի միայն աստվածների ու զոհերի մատուցման հետ: Պատանի հասակում նվիրվել էի ճգնակեցությանը, խորհրդածություններին ու ինքնախորասուզմանը, Բրահմայի որոնումներին և երկրպագում էի հավերժականը Աթմանի մեջ: Երիտասարդության տարիներին հետևեցի վանականներին, ապրում էի անտառում, տառապում չոգից ու ցրտից, սովորեցի քաղցած մնալ, սովորեցի սպանել իմ մարմինը: Հետո էլ՝ մեծն Բուդդայի ուսմունքը աստվածային լույսով ողողեց իմ իմացությունը. ես զգացի, թե ինչպես է աշխարհի միասնության գաղափարը հոսում իմ երակներում՝ ինչպես իմ սեփական արյունը: Բայց ինձ վիճակված էր հեռանալ նաև Բուդդայից ու մեծագույն գիտելիքից: Ես հեռացա ու Քամալայի մոտ սովորեցի սիրո արվեստը, Կամասվամիի մոտ սովորեցի վաճառականական արվեստը, փող դիզեցի, մսխեցի այն, սովորեցի որկորս հագեցնել, հաղուրդ տալ իմ կրքերին: Երկար տարիներ ես միայն զբաղված էի իմ միտքը ոչնչացնելով, մտածելուց ետ վարժվելուն, միասնականությունը մոռացության մատնելով: Փաստորեն ստացվեց այնպես, որ ես կամաց-կամաց, զարտուղի ու ոլորապտույտ ճանապարհներով նորից վերադարձա դեպի իմ մանկությունը, դարձա երեխա, մտածող մարդուց վերածվեցի մեծահասակ երեխայի՝ երեխա-մարդու: Սակայն, ամեն դեպքում այդ ճանապարհը շատ լավն էր, իմ կրծքի տակ երգող թռչունը, համենայնդեպս, չմահացավ: Բայց ի՞նչ ճանապարհ էր դա: Որքա՜ն հիմարություններ-

րի, արատների, մոլորությունների միջով ես ստիպված եղա անցնել, որքան նողկալի բաներ, հուսահատություններ ու տառապանքներ ես վերապրեցի, և այդ ամենը սոսկ նրա համար, որպեսզի նորից երեխա դառնամ ու ամեն ինչ սկսեմ ամենասկզբից: Բայց դա հենց այդպես էլ պետք է լիներ, իմ սիրտը հավանություն է տալիս դրան, աչքերս ուրախ են դրա համար: Ես պետք է մեծագույն հուսահատության գիրկն ընկած լինեի, պետք է գահավիժեի մինչև մտքերից ամենախելացնորի՝ ինքնասպանության գաղափարի անհատակ անդունդը, որպեսզի ընդունակ դառնայի ընդունելու ողորմությունը, որպեսզի նորից լսեի բառերի բառը՝ Օմը, որպեսզի նորից կարողանայի քնել ու արթնանալ, ինչպես որ հարկն է: Ես պետք է անմիտ ու հիմար մեկը դառնայի, որպեսզի վերստին իմ մեջ հայտնաբերեի Աթմանը: Պետք է մեղք գործեի, որպեսզի նորից ապրել կարողանայի: Տեսնես դեռ ու՞ր է տանելու ինձ իմ ճանապարհը: Անհեթեթ ու անմիտ է այդ ճանապարհը, այն ընթանում է ոլորապտույտներով, գուցե նույնիսկ պտտվում է շրջանի ներսում: Թող այդպես լինի: Ի՞նչ էլ լինի, ես ուզում եմ շարունակել իմ ճանապարհը:

Զարմանալիորեն ուրախ զգացումներ էին ալեկոծվում նրա կրծքի տակ:

Որտեղի՞ց է,- հարցնում էր նա իր սրտին,- որտեղի՞ց է քո մեջ այդ ուրախությունը: Գուցե դա այն երկար ու խորը քնի՞ց է, որ այնպես բարեբաստիկ եղավ ինձ համար: Թե՞ Օմ բառից, որ ես արտաբերեցի: Իսկ գուցե նրանից է, որ ես փախուստի դիմեցի և որ իմ փախուստը հաջողությամբ պսակվեց, և որ ահա՛ ես նորից ազատ եմ ու կանգնած եմ երկնքի ներքո, որպես երեխա: Օ՛, ի՛նչ հրաշալի է, որ ես փախուստի դիմեցի ու ազատություն գտա... Ի՛նչ մաքուր ու գեղեցիկ է այստեղի օդը, ի՛նչ հեշտ է այստեղ շնչելը: Այնտեղից, որտեղից ես փախա, այնտեղ ամեն ինչ բուրում էր քսայուղերով, համեմունքներով, գինով, առատությամբ, ծուլությամբ... Ինչպե՛ս էի ես ատում հարուստների, խրախճացողների, խաղամոլների այդ աշխարհը... Ինչպե՛ս էի ես ատում ինքս ինձ այն բանի համար, որ այդքան երկար ժամանակ մնացել էի այդ սարսափելի աշխարհում... Որքա՛ն ցավ ու տառապանք պատճառեցի ինքս ինձ, ինքզինքս կողոպտեցի, թունավորեցի ինձ, կտտանքների ենթարկեցի, ծերացա ու չարությամբ լցվեցի: Օ ո՛չ, ես այլևս երբեք առաջվա պես ինքս ինձ չեմ երևակայի, թե տեսեք-տեսեք ի՛նչ խելացի է Սիդհարթան: Միայն մի լավ բան կա, որի համար ես ինձ իրավունք եմ վերապահում ինզինքս գովելու, դա այն է, որ ես դադարեցի ինքս ինձ ատել ու չարիք սերմանել իմ անձի նկատմամբ, որ ես վերջ դրեցի այդ անմիտ ու դատարկ կյանքին... Փա՛ռք քեզ ու պատիվ, Սիդհարթա, որ անգիտակից անցկացրած այդքան տարիներից հետո դու նորից խե-

լամիտ ճանապարհ ես ընտրել և ճիշտ ես վարվել. լսել ես քո կրծքի տակ երգող թռչնակին ու հետևել նրան...

Այսպես նա գովաբանում էր ինքն իրեն, ուրախություն ապրում, հետաքրքրությամբ ունկնդրում իր ստամոքսին, որ գոմբոում էր սովից: Բավականաչափ տառապանք ու ցավեր էր նա կրել-տարել այս վերջին ժամանակներում ու օրերին, մտածում էր նա, որ իրեն մինչև հուսահատության դուռը հասցրեցին, մինչև մահվան սահմանը: Բայց հիմա ամեն ինչ լավ է: Ինքը դեռ երկար կարող էր մնալ Կամասվամիի մոտ, փող դիզել, մսխել այն, բավարարել իր մարմնական հաճույքները և ծարավի մատներ իր հոգին, դեռ երկար ժամանակ նա կարող էր ապրել այդ խաղաղ, փափուկ բարձերի մեջ թաղված դժոխքում, եթե տեղի չունենար այն, ինչը տեղի ունեցավ. եթե չայցելեր կատարյալ անհուսության ու տարակուսանքի պահը, այն սարսափելի ակնթարթը, երբ նա խոնարհվել էր գետի վրա՝ պատրաստ ինքն իրեն կործանելու: Այն, որ ինքը վերապրել էր այդ հուսահատությունը, այդ խորը նողկանքը և սակայն չէր ենթարկվել նրան, այն, որ թռչնակը, մշտազգոն զվարթության այդ աղբյուրն ու ներքին ձայնը, դեռ կենդանի էր իր մեջ, դրանից նա այնքան ուրախ էր իրեն զգում, ահա՛ թե ինչի առթիվ էր նա ժպտում, ահա՛ թե ինչու էր լուսաճառագում նրա դեմքը՝ սպիտակած մազերի ներքո...

- Իհարկե լավ է,- մտածում էր նա,- երբ ինքդ ես ճաշակում այն ամենը, ինչն անհրաժեշտ ես համարում գիտենալ: Որ աշխարհային հաճույքներն ու հարստությունը լավ բան չեն խոստանում, ես այդ մասին արդեն երեխա ժամանակ էլ գիտեի: Ես դա շատ վաղուց գիտեի, սակայն համոզվեցի միայն այժմ: Հիմա ես դա գիտեմ, և գիտեմ ոչ թե սրանից-նրանից լսելով, այլ դրանում համոզվեցի ու տեսա այն իմ սեփական աչքերով, սեփական սրտով, սեփական ստամոքսով: Երանի՜ ինձ, որ ես դա գիտեմ հիմա...

Դեռ երկար խորհրդածում էր նա իր հետ կատարված փոխակերպության մասին և ունկնդրում իր մեջ երգող թռչունի երգը: Բայց արդյո՞ք այդ թռչունը չէր մահացել իր մեջ, արդյո՞ք ինքը չէր զգացել նրա մահը: Ո՛չ, մեկ ուրիշ բան էր նրա մեջ մահացել, այնպիսի մի բան, որը վաղուց ծարավի էր մահվան: Արդյոք դա այն չէ՞ր, ինչն իր ապաշխարության կրակոտ տարիներին ցանկանում էր սպանել իր մեջ: Մի՞թե դա իր եսը չէր, իր պստլիկ, տագնապահար ու հպարտ եսը, որի դեմ ինքը տարիներ շարունակ պայքար է մղել, որը, սակայն, մշտապես պարտության է մատնել իրեն, այն եսը, որը անզգայացման ու ինքնաոչնչացման յուրաքանչյուր փորձից հետո նորից ու նորից կանդանություն էր առնում, որն արգելում էր ուրախանալ, և վախով էր լցված: Արդյոք հենց սա՞ չէր, որ վերջապես իր մահը գտավ այսօր, ահա

այստե՛ղ, անտառում, այս սքանչելի գետափին: Եվ արդյո՞ք հենց այդ պատճառով, որ նա մահացավ, ինքն իրեն այսօր երեխա էր զգում, ինքնավստահ, վախը թոթափած, ուրախ:

Միայն հիմա Սիդհարթան գլխի ընկավ, թե ինչու ինքը, լինելով բրահման ու ապաշխարող, ապարդյուն կռիվ էր մղում իր այդ եսի հետ: Այդ պայքարում իր ամբարած բազում իմացությունները խանգարեցին իրեն. սուրբ գրքերից սերտած մեծածավալ հատվածները, զոհաբերությունների կանոնները, չափազանց շատ ինքնախարազանումը, չափազանց շատ ձգտումները... Այնժամ նա լի էր ամբարտավան մեծամտությամբ. նա ամենախելացին էր, ամենաջանադիրը, բոլորից մշտապես մի քայլ առաջ, նա՛ էր ամենից գիտունն ու խորամիտը, միայն նրա մեջ էր նստած հոգևոր սկիզբն ու իմաստնությունը: Հենց այդ՝ հոգևոր կոչվածության, այդ գոռոզամտության ու իմացականության մեջ էլ սողոսկել էր իր եսը, ամուր նստել էր այնտեղ և աճե՛լ, աճե՛լ, մինչ ինքը կարծում էր, թե սպանում էր այն՝ ծոմապահությամբ ու ապաշխարանքով: Այժմ սակայն հասկացավ, որ իրավացի էր իր միջի ձայնը, որն ասում էր, թե ոչ մի ուսուցիչ ի զորու չէր իրեն պարգևելու ապաշխարության ու փրկության խորհուրդը: Այդ պատճառով նա պետք է ինքնակամ գնար դեպի աշխարհը, մսխեր իր ուժերը հաճույքների ու իշխանության, կանանց ու փողի դիմաց, պետք է դառնար առևտրական ու խաղամոլ, հարբեցող ու ընչաքաղց մեկը, մինչև որ հոգևորականն ու սամանան չմահանային իր մեջ: Դրա համար էլ նա տարիներ շարունակ պետք է հանդուրժեր այդ նողկալի գոյությունը, գարշանքով կրեր դատարկ ու անիմաստ կյանքի ողջ ճանձրույթը, կրեր այն մինչև վերջ, մինչև դառը հուսահատություն, մինչև որ նրա մեջ չմահանար հեշտասեր Սիդհարթան, ընչաքաղց Սիդհարթան: Նա մահացավ վերջապես և մի նոր Սիդհարթա արթնացավ այն խորախոր քնից: Այս Սիդհարթան էլ մի օր ծերանալու էր, նա նույնպես մահանալու էր օրերից մի օր, անցողիկ մի արարած էր Սիդհարթան, անցողիկ էր աշխարհում ամեն-ամեն բան: Այսօր, սակայն, նա երիտասարդ էր, ասես երեխա լիներ, այդ նոր Սիդհարթան, և լի էր երջանկությամբ:

Այս մտքերն էր նա որոճում և, միևնույն ժամանակ, ժպիտը դեմքին անսում էր իր ստամոքսի արձակած ձայներին, հաճույքով ունկնդրում մեղվի բզզոցը: Ուրախ-զվարթ նայում էր նա հոսանուտ գետին, երբեք ոչ մի գետ իրեն այնքան չէր հրապուրել, որքան այս մեկը, երբեք հոսող ջրի խոխոջյունն ու գեղեցկությունն իրեն այնպես ուժգին չէին գրավել: Նրան թվում էր, թե այս գետը կարող էր իրեն ինչ-որ առանձնահատուկ մի բան ասել, այնպիսի մի բան, որն ինքը դեռ չգիտե, բայց որն անհրաժեշտ էր իրեն իմանալ, սպասում էր իրեն: Այս գետի մեջ Սիդ-

հարթան ցանկանում էր խեղդամահ լինել, բայց նրա մեջ այսօր խեղդվեց այն ծեր, հոգնատանջ, հուսահատ Սիդհարթան: Նոր Սիդհարթան, սակայն, մեծագույն և խոր սեր զգաց այդ հոսանուտ ջրի հանդեպ և ինքն իր համար մեկընդմիշտ վճռեց, որ ինքը դեռ բավական ժամանակ նրա կողքին կմնա:

ԼԱՍՏԱՎԱՐԸ

Ես ցանկանում եմ մնալ այս գետի ափին,- մտածում էր Սիդհարթան,- սա այն նույն գետն է, որի վրայով ես մի ժամանակ անց կացա՝ երեխա-մարդկանց մոտ ճանապարհվելիս, այն ժամանակ մի բարյացկամ լաստավար ինձ այս ափը փոխադրեց, ես ուզում եմ գնալ նրա մոտ, գտնել նրան, նրա խրճիթից օրերից մի օր իմ ճանապարհն ինձ դեպի նոր կյանք բերեց, որն հիմա ծերացել է ու մահացել: Թող իմ ներկայիս ճանապարհն էլ, ինձ սպասող այս նոր կյանքն էլ այստեղից սկիզբ առնի:

Նուրբ զգացումներով նայում էր նա հոսող գետին, թափանցիկ կանաչին, նրա խորհրդաշատ ուրվանկարի բյուրեղապակու պես մաքուր գծագրումներին: Նա տեսնում էր լուսավոր մարգարիտներ, որ բարձրանում էին գետի հատակից, խաղաղավետ օդապղպջակներ էին լողում ջրի հայելում, որի մեջ արտացոլվում էր երկնքի կապույտը: Գետն ակնդետ նրան էր նայում հազար աչքերով՝ կանաչ, սպիտակ, բյուրեղափայլ, երկնակապույտ: Ինչպե՞ս էր ինքը սիրում այդ գետը, ինչպե՞ս էր հիանում նրանով, որքա՞ն էր ինքը երախտապարտ նրան... Նա լսում էր իր սրտի ձայնը, որ արթնացել էր իր մեջ ու ասում էր նրան. Սիրի՛ր այս ջուրը, մնա՛ նրա մոտ, սովորի՛ր նրանից: Օ՛ այո, ինքը ցանկանում էր սովորել նրանից, ուզում էր ունկնդրել նրան: Ով որ կկարողանա հասկանալ այս ջրին ու նրա գաղտնիքները,- խորհում էր նա,- նա կհասկանա նաև շատ ուրիշ բաներ, նրա առաջ կբացվեն շատուշատ գաղտնիքներ, բոլոր գաղտնիքները:

Այդ գետի գաղտնիքներից, սակայն, նա այսօր միայն մեկը տեսավ, որը և ցնցեց նրա հոգին: Նա տեսավ, որ գետն այդ հոսում էր ու հոսում, այն հոսում էր հարատև և առանց կանգառի, և, սակայն, մշտապես այստեղ էր, մշտապես և բոլոր ժամանակներում նույնն էր ու այնուհանդերձ ամեն վայրկյան նոր էր... Բայց ո՞վ կարող էր դա հասկանալ, մտահասու լիներ դրան: Նա մտահասու չէր, դեռևս չէր հասկանում, նրա մեջ միայն նախազգացումներն էին շարժվում, հեռավոր հիշողությունները, աստվածային ձայները:

Սիդհարթան տեղից վեր կացավ, անտանելի էր դարձել նրա որովայնում սաստկացող քաղցը: Համբերատար ու հանգիստ՝ նա շարունակեց քայլել գետափի երկայնքով, հոսանքին հակառակ,

նա լսում էր ջրերի աղմուկը, լսում էր իր ներսում գոմռացող քաղցի ձայնը:

Երբ հասավ լաստանավին, այն ուր որ է պատրաստվում էր շարժվելու, և նավակում կանգնած էր այն նույն լաստավարը, որը ժամանակին գետն անցկացրեց պատանի սամանային: Սիդ-հարթան ճանաչեց նրան, չնայած լաստավարը նույնպես շատ էր ծերացել:

- Դու ինձ մյուս ափը կտեղափոխե՞ս,- հարցրեց նա:

Լաստավարը՝ զարմացած, որ մի այսպիսի երևելի պարոն մենմենակ գետափ է եկել, նրան նավի մեջ ընդունեց ու ափից հեռացավ:

- Գեղեցիկ կյանք ես դու քեզ համար ընտրել,- խոսեց հյուրը:- Պետք է որ հիանալի լինի՝ մշտապես այս գետի ափին ապրել ու ամեն օր երթևեկել նրա վրա:

Թիավարողը, ժպիտը դեմքին՝ գլխով արեց:- Այո՛, պարոն, դա սքանչելի է, դու ճիշտ նկատեցիր: Բայց մի՞թե յուրաքանչյուրի կյանքը, յուրաքանչյուր աշխատանք ինքնին սքանչելի չէ:

- Գուցե այդպես է: Բայց ես նախանձում եմ քեզ քո զբաղմունքի համար...

- Բայց այն քեզ շատ շուտով կձանձրացներ: Այս աշխատանքը գեղեցիկ հանդերձանքով մարդկանց վայել չէ:

Սիդհարթան ծիծաղեց.- Ինձ արդեն այսօրվա ընթացքում մեկ անգամ էլ են անվստահությամբ վերաբերվել հագուստի պատճառով: Դու չէի՞ր ցանկանա, լաստավար, ինձնից նվեր ստանալ այդ զգեստները, որոնցից ես արդեն զզվել եմ: Քանզի, իմացած եղիր, ես փող չունեմ տեղափոխման դիմաց քեզ վճարելու:

- Պարոնը կատակում է,- ծիծաղեց լաստավարը:

- Ես չեմ կատակում, բարեկամս: Դու մեկ անգամ արդեն այս նույն նավակով տեղափոխել ես ինձ այս գետի վրայով և բոլորովին ձրի: Այսօր էլ նույն կերպ վարվիր և վարձի փոխարեն ընդունիր իմ զգեստը:

- Իսկ առանց զգեստի պարոնն ինչպե՞ս է անելու, ու՞ր է գնալու:

- Ա՛խ, գիտես, ես ընդհանրապես չեմ ցանկանում այստեղից հեռանալ: Ինձ համար ավելի հաճելի կլիներ, լաստավա՛ր, եթե դու ինձ մի հնամաշ թիկնոց տայիր և ինձ քեզ մոտ պահեիր որպես օգնական, ավելի ճիշտ՝ աշակերտ, քանզի ես դեռ պետք է սովորեմ ինչպես վարվել նավակի հետ:

Երկար ու քննախույզ հայացքով լաստավարը նայում էր օտարականի դեմքին:

- Հիմա ես քեզ ճանաչեցի,- վերջապես ասաց նա:- Մի ժամանակ դու գիշերեցիր իմ հյուղակում, դա շատ վաղուց էր, երևի մի երկու տասնյակից ավելի տարիներ առաջ: Այնժամ ես քեզ

գետն անցկացրի և մենք որպես լավ բարեկամներ բաժանվեցինք իրարից: Դու այն ժամանակ, կարծեմ, սամանա էիր, այնպես չէ՞: Բայց հիմա ես չեմ կարողանում քո անունը մտաբերել:

- Ինձ կոչում են Սիդհարթա և ես սամանա էի, երբ վերջին անգամ դու ինձ տեսար:

- Դե ուրեմն բարի գալուստ քեզ, Սիդհարթա: Ինձ կոչում են Վասուդևա: Հուսամ դու այսօր էլ իմ հյուրը կլինես և կգիշերես իմ խրճիթում, կպատմես ինձ, թե որտեղից ես գալիս և ինչու են քո գեղեցիկ զգեստները քեզ այդպես զզվեցրել:

Նրանք հասան գետի մեջտեղը և Վասուդևան լարեց իր ուժերն ու սկսեց ավելի եռանդուն թիավարել՝ գետի հոսանքի դեմ պայքարելով: Հանգիստ աշխատում էր նա իր ուժեղ ձեռքերով՝ հայացքը սևեռած նավակի սուրուլիկ ծայրին: Սիդհարթան նստել ու նրան էր նայում, մտաբերելով, թե ինչպես այն ժամանակ, իր սամանայական կյանքի վերջին օրը, իր սրտում սեր առաջացավ այդ մարդու նկատմամբ: Նա երախտագիտությամբ ընդունեց Վասուդևայի հրավերքը: Երբ նրանք ափ իջան, Սիդհարթան օգնեց նրան նավակը կապելու փայտե ցցասյունին, որից հետո լաստավարը առաջարկեց նրան խրճիթ մտնել, հյուրասիրեց հաց ու ջրով, Սիդհարթան հաճույքով ընդունեց հյուրասիրությունը, կերավ-խմեց, ըմբոշխնեց նաև մանգոյի մրգերը, որ իրեն առաջարկեց Վասուդևան:

Հետո, երբ արևն արդեն մայր էր մտնում, նրանք նստոտեցին գետափին ընկած ծառակոճղին, և Սիդհարթան լաստավարին պատմեց իր ծագման ու կյանքի պատմությունը, այնպես, ինչպես այն այսօր, իր կյանքի այս հուսահատ ժամին նա տեսնում էր իր աչքերի առաջ: Մինչև ուշ գիշեր տևեց նրա պատմությունը:

Վասուդևան ունկնդրում էր մեծագույն ուշադրությամբ: Նա ամեն ինչ կլանում էր իր մեջ. ծագման ու մանկության, որոնումների ու ուսման տարիների, ուրախությունների ու տխրությունների մասին պատմությունները: Սա լաստավարի մեծագույն առաքինություններից մեկն էր, նա կարողանում էր լսել, ինչը քչերին է ներհատուկ: Չնայած նա ոչ մի խոսք չէր արտաբերում, սակայն Սիդհարթան զգում էր, թե ինչպես էր Վասուդևան կլանում իր բառերը՝ լռելյայն, բացահայտ ու համբերատար սպասումով, բաց չթողնելով ոչ մի բառ, ամենայն հանդուրժողությամբ, ո՛չ դրվատանքի, ո՛չ էլ հանդիմանանքի ցույցերով, նա միայն լսում էր: Սիդհարթան զգում էր, թե ինչպիսի մեծագույն երջանկություն է խոստովանել մի այդպիսի ունկնդրի առաջ, նրա սրտում սեփական կյանքը բացել, սեփական որոնումներն ու տառապանքները:

Սակայն Սիդհարթայի պատմության ավարտին, երբ նա խոսում

էր գետափին ընձյուղված ծառի և իր խոր անկման մասին, սըրբազան Օմի մասին, և թե ինչպես, արթնանալով, ինքը մեծագույն սեր զգաց գետի նկատմամբ, այդժամ լաստավարը սկսեց լսել ավելի մեծ ուշադրությամբ, ամբողջապես գրավված պատմությամբ, լսում էր աչքերը փակ:

Իսկ երբ Սիդհարթան սկվեց և մի երկարատև լռություն իջավ, Վասուդևան ասաց.- Ես հենց այդպես էլ մտածում էի: Գետը խոսեց քեզ հետ: Քեզ էլ է նա բարեկամ, քեզ հետ էլ է նա խոսում: Դա լավ է, դա շա՜տ լավ է: Մնա՛ ինձ հետ, Սիդհարթա, բարեկամս: Ժամանակին ես մի կին ունեի, նրա անկողինը իմ կողքին էր, բայց նա վաղուց մահացել է, և ես արդեն վաղուց է ինչ մենակ եմ ապրում: Հիմա դու կապրես իմ կողքին, քնատեղն ու ուտելիքը երկուսիս էլ կբավականացնի:

- Շնորհակալ եմ քեզ,- ասաց Սիդհարթան,- շնորհակալություն եմ հայտնում քեզ և ընդունում եմ քո առաջարկը: Շնորհակալ եմ քեզ, Վասուդևա, նաև այն բանի համար, որ դու այդպես ուշադիր լսում էիր ինձ: Շատ քիչ են այն մարդիկ, ովքեր լսել գիտեն, և ես ոչ ոքի չեմ հանդիպել, որը քեզ պես լսել կարողանա: Դա էլ ես պետք է սովորեմ քեզանից:

- Դու կսովորես դա,- խոսեց Վասուդևան,- բայց ոչ ինձանից: Ես լսել սովորել եմ գետից, դու էլ դա նրանից կսովորես: Գետն ամեն ինչ գիտի, նրանից ամեն բան կարելի է սովորել: Տե՛ս, դու արդեն մի բան սովորել ես նրանից, այն, որ ավելի լավ է դեպի ցած ձգտել, խորասուզվել, խորխորատն ընկղմվել: Հարուստ ու երևելի Սիդհարթան թիավար է դառնում, գիտուն բրահման Սիդհարթան լաստավար է դառնում, դա էլ է քեզ գետն ասել: Նա քեզ ուրիշ բաներ էլ կսովորեցնի:

Երկարատև դադարից հետո Սիդհարթան հարցրեց.- Ո՞րն է այդ ուրիշը, Վասուդևա:

Վասուդևան տեղից վեր կացավ.- Արդեն ուշ է,- ասաց նա,- գնանք քնելու: Բարեկամս, ես քեզ չեմ կարող ասել, որն է այդ ուրիշը: Դու դա ինքդ կիմանաս, իսկ գուցե դու արդեն գիտես դա: Նայի՛ր, ես գիտնական չեմ, ես խոսել չգիտեմ, ես նաև չեմ կարողանում մտածել: Ես կարողանում եմ միայն լսել ու հնազանդվել, ուրիշ ոչինչ ես չեմ սովորել: Եթե ես դա ուրիշներին ասել ու սովորեցնել կարողանայի, գուցե ես իմաստուն մեկը կլինեի, սակայն ես ընդամենը լաստավար եմ և իմ խնդիրն է մարդկանց գետն անցկացնել: Շատերին եմ ես մի ափից մյուսը տեղափոխել, հազարավորների, բայց նրանց բոլորի համար իմ գետն այլ բան չի եղել, քան ընդամենը խոչընդոտ իրենց ճանապարհին: Նրանք ուղևորվում էին փողի համար ու գործերով, հարսանիքների, ուխտագնացություններ կատարելու, իսկ գետը խոչընդոտ էր նրանց ճանապարհին, և լաստավարն էլ հենց նրա

համար էր այստեղ, որպեսզի նրանց արագ հաղթահարել տար այդ խոչընդոտը, արգելքը: Այդ հազարավորներից միայն չատ քչերի, ընդամենը մի քանիսի, չորս կամ հինգ հոգու համար էր, որ գետը խոչընդոտ չէր, նրանք լսել էին գետի ձայնը, ունկնդրել էին նրան, և գետը նրանց համար սուրբ էր դարձել, ինչպես ինձ համար:

Սիդհարթան մնաց լաստավարի մոտ և սովորեց կառավարել նավը, իսկ երբ լաստանավի հետ գործ չէր լինում, Վասուդևայի հետ նա աշխատում էր բրնձի դաշտում, փայտ էր ժողովում, պտուղներ հավաքում բանանի ծառից: Նա սովորեց թիեր չինել, նավը նորոգել, կողովներ հյուսել, ուրախանում էր իր սովորած ամեն բանի համար, և օրերն ու ամիսները նրա համար անցնում էին չափազանց արագ: Բայց ավելի չատ բաներ, քան որ իրեն Վասուդևան էր սովորեցնում, նա սովորում էր գետից: Նա գետից անդադար սովորում էր: Նախ և առաջ Սիդհարթան նրանից սովորեց լսել, ունկնդրել խաղաղ սրտով, բացազատ և սպասումով լի սրտով, առանց կրքի, առանց ցանկության, առանց դատողության ու կարծիքի:

Բարեկամության մթնոլորտում էր նա ապրում Վասուդևայի կողքին և երբեմն-երբեմն նրանք խոսքեր էին փոխանակում իրար հետ, չատ քիչ բառեր, բայց երկար ու խորը մտածված: Վասուդևան բառերի հետ մեծ սեր չուներ, հազվադեպ էր Սիդհարթային հաջողվում նրան խոսակցության մեջ ներքաշել:

- Դու ևս,- մի անգամ Սիդհարթան հարցրեց նրան,- գետի՞ց ես իմացել այն գաղտնիքը, որ ժամանակ գոյություն չունի:

Վասուդևայի դեմքին ժպիտը փայլեց:

- Այո, Սիդհարթա,- ասաց նա:- Դու երևի նկատի ունես, որ գետը ամենուր և ամեն անգամ նույնն է՝ իր ակունքում ու գետաբերանին, վարար ջրվեժի հատվածում, գետանցումին, ծովին հանդիպելիս, լեռներում, ամենայն պահի ու ամեն տեղ նույնն է, քանի որ նրա համար միայն ներկան գոյություն ունի, ոչ թե անցյալի ստվերները կամ ապագայի ստվերները:

- Հենց դա է, որ կա,- ասաց Սիդհարթան:- Եվ երբ ես դա սովորեցի, ետ նայեցի իմ անցած կյանքին ու տեսա, որ նա էլ նման է գետի, որ երեխա Սիդհարթային տղամարդ Սիդհարթայից և ծերունի Սիդհարթայից բաժանում են միայն ստվերները, ոչ թե իրականությունը: Այդպես էլ Սիդհարթայի նախկին ծնունդները, անցած մարմնավորումները անցյալներում չեն, ինչպես որ նրա մահն ու վերադարձը դեպի Բրահման ապագային չի պատկանում: Ոչինչ չի եղել, ոչինչ չի լինելու, ողջը է՛, ամեն-ամենայն ինչ իրական է միայն ու միայն ներկա գոյություն ունի:

Սիդհարթան խոսում էր ոգևորված, այդ վերջին բացահայտումը նրան խորապես երջանկացրել էր: Օ՛, մի՞թե ողջ տառապանք

ասածը միայն ժամանակի մեջ գոյություն չի ունեցել, մի՞թե բոլոր հոգեկան կտտանքներն ու տագնապները ժամանակի մեջ չէին ամփոփված, և արդյոք աշխարհիս երեսին գոյություն ունեցող ողջ ծանրությունը, ողջ թշնամանքը չէ՞ր չքանում, հենց որ մարդս հաղթահարում էր ժամանակը, հենց որ նա մտքով վանում էր ժամանակը: Նա խոսում էր ոգեշնչված, Վասուդևան, սակայն, ժպտում էր նրան շողշողուն ժպիտով և գլխով հաստատական նշաններ անում, լռակյաց, հետո ձեռքը գցեց Սիդդհարթայի ուսին ու շարունակեց իր կիսատ թողած գործը:

Մեկ ուրիշ անգամ էլ, երբ գետը վարարել էր հորդառատ անձրևներից և հզորաձայն աղմկում էր, Սիդհարթան ասաց.- Այնպես չէ՞, բարեկամս, գետը շատ ձայներ ունի, չափազանց շատ: Քեզ չի՞ թվում, որ նա մեկ թագավորի ձայն է ունենում, մեկ էլ՝ զինվորի, մեկ ցուլի ու մեկ էլ՝ գիշերահավքի, մեկ երկունքի ցավերով բռնված կնոջ, մեկ էլ՝ հոգոց հանող դժբախտի, և էլի հազարավոր այլևայլ ձայներ:

- Այդպես է,- գլխով արեց Վասուդևան,- բոլոր արարածների ձայները ներկա են գետի ձայնում:

- Եվ գիտե՞ս,- շարունակեց Սիդհարթան,- թե ինչ բառ է նա արտասանում, երբ քեզ հաջողվում է նրա բոլոր տասնյակ հազարավոր՝ բյուր ձայները միաժամանակ լսել:

Վասուդևայի դեմքին երջանիկ ժպիտ էր փայլում, նա խոնարհվեց Սիդհարթայի կողմը և նրա ականջի մեջ շշնջաց սրբազան Օմը: Հենց դա էլ լսում էր Սիդհարթան գետի աղմուկի մեջ:

Ժամանակ առ ժամանակ նրա ժպիտը նմանվում էր լաստավարի ժպիտին, գրեթե նույնքան շողարձակող, երջանկությանց փայլով ներթափանցված, հազարավոր փոքրիկ կնճիռներով լուսափայլող, նույն մանկականությունը, նույն ծերության դրոշմով: Ճանապարհորդներից շատերը, երբ նրանք նայում էին զույգ լաստավարներին, նրանց եղբայրներ էին կարծում: Հաճախ նրանք երեկոյան միասին նստոտում էին գետափին ընկած ծառաբնին, լուռ նստում ու երկուսով միասին ունկնդրում էին ջրի ձայնը, որը նրանց համար ոչ թե ջրի, այլ կյանքի ձայնն էր, ապրողների ձայնը, հավերժորեն ծնվողների: Երբեմն էլ պատահում էր, որ գետին ունկնդրելու միջոցին միևնույն բաների մասին էին մտածում, երկու օր առաջվա զրույցի մասին, իրենց օժանդակությանը դիմած ճանապարհորդներից մեկի մասին, որի դեմքն ու ճակատագիրը զբաղեցնում էր իրենց, մահվան մասին, իրենց մանկության մասին, և այն մասին, որ իրենք երկուսն էլ, նույն վայրկյանին, երբ գետն իրենց մի ինչ-որ լավ բան էր ասած լինում, իրար էին նայում, երկուսն էլ՝ ճիշտ և ճիշտ միևնույն բանը մտածելով, երկուսն էլ՝ երջանկացած նույն հարցին տրված նույն պատասխանի համար:

Լաստանավից ու զուլդ լաստավարներից էլ ինչ-որ բան էր ճառագում, որն զգում էին ճանապարհորդողներից ոմանք: Երբեմն պատահում էր, որ ճամփորդողներից մեկը, լաստավարներից մեկնումեկի դեմքին նայելուց հետո, սկսում էր իր կյանքի մասին պատմել, իր ճաշակած տառապանքների մասին, խոստովանում էր իր գործած մեղքերը, մխիթարություն աղերսում ու խորհուրդ հայցում: Երբեմն պատահում էր, որ նրանցից մեկը թույլտվություն էր խնդրում մի երեկո նրանց մոտ անցկացնելու համար, որպեսզի գետի ձայնին ունկնդիր լինի: Պատահում էր նաև, որ հետաքրքրասերներ էին այցելում, լսած լինելով, թե այդ լաստանավի վրա երկու իմաստուններ կամ կախարդներ էին ապրում, երկու սրբեր: Այդ հետաքրքրասերները շատ հարցեր էին տալիս, բայց նրանք որևէ պատասխան չէին ստանում, և համոզվում էին, որ իրենց առջև ո՛չ կախարդներ էին, ո՛չ էլ իմաստուններ, նրանք տեսնում էին միայն երկու ծեր ու բարյացկամ տղամարդկանց, որ ասես մունջ լինեին, մի տեսակ տարօրինակ ու խենթուկ: Եվ հետաքրքրասերները ծիծաղում էին ու իրար մեջ խոսում, թե ի՛նչ հիմարամիտ ու դյուրահավատ ժողովուրդ է, որ այդպիսի դատարկ լուրեր է տարածում:

Տարիներն անցնում էին և ոչ ոք չէր հաշվում նրանց: Մի անգամ ուխտագնաց վանականներ հայտնվեցին, Գոթամայի՝ Բուդդայի հետևորդներից, որոնք խնդրեցին իրենց գետի մյուս ափն անցկացնել, և լաստավարները նրանցից տեղեկացան, որ նրանք չտապում են վերադառնալ իրենց մեծ ուսուցչի մոտ, քանի որ լուր էր տարածվել, թե Վեհագույնը մահացու հիվանդ է և շուտով իր վերջին մարդկային մահով է մահանալու՝ նախքան հավիտենական ապաշխարանքի արժանանալը: Շատ չանցած՝ հայտնվեց ուխտագնաց կրոնավորների մի նոր թափոր, հետո էլ՝ մեկ ուրիշը, և ինչպես վանականները, այնպես էլ՝ մնացյալ ճամփորդները ու թափառականները այլ բանի մասին չէին խոսում, բայց միայն Գոթամայի ու նրա մոտալուտ մահվան: Եվ ինչպես ռազմական արշավանքի կամ թագավորի թաղադրման ժամանակ ամեն տեղից ու բոլոր կողմերից գալիս ու գալիս էին մարդիկ և մըրջյունների պես պարսեր կազմելով իրար գլխի հավաքվում, այդպես հորձանք տալով հոսում էին նրանք՝ ասես կախարդանքից դյութված, դեպի այնտեղ, ուր մեծն Բուդդան իր մահվանն էր սպասում, ուր մեծագույն իրադարձությունն էր տեղի ունենալու և տվյալ դարաշրջանի մեծագույն Կատարելությունը հանգիստ էր առնելու օրհնության գրկում:

Այդ օրերին Սիդհարթան շատ էր մտածում մահամերձ իմաստունի մասին, այն մեծագույն ուսուցչի, որի ձայնը խրատում էր ժողովուրդներին ու հարյուր-հազարավորների արթնություն էր պարգևել, որի ձայնին մի ժամանակ ինքն էլ էր երանությամբ

անսացել, որի սուրբ հայացքին ինքն էլ ժամանակին ակնածանքով նայել էր: Հաճելի զգացողություններով հիշում էր նա այն ժամանակների մասին, իր աչքերի առաջ տեսնում էր ուսուցչի անցած կատարելության ճանապարհը, և ժպիտը դեմքին մտաբերում այն խոսքերը, որոնք մի ժամանակ ինքը, տակավին պատանյակ, ուղղել էր նրան՝ Վեհագույնին: Դրանք, թվաց իրեն, հպարտ ու տարիների հեռվից եկող խելացի խոսքեր էին, այսպես ժպիտը դեմքին հիշում էր նա: Վաղուց արդեն նա հասկացել էր, որ իրեն ոչինչ չէր բաժանում Գոթամայից, որի ուսմունքը, սակայն, ինքը չէր կարողացել ընդունել: Ո՛չ, ոչ մի ուսմունք չի կարող ընդունել ճշմարիտ որոնողը, նա, որ ճշմարտապես գտնել է ցանկանում: Սակայն նա, ով արդեն գտել է, նա կարող է ամենայն ուսմունք ընդունել, ամեն ճանապարհ, յուրաքանչյուր նպատակ, իրեն այլևս ոչինչ չի բաժանում բոլոր այն հազարավոր մյուսներից, որոնք հավերժի մեջ են ապրում, որոնք աստվածային են ներշնչում:

Օրերից մի օր էլ, երբ շատերն էին ուխտագնացություն կատարում դեպի մահամերձ Բուդդայի օթևանը, նրա մոտ ուղևորվեց նաև Քամալան, երբեմնի գեղեցկագույնը դշխոների մեջ: Նա վաղուց էր հրաժեշտ տվել իր նախկին կյանքին, իր պարտեզը նվիրել էր Գոթամայի վանականներին, ապաստան էր գտել նրա ուսմունքում, դարձել էր ուխտագնացներին օժանդակող մեկը, նրանց հոգատար ընկերուհին ու բարերարը: Մանուկ Սիդհարթայի՝ իր որդու հետ միասին, Գոթամայի մոտալուտ մահվան լուրն առնելուն պես, Քամալան ճանապարհ ընկավ դեպի այնտեղ, համեստագույն զգեստներով, ոտքով: Այսպես՝ որդու հետ միասին նա քայլում էր գետի ափով, սակայն փոքրիկը շուտով հոգնեց, ասելով, որ ցանկանում է տուն վերադառնալ, հանգիստ առնել, որ ինքը քաղցած է, այսպես երեխան դարձավ կամակոր ու ձայնը գլուխն էր գցել: Երեխայի պատճառով Քամալան ստիպված էր հաճախակի կանգ առնել ճանապարհներին, հանգստանալ, երեխան սովոր էր իր կամքը պարտադրել նրան, կերակրել մանկանը, սփոփել, երբեմն կշտամբել նրան: Փոքրիկ Սիդհարթան չէր հասկանում, թե ինչու՞ ինքը պետք է իր մոր հետ կատարի այս դժվարին ու ձանձրալի ուղևորությունը, ճանապարհվի մի անծանոթ վայր, օտար մի մարդու մոտ, որը սուրբ էր և պատրաստվում էր մահանալ: Մահանում է, թող մահանա, իրեն դա որքանո՞վ է վերաբերում:

Ուխտագնացներն արդեն այնքան էլ հեռու չէին Վասուդևայի լաստանավից, երբ փոքրիկ Սիդհարթան մեկ անգամ էլ ստիպեց մորը կանգառ անել, հանգստանալ: Ինքը՝ Քամալան էլ հոգնել էր, և մինչ երեխան ախորժակով բանան էր ուտում, մայրը պառկեց գետնին, փոքր-ինչ փակեց աչքերը ու անձնատուր եղավ

խաղաղավետ հանգստին: Հանկարծ նա մի սարսափելի ճիչ արձակեց, երեխան զարհուրած նրան նայեց և տեսավ, թե ինչպես էր մոր դեմքը սարսափից գունատվել, տեսավ նրա շրջազգեստի տակից դուրս սողացող փոքրիկ, սևամարմին օձին, որը խայթել էր Քամալային:

Անմիջապես երկուսով վազեցին ճանապարհի ուղղությամբ՝ մարդ գտնելու հույսով, և արդեն ուր որ է մոտեցել էին լաստանավին, երբ Քամալան գետնին տապալվեց, քանզի այլևս անկարող էր առաջ ընթանալ: Երեխան, սակայն, մի սարսափելի ճիչ արձակեց, այդ ընթացքում համբուրելով ու գրկելով իր մորը, վերջինս էլ սկսեց բղավել ու օգնության կանչել, մինչև որ նրանց ձայները հասան Վասուդևայի ականջին, որ կանգնած էր լաստանավի կողքին: Նա նետվեց ձայների ուղղությամբ, կնոջը ձեռքերի մեջ առավ, դրեց լաստանավին, երեխան էլ հետևներից այնտեղ ցատկեց, և շուտով նրանք հասան այն խրճիթը, ուր օջախի կողքին կանգած էր Սիդհարթան ու կրակ էր վառում: Նա բարձրացրեց հայացքը և սկզբում տեսավ երեխայի դեմքը, որն իրեն տարօրինակ կերպով ծանոթ թվաց, ինչ-որ մոռացված մի բան հիշեցնող: Հետո նա տեսավ Քամալային ու անմիջապես էլ ճանաչեց նրան, թեև վերջինս անգիտակից վիճակում պառկած էր լաստավարի ձեռքերի մեջ: Հիմա նա հասկացավ, որ այդ երեխան, որի դեմքն իրեն այնքան ծանոթ էր թվում, իր սեփական որդին է, ու նրա սիրտը թպրտաց կրծքի տակ:

Քամալայի վերքը լվացին, սակայն նա արդեն սև գույն էր ստացել, ու մարմինն էլ՝ ուռչելով փքվել էր, նրան դեղամիջոց տվեցին խմելու: Նա գիտակցության եկավ: Քամալան պառկած էր Սիդհարթայի անկողնուն, խրճիթում, և նրա վրա խոնարհված կանգած էր Սիդհարթան, որ մի ժամանակ այնքա՜ն սիրում էր նրան: Այդ ամենը նրան որպես երազ պատկերացավ, ժպտալով նայում էր Քամալան իր բարեկամի դեմքին, հետո կամաց-կամաց եղելությունը հասկացավ, հիշեց խայթոցի մասին ու տագնապած ձայն տվեց երեխային:

- Նա այստեղ է՝ քեզ մոտ, մի՛ անհանգստացիր,- ասաց Սիդհարթան:

Քամալան նայեց նրա աչքերի մեջ: Հետո խոսեց՝ դժվարությամբ շարժելով լեզուն, որ անզգայացել էր թույնից.

- Դու ծերացել ես, սիրելիս,- ասաց նա,- ճերմակել ես: Բայց դու նման ես այն պատանի սամանային, որ շատ տարիներ առաջ, հնամաշ շորերով ու փոշոտ ոտքերով ինձ մոտ՝ իմ այգին եկավ: Դու նրան հիմա ավելի շատ ես նման, քան այն ժամանակ, երբ լքեցիր ինձ ու Կամասվամիին: Քո աչքերը նման են նրա աչքերին, Սիդհարթա: Ա՜խ, ես էլ եմ ծերացել, շա՜տ եմ ծերացել, և ինչպե՞ս միայն դու կարողացար ինձ ճանաչել:

Սիդհարթան՝ ժպտաց.- Ես քեզ անմիջապես ճանաչեցի, Քամալա, սիրելիս:

Քամալան ցույց տվեց երեխային ու ասաց.- Դու ճանաչեցի՞ր նրան: Նա քո որդին է:

Նրա աչքերը թափառող արտահայտություն ստացան ու փակվեցին: Երեխան լալիս էր, Սիդհարթան նստեցրեց նրան իր ծնկներին, թողեց, որ նա լաց լինի, շոյեց նրա մազերը և մանկան դեմքին նայելով՝ նրա միտքն ընկավ մի բրահմանական աղոթք, որը նա ժամանակին սովորել էր, երբ ինքն էլ դեռ մի փոքրիկ երեխա էր: Դանդաղ, երգեցիկ ձայնով, նա սկսեց արտասանել այն, անցյալից ու մանկությունից բառերը եկան-հոսեցին նրա միջով: Եվ նրա երգի հնչյունների ներքո երեխան հանգստացավ, մի երկու անգամ վեր թռավ ու քնեց: Սիդհարթան նրան դրեց Վասուդևայի անկողնուն: Վասուդևան կանգնել էր օջախի մոտ ու բրինձ էր եփում: Սիդհարթան բարեկամաբար ժպտաց նրան, ինչին Վասուդևան փոխադարձեց ժպիտով:

- Նա կմահանա,- կամացուկ ասաց Սիդհարթան:

Վասուդևան գլխով արեց: Նրա բարեհամբույր դեմքի վրայով վազեց օջախի կրակի արտացոլքը:

Քամալան մեկ անգամ էլ գիտակցության եկավ: Ցավը աղճատել էր նրա դեմքը, Սիդհարթայի աչքը կարդաց նրա բերանին, նրա գունատված այտերին խաղացող տառապանքը: Խաղաղ կարդում էր նա Քամալային պաշարած ցավերը՝ սպասումին տրված, ընկղմված այդ ցավերի մեջ: Քամալան զգում էր դա, աչքերը նրա հայացքն էին որոնում:

Հայացքը նրան ուղղելով՝ ասաց Քամալան.- Հիմա ես տեսնում եմ, որ քո աչքերն էլ են փոխվել: Նրանք հիմա բոլորովին ուրիշ են: Ինչի՞ց եմ, սակայն, ես իմանում, որ դու Սիդհարթան ես: Այդ դու ես, բայց նաև դու չես:

Սիդհարթան ոչինչ չխոսեց. խաղաղ նայում էին նրա աչքերը Քամալայի աչքերի մեջ:

- Դու հասա՞ր քո նպատակին,- հարցրեց Քամալան,- դու գտա՞ր խաղաղությունը:

Սիդհարթան ժպտաց և իր ձեռքը դրեց նրա ձեռքին:

- Ես դա տեսնում եմ,- ասաց Քամալան,- տեսնում եմ: Ես էլ խաղաղություն կգտնեմ:

- Դու այն գտել ես,- շշնջաձայն խոսեց Սիդհարթան:

Քամալան ակնդետ նրա աչքերին էր նայում: Նա մտածեց այն մասին, որ ինքը ցանկանում էր ուխտի գնալ Գոթամայի մոտ՝ Կատարյալի հայացքը տեսնելու նպատակով, ներշնչելու համար նրանից ճառագող խաղաղությունը և փոխարենը, ահա, տեսնում է Սիդհարթայի հայացքը և դա նույնքան լավ է, որքան եթե ինքը Գոթամայի հայացքը տեսնելիս լիներ: Նա ուզում էր դա

Սիդհարթային ասել, սակայն նրա լեզուն այլևս իրեն չէր հնազանդվում: Լուռ նայում էր նա Սիդհարթային և Սիդհարթան նրա աչքերում տեսավ, թե ինչպես էր նրանցում կյանքը աստիճանաբար մարում: Երբ վերջին ցավը առկայծեց Քամալայի աչքերում ու հանգեց, երբ վերջին սարսուռը անցավ նրա մարմնով, Սիդհարթայի մատները փակեցին նրա ակնակոպերը:

Երկար նստել էր Սիդհարթան ու նայում էր նրա ասես քնի մեջ ընկղմված դեմքին: Երկար զննում էր նա Քամալայի բերանը, նրա ծերացած ու հոգնած բերանը՝ ավելի նեղացած շրթունքներով և հիշում էր, որ ինքը, իր կյանքի գարնանային տարիներին, այդ բերանը համեմատել էր թարմ բացված թզի հետ: Երկար նստել էր նա ու կարդում էր նրա գունատ դեմքը, հոգնած խորշոմները, ինքն էլ լցվում էր այդ հայացքով, հետո տեսավ իր սեփական դեմքը՝ նույն դիրքում պառկած, նույնպես գունատ, նույնպես հանգած, միաժամանակ տեսնում էր իր ու նրա դեմքերը երիտասարդ, կարմիր շրթունքներով, վառվռուն աչքերով, և ներկայի ու անցյալի միաժամանակության զգացումը, հավերժության զգացումը պաշարեց նրան ամբողջովին: Այդ ժամին նա խորությամբ զգաց, շատ ավելի խոր, քան երբևէ, յուրաքանչյուր կյանքի անկործանելիությունը, յուրաքանչյուր ակնթարթի հավերժությունը:

Երբ նա վեր կացավ, Վասուդևան նրա համար բրնձի կերակուր էր պատրաստել: Սակայն Սիդհարթան հրաժարվեց ուտելիքից: Փարախում, ուր իրենց այծն էր փակված, երկու ծերունիները գցեցին իրենց ծղոտե անկողինը և Վասուդևան պառկեց քնելու: Սիդհարթան, սակայն, դուրս եկավ և գիշերն անցկացրեց խրճիթի առաջ նստած, գետի ձայնին ունկնդիր, շուրջառված անցյալի հիշատակներով, մի և նույն պահի մեջ վերապրելով իր կյանքի բոլոր ժամանակաշրջանները: Միայն երբեմն-երբեմն նա վեր էր կենում նստած տեղից, խրճիթի դռնակից ներս մտնում ու ականջ դնում, թե արդյոք քնա՞ծ էր երեխան:

Վաղ առավոտյան, երբ դեռ արեգակը չէր ծագել, Վասուդևան դուրս եկավ փարախից ու մոտեցավ իր բարեկամին:

- Դու չես քնել,- ասաց նա:

- Ոչ, Վասուդևա: Ես նստել էի այստեղ ու ունկնդրում էի գետին: Շատ բաներ ասաց նա ինձ, նա լիուլի լցրեց ինձ իր փրկարար գաղափարներով, միասնության գաղափարով:

- Քեզ դժբախտություն է պատահել, Սիդհարթա, բայց ես տեսնում եմ, որ ցավը չի թափանցել քո սրտի մեջ:

- Ո՛չ, սիրելիս, ինչպե՞ս ես կարող եմ տխրել: Ես, որ հարուստ էի ու երջանիկ, հիմա շատ ավելի հարուստ ու երջանիկ դարձա: Ինձ նվեր տրվեց իմ որդին:

- Ես էլ շատ ուրախ եմ քո որդու հայտնության համար: Բայց

հիմա, Սիդհարթա, մենք պետք է աշխատանքի գնանք, շատ գործ կա անելու: Քամալան մահացավ այն նույն անկողնու վրա, ուր ժամանակին իմ կինն էր մահացել: Հենց այն նույն բլրի վրա էլ մենք կվառենք Քամալայի խարույկը, ուր ես ժամանակին կնոջս խարույկն եմ վառել:

Մինչ երեխան դեռ քնած էր, խարույկն արդեն պատրաստ էր:

ՈՐԴԻՆ

Վախվորած ու հեկեկալով՝ որդին մասնակցեց իր մոր հուղարկավորությանը, խոժոռ ու երկյուղած լսում էր նա Սիդհարթային, որն իրեն որպես իր որդուն ողջունեց ու բարի գալուստ մաղթեց նրան Վասուդևայի տանը: Գունատ ու լուռ՝ նա օրերով նստում էր մահացածի գերեզմանաթմբին, ոչինչ չէր ուզում ուտել, դեմքը չրջում էր հորից, սիրտը փակ էր պահում, պաշտպանվելով ու բողոքելով իրեն վիճակված ճակատագրից:

Սիդհարթան հոգածաբար ու ներողամտորեն էր վերաբերվում նրան, հարգանքով լցված նրա վշտի հանդեպ: Սիդհարթան հասկանում էր, որ իր որդին իրեն չի ճանաչում, որ նա չի կարող իրեն սիրել որպես հոր: Կամաց-կամաց նա տեսնում ու հասկանում էր նաև, որ այդ տասնմեկամյա տղան երես առած երեխա էր, մոր փափկասուն ձեռքի տակ մեծացած, որ հասակ էր առել հարստության մեջ, նուրբ կերակուրներին վարժված, փափուկ անկողնուն սովոր, սպասավորներին կարգադրություններ տալուն ընտելացած: Սիդհարթան հասկացավ, որ սգացող ու փափկասուն երեխան չի կարող հանկարծակի ու ինքնակամ համակերպվել իրեն օտար ու թշվառ միջավայրին: Այդ պատճառով Սիդհարթան նրան չէր հարկադրում որևէ բան անել, ինքն էր շատ գործեր անում նրա փոխարեն, միշտ լավագույն պատառն էր նրա առաջը դնում: Նա հույս էր փայփայում կամաց-կամաց, փաղաքշանքով ու համբերատարությամբ նրա սերը շահել:

Նա իրեն հարուստ ու երջանիկ էր համարում երեխայի հայտնության կապակցությամբ: Բայց քանի որ ժամանակն անցնում էր ու երեխան մնում էր օտարոտի ու մռայլ, ի ցույց դնելով իր հպարտ ու հակառակվող, կամակոր սիրտը, ոչինչ չէր ցանկանում անել, ծերունիների նկատմամբ հարգանք չէր տածում, ամայացնում-փչացնում էր Վասուդևայի մրգատու ծառերը, այդժամ Սիդհարթան սկսեց հասկանալ, որ իր որդին բոլորովին էլ երջանկություն ու անդորր չբերեց իրեն, այլ միայն ցավ ու հոգս: Բայց նա սիրում էր նրան, և իր համար ավելի սիրելի էր իր սիրուց ծնված ցավն ու հոգսը, քան երջանկությունն ու խաղաղությունը՝ առանց իր որդու:

Այն պահից սկսած, երբ երեխան իրենց հետ՝ խրճիթում էր

ապրում, ծերունիները աշխատանքի բաժանում կատարեցին: Վասուդևան նորից միայնակ իր ձեռքն առավ լաստանավի կառավարման պաշտոնը, իսկ Սիդհարթան՝ որդու կողքին լինելու նպատակով, ստանձնեց տնային ու դաշտային աշխատանքները:

Երկար ժամանակ, երկար ու ձիգ ամիսներ սպասում էր Սիդհարթան, որ որդին կհասկանա իրեն, կընդունի իր սերը, գուցե նաև կպատասխանի փոխադարձությամբ: Երկար ամիսներ սպասում էր նաև Վասուդևան, տեսնում էր ամեն ինչ, սպասում էր ու լռում: Մի օր էլ, երբ կրտսեր Սիդհարթան նորից շատ տանջեց հորը իր կամակորությամբ ու քմահաճ համառությամբ և կոտրեց նրա բրնձեղենի զուլգ պնակները, Վասուդևան երեկոյան կողմ իր բարեկամին մի կողմ տարավ և խոսեց նրա հետ.

- Կներե՛ս ինձ,- ասաց նա,- սակայն բարեկամի սրտով ես ուզում եմ խոսել քեզ հետ: Ես տեսնում եմ, որ դու տանջվում ես, տեսնում եմ, որ մեծ վշտի մեջ ես: Քո որդին, սիրելի՛ս, քեզ հոգսեր է պատճառում, ճիշտն ասած՝ նաև ինձ: Մեկ ուրիշ կյանքի, ուրիշ բնի է պատանի թռչնակը վարժվել: Դու հրաժարվեցիր քաղաքից ու հարստությունից, փախար նրանցից՝ նողկանքից ու գերհագեցումից դրդված, մինչդեռ քո որդին հարկադրված էր հակառակ իր կամքի լքել այդ ամենը: Ես հարցրեցի գետին, բարեկամս, ես շատ անգամներ եմ նրան հարցրել: Սակայն գետը ծիծաղում է, ծիծաղում է ինձ վրա, իմ և քո վրա, մեր հիմարամտության վրա: Ջուրը ձգտում է ջրին, երիտասարդությունը ձգտում է երիտասարդության, քո որդին այնտեղ չի գտնվում, որն անհրաժեշտ է իրեն՝ ծաղկումի համար: Ինքդ էլ կարող ես գետին հարցնել, լսի՛ր, թե ինչ կասի նա քեզ...

Դառնությամբ Սիդհարթան նայեց իր բարեկամի դեմքին, որի անհամար խորշոմների մեջ կայտառությունն ու ուրախությունն էին մշտապես բնակվում:

- Ինչպե՞ս կարող եմ ես նրանից բաժանվել,- կամացուկ հարցրեց նա ինքն իրեն, հարցրեց՝ չփոթմունքի մեջ ընկած:- Ինձ մի քիչ ժամանակ տուր, սիրելիս... Տե՛ս, ես կռիվ եմ տալիս նրա համար, ամեն գնով ուզում եմ գրավել նրա սիրտը, սիրով ու փաղաքուշ համբերատարությամբ ուզում եմ կոտրել նրան: Չէ՞ որ գետը մի օր էլ նրա հետ է խոսելու, չէ՞ որ նա էլ է դրան կոչված:

Վասուդևայի ժպիտը ավելի ջերմ ու պայծառ դարձավ:

- Օ՜, այո՛, նա էլ է կոչվածներից, նա էլ է պատկանում կյանքի հավերժական ընթացքին: Սակայն գիտե՞նք արդյոք մենք, դու և ես, թե ինչի՞ է նա կոչված, ի՞նչ ճանապարհ է նրան սպասվում, ինչպիսի՞ գործեր և ի՞նչ տառապանքներ: Նրան քիչ տառապանքներ չեն սպասում կյանքում, քանզի հպարտ ու դաժան է նրա սիրտը՝ շատ տառապանքներ են բաժին ընկնելու նրան,

շատուշատ սխալներ, բազմաթիվ անարդարություններ են վիճակվելու իրեն, բազմաթիվ մեղքերի ծանրությունից կքելու է նա: Ասա՛ ինձ, սիրելիս, չէ՞ որ դու քո որդուն չես դաստիարակում, չես բռնանում նրա վրա, չէ՞ որ դու նրան չես ծեծում, չես պատժում նրան:

- Ո՛չ, Վասուդևա, քո թվարկածներից ոչ մեկը ես չեմ անում:

- Այդպես էլ գիտեի: Դու նրա վրա չես բռնանում, չես ծեծում նրան, նրան չես կարգադրում, քանի որ դու գիտես, որ փափուկն ավելի ամուր է, քան կոշտը, ջուրն ավելի ուժեղ է ժայռից, սերն ուժեղ է բռնությունից: Շատ լավ է, ես գովում եմ քո այդ վարվելակերպը: Սակայն արդյոք սխալմունք չէ՞ քո կողմից, որ դու նրա վրա չես բռնանում, չես պատժում նրան: Արդյոք դու նրան չե՞ս կապում քո սիրո շղթաներով: Արդյոք դու նրան չե՞ս ամաչեցնում ամենայն օր, ճնշում չե՞ս բանեցնում նրա հանդեպ քո այդ բարությամբ ու համբերատարությամբ: Չէ՞ որ դու ստիպում ես նրան, գոռոզամիտ ու երես առած տղային, ապրել խրճիթում՝ բանաններով սնվող երկու ծերունիների հետ նույն հարկի տակ, որոնց համար բրինձն անգամ անուշահամ կերակուր է, որոնց մտքերը չեն կարող իրենը լինել, սրտերն էլ՝ ծեր են, իրենից տարբեր, տրոփում են թույլ ու հանդարտ, բոլորովին այլ կերպ: Այս ամենը մի՞թե նրա համար հարկադրանք չէ ու պատիժ:

Հուզված ու չփոթահար՝ Սիդհարթան աչքերը խոնարհեց: Հետո կամացուկ հարցրեց.- Այդ դեպքում, ի՞նչ ես կարծում, ես ի՞նչ պետք է անեմ:

Վասուդևան ասաց.- Նրան ետ տար քաղաք, վերադարձրու իր մոր տունը, այնտեղ պետք է, որ դեռ սպասավորներ մնացած լինեն, հանձնի՛ր որդուդ նրանց: Իսկ եթե ոչ ոք չլինի, տար նրան ուսուցչի մոտ, բայց ոչ բնավ սովորելու սիրույն, այլ որպեսզի նա ընկնի ուրիշ տղաների ու աղջիկների շրջապատը, ա՛յն աշխարհը, որն իրենն է, որին պատկանում է նա: Դա բնավ չի՞ անցել քո մտքով:

- Դու տեսնում ես բովանդակ իմ սիրտը,- տխուր խոսեց Սիդհարթան:- Ես շատ հաճախ եմ մտածել այդ մասին: Բայց ահա՛, տե՛ս, ինչպե՞ս կարող եմ ես նրան, որ առանց այն էլ փափուկ սիրտ չունի, հանձնել այս աշխարհին: Արդյոք նա ավելի չի՞ մեծամտանա, անձնատուր չի՞ լինի արդյոք հաճույքներին ու իշխանությանը, չի՞ կրկնի արդյոք իր հոր գործած բոլոր սխալները, այդպես գուցե նա ամբողջությամբ կուլ գնա սանսարային ու կործանվի վերջնականապես:

Ավելի լուսապայծառ էր փայլում լաստավարի ժպիտը, նա նորբորեն դիպավ Սիդհարթայի ձեռքին ու ասաց.

- Այդ մասին գետին հարցրու, բարեկամս: Տես, թե ինչպե՞ս նա կծիծաղի քո հարցի համար... Չլինի՞ դու իսկապես մտածում ես,

թե քո բաժին հիմարություններն ու սխալները գործելով դու կարող ես ետ պահել որդուդ նույնը կրկնելուց: Եվ ինչպե՞ս դու կարող ես քո որդուն պաշտպանել սանսարայից: Ինչպե՞ս: Ուսմա՞մբ, աղոթքո՞վ, խրատներով կամ հորդորներո՞վ: Սիրելիս, չլինի՞ թե դու բոլորովին մոռացել ես այն պատմությունը, այն խիստ ուսանելի պատմությունը բրահմանի որդի Սիդհարթայի մասին, որը դու շատ ժամանակ առաջ, հենց այս նույն տեղում, պատմել ես ինձ: Ո՞վ պաշտպանեց, ո՞վ ետ պահեց սամանա Սիդհարթային սանսարայից, մեղքից, ընչաքաղցությունից, խենթությունից: Մի՞թե նրան ետ պահեցին իր հոր բարեպաշտությունը, իր ուսուցիչների հորդորները, իր սեփական գիտելիքները, սեփական որոնումները: Այդ ո՞ր հայրը, ո՞ր ուսուցիչը նրան ետ պահեց դրանից, իր սեփական կյանքը վերապրելուց, իր կյանքով կենաց աղտեղությունն ընդունելուց, սեփական մեղքերը գործելուց, ինքն իր սեփական ձեռքով դառը ըմպելիքն ընդունելուց, իր սեփական ճանապարհը գտնելուց: Մի՞թե դու կարծում ես, սիրելիս, թե այդ նույն ճանապարհն անցնելը ինչ-որ մեկի համար բացառություն է լինելու, ինչ-որ մեկը խուսափելու է դառնության թասը պարպելուց: Եվ որ այդ բացառությունը քո որդի՞ն է լինելու, հենց միայն նրա համար, որովհետև դու նրան սիրու՞մ ես, որովհետև դու ցանկանում ես նրան ե՞տ պահել ցավից ու տառապանքից, այլև հուսախաբությունից: Բայց եթե նույնիսկ տասնյակ անգամներ հանուն նրա դու մահն ընդունես, միևնույն է՝ դու դրանով չես կարողանա նրան սպասվող ճակատագրի դույզն-ինչ մի մասնիկից ազատել նրան:

Վասուդևան դեռևս երբեք այսքան երկար չէր խոսել: Սիդհարթան բարեկամաբար շնորհակալություն հայտնեց նրան, վըշտացած սրտով խրճիթը մտավ և երկար ժամանակ չէր կարողանում քնել: Վասուդևան նրան այնպիսի մի բան չէր ասել, ինչի մասին ինքն արդեն մտածած չլիներ ու չիմանար: Բայց այդ իր իմացածը նա ի վիճակի չէր գործնականում կիրառել, այդ իմացությունից ավելի ուժեղ էր իր սերը որդու հանդեպ, ավելի ուժեղ էր նրա հանդեպ իր տածած քնքշանքը, իրեն պաշարած՝ որդուն կորցնելու վախը: Պատահե՞լ է արդյոք, որ ինքը որևէ մեկին այդ աստիճան իր սիրտը նվիրաբերի, պատահե՞լ է արդյոք, որ ինքը այնքան շատ սիրի մի մարդու, այնպես կուրորեն, այնպես տառապագին, առանց փոխադարձության նշույլի և սակայն իրեն այնքա՜ն երջանիկ զգա:

Սիդհարթան չկարողացավ հետևել իր բարեկամի խորհրդին, նա ի վիճակի չէր բաժանվել որդուց: Նա թույլ տվեց տղային կարգադրել իրեն, անհարգալից վերաբերվել իր հանդեպ: Նա լռում ու սպասում էր, ամեն ասածու օր վերսկսելով համբերատարության համր ու մունջ պատերազմը: Վասուդևան ևս լռում

էր ու սպասում, բարեկամական զգացումով տոգորված, ամեն ինչ հասկանալով, ներողամիտ համբերատարությամբ: Համբերության հարցում երկուսն էլ անգերազանցելի վարպետներ էին:

Մի անգամ, երբ մանկան դեմքը իրեն առավել քան երբևէ հիշեցրեց Քամալային, Սիդհարթան հանկարծ մտաբերեց այն բառերը, որ մի ժամանակ, իր երիտասարդության տարիներին, Քամալան ուղղել էր իրեն. «Դու անկարող ես սիրել», ասել էր նա իրեն, և ինքը համաձայնվելով նրա հետ՝ իրեն համամատել էր մի աստղի և երեխա-մարդկանց էլ՝ ընկնող տերևների հետ, և այնուամենայնիվ Քամալայի խոսքերում նա որսացել ու զգացել էր հանդիմանության պես մի բան: Իսկապես, նա երբեք ամբողջությամբ, ինքնամոռացության աստիճան անձնատուր չէր եղել մեկ ուրիշ մարդու, մեկ ուրիշի համար երբեք սիրո խենթությանը չէր տրվել: Նա իրեն դրան անընդունակ էր համարում, և հենց դա էր, ինչպես այն ժամանակ թվում էր իրեն, այն մեծագույն զանազանությունը, որ գոյություն ուներ իր և երեխա-մարդկանց միջև: Սակայն այժմ, իր որդու հայտնությունից ի վեր, հիմա ինքն էլ՝ Սիդհարթան, մի իսկական երեխա-մարդ էր դարձել. նա տառապում էր մեկ ուրիշի պատճառով, մեկ ուրիշին էր սիրում, ամբողջությամբ տրվելով այդ սիրույն, նույն այդ սիրո պատճառով խենթություններ կատարելով: Հիմա նա ինքն էլ զգում էր, թեև ուշացած, իր կյանքում առաջին անգամ, այդ ամենահզոր ու արտասովոր, այդ տարօրինակ կիրքը, տառապում էր նրա պատճառով, անասելիորեն տառապում, և սակայն իրեն երջանիկ էր զգում, մի տեսակ ասես նորացված, ինչ-որ բանով ավելի հարստացած:

Նա անշուշտ զգում էր, գիտակցում, որ իր որդու հանդեպ տածած այդ կույր սերն ընդամենը մի կիրք է, մի շատ մարդկային թուլություն, որ այն... սանսարա է, պղտոր մի աղբյուր, թանձր ու մուգ մի ջուր: Բայց, միաժամանակ, զգում էր, որ այն բոլորովին էլ արժեքից զուրկ չէր, որ այն նույնիսկ անհրաժեշտություն էր, որ գալիս էր իր սեփական հոգու խորխորատներից: Այդ հաճույքը նույնպես հարկավոր էր քավել, այդ տառապանքները պետք էր ճաշակել, այդ խենթություններն էլ պետք էր անել:

Ահա այդպես որդին, այս ամբողջ ընթացքում ստիպում էր նրան այդ խենթություններն անել, ստիպում էր, որ հայրն իր քմահաճույքները կատարի, համակերպվի իր կամակորությունների հետ: Այդ հայր կոչվածը չուներ ոչինչ, որ գրավեր, շլացներ տղային կամ վախ ներշնչեր նրան: Այդ հայր կոչվածը ընդամենը մի բարեսիրտ մարդ էր, քնքուշ, հեզաբարո մի մարդ, գուցե շա՜տ բարեպաշտ, գուցե նույնիսկ սուրբ, սակայն դրանք այն հատկանիշները չէին, որ կարող էին շլացնել, հրապուրել տղային: Այդ հայրն իրեն ճանձրալի էր թվում, նա իրեն ասես գերի

էր պահում իր այդ թշվառ խրճիթում: Նա իրեն զզվեցրել էր ու ձանձրացրել, իսկ այն, որ իր կատարած յուրաքանչյուր զազրելի արարք ժպիտով էր ընդունում, իր ամեն հանդիմանական արտահայտությանը պատասխանում էր սիրալիր խոսքերով, ամեն չարության բարությամբ պատասխանում, հենց դա էլ երեխային պատկերանում էր որպես այդ խարդախ ծերունու կողմից խաղարկվող ամենատելի, նենգմիտ խորամանկությունը: Երեխայի համար ավելի հաճելի կլիներ սպառնալիքներ լսել նրանից, նրա կոպիտ վերաբերմունքին արժանանար, թեկուզ պատիժներ կրեր:

Բայց ահա եկավ այն օրը, երբ պատանի Սիդհարթայի զգացմունքները պայթեցին և նա բացահայտ կերպով հանդես եկավ իր հոր դեմ: Հայրն իրեն ցախ հավաքելու հանձնարարություն էր տվել: Տղան սակայն խրճիթից դուրս չէր գալիս, կանգնել էր համառ ու զայրացած տեսքով, ոտքերով դոփում էր հատակին, բռունցքները սեղմած ու կատաղության բռնկման պահին հոր դեմքին նետեց իր ողջ ատելությունն ու նողկանքը.

- Ինքդ գնա քո ցախի ետևից,- բղավեց նա մոլեգնած,- ես քո ծառան կամ ստրուկը չեմ: Ես գիտեմ, որ դու ինձ չես ծեծի, դու այդքան համարձակություն չունես: Գիտեմ, որ դու քո այդ բարեպաշտությամբ ու ներողամտությամբ ցանկանում ես ինձ մշտապես պատժել ու ստորացնել: Դու ցանկանում ես, որ ես էլ քեզ նման մեկը դառնամ, քեզ պես բարեպաշտ, քեզ պես քնքուշ, քեզ պես իմաստուն... Սակայն, իմացա՛ծ եղիր, որ հենց քեզ հակառակ՝ ես ավելի շուտ փողոցային ավազակ ու մարդասպան կդառնամ, դժոխքի բաժին կլինեմ, քան թե քեզ նման մեկը կդառնամ... Ես ատում եմ քեզ, դու իմ հայրը չես, թեկուզև հարյուր անգամ էլ մորս սիրեցյալը եղած լինես...

Հաջորդ առավոտյան, սակայն, նա անհետացել էր: Նրա հետ էլ՝ անհետացել էր նաև փոքրիկ, երկգույն ծառակեղևից հյուսկեն կողովը, որին լաստավար ծերունիներն ի պահ էին տվել իրենց պղնձե ու արծաթյա դրամները, որ իրենք որպես վարձատրություն էին ստացել գետանցի աշխատանքների դիմաց: Անհետացել էր նաև լաստանավը, Սիդհարթան նշմարեց այն հանդիպակաց ափի մոտ: Տղան փախուստի էր դիմել:

- Ես պետք է հետևեմ նրան,- ասաց Սիդհարթան, որը տղայի առաջ ունեցած երեկվա հանդիմանական ճառից հետո՝ դեռևս ցավից մղկտալով դողում էր:- Երեխան միայնակ չի կարող անտառում ճանապարհ գտնել: Նա կմոլորվի: Մենք պետք է նոր լաստանավ շինենք, Վասուդևա, որպեսզի կարողանանք գետն անցնել:

- Մենք պետք է փոքրիկ մի լաստ շինենք,- ասաց Վասուդևան,- հասնելու համար մեր լաստանավին, որ երեխան է փախցրել: Բայց դու նրան պետք է թողնես փախչի, մի՛ հետա-

պնդիր նրան, բարեկամս, նա այլևս երեխա չէ, նա կարող է իր գլուխը պահել: Նա քաղաքի ճանապարհն է փնտրում, և նա իրավացի է, մի՛ մոռացիր դա: Նա անում է այն, ինչը դու պետք է անեիր: Նա ինքն է հոգ տանում իր մասին, նա ընթանում է իր ճանապարհով: Ա՜խ Սիդհարթա, ես տեսնում եմ քո տառապանքը, բայց դու տառապում ես ցավերից, որոնց համար ծիծաղել կարելի է միայն, ինչն էլ շատ շուտով անելու ես:

Սիդհարթան չպատասխանեց: Նա անմիջապես ձեռքն առավ տապարը և սկսեց բամբուկից լաստ սարքել, Վասուդևան օգնում էր նրան՝ ծառացողունները սիզախոտերով հյուսելու գործում: Ապա նրանք դիմացի ափն հասան, բայց քանի որ գետը ցած էր քշում լաստը, նրանք ստիպված էին գետափի երկայնքով հոսանքն ի վեր՝ հակառակ ուղղությամբ քարշ տալ լաստը:

- Ինչու՞ ես տապարը հետդ վերցրել,- հարցրեց Սիդհարթան:

Վասուդևան ասաց.- Կարող է պատահել, որ մեր լաստանավի թին կորած լինի:

Սիդհարթան, սակայն, հասկանում էր, թե ինչ կա իր բարեկամի մտքին: Նա մտածում էր, թե տղան թին մի կողմ նետած կամ կոտրած կլիներ՝ իրենցից վրեժ լուծելու համար և խանգարելու իրենց, եթե հետապնդում ձեռնարկեին: Իրոք, պարզվեց լաստանավում ոչ մի թի էլ չկար: Վասուդևան մատնացույց արեց լաստանավի հատակը և ժպիտը դեմքին նայեց բարեկամի կողմը, կարծես ցանկանար ասել. «Մի՞թե դու չես տեսնում, թե ի՞նչ է քո որդին քեզ ցանկանում ասել: Չե՞ս տեսնում, որ նա չի ուզում, որ հետապնդեն իրեն»: Բայց նա դա բառերով չասաց: Նա ձեռնամուխ եղավ մի նոր թի պատրաստելու գործին: Սիդհարթան, սակայն, հրաժեշտ տվեց նրան ու ճամփա ընկավ փախստականին որոնելու: Վասուդևան առարկության նշաններ չարեց:

Երբ Սիդհարթան արդեն երկար ժամանակ թափառում էր անտառում, նրան մի միտք այցելեց, որ իր որոնումն անիմաստ ու անօգուտ է: Նա մտածեց՝ կամ տղան վաղուց արդեն անտառից դուրս էր եկել ու քաղաք հասել, կամ էլ, եթե նա դեռևս ճանապարհին էր, ապա թաքնվելու էր իրենից, իրեն հետապնդողից: Այսպես մտածելով՝ նա հասկացավ նաև, որ ինքը բնավ հոգ չէր տանում իր որդու մասին, նա իր սրտի խորքում գիտեր, որ որդուն ոչ մի դժբախտություն էլ չէր պատահել և անտառում ոչինչ նրան չէր սպառնում: Բայցևայնպես նա քայլում ու քայլում էր առանց հանգիստ առնելու, սակայն այլևս ոչ թե որդուն փրկելու համար, այլև նրան մի կրկին անգամ տեսնելու ցանկությունից դրդված: Այդպես քայլելով՝ նա հասավ քաղաքի մատույցներին:

Երբ քաղաքի մերձակայքում նա ընդարձակ ճանապարհ ոտք դրեց, հանկարծ կանգ առավ, նա կանգնած էր գեղեցիկ պարտե-

զի մուտքի առաջ, այն պարտեզի, որ նախկինում Քամալային էր պատկանում, և որտեղ ինքը առաջին անգամ տեսավ նրան պատգարակի վրա: Այն ժամանակվա ապրումները վերակենդանացան նրա հոգում, նա նորից իրեն տեսնում էր այնտեղ կանգնած, երիտասարդ ու առույգ, որպես մորուքավոր ու կիսամերկ մի սամանա, փոշոտ մազերով: Երկար կանգնել էր Սիդհարթան ու բաց դարպասների միջով պարտեզի խորքն էր նայում, նա տեսավ դեղին սքեմ հագած վանականներ, որ քայլում էին գեղեցիկ ծառերի ներքո:

Երկար կանգնած մնաց նա՝ մտքերին տրված, աչքերի առաջ տեսնելով իր կյանքի պատկերները, ունկն դնելով անցյալի պատմություններին: Երկար կանգնել էր նա, նայում էր վանականներին, բայց նրանց փոխարեն տեսնում էր պատանի Սիդհարթային, տեսնում էր երիտասարդ Քամալային՝ բարձրաբերձ ծառերի ներքո ճեմելիս: Նա կատարյալ պարզությամբ տեսավ իրեն, տեսավ, թե ինչպես էր ինքը Քամալայի հյուրասիրությանն ու պատիվներին արժանանում, ինչպես Քամալայի առաջին համբույրն ըմբոշխնեց, թե ինչպիսի՜ հպարտությամբ ու արհամարհանքով էր ինքը նայում իր բրահմանական անցյալին, ինչպիսի՜ հպարտությամբ ու տենչանքով էր ձգտում աշխարհիկ կյանքին տրվելու հաճույքին: Նա տեսավ Կամասվամիին, տեսավ սպասավորներին, խնջույքները, զառախաղացներին, երաժիշտներին, տեսավ Քամալայի երգեցիկ թռչունին՝ վանդակի մեջ, վերստին վերապրեց այդ ամենը, չնչեց սաննարայի օդը, կրկին զառամյալ տեսք ընդունեց ու հոգնածություն իջավ վրան, նորից նողկանքով լցվեց, վերստին զգաց այն ժամանակ իրեն համակած սեփական կյանքին վերջ տալու ցանկությունը, նորից վայելեց սրբազան Օմի փրկարար ազդեցությունը:

Տևական ժամանակ պարտեզի դարպասների առաջ կանգնելուց հետո՝ Սիդհարթան հասկացավ, թե ինչ անհեթեթ ու խելագար ցանկություն էր իրեն այստեղ առաջնորդել, որ ինքը չէր կարողանալու օգնել իր որդուն և պետք է հանգիստ թողնի նրան: Նա խորությամբ զգաց փախստականի նկատմամբ իր սրտում բուն դրած սիրո զորությունը, որպես թե կենդանի վերք, միաժամանակ հասկանալով, որ այդ վերքն իրեն տրված չէ այն քչփորելու համար, որ պետք է թույլ տալ նրան ծաղկելու, այնպես որ նրանից վերստին լույս ճառագի:

Քանի որ այդ պահին նրա վերքը դեռ չէր ծաղկել, ուստի լույսը դեռ չէր ճառագում, նա թույլ էր ու տխրամած: Այն ցանկություն-նպատակը, որն իրեն այստեղ էր բերել՝ իր ճողոպրած որդու որոնումներում, հիմա փոխակերպվել էր կատարյալ դատարկության: Նա տխուր նստեց գետնին, զգաց, որ ինչ-որ բան մեռնում էր իր սրտում, զգաց կատարյալ դատարկությունը, և այլևս

ոչ մի ուրախություն չէր տեսնում իր առաջ, ոչ մի նպատակ: Նա նստել էր խորասուզված ու սպասում էր: Այդ բանը նա սովորել էր գետից, միակ այդ բանը. սպասել, համբերել, ունկնդրել: Նա նստել և լսում էր, փողոցի փոշիների մեջ, լսում էր իր սրտի միջով, որ տրոփում էր այնպես հոգնած ու տխուր, սպասելով ինչ-որ ձայնի: Այսպես ժամեր շարունակ նա նստել ու լսում էր, այլևս պատկերներ չէր տեսնում, խարասուզվեց դատարկության մեջ, ամբողջությամբ տրվեց այդ ինքնախորասուզմանը, ճանապարհն էլ անհետացավ նրա հայացքի առաջ: Եվ երբ զգաց, որ վերքը սկսել էր ավելի ուժեղ վառվել, նա բարձրաձայն արտաբերեց Օմը, լցվեց Օմով: Այգում ճեմող վանականները տեսան նրան, և քանի որ նա երկար ժամեր կքանստած էր ու նրա ճերմակած մազերին փոշի էր դրել, մեկը մոտեցավ ու երկու բանան դրեց նրա ոտքերի առաջ: Ծերունին չնկատեց նրան:

Այդ քարացած վիճակից նրան արթնացրեց մի ձեռք, որ իր ուսն էր շոշափում: Նա անմիջապես էլ ճանաչեց այդ ձեռքի հպումը, այնքան նուրբ ու ամոթխած, և սթափվեց: Նա վեր կացավ ու ողջունեց Վասուդևային, որն հետևել էր իրեն: Եվ երբ նայում էր Վասուդեվայի բարեկամական դեմքին, նրա այն մանրիկ, ասես բարձրաձայն ծիծաղից գոյացած խորշոմներին, նայում էր նրա կայտառ աչքերի մեջ, հանկարծ ինքն էլ ժպտաց: Նա հիմա նկատեց իր առջև ընկած բանանները, վերցրեց դրանք, մեկը տվեց լաստավարին, մյուսն ինքը կերավ: Այնուհետև Վասուդևայի հետ նա վերադարձավ անտառ, լաստանավի մոտ: Նրանցից ոչ ոք չէր խոսում այդ օրը տեղի ունեցածի մասին, ոչ ոք երեխայի անունը չէր տալիս, ոչ ոք չհիշեց նրա փախուստը, ոչ ոք չէր խոսում վերքի մասին: Խրճիթ հասնելուն պես՝ Սիդհարթան պառկեց իր անկողնուն, և երբ, միառժամանակ անց, Վասուդևան նրա մոտ մտավ՝ մի թաս կոկոսի կաթ առաջարկելու նպատակով, Սիդհարթան արդեն անձնատուր էր եղել քնին:

ՕՄ

Դեռ երկար վառվում էր նրա վերքը: Շատ ճամփորդների էր նա գետի մյուս ափը տեղափոխում, որոնք, պատահում էր, որ իրենց հետ որդի կամ դուստր էին ունենում, և նրանցից ոչ մեկին նա առանց նախանձի չէր նայում, այդժամ նա մտածում էր. «Այսքան շատ մարդիկ, հազարավորները տեր են այդ ամենաքաղցր երջանկության, բայց ինչու՞ ես դա չունեմ: Նաև չար մարդիկ, գողերն ու ավազակները նույնպես զավակներ ունեն, և սիրում են նրանց ու նրանց կողմից սիրվում, միայն ես եմ զուրկ դրանից»: Այսպես պարզ ու վճիտ, այսպես առանց դատողականության շաղախի մտածում էր նա այժմ, նա, որ հիմա այնքան

չատ էր նմանվել երեխա-մարդկանց:

Նա հիմա մարդկանց առաջվանից տարբեր հայացքով էր նայում, նվազ խելամտությամբ, նվազ հպարտությամբ, փոխարենը՝ ավելի ջերմությամբ, ավելի մեծ հետաքրքրությամբ ու կարեկցանքով: Հիմա, երբ նա սովորական ուղևորների էր տեղափոխում՝ երեխա-մարդկանց, առևտրականների, զինվորականների, կանանց խմբերի, այժմ արդեն այդ մարդիկ իրեն այնպես խորթ ու օտար չէին ներկայանում, ինչպես առաջ. նա հասկանում էր նրանց, հասկանում ու կիսում էր նրանց թող որ մտքերի ու մտահանգումների փոխարեն զուտ բնազդային հակումներով ու ցանկություններով առաջնորդվող կյանքը, նրանց պես էր զգում՝ առանց իրեն նրանցից զանազանելու: Չնայած նա արդեն մոտ էր կատարելության սահմանին, և իր վերջին անձնական վերքի պատճառած վիշտն էր վերապրում, սակայն թվում էր, որ այդ երեխա-մարդիկ իր եղբայրներն էին, նրանց սնամեջ ու մանր-մունր ցանկությունները, ծիծաղելի ըղձանքներն ու փափագները այլևս նրա համար դադարել էին այդպիսին լինելուց, կորցրել էին իրենց ծիծաղելիությունը, դարձել իրեն ավելի հասկանալի ու սիրելի, անգամ հարգանքի արժանի: Իր մանկան հանդեպ մայրական կույր սերը, միակ որդու ու նրա թվացյալ արժանիքների հանդեպ հայրական հիմար ու կույր հպարտությունը, երիտասարդ, սնափառ կնոջ կուրամիտ ու վայրի մոլուցքը առ զարդեղենն ու պճնանքի առարկաները, տղամարդկանց հիացական հայացքների հանդեպ նրա տենչանքը, ահա այս ամենը, այս բնազդային հակումներն ու մանկամտությունները, բոլոր այդ պարզամիտ ու անհեթեթ, սակայն զարմանալիորեն զորեղ, չափազանց կենսունակ ու բավարարում պահանջող անհագուրդ բնազդներն ու կրքերը Սիդհարթայի համար այլևս մանկամտություններ չէին, նա տեսնում էր, որ մարդիկ ապրում են դրանց բավարարում տալու համար, հանուն նրանց անսահման ճիգ ու ջանք են թափում, ուղևորություններ ձեռնարկում, պատերազմներ մղում, անսահման տառապանքներ ու զրկանքներ կրում, և ինքը հիմա կարողանում էր սիրել նրանց այդ ամենի համար: Նա տեսնում էր կյանքը, կենդանի ու անկործանելի կյանքը, բրահմա էր տեսնում մարդկային յուրաքանչյուր կրքի, յուրաքանչյուր արարքի մեջ: Սիրո ու հիացմունքի արժանի էին այդ մարդիկ իրենց կույր հավատարմության ցույցերում, իրենց կույր ուժի ու համառության դրսևորումներում: Ոչինչ չէր պակասում նրանց, նրանց հանդեպ ոչ մի առավելություն չունեին գիտունն ու մտածողը, բացի մեն-միակ, պստլիկ ու աննշան մի բանից. գիտակցությունից՝ ողջ գոյություն ունեցողի միասնության գիտակցված մտքից: Մի պահ անց, սակայն, Սիդհարթան սկսեց տարակուսել, թե արդյո՞ք այդ գիտելիքը, այդ միտք կոչվածը ավե-

լի բարձր արժեք է իրենից ներկայացնում, գուցե այդ գիտելիք կոչվածն էլ զուտ մտածող-մարդկանց մանկամտության արդյունքն է, մտածող-երեխաների մանկական խաղերից մեկը: Մնացած ամեն ինչում աշխարհի մարդիկ հավասար էին իմաստուններին, հաճախ էլ՝ ավելի բարձր, ինչպես որ գազաններն են իրենց կարիքներին հետամուտ համառ ու անկասելի ձգտման մեջ երբեմն-երբեմն մարդկանց շատ ավելի գերազանցող թվում:

Սիդհարթայի մեջ աստիճանաբար ծաղկում ու կամաց-կամաց հասունանում էր այն գիտակցությունը, թե ի՞նչ էր արդյոք գիտելիքը, ի՞նչ էր իմաստությունը, որն իր երկար տարիների որոնումների նպատակն էր եղել: Դա այլ բան չէր, քան հոգու պատրաստականություն, ընդունակություն, գաղտնի մի արվեստ՝ ամեն պահ կյանքի կենտրոնում գտնվելով՝ միասնության գաղափարն առմտածելու, զգալու ու ներշնչելու միասնությունը: Այդ գիտակցությունը կամաց-կամաց ծաղկում, ճառագում էր իր մեջ՝ Վասուդևայի ծերունազարդ մանկական դեմքից արտահեղվելով. ներդաշնակությունը, աշխարհի հավերժական կատարելության գիտակցությունը, ժպիտը, միասնությունը:

Վերքը, սակայն, դեռ վառվում էր, կարոտով ու մեծագույն ցավով մտածում էր Սիդհարթան իր որդու մասին, իր սրտում փայփայելով իրեն պաշարած սերն ու փաղաքշանքը, ապա թողեց, որ ցավը ինքն իրեն խժռի, կատարեց սիրո բոլոր խենթությունները: Թվում էր այդ կրակը երբեք չէր հանգչելու:

Օրերից մի օր էլ, երբ վերքը սաստիկ այրում էր, Սիդհարթան գետի մյուս ափն անցավ, ցած իջավ այնտեղ ու կարոտից բոցավառվելով՝ քայլեց քաղաքի ուղղությամբ, որդուն գտնելու նպատակով: Գետը հոսում էր մեղմորեն ու հանդարտ, և չնայած եղանակը չորային էր, սակայն նրա ձայնը տարօրինակ հնչերանգ ուներ. նա ծիծաղում էր... Գետը՝ զիլ ու պարզկա, ծիծաղում էր ծերունազարդ լաստավարի վրա: Սիդհարթան կանգ առավ, խոնարհվեց գետի վրա, որպեսզի ավելի լավ լսի, և խաղաղ հոսող ջրի հայելու մեջ նա տեսավ իր դեմքի արտացոլանքը, և իր դեմքի այդ արտացոլանքի մեջ կար մի բան, որն իրեն մոռացված մեկ ուրիշ բանի մասին հիշեցրեց, նա մի պահ միայն մտածեց ու վերհիշեց. այդ դեմքը նման էր մեկին, որին նա ժամանակին ճանաչել էր ու սիրել և միաժամանակ վախեցել նրանից: Այն նման էր իր հոր՝ բրահմանի դեմքին: Ու նա հիշեց, թե ինչպես, տարիներ առաջ, տակավին երեխա հասակում, ինքը հարկադրեց հորը, որ իրեն թույլ տա ճգնավորներին ընկերակցելու, հիշեց, թե ինչպես ինքը հրաժեշտ տվեց նրան, ինչպես հեռացավ ու այլևս երբեք չվերադարձավ: Արդյոք իր հայրն էլ իր պատճառով նույն տառապանքները չէ՞ր կրել, ինչ հիմա ինքն է կրում իր որդու պատճառով: Արդյոք իր հայրը վաղուց արդեն չէ՞ր մահացել, մենա-

կության մեջ, առանց վերստին իր որդուն տեսնելու: Այդյո՞ք սա կատակերգություն չէ, տարօրինակ ու անհեթեթ մի բան, այս կրկնությունը, այս պտույտը արատավոր շրջանի ներսում:

Գետը ծիծաղում էր: Այո՛, այդպես էր, ամենը, ինչը մինչև վերջ չես տառապել ու չես ապաշխարել, վերստին կրկնվում է, միևնույն տառապանքներն անընդմեջ կրկնվում են: Սիդհարթան, սակայն, նորից լաստանավ բարձրացավ ու ետ թիավարեց դեպի խրճիթը, մտաբերելով իր հորը, հիշելով որդուն, գետի հեգնանքին արժանացած, ինքն իր հետ կռիվ տալով, հուսախաբության գիրկն ընկած, պատրաստ՝ ինքն իր և ողջ աշխարհի վրա բարձրաձայն ծիծաղելու: Ավա՛ղ, նրա վերքը դեռ չէր ծաղկել, սիրտն անհաշտ էր ճակատագրի հետ, դեռ չէր ճառագում բերկրանքն ու հաղթանակը՝ սեփական տառապանքից ծնված: Բայց հույսը բնավորվել էր նրա մեջ, ու երբ նա խրճիթ վերադարձավ, իր մեջ անհաղթահարելի մի տենչանք զգաց՝ բացելու իր սիրտը Վասուդևայի առաջ, նրան ամեն ինչ ցույց տալու, ամեն ինչ ասելու նրան, նրա՛ն, ունկնդրումի մեծագույն վարպետին:

Վասուդևան նստած էր խրճիթում ու կողով էր հյուսում: Նա այլևս լաստանավ չէր վարում, նրա տեսողությունը սկսել էր թուլանալ, ոչ միայն տեսողությունը, այլև բազուկներն ու ձեռքերը: Անփոփոխ ու ծաղկուն էր միայն նրա դեմքին փայլող ուրախությունն ու կայտառ բարյացկամությունը:

Սիդհարթան նստեց ծերունու կիպ կողքին և դանդաղ սկսեց խոսել: Հիմա նա պատմում էր բոլոր այն բաների մասին, որոնց շուրջ առաջներում իրենք բնավ չէին խոսել, իր քաղաք գնալու մասին, որ օրեր առաջ էր տեղի ունեցել, այրող վերքի մասին, երջանիկ հայրերի հանդիպելիս իր մեջ գլուխ բարձրացնող նախանձի, և այն մասին, որ ինքն էլ գիտակցում է իր այդ ցանկությունների անմտությունը, նրանց դեմ իր մղած պայքարի անիմաստությունն ու ապարդյունությունը: Ամեն ինչ պատմեց, ամեն ինչի մասին հիմա նա ի զորու էր ազատ խոսել, նույնիսկ ամենացավոտ հարցերի մասին, ամեն-ամեն ինչ ասաց, ի ցույց դրեց ամենայն ինչ, շարունակ պատմում էր ու պատմում: Բարեկամի առաջ նա ի ցույց դրեց իր վերքը, պատմեց նաև այդ օրվա իր փախուստի տրամադրությունների մասին, ինչպես ինքը գետն անց կացավ, մանկական մի ձեռնարկում, ինչպես որոշում կայացրեց քաղաք գնալ, ինչպես գետը ծիծաղեց իր վրա:

Երբ ինքը խոսում էր, երկար-բարակ պատմություններ պատմում, ու Վասուդևան էլ՝ խաղաղ հայացքով լսում էր նրան, Սիդհարթան զգաց, ավելի ուժեղ, քան երբևէ, թե որպիսի հզոր ազդեցություն է իր վրա գործում Վասուդևայի լսելու այդ ընդունակությունը, ինչպես էին իր ցավերը, իր անհանգստություններն ու տագնապները հոսում դեպի նա և իր ծածուկ

հուլսը լցվում էր ունկնդրողի մեջ ու այնտեղից ետ դեպի իրեն վերադառնում: Այդպիսի մի ունկնդրի առաջ սեփական վերքն ի ցույց դնելը նույնն էր, թե լվանայիր այն գետի ջրերում, մինչ վերքը կսառչեր ու գետի հետ մեկ ամբողջություն կազմեր:

Մինչ ինքը շարունակում էր խոսել ու խոսել, պատմում էր ու խոստովանություններ անում, Սիդհարթան ավելի ու ավելի խորն էր զգում, որ իր առաջ նստածն այլևս Վասուդևան չէր, իր առաջ նստածը բնավ այն մարդը չէր, որ ունկնդրում էր իրեն, որ այդ անշարժացած ունկնդիրը այնպես էր իր խոստովանությունը կլանում, ինչպես ծառն է ներծծում երկնքից թափվող անձրևավաջուրը, հասկացավ, որ իր դիմացը նստածը հենց գետի աստվածն է, ինքը հավերժությունը: Եվ մինչ Սիդհարթան դադարել էր խորհրդածել իր ու իր վերքի մասին, Վասուդևայի փոխակերպության այդ գաղափարն ամբողջովին համակեց իրեն, և որքան ինքն ավելի ու ավելի էր այդ բանն զգում ու խորանում նրա մեջ, այնքան դա նվազ զարմանալի ու տարօրինակ էր թվում, այնքան ինքն ավելի հստակ էր տեսնում, որ ամեն ինչ կարգին է ու շատ բնական, որ Վասուդևան արդեն վաղուց, մշտապես այդպիսին է եղել, և միայն ինքն է, որ դա չէր նկատել ու հասկացել, ավելին, որ ինքը՝ Սիդհարթան ևս առանձնապես չի տարբերվում իր բարեկամից: Նա հասկացավ, որ ինքը հիմա ծեր Վասուդևային այնպես է նայում ու տեսնում, ինչպես ժողովուրդն է նայում աստվածներին և որ դա այլևս չի կարող երկար տևել, շարունակվել: Իր սրտում նա սկսել էր հրաժեշտ տալ Վասուդևային: Միաժամանակ նա շարունակ խոսում էր ու խոսում:

Երբ նա ավարտեց իր խոսքը, ամեն ինչ խոստովանեց-վերջացրեց, Վասուդևան նրան ուղղեց իր բարեկամական, դուլզն-ինչ թուլացած հայացքը, չխոսեց, լռելյայն նրա կողմը ճառագեց իր միջի սերն ու կայտառությունը, հասկացողությունն ու իմացությունը: Նա բռնեց Սիդհարթայի ձեռքը, տարավ նրան գետափի իրենց նստատեղին, նստեց նրա կողքին ու լայն ժպտաց գետին:

- Դու լսեցիր նրա ծիծաղը,- ասաց նա,- բայց դու ամեն ինչ չէ որ լսեցիր: Ե՛կ միասին լսենք, դու դեռ ավելին կլսես...

Ու նրանք սկսեցին լսել: Մեղմածոր հնչում էր գետի հազարաձայն երգեցողությունը: Սիդհարթան նայում էր ջրի մեջ և հոսանուտ ջրերում նրա աչքերի առաջ պատկերներ էին երևում. ահա՛ երևաց իր հայրը, միայնակ, որդու համար ողբացող, հայտնվեց նաև ինքը, դարձյալ միայնակ, նույնպես կարոտի շղթաներով կապված հեռուներում գտնվող իր որդուն, հայտնվեց իր որդին, նա էլ էր միայնակ, այդ երեխան՝ հախուռն անձկությամբ իր պատանեկան տենչանքների այրվող ուղիներով արշավելիս, յուրաքանչյուրն իր նպատակի հետևից գնացող, համակված այդ նպատակով, և ամենքն էլ՝ տառապյալ: Գետը երգում էր տառա-

պագին ձայնով, կրքոտ կարոտով երգում էր նա, կարոտագին տենդով հոսում էր նա դեպի իր նպատակը, ողբ ու տրտունջ էր արձակվում նրա ձայնից:

- Լսու՞մ ես,- հարցրեց Վասուդևայի համր հայացքը: Սիդհարթան գլխով արեց:

- Ավելի լավ լսիր,- շշնջաց Վասուդևան:

Սիդհարթան ջանքերը կենտրոնացրեց ավելի լավ լսելու համար: Հոր պատկերը, իր սեփական պատկերը, որդու պատկերը հոսեցին իրար մեջ, միահյուսվեցին իրար, հայտնվեց նաև Քամալայի պատկերը, Գովինդայի պատկերը, և ուրիշ-ուրիշ պատկերներ, հետո բոլորն իրարից բաժանվեցին ու տարրալուծվեցին գետի ջրերում, բոլորը, գետի մեջ ընկղմված ու գետ դարձած ձգտում էին նպատակին՝ կարոտով բռնված, տենչալով ու տառապելով, և գետի ձայնը հնչում էր լի կարոտով, լեցուն կրակվող ցավով ու անհագուրդ տենչանքով: Գետը ձգտում էր իր նպատակին, Սիդհարթան տեսնում էր նրա շտապողականությունը, գետը, որ բաղկացած էր իրենից, իր յուրայիններից և բոլոր այն մարդկանցից, ում նա երբևիցե հանդիպել կամ տեսել էր, բոլոր կոհակներն ու ջրերը աճապարանքով ձգտում էին իրենց նպատակին, տառապելով, իրենց բազմաթիվ նպատակներին, ջրվեժին, լճին, մեծ գետին, ծովին, և բոլորը հասնում էին իրենց նպատակներին, և ամեն անգամ նոր նպատակներ էին ծնունդ առնում, ջուրը գոլորշի էր դառնում ու բարձրանում դեպի երկինք, դառնում էր անձրև ու երկնքից ներքև թափվում, դառնում էր աղբյուր, դառնում առվակ, դառնում էր գետ, նորից սկսում էր ձգտել իր նորահայտ նպատակին, հոսում դեպի այնտեղ: Սակայն կարոտաբաղձ ձայնը փոխվել էր: Այն դեռ հնչում էր տառապագին տենչանքով, որոնումների մեջ, սակայն ուրիշ ձայներ էին միացել նրան, ուրախության ու տառապանքի ձայներ, բարի ու չար ձայներ, ծիծաղկոտ ու ողբալի, հարյուրավոր ձայներ, հազարավոր ձայներ:

Սիդհարթան լսում էր ու լսում: Նա հիմա համակ լսողություն էր դարձել, ամբողջովին խորասուզվել էր ունկնդրումի մեջ, լիովին դատարկված, լիուլի ներծծված, նա զգում էր, որ ինքն այժմ մինչև վերջ սովորել է լսելու արվեստը: Արդեն հաճախ էր նա այդ ամենը լսել, գետից բարձրացող այդ անթիվ-անհամար ձայները, որ այսօր բոլորովին այլ կերպ էին հնչում: Նա արդեն չէր կարողանում այդ բազմաձայնությունը իրարից զանազանել, ո՛չ ուրախը ողբացողից, ո՛չ մանկականը տղամարդկայինից, նրանք բոլոր հիմա իրար էին միաձուլվել, դարձել մեկ ամբողջ, կարոտյալների ողբն ու գիտունների ծիծաղը, կատաղության ճիչն ու մահացողների տնքոցը, ամենը մեկ էր դարձել, ամենայն ինչ իրար մեջ էր ագուցված, իրարու բաղհյուսված, հազարավոր

թելերով հյուսկեն: Եվ բոլորը միասին, բոլոր ձայները, բոլոր նպատակները, բոլոր կարոտները, բոլոր տառապանքները, բոլոր հաճույքները, ողջ բարին ու չարը, այդ ամենը միասին կազմում էին աշխարհը: Բոլորը՝ միասին վերցրած կազմում էր իրադարձությունների գետը, հոսանքը, կյանքի երաժշտությունը: Եվ երբ Սիդհարթան ուշիուշով ունկնդրում էր գետին, այդ հազարաձայն երգեցողությունը, չանսալով տառապանքին, չլսելով ծիծաղը, երբ նա իր հոգին չէր կապում մի որոշակի ձայնի հետ և իր եսով նրա մեջ թափանցում, այլ միայն լսում էր բոլորը, այդ ամբողջությունը, իր մեջ ընդունում միասնությունը, այդժամ հազարավոր ձայներից բաղհյուսված այդ մեծագույն երգեցողությունը բաղկացած էր լինում մեն-միակ բառից, որ կոչվում էր Օմ. ասել է թե՝ կատարելություն:

- Դու լսու՞մ ես,- հարցրեց Վասուդևայի հայացքը:

Պայծառ փայլում էր Վասուդևայի ժպիտը, այն շողշողալու պես ճառագում էր իր ծերացած դեմքի բոլոր խորշոմներում, ինչպես որ Օմն էր ճառագում գետի բոլոր ձայների մեջ: Պայծառ շողարձակում էր նրա ժպիտը բարեկամին նայելիս, այժմ պայծառ լուսափայլում էր նաև Սիդհարթայի դեմքը՝ նույն այդ ժպիտով: Նրա վերքը ծաղկում էր ապրում, նրա տառապանքը ճառագում էր, նրա եսը միասնության մեջ էր ներհոսել:

Այդ պահին Սիդհարթան դադարեց կռիվ տալ ճակատագրի հետ, դադարեց տառապելուց: Նրա հայացքում ծաղկում էր իմացության երանությունը, որին կամքն այլևս չէր հակառակվում, չէր դիմակայում, որը ճանաչել էր կատարելությունը, հաշտվել էր իրադարձությունների հոսանուտ գետի հետ, լեցուն կարեկցանքով, ուրիշների ուրախությամբ ուրախանալով, հանձնված համընդհանուր հոսանքին, միասնությանը մաս կազմելով:

Երբ Վասուդևան վեր կացավ գետափի նստատեղից, նայեց Սիդհարթայի աչքերի մեջ և տեսավ նրանցում ճառագող իմացության երանությունը, ձեռքով կամացուկ շփեց նրա ուսը՝ իրեն հատուկ նուրբ ու զգուշավոր սովորությամբ ու ասաց.

- Ես այդ վայրկյանին էի սպասում, սիրելիս: Հիմա այն վերջապես վրա հասավ, թույլ տուր ես գնամ: Ես երկար եմ այդ պահին սպասել, արդեն տևական ժամանակ է ինչ ես լաստավար Վասուդևան եմ: Հիմա արդեն բավական է: Ո՛ղջ լեր, Խրճիթ, ո՛ղջ լեր, գետ, ո՛ղջ լեր, Սիդհարթա:

Սիդհարթան խորը կռացավ հրաժեշտ տալու համար:

- Ես դա գիտեի,- կամացուկ շշնջաց նա:- Դու պատրաստվում ես անտառ գնալ, այնպես չէ՞:

- Ես գնում եմ անտառ, ես գնում եմ դեպի միասնությունը,- լուսաճառագելով ասաց Վասուդևան:

Իրենից լույս արձակելով նա հեռացավ: Սիդհարթան նայում

էր նրա հետևից: Խոր ուրախությամբ, խորագույն լրջությամբ նա նայում էր հեռացողի հետևից, նայում էր նրա խաղաղությամբ լեցուն քայլերին, տեսնում էր նրա լուսաշող գլուխը, տեսնում լույսերով ողողված նրա կերպարանքը:

ԳՈՎԻՆԴԱ

Այլ վանականների հետ միասին մի անգամ Գովինդան իր հանգիստն էր անցկացնում այն այգեստանում, որ դշխո Քամալան նվիրել էր Գոթամայի աշակերտներին: Այստեղ նա քանիցս առիթներ էր ունեցել խոսակցություններ լսելու մի լաստավարի մասին, որն ապրում էր գետափին՝ մի օրաչափ հեռավորության վրա, որին շատերը իմաստուն մարդ էին համարում: Երբ Գովինդան նորից ճանապարհ ընկավ, նա ուղևորվեց դեպի լաստանավը, ցանկանալով տեսնել այդ լաստավարին: Թեև նա իր ողջ կյանքն ապրել էր կանոնադրությանը խստիվ համապատասխան և մեծագույն հարգանք էր վայելում ավելի երիտասարդ վանականների շրջանում՝ շնորհիվ իր ծերունական հասակի ու անբասիր, համեստ վարքի, սակայն նրա սրտում տագնապներն ու որոնումները դեռևս չէին մարել:

Գետին հասնելուն պես՝ նա խնդրեց ծերունուն իրեն մյուս ափը տեղափոխել, ու երբ նրանք տեղ հասնելով՝ նավակից ցած իջան, նա ծերունուն ասաց.

- Շատ բարի ծառայություններ ես դու մատուցել մեզ՝ վանականներիս և ուխտագնացներին, մեզանից շատերին ես դու գետն անցկացրել: Արդյո՞ք դու ևս, լաստավար, ճշմարիտ ուղին որոնողներից մեկը չես:

Խոսեց Սիդհարթան՝ ծերացած աչքերում ժպիտը փայլեցնելով.

- Դու քեզ որոնող մեկն ես անվանում, ո՛վ պատվարժան, սակայն դու արդեն բավական առաջացած տարիքում ես և Գոթամայի վանականների հանդերձանքն ես կրում:

- Այո՛, ես ծեր եմ,- խոսեց Գովինդան,- և ես երբեք չեմ դադարել որոնելուց: Ու երբեք էլ ետ չեմ կանգնելու իմ որոնումներից, սա՛ է, պետք է կարծել, ինձ վիճակված: Դու էլ, ինձ այդպես է թվում, որոնումների մեջ ես եղել: Ինձ մի երկու բան չէ՞ր ասի, ո՛վ պատվարժան:

Սիդհարթան խոսեց և ասաց.- Ի՞նչ կարող եմ ես քեզ ասել, պատվելի: Գուցե այն, որ դու չափից շատ ես որոնում: Եվ որ մշտապես որոնումների մեջ լինելով՝ դու քո փնտրածը չես գտնում:

- Այդ ինչպե՞ս հասկանանք,- հարցրեց Գովինդան:

- Երբ մեկը մշտապես որոնումների մեջ է,- ասաց Սիդհարթան,- պատահում է, որ նրա աչքը միայն այն է տեսնում, ինչ

փնտրում է ինքը, նա ուրիշ ոչինչ չի նկատում, չի կարողանում ոչինչ ընկալել, որովհետև նա մշտապես իր որոնածի մասին է մտածում, քանզի նա իր առջև դրված նպատակ ունի, քանզի համակված է այդ նպատակով: Որոնել՝ նշանակում է նպատակ ունենալ: Իսկ գտնել ասածը նշանակում է լինել ազատ, բաց լինել ամեն ինչի համար, նպատակ չունենալ: Դու, պատվարժան, գուցե իսկապես այդ որոնողներից մեկն ես, քանի որ քո նպատակին ձգտելով, նրանով կլանված՝ շատ բան չես նկատում, այն, որ ուղղակի քո աչքերի առաջ է:

- Ես քեզ լավ չեմ հասկանում,- ասաց Գովինդան,- ի՞նչ ես դու ուզում ասել:

Սիդհարթան ասաց.- Մի անգամ, ո՜վ պատվարժան, շատ տարիներ առաջ դու արդեն եղել ես այս գետի մոտ և գետափին քնած մեկին գտնելով՝ դու նստեցիր նրա կողքին, նրա քունը հսկելու: Բայց դու, ո՜վ Գովինդա, դու չկարողացար ճանաչել քնածին:

Աքանչացած ու կարծես կախարդված՝ վանականը նայեց լաստավարի աչքերի մեջ:

- Մի՞թե դու Սիդհարթան ես,- հարցրեց նա անվստահ ձայնով:- Ես քեզ այս անգամ էլ չէի ճանաչի... Ընդունի՛ր սրտագին ողջույններս, Սիդհարթա, ես անկեղծորեն շատ ուրախ եմ քեզ վերստին տեսնելու համար... Դու շա՜տ ես փոխվել, բարեկամս: Ուրեմն դու հիմա լաստավա՞ր ես դարձել:

Սիդհարթան բարեկամաբար ժպտաց.- Այո՛, ես լաստավար եմ հիմա: Գովինդա, շատերին է վիճակված հաճախակի փոխել իրենց կերպարանքը, տարբեր տեսակի զգեստներ հագնել, դրանցից մեկն էլ ես եմ, բարեկամս: Բարի գալուստ, Գովինդա, այս գիշեր դու կարող ես մնալ իմ խրճիթում:

Գովինդան գիշերն անցկացրեց խրճիթում և քնեց այն անկողնում, որն առաջ Վասուդևային էր պատկանում: Նա շատ հարցեր ուղղեց իր պատանեկության բարեկամին, Սիդհարթան էլ շատ բաներ պատմեց իր կյանքից:

Հաջորդ առավոտյան, երբ արդեն ժամանակն էր վերստին ճանապարհ ընկնելու, Գովինդան, առանց տատանվելու, ասաց հետևյալ խոսքերը.

- Մինչ ես նորից ճանապարհ կընկնեմ, Սիդհարթա, թույլ տուր ինձ մի բան էլ հարցնեմ: Դու ինքդ ունե՞ս ինչ-որ ուսմունք, որ դավանում ես: Ունե՞ս որևէ հավատք կամ գիտություն, որին հետևում ես դու, որն օգնում է քեզ ապրել, ապրել ճշմարիտ կյանքով:

Սիդհարթան պատասխանեց և ասաց.

- Դու գիտես, սիրելիս, որ արդեն երիտասարդ տարիքում, այն ժամանակ, երբ մենք ապրում էինք ճգնակյացների մոտ՝ անտառում, արդեն այն ժամանակ ես չէի վստահում ուսուցիչներին ու

ուսմունքներին և թիկունք էի դարձրել նրանց: Մինչև օրս էլ ես նույն կարծիքին եմ մնացել: Այնուհանդերձ, այն ժամանակվանից ի վեր ես բազմաթիվ ուսուցիչներ եմ ունեցել: Մի գեղեցկուհի դշխո երկար ժամանակ եղավ իմ ուսուցչուհին, և մի մեծահարուստ վաճառական իմ ուսուցիչը եղավ ու մի քանի զառ խաղացողներ: Մեկ անգամ էլ Բուդդայի թափառաշրջիկ մի հետևորդ եղավ իմ ուսուցիչը. նա նստել էր կողքիս, երբ ես քուն էի մտել անտառում, ուխտագնացության կիսաճամփին: Ես նրանից էլ որոշ բաներ եմ սովորել, ես նրան էլ եմ երախտապարտ: Բայց ամենից շատ ես այս գետից եմ սովորել ու նաև՝ իմ նախորդից՝ լաստավար Վասուդևայից: Վասուդևան մի շատ սովորական ու հասարակ մարդ էր, նա մտածող չէր, սակայն նա գիտեր այն, ինչ անհրաժեշտ է գիտենալ, նույնքան հիմնավոր, ինչպես Գոթաման, նա էլ կատարյալ մեկն էր, մի իսկական սուրբ:

Գովինդան ասաց.- Ո՛վ Սիդհարթա, ինձ թվում է, որ դու առաջվա պես սիրում ես ամեն ինչում փոքր-ինչ հեգնել, կատակաբանել: Ես հավատում եմ քեզ և համոզված եմ, որ դու մեկից ավելի ուսուցիչներ ես ունեցել: Սակայն դու ինքդ արդյոք, եթե ոչ մի ամբողջական ուսմունք, ապա գոնե որոշակի ինքնուրույն գաղափարներ, որոշակի իմացություններ ինքդ քեզ համար չե՞ս գտել, որոնք քոնն են, քո սեփականը, և որոնք օգնում են քեզ ապրել: Եթե դու այդ մասին ինձ մի քիչ պատմես, դրանով դու կուրախացնես իմ սիրտը:

Խոսեց Սիդհարթան և ասաց.- Այո՛, ես իմ սեփական մտքերն ու գաղափարներն եմ ունեցել, այդպիսիք ժամանակ առ ժամանակ այցելել են ինձ: Երբեմն-երբեմն, նույնիսկ ժամեր շարունակ, անգամ ամբողջ օրեր ու գիշերներ ես իմ մեջ որոշակի գիտելիքների զգացողություն եմ ունեցել, այնպես, ինչպես դու քո սրտում կյանքը կզգայիր: Զանազան մտքեր ու գաղափարներ էին դրանք, սակայն ինձ համար շատ դժվար է դրանք ներկայացնել քո առաջ: Ահա՛, օրինակ, Գովինդա, իմ այն մտքերից մեկը, որ ե՛ս եմ հայտնաբերել. իմաստնությունը անհաղորդելի է: Իմաստունը, որ իմաստունը փորձում է հաղորդել մեկ ուրիշին, հնչում է որպես հիմարություն:

- Դու կատակու՞մ ես,- հարցրեց Գովինդան:

- Ես չեմ կատակում: Ես ասում եմ այն, ինչը փորձով եմ հայտնաբերել: Գիտելիքը կարելի է մեկ ուրիշին հաղորդել, իմաստնությունը, սակայն, ո՛չ: Այն կարելի է գտնել, կարելի է ապրել նրանով, կարելի է նրա կողմից առաջնորդվել, նրանով կարելի է հրաշքներ գործել, սակայն արտաբերել, հաղորդել այն կամ մեկ ուրիշին սովորեցնել՝ հնարավոր չէ: Դեռ պատանի հասակում այդ միտքը ժամանակ առ ժամանակ այցելում էր ինձ, որն էլ ինձ հեռացրեց ուսուցիչներից: Ես մեկ ուրիշ միտք էլ եմ

հղացել, Գովինդա, որը դու կրկին կատակի կամ հիմարության տեղ կընդունես, որը, սակայն, ես համարում եմ իմ լավագույն մտքերից մեկը: Այն հետևյալն է. յուրաքանչյուր ճշմարտության հակառակը նույնպես ճշմարիտ է... Բանն այն է, որ ճշմարտությունն արտաբերել, բառերով արտահայտել կարելի է միայն, երբ այն միակողմանի է: Միակողմանի է այն ամենը, ինչը մտածվում է մտքով և արտահայտվում է բառերով, միակողմանի ամբողջ է, կիսատ ամբողջություն, զուրկ՝ ամբողջականությունից, շրջանակայնությունից, միասնականությունից: Երբ վսեմագույն Գոթաման իր ուսմունքում ու քարոզներում խոսում էր աշխարհի մասին, նա այն պետք է բաժաներ սանսարայի ու նիրվանայի, մոլորության ՇԼ ճշմարտության, տառապանքի ու փրկության: Այլ կերպ հնարավոր էլ չէ, այլ ճանապարհ չկա նրա համար, ով ցանկանում է ուսուցանել ուրիշներին: Սակայն աշխարհն ինքը, մեր շուրջը և մեր մեջ եղող գոյը բնավ միակողմանի չէ: Երբեք չի լինում, որ մարդը կամ արարքը ամբողջապես կամ բացառապես սանսարա կամ նիրվանա լինի, մարդս երբեք չի լինում կատարելապես սուրբ կամ կատարելապես մեղսավոր: Մեզ միայն այդպես թվում է, այդպես է պատկերանում, քանի որ մենք ենթակա ենք այն մոլորությանը, թե ժամանակը մի ինչ-որ իսկապես գոյություն ունեցող բան է: Ժամանակը գոյություն չունի, Գովինդա, ես հաճախ, շատ հաճախ եմ դրա փորձառությունն ունեցել ու հասկացել դա: Իսկ եթե ժամանակն իրական չէ, իրապես գոյություն չունի, այդժամ նաև սահմանաբաժանը աշխարհի ու հավերժության միջև, տառապանքի ու երանության միջև, չարի ու բարու միջև անջրպետը նույնպես մոլորություն է ներկայանում:

- Այդ ինչպե՞ս,- երկյուղած հարցրեց Գովինդան:

- Ուշադիր լսի՛ր, սիրելիս, շա՜տ ուշադիր... Ինձ նման կամ քեզ նման մեղսավոր մեկը իսկապես էլ մեղսավոր կարող է լինել, սակայն նա երբևէ կարող է նորից բրահման դառնալ, նա կհասնի նիրվանայի, կդառնա Բուդդա... Եվ ահա՛, նկատի ունեցի՛ր, այդ «երբևէ»-ն մոլորություն է, պատկերավոր արտահայտություն... Մեղսավորը նա չէ, որ դեռևս գտնվում է Բուդդայի կատարելագործմանն հասնելու կես-ճանապարհին, նա չի ընկալվում որպես զարգացման մի ինչ-որ աստիճանին գտնվող մեկը, թեև մեր մտածողությունը ընդունակ չէ իրերն այլ կերպ պատկերացնելու: Ո՛չ, մեղսավոր մարդու մեջ առկա է, արդեն այսօր իսկ, այս պահին նստած է ապագա Բուդդան, նրա ապագան արդեն իսկ ամբողջի մեջ առկա է, տրված: Եվ դու պետք է նրա մեջ, քո՛ մեջ և բոլորի ու յուրաքանչյուրի մեջ տեսնես ու երկրպագես հնարավոր, ծպտված Բուդդային: Աշխարհը, Գովինդա, բարեկամս, մի ինչ-որ անկատար բան չէ, կամ մի գոյացություն, որ դանդաղորեն շարժվում է առաջ՝ կատարելության ճանապարհով: Բնավ

ո՛չ, յուրաքանչյուր պահի այն կատարյալ է, յուրաքանչյուր մեղք արդեն իսկ իր մեջ կրում է չնորհ ու ողորմածություն, յուրաքանչյուր փոքրիկ երեխայի մեջ արդեն իսկ ապրում է ալևորը, բոլոր նորածինները իրենց մեջ մահն են կրում, և բոլոր մահացողները՝ հավերժական կյանքը: Ոչ մի մարդ ի վիճակի չէ տեսնելու, թե որքան է մյուսը առաջադիմել իր ճանապարհին, ավազակի ու խաղամոլի մեջ թաքնված՝ սպասում է Բուդդան, բրահմանների մեջ սպասում է ավազակը: Խոր ներհայեցության մեջ հնարավորություն է ընձեռված վերառելու ժամանակը, վերանալ նրանից, տեսնել ողջ եղածը, առկան և ապագա կյանքը որպես միաժամանակյա տրվածություն, այդժամ ողջը ներկայանում է որպես լավագույն, կատարյալ, ողջը ներկայանում է որպես բրահմա: Այդ դեպքում ողջ գոյություն ունեցողը պատկերանում է ինձ որպես բարի ու կատարյալ, մահը, որպես և կյանքը, մեղքը, որպես սրբությունն ու իմաստնությունը, նույնպես և հիմարությունը, ողջը հենց այդպես էլ պետք է լինի, դրա համար անհրաժեշտ է լոկ իմ համաձայնությունը, իմ բարի կամքը, իմ սիրահոժար վերաբերմունքը, այդժամ ամեն ինչ ինձ համար բարի է, օգտակար է ինձ համար, չի կարող ինձ բնավ վնաս պատճառել: Ես իմ սեփական մարմնի ու սեփական հոգու փորձառությամբ եմ համոզվել, որ ես կարիքն եմ ունեցել մեղքի, ես կարիքն եմ ունեցել ցանկասեր վարքի, երկրային բարիքների ձըգտման, սնափառության, ինչպես որ կարիքն եմ ունեցել այն ամոթալի հուսահատության, որպեսզի ի վերջո ընտելանամ հրաժարվելու աշխարհին հակառակվելու մտքից, որպեսզի սովորեմ սիրել աշխարհը այնպես, ինչպիսին այն կա, չհամեմատելով այն մի ինչ-որ իմ կողմից ցանկալիի հետ, իմ երևակայությամբ ստեղծված աշխարհի, իմ ուղեղում հորինաստեղծված կատարելատիպի հետ, այլ այն թողնել այնպես, ինչպիսին կա, սիրել աշխարհն ու նրան պատկանել: Սրանք են, ո՛վ Գովինդա, իմ մտքերից այն մի քանիսը, որոնք իմ ուղեղում ծնունդ են առել:

Սիդհարթան կռացավ, գետնին ընկած մի քար բարձրացրեց ու ձեռքի մեջ ծանրութեթև արեց այն:

- Ահա՛,- ձեռքում քարը խաղացնելով ասաց նա,- սա քար է, և մի որոշակի ժամանակ անցնելուց հետո գուցե այն հող կդառնա, և հողից բույսի կվերածվի, կենդանու կամ մարդու: Նախկինում ես թերևս այսպես կասեի. Քարն այս ընդամենը քար է, այն արժեք չունի, այն պատկանում է Մայայի աշխարհին, սակայն, քանի որ փոխակերպությունների շրջապտույտում այն գուցե կարող է նաև մարդ կամ ոգի դառնալ, դրա համար էլ ես նրան արժեք եմ տալիս: Ես այսպես գուցե առաջներում էի մտածում: Իսկ այսօր ես մտածում եմ. այս քարը քար է, այն նաև կենդանի է, այն նաև աստված է, նաև Բուդդան է այն, ես նրան երկրպա-

գում և սիրում եմ ոչ թե այն բանի համար, որ նա երբևէ այս կամ մյուսը կարող է դառնալ, այլ որովհետև նա այդ ամենը վաղուց և մշտապես իր մեջ ունի, նա այդ ամենն է, թե՛ մեկը, թե՛ մյուսը, և հենց միայն այն, որ նա քար է, որ այն ինձ այս պահին և այսօր որպես քար է պատկերանում, հենց դրա համար եմ ես նրան սիրում, արժեք ու իմաստ եմ տեսնում նրա բոլոր երակներում ու խոռոչներում, դեղնության, կանաչության, կարծրության մեջ, հնչյունի մեջ, որ այն արձակում է իր միջից, երբ ես հարվածում եմ նրան՝ նրա մակերևույթի չորությանը կամ խոնավությանը: Քարեր կան, որոնց շոշափելիս՝ նրանք ասես յուղ լինեն կամ օճառ, մյուսները տերև կամ սաղարթ են հիշեցնում, որոշներն էլ՝ ավազ: Ցուրաքանչյուրը ինչ-որ առանձնահատուկ բան է իրենից ներկայացնում, յուրաքանչյուրը աղոթելու պես Օմն է արտաբերում՝ ամեն մեկն իր ձևով, յուրաքանչյուրը բրահմա է և միևնույն ժամանակ՝ նույնքան էլ քար, յուղոտ, սպունգանման կամ հյութեղ, և հենց դա է, որ ինձ դուր է գալիս, հրաշալի ու երկրպագության արժանի թվում ինձ: Բայց թույլ տուր ինձ այլևս չխոսել այդ մասին: Բառերը չեն նպաստում գաղտնի իմաստների ըմբռնմանը, խանգարում են դրան: Հենց որ մի միտք ես ուզում բարձրաձայն արտաբերել, այն արդեն փոքր-ինչ այլ իմաստ է ձեռք բերում, հնչում է ավելի կեղծ, ավելի անհեթեթ: Այո՛, սակայն դա նույնպես հրաշալի է և ինձ շատ է դուր գալիս, և ես ոչ մի առարկություն չունեմ նաև այն բանի հանդեպ, որ որևէ մարդու կողմից իր համար գանձ ու իմաստնություն համարվողը մյուսի ականջին որպես անմտություն է հնչում:

Լռելյայն Գովինդան լսում էր նրան:

- Ինչո՞ւ դու քարը ներկայացրիր ինձ որպես օրինակ,- հարցրեց նա մի փոքր մտածելուց հետո:

- Ես դա արեցի առանց որևէ դիտավորության: Կամ գուցե դրանով ես ցանկացա ասել, որ ես հավասարապես սիրում եմ և քարը, և գետը, և բոլոր այս բաները, որոնց մենք նայում ենք և որոնցից ինչ-որ բան ենք սովորում: Գովինդա, ես կարող եմ սիրել քարը, ինչպես որ կարող եմ ծառը սիրել կամ կեղևի մի կտորը: Դրանք իրեր են, իսկ իրերը կարելի է սիրել: Բառերը, սակայն, ես չեմ կարող սիրել: Դրա համար էլ ուսմունք կոչվածներն ինձ համար արժեք չունեն, նրանք չունեն ոչ կարծրություն, ոչ փափկություն, ոչ բռնելու տեղ, ոչ եզրեր, ոչ գույն ունեն, ոչ հոտ կամ բույր, նրանք ոչինչ են, բացի բառեր լինելուց: Գուցե հենց դա է, որ խանգարում է քեզ խաղաղություն գտնել, բառերի այդ լիությունը: Քանզի ապաշխարանքը և առաքինությունը, նաև սանսարան ու նիրվանան սոսկական բառեր են, Գովինդա: Չկա մի այնպիսի իր, որին կարելի լինի նիրվանա

կոչել: Նիրվանան կա սոսկ որպես բառ:

Գովինդան ասաց,- Նիրվանան միայն բառ չէ, բարեկամ: Այն միտք է:

Սիդհարթան շարունակեց,- Միտք է, թերևս, գուցե այդպես է: Բայց ես պետք է խոստովանեմ քեզ, սիրելիս. ես մեծ տարբերություն չեմ տեսնում մտքերի ու բառերի միջև: Անկեղծ ասած, ես մեծ նշանակություն չեմ տալիս մտքերին: Ինձ համար ավելի կարևոր է իրը, առարկան: Այստեղ, այս լաստանավի վրա, օրինակ, ինձանից առաջ մի մարդ կար, որ նաև իմ ուսուցիչն էր, սուրբ մի մարդ, որը տարիներ շարունակ հենց միայն գետին էր հավատում, ուրիշ ոչ մի բանի: Նա նկատել էր, որ գետը ձայն ունի և խոսում է իր հետ, այդ ձայնը ուսուցանում էր նրան, դաստիարակում ու առաջնորդում, գետը նրա համար Աստված էր, տարիներ շարունակ նա չգիտեր և չէր էլ մտածել, որ ամեն մի քամի, ամեն ամպ, ամեն թռչուն կամ բզեզ նույնքան աստվածային է, նրանք էլ նույնքան գիտեն ու կարող են ուսուցանել, ինչպես իր կողմից երկրպագության արժանացած գետը: Բայց երբ այդ սուրբը անտառ հեռացավ, նա արդեն ամեն ինչ գիտեր, գիտեր ավելին քան դու և ես, առանց ուսուցիչների, առանց գրքերի, միայն այն պատճառով, որ հավատում էր գետին:

Գովինդան ասաց.- Բայց այն, ինչը դու «իրեր» կամ «առարկաներ» ես անվանում, իսկապե՞ս գոյություն ունեն, արդյոք դրանք իրակա՞ն են: Արդյոք դրանք լոկ Մայայի խաբկանքը չե՞ն, միայն պատկեր ու տեսիլք: Մի՞թե քո այդ քարը, ծառը, քո այդ գետը իրականում գոյություն ունեն:

- Դա էլ,- խոսեց Սիդհարթան,- ինձ շատ քիչ է հետաքրքրում: Թող որ իրերը լոկ թվացողություն լինեն կամ տեսիլք, բայց այդ դեպքում ես ինքս էլ, իմ կեցությունն էլ թվացյալ է լոկ, և երկու դեպքում էլ նրանք մշտապես նման են ինձ ու հավասար: Այդ պատճառով նրանք ինձ համար սիրելի են ու երկրպագելի, քանի որ նույնական են ինձ ու համագոյակից: Դրա համար ես կարող եմ սիրել նրանց: Այստեղից էլ՝ իմ ուսմունքը, որի առթիվ դու գուցե կծիծաղես. սերը, ո՛վ Գովինդա, ամենակարևոր բանն է աշխարհում: Աշխարհը ճանաչել, բացատրել այն, քամահրել և ուրանալ այն, ես դա թողնում եմ մեծ մտածողներին, դա նրանց գործն է: Ինձ համար, սակայն, կարևոր է միայն մի բան՝ կարողանալ աշխարհը սիրել, չարհամարհել այն, չատել այդ աշխարհը և ինձ, նրան, ինչպես և ինձ ու բոլոր էակներին նայել սիրով, հիացումով ու հարգանքով:

- Ես դա հասկանում եմ,- ասաց Գովինդան:- Բայց հենց դա էլ Վեհագույնը մոլորություն էր համարում: Նա ընդունում է բարյացկամությունը, համբերատարությունը, կարեկցանքը, հանդուրժողականությունը, բայց ո՛չ երբեք սերը: Նա մեզ արգելել

է մեր սիրտը շղթայել սիրով առ երկրայինը:

- Գիտեմ,- ասաց Սիդհարթան և ժպիտը ճառագեց նրա դեմքին:- Ես դա գիտեմ, Գովինդա: Ահա, տե՛ս, մենք հիմա խրվեցինք կարծիքների մացառուտների մեջ, վիճում ենք ինչ-որ բառերի պատճառով: Ես անկեղծորեն ընդունում եմ, որ իմ խոսքերը սիրո մասին հակասության մեջ են, թվացյալ հակասության մեջ են գտնվում Գոթամայի խոսքերի հետ: Դրա համար ես այնքան էլ չեմ հավատում ու չեմ վստահում բառերին, քանի որ ես գիտեմ, ես գիտեմ նաև, որ այդ հակասությունը թվացյալ է: Ես գիտեմ, որ ինքս միանգամայն համաձայն եմ Գոթամայի հետ: Ինչպե՞ս կարող է պատահել, որ սիրո մասին չիմանար և այն չընդուներ Նա, ով ճանաչելով հանդերձ մարդկային գոյության ողջ անցողիկությունն ու ունայնությունը, այնուհանդերձ այնքան էր սիրում մարդկանց, որ իր երկար ու դժվարին կյանքը նվիրաբերեց բացառապես մարդկանց օգնելուն, նրանց ուսուցանելուն... Նրա՝ քո այդ մեծագույն ուսուցչի պարագայում, նրա կատարած գործն ավելի կարևոր է, քան իր խոսքը, նրա արարքներն ու կյանքը ավելի կարևոր են իր քարոզներից, նրա ձեռքի շարժումներն ավելի կարևոր են իր կարծիքներից: Ես նրա մեծությունը տեսնում եմ ոչ թե նրա ճառերի ու մտքերի մեջ, այլ միայն նրա գործերում, նրա կյանքի մեջ:

Երկա՛ր լուռ մնացին երկու ծերունիները: Ապա խոսեց Գովինդան՝ հրաժեշտ տալուց առաջ խոնարհված դիրք ընդունելով.

- Շնորհակալություն քեզ, Սիդհարթա, այն բանի համար, որ դու ինձ ասացիր քո որոշ մտքերը: Դրանք մասամբ տարօրինակ մտքեր էին, և ոչ բոլորն էին անմիջապես ընկալելի ինձ համար ու հասկանալի: Բայց ինչ էլ լինի, ամեն դեպքում ես երախտապարտ եմ քեզ և ցանկանում եմ քեզ խաղաղ օրեր:

(Իսկ իր համար ծածուկ՝ նա մտածեց. Այս Սիդհարթան տարօրինակ մարդ է, տարօրինակ մտքեր է արտասանում, անհեթեթ է հնչում նրա ուսմունքը: Այդպիսին չէ Վեհագույնի մաքրագույն ուսմունքը, այն պարզ է, վճիտ, հասկանալի, տարօրինակ ու արտասովոր ոչինչ չկա նրանում, կամ անհեթեթ ու ծիծաղելի բաներ: Սակայն իր արտահայտած մտքերից խիստ տարբեր, բոլորովին այլ կերպ են ինձ թվում Սիդհարթայի ձեռքերն ու ոտքերը, նրա աչքերը, նրա ճակատը, նրա շնչառությունը, նրա ժպիտը, ողջունելու ձևն ու քայլվածքը: Այն ժամանակվանից ի վեր, երբ մեր վսեմափայլ Գոթաման Նիրվանա գնաց, ես դեռ չեմ հանդիպել որևէ մարդու, որին տեսնելուն պես այն զգացումն ունեցած լինեի, որ նա սուրբ է... Միայն նա, այս Սիդհարթան, իմ մեջ այդպիսի զգացում առաջ բերեց: Թող որ նրա ուսմունքը տարօրինակ հնչի, թող նրա խոսքերը անհեթեթ ու անմիտ թվան, բայց նրա հայացքն ու ձեռքը, նրա մաշկն ու մազերը, ամեն-ամենը

նրա մեջ մի այնպիսի մաքրություն է շողարձակում, այնպիսի խաղաղություն, պարզություն ու հեզաբարոյություն է ճառագում, այնպիսի մի սրբություն, որպիսիք ես չեմ տեսել ոչ մի մարդու մեջ այն բանից ի վեր, երբ մեր վսեմափայլ ուսուցիչը վախճանվեց իր վերջին մարդկային մահվամբ:)

Այսօրինակ մտքերով պաշարված՝ Գովինդան, սիրտը լի անհաշտ հակասություններով, մեկ անգամ էլ խոնարհվեց ի դիմաց Սիդհարթայի՝ սիրով բռնվածի: Նա խորը խոնարհվեց խաղաղ նստածի առջև:

- Սիդհարթա,- խոսեց նա,- մենք երկուսս էլ ծերացել ենք: Հազիվ թե մեզանից մեկը կտեսնի մյուսին այս նույն կերպարանքով: Ես տեսնում եմ, սիրելիս, որ դու խաղաղություն ես գտել: Իսկ ես, խոստովանում եմ, ես այն չեմ գտել: Ասա՛ ինձ, հարգարժան, մի վերջին խոսք էլ, ճանապարհ ընկնելուց առաջ ինձ մի այնպիսի բան ասա, որ ընկալելի լինի ինձ համար, որ ես հասկանամ այն... Ինձ մի բան տուր ճանապարհվելուց առաջ: Իմ ճանապարհը հաճախ անսահման ծանր է, Սիդհարթա, մռայլ ու խրթին:

Սիդհարթան լուռ էր ու նրան էր նայում իր մշտնջենապես նույն, խաղաղ ժպիտով: Գովինդան սևեռուն նրա դեմքին էր նայում, վախվորած, կարոտով: Տառապանքն ու հավերժական որոնումն էր տպված նրա հայացքում, հավերժ չբավարարված որոնումը:

Սիդհարթան տեսնում էր այդ ու ժպտում էր.

- Խոնարհվի՛ր ինձ վրա,- կամացուկ շշնջաց նա Գովինդայի ականջին:- Խոնարհվի՛ր իմ կողմը... Ավելի, ավելի՛ մոտեցիր... Էլի՛, մի փոքր էլ... Համբուրի՛ր իմ ճակատը, Գովինդա...

Իսկ երբ Գովինդան, հմայված և պաշարված մեծագույն սիրով ու նախազգացումով, հնազանդվեց Սիդհարթայի ցանկությանը, նրա վրա խոնարհվելով՝ իր շուրթերով դիպավ նրա ճակատին, մի զարմանալի բան կատարվեց նրա հետ: Մինչ նրա մտքերը զբաղված էին Սիդհարթայի տարօրինակ խոսքերի թողած տպավորությամբ, մինչ նա ապարդյուն և իր կամքին հակառակ ջանք էր թափում վերանալ ժամանակից, նիրվանան ու սանսարան որպես մեկ-միասնություն պատկերացնել, և մինչ նրա մեջ իրար հետ կռիվ էին տալիս իր բարեկամի խոսքերի նկատմամբ արհամարհանքն ու նրա հանդեպ տածած իր անսահման սերն ու մեծարանքը, նրա հետ հետևյալը կատարվեց.

Նա այլևս չէր տեսնում իր բարեկամ Սիդհարթայի դեմքը, փոխարենը ուրիշ դեմքեր էր տեսնում, բազմաթիվ ու բազմաքանակ, դեմքերի մի ամբողջ երկարաձիգ շարք, դեմքերի հոսանուտ մի գետ, հարյուրավոր, հազարավոր դեմքեր, որոնք բոլորը գալիս էին, մի պահ հայտնվում ու անհետանում էին և սակայն միաժամանակ բոլորը կարծես մշտառկա էին, նրանք բոլորը մշ-

տապես փոխվում էին ու նորացվում, ու բոլորն էլ, ընդսմին, Սիդհարթան էին: Իր աչքերի առաջ նա տեսնում էր ձկան մի գլուխ՝ գետաձածանի, անսահմանորեն տառապյալ, լայն բացված բերանով, մեռնող մի ձկան, նրա հանգչող հայացքը, նա տեսնում էր նորածին մանկան դեմքը՝ կարմրատակած ու խորշակահար, լացից այլայլված, տեսնում էր մարդասպանի դեմքը, տեսնում էր, թե ինչպես էր նա դաշույնը խրում մեկ այլ մարդու մարմնի մեջ, և միևնույն պահին էլ՝ տեսնում էր այդ մարդասպանին շղթայակապ ծունկի իջած և թե ինչպես դահիճը սրի մի հարվածով բաժանում էր նրա գլուխը ուսերից: Նա տեսնում էր տղամարդկանց ու կանանց մերկանդամ մարմինները՝ մոլեգին ու կրքոտ սիրո գուպար մտած, նրանց փոփոխական դիրքերը, տեսնում էր գետնաթավալ դիակներ, խաղաղված, սառն ու դատարկված: Նա տեսնում էր կենդանիների գլուխներ՝ վարազի, կոկորդիլոսի, փղերի, ցուլերի ու թռչունների: Տեսնում էր աստվածների, տեսնում էր Կրիշնային, Ագնիին... Բոլոր այդ կերպարանքներն ու դեմքերը նա տեսնում էր իրար նկատմամբ հազարավոր հարաբերակցություններում, մեկ, թե ինչպես էին մեկը մյուսին օգնում ու սիրում, մեկ էլ՝ ատում իրար ու ոչնչացնում, հետո նորից վերածնվում: Ցուրաքանչյուրը ձգտում էր դեպի մահը, յուրաքանչյուրը ներծծված էր անցողիկության ու ունայնության տենդագին ու տառապալի գիտակցությամբ, և սակայն ոչ ոք չէր մահանում, նրանք բոլորը փոխակերպվում էին միայն, վերածնվում, վերամարմնավորվում կրկին, մշտապես նոր դեմք ստանում, և այդ ամենը կատարվում էր ժամանակից վերացած. դեմքերն ու կերպարանքները հերթափոխում էին միմյանց՝ առանց որ ժամանակ կանցներ այդ ընթացքում: Բոլոր այդ կերպարանքներն ու դեմքերը գտնվում էին հանգստի վիճակում, հոսում էին՝ մեկը մյուսին ծնունդ տալով, հորդում էին տարբեր ուղղություններով ու իրար միախառնվում, և այդ ողջ հորձանքի գլխավերևում մշտապես կանգնած էր ինչ-որ նրբենի, անմարմին և սակայն խիստ որոշակի մի գոյություն, որն ասես նրբանուրբ ապակի լիներ կամ ձու, թափանցիկ մաշկի, ձվակճեպի կամ ջրային դիմակի կերպարանք հիշեցնող, և այդ դիմակը ժպտում էր, այդ դիմակը Սիդհարթայի ժպտացող դեմքն էր, որին, այդ նույն պահին, Գովինդան դիպել էր իր շրթունքներով: Այսպես Գովինդան տեսնում էր դիմակին քարացած այդ ժպիտը, հոսանուտ ու հորձանախռիվ կերպարանքների գլխավերևում շողշողացող այդ ժպիտը, միաժամանակության ժպիտը՝ հազարավոր ծնունդների ու մահերին դալված: Սիդհարթայի այդ ժպիտը հենց և հենց նույնպիսին էր, ինչպիսին խաղաղված, նուրբ ու անթափանց, մերթ բարեհամբույր ու մերթ էլ ծանակող, իմաստուն ու հազարերանգ ժպիտն էր Գոթամա Բուդդայի, որն ինքը՝ Գովինդան,

հարյուրավոր անգամներ խորին ակնածանքով տեսել էր ու հմայվել: Գովինդան գիտեր, այդպես ժպտում էր միայն Կատարյալը:

Այլևս չգիտակցելով, թե արդյոք ժամանակը գոյություն ունի, արդյոք իր այդ հայեցումը ընդամենը մի պահ էր միայն տևել, թե ձգվել էր հարյուրավոր տարիներ, չիմանալով անգամ, թե արդյոք Սիդհարթան կամ Գոթաման գոյություն ունեին, թե ոչ, գոյություն ունի արդյոք ես և դու-ն, ասես մինչև հոգու խորքը խոցված աստվածային նետով, որից ստացած վերքը քաղցր է ու հաճելի, մինչև հոգու խորքը ցնցված ու սքանչացած՝ Գովինդան միառժամանակ դեռ կանգնած մնաց ոտքի վրա, խոնարհված Սիդհարթայի խաղաղված դեմքին, որն ինքը հենց միայն նոր էր համբուրել, որն ընդամենը մի պահ առաջ դարձել էր բազմատեսակ կերպարանքների խաղադաշտ, բոլոր վերածնունդների, բոլոր գոյությունների: Այդ հայացքն անփոփոխ էր նաև այժմ՝ այն բանից հետո, երբ նրա մակերևույթի ներքո վերստին փակվել էր հազարավոր բազմաձևությունների խորխորատը: Սիդհարթան նորից ժպտում էր՝ խաղաղված, ժպտում էր հանդարտ ու հեզ, մերթ բարեհամբույր ու մերթ էլ ծանակող ժպիտով, ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես ժպտում էր նա՝ Վեհագույնը:

Նրա առաջ խորը խոնարհվեց Գովինդան, արցունքներն հոսում էին ու նա չէր էլ զգում, ծորում էին նրա ծեր դեմքի վրայով: Կրակի պես հրդեհվում, իր սրտում բոցավառվում էր սիրո անչիջանելի հուրը, հնազանդ երկրպագության կրակը: Խորը, մինչև գետին խոնարհվեց նա անշարժ նստածի առաջ, որի ժպիտը նրան հիշեցրեց այն ամենի մասին, ինչն ինքը երբևէ սիրել էր իր կյանքի ընթացքում, ինչը ժամանակին իր կյանքում թանկ էր եղել ու սուրբ:

ՔԼԻԼԳԶՈՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՄԱՌԸ

ՆԱԽԱԲԱՆ

Իր կյանքի վերջին ամառը քառասներկուամյա նկարիչ Քլինգզորն անցկացրեց Պոմպամբիոյի, Կարենոյի և Լագունոյի մոտերքում գտնվող հարավային այն վայրերում, ուր նա առաջներում էլ հաճախակի և սիրով էր այցելել: Այնտեղ էին ստեղծվել նրա վերջին աշխատանքները. երևույթների աշխարհի գծագրումներին նվիրված ազատ փոխադրություններ, խոնհարված ծառերով և բույսեր հիշեցնող տնակներով զարդարված այն արտասովոր, լուսավոր, սակայն խաղաղ, երազորեն խաղաղ նկարները, որոնք գիտակների կողմից վեր են դասվում անգամ իր «դասականության» շրջանի ստեղծագործությունների համեմատությամբ: Այն ժամանակվա նրա ներկապնակը աչքի էր ընկնում միայն քիչ թե շատ պայծառ գուներանգներով. կադմիումի դեղին և կարմիր, վերոնեզյան կանաչ, զմրուխտ, կոբալտ, կոբալտի մանուշակագույն, ֆրանսիական կինաբառիս և խորդենու լաք:

Քլինգզորի մահվան լուրը հանկարծակի բերեց նրա բարեկամներին ուշ աշնանը: Նրա նամակներից շատերը մութ նախազգացումներ և մահատենչ ցանկություններ էին պարունակում: Այստեղից էլ կարող էր լուր տարածվել, թե նա ինքնասպան է եղել: Ուրիշ լուրերը, որ նույն այս վիճարկվող անվան շուրջն էին պտտվում, շատ ավելի անհիմն էին, քան առաջինը: Շատերը պնդում էին, թե արդեն մի քանի ամիս է, ինչ Քլինգզորը հոգեկան հիվանդ է դարձել, և շատ թե քիչ խոհեմ մի արվեստաբան փորձում էր նրա վերջին կտավների ապշեցուցիչ և հափշտակիչ հիասքանչությունը բացատրել այդ կարծեցյալ խելագարությամբ: Այդ զազրախոսություններից ավելի շատ հիմք ուներ, թերևս, Քլինգզորի մոտ խմիչքի նկատմամբ առաջացած հակման մասին անեկդոտային զրույցը: Հարբեցողության հակումը արդեն իսկ իրողություն էր, և սակայն, բացի նրանից, ոչ ոք այդ անկեղծորեն իր անունով չէր կոչում: Կյանքի վերջին ամիսներին՝ շատ անգամ նա ոչ միայն հրճվում էր հաճախակի գինարբուքներում, այլև գինով արբենալը համարում էր իր ցավերի մեղմացում, և նույնիսկ՝ անտանելի մելամաղձություններից դուրս գալու միջոց: Խորախորհուրդ գիներգերի բանաստեղծ Լի Թայ Պոն նրա սիրելին էր, և հարբած վիճակում նա հաճախ իրեն կոչում էր Լի Թայ Պո, իսկ իր ընկերներից մեկին՝ Թու Ֆու:

Նրա ստեղծագործությունները շարունակում են ապրել, իսկ մտերիմների նեղ շրջանում, առաջվա պես, շարունակում է ապրել նրա կյանքի և այն վերջին ամառվա առասպելը:

ՔԼԻՆԳԶՈՐ

Սկսվել էր կրքոտ և դյուրագրգիռ կայնքի համառ: Տաք օրերը, որ շատ երկար էին տևում, դեռ բորբոքվում էին բոցավառվող դրոշների պես: Կարճատև ու հեղձուցիչ լուսնյակ գիշերներին հաջորդում էին նույնքան կարճատև ու տոթ անձրևային գիշերները, որոնք շտապող երազների նման ու պատկերներով ծանրաբեռնված՝ տենդագին խանդով ձգվում էին շողշողուն շաբաթների միջով:

Երեկոյան զբոսանքից տուն դառնալով՝ կեսգիշերի կողմ, Քլինգզորը բարձրացավ իր աշխատասենյակի քարե նեղլիկ պատշգամբը: Ներքևի գլխապտույտ առաջացնող խորխորատում տարածվում էր դարավանդի հին այգին, լայնահուն սփռված էր անընդգրկելիորեն խիտ ծառագագաթների խառնաշփոթը. փաթաթվող բույսեր, լիանաներ, գլիցիններով շղթայված արմավենիներ, մայրիներ, շագանակենիներ, հուդայի ծառեր, անտառային հաճարենիներ, էվկալիպտներ: Ծառաստաղարթներից վեր մարմրալով պսպղում էին ամառային կղբիների թիթեղյա տերևները: Դեռևս կիսափակ, մարդկային մարմնի մեծությամբ, լուսնի ու փղոսկրի պես գունատ հսկայական ձյունասպիտակ ծաղիկներից կիտրոնի զվլգիչ ու թևավորված, հոգեպարար բույր էր փչում: Անորոշ հեռվից, հոգնատանջ թևերը թափահարելու նման, երաժշտության ձայն էր լսվում. կիթառ էին նվագում կամ գուցե դաշնամուր, դժվար էր զանազանել: Թռչնանոցի բակում հանկարծ ճչաց սիրամարգը, ծղրտաց երկրորդ, երրորդ անգամ, և իր տանջալի ձայնի կարճ, չարագուշակ և փայտե հնչողությամբ խոցեց անտառապատ գիշերվա կուրծքը, կարծես ողջ կենդանական աշխարհի ցավը մի անտաշ ու զիլ ձայնի մեջ զրնգաց անտառի խորքից: Աստղալույսը սահում էր հովիտների վրայով, բարձր ու լքված անտառի անսահմանության մեջ առկայծում էր կախարդված ու հին ճերմակաթույր մատուռը: Լիճը, լեռ ու երկինք իրար միախառնված՝ ձգվում էին դեպի հեռուն:

Քլինգզորը կանգնած էր պատշգամբում՝ վերնաշապիկով, մերկ ձեռքերը հենած երկաթե ճաղաշարին: Կիսամռայլ ու կրակված աչքերով նա գունատ երկնքում կարդում էր աստղերի գծագրումներն ու հետևում անտառի գլխին կուտակված ամպերի մեղմ լուսախաղին: Սիրամարգը նրար ինչ-որ բան հիշեցրեց: Այո, ճիշտ այսպիսի մի գիշեր էր, տարաժամ, ինքը հոգնած էր և քնել էր ուզում, անպատճառ, ամեն գնով քնել: Միգուցե, եթե իսկապես հաջողվեր մի քանի գիշեր իրար հետևից քնել, վեցից ութ ժամ անընդմեջ, այնժամ հնարավոր կլիներ հանգստանալ, աչքերը նորից հնազանդ ու համբերատար կդառնային, սիրտը՝

ավելի հանգիստ, երազներն էլ՝ անցավ: Բայց դրա հետ այդ ամառն էլ կցնդեր-կանէանար, այդ խելագար ու շողշողացող ամառային երազը նույնպես, հազարավոր անխում գավաթներ կմնային լիքը, հազարավոր անօրինակ սիրային հայացքներ կփշրվեին, հազարավոր անդառնալի պատկերներ դեռ լույս աշխարհ չեկած՝ կմարեին:

Նա իր ճակատը և ցավող աչքերը հենեց երկաթե սառը ճաղաշարին, դա նրան մի պահ թարմացրեց: Մեկ տարուց կամ դուցե ավելի շուտ՝ այս աչքերի լույսը խամրելու էր, կրակն էլ մարելու էր նրա սրտում: Ո՛չ, ոչ ոք ի վիճակի չէր այդ բոցավառվող կյանքը երկար տանել, ոչ անգամ ինքը՝ Քլինգզորը, որ տասը կյանք ուներ: Ոչ ոք չէր կարող այդքան երկար ժամանակ, օր ու գիշեր իր բոլոր լույսերը, բոլոր հրաբուխները վառել, մշտապես, գիշեր ու տիվ կրակների մեջ կանգնած մնալ, ամեն գիշեր ժամերով կրակված միտք բանեցնել, միշտ վայելքի մեջ լինել, անընդհատ ստեղծագործել, բոլոր զգայարաններով ու նյարդերով մշտարթուն և հսկողի դերում լինել՝ նման այն դղյակին, որի պատուհանների տակ օրեր շարունակ երաժշտություն է հընչում, ու երկար գիշերներին առկայծում են հազարավոր մոմեր: Պետք է դրա վերջը գար, արդեն շատ ուժ էր վատնվել, շատ աչքի լույս խամրել, հազարավոր կյանքեր էին արյունոտվել:

Հանկարծ նա ծիծաղեց և ուղղվեց: Ինչ-որ բան մտաբերեց. այդ զգացումն իրեն հաճախ էր պաշարել, ինքը հաճախ էր այդպես մտածել ու վախեցել դրանից: Իր կյանքի բոլոր լավագույն, պտղաբեր ու շիկացած ժամանակներում, արդեն իսկ երիտասարդ հասակում նա այդպես էր ապրել ու սիրել, իր մոմը զույգ ծայրերից էր վառել՝ մոլեգին շռայլումին, ինքնայրումի մեկ ցնծագին, մեկ հեծկլտացող զգացումով, գավաթը մինչև վերջ դատարկելու հուսահատ տենչով, վախճանի նկատմամբ խորհրդավոր ու ծածուկ վախով: Հաճախ էր նա այդպես ապրել, գավաթներ դատարկել ու վերստին բոցավառվել: Երբեմն վախճանը քաղցր է եղել, ինչպես մի խոր, անգիտակից ձմեռային քուն: Երբեմն այն սարսափելի է եղել. անմիտ ամայացում, անտանելի ցավեր, բժիշկներ, տխուր հրաժարում ու համակերպություն, թուլության հաղթարշավ: Իհարկե, լինում էին պահեր, երբ այդ խանդավառության վախճանը սպասվածից շատ ավելի վատթար էր լինում, անհամեմատ դառն ու ոչնչացնող: Բայց միշտ էլ այն հաղթահարվում էր, և շաբաթներ կամ ամիսներ հետո գալիս էր հարությունը՝ նոր հրդեհ, ստորգետնյա կրակի մի նոր բռնկում, նորանոր բոցավառվող ստեղծագործություններ, նորահայտ և հրաշալի կյանքի արբեցում: Այդ ամենն այդպես էր, և տառապանքների ու անգործության ժամանակները, թշվառության պա-

հերը շուտ մոռացվում ու անհետանում էին: Այդպես շատ լավ էր: Եվ երևի թե շարունակվեր, ինչպես հաճախ էր լինում:

Ժպիտը դեմքին՝ նա մտածում էր Ջինայի մասին, որի հետ միայն այսօր երեկոյան էր ծանոթացել, և նրա հետ միասին, ողջ գիշերային տունդարձի ճանապարհին, իր քնքուշ խոհերի կատակախաղին տրվել: Ինչ գեղեցիկ ու ջերմ էր այդ աղջիկը իր դեռևս անփորձ ու վախվորած հույզերում: Թեթևացած հոգով ու մեղմորեն նա ինքն իրեն ասում էր, կարծես նորից ու նորից չչնջալով նրա ականջին. «Gina! Gina! Cara Gina! Carina Gina! Bella Gina»[1]:

Նա վերադարձավ սենյակ և կրկին վառեց լույսը: Խառնիխուռն գրքերի կույտից դուրս կորզեց բանաստեղծությունների մի կարմիր հատոր: Նա մի բանաստեղծություն մտաբերեց, ավելի ճիշտ՝ բանաստեղծության մի պատառիկ, որ նրան անչափ գեղեցիկ և սիրելի էր թվում: Երկար փնտրելուց հետո՝ վերջապես գտավ իր ուզածը.

Մի՛ թողնիր դու ինձ գիշերվա ցավը,
Ամենալա՛վս, դու՛ իմ լուսներես,
Դու՛ իմ լուսատու, իմ մոմն ու ջահը,
Դու՛ իմ արևը և իմ լույսը պերճ...[2]

Ըմբոշխնելով, նա կուլ տվեց այս բառերի խորհրդավոր գինին: Ինչ հրաշալի, ինչ սրտագին և դյութիչ էր այն. Դու իմ լուսատու: Եվ կամ. Դու իմ լուսներես:

Ժպիտը դեմքին՝ շարունակ երթևեկում էր բարձրադիր պատուհանների առաջ, բանաստեղծություններ էր արտասանում, կանչում հեռավոր Ջինային. «Դու իմ լուսներես», և նրա ձայնը խզվում էր քնքշությունից:

Հետո վերցրեց թղթապանակը, որ երկար աշխատանքային օրվանից հետո, ողջ երեկոյի ընթացքում ձեռքից ցած չէր դրել: Ապա ձեռքն առավ իր սիրելի էսքիզների փոքրիկ ալբոմը և սկսեց աչքի անցկացնել վերջին օրերի կատարած գծանկարները: Ահա՛ այստեղ պատկերված էր մի կոնաձև լեռ, որի վրա ժայռը ստվեր էր գցել: Անմիջապես դրա կողքին կաղապարված էր ծամածռված դիմագծերով մի դեմք, և թվում է՝ ցավից ճչում էր լեռը: Ահա և ստվերաշատ սև քարե կամարով պատսպարված, կիսակլոր կտրվածքով սարալանջին պատկերված էր մի փոքրիկ քարաշեն ջրհոր, որի գլխավերևում ամպհովանու նման կախ էր ընկած արյունախանդ վառքի մեջ բոցավառվող ծաղկափթիթ նռնենին: Այդ ամենը միայն նա էր կարդում, ծածկագիրը լոկ իրեն էր

1 (իտ.) Ջինա, Ջինա, սիրելի Ջինա, թանկագին Ջինա, սիրունիկ Ջինա...
2 Քաղվածք է Յո. Վ.Գյոթեի «Արևելյա-արևմտյան դիվանից»:

հայտնի. վայրկյանի արագությամբ փոփոխվող անհագ դիտողականությունը, ամեն ակնթարթ կտրուկ ինքնաժայթքող հիշողությունը, որ բնության և սրտի միջև նոր ու կատարյալ ներդաշնակություն էր հաստատում: Ահա՛ և մեծածավալ գունավոր էսքիզները, սպիտակ թղթերը՝ դրոշմված ջրաներկերի փայլփլուն գուներանգներով. մի կարմիր առանձնատուն պուրակում, որ բոցավառվում է ինչպես ռուբինը կանաչ թավիշի վրա, ահա և Կաստիլայի մոտ կարմրին տվող երկաթե կամուրջները, որ երևակվում են կապտականաչավուն լեռան ետնախորշում, ահա և մանուշակագույն ամբարտակը, քիչ հեռվում՝ վարդագույն մի փողոց: Ավելի հեռվում երևում է աղյուսի գործարանի ծխնելույզը, որն ասես սառնաշունչ ծառերի կանաչության առջև վեր խոյացող կարմիր հրթիռ լինի, ահա՛ կապույտին տվող ուղենիշ սյունները, թանձր ու գլանաձև ամպերով պատած բաց մանուշակագույն երկինքը: Այս կտավը լավն էր ու կարող էր մնալ: Ախոռի մուտքի շրջակայքի պատկերը ափսոս էր դեն նետել, կարմրադարչնագույնը պողպատագույն երկնքի հենքին շատ էր սազում, չնայած անավարտությանը՝ այն խոսուն էր ու ներդաշնակ... Նկարելու միջոցին արևն հանկարծակի ընկել էր թղթի վրա և ցավեցրել նրա աչքերը: Հետո նա ստիպված եղավ բավական ժամանակ լվանալ դեմքն առվակի մեջ: Այժմ արդեն դարչնակարմրագույնը ցոլարձակում էր պիրկ մետաղյա կապույտի ֆոնին, և դա հրաշալի էր, ոչ մի փոքրիկ նրբերանգ, աննշմարելի իսկ թվացող չեշտ կեղծված կամ անհաջող չէր թվում: Առանց caput mortuum-ի[1] անկարելի էր այն գլուխ բերել: Հենց այստեղ, այս ոլորտում են թաքնված գաղտնիքները: Բնության ձևերը, նրա վերևն ու ներքևը, թացն ու չորը, խտացումների ու նոսրացումների տեղերը կարելի էր փոփոխել, կարելի էր հրաժարվել այն բոլոր անմեղ ու ազնիվ թվացող միջոցներից, որոնց օգնությամբ ընդօրինակվում է բնությունը: Նույնիսկ գույներն էլ կարելի էր կեղծել, անշուշտ, կարելի է դրանք ուժեղացնել, թուլացնել, թարգմանել հազար ու մի ձևերով: Բայց գաղտնիքն էլ հենց այն է, որ երբ ուզում ես գույների միջոցով մի կտոր բնություն վերամշակել, ապա ընտրում ես մի զույգ գույներ, որոնք ճիշտ և ճիշտ նման կապերի, համանման լարման մեջ են գտնվում իրար նկատմամբ, ինչպես որ բնության մեջ է: Այդ դեպքում մնում ես կախյալ վիճակում, մնում ես բնապաշտ, նույնիսկ, երբ մոխրագույնի փոխարեն նարնջագույն ես վերցնում, կամ սևի փոխարեն՝ տորոնի լաք:

---

1 (լատ.) գլխացավանք:

Այդպես մեկ օր էլ վատնվեց և դարձյալ աղքատիկ հասույթով գործարանի ծխնելույզով նկարը և կարմրակապտավուն գունախաղը մյուս թղթի վրա, և գուցե ջրհորով էսքիզը: Վաղը, եթե ամպամած երկինք լինի, նա կգա Կարաբինա, այնտեղ կար լվացարարուհիներով լի մի մեծ սրահ, իսկ եթե նորից անձրևի, այդ դեպքում կմնա տանը և կշարունակի յուղաներկով աշխատել առվակի պատերի վրա: Իսկ այժմ՝ դեպի անկողին: Անցավ ևս մեկ ժամ:

Ննջասենյակում հանեց վերնաշապիկը, ուսերը շփեց ջրով, որի կաթիլները ճտճտոցով թափվեցին կարմրաքարե հատակին, ապա ցատկեց բարձրադիր մահճակալի վրա և լույսը հանգցրեց: Լուսամուտից ներս էր թափանցում Մոնտե Սալուտի գունատ լույսը: Անկողնում պառկած՝ Քլինգզորը հազարավոր անգամներ կարդացել էր նրա գծագրումները: Անտառի կիրճից լսվեց բվեճի կռնչյունը՝ խորհրդավոր ու համրաձայն, ինչպես քուն, ինչպես մոռացություն:

Նա աչքերը փակեց և սկսեց մտածել Չինայի մասին, լվացարարուհիներով լի սրահի մասին: Տե՛ր Աստված, քանի-քանի հազար առարկաներ դեռ սպասում են իրեն և որքան անհաշվելի գավաթներ մնում են լիքը: Աշխարհում չկա և ոչ մի առարկա, որ անկարելի լիներ նկարել: Չկա և ոչ մի կին, որ անկարող լիներ սիրել: Ինչի՞ համար է տրված ժամանակը: Ինչի՞ է պետք այս հիմար հաջորդականությունը, և ոչ մի անգամ չի հայտնվում տենդագին ու գերհագեցած միաժամանակությունը: Եվ ինչու է ինքը հիմա մի այրու կամ ծերունու պես միայնակ իր անկողնում: Այս ողջ կարճատև կյանքի ընթացքում կարելի էր վայելել, ստեղծագործել, կարելի էր քնել, բայց չգիտես ինչու շարունակ երգեր ես երգում իրար ետևից և երբեք չես հնչեցնում լիահունչ սիմֆոնիան՝ իր ողջ բազմաձևությամբ, հարյուրավոր ձայներով ու գործիքներով միաժամանակ:

Շատ տարիներ առաջ, տասներկու տարեկան հասակում Քլինգզորը տասը կյանք է ունեցել: Երեխաներով ավազակների խաղն էին խաղում, և այդ ավազակներից յուրաքանչյուրը տասը կյանք ուներ, որոնցից ամեն անգամ մեկը կորցնում էր, երբ նրան ձեռքով կամ նիզակով դիպչում էր հետապնդողը: Վեց, երեք, նույնիսկ մեկ կյանքով դեռևս կարելի էր ազատվել և ողջ մնալ, և միայն տասներորդի կորուստով ամեն ինչ վերջանում էր: Սակայն Քլինգզորը իր ինքնասիրությունը բավարարված էր համարում միայն իր բոլոր տասը կյանքերի հաղթահարմամբ, և ամոթ էր զգում, երբ ինչով կամ յոթով էր ազատվում: Այդպիսին էր նա մանուկ հասակում, այն անհավատալի ժամանակներում, երբ աշխարհում ոչինչ անհնարին, ոչինչ դժվար չէր

թվում, երբ բոլորը սիրում էին Քլինգզորին, երբ Քլինգզորը կարգադրում էր բոլորին, և ամեն ինչ իրեն՝ Քլինգզորին էր պատկանում: Հետագայում էլ նա մշտապես տասը կյանքով էր ապրել: Եվ երբ նույնիսկ ո՛չ հագեցումը, ո՛չ էլ լիահունչ շառաչուն սիմֆոնիան չէին ուղեկցում նրան, բայց և այնպես միաձայն ու խեղճ չէր լինում նրա երգը, խաղալիս նա միշտ էլ մի զույգ խաղընկերներ ավելի էր ունենում, քան ուրիշները, մի քանի ավելորդ թալեր միշտ էլ կգտնվեր նրա գրպանում, իր լծակառքին էլ նժույգների պակասություն չէր զգացվում... Փա՛ռք Աստծո:

Ախ, ինչպես էր քնած կնոջ շնչառության նման խավարչտին այգու լռությունը լիաթոք խանդով լցվում սենյակի մեջ... Ինչ հոյակապ էր ճչում սիրամարգը... Ինչպես էր կրակը վառվում կրծքի տակ, ինչպես էր խփում սիրտը, ճիչեր արձակում, տառապում, ցնծում ու արյունոտվում: Այստեղ՝ Կաստանյետտայի բարձունքներում դեռ շարունակվում էր հրաշագեղ ամառը, նա հիանալի էր ապրում իր այդ հին ու ազնվաշուք ավերակներում, զմայլանքով նայում թրթուրապատ շագանակենիների անտառների բազմությանը, որ տարածվել էին լեռնաշղթաների լանջերին: Կատարյալ սքանչելիք էր՝ ժամանակ առ ժամանակ զբոսնել այդ ազնվագույն ու ծեր անտառներում, դղյակների աշխարհի հետ հաղորդակցվել, ներքևում զմայլվել գունագեղ ու զվարճալի խաղալիքներով, և ամենանվիրական ներշնչանքի պահին՝ նկարել այդ ամենը. գործարանը, երկաթուղին, տրամվայի կապույտ վագոնները, ծովափի լացող ուռիներն ու փքված սիրամարգերին, կանանց, քահանաների, ավտոմեքենաներ: Ինչ հրաշալի, տանջող ու անհասկանալի էր իր կրծքում բույն դրած այդ զգացումը, կյանքի ամեն մի բազմաբղետ հատվածի ու ծվենի համար պայքարելու իր այդ սերը և շողշողացող տենչը, տեսնելու և կերտելու այդ քաղցր անբացատրելի պահանջը, և դրա հետ մեկտեղ, բարակ վերմակի տակ՝ կատարածդ բոլոր արարքների երեխայության ու ապարդյունության ծածուկ ու սրտմտալի խոստովանությունը...

Տենդագին հալվեց կարճատև ամառային գիշերը, գոլորշի բարձրացավ կանաչ հովիտներից, հարյուր-հազարավոր ծառերի մեջ եփվում էր բուսահյութը, հարյուր-հազարավոր երազներ ուռչում էին Քլինգզորի թեթև նիրհի մեջ, նրա հոգին ճախրում էր իր կյանքի հայելիների սրահներով, ուր բոլոր պատկերները՝ բազմապատկված և ամեն անգամ նոր դեմքով ու նոր նշանակությամբ էին հայտնվում, նորահայտ կապակցությունների մեջ մտնում. կարծես աստղալից երկինքը խառնիխուռն թափահարված լիներ խորանարդաձև գավաթի մեջ:

Շատերի թվում մի երազ սքնչացրեց ու ցնցեց նրան. ինքը

պառկած էր դաշտում, և մի կարմրահեր կին հանգչում էր նրա գրկում, սևահեր մեկն էլ հենվել էր իր ուսին, մեկ ուրիշը ծունկի էր չոքել իր առաջ, բռնել և հերթով համբուրում էր ձեռքի մատները, շուրջը ամենուր կանայք էին ու աղջիկներ, շատերը՝ տակավին երեխաներ, նուրբ, բարձր կրծքերով, մյուսները՝ արյունավառ, ոմանք էլ՝ հասունացած և իմաստության նշաններով, մերկ դեմքերին հոգնածության արտահայտություն, և բոլորը սիրում էին իրեն ու ցանկանում սիրված լինել իր կողմից: Հանկարծ կռիվ ու կրակ պայթեց կանանց մեջ, հանկարծ մոլեգնած կարմրահերը բռնեց սևահերի մազերից, քաշեց-գցեց նրան գետին ու ինքն էլ ընկավ, մի պահ բոլորը համատարած գետին էին տապալվում, մեկը ճչում էր, մյուսը ցած ընկնում, կծում, ցավեցնում էին իրար ու ցավից ճչում, քրքիջները, կատաղի ճիչերն ու ցավատանջ ոռնոցները հնչում էին իրար մեջ խճճված ու հանգուցավորված, ամենուր արյուն էր հոսում, մագիլները զարկվում էին արյունոտ ու նուրբ մսերի մեջ:

Թախծի ու ճնշվածության զգացումով արթնացավ Քլինգզորը և, միառժամանակ, լայն բացված աչքերով սևեռուն նայում էր պատի վրա ընկած լույսի շերտին: Հայացքի առաջ դեռ կանգնած էին մոլեգնած կանանց դեմքերը, շատերին հանկարծ ճանաչեց և մեկ առ մեկ սկսեց մտաբերել նրանց անունները. Նինա, Հերմինե, Էլիզաբեթ, Ջինա, Էդիթ, Բերտա, ու խզված ձայնով, դեռևս երազի միջից, ձայնեց. «Մանկիկնե՛ր, դե վե՛րջ տվեք... Այդ ի՞նչ եք անում, ախր դուք մոլորված եք, ոչ թե իրա՛ր պետք է պատառոտեք, այլ ի՛նձ, ի՛նձ...»:

ԼՈՒԻ

Լուի Վայրագը կարծես երկնքից ընկավ, նա հանկարծակի հայտնվեց, այդ անդուլ ճանապարհորդը, Քլինգզորի հին բարեկամը: Նրանից ամեն ինչ սպասելի էր, ապրում էր երկաթգծերի միջև և ողջ արվեստանոցը կրում էր իր ուսապարկում: Այդ օրերին երկնքից հիանալի ժամեր էին կաթում ու բարենպաստ քամիներ փչում: Բարեկամները միասին նկարում էին Ջիթենյաց լեռան վրա և Կարթագենում:

- Արդյոք մեր այս նկարչությունը իրապես մի արժեք ունի՞,- ասաց Լուին Ջիթենյաց լեռան վրա՝ մինչ մեջքն արևից կարմրատակած ու մերկանդամ պառկել էր խոտերի մեջ: - Մարդս, այնուամենայնիվ, նկարում է միայն faute de mieux-ի[1] զգացումով, սիրելիս: Այ, եթե մշտապես մի դուրեկան աղջիկ ունենայիր գըր-

1 (Ֆրանս.) ավելի լավի պակաս:

կումդ և ափսեումդ էլ՝ ապուր, որից այսօր քո միտքը ետ է վարժվել, դու քեզ չէիր տանջի անմիտ մանկական խաղերով: Բնությունն ունի տասնյակ հազարավոր գույներ, իսկ մենք մեր գլուխն ենք մտցրել այդ գունասանդղակը մի երկու տասնյակի հասցնելու հիմար միտքը: Սա՛ է ողջ նկարչությունը: Ինքդ քեզանից միշտ դժգոհ ես և դեռ քննադատին էլ պիտի սիրաշահես: Ավելի լավ է դրա փոխարեն մարսելյան ձկնապուր վայելեիր, caro mio[1], հետո էլ մի չիշ սառնորակ բուրգունդյան գինի, միլանյան շնիցել, աղանդերի համար՝ տանձ ու գորգոնցոլա[2] և թուրքական սուրճ, սրանք իրողություններ են, պարոնս, սրանք հո իրական արժեքներ են... Ախ, աստված իմ, ես կուզեի բալենու վրա բարձրանալ և բալերը հասունանային հենց իմ բերանի մեջ, և թող իմ գլխավերևում՝ սանդուղքի վրա կանգնած լիներ դարչնագույն մազերով այն նույն տաքարյուն աղջիկը, որին մենք այսօր կանուխ հանդիպեցինք: Քլինգզոր, հերի՛ք նկարես: Ես քեզ մի լավ ճաշկերույթի եմ հրավիրում Լագունոյում, շտապի՛ր, ժամանակ չկա...

- Իսկապե՞ս,- հարցրեց Քլինգզորը աչքերը կկոցելով:

- Այո, այո: Միայն թե մինչ այդ ես պետք է կայարանում լինեմ, քանի որ, ինչ թաքցնեմ, ընկերուհուս հեռագրել եմ, թե իբր մահամերձ եմ: Ժամը տասնմեկին նա այստեղ կլինի:

Ծիծաղելով՝ Քլինգզորը նոր սկսած էտյուդը վերցրեց նկարակալի վրայից:

- Լավ ես մտածել, տղաս: Գնանք Լագունո: Հագիր վերնաշապիկդ, Լուիջի: Բարքերն այստեղ մեծագույն անմեղության արտահայտությունն են, սակայն, ավաղ, այս տեսքով դու չես կարող քաղաք դուրս գալ:

Նրանք հասան փոքրիկ քաղաքը և մտան կայարան: Հետո մի գեղեցիկ կին եկավ: Երեքով փառահեղ ճաշկերույթ սարքեցին ռեստորանում, և Քլինգզորը, որ իր գյուղական ամիսներին ամբողջովին ետ էր վարժվել այդ ամենից, անչափ զարմացել էր, որ բոլոր այդ բաները, այդ հրաշալի ու համեղ ուտելիքները դեռևս գոյություն ունեն. կարմրախայտեր, սաղմոնաձկան ապուխտ, ծնեբեկ, շաբլի[3], վալլիսյան դոլ, բենեդիկտյան լիկյոր:

Ճաշելուց հետո նրանք երեքով միասին շրջեցին զառիթափ բլրի վերակառուցված քաղաքի գլխավերևում, ընթացան տների լայնք ու երկայնքով, պատուհանների և կախովի այգիների կողքով, և դա աքանչելի էր: Հետո նրանք մի պտույտ էլ կատարե-

1 (իտ.) սիրելիս:

2 իտալական պանրի տեսակ:

3 Ֆրանսիական սպիտակ գինի:

ցին, մեկ անգամ ևս վերև ու ներքև արեցին: Տարօրինակ կերպով գեղեցիկ ու արտասովոր էր աշխարհը, խայտաբղետ, նրանում ինչ-որ տարակուսելի բան կար, ինչ-որ անհավանական թվացող և սակայն՝ զարմանահրաշ մի բան: Քլինգզորը փոքր-ինչ չփոթված էր, նա հազիվ էր իրեն կարողանում զսպել և ջանում էր սառնարյունություն հանդես բերել, որպեսզի հանկարծ չսիրահարվեր Լուիջիի սիրունիկ ընկերուհուն: Նրանք մեկ անգամ էլ մտան սրճարան, մի պտույտ կատարեցին ցերեկվա կողմ դատարկված զբոսայգում, պառկեցին հանգստանալու ջրի ափին՝ հսկայական ծառերի շուքի ներքո: Նկարելու արժանի բաներ տեսան նրանք. մուգ կանաչի մեջ թաղված և ազնվաշուք քարերով երեսպատված կարմիր տնակներ, կապույտ ու դարչնագույն ծաղիկներով զարդարված օձածառեր և կեղծամածառեր:

- Դու փառահեղ ու զվարճալի բաներ ես նկարել, Լուիջի,- ասաց Քլինգզորը,- այդ բոլորն էլ ես շատ եմ սիրում. դրոշակաձողեր, ծաղրածուներ, կրկեսային տեսարաններ: Բայց ինձ համար ամենասիրելին քո նկարած գիշերային կարուսելի տեսարանի մի պատկերն է: Նկատի ունեմ այն դրվագը, ուր մանուշակագույն վրանի գլխավերևում, բոլոր լույսերից բարձր ու հեռու, գիշերվա երկնքում ծածանվում է բաց վարդագույն մի մրսկան ու փոքրիկ դրոշակ, այնքան գեղեցիկ, այնպես մրսկան ու միայնակ, ամոթխածորեն միայնակ... Դա ինձ հիշեցնում է Լի Թայ Պոյի կամ Պոլ Վերլենի բանաստեղծությունները... Այդ փոքրիկ, հիմարիկ վարդագույն դրոշակում պարփակված է աշխարհի ողջ ցավն ու անզորությունը ու նաև ողջ բարի ծաղրը այդ ցավի ու անզորության նկատմամբ: Այն, որ դու նկարել ես այդ դրոշակը, դրանով իսկ քո կյանքը արդարացվում է, ես բարձր եմ գնահատում քո այդ դրոշակը:

- Այո, գիտեմ, որ այն քեզ դուր է գալիս:

- Կարծեմ քեզ էլ է դուր գալիս: Ահա թե ինչ կասեմ, եթե մի քանի նման բաներ նկարած չլինեիր, ապա բոլոր այդ համեղ կերակուրներն ու գինիները, կանայք ու սրճարանները քեզ ոչնչով չէին կարողանա սփոփել, դու մի թշվառական արարած կլինեիր: Իսկ այսպես՝ դու մի հարուստ արարած ես, մեկն ես այն տղերքից, որ դեռ կարողանում են սիրել: Լուիջի, ես հաճախ եմ քեզ պես մտածում. մեր ողջ արվեստը սոսկ փոխարինում է, տանջալի և տանապատիկ թանկ վճարված մի հատուցում՝ ուշացած կյանքի, ուշացած կրքի, ուշացած սիրո համար: Բայց և այնպես՝ դա այդքան էլ այդպես չէ: Կա մի բան, որ մենք միշտ մոռանում ենք: Ինձ թվում է, որ մարդիկ գերագնահատում են զգայականը, երբ հոգևորը դիտում են լոկ որպես անհրաժեշտ հատուցում պակասող զգայականի համար: Զգայականը մազաչափ իսկ ավելի

արժեք չունի, քան հոգևորը, և, կարելի է ասել, որ այն նույնքան քիչ արժեք ունի, որքան և վերջինս: Երկուսն էլ՝ հավասարապես հրաչալի են: Դու մի կնոջ ես գրկում, կամ թե բանաստեղծություն գրում՝ տարբերություն չկա: Միայն թե գլխավոր դերում լինի սերը, այրումը, հուզմունքը, մնացածը կարևոր չէ՝ դու կլինես մոնթ՝ Աթոս լեռան վրա, թե աշխարհիկ մարդ՝ Փարիզում:

Լուին հեգնող աչքերով ծուլորեն նրան էր նայում:- Տղա՛ս, շատ էլ մի հուսահատվիր:

Գեղեցկուհուն թևանցուկ արած՝ նրանք թափառում էին այս ու այնտեղ: Մարգարեություններ անելու ասպարեզում երկուսն էլ անգերազանցելի էին, այս բնագավառում նրանք մեծ փորձ ունեին: Մանր ու մեծ քաղաքների ու գյուղերի շրջակայքում նրանք տեսնում էին Հռոմը, տեսնում էին Ճապոնիան, Հյուսիսային ծովը, և ճարպիկ ձեռնածությամբ կրկին ու կրկին կործանում էին այդ պատրանքները: Նրանց երևակայությունը երկինքներում աստղեր էր վառում և կրկին հանգցնում: Ճոխ ու չքեղ գիշերներին բարեկամները պայթեցնում էին իրենց ազդանշանային հրթիռները: Աշխարհը օճառի պղպջակ էր, ցնորք, օպերա էր, ուրախ անմտություն...

Լուին, այդ անհանգիստ թռչունը, մինչ Քլինգզորը նկարում էր, իր հեծանիվով ճախրում էր բլուրների միջև, սլանում այս ու այն կողմ: Որոշ օրեր զոհաբերում էր Քլինգզորը, հետո կրկին խստասիրտ տրամադրությամբ նստում էր բաց օդում և աշխատում: Լուին չէր ուզում աշխատել: Մի օր էլ՝ նա ընկերուհու հետ ճանապարհ ընկավ, հետո մի նամակ գրեց հեռու հեռվից: Ու երբ Քլինգզորը նրան արդեն կորած էր համարում՝ հանկարծ նորից հայտնվեց, ծղոտե գլխարկով ու կոճակներն արձակած վերնաշապիկով կանգնեց դռան առաջ, կարծես թե երբեք էլ չէր հեռացել: Մի անգամ ևս Քլինգզորը իր երիտասարդության շրջանի քաղցր գավաթից ծծեց բարեկամության գինին: Նա շատ բարեկամներ ուներ, նրան շատերն էին սիրում, և ինքը փոխադարձում էր այդ սերը, բոլորի առաջ բաց էր անում իր դյուրագրգիռ ու աշխույժ սիրտը: Բայց բարեկամներից միայն երկուսն էին, որ այս ամռանը բախտ էին ունեցել նրա շուրթերից լսելու այդ ծեր սրտի կանչը: Լուի նկարիչը և բանաստեղծ Հերմանը՝ մականվանյալ Թու Ֆու:

Լուին օրերով նստում էր բաց դաշտում տեղադրված իր նկարչական ծալովի աթոռին, տանձենու ու սալորենու ստվերում, և ոչինչ չէր նկարում: Նստում էր ու խորհրդածությունների գիրկն ընկնում, վերցնում էր նկարակալներին ամրացված թղթերից և գրում էր, գրում անվերջ, անթիվ ու անհամար նա-

մակներ: Երջանի՞կ են, արդյոք, այն մարդիկ, որ այդքան շատ նամակներ են գրում: Լուին, այդ անհոգ մարդը, գրելիս խիստ ջղաձգվում էր, նրա հայացքը, անհաճո արտահայտու-թյամբ, երկար ժամանակ չէր կտրվում թղթից: Շատ գաղտնապահություններ նրան զրկում էին հանգստից: Հենց դրա համար էլ Քլինգզորը սիրում էր նրան:

Բոլորովին ուրիշ խառնվածքի տեր էր Քլինգզորը: Նա լռել չգիտեր: Սրտի մեջ եղածը չէր կարողանում թաքցնել: Իր կյանքի լուռ տառապանքների մասին, որ քչերը գիտեին, նա երբեմն պատմում էր մտերիմների շրջանում: Նա հաճախ էր տառապում վախից ու մելամաղձությունից, հաճախ էր իրեն գտնում մութ հանքահորերում բանտարկված ու թշվառ վիճակներում, վաղ անցյալի ստվերները, երբեմն չափազանց մեծ կուտակումներով, ընկնում էին նրա ներկա օրերի վրա և ողջը սևացնում: Այնժամ նա հրճվում էր՝ նայելով Լուիջիի դեմքին: Ասես օգնության էր կանչում նրան:

Բայց Լուին տհաճությամբ էր համակերպվում իր բարեկամի այդ թուլությունների հետ: Դրանք ճնշում էին նրան ու խղճահարություն առաջ բերում: Քլինգզորը չէր էլ ենթադրում և հասկացավ շատ ուշ, որ իր սրտաբաց ու անկեղծ խոսքուզրույցը իրականում լոկ վնաս էր հասցնում ճշմարիտ բարեկամությանը:

Կրկին Լուին սկսեց ճանապարհորդությունից խոսել: Քլինգզորը հասկացավ, որ այժմ արդեն ինքն անկարող կլինի բարեկամին իր մոտ պահել, թերևս հաջողվեր դեռ մի երկու-երեք օրով էլ երկարաձգել նրա ներկայությունը, ոչ ավելին, իսկ մի գեղեցիկ օր էլ նա անսպասելիորեն կներկայանար կապված ճամպրուկը ձեռքին, հրաժեշտ կտար և երկար ժամանակ այլևս չէր վերադառնա: Ինչ կարճ է կյանքը, ինչ անդառնալի է ամեն ինչ: Միակ բարեկամը, որ ամբողջապես հասկանում էր իր արվեստը, որի սեփական ստեղծագործությունը մոտ ու հարազատ էր իրեն, ահա այդ միակ բարեկամին այժմ նա վախեցրել էր ու ձանձրացրել, փչացրել էր նրա տրամադրությունը, գրգռել ու սառեցրել նրա հուզմունքը, և այդ ամենը միմիայն իր հիմար թուլությանն ու հարմարավետության հակումին հագուրդ տալու համար, միմիայն իր երեխայական ու անվայել պահանջների բավարարման, բարեկամին սիրաշահելու համար իրեն ոչ մի նեղություն չտալու, ոչ մի գաղտնիք նրանից թաքցնել չկարողանալու պատճառով, նրա առաջ ինքն իրեն զսպելու անընդունակության պատճառով: Ինչ հիմար, ինչ երեխայական բան դուրս եկավ: Այսպես ուշ էր պատժում իրեն Քլինգզորը, շատ ուշ:

Վերջին օրը նրանք միասին թափառում էին ոսկեծուփ հովիտներում: Լուին բարձր տրամադրության մեջ էր, ճանապար-

հորդությունը նրա թռչնային սրտի համար իսկական ուրախություն էր: Քլինգզորը կիսում էր նրա հրճվանքը, նրանք կրկին վերագտան իրենց նախկին թեթև, ճկուն և զվարճալի տոնը և այն այլևս բաց չթողին: Երեկոյան դեմ նստեցին պանդոկի այգում: Խորոված ձուկ պատվիրեցին, բրինձի հետ եփած սունկ, և դեղձ էին վայելում՝ բալի լիկյորի հետ ըմբոշխնելով:

- Ու՞ր ես պատրաստվում վաղը ուղևորվել,- հարցրեց Քլինգզորը:

- Չգիտեմ:

- Այն սիրունիկ կնոջ մո՞տ:

- Այո: Գուցե: Ո՞վ գիտե: Այդքան շատ հարցեր մի տուր: Հրաժեշտից առաջ եկ մի լավ սպիտակ գինի ըմպենք: Եթե դեմ չես՝ նոյենբուրգյան:

Խմելու միջոցին հանկարծ Լուին բացականչեց.

- Ինչ լավ է, որ ես մեկնում եմ, ծեր ծովաչուն: Երբեմն, երբ ես քեզ այնքան մոտ եմ նստած լինում, ինչպես հիմա, հանկարծ մի հիմար բան է միտքս գալիս: Ինձ թվում է, որ այժմ այստեղ, իրար կողք-կողքի նստած են մեր լավ հայրենիքի երկու նկարիչները, և նույն պահին էլ մի նողկալի զգացում եմ ունենում ծնկներիս մեջ, կարծես մենք երկուսս էլ բրոնզից լինենք ձուլված և ձեռք-ձեռքի տված կարող ենք հանց հուշարձան կանգնել, ասենք, ինչպես Գյոթեն ու Շիլլերը: Սակայն նրանք էլ, վերջի-վերջո, մեղավոր չեն, որ ստիպված են արձանի դերում հավերժ կանգնած մնալ, միմյանց բրոնզե ձեռքերը բռնած, նրանք մեղավոր չեն, որ աստիճանաբար մեզ համար տհաճ ու ատելի են դառնում: Գուցե նրանք հրաշալի տղաներ և այրեր են եղել, Շիլլերից ժամանակին մի դրամա եմ կարդացել՝ ուղղակի աքանչելի էր: Բայց այժմ նա ներկայացված է որպես մի հռչակավոր արարած և ստիպված է իր սիամական երկվորյակի կողքին կանգնել, իր գիպսե գլուխը հարևանի գլխի մոտ պահած, ամենուրեք նրանց երկերի լիակատար ժողովածուներն են վաճառքի հանվում, և դեռ դպրոցական դասագրքերում էլ անպակաս են նրանց ստեղծագործությունները: Սոսկալի է: Պատկերացրու, թե մի հարյուր տարի հետո մի պրոֆեսոր ինչպես է քարոզում իր գիմնազիստներին. Քլինգզոր, ծնված 1877 թվականին, և նրա ժամանակակիցը՝ Լուի անունով՝ մականվանյալ Շատակեր, նորարարներ նկարչության մեջ, ազատագրում գույնի նատուրալիզմից, ավելի մոտիկից քննելով այս նկարչական զույգի ստեղծագործությունները՝ դրանք հստակորեն կարելի է ստորաբաժանել երեք պարզորոշ առանձնացվող ժամանակաշրջանների... Չէ՛, ավելի լավ է ես հենց այսօր ինձ շոգեքարշի տակ գցեմ:

- Ավելի խելացի կլիներ, եթե տեղդ զիջեիր քո այդ պրոֆես-

սորներին:

- Բայց այդքան մեծ շոգեքարշեր չկան: Ինքդ էլ գիտես, թե որքան փոքրիկ է մեր տեխնիկան:

Երկնքում արդեն աստղեր էին հայտնվում: Լուին հանկարծ իր բաժակը խփեց ընկերոջ բաժակին:

- Եկ խփենք ու խմենք: Հետո ես իմ հեծանիվը կնստեմ և մնաս բարով: Առանց երկար-բարակ հրաժեշտի խոսքերի... Պանդոկապանին վճարել եմ: Կենա՛ցդ, Քլինգզոր...

Նրանք չրխկացրին բաժակներն ու խմեցին: Երբ դուրս եկան այգի, Լուին նստեց իր հեծանիվը, գլխարկը թափահարեց ու անհետացավ: Գիշեր, աստղեր, Լուին Չինաստանում էր: Նա լեգենդ էր դարձել:

Քլինգզորը տխուր ժպտում էր: Ինչպես էր նա սիրում այդ չվող թռչունին... Դեռ երկար ժամանակ նա կանգնած էր պանդոկի այգու խճաքարերի վրա ու նայում էր դատարկ փողոցի երկայնքով:

ՕՐԸ ԿԱՐԵՆՈՑՈՒՄ

Բերգամոյի իր բարեկամների և Ագոստոյի ու Էրսիլիայի հետ միասին Քլինգզորը ոտքով ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Կարենո:

Առավոտյան կողմ, զգլխիչ բույր արձակող ասպիրակների և անտառեզրի դեռևս ցողապատ սարդոստայների միջով դողդողալով անցնելիս, տոթ ու զառիվեր անտառից դուրս գալով՝ նրանք հայտնվեցին Պոմպամբիոյի հովտում, ուր ամառային տապից ընդարմացած դեղին արահետներում ննջում էին առաջ խոնարհված ու կիսախարխուլ, վառ դեղին գունավորումով տնակները, իսկ ոսկե մարգագետիններում, ցամաքած առվակների վրա ծանր ճյուղերով կախված էին ճերմակ, մետաղագույն ուռիները: Բարեկամների խայտաբղետ քարավանը սահում էր վարդագույն արահետներում՝ գոլորշու ծուխ արձակող հովտի կանաչության միջով. տղամարդիկ հագել էին ճերմակ ու դեղին զգեստներ, վարդագույն ու սպիտակազգեստ մետաքսների մեջ ճեմում էին կանայք, Էրսիլիայի վերոնեզյան կանաչ գունավորումով սքանչելի անձրևանոցը փայլփլում էր, ինչպես գոհարը կախարդական մատանու վրա:

Թախծոտ ու բարյացկամ ձայնով տրտնջում էր դոկտորը.- Ցավալի է, Քլինգզոր, որ ձեր հրաշալի գույները մի տասը տարի հետո խունանալու ու գունաթափվելու են, ձեր նախասիրած գույներից ոչ բոլորն են դիմանալու ժամանակի քննությանը:

Քլինգզոր.- Այո, և որ ավելի ցավալի է՝ ձեր գեղեցիկ շագա-

նակագույն մազերը, սիրելիդ իմ դոկտոր, մի տասը տարուց բոլորովին մոխրագույն կդառնան, իսկ քիչ ավելի ուշ՝ մեր սիրուն ու երջանիկ ոսկորները կհանգչեն ինչ-որ տեղ, մի հողափոսում, ավաղ, նույնիսկ ձեր այնքան գեղեցիկ ու առողջ ոսկորները, Էրսիլյա: Երեխանե՛ր, եկեք գոնե կյանքի վերջում այդքան խելացի չլինենք: Հերման, ինչպես է ասու՞մ Լի Թայ Պոն:

Բանաստեղծ Հերմանը վեր կացավ տեղից ու արտասանեց.

Կյանքը կանցնի կայծակի պես,
Որի աղոտ փայլն այնքան կարճ է տևում,
Որ հազիվ ես հասցընում այն նկատել:
Այնժամ, երկիրն ու երկինքը անշարժանում են հավետ,
Ի՞նչ արագ է թռչում մարդկանց հայացքի դեմ
Ժամանակը փոփոխական...
Օ~, դու, որ նստած ես լեցուն գավաթի դեմ ու չես խմում,
Օ~, ասա ինձ, ու՞մ ես արդյոք դու սպասում:

- Ո՛չ,- ասաց Քլինգզոր,- ես ուրիշ բանաստեղծություն նկատի ունեմ, հանգավոր, այն վարսերի մասին, որ առավոտյան դեռևս թուխ էին...

Հերմանը անմիջապես արտասանեց բանաստեղծությունը.

Դեռ առավոտյան փայլում էին քո վարսերը սևուկ մետաքսի պես,
Երեկոն արդեն ձյուն էր շաղ տվել նրանց վրա,
Եվ որպեսզի դու զուր չտառապես, քանի մարմնումդ ուժ կա ու եռանդ,
Գավաթը ճոճիր և լուսնին կոչիր ընկերակիցը քո գինարբուքի:

Քլինգզորը բարձր ծիծաղեց իր փոքր-ինչ խռպոտ ձայնով:

- Հրաշալի~ Լի Թայ Պո... Նա հանճարեղ նախազգացումներ ուներ, նա ամեն ինչ գիտեր: Մենք նույնպես շատ բաներ գիտենք, բայց նա մեր ամենաիմաստուն և ավագ եղբայրն է: Այս հարբած օրը նրան դուր կգար, այս օրը շատ է հիշեցնում այն գեղեցիկ երեկոն. ախ ուր էր թե, Լի Թայ Պոյի մահով մահանայի, խաղաղ գետի վրա սահող նավակում: Այ դուք կտեսնեք, որ այսօր ամեն ինչ հրաշալի կլինի:

- Ճի՞շտ է, որ Լի Թայ Պոն գետի վրա է մահացել,- հարցրեց նկարչուհին:

Բայց Էրսիլյան ընդմիջեց նրան իր հրաշալի ունգային ձայնով.

- Բոլորովին էլ ոչ, դե վե՛րջ տվեք... Այսուհետև ով թեկուզ մի բառ ասի մահվան մասին, ես նրան այլևս չեմ սիրի: Finisca adesso, brutto Klingsor![1]

Քլինգզորը ծիծաղելով մոտեցավ նրան.- Ինչ իրավացի եք դուք, bambina[2]: Եթե ես այսուհետև թեկուզ մի բառ ասեմ մահ-

1 (իտ.) Շուտ վե՛րջ տուր, բռի Քլինգզոր:
2 (իտ.) աղջիկ:

վան մասին, թող որ դուք ծակեք իմ զույգ աչքերը ձեր անձրևանոցով: Այսօր մեզ համար հեքիաթի թռչունն է երգում, նրա երգն ինձ ուղեկցում է դեռ առավոտից: Այսօր հեքիաթի քամին է փչում, այդ երկնային մանկիկը, որ արթնացնում է քնած արքայադուստրերին և բոլորին խելքահան անում: Այսօր ծաղկում է հեքիաթի ծաղիկը, այն կապույտ է և միայն մեկ անգամ է այս կյանքում ծաղկում, ով այն քաղի՝ թող օրհնյալ լինի հավիտյանս:

- Ի՞նչ է դա նշանակում,- հարցրեց Էրսիլյան դոկտորին: Քլինգզորը լսեց նրա հարցը:

- Դա նշանակում է, որ այս օրը երբեք չի վերադառնա, և նա, ով չուտի և չխմի, չճաշակի օրվա համն ու հոտը, նրան այն հավիտենապես այլևս երկրորդ անգամ չի տրվի: Հավատացե՛ք ինձ, այլևս երբեք արևը այսօրվա պես չի շողալու, նա առանձնակի դիրք ունի երկքում, մի յուրահատուկ առնչություն Ցուպիտերի հետ, ինձ հետ, Ագոստոյի, Էրսիլիայի և մեր բոլորի հետ, այն այլևս երբեք չի կրկնվելու, թեկուզ հազար տարի էլ անցնի: Նման երջանկությունից օգտվելու համար՝ այժմ ես ուզում եմ միաժամանակ ձեր ձախ կողմում քայլել, ձեռքումս պահել ձեր զմրուխտե անձրևանոցը, և թող նրա լույսերի մեջ իմ գանգը շողշողա ծիածանաքարի պես: Դուք էլ մասնակցեք այս տոնախմբությանը, հնչեցրեք Ձեր ամենասիրելի ու հրաշագեղ երգը:

Նա բռնեց Էրսիլյայի ձեռքը, և նրա ընդգծված դիմագծերը մեղմորեն սուզվեցին անձրևանոցի կապտականաչավուն ստվերների մեջ: Նա սիրահարված էր այդ աղջնակին և սքանչացած նրա արդուզարդի վառվռուն ու անուշ գույներով:

Էրսիլյան սկսեց երգել.

II mio papa non vuole
Ch'io spos' un bersaglier.[1]

Նրան միացան ուրիշ ձայներ էլ, ու խումբը երգելով մտավ անտառ: Քիչ անց վերելքը դժվարացավ: Շեշտակի բարձրացող սանդուղքի նման՝ լայնանիստ լեռան ձարխոտերի միջով ճանապարհը ձգվում էր դեպի վեր ու վեր:

- Ինչ հրաշալիորեն անկեղծ է այս երգը,- գովեց Քլինգզորը:

- Հայրիկը, ինչպես միշտ, դեմ է սիրահարներին: Նրանք մի լավ սուր դանակ են վերցնում և սպանում հայրիկին: Նա այլևս չկա: Նրանք այդ անում են գիշերը, ոչ ոք չի տեսնում նրանց, բացի լուսնից, որը նրանց չի մատնում, բացի լուռումունջ հրսկող աստղերից և Տեր Աստծուց, որը, սակայն, ներողամիտ ժըպ-

1 (իտ.) Իմ հայրիկը չի ուզում,
Որ ես ամուսնանամ հրաձիգի հետ:

տում է նրանց արարքի վրա: Ինչ հրաշալի և ճշմարտացի է այդ երգը: Մի այսօրվա բանաստեղծ կքարկոծվեր դրա համար:

Նրանք վեր մագլցեցին լեռնային նեղլիկ ճանապարհի եզրին աճած արևախանձ ու ճկուն շագանակենների ստվերների միջով: Երբ Քլինգզորը հայացքը բարձրացրեց՝ իր առաջ տեսավ վարդագույն, թափանցիկ գուլպաների տակից շողշողացող նկարչուհու նուրբ սրունքամկանները: Նա ետ նայեց. Էրսիլիայի սևաթուխ գլխավերևում ճոճվող անձրևանոցի փիրուզը կամար էր կազմել: Նա ոտքից գլուխ վարդագույն, մետաքսյա զգեստ էր հագել՝ միակ մուգ գունավորումը բոլոր կերպարանքների մեջ:

Կապտանարնջագույն գյուղական տնակի առջևը տարածվող մարգագետնում շաղ էին տրված կանաչ, սառն ու թթվաչ վաղահաս խնձորներ, որոնցից նրանք համտեսեցին: Նկարչուհին հիացմունքով պատմում էր պատերազմից առաջ Փարիզ կատարած իր մի շրջագայության մասին: Այո, Փարիզ, Փարիզ, ի՜նչ երջանիկ ժամանակներ էին...

- Դա այլևս երբեք չի վերադառնալու:

- Պետք էլ չէ՛,- բղավեց նկարչուհին և կատաղի ու կտրուկ շարժումով թափահարեց իր ճուռակի գլուխը:- Ոչինչ էլ չի վերադառնալու: Իսկ ինչու՞ պիտի վերադառնա: Դա ի՞նչ երեխայական ցանկություն է. գուցե պատերա՞զմն եք ուզում վերադառնա, և այն, ինչ կար նրանից առաջ, նաև այն հիմար ու ավելորդ բաները, որ հիմա դրախտի են փոխակերպվել: Այնքան լավ, հրաշալի էր Փարիզում, իսկ Հռոմում ու Առլում պարզապես սքանչելի էր: Բայց մի՞թե այսօր և այստեղ պակաս հրաշալի է: Դրախտը ոչ Փարիզն է, ոչ էլ՝ պատերազմի ու խաղաղության ժամանակները, դրախտն այստեղ է, ահա այն դիմացի լեռան գագաթին, և մեկ ժամից մենք այնտեղ կլինենք: Ահա այնտեղ չարագործ-ավազակների նման մենք իրար կասենք. այսօր մենք դրախտում ենք, ես և դու:

Անտառային արահետի բծավոր ստվերների միջից նրանք դուրս եկան բաց ու լայնարձակ ճանապարհը, որ լուսավոր ու ջերմող ոլորապտույտներով ձգվում էր դեպի բարձունքը: Քլինգզորը, մուգ կանաչ պաշտպանական ակնոց դրած, ընթանում էր վերջից և հաճախ ետ էր ընկնում, որպեսզի դիտեր կերպարանքների շարժուձևերն ու նրանց գունային համադրությունները: Նա աշխատանքի համար դիտավորյալ ոչինչ չէր վերցրել, ո՛չ անգամ նշագրությունների փոքրիկ տետրը, և սակայն քանիցս կանգ առավ՝ սքանչացած իր առջև բացված պատկերներով: Ակացիաների պուրակի եզրին, կարմրին տվող ճանապարհի վրա, միայնակ օրորվում էր նրա վտիտ ու սպիտակ կերպարանքը: Ամառը ջերմ շնչում էր սարի վրա, լույսերը երկնքից

ուղղահայաց ցած էին ծորում, իսկ գույները հազարերանգ վեր էին բարձրանում երկրի մակերևույթից: Մոտակա սարերի վրա, ուր կանաչն ու կարմիրը գունախաղ էին սկսել սպիտակ հյուղակների հետ, երևում էին լեռնաբեկորների կապտավուն գծագրումներ, նրանց ետևում՝ լույսեր ու կապույտի շերտեր, նորանոր ու թարմ ուրվագծեր, իսկ ամենից հեռվում նկատվում էին անիրական թվացող ձյունածածկ լեռների բյուրեղապակյա գագաթները: Ակացիաների ու շագանակենիների անտառներից վեր, ազատ ու խրոխտ դուրս էին ցցվել լեռների ժայռոտ կատարները և Մոնտե Սալուտի բաց մանուշակագույն ու կարմրին տվող սապատաձև գագաթը: Բայց ամենից գեղեցիկը մարդիկ էին, որ ծաղիկների պես կանգնած էին կանաչներում վառվող լույսերի մեջ, հսկայական կոյաբզեզի պես շողարձակում էին զմրուխտե անձրևանոցը, նրանից ներքև՝ Էրսիլյայի սև մազերը, վարդագույն դեմքով, ճերմակազգեստ ու նրբակազմ նկարչուհին և մյուսները: Քլինգզորը ըմբոշխնում էր այդ ամենը ծարավի աչքերով, սակայն նրա մտքերը Ջինայի հետ էին: Միայն մեկ շաբաթից ինքը կարող էր տեսնել նրան, որ հիմա քաղաքային բյուրոներից մեկում նստած մեքենագրում էր: Քլինգզորին հազվադեպ էր հաջողվում տեսնել նրան, իսկ միայնակ հանդիպել չէր ստացվում: Սակայն ինքը սիրում էր նրան, այդ աղջնակին, որի մասին ոչինչ չգիտեր, որը իրեն չէր ճանաչում ու չէր հասկանում, և որի համար ինքը տարօրինակ, հազվագյուտ մի թռչուն էր, անծանոթ ու հուչակավոր մի նկարիչ: Ինչ տարօրինակ էր, որ հենց նրանից էր կառչում իր ցանկությունը, և ոչ մի ուրիշ սիրային գավաթ իրեն չէր բավարարում: Քլինգզորը սովորություն չուներ կնոջ պատճառով երկար ճանապարհ կտրել-անցնել: Իսկ այ Ջինայի սիրույն, մի ժամ ավել նրա կողքին լինելու, նրա բարալիկ ու պստլիկ մատները բռնելու համար, ոտքով նրա կոշիկի հետ խաղալու, պարանոցին մի համբույր դրոշմելու համար՝ նա պատրաստ էր կտրել-անցնել այդ ճանապարհը: Քլինգզորը երկար խորհում էր այդ մասին, որն իր համար էլ մի զվարճալի հանելուկ էր: Մի՞թե դա շրջադարձ էր: Մի՞թե ինքը ծերանում էր: Արդյո՞ք դա Հովհաննու հակումը չէր՝ դարձը քառասնամայաներից դեպի քսանամյաները:

Վերջապես հասան լեռան ժայռոտ կատարին, և հակառակ կողմում մի նոր աշխարհ բացվեց նրանց հայացքի առաջ. դիմացը երևում էին բարձրագագաթ և անիրական Մոնտե Ջեննարոն, բարձր, զառիվեր ու շեշտակի սրածայրություններով երկինք մխրճվող բուրգեր ու գնդեր, արևը շրջանցում էր նրանց թիկունքի կողմից, և հարթավայրերը լողում էին մուգ մանուշակագույն ստվերներից գոյացող էմալե մշուշի մեջ: Այնտեղի ու այս-

տեղի միջև ծավալվում էր շողշողացող օդի շերտը, կանաչ դաշտերի պաղ ու խաղաղված բոցերի ետևում գծագրվում էր անհատակ խորություններում կորած կապույտին տվող նեղլիկ ծովակը:

Մի աննշան գյուղ երևաց սարալանջին. փոքրիկ տնակով մի կալվածք, կապույտ ու վարդագույն գունավորումներով չորսհինգ ուրիշ քարակերտ տնակներ, մատուռ, ջրհոր, բալենու ծառեր: Խումբը կանգ առավ արևախանձ ջրհորի մոտ, իսկ Քլինգզորը շարունակեց քայլել: Կամարակապ դարպասի միջով անցնելիս՝ նա հայտնվեց մի ստվերաշատ ագարակում, փոքրիկ պատուհաններով երեք կապտավուն տներ կանգնած էին բարձունքին, նրանց միջև խոտ ու կապիճ էր, ուր արածում էր մի այծ, այս ու այնտեղ եղինջներ էին աճել: Առջևից վազող երեխային Քլինգզորը մոտ կանչեց: Երեխան կանգ առավ, Քլինգզորը բռնեց նրան, շոյեց գլուխը, գրպանից շոկոլադ հանեց ու հյուրասիրեց: Դա մի փոքրիկ սևուկ աղջնակ էր, սարսափահար գազանիկի աչքերով, վախվորած ու սիրունիկ: Նրա շագանակագույն ու պըսպղուն ոտքերը մերկ էին ու բարալիկ: «Որտե՞ղ ես ապրում»,- հարցրեց Քլինգզորը: Աղջիկը վազեց դեպի մոտակա դուռը և անհետացավ նրա ետևում: Նախնադարյան քարանձավ հիշեցնող խավար ու քարակերտ սենյակից դուրս եկավ մի կին, աղջնակի մայրը, նա ևս շոկոլադ ստացավ: Կեղտոտ զգեստների միջից հառնում էր կնոջ շագանակագույն պարանոցը, դեմքը առնացի էր, արևահարված ու գեղեցիկ, շրթունքները՝ հաստ ու պիրկ, աչքերը՝ խոշոր, սեռի ու մայրության վայրի գրավչություն էր բուրում նրա լայն ու հանդարտ, քիչ կոպտավուն ասիական դիմագծերից: Քլինգզորը գայթակղված առաջ թեքվեց, կինը ժպտալով խուսափեց նրա հայացքից ու երեխային հրեց իրենց միջև: Քլինգզորը հեռացավ՝ վերադառնալու վճռականությամբ: Նա ցանկանում էր նկարել այդ կնոջը, կամ դառնալ նրա սիրե-կանը, թեկուզ միայն մի ժամով: Այդ կինն ամեն ինչ էր. մայր, երեխա, սիրուհի, կենդանի, մադոննա:

Սիրտը ցնորքներով արբած՝ Քլինգզորը դանդաղ քայլերով մոտեցավ բարեկամների խմբին: Ագարակի քարե ցանկապատից, որի ետևի բնակարանը անմարդաբնակ ու լքված էր թվում, կախ էին տված հնամաշ ու կոպիտ թնդանոթառումբեր, նեղլիկ սանդուղքը մացառուտների միջով առաջնորդում էր դեպի պուրակն ու բլուրը, վեհապանծ հուշարձան հիշեցնող տարօրինակ ու մեկուսի կանգնած մի կիսանդրու մոտ, որի հանդերձանքը, գանգուրներն ու ալեծուփ մորուքը ասես Վալլենշտայնինը լինեին: Մի ինչ-որ տեսիլային ու ֆանտաստիկ բան կար լեռան ճախրանքի, շողարձակող կեսօրվա լույսերի մեջ, ասես հեքիաթի հրաշքն

էր դարան մտել այնտեղ, և աշխարհը երևակվում էր անծանոթ ու օտարոտի հնչողությամբ: Քլինգզորը աղբյուրից ջուր խմեց, հետո մի առագաստաթիթեռնիկ մոտ թռավ և սկսեց ծծել կրաքարե շատրվանից ցայտած կաթիլը:

Լեռնաշղթայի ետևում ձգվում էր շագանակենիներով ու ընկուզենիներով եզերված արևաշատ լեռնային ճանապարհը: Ճանապարհի շրջադարձի կետում կանգնած էր մի մատուռ, կիսավեր ու դեղնած, որի որմնախորշերում խունացած պատկերներ էին երևում, կարմրաշագանակագույն զգեստներ հագած հրեշտականման ու մանկատեսիլ մի սրբի գլուխ, պատկերի մնացած մասերը ջնջված էին: Քլինգզորը շատ էր հավանում հին նկարները, մանավանդ, երբ նրանք անսպասելիորեն դիմացն էին հայտնվում: Նա անչափ սիրում էր այդ որմնանկարները, փընրուն ու նուրբ այդ ստեղծագործությունների վերադարձը հող ու փոշու գրկից:

Կրկին ծառեր, խաղողի վազեր, շոգ ու կուրացուցիչ փայլ արձակող ճանապարհներ, ևս մի շրջադարձ, ահա և հանկարծակի ու անակնկալ աչքերի առաջ բացվեց արշավի նպատակակետը. մի խավարչտին դարպաս, ինքնավստահ հրճվանքով դեպի երկինք ձգվող մի մեծադիր ու բարձր, կարմիր քարից կառուցված եկեղեցի, փոշով ու խաղաղությամբ շնչող արևաշատ մի հրապարակ, կարմրին տվող ու արևահար մրգասեզեր, որ ոտքի տակ ընկնելով՝ կոտրատվում էին, վառվռուն պատերից արտացոլվում էր կեսօրվա լույսը, ահա այն պատվանդանը, որի հիմքի վրա վեր էր խոյանում անտեսանելի արևահորձանքից բոցավառվող մի կոթողային կերպարանք, կապույտ անվերջությունից էլ վեր, ընդարձակ հրապարակի շուրջբոլորը եզրագծվում էր մի քարե պատվար: Դրա ետևում գյուղն էր՝ Կարենոն, խունացած շագանակագույն աղյուսների դիմաց գծագրվում էին հինավուրց, սրածայր, մռայլ ու սարակինոսյան մթությամբ ճնշող քարե բարձունքները, աներազ ու խավարչտին ծանրությամբ փռված փողոցները, արեգակի ճերմակ շողերի ներքո ջերմախտից ճչացող փոքրիկ հրապարակները, Աֆրիկան ու Նագասակին, ավելի բարձրում՝ ընդարձակ դաշտավայրը, սպիտակ, ճարպակալած ու կուշտ ամպերը, ներքևում՝ կապույտին տվող բլուրները:

- Ծիծաղելի է նույնիսկ,- ասաց Քլինգզորը,- թե ինչքան երկար ժամանակ է պահանջվում, մինչև որ մարդ կամաց-կամաց սկսում է ճանաչել իրեն շրջապատող աշխարհը... Տարիներ առաջ, երբ գիշերային ճեպընթացով ճանապարհվում էի դեպի Ասիա, այս վայրերի մասին ես գաղափար իսկ չուեի, թեև իմ գնացքը այստեղից մի վեց-տասը կիլոմետր հեռավորությամբ էր անցնում: Ես ուղևորվում էի դեպի Ասիա, այդ ճանապարհոր-

դությունն այն ժամանակ ինձ համար անհրաժեշտություն էր: Բայց այն ամենը, ինչ այնտեղ տեսա, ահա այդ ամենը տեսնում եմ նաև այսօր, այստեղ. կուսական անտառ, կիզիչ տապ, խաղաղ նյարդերով և հրաշագեղ օտարականներ, արև ու սրբատեղիներ: Մարդուց երկար ժամանակ է պահանջվում, մինչև որ նա սովորում է մի եզակի օրվա ընթացքում այցելել երեք աշխարհամասերը: Նրանք այստեղ են հիմա: Բարի գալուստ, Հնդկաստան: Բարի գալուստ, Աֆրիկա, Ճապոնիա:

Բարեկամները ճանաչում էին երիտասարդ մի տիկնոջ, որ բնակվում էր այստեղ, բարձունքի վրա, և Քլինգզորը շատ էր ուրախացել այդ անծանոթուհուն այցելելու հեռանկարով: Քլինգզորը նրա անունը կնքեց Լեռների Թագուհի, այդպես էր կոչվում իր մանկության տարիներին կարդացած գրքերից մեկում տեղ գտած մի խորհրդավոր արևելյան հեքիաթ:

Սպասողական տրամադրության մեջ՝ բարեկամների քարավանը քայլում էր նեղլիկ արհետներում կուտակված կապույտ ստվերների կիրճով, շուրջը ոչ ոք չկար, ոչ իսկ հավ կամ շուն, լռություն էր կատարյալ: Բայց ահա պատուհանը շրջանակող կիսաստվերի մեջ Քլինգզորի աչքովն ընկավ մի լուռ կերպարանք. մի գեղեցիկ, սևաչյա աղջիկ էր՝ կարմիր գլխաշորը սև մազերի շուրջը կապված: Օտարականներին խաղաղ դարանակալող աղջկա հայացքը հանդիպեց իրենին. շունչ քաշելու չափ երկար տևող մի պահ, անզուսպ ու կրքոտ խանդով տղամարդն ու աղջիկը նայեցին իրար աչքերի մեջ, երկու օտար աշխարհներ մի պահ իրար մոտեցան: Հետո երկուսն էլ ժպտացին կարճ ու սրտագին՝ սեռերի հավերժական ողջույնով, իրար նկատմամբ տածած հինավուրց, քաղցր ու անհագ թշնամությամբ: Հասնելով տան կողապատին, երբ արդեն անծանոթուհուց միայն մի քայլ էր բաժանում, նա իր անուրջի թևով մեղմորեն տնտղեց աղջկա հոգին, երազային պատկերները իրար միախառնված ձգվեցին շարան-շարան: Ինչ-որ պստլիկ մի փուչ խրվեց Քլինգզորի սիրտը, մի պահ նա քայլերը դանդաղեցրեց և որոշեց վերադառնալ, բայց հանկարծ Ագոստոն կանչեց նրան, Էրսիլյան մի նոր երգ էր սկսել: Նրա աչքերի առաջ ստվերաշատ պատը հանկարծ անհետացավ, դիմացը հայտնվեց խաղաղորեն շողշողացող մի պստլիկ հրապարակ, որի կենտրոնում վեր էին խոյանում դեղնավուն երկու ապարանքներ, որ ասես մեղմ տարուբերվում էին կեսօրվա կախարդիչ գույների մեջ: Քարաշեն ու նեղ պատշգամբներով, անթափանց վարագույրներով ծածկված մի հրաշագեղ դեկորացիա էր այն, որ հիշեցնում էր օպերային ներկայացման առաջին գործողությանը նախորդող հանդիսավոր տեսարանը:

- Ժամանում Դամասկոս,- բղավեց դոկտորը:- Որտե՞ղ է ապ-

ռում Ֆաթման՝ մարգարիտը ի կանայս:

Պատասխանն անսպասելիորեն լսվեց՝ փոքրիկ ապարանքից: Կիսափակ պատշգամբի դռան ետևի խավարի միջից մի տարօրինակ ձայն պայթեց, հետո էլ մեկ ուրիշը, և այսպես մի տասն անգամ իրար ետևից, հետո դրան միացավ մի օկտավ, ապա դաշնամուրը, որն ասես լարելիս լինեին, հետո դաշնամուրն հնչեց ավելի ներդաշնակ՝ Դամասկոսի ճիշտ մեջտեղում:

Հենց այստեղ էլ նա ապրում էր: Թվում է, տունը դարպաս չուներ, այլ միայն զույգ պատշգամբով վարդագույն ու դեղին պատեր էին կանգնած, վերևում, շենքի վերնաճակատի սվաղին մի նկար էր պատկերված, կապույտ ու կարմիր ծաղիկներով, մեջտեղում՝ մի թութակ: Այստեղ մի նկարազարդ դուռ կպատշաճեր, և երբ մարդ այն երեք անգամ բախեր, արտասաներ Սողոմոնի մոգական խոսքերը՝ նկարազարդ դարպասը պիտի բացվեր և թափառաշրջիկին դիմավորեր պարսկական յուղաներկի բույրը, իսկ քողի ետևում, բարձր գահավորակին՝ նստած պետք է լիներ Լեռների թագուհին: Ահա ստրկուհիները կծկված-նստած են նրա ոտքերի մոտ, աստիճանների վրա, իսկ բազմաբղետ թութակը ճախրում և ճիչ արձակելով նստում է տիրուհու ուսին:

Փողոցի անկյում մի պատլիկ դուռ երևաց, վերևից կախ էր ընկած սատանայական մեխանիզմով մի հսկայական զանգ, որ զնգում էր չարաղետ ու զիլ ձայնով, նրա կողքին՝ մի նեղ սանդուղք առաջնորդում էր դեպի վերև: Ձես հասկանում, թե այդ դաշնամուրը ինչպե՞ս էր տուն բերվել: Պատուհանի՞ց, թ՞ե տանիքից:

Հանկարծ մի մեծ, սև շուն դուրս նետվեց տնից, ետևից մի փոքրիկ չիկաբաշ առյուծ հայտնվեց: Զորս կողմն աղմուկ էր ու իրարանցում, սանդուղքը ճռճռում էր, իսկ հեռվում, արդեն տասնմեկերորդ անգամ, դաշնամուրը նույն եղանակն էր նվագում: Վարդագույն, ծեփածո սենյակից մեղմանուշ ու նուրբ լույս էր բխում: Դռները փակ էին: Գուցե թութակը հենց այնտեղ էր:

Հայտնվեց նաև Լեռների թագուհին, այդ նրբակազմ ու դյուրաթեք ծաղիկը, ձիգ ու ճկուն, ամբողջովին կարմրի մեջ ամփոփված, բոցավառվող կրակ էր նա ու երիտասարդության տիպար: Քլինգզորի աչքերի առաջ փոշիանում էին հարյուրավոր սիրելի պատկերներ և նորերն էին հայտնվում ցոլցոլալով: Քլինգզորը անմիջապես կռահեց, որ ինքն անպայման պետք է նրան նկարի, բայց ոչ թե նրա բնությունը ընդօրինակելով, այլ նրա միջի բռնկումն ու փայլատակումը, որ առաջին իսկ հայացքից իրեն շլացրեց, պետք է նկարի նրա բանաստեղծական կերպարն ու հրաշագեղ, դառնանույշ ձայնը, այդ ամազոնուհու երի-

տասարդությունը, կարմիր հանդերձանքն ու խարտիշագեղությունը: Բայց դեռ պետք էր նրան մի լավ զննել: Դեռ պետք էր տեսնել, թե ինչպես էր նա քայլում, ծիծաղում, պետք էր տեսնել ու լսել նրա երգն ու պարը: Օրը հիմա թագադրվել ու գտել էր իր իմաստը: Այսուհետև ինչ էլ տեղի ունենար՝ այն լինելու էր միմիայն նվիրատվություն, պարգև, շնորհ և առատաձեռնության հաղթարշավ: Միշտ էլ այդպես էր լինում. ապրումը երբեք միայնակ ի հայտ չէր գալիս, նրա առջևից միշտ էլ թռչուններ էին թռչում, սուրհանդակներն ու նախանշանները ավետաբերների հանգույն մշտապես առաջնորդում էին նրան, այս ու այնտեղից, դուռ ու լուսամուտից ուշիուշով հետևում էին նրան, հետապնդում էին՝ մայրաքար շոյող ասիական կենդանակերպ հայացքներն ու գյուղաշխարհի խորհրդավոր գեղեցկությունները: Բոլորի ուշադրությունը նրան էր սևեռված:

Հանկարծ նա սքանչացած բացականչեց.- Երանի՜ ես մի տասը տարով երիտասարդ լինեի, այնժամ նա իմը կլիներ, ինձ կտրվեր ու կշոյեր ինձ իր մատներով... Օ՜, ոչ, դու շատ ես երիտասարդ փոքրիկ կարմիր թագուհի, դու շատ փոքր ես ծեր ու կախարդ Քլինգզորի համար... Նա միայն կհիանա քեզնով, անգիր կանի քո գծերը, կնկարի և քո երիտասարդության երգը հավերժության մատյանում կգրանցի, բայց նա քեզ համար ոչ մի ուխտագնացություն չի կատարի, ճոպանե սանդուղքով քո ետևից վերև չի մագլցի, քմահաճույքիդ համար ոչ ոքի չի սպանի, և քո հրաշալի պատշգամբի տակ սերենադներ երգելով գիշերներ չի լուսացնի: Ավա՜ղ նա այդ ամենը չի անի, ծեր նկարիչ Քլինգզորը, ծերուկ հիմարը: Նա քեզ ինչպես պետք է չի սիրի, մեղսական հայացք ետևիցդ չի գցի, մինչդեռ ասիական դիմագծերով այն կնոջ կամ պատուհանի միջից նայող սևուկից հայացքը չէր կըտրում, իսկ նրանք քեզնից շատ ավելի տարիքով էին: Նրանց համար Քլինգզորը շատ ծեր չէ, այլ միայն քեզ համար, Լեռների թագուհի, լեռան կարմիր ծաղիկ: Քեզ համար, ո՜վ դու վայրի մեխակ, Քլինգզորը խիստ ծեր է: Մանր աշխատանքային օրվա և դրան հաջորդող կարմիր գինու առատությամբ ծավալվող երեկոյի միջնատարածքում Քլինգզորի պարգևած սերը քեզ չի բավարարի: Այնքան ավելի լավ կըմպեմ ես քեզ իմ աչքերով և կիմանամ քո մասին ու քեզ կճանաչեմ, օ՜, իմ նրբակազմ հրթիռ, երբ դու ինձ համար վաղուց հանգած կլինես:

Սալահատակ ու կամարակապ սենյակների միջով անցնելով՝ նրանք մտան մի մեծ սրահ, ուր բարձր դռներին շողշողում էին արտասովոր ու վայրի ծեփածո կերպարանքներ, նրանց շուրջը, մուգ ծոփորի վրա նկարված էին դելֆիններ, ճերմակ նժույգներ և վարդակարմրագույն ամուրներ, որ լողում էին խիտ բնակեց-

ված առասպելական ծովում: Բացի մի զույգ աթոռներից և հատակին կտոր-կտոր շարված դաշնամուրի մասերից՝ ուրիշ ոչինչ չկար այդ հսկայական սենյակում, իսկ երկու հրապուրիչ դռներ առաջնորդում էին դեպի օպերային հրապարակի վրա շողշողացող երկու փոքրիկ պատշգամբները, սրանց դիմաց՝ փքված ու գոռոզ կերպարանքով կանգնած էին հարևան ապարանքի պատշգամբները, նրանք նույնպես նկարազարդ էին, այնտեղ մի կարմիր, ճարպակալած կարդինալ էր լողում, ինչպես ոսկե ձկնիկը արևի ներքո:

Նրանք հենց այստեղ էլ տեղավորվեցին: Հենց սրահում պաշարեղենի կապոցները բաց արվեցին, և սեղան գցվեց, հետո գինի մատուցվեց, հյուսիսային սպիտակ գինի՝ պարոնայք հիշողությունների բանալին: Լարից ընկած դաշնամուրի ձայնը բռնել էր ողջ ապարանքը, քիչ հետո անդամահատված գործիքը լռեց: Մտքերին տրված՝ Քլինգզորը աչքերը հառել էր դաշնամուրի մերկ փորոտիքին, հետո նա դանդաղ փակեց կափարիչը: Զնայած աչքերը ցավում էին, սակայն նրա սրտում դեռ շարունակում էր երգել ամառային օրը, երգում էր սարակինոսուհի մայրը, կապույտ ու զիլ ձայնով զրնգում էր Կարենոյի երազը: Նա ուտում էր ու սեղանակիցների հետ չրխկացնում բաժակները, պայծառ ժպիտը դեմքին՝ զրուցում էր սրա-նրա հետ, բայց մտովի ուրիշ տեղ էր, նրա մտքերի գործարանը նորանոր տեսիլքներ էր հունցում, հայացքը թափառում էր վայրի մեխակների ու կրակե ծաղկեփնջի մատույցներում, այդպես միայն ջուրն է իր մեջ ընդգրկում ձկանը: Մի ջանասեր ժամանակագիր էր նստած նրա ուղեղում, որ, կարծես, հավաստի ու արժանահավատ թվասանդղակներում ճշգրտությամբ գրանցում էր շրջապատի ձևերը, ռիթմերն ու շարժումները:

Դատարկ սրահը լեփ-լեցուն էր խոսակցություններով և ծիծաղով: Խելացի ու բարեմիտ ծիծաղում էր դոկտորը, խորամանկ ու բարեկամաբար՝ Էրսիլյան, ուժգին ու ստորգետնյա որոտընդոստ դղրդոցով հռհռում էր Ագոստոն, նկարչուհին ժպտում էր թռչնի թեթևությամբ, բանաստեղծը խելացի մտքեր էր արտահայտում, Քլինգզորը կատակում էր, քննախույզ հայացքով և փոքր-ինչ վեհերոտ շրջում էր կարմրազգեստ թագուհին իր հյուրերի, դելֆինների ու նժույգների միջև, վազում էր այս ու այնտեղ, կանգնում էր դաշնամուրի մոտ, թիկնում բարձերին, հաց էր կտրում ու գինի մատուցում՝ անփորձ աղջնակի պես: Ուրախ հրճվանքը զիլ զրնգում էր սառնաբույր դահլիճում, հավաքվածների սև ու կապույտ աչքերը պսպղում էին, պատշգամբների լուսավոր ու բարձր դռների առաջ որպես արթուն պահակ հսկում էր լուսավառ ու զրնգուն կեսօրը:

Բաժակներում հոսում էր ազնիվ ու լուսաթաթախ գինին, այն կարծես մի հրաշալի հակադրություն լիներ սառն ուտելիքի նկատմամբ: Բարձր սրահների միջով շքեղաշուք սահում էր թագուհու հանդերձանքից ճառագող կարմրափայլը, տղամարդկանց լուսավառ ու քիչ-քիչ հասունացող հայացքները ուշի-ուշով հետևում էին նրան: Մի պահ նա անհետացավ, հետո կրկին հայտնվեց՝ ուսերին մի կանաչ շոր գցած: Նորից անհետացավ, ու երբ վերադարձավ՝ այս անգամ կապույտ գլխաշոր էր կապել:

Հոգնած ու հագեցած խմբի ուրախությունը կերուխումից հետո փոխադրվեց անտառ: Այստեղ նրանք մեկնվեցին խոտ ու մամուռի մեջ, արևային հովանոցները պսպղում էին, ընդարմացած դեմքերը շողում արևի ներքո, իսկ ամառային օրը փայլատակում էր ու բոցավառվում: Կանաչ խոտերի մեջ, որպես կարմիր մի բիծ պառկել էր Լեռների Թագուհին: Բոցերի միջից պարզորոշ հստակությամբ երևվակվում նրա հոյակապ պարանոցը, բարձրաճիտ կոշիկը անբռնազբոս ու ընդգրկուն նստած էր նրա նուրբ ոտքին: Կողքին կանգնած Քլինգզորը ուշի-ուշով զննում էր նրա հայացքը, ուսումնասիրում նրան, լցվում նրանով, ինչպես տարիներ առաջ, մանուկ հասակում, երբ կախարդական պատմություններ էր կարդում Լեռների Թագուհու մասին: Դա մի համատարած հանգստություն էր ու նիրհ, այս ու այնտեղ զրուցում էին, կռիվ տալիս մրջյունների հետ, երևակայում թե օձի ձայն են լսում, կանաց մազերից կախ էին ընկել շագանակենիների փշակեղևները: Քլինգզորը մտածում էր իր բացակա ընկերների մասին, որոնք իրենց ներկայությամբ շատ կպատշաճեին օրվա այդ պահին, նրանք շատ չէին, Քլինգզորի այդ ընկերները: Լուի Վայրագը պետք է այստեղ լիներ, Քլինգզորի հին բարեկամը, կարուսելների ու կրկեսների նկարիչը, նրա թռչնային անիրական հոգին ճախրում էր շրջապատի գլխավերևում:

Հետճաշյա ժամերը հալվեցին դրախտում անցկացված տարվա պես: Հրաժեշտի պահին կուշտ ծիծաղեցին, Քլինգզորը այդ ամենը մտապահեց իր սրտի խորքում. թագուհին, ապարանքն ու դելֆինների սրահը, զուլդ շներն ու թութակը:

Ընկերների խմբի հետ սարերից իջնելիս՝ նա աստիճանաբար գտավ իր ուրախ ու ոգեշունչ տրամադրությունը, որ միայն հազվագյուտ օրերի էր իրեն վիճակվում ապրել. դա լինում էր այն ժամանակ, երբ ինքը ազատակամ լքում էր աշխատանքը: Էրսիլյայի, Հերմանի ու նկարչուհու հետ ձեռք-ձեռքի տված, երեխայի պես կատակելով ու բառախաղեր անելով, անհոգ ու ծիծղուն, նա պարում էր արևոտ ճանապարհներին, երգեր էր երգում ու զվարճանում: Հետո հանկարծակի առաջ էր պոկվում, պահ մըտնում թաքստոցում, անսպասելիորեն դուրս վազում ու վախեց-

նում սրան-նրան:

Արևը մարդկանցից ավելի արագ էր ընթանում, արդեն Պալացեստոյի մոտ նա լեռան հետևն անցավ, հովտում սկսեց երեկոյանալ: Ճանապարհորդները մի պահ մոլորվեցին, արդեն շատ էին վեր մագլցել, սոված էին ու հոգնած, հարկավոր էր հրաժարվել երեկոյի համար նախատեսված պատրաստություններից: Հացաբույսերի միջով Բարենյո գնալն ու լճափնյա պանդոկում ձուկ ճաշակելու միտքն այլևս անիրական էին թվում:

- Սիրելիներս,- ասաց Քլինգզորը, որ նստած էր ճանապարհի մի կիսավեր պատի վրա,- մեր մտադրությունները շատ հրաշալի էին, հոյակապ պիտի լիներ նաև իրիկնահացը ձկնորսների մոտ կամ Մոնտե դ'Օրոյում, այդ ամենի համար ես անչափ շնորհապարտ եմ ձեզ: Բայց մենք ավելի հեռու չենք գնա, գոնե ես՝ չեմ կարող: Ես հոգնել եմ, սովն էլ մաշում է որովայնս: Ես այստեղից այլևս ոչ մի քայլ չեմ անի, ավելի ճիշտ՝ հենց հիմա կգնամ մոտակա գինետունը, որը չեմ կարծում, թե այստեղից հեռու լինի: Այնտեղ մի պուտ գինի ու մի կտոր հաց կճարվի, դա էլ հենց իմ ուզածն է: Ո՞վ է գալիս ինձ հետ:

Բոլորը հետևեցին նրան: Գետնափոր-գինետունը իրոք հեռու չէր, լեռնային անտառի մի նեղ հատվածում, ծառասաղարթների ներքո տեղադրված էին քարե նստարաններ ու սեղաններ, գինետան մառանից պանդոկապետը սառը գինի բերեց ու թարմ հաց: Այժմ նրանք լուռ նստել և հաց էին ուտում, ուրախ էին, որ վերջապես հանգրվան գտան: Բարձրարերձ ծառաների ետևում հանգչում էր օրը, կապույտ լեռը մթագնեց, կարմրին տվող ճանապարհը ճերմակեց, ներքևում, գիշերային ճանապարհներին լսվում էր սայլի ճռինչն ու շների հաչոցը: Երկնքում՝ այս ու այնտեղ աստղերն էին հայտնվել, իսկ երկրի երեսին լույսեր էին վառվում, և միանգամից դժվար էր դրանք իրարից զանազանել:

Երջանիկ տրամադրության մեջ՝ Քլինգզորը նստել ու հանգստանում էր: Նայում էր գիշերվա պատկերներին, դանդաղորեն կուլ տալիս սև հացը ու լուռ դատարկում գինով լի կապտավուն գավաթները: Հագենալուց հետո՝ վերստին սկսեց զրուցել ու երգել, ճոճվում էր երգի տակտին համապատասխան, կատակում կանանց հետ, նրանց մազերի բույրը շնչում: Գինին նրան դուր էր գալիս: Ծեր գայթակղիչին հեշտությամբ հաջողվեց բարեկամներին ետ պահել ճանապարհը շարունակելու մտքից, նա շարունակ գինի էր խմում կամ մատուցում, սիրահոժար չրխկացնում էր գավաթն ու դատարկում, նորի՛ց գինի պահանջում: Կավե կապտավուն գավաթների միջից դանդաղորեն վեր էին խոյանում անցողիկության խորհրդանիշները, խայտաբղետ փերիները թափառում էին աշխարհով մեկ, իրենց փայլով գունազարդում

աստղերն ու գիշերային լույսերը:

Նրանք նստած էին բարձրում օրորվող ճոճանակին՝ աշխարհի ու գիշերվա անդունդի մեջ ընկղմված: Նրանք ասես ոսկե վանդակի մեջ առնված թռչուն լինեին՝ անհայրենիք ու անհոգ տարուբերվող աստղերի տակ: Այդ թռչունները տարաշխարհիկ երգեր էին երգում, նրանց երևակայությունը զմայլված սրտով ճախրում էր գիշերվա մեջ, երկնքում, անտառում, կախարդական տիեզերքում: Պատասխանը գալիս էր արևից ու լուսնից, ծառից ու լեռներից, Գյոթեն էր նստած այնտեղ ու Հաֆեզը, ջերմ բուրում էին Եգիպտոսն ու Հունաստանը, Մոցարտը ժպտում էր, Հուգո Վոլֆը[1] դաշնամուր էր նվագում խելացնոր գիշերվա մեջ:

Հանկարծ սարսափելի թափով աղմուկն ու իրարանցումը պայթեց, շաչոցի ուղեկցությամբ մի լույս առկայծեց. երկրի սրտից բարձացող հարյուրավոր շողարձակող պատուհաններով զրահավորված՝ նրանց մոտով սլացավ գիշերային լեռներում թափառող երկաթուղային գնացքը: Երկնքում հնչում էին անտեսանելի եկեղեցու զանգերը: Կիսալուսինը զգուշորեն բարձրացավ ու կանգնեց սեղանի գլխավերևում, նրա ցոլքը առկայծում էր մթնդած գինու մակերևույթին, համատարած խավարի մեջ նա լուսավորեց մի կնոջ բերանն ու աչքերը, ապա ժպտաց, ավելի բարձրացավ ու սկսեց երգել աստղերի հետ: Լուի Վայրագի հոգին միայնակ պպզել էր նստարանի եզրին ու նամակներ էր գրում:

Քլինգզորը՝ Գիշերվա Արքան, բարձր թագը մազերի մեջ խըրած, մեջքով հենված քարե նստարանին՝ չափ էր տալիս աշխարհի շուրջպարին, աշխատում էր ամեն կերպ տակտը պահել, հրավերք էր կարդում լուսնին և նույնիսկ չնկատեց, թե ինչպես գնացքն անհետացավ: Այն կորավեց-հանգավ, ինչպես հորիզոնում երևակվող համաստեղություն: Որտե՞ղ էր Լեռների թագուհին, այս անտառում ինչու՞ չէր հնչում դաշնամուրի նվագը, մի՞թե հեռուներում լռել էր փոքրիկ ու անիրական առյուծը և չէր մռնչում այլևս: Ախր ու՞ր կորավ նա, չէ՞ որ քիչ առաջ այստեղ էր՝ կապույտ գլխաչորով: Ողջո՛ւյն քեզ, ծերուկ աշխարհ, տես, որ հոգսերիդ բեռի տակ կքած՝ հանկարծ չփլուզվես: Ահա և անտառը, ահա սև լեռը... Տակտից չպետք է հեռանալ... Աստղեր, աստղեր, ի՜նչ կապույտ ու կարմիր եք դուք: Ի՜նչ լավ է ասված ժողովրդական երգում, «Քո կարմիր աչքերն ու կապույտ շրթունքները...»:

Նկարելը հրաշալի բան է, դա մի սքանչելի խաղ է խիզախ ջահելների համար: Բայց ավելի մեծազոր ու զորեղ է աստղերին չափ տալը՝ ըստ սեփական արյան շրջանառության առաջադրած

1 Ավստրիացի երգահան և երաժշտական քննադատ:

տակտի, սեփական աչքի ցանցաթաղանթի գունասանդղակը աշխարհի կենտրոնում տեղադրելը, սեփական հոգու ճախրանքը գիշերային քամու մեջ թափահարելը: Զքացի՛ր սև լեռ... Ամպ դարձիր, թռի՛ր Պարսկաստան, Ուգանդայի վրա անձրևիր... ի՛նձ մոտեցիր Շեքսպիրի հոգի, մեզ համար երգիր անձրևի մասին պատմող քո հարբած ու խենթ երգը, օրավուր տեղացող անձրևի...

Հենված անծանոթ կնոջ հաճելիորեն շնչող կրծքին՝ Քլինգզորը համբուրում էր մեկ ուրիշի փոքրիկ ձեռքը: Սեղանի տակ ինչ-որ մեկը խաղում էր իր ոտքի հետ: Թե այդ ում ձեռքն ու ոտքն էին՝ չգիտեր, նա լոկ քնքշություն էր զգում շուրջը, երախտագիտորեն տրվել էր հնօրյա կախարդանքի պաշտամունքին, նա դեռ երիտասարդ էր զգում իրեն և հեռու, անչափ հեռու էր վախճանի մտքից, ցնծությունն ու գայթակղությունը դեռ ճառագում էին նրա հոգուց, այդ բարի, աքանչելի ու երկչոտ կանայք դեռ սիրում էին իրեն ու հուսներ փայփայում:

Նորելուկ ծաղկի նման Քլինգզորն ավելի ու ավելի էր փրթթում: Մեղմ ու երգեցիկ ձայնով նա սկսեց մի ծավալուն վեպ պատմել, մի սիրո պատմություն, ավելի ճիշտ՝ հյուսիսային ծով կատարած իր մի ճամփորդությանն էր դա վերաբերում, երբ ինքը, Գոգենի ու Ռոբինզոնի հրավերքով, հայտնագործեց Թուքակների կղզին և հիմնեց Երջանիկ Կղզիների Ազատ Հանրապետությունը: Ինչպես էին հազարավոր թուքակները շողշողում իրիկնալույսի մեջ, ինչպես էին կանաչ ծովախորշի մեջ արտացոլվում նրանց կապույտ պոչերը... Նրանց արձակած աղմուկ-աղաղակն ու հսկայական կապիկների հազարաձայն ճիչերը խլացուցիչ որոտի նման դիմավորեցին իրեն՝ Քլինգզորին, երբ նա հրռչակեց նրանց Ազատ Հանրապետությունը: Ապիտակ կակաղուին նա հանձնարարեց նախարարների կաբինետը կազմել և փնթփրնթան ռնգեղջյուր-թռչունի հետ ծանր կոկոսե բաժակները չրրխկացնելով՝ արմավենու գինի խմեց: Ով դու ծերուկ լուսին, որ անուշ ժպտում ես երջանկավետ գիշերվա մեջ ամփոփ եղեգնահյուս հյուղակի գլխավերևում... նրան կոչում էին Կյուլ Կալյուա, շագանակագույն մաշկով ու վախվորած արտաքինով, նրբակազմ ու երկարանգամ այն արքայադուստրը, որ քայլում էր բանանների պուրակում, հսկա տերևների մեղրափայլ ու հյութալի տանիքի ներքո, նրա հեզանազ դեմքին այծյամի աչքեր էին, իսկ ճկուն մեջքում՝ կատվային խանդ ու հույզ, կատվաթռիչ խոյանք էր ամփոփված նրա հեզաճկուն մատների, մկանուտ ու ֆլոպինգ ոտքերի մեջ: Կյուլ Կալյուան, այդ մանկիկը, արբազան հարավ-արևելքի նախատեղծ խանդի, ջերմության, անմիջականության ու մանկական անմեղության այդ միագումարը, ու՞ր է նա

արդյոք, նա՝, որ բազում գիշերներ է լուսացրել Քլինգզորի գրկում, ի՜նչ հիասքանչ ու սրտառուչ գիշերներ էին դրանք, թովչանքի հավերժող տոնախմբություն... Ո՜վ երկրի ոգու սրբազան տոնահանդես, Աստծո հրաշակերտած այս եզերքի ո՞ր ան-կյունում են հիմա պար գալիս Թուքակների կղզու կույսերը...

Կղզու, Ռոբինզոնի, Քլինգզորի և այդ պատմություններն ունկնդրողների գլխավերևում կամար էր կազմել սպիտակ աստղերով զարդարուն գիշերը, հանդարտորեն շնչող կրծքավանդակի ու ծառերի ներքո գոյացած ծովածոցի նման՝ քնքշորեն ուռչում էր լեռը: Նրա շնչառությունը փոխանցվում էր շրջապատում սփռված տնակներին ու մարդկանց ոտքերին... Երկնքի կիսակամարի վրա հապշտապ ու տենդագին շարժումներով պարում էր սառնաշունչ լուսինը, նրան ուղեկցում էր աստղերի վայրիվերո ու համբախոս պարը: Աստղերը, շղթա կազմած, շարվել էին դրախտ տանող ճոպանուղու պսպղացող գծալարերին: Կուսական անտառը մայրաբար շողշողում էր, վաղնջական ժամանակներում գոյացած աշխարհի տիղմն ու ցեխը բուրում էին կործանմամբ ու բեղմնավորումով, այս ու այնտեղ սողում էին օձերն ու կոկորդիլոսները, արարածների ստվարատարած հեղեղը նորանոր տիրույթներ էր գրավում...

- Ես նորից պետք է ձեռքս առնեմ վրձինը,- ասաց Քլինգզորը,- հենց վաղ առավոտից սկսում եմ նկարել: Բայց ո՞չ այլևս այս տները, ո՞չ էլ այս մարդկանց ու ծառերը: Նկարելու եմ կոկորդիլոսներ ու ծովաստղեր, վիշապներ ու պուրպուր հագած օձեր, և այդ բոլորը դառնալիության մեջ, փոխակերպության պահին, մարդ կամ աստղ դառնալու տենչանքով տոգորված, հղի ծնունդով ու նեխումով, աստծով ու մահով լիացած:

Այն պահին, երբ նա խաղաղ զրույցի էր բռնվել, հոգեկան զմայլանքի ու արբածության այդ ժամին, հանկարծ զիլ ու վճիտ հնչեց Էրսիլյայի ձայնը, որ հանգիստ ու մեղմօրոր ծոր էր տալիս bel mazzo di fiori[1] երգը, և խաղաղություն էր սփռվում նրա երգից: Քլինգզորը ուշի-ուշով հետևում էր երգի հնչյուններին և կարծես բաց ծովում լողացող մի կղզում հայտնված լիներ ինքը, ժամանակից վերացած ու միայնակ: Նա շրջեց գինու դատարկված գավը և մի կողմ հրեց այն: Այժմ նա համակ լսողություն էր: Ահա այստեղ մի երեխա էր երգում, իսկ այնտեղից ծորում էր մայրական անուշ մեղեդին: Այդ պահին նրան ինչ-որ անիծված ու գարշելի տրամադրություն էր համակել, թվում էր, թե ինքը աշխարհային տիղմի մեջ խորասուզված շրջմոլիկ սրիկա է և կամ մի պստլիկ ու անմիտ երեխա...

---

1 (իտ.) գեղեցիկ ծաղկեփունջ:

- Էրսիլյա,- ասաց նա հարգալից տոնով,- դու մեր բարի աստղն ես:

Մթամած անտառի միջով լեռնիվեր մագլցելով, ճյուղ ու արմատներից կառչելով, խումբը սահում էր հեզ ու խաղաղ՝ տունդարձի ճանապարհին հետամուտ: Վերջապես հասան անտառի լուսավոր եզրին, նրանց աչքերի առաջ տարածվեց ընդարձակ դաշտավայրը, սիմինդրի դաշտով անցնող նեղ կածանը շնչում էր գիշերով ու վերադարձով, լուսնի հայացքը շողշողում էր սիմինդրների տերևների մեջ ու խաղողի վազերի շեղությամբ փախչող շարքերում: Հիմա Քլինգզորը երգում էր մեղմօրոր, կերկերուն ու խռպոտ ձայնով, երգում էր գերմաներեն ու մալայերեն, բառերով ու առանց բառերի: Ջերմաշունչ մեղեդու միջոցով նա հնչեցնում էր ամբարված լիության ձայները՝ այնպես, ինչպես երեկոյան կողմ շագանակագույն պատն է իր միջից արտահեղում ցերեկվա ընթացքում կուտակած արևալույսը:

Այստեղ բարեկամներից մեկը հարժեշտ տվեց, ապա մեկ ուրիշը, որ շուտով անհետացավ խաղողի վազերի ստվերների մեջ հազիվ նշմարվող նեղլիկ արահետում: Ամեն մեկն իր խոհերին տրված՝ գնում էր ու վերադառնում, երկնքի տակ հավիտյանս միայնակ: Մի կին բարի գիշեր մաղթելով՝ համբուրեց Քլինգզորին, նկարիչը զմայլված ծծում էր նրա շրթունքները: Բոլորը մի կողմ գլորվեցին, բոլորը հալվեցին-անցան: Իր բնակարանի աստիճաններով միայնակ բարձրանալիս անգամ՝ Քլինգզորը դեռ շարունակում էր երգել: Նա ներքողում ու գովերգում էր Աստծուն և իր անձը, գովաբանում Լի Թայ Պոյին ու Պոմպամբիոյի հրաշափառ գինին: Հետո նա, որպես մի կուռք, ընկողմանեց համաձայնության ու հաստատումի ամպերի մեջ:

- Ինձ թվում է,- ասաց նա,- թե ես մի ոսկե գունդ եմ, գմբեթավոր տաճար, ուր ծունկի են գալիս ու աղոթում, պատերից ոսկի է ճառագում, հինավուրց նկարներում այրունաքամ է լինում Փրկիչը, տառապում է Մարիամի հոգին: Մենք նույնպես արնաքամ ենք լինում ու տառապում, մենք՝ օտարներս ու մոլորյալներս, մենք՝ աստղեր ու գիսաստղերս, յոթ կամ երկու անգամ յոթ սրեր են խոցում մեր երջանկատեսիլ կուրծքը... Ես քեզ սիրում եմ, չիկահեր կամ սևահեր տիկին, սիրում եմ բոլորին, նույնիսկ քաղքենուն, դուք բոլորդ էլ ինձ պես թշվառական սատանաներ եք, այս հարբած Քլինգզորի նման՝ դուք էլ խեղճուկրակ մանուկներ ու չկայացած կիսաստվածներ եք: Ողջո՛ւյն, ողջո՛ւյն քեզ, սիրելիդ իմ Կյանք: Ողջո՛ւյն քեզ, սիրելիդ իմ Մահ...

ՔԼԻՆԳԶՈՐԸ ԳՐՈՒՄ Է ԷԴԻԹԻՆ

Սիրելի՛դ իմ ամառային երկնքի աստղ:

Ի՜նչ հինալի և ճշմարիտ էիր դու ինձ գրել, և ինչպե՜ս է ցավացնելով քո սերն իմ մեջ արձագանքում՝ որպես հավերժական տառապանք, հավիտենական հանդիմանություն: Բայց դու ճիշտ ճանապարհի վրա ես կանգնած, եթե իմ և քո առաջ խոստովանում ես սրտումդ հանգրվանած բոլոր զգացմունքներիդ մասին: Միայն թե, խնդրում եմ, ոչ մի զգացմունք մանր կամ անարժեք մի կոչիր: Ամենքն էլ հրաշալի են, նույնիսկ ատելությունն ու նախանձը, անգամ խանդն ու դաժանությունը: Ուրիշ ոչնչով մենք չենք ապրում, քան մեր թշվառ, գեղեցիկ ու հիասքանչ զգացմունքներով, և նրանցից յուրաքանչյուրը, որի հետ մենք անարդար ենք վարվում, մի աստղ է, որ մարում ենք անվերադարձ:

Սիրու՞մ եմ, արդյոք Ջինային, չգիտեմ: Այդ մտքից իմ մեջ նույնիսկ տարակուսանք է ծնվում: Նրա համար ես ոչ մի զոհաբերության չեմ գնա, ու չգիտեմ ընդհանրապես ես ունա՞կ եմ սիրելու, թե՞ ոչ: Այո ես կարող եմ մեկին տենչալ, ինձ ուրիշների մեջ փնտրել, հրավերքին արձագանքել, կարող եմ հայելի փնտրել, ուրախության ձգտում ունենալ, և այդ ամենը կարող եմ որպես սեր ընկալել:

Մենք երկուսս էլ, ես և դու, քայլում ենք միևնույն լաբիրինթոսում, մեր զգացմունքների թափառաշրջիկ մոլորակում, մենք, որ կարճ ժամանակով հյուր ենք եկել այս աղետավոր ու չար աշխարհը, այդ իսկ պատճառով՝ երկուսս էլ, ամենքս մեր ձևով, վրեժխնդիր ենք լինում այս չար աշխարհից: Բայց մենք տեր ենք կանգնում մեկս մյուսի երազանքներին, որովհետև հաստատապես գիտենք, թե ինչ աստիճան կարմիր է ու քաղցրահամ երազանքների գինին:

Իրենց զգացմունքների ու ձեռնարկումների «հնարավոր հետևանքների» մասին պարզորոշ պատկերացում ունեն լոկ ապահովված մարդիկ, նրանք, որ հավատում են կյանքին և զգուշանում են ամեն քայլափոխի. հանկարծ այնպես չլինի, որ այս կամ այն բանը վաղը կամ մյուս օրը սխալ դուրս գա: Բայց ինձ նրանց շարքում դասելու երջանկությունը ես չունեմ, ես վարվում եմ այնպես, ինչպես տվյալ պահին հարմար եմ գտնում, նման այն մարդուն, որ վաղվան չի հավատում և իր ապրած յուրաքանչյուր օրը համարում է վերջինը:

Սիրելի և քնքուշ տիկին, ես իմ մտքերն արտահայտելու անհաջող փորձեր եմ անում: Արտաբերված մտքերը միշտ էլ մի տեսակ մեռած են լինում... Թո՛ղ նրանք ապրեն: Ես հրաշալիորեն

զգում եմ, և դրա համար խորապես երախտապարտ եմ քեզ, որ դու հասկանում ես ինձ, քո մեջ ինչ որ բան կա, որով շատ ես ինձ նմանվում: Ես չգիտեմ, ինչպե՞ս է գրանցված կյանքի հաշվեմատյանում, արդյոք մեր զգացմունքները՝ սեր, ցոփություն, երախտագիտություն, կարեկցանք, բնազդային ծագո՞ւմ ունեն, թե՞ սոսկ երեխայական խաղեր են դրանք: Հաճախ ես կնոջը նայում եմ ծեր ու փորձված անառակի աչքերով, հաճախ էլ՝ փոքրիկ երեխայի: Երբեմն ամենաանարատ կինն է ինձ ամենամեծ գայթակղությունը պատճառում, երբեմն էլ՝ անառակներից անառակը: Ամենը, ինչ ես սիրում եմ, հրաշալի է, սուրբ ու անսահման բարի: Իսկ թե ինչու՞ եմ հատկապես այս մեկը սիրում, ինչ՞ աստիճան և որքան այդ սերը կերկարի՝ դա արդեն անչափելի է:

Ես միայն քեզ չէ, որ սիրում եմ, դու դա գիտես, և ոչ էլ միայն Ջինային եմ սիրում, վաղը կամ մյուս օրը գուցե ուրիշ մեկին սիրահարվեմ, ուրիշ պատկերներ նկարեմ: Բայց ես չեմ ափսոսում և ոչ մեկի հանդեպ երբևէ տածած սիրույս համար, նրանց պատճառով կատարած և ոչ մի խելահեղ կամ իմաստուն քայլի համար: Գուցե ես քեզ սիրում եմ, որովհետև դու նման ես ինձ: Մեկ ուրիշին էլ սիրում եմ, որովհետև նա այնքա՛ն տարբեր է ինձանից:

Հիմա ուշ գիշեր է, Մոնտե Սալուտի գլխավերևում լիալուսինն է հսկում, ինչպե՞ս է ծիծաղում կյանքը, ինչպե՞ս է ծիծաղում մահը... Նետիր այս հիմար նամակը կրակի մեջ, կրակը նետիր նաև .

քո Քլինգզորին...

ԿՈՐԾԱՆՄԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Եկավ Քլինգզորի սիրելի ամռվա՝ հուլիսի վերջին օրը, Լի Թայ Պոյի չքեղ տոնակատարությունների ժամանակն անցել էր, հավերժորեն անցել, շուրջբոլորը ամենուր ծաղկած բնությունն էր, ոսկեգույն արևածաղիկները ճչում էին՝ հայացքներն ուղղած դեպի վերև՝ այգու կապույտին: Այդ օրը իր հավատարիմ բարեկամ Թու Ֆուի հետ Քլինգզորը զբոսնում էր սիրած վայրերից մեկում. այրվող այգեստաններ, բարձրաբերձ ծառուղիների ներքո ձգվող փչոտ ճանապարհներ, ավազուտ ափին՝ կարմիրով ու նարնջագույնով ներկված հյուղակներ, ապրանքատար վագոններ ու նավերի կառամատույցներ, երկարաձիգ մանուշակագույն որմնաշարեր, խայտաճամուկ ու թշվառ ամբոխ:Այդ օրը, երեկոյան կողմ նա նստած էր մի փչոտ կալվածքի անկյունում և նկարում էր կարուսելի գունագեղ վրաններն ու վագոնները, նա կծկված նստել էր լերկ ու խանձված մարգագետնի կածանի եզ-

ին՝ ներշնչված վրանների վառվռուն գույներով: Նա խորապես տանջվում էր վրանի կողքին նկարված գունաթափ շուշանի, մարդատար վագոնների վառ կանաչ ու կարմիր գունավորումների, փայտամածի ճողերի կապտասպիտակավուն ներկը ստանալու համար: Նա կատաղած փորփրում էր կադմիումի ներկը, վայրագորեն պեղում սառնահունչ կոբալտը, դեղնականաչավուն երկնքի վրա գծում էր տորոնի լաքի տարրալուծվող երիզները: Եվս մեկ ժամ, նույնիսկ ավելի քիչ, և նա ավարտած կլիներ նկարը: Գիշերը մոտենում էր, հաջորդ օրվանից արդեն սկսվում էր օգոստոսը, այրվող ու տենդագին ամիսը, որ այնքան մահվան սարսափ ու հնազանդություն էր խառնում իր շողշողուն գավաթի մեջ: Զգացմունքներն է՛լ ավելի սրվեցին, օրերը դուրս եկան իրենց հունից, շագանակագույն սաղարթի մեջ թաքնված՝ մահը ծիծաղում էր: Դե՛ կադմիում, քո վառվռուն երանգներով զրնգա ու թնդա: Բարձրաձայն պարծեցի՛ր ճոխ տորոնի լաք... Սրախինդ քրքջա՛ կիտրոնի դեղին: Այս կո՛ղմ եկ, հեռուներում ծվարած մուգ կապույտ լեռ... Սրտի՛ս մոտեցեք, փոշեկանաչավուն ու աղոտ ծառեր: Ի՜նչ հոգնած եք դուք, որ ձեր հավատարիմ ու հնազանդ ճյուղերը թողնում եք ցած ընկնեն... Ես ըմբոշխնում եմ քեզ, հրաշք բնություն: Ես՝ անցողիկս, թերահավատս, թախծողս, որ ձեզանից ավելի եմ տանջվում մահվան սարսափից, ես ձեր առաջ կեղծում ու ձևացնում եմ իմ հավերժությունն ու անմահությունը... Հուլիսն այրող էր, օգոստոսն է՛լ ավելի կայրի, իսկ հետո, հսկայական տեսիլքի դեմ հանդիման կանգնած, հանկարծ ցողապատ առավոտվա դեղին սառնությունը մեզ վրա կըգրոհի: Մեկ էլ տեսար՝ նոյեմբերը կթեւածի անտառի վրա, հսկայական տեսիլքը կքրքջա: Շուտով մեր սիրտը հանկարծակի կըսառչի, և մեր սիրելի վարդագույն մսակտորը դուրս կսահի ոսկորների միջից, անապատում կոռնա շնագայլը, և կերկերուն ու խռպոտ ձայնով իր անիծյալ երգը կգոմռա գիշերանգը: Մեծ քաղաքից ժամանած մի գարշելի լրագիր իմ պատկերն ինձ կմատուցի, իսկ ներքևում գրված կլինի «Հրաշալի նկարիչ, էքսպրեսիոնիստ, տաղանդավոր գեղանկարիչ, մահացել է սույն ամսվա տասնվեցին»:

Գնչուական սայլի անիվների տակ նա, ատելությամբ համակված, փարիզյան կանաչի կապույտով մի ակոս գծեց: Դառնությամբ լցված՝ նա ուղեցույնիկի սուր ծայրին խփեց քրոմի դեղինով: Սիրտը տարակուսանքով առլի՝ կինաբառիս քսեց ազատ մնացած մի հատվածում, ոչնչացրեց աչք ծակող սպիտակը: Նա քրտնաջան պայքար էր մղում գույների ամրակայման համար, անգութ աստծո հասցեին իրենց բողոքն էին ուղղում բաց կանաչն ու նեապոլյան դեղինը: Հաստ շերտով կապույտ վրձնա-

հարվածներ նետեց փոշեկանաչին ու հառաչեց, հոգեմաշ սրտացավությամբ՝ երեկոյան երկնքի մեջ նա մտերմիկ լույսեր էր վառում: Ամենաբաց ու լուսավոր, մաքուր ու անխառն գույներով լի փոքրիկ ներկապնակը նրա մխիթարությունն էր, նրա աշտարակը, զինանոցն ու աղոթամատյանը, վերջապես թնդանոթը, որից նա կրակահերթ էր տեղում չարախինդ մահվան վրա: Պուրպուրով էր տրված մահվան ժխտումը, կինաբառիսով արտահայտված էր փտումի հեգնանքը: Նրա զինանոցը ուղղակի հրաշալի էր, շողշողացող լույսերի ճիշտ կենտրոնում հպարտ ու համարձակ կանգնած էր նրա զորաջոկատը, ճառագայթներ արձակելով՝ հնչում էին նրա թնդանոթների խրոխտ կրակոցները: Բայց ոչինչ չէր օգնում, բոլոր կրակոցներն ապարդյուն էին անցնում, սակայն կրակելը, այնուամենայնիվ, հրաշալի էր, երջանկություն էր ու մխիթարություն, ամեն դեպքում՝ այն նշանակում էր ապրել, ուրեմն և՝ հաղթանակել, ցնծալ:

Թու Ֆուն այցի էր գնացել իր մի բարեկամին, որ բնակվում էր մոտակայքում, գործարանի և կառամատույցի միջև գտնվող իր կախարդական դղյակում: Այժմ Թու Ֆուն վերադարձավ և հետը բերեց իր բարեկամին՝ մի հայ աստղագուշակի:

Քլինգզորն արդեն ավարտել էր նկարը և խոր շունչ էր քաշում, երբ հանկարծ նկատեց մոտեցողների դեմքերը՝ Թու Ֆուի չիկավուն, հրաշալի մազերը և մոգի սև մորուքն ու սպիտակ ատամներով ժպտացող բերանը: Եկվորներին ուղեկցում էին նաև իրենց ստվերները՝ երկարուկ ու խավար, մութ խոռոչների մեջ խորն ընկած աչքերով... Ողջույններս նաև քեզ, ո՞վ դու ստվեր, բարի գալուստ թանկագինս...

- Դու գիտե՞ս, թե այսօր ինչ օր է,- հարցրեց Քլինգզորը իր բարեկամին:

- Հուլիսի վերջին օրն է, գիտեմ:

- Ես այսօր մի բախտացույց կազմեցի,- ասաց Հայը,- և այնտեղ տեսա, որ այս երեկո ինձ հետ ինչ-որ արտակարգ բան է կատարվելու: Սատուրնը տագնապալի դիրք է բռնել, Մարսը՝ չեզոք, իսկ Ցուպիտերը իշխում է: Լի Թայ Պո, դուք հուլիսի ծնո՞ւնդ եք:

- Ես ծնվել եմ հուլիսի երկուսին:

- Այդպես էլ գիտեի: Ձեր աստղերը բարդ ու անսովոր դիրք են ընդունել, բարեկամ, և միայն դուք ինքներդ կարող եք դա մեկնաբանել: Բեղունությունը շրջապատել է ձեզ՝ պայթելու պատրաստ ամպի նման: Տարօրինակ դիրք են բռնել ձեր աստղերը, Քլինգզոր, դուք պետք է որ դա զգաք:

Լին կապկպեց իր պիտույքները: Արդեն հանգել էր նրա նկարած աշխարհը, հանգել էին դեղնականաչավուն երկինքը, հար-

բած ու կապույտին տվող դրոշակները, մեռյալ ու խունացած էր երևում հրաշափառ դեղինը: Նա սոված էր ու ծարավ, կոկորդը լիքն էր փոշով:

- Բարեկամներ,- ասաց նա ջերմորեն,- մենք պետք է այս երեկո միասին լինենք, քանզի այսուհետև մենք այլևս երբեք այս չորսով միասին չենք լինի, ես դա կարդում եմ ոչ թե աստղերով, այլ սրտումս է այն գրված: Իմ հուլիս ամիսը անցավ, խավարի մեջ փայլում են նրա վերջին ժամերը, սրտումս զգում եմ անդունդներից եկող Մեծ Մոր կանչը: Աշխարհը երբեք այսքան գեղեցիկ չի եղել, իմ նկարներն էլ երբեք այսքան գեղեցիկ չեն եղել, փայլակներն են վառվում, և կործանման երջանկությունը ծոր է տալիս իր երգը: Մենք կձայնակցենք նրան, այդ քաղցր ու վեհերոտ մեղեդուն, մենք այսօր միասին կլինենք, գինի կխմենք ու հաց կուտենք:

Արդեն երեկո էր, ցերեկվա ընթացքում վրանով ծածկված կարուսելի պաստառը կամաց-կամաց հավաքում էին, կողքին՝ ծառերի տակ դրված էին մի քանի սեղաններ, կաղ սպասուհին այս ու այն կողմ էր վազվզում, ստվերների միջից նշմարվում էր փոքրիկ պանդոկը: Բարեկամները նստեցին տախտակե սեղանի շուրջը, հաց բերվեց ու գինի մատուցվեց կավե գավաթներով, ծառերի տակ լույսեր վառվեցին, դիմացը սկսեց դղրդալ կարուսելի երգեհոնը, որի մանրատվող ու հնչեղ մեղեդին մխրճվում էր երեկոյի կուրծքը:

- Երեք հարյուր գավաթ ես այսօր կդատարկեմ,- բղավեց Լի Թայ Պոն ու գավաթը չբխկացրեց ստվերի հետ:- Ողջու՛յն քեզ, ստվե՛ր, ամուր ու տոկուն անագե գինվոր... Ո՛ղջ եղեք, բարեկամնե՛ր: Ողջու՛յն ձեզ, էլեկտրական լույսեր, հողալապտերներ և կարուսելի մոտ պսպղացող ոսկե ավազահատիկներ... Օ՛, եթե Լուին այստեղ լիներ, այդ չվող թռչունը... Գուցե նա արդեն մեզանից առաջ է երկինք համբարձվել: Բայց գուցե վաղն իսկ վերադառնա, ծեր շնագայլը, և մեզ այլևս չգտնելով՝ անհագ կքրքջա և հողալապտերներ ու դրոշակաձողեր կտնկի մեր գերեզմաններին:

Մոգը լուռ հեռացավ ու գինի բերեց, կարմիր բերանի միջից ուրախ ժպտում էին նրա սպիտակ ատամները:

- Թախիծը,- ասաց նա՝ հայացքը գցելով Քլինգզորի վրա,- մի այնպիսի բան է, որին մարդ երբեք չպետք է տրվի: Դա շատ հեշտ է՝ ընդամենը մի ակնթարթի գործ, բավական է մի կարճատև լարում, ատամների կարճատև կրճտոց, այնուհետև մարդ արդեն առհավետ մաքրած կլինի իր հաշիվները թախծի ու տրտմության հետ:

Քլինգզորը ուշադիր նայում էր նրա բերանին, նրա լուսավոր

ու պայծառ ատամներին, որոնք հենց նոր, քիչ առաջ, չողչողուն մի պահի՝ արժեզրկել էին թախիծը իրենց մահացու սեղմումի մեջ: Արդյո՞ք ինքը նույնպես ընդունակ էր թախծից հրաժարվելու, այնպես, ինչպես աստղագուշակն էր խորհուրդ տալիս: Օ՛, հեռու այգիներին նետված փութանցիկ հայացք. սա՛ էր առանց վախի ու անթախիծ կյանքը: Նա գիտեր, որ այդ այգիներն իր համար անհասանելի էին: Գիտեր, որ իր համար ուրիշ բան է նախասահմանված, Սատուրնը ուրիշ կերպ էր իրեն նայում, իր սըրտի լարերի վրա Աստված ուրիշ երգեր էր կամենում հնչեցնել:

- Ամեն ոք ունի իր աստղը,- հանգիստ ասաց Քլինգզորը,- ամեն ոք ունի իր հավատը: Անձամբ ես հավատում եմ միայն մի բանի՝ կործանմանը: Մենք վարգում ենք անդունդի եզրին ընթացող ուղեսայլի մեջ, և ձիերը խրտնել են: Մենք բոլորս դատապարտված ենք մահվան և պետք է կործանվենք, բայց մենք նորից կծնվենք, մեծ շրջադարձի, մեծամեծ փոփոխությունների ժամանակներ են մեզ համար եկել: Ամենուր նույնն է. ահեղ պատերազմը, արվեստում կատարվող խոշոր փոփոխությունները, արևմուտքի տերությունների կործանումը... Մեր այս ծեր Եվրոպայում մեռել է այն ամենը, ինչը մեզանում լավն էր ու մեր սեփականը. մեր հրաշալի բանականությունը դարձել է մոլորություն, մեր դրամը՝ հասարակ թուղթ, մեր մեքենաները կարողանում են սոսկ կրակել ու պայթեցնել, մեր արվեստը ինքնասպանություն է: Մենք խորտակվում ենք, բարեկամներս, այդպես է մեզ նախասահմանված, Ցինգ Ցզեի փիլիսոփայությունը տոն է տալիս մեր իրականությանը:

Հայը գինի լցրեց:

- Ինչպես կուզեք,- ասաց նա: -Դրան կարելի է և «այո» ասել և «ոչ», դա, ըստ էության, մանկական խաղ է: Ընդհանրապես կործանում հասկացություն գոյություն չունի: Որպեսզի կործանում կամ բարձրացում լինի, դրա համար պետք է վերև և ներքև գոյություն ունենա: Բայց տիեզերքում վերև ու ներքև չկա, այն գոյություն ունի միայն մարդուս ուղեղում՝ պատրանքի ու մոլորության այդ հայրենիքում: Բոլոր հակադրությունները մոլորություններ են. սպիտակը և սևը մոլորություն է, մահվան և կյանքի հակադրությունը մոլորություն է, բարին ու չարը նույնպես մոլորություն է: Դա մեկ դոպեի գործ է, ընդամենը պայծառատեսության դոպեական գործ, բավական է ատամները կրճտացնել, որպեսզի մարդս հաղթահարի մոլորությունների տիրապետությունը:

Քլինգզորը ուշի-ուշով ունկնդրում էր նրա հրաշալի ձայնը:

- Ես խոսում եմ մե՛ր մասին,- խոսեց նա ի պատասխան,- ես խոսում եմ Եվրոպայի մասին, մեր ծերուկ Եվրոպայի, որ այս էլ

արդեն երկու հազար և ավելի տարիներից ի վեր համարվում էր աշխարհիս ուղեղը: Այժմ այն կործանվում է: Դու կարծում ես, թե ես քեզ չե՞մ հասկանում, մո՛գ: Դու արևելքի մի սուրհանդակ ես, դու գործուղված ես ինձ մոտ, այստեղ, գուցե լրտես ես դու, կամ մի ծպտված զորավար: Դու այստեղ ես եկել, որովհետև այստեղից սկիզբ է առնում վերջը, որովհետև այստեղ կործանումի հոտն ես առել: Բայց մենք հաճույքով ենք խորտակվում, լսի՛ր, ո՛վ դու, մենք հաճույքով ու սիրով ենք մեռնում, մենք չենք դիմադրում:

- Նույն տրամադրությամբ դու կարող էիր նաև ասել. մենք հաճույքով նորից կծնվենք,- ծիծաղեց ասիացին:- Այդ քեզ է միայն կործանում թվում, իսկ ինձ համար գուցե ծնունդ է դա: Երկու դեպքում էլ մոլորության առաջ ենք կանգնած: Նա, ով երկիրը համարում է մի ամուր, հաստատուն ու մշտնջենական սկավառակ, որ գոյատևում է այս երկնքի ներքո, նա անպայմանորեն ի գիտություն է ընդունում և հավատում է բարձրացմանն ու կործանմանը, և բոլորը, գրեթե բոլոր մարդիկ հավատում են այս հաստատուն ու մշտնջենական սկավառակին... Աստղերն իրենք էլ ոչ մի վերև ու ներքև չեն ճանաչում:

- Մի՞թե աստղերը չեն կործանվում,- գոռաց Թու Ֆուն:

- Միայն մեզ համար, մեր աչքերի համար:

Նա լիքը լցրեց գավաթները, այսպես շարունակ մատուցվում էր՝ միշտ պատրաստ ծառայություններ մատուցելու, և ժպիտն էլ անպակաս էր նրա դեմքից: Նա վերցրեց դատարկ կուժը և գնաց գինի բերելու: Բարձրաձայն հնչում էր կարուսելի երաժշտությունը:

- Գնանք այն կողմ, այնտեղ գեղեցիկ է,- խնդրեց Թու Ֆուն, և նրանք շարժվեցին ցույց տրված ուղղությամբ, ապա կանգ առան նկարազարդ պաստառի առջև՝ աչքերը հառած ոսկեցոլ ավազահատիկներին ու հայելիների աչք ծակող փայլին, որ մոլեգնած պտտվում էին կարուսելի հետ, որոնց ցոլարձակումներից կախ էին ընկած հարյուրավոր երեխաների ագահատենչ հայացքները:

Խորիմաստ ժպիտը դեմքին՝ Քլինգզորը մի պահ կարծես ըմբռնեց պտտվող մեքենայի, այդ մեխանիկական երաժշտության, անփույթ ու վառվռուն նկարների, հայելիների ու խելագար պաճուճանքով պճնված սյուների նախաստեղծությունը, անհեթեթությունն ու անկատարությունը, այստեղ ամեն ինչ կախարդի ու վհուկի, գյութի ու նախաստեղծ գայթակղությունների կնիքն էր կրում, և այդ բոլոր վայրի, խառնաշփոթության մատնված փայլատակությունները իրականում ոչ այլ ինչ էին, եթե ոչ թիթեղյա գդալի վառվռուն փայլը, որ որպես խաբկանք պարզում

են չնաձկան առջև ու այդպիսով՝ որսում նրան:

Բոլոր երեխաները պետք է կարուսել նստեն: Թու Ֆուն նրանց բոլորին դրամ էր բաժանում, այդ գործում ստվերն էլ ետ չէր մնում նրանից: Երեխաները խմբերով շրջապատում էին իրենց բարերարներին, պոկ չէին գալիս նրանցից, դրամ էին աղերսում, շնորհակալություն հայտնում: Տասներկուամյա գեղեցիկ մի աղջնակ, որին նրանք տվեցին մնացած ողջ մանրադրամը, կարուսելից չէր իջնում: Լուսափայլի մեջ սուզված կարճ կիսաշրջազգեստը ծածանվում էր նրա սիրունիկ ու աղջնային ոտքերի շուրջը: Մի մանչուկ լալիս էր: Մի խումբ երեխաներ իրար հետ կռիվ էին անում: Խարազանի պես հատու հնչում էր երգեհոնը՝ ծնծղաների ուղեկցությամբ, կրակ էր թափվում շուրջբոլորը, ինչպես թմբուկները գինու մեջ: Զորսով երկար կանգնած էին այդ իրարանցման ու խառնաշփոթի մեջտեղում:

Հետո նրանք կրկին նստեցին ծառերի տակ, հայը գինի լցրեց գավաթները, բորբոքեց կործանումը, ապա լուսավոր ժպտաց:

«Երեք հարյուր գավաթ մենք այսօր կդատարկենք», երգեց Քլինգզորը: Նրա այրված գանգամաշկը դեղնել էր, զիլ հնչում էր նրա ծիծաղը: Հսկա թախիծը տեղի տվեց Քլինգզորի ցնցվող ու հաճույքից վեր-վեր թռչող սրտի առաջ: Նա չխրկացրեց գավաթը, ապա սկսեց գովաբանել կործանումը, մահանալու տենչը դրվատեց Ցինգ Ցզեի տրամադրությունները: Շառաչուն խանդով թնդում էր կարուսելի երաժշտությունը: Բայց սրտի մեջ նստած էր վախը, սիրտը չէր ուզում մեռնել, նա ատում էր մահը:

Հանկարծ կեսգիշերին, մոտակա պանդոկից մոլեգնորեն պայթեց զիլ ու դյուրաբորբոք մեկ ուրիշ երաժշտություն: Առաջին հարկում, բուխարու ուղղությամբ, ուր խնամքով դասավորված էին գինու շշերը, ասես գնդացրային կրակահերթի ու հայհոյանքների տեղատարափի խառնափնթոր գրոհումով վայրագորեն թնդաց մեխանիկական դաշնամուրը: Ցավը ճչում էր լարից ընկած գործիքի ընդերքից, ռիթմը ցած էր ճկվում շոգեգլաններում տնքացող աններդաշնակությունների հեղեղի առաջ: Մեծ բազմություն էր հավաքվել այնտեղ, աղմուկ, իրարանցում, տղա ու աղջիկ շուրջպար էին բռնել, պարում էր նույնիսկ կաղ սպասուհին, և նույնիսկ Թու Ֆուն: Նա պարում էր մի չիկահեր փոքրիկ աղջկա հետ, Քլինգզորը աչքը չէր կտրում նրանցից, թեթև ու անբռնազբոս ծածանվում էր աղջկա կարճ ու ամառային զգեստը նրա բարակ ու գեղեցիկ ոտքերի շուրջը, սիրալիր ու բարեկամաբար ժպտում էր Թու Ֆուն: Երաժշտության աղմուկից գոյացած իրարանցման ճիշտ մեջտեղում, բուխարու մի անկյունում նստած էին նրանք, որ նոր էին վերադարձել այգուց: Քլինգզորը շոշափելիության աստիճան պարզ տեսնում էր հըն-

չյունները և ունկնդրում չուրջը ծավալվող գունախաղը: Մոգը բուխարուց շշեր էր դուրս կորզում, բացում էր ու հյուրասիրում: Նրա շագանակագույն ու խելացի դեմքից գոհունակ ու պայծառ ժպիտը չէր հեռանում: Ներքևի սրահում սարսափազդու շեշտով պայթում էր երաժշտությունը: Ինչպես որ սրբազան տաճարի կողոպտիչն է մեկ առ մեկ դուրս կորզում խորանի սպասքը, այդպես էլ, ահա, բուխարուն կից դասավորված շշերի կույտում հայը կամաց-կամաց մի ճեղք բացեց:

-Դու մեծ արվեստագետ ես,- շշնջաց աստղագուշակը Քլինգզորի ականջին՝ լցնելով նրա գավաթը:- Դու մեր ժամանակի մեծագույն արվեստագետներից ես, և իրավունք ունես քեզ կոչելու Էի Թայ Պո: Բայց դու՛, Էի Թայ, դու մի հալածված, թշվառական, տառապյալ ու տագնապահար եղած մարդ ես: Դու կործանման երաժշտությունն ես սկսել հնչեցնել, այն տպավորությունն է ստեղծվում, թե դու նստած երգում ես քո հրդեհվող տանը, որը ինքդ ես կրակի մատնել, և դեռ զարմանում ու դժգոհում ես դրանից, մի՞թե դա խելքի մոտ բան է, Էի Թայ Պո, ու դեռ չասած այն, որ ամեն օր երեք հարյուր գավաթ ես դատարկում և բաժակ չբխկացնում լուսնի հետ: Էլ ինչու՞ ես դժգոհում, թե դա քեզ ցավ է պատճառում, կործանման երգիչ, մի՞թե դու չես ուզում կանգ առնել, չես ուզում ապրել, հարատևել...

Քլինգզորը խմեց և իր փոքր-ինչ խռպոտ ձայնով շշնջաց ի պատասխան.

-Հնարավո՞ր է արդյոք փոխել ճակատագիրը, ընդդիմանալ նրան: Մի՞թե գոյություն ունի կամենալու ազատություն: Կամ մի՞թե դու՛, աստղագուշա՛կ, կարող ես իմ աստղը ուղղել կամ շրջել:

- Ո՛չ, ուղղել ես չեմ կարող, բայց մեկնաբանել այն՝ խնդրեմ: Իսկ ուղղել՝ միայն ինքդ ես ի զորու: Այո՛, գոյություն ունի կամենալու ազատություն: Դա կոչվում է մոգություն:

-Ինչու՞ ես պետք է մոգությամբ պարապեմ, երբ կարող եմ զբաղվել արվեստով: Մի՞թե արվեստը հրաշալի չէ նույնպես:

-Ամեն ինչ էլ և՛ հրաշալի է և՛ ոչ: Բայց միայն մոգությունն է, որ վերացնում է բոլոր տեսակի մոլորությունները: Մոգությունը բուժում է այն վատթարագույն մոլորությունը, որ մենք «ժամանակ» ենք կոչում:

-Իսկ մի՞թե արվեստն էլ նույնը չի անում:

-Արվեստը միայն փորձում է դա անել: Քեզ, օրինակ, բավարարու՞մ են թղթապանակումդ պահ տված հուլիսյան պատկերները: Գուցե դու նրանցում վերացնե՞լ ես ժամանակից: Մի՞թե վախ չունես աշնանից կամ ձմռանից:

Քլինգզորը հեծկլտաց ու լռեց, լռելյայն գինի ըմպեց: Մոգը

լցրեց նրա բաժակը: Խենթ մոլեգնում էր սանձազերծ եղած դաշնամուրը, պարողների շրջապտույտում ճախրում էր Թու Ֆուի հրեշտականման դեմքը: Հուլիսը վերջանում էր:

Քլինգզորը խաղում էր սեղանի վրա շարված դատարկ շշերով, դասավորում նրանց շրջանաձև...

- Սրանք մեր թնդանոթնե՛րն են,- բղավեց նա,- այս թնդանոթներով մենք կգնդակահարենք ժամանակը, մահը, արհավիրքը: Ես նաև գույներով եմ կրակել մահվան վրա, կրակագույն կանաչով, ճայթճայթուն կինաբառիսով ու հրաշագեղ խորդենու լաքով: Ես հաճախ եմ հարվածել նրա գանգին, սպիտակն ու կապույտը մխրճել եմ նրա աչքերի մեջ: Հաճախ եմ ես նրան փախուստի մատնել: Նրա հետ ես դեռ նորից եմ ընդհարվելու, հաղթելու կամ խորամանկությամբ խաբելու եմ նրան: Ապա նայեք հային, նա կրկին մի հին շիշ է բացում, և անցած ամառվա մոխրացած արևը կրակվում է մեր արյան մեջ: Նաև հայն է մեզ օգնում կրակելու մահվան վրա, նա ինքն էլ չգիտե այլ զենք մահվան դեմ պայքարելու համար:

Մոգը հաց կտրեց ու սկսեց ուտել:

- Մահվան դեմ ոչ մի զենք էլ ես չեմ գործածում, որովհետև մահ գոյություն չունի: Մի բան միայն գոյություն ունի. սարսափը մահվան հանդեպ: Այն կարելի է բուժել, դրա դեմ կա մի զենք: Դա բոպեական գործ է, ընդամենը պետք է վախը հաղթահարել: Բայց Լի Թայ Պոն դա չի ուզում: Նա չէ՞ որ սիրում է մահը, չէ՞ որ նա պաշտում է իր վախը մահվան հանդեպ, և անկարող է բաժանվել թախծից ու թշվառությունից, չէ՞ որ վախն է միայն նրան այն ամենը սովորեցրել, ինչին որ ինքը հմուտ է, և ինչի համար մենք սիրում ենք նրան:

Ծաղրական ժպիտը դեմքին՝ նա չրխկացրեց իր բաժակը, ատամները փայլում էին, դեմքը ավելի ու ավելի էր գվարթանում, վիշտն ու տխրությունը կարծես անծանոթ էին նրան: Ոչ ոք չարձագանքեց նրան: Գինու թնդանոթներով Քլինգզորը կրակեց մահվան վրա: Մահը, հսկայական ու մեծ, ցցվեց սրահի բաց դռների առաջ, որ լեփլեցուն էին գինուց ու պարերաժշտությունից հարբած մարդկանցով: Հսկա մահը կանգնել էր դռների առաջ ու դանդաղորեն ցնցում էր սև ակացիան, հետո նա, մռայլ ու խոժոռադեմ, դարան մտավ այգում: Ողջ բակը ներծծված ու լի էր մահով, միայն այստեղ, այս նեղլիկ ու զրնգացող սրահում դեռ պետք է պայքարը շարունակվեր, պիտի երկարեր սքանչելի ու խրոխտ ճակատամարտը՝ սև պաշարողի դեմ, որը մոտիկից, պատուհանի միջից չարախինդ ոռնում էր:

Մոգը հեգնական հայացք գցեց սեղանին, և ծաղրաժպիտը դեմքին՝ լիքը լցրեց գավաթները: Արդեն շատ գավաթներ էր

կոտրել Քլինգզորը, և նորերն էին նրան մատուցվել: Հայը նույնպես շատ էր խմել, բայց Քլինգզորի պես նա էլ լուրջ տեսք ուներ և ուղղաձիգ դիրքով նստել էր իր աթոռին:

- Եկ խմենք, Լի,- ասաց նա՝ ձայնն աստիճանաբար բարձրացնելով:- Դու հո սիրում ես մահը և հաճույքով կուզենաս կործանվել, մահվան գիրկն անցնել: Այնպես չէ՞, գուցե ես սխալվու՞մ եմ, կամ գուցե դու ինձ էլ, քեզ էլ հավասարապես մոլորեցրե՞լ ես: Ե՛կ խմենք, Լի, ու կործանվենք...

Քլինգզորի սրտում աճում էր զայրույթը: Հանկարծ նա ոտքի կանգնեց, սրագլուխ այդ ծեր ճուռակը, հասակով մեկ ուղղվեց, թքեց գինու մեջ, և գետնին խփելով ջախջախեց լիքը բաժակը: Կարմիր գինին ցայտեց սրահի մեջ, բարեկամները գունատվեցին, օտարները սկսեցին ծիծաղել:

Լռելյայն ու հեգնանքի արտահայտությունը դեմքին՝ մոգը մի նոր գավաթ բերեց, լցրեց այն ու ժպտալով առաջարկեց Լի Թային: Լին ինքն էլ սկսեց ժպտալ՝ հետևելով հայի օրինակին: Քլինգզորի այլայլված դեմքին լուսնի լույսի պես ժպիտը փայլատակեց:

- Բարեկամներ,- բացականչեց Քլինգզորը,- եկեք լսե՛նք այս օտարականին: Նա շատ բան գիտի, այդ ծեր աղվեսը, նա եկել է իր հեռավոր ու խորախորհուրդ բնակավայրից: Նա շա՛տ է ծեր՝ մանուկներիս հասկանալու համար: Նա նաև չափից ավելի խելացի է՝ խենթուկներիս հասկանալու համար: Մենք՝ մահացողներս, նրանից ավելի շատ գիտենք մահվան մասին: Մենք մարդիկ ենք և ոչ թե աստղեր: Ապա նայեցեք իմ ձեռքին, որ գինով լի մի փոքրիկ կապույտ գավաթ է բռնել: Իմ այս շագանակագույն ձեռքը շատ բան կարող է անել: Աշխարհի ու կյանքի բազմաթիվ անհայտ կտորներ է նա մթության միջից փրկել և մարդկանց աչքերի առաջ պարզել: Այս շագանակագույն ձեռքը շատ կանանց կզակներ է շոյել, գայթակղել է շատ աղջիկների, նրան շատերն են համբուրել, արցունքներ են հոսել նրա վրայով, նրա պատվին Թու Ֆուն բանաստեղծություն է հորինել: Այս հրաշալի ձեռքը, բարեկամներս, շուտով հող է դառնալու ու որդեր են աճելու նրա մեջ, և ձեզանից ոչ ոք նրան այլևս չի դիպչելու: Ի՞նչ արած, հենց դրա համար էլ ես սիրում եմ նրան: Ես սիրում եմ իմ ձեռքը, սիրում եմ իմ աչքերը, իմ սպիտակ, քնքուշ փորը, սիրում եմ և նրանց կարեկցանքով, հեգնախառն քամահրանքով ու մեծագույն քնքշությամբ, որովհետև նրանք բոլորն էլ շատ շուտով թոշնելու են ու նեխելու: Քե՛զ, ստվեր, խավարի բարեկամ, նաև քե՛զ է այդ վիճակված թանկագի՛նս... Զրխկացրու՛ ինձ հետ, թող կեցցե՛ն մեր սիրելի անդամներն ու աղորիքները...

Նրանք չրխկացրին գավաթները, մռայլ ժպտում էր ստվերը

իր խորն ընկած քարանձավային աչքերով, և հանկարծ ինչ-որ բան անցավ սրահի միջով, անցավ ինչպես քամի կամ ոգեղեն գոյացում: Անսպասելիորեն համրացավ երաժշտությունը, պարողները, ասես գիշերվան կուլ գնալով, հանգչեցին ու անհետացան, լույսերը մի ակնթարթում աղոտացան: Քլինգզորը հայացքն ուղղեց սև դռների կողմը: Բակում կանգնած էր մահը: Քլինգզորը տեսավ նրան: Առավ նրա հոտը: Մահը բուրում էր՝ ինչպես անձրևի կաթիլները խճուղու սաղարթների մեջ:

Լին մի կողմ դրեց գավաթը, աթոռը ետ հրեց ու դանդաղորեն դուրս եկավ սրահից: Նա քայլերն ուղղեց դեպի մթամած այգու խորքերը: Փայլակները պայթում էին նրա գլխավերևում, նա միայնակ քայլում էր: Մանրացավ հանկարծ սիրտը նրա կրծքի տակ, ծանրացավ՝ ինչպես գերեզմանաքար:

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԵՐԵԿՈ

Արդեն երեկոյանում էր, երբ Քլինգզորը վերադարձավ: Ողջ ետկեսօրը նա նկարել էր Մանուցցոյի ու Վելյայի մոտակայքում, արևից ու քամուց խոշտանգվելով: Հոգնած ու ուժասպառ՝ նա հասավ Վելյայի անտառեզրին տարածված Կանվետտո կոչվող գյուղակը: Նա հյուրընկալվեց մի ծեր կնոջ տնակում: Մեր կինը նրա համար կավե գավաթով գինի բերեց, Քլինգզորը նստեց դռան առաջի ընկուզենու կոճղին, բացեց ուղեպարկը, այնտեղից հանեց մի կտոր պանիր ու սալորներ, և սկսեց իր երեկոյան ճաշկերույթը: Ծերմակահեր, կորացած ու անատամ ծեր կինը տեղավորվեց նրա կողքին և, բացուխուփ անելով թորշոմած դեմքի ու պարանոցի խորշոմները, սկսեց պատմել իր ընտանիքի ու գյուղակի կյանքից, պատերազմից ու թանկությունից, մշակելի հողատարածությունների հատկացման, գինու ու կաթի մասին, և թե ինչ արժեն դրանք: Պատմում էր իր մահացած թոռների, արտագաղթած որդիների մասին, և այդ անպաճույճ գյուղական կյանքի բոլոր դարաշրջանները, գործունեության ոլորտներն ու համաստեղությունները պարզ ու մտերմիկ անմիջականությամբ լուսաբանվեցին Քլինգզորի առաջ, իրենց խղճուկ գեղեցկություններով՝ դաժան ու կոպիտ, ուրախությամբ ու հոգսերով, սարսափներով ու կենսասիրությամբ լի: Քլինգզորը ուտում էր ու խմում, հանգստանում և ունկնդրում ծեր կնոջ պատմությունները, հարցուփորձ անում երեխաներից ու անասուններից, քահանաներից ու եպիսկոպոսից, բարեկամի նրբանկատությամբ գովաբանում աղաքատիկ գինին: Հետո նա վերջին սալորը առաջարկեց պառավին, ձեռքը սեղմեց, բարի գիշեր մաղթեց, վեր կացավ, ձեռնափայտը ձեռքն առավ, պարկը ուսովն անցկացրեց և

անշտապ քայլերով ուղևորվեց դեպի լուսավոր ու անտառապատ լեռը՝ իր գիշերային օթևանը:

Իրիկնամուտ էր, դեռ փայլփլում էին իրիկնալույսի վերջին կրակները, լուսինն էլ իր աղոտ լույսն էր արձակում, կանաչին տվող շողշողուն օդում հայտնվեցին առաջին չղջիկները: Անտառեզրը մեղմորեն օրորվում էր հանգչող լույսերի մեջ, լուսավոր շագանակեկիների բները պատվել էին մութ ստվերներով, մի դեղնավուն հյուղակում հանդարտ ճառագայթում էր օրվա ընթացքում ներծծած լույսը, մարգագետինների, խաղողի վազերի ու անտառների միջով, որպես քնքշափայլ ու դեղին տոպազ, վարդակարմիր ու մանուշակագույն ճառագայթների ուղեկցությամբ ձգվում էին նեղլիկ կածանները, այսուայնտեղ առկայծում էին դեղին ակացիայի ճյուղերը, թավշակապույտ լեռներից վեր, ոսկեկանաչ երանգներով պսպղում էր արևմտյան երկինքը:

Օ՜, եթե միայն հնարավոր լիներ աշխատե՛լ այս վերջին, կախարդական ու հասուն ամառային օրերին, որ այլևս չեն վերադառնալու... Ի՜նչ անկարելիորեն գեղեցիկ է այդ ամենը, ի՜նչ խաղաղ է և աստծով լիքը...

Քլինգզորը նստեց թարմ խոտին, մեքենայաբար վերցրեց մատիտը, բայց դեմքը հանկարծ ժպիտով լուսավորվեց և կրկին ձեռքը կախ գցեց: Նա մահու չափ հոգնած էր: Մատներով շոշափեց չորացած խոտը, չոր ու փխրուն հողաշերտը: Դեռ երկա՞ր էր շարունակվելու այդ հուզագրգիռ խաղը: Մինչև ե՞րբ պետք է նրա ձեռքերը, բերանն ու աչքերը հողածեծ լինեին... Վերջերս Թու Ֆուն նրան մի բանաստեղծություն էր ուղարկել, Քլինգզորը մտաբերեց նրա տողերը և խաղաղված սրտով սկսեց արտասանել.

Տերևներն են մեկմեկու հետ
Կենաց ծառից իմ դեմ թափվում,
Օ՜, աշխարհ՝ հարբած ու գունեղ,
Ինչպե՜ս ես ինձ կշտացրել դու:
Ինձ արբեցրել, գերել ես դու,
Կշտացել, հոգնել եմ քեզնից,
Ինչ այսօր բուրում է, չնչում,
Վաղն առհավետ ցնդի պիտի:
Շուտով փչի պիտի քամին
Շիրմի վրա իմ մոխրագույն,
Մայրն իր քնած մանկան վրա
Պիտ խոնհարվի լուռ ու թաքուն:
Կուզեմ տեսնել հայացքը մոր,
Դեմքը տեսնել իմ լուսաստղի,
Մնացյալը կանցնի մի օր,
Կմահանա խինդով առլի:

Եվ մեզ ծնող Հավերժական
Մայրը միայն կապրի անմեռ,
Նա օդի մեջ իր նուրբ ձեռքով
Անունները կգրի մեր:

Այժմ նա հանգիստ էր: Իր ունեցած տասը կյանքերից դեռ քանի՞ն էին իրեն մնացել: Երե՞քը, երկու՞սը: Ամեն դեպքում, առնվազն մեկ կյանք նա դեռ ուներ՝ սպառողի լիներ, թե քաղքենու: Կյանքում նա շատ բան էր արել, ամեն ինչ տեսել էր ու լսել, ինչքա՜ն թուղթ ու կտավ էր գունավորել, շատերի սրբտերում էր սեր ու ատելություն վառել, ինչքան ասես աղմկոտ ու անախորժ պատմությունների մեջ ընկել, աշխարհը թարմացրել զովացուցիչ քամիների բազմախոստում հրայրքներով: Շատ կանանց էր նա սիրել: Շատ ավանդական սրբություններ ու սովորություններ էր կործանել, ու հանդուգն նորամուծությունների ձեռք զարկել: Բազմաթիվ լիքը գավաթներ էր դատարկել, անթիվ-անհամար աստղալից գիշերներ լուսացրել, այրվել էր օտար արևների տակ ու անծանոթ ջրերում լողացել: Ու հիմա նստած էր այստեղ, հայտնի չէ՝ Իտալիայում, Հնդկաստանում, թե Չինաստանում: Ամռան քամին քմահաճ զարնվում էր շագանակենիների գագաթներին, հրաշալի և կատարյալ էր աշխարհը: Արդեն միևնույն էր՝ մի հարյուր նկար էլ կնկարի, թե տասը, քսան ամառ կապրի, թե մեկը: Հոգնել էր նա, անչափ հոգնել: Մնացյալը կանցնի մի օր, կմահանա խինդով առլի: Կեցցե՛ս, Թու Ֆու...

Տուն վերադառնալու ժամանակն էր: Ահա ինքը կմտնի սենյակ, և պատշգամբի դռներից ներխուժող քամին կզարնվի իր դեմքին: Հետո կվառի լույսը և բաց կանի էսքիզների թղթապանակը: Անտառի ներսը քրոմի թանձրադեղինով ու չինական կապույտով գունավորելը գուցե տեղին կլիներ, բայց պետք էր արագորեն կտավն ավարտել: Արդեն ժամանակն էր, պետք էր վերադառնալ:

Բայց ոչ մի կերպ չէր կարողանում վեր կենալ: Մազերն ու կեղտոտ կտավե բաճկոնը ծածանվում էին քամուց, ցավատանջ ժպտում էր նրա իրիկնասույզ սիրտը: Մեղմօրոր փչում էր քամին, հանգած երկնքում մեղմ ու համրաձայն օրորվում էին չղջիկները: Մնացյալը կանցնի մի օր, կմահանա խինդով առլի: Հավերժական Մայրը միայն կապրի անմեռ:

Այստեղ էլ, իհարկե, կարելի էր քնել, գոնե մեկ ժամի չափ, այստեղ նույնիսկ տաք էր: Նա գլուխը դրեց ուսապարկին և աչքերը դեպի երկինք հառեց: Ի՜նչ գեղեցիկ է աշխարհը և ինչպե՜ս է ինձ կշտացրել...

Լեռան ստորոտից քայլեր էին մոտենում, ամուր ու փայտե

կրունկներից գոյացող ոտնաձայներ էին դրանք: Ջարխոտերի ու որոճների միջից կանացի մի կերպարանք հայտնվեց, մթու-թյան մեջ անհնար էր զանազանել նրա հանդերձանքի գույները: Նա մոտեցավ առողջ ու հավասարաչափ քայլերով: Քլինգզորը ոտքի ցատկեց ու բարի երեկո մաղթեց եկվորին: Կինը փոքր-ինչ վախեցավ ու մի պահ տեղում կանգնած մնաց: Քլինգզորը նայում էր նրա դեմքին: Այն կարծես ծանոթ լիներ, բայց ինչ որ չէր կարողանում մտաբերել: Կինը գեղեցիկ էր ու խորհրդավոր, պայծառերանգ փայլում էին նրա գեղեցիկ ու ամուր ատամները:

- Ա՛յ քեզ բան,- բղավեց Քլինգզորը և բռնեց կնոջ ձեռքը: Նրան թվաց, որ ինչ-որ բան նրան կապում է այդ կնոջ հետ, ինչ-որ մի հեռու հիշողություն:- Մենք կարծես ծանոթ ենք:

- Մադո~ննա, դուք հո Կաստանյետտոյի նկարիչն եք... Մի՞թե դեռ հիշում եք ինձ:

Այժմ Քլինգզորը հիշեց: Նա մի գյուղացի կին էր, պանդոկի մերձակա հովտից: Նրա տան մոտ, այս ամառվա ստվերաշատ ու խառնիճաղանջ օրերից մի օր Քլինգզորը մի քանի ժամ նկարել էր, տնակի բակում բխող աղբյուրից ջուր խմել, մի ժամի չափ նիրհել էր թզենու ստվերում, և վերջում՝ մի գավաթ գինի ու համբույր էր ստացել տանտիրուհուց:

- Դուք այլևս չվերադարձաք,- տրտնջաց կինը,- չնայած որ շատ խոստացաք...

Ջարաճճիության ու մարտահրավերի պես մի բան հնչեց նրա կոկորդային ձայնում: Քլինգզորն աչխուժացավ:

- Ecco[1], փոխարենը ինքդ ես եկել ինձ մոտ... Ի՜նչ երջանկություն է, որ դու եկար, այն էլ՝ հենց հիմա, երբ ես այնքան միայնակ եմ ու տխուր...

- Տխու՞ր: Դե, մի ծաղրեք ինձ, պարոն: Դուք երևի սիրում եք կատակել, Ձեր ո՛չ մի խոսքին չպետք է հավատալ: Եվ հետո՝ ես շտապում եմ:

- Օ՜, այդ դեպքում ես կուղեկցեմ քեզ:

- Ոչ, մեր ճանապարհները տարբեր են, և հետո՝ ինձ պետք չէ ուղեկցել, ինձ հետ ոչինչ էլ չի պատահի:

- Քեզ հետ՝ գուցե, բայց ինձ հետ՝ հաստատ մի բան կպատահի: Իսկ գուցե մեկ ուրիշի հետ ես դու ժամադրված, և այդ ուրիշը պետք է քեզ ուղեկցի, համբուրի քո սիրունիկ բերանը, քո պարանոցը, քո գեղեցիկ կուրծքը, մեկ ուրիշը՝ իմ փոխարեն: Ո՛չ, դա անկարելի բան է:

Քլինգզորը ձեռքը դրեց նրա ծոծրակին ու այլևս բաց չթողեց:

---

1 (իտ.) ահա՛:

- Իմ փոքրիկ աստղ, իմ գանձ... Իմ փոքրիկ քաղցր սալոր... Կծի՛ր ինձ, այլապես ես քեզ կուտեմ:

Նա համբուրեց կնոջը, վերջինս ծիծաղելով գլուխը շրջեց, կարճատև դիմադրությունից հետո՝ վերջապես տեղի տվեց: Քլինգզորը նորից համբուրեց: Կինը թափահարեց գլուխը, ծիծաղեց և փորձեց դուրս պրծնել նրա ձեռքերից: Քլինգզորը ամուր գրկեց նրան, ձեռքը կնոջ կրծքին դրած՝ շարունակ համբուրում էր նրան: Կնոջ մազերը բուրում էին ամռան անուշահոտություններով՝ չորացած խոտով, որոճով, ձարխոտով ու մոշով: Մի վայրկյան միայն խոր շունչ առնելով՝ Քլինգզորը գլուխը վեր պարզեց, այնտեղ, բոցավառվող ու հուրհրատող երկնքում նա տեսավ պստլիկ ու սպիտակ առաջին աստղի ծնունդը: Կինը հավաքեց իրեն, լուրջ տեսք ընդունեց, հետո հեծկլտաց, բռնեց Քլինգզորի ձեռքը և այն ամուր սեղմեց իր կրծքին: Քլինգզորը քնշորեն խոնարհվեց նրա վրա, մի ձեռքով գրկեց կնոջ ոտքերը, որոնք այլևս չէին դիմադրում, ապա պառկեցրեց նրան խոտի վրա:

- Դու սիրու՞մ ես ինձ,- հարցրեց նա փոքրիկ աղջկա պես:- Povera me[1]:

Մի-մի գավաթ գինի խմեցին: Քամին հպվում էր նրանց մազերին և իր հետ տանում նրանց շնչառությունը:

Նախքան միմյանց հրաժեշտ տալը՝ Քլինգզորը ուսապարկում և բաճկոնի գրպաններում մի հարմար բան էր փնտրում՝ կնոջն ի հիշատակ տալու համար, վերջապես, դեռ կիսով չափ լիքը մի փոքրիկ արծաթե ծխախոտաուփ գտավ, դատարկեց այն ու մեկնեց կնոջը:

- Ո՛չ, սա նվե՛ր չէ, խնդրում եմ չմերժես,- հավաստեց Քլինգզորը:- Պարզապես պահիր որպես հիշատակ, կնայես ու ինձ կհիշես:

- Ես քեզ չեմ մոռանա,- ասաց նա: Եվ ապա ավելացրեց,- իսկ դու կգա՞ս նորից:

Քլինգզորը տրտմեց: Խաղաղ ու մեղմ համբուրեց կնոջ զույգ աչքերը:

- Կգամ,- պատասխանեց:

Դեռ մի որոշ ժամանակ էլ, անշարժ կանգնած, նա լսում էր փայտե կրունկների հեռացող ոտնաձայները՝ սկզբում լեռան լանջին ու մարգագետնում, հետո՝ անտառի մեջ, քարքարոտ գետնին, սաղարթների ու արմտիքների մեջ... Մի պահ անց ոտնաձայները լռեցին: Գիշերվա մեջ տնկված էր խավար անտառը, քամին անտարբեր հպվում էր հանգած երկրին: Ինչ-որ բան,

1 (իտ.) Խեղճ իմ, թշվառական:

գուցե սունկ էր կամ թոշնած մի ձարխոտ, բուրում էր աշնանային սուր դառնաբույրով:

Քլինգզորը ոչ մի կերպ չէր կաչողանում իրեն ստիպել տուն վերադառնալ: Ի՞նչ իմաստ ուներ նորից սարերը մագլցել, սենյակ վերադառնալ՝ իր նկարների մոտ: Նա մեկնվեց խոտերի վրա և հայացքն ուղղեց աստղերին, վերջապես քուն մտավ, արթնացավ գիշերվա կեսին, հավանաբար ինչ-որ կենդանու ձայնից, գուցե քամու հարվածն էր պատճառը, կամ ցողի սառնությունը: Վեր կացավ և քայլերն ուղղեց դեպի Կաստանյետտա, մոտեցավ իր տանը, դուռը բացեց ու ներս մտավ: Նամակներ ու ծաղիկներ էին դրված սեղանին. իր բացակայության ժամանակ, հավանաբար ինչ-որ մեկը այցելել էր...

Չնայած հոգնածությանը՝ ողջ գիշերը իրերն էր քրքրում, դա նրա հին սովորությունն էր, հետո լուսամփոփի լույսի տակ ըսկսեց գննել օրվա ընթացքում կատարած գծանկարները: Անտառի ներսը հրաշալի էր ստացվել, կանաչն ու քարերը սքանչելիորեն շողշողում էին լույսի մեջ ծփացող ստվերներում, կարծես ալմաստների պահասենյակ լիներ: Արդյոք ճի՞շտ էր վարվել, որ քրոմի դեղինով, նարնջագույնով ու կապույտով էր միայն աշխատել և հրաժարվել էր կինաբառիսի կանաչից: Նա երկար նայում էր թղթին:

Ինչու՞: Ինչու՞ են բոլոր նկարներն այսքան գունառատ: Ինչի՞ համար է այս ողջ չարչարանքը, քրտնաջան տքնանքը, ստեղծագործելու այս հրճվալի ու խանդավառ հափշտակությունը: Մի՞թե դրա մեջ էր փրկությունը: Արդյո՞ք այն հանգիստ ու ուրախություն էր պարգևում...

Ուժասպառ ու կիսահանված՝ նա ընկավ անկողնու վրա, լույսը հանգցրեց, փորձեց քնել և մտքում կիսաձայն մրմնջաց Թու Ֆուի բանաստեղծությունը.

Շուտով փչի պիտի քամին
Շիրմի վրա իմ մոխրագույն:

ՔԼԻՆԳԶՈՐԸ ԳՐՈՒՄ Է ԼՈՒԻ ՎԱՑՐԱԳԻՆ

Caro Luigi[1]: Արդեն երկար ժամանակ է, ինչ քո ձայնը չենք լսել: Դու դեռ ապրու՞մ ես լույս-աշխարհում, թե՞ արդեն ցինը կրծում է ոսկորներդ:

Դու երբևէ չյուղով փորփրե՞լ ես կանգ առած պատի ժամացույցը: Ինձ դա մեկ անգամ վիճակվել է անել, և տեսել եմ, թե ինչպես հանկարծ սատանան մուտք գործեց ժամացույցի մեջ և,

1 (իտ.) Թանկագին Լուիջի:

այնուհետև, այնտեղից չարունակ դղրդոց ու շառաչյուն էր լսվում: Ալաքներն ասես մրցարշավի էին ելել թվատախտակի վրա, սարսափելի աղմուկով, prestissimo[1], նրանք պտտվում էին խելագարի պես, մինչև որ նույն հանկարծակիությամբ էլ ողջ աշխատանքն ընդհատվում էր, ու ժամացույցը փչում էր հոգին: Նույնը ներկայումս կատարվում է նաև այստեղ՝ մեզ մոտ, արևն ու լուսինը խելագարի պես իրար անցած պտույտներ են գործում երկնակամարի շուրջբոլորը, օրերը միմյանց ետևից ընկած՝ իրար են հալածում, ժամանակը փախչում է՝ ասես պարկի հատակում գոյացած անցքից: Հուսանք սրա վերջաբանն էլ հանկարծակի է վրա հասնելու, և այս հարբած աշխարհը կործանվելու է՝ անկարող այլևս վերադառնալու իր քաղքենիական բարեկեցիկ ռիթմին:

Օրվա ընթացքում ես չափազանց զբաղված եմ լինում, որպեսզի ինչ-որ բանի մասին կարողանամ մտածել (ինչ ծիծաղելի է իմիջիայլոց հնչում, երբ մարդ մի այսպիսի, այսպես կոչված «նախադասություն» է երբեմն արտաբերում. «որպեսզի ես ինչ-որ բանի մասին կարողանամ մտածել)... Սակայն երեկոյան հաճախ եմ զգում քո պակասը: Այդ ժամանակ ես սովո-րաբար նախընտրում եմ նստել ինչ-որ տեղ, անտառում կամ որևէ գինետանը, ու խմում եմ իմ սիրած կարմիր գինին, որը, ճիշտ է, այս կողմերում միշտ չէ՝, որ լավն է լինում, սակայն, ամեն դեպքում, օգնում է կյանքը քարշ տալուն և քուն է բե-րում աչքերիս: Մի քանի անգամ պատահել է նույնիսկ, որ հենց մառանում, ուղղակի սեղանի մոտ եմ քնել, և տեղաբնակների ծաղրուծանակին արժանանալով՝ փորձել եմ ապացուցել, գոնե ինքս ինձ, որ նյարդաթուլագարության նոպաները ինձ այնքան էլ չեն անհանգստացնում: Իմ ուրախություններին երբեմն բարեկամներ ու աղջիկներ էլ են մասնակցում, և այդտեղ է, որ մատներդ ակամայից վարժվում են կանացի նրբալաց անդամներին հպվելուն, սկսում ես խոսել գլխարկների ու կոշկեղենի կրունկների մասին, արվեստի մասին: Երբեմն նույնիսկ հաջողվում է մտերմիկ ջերմության մթնոլորտ ստեղծել, այնժամ ողջ գիշերը բղավում ենք ու ծիծաղում, անգամ անծանոթներն էլ են ուրախանում, որ Ֆլինգզորը մի այսպիսի ուրախ ու զվարճալի տղա է: Մեզ հաճախ մի սիրունիկ կին է այցելում, և ամեն անգամ, ինձ տեսնելով, թախանձանքով քո մասին է հարցնում:

Այն արվեստը, որին մենք երկուսս էլ ծառայում ենք, պրոֆեսորի ասածի պես՝ մինչև օրս էլ սերտ ու անմիջական կախման մեջ է գտնվում իր վերարտադրության առարկայից (սա մոտավո-

1 (իտ.) արագագույնս:

բապես նման է նկարչագիտական առեղծված ներկայացնելուն): Մենք միշտ նկարում ենք, ճիշտ է, երբեմն ինչ-որ չափով ազատ ձեռագրով և քաղքենիների համար բավական հուզիչ եղանակով, բայց, այնուամենայնիվ, զուտ «իրականության» առարկաները. մարդկանց, ծառեր, տոնավաճառներ, երկաթուղագծեր ու բնապատկերներ: Այս առումով մենք դեռևս ավանդական գծին ենք հետևում: Չէ՞ որ քաղքենին «իրական» անվանում է այն առարկան, որը բոլորի կամ էլ գոնե մեծամասնության կողմից միանման է ընկալվում ու մեկնաբանվում: Քանի դեռ այս ամառը չրջապատում է ինձ և դեռ չի վերջացրել՝ ես մտադիր եմ մի որոշ ժամանակ միմիայն երևակայական պատկերներ նկարել, հատկապես՝ անուրջներ: Այդ տեսակետից հարկ է, որ ես գոնե մասամբ մոտենամ նաև քո գաղափարներին ու տրամադրություններին, քո այն խելագար, զվարճալի ու անակնկալի բերող մոտիվներին, մերձենամ աշխարհատեսության մոտավորապես այն եղանակին, որը շարադրված է Քյոլնի մայր տաճարի նապաստակների որսորդ Կոլոֆինոյի պատմություններում: Ու չնայած զգում եմ, որ հողը նոսրացել, փխրուն է դարձել ոտքերիս տակ, և, ճիշտն ասած, մի քանի տարի էլ ապրելու և նորանոր գործեր ստեղծելու ոչ ակնկալիք ունեմ և ոչ էլ ձգտում, բայց, այնուամենայնիվ, մի քանի սեպ ևս ես դեռ ուզում եմ խրել այս աշխարհի կոկորդը: Նկարներիս մի գնորդ վերջերս գրել էր ինձ, որ ինքը հիացմունքով է նկատում, թե ինչպես իմ նորագույն աշխատանքներում ես մի երկրորդ երիտասարդություն եմ ապրում: Դրանում ինչ-որ ճշմարիտ բան կա: Ինձ թվում է, թե նկարել իսկապես սկսել եմ միայն այս տարի: Սակայն այն, ինչ տեղի է ունենում ինձ հետ, ավելի շուտ ոչ թե գարնան զարթոնքի է նման, այլ պայթյունի: Զարմանալի է, թե իմ ներսում որքան շատ դինամիտ ու այլ պայթուցիկ նյութեր կան թաքնված. բայց ինքդ էլ գիտես, թե սալօջախի համար դինամիտը որքան անհարմար վառելանյութ է:

Թանկագին Լուի, իմ հոգու խաղաղության պահերին ես հաճախ եմ ուրախացել, որ մենք, այս երկու ծեր անառակներս, ըստ էության չափազանց սրտառուչ, հալվող ու ամաչկոտ լինելով՝ մեծագույն սիրով բաժակները իրար գլխով կտանք, քան թե մեզ թույլ կտանք արտահայտելու միմյանց նկատմամբ տածած զգացմունքները: Թող որ այդպես լինի, ծե՛ր ոգնի:

Օրերս, Բարենյոյից ոչ հեռու գտնվող այն նույն գինետանը, հաց ու գինով մենք մի տոն նշեցինք. կեսգիշերին, անտառի խորքում փառահեղ հնչում էր մեր երգը, հին հռոմեական մեղեդիներ էինք երգում: Այնքան քիչ բան է պետք մարդուս երջանկության համար, մանավանդ՝ երբ արդեն ծեր ես ու ոտքերդ ըսկսում են մրսել. օրվա ընթացքում ութից-տասժամյա աշխա-

տանք, մեկ լիտր պիմոնտյան գինի, կես ֆունտ հաց, Վիրջինիա-սիգար, մի զույգ ընկերուհիներ, և իհարկե՝ տաք ու բարեխառն եղանակ: Այդ ամենը կա այստեղ, արևն էլ փառահեղորեն ջերմացնում է, գանգս էլ այրվել է մումիայի գանգամաշկի նման:

Երբեմն ես այն զգացմունքն եմ ունենում, թե իմ կյանքն ու աշխատանքը միայն հիմա են սկսվում, իսկ երբեմն էլ թվում է, թե ես վերադարձել եմ ութսունամյա տաժանակիր աշխատանքից, և շուտով, ուր որ է՝ հանգստի ու խաղաղության իրավունք եմ վաստակելու: Բոլորն էլ մի օր հասնելու են իրենց վախճանին, իմ սիրելի Լուի, ես և դու նույնպես: Աստված գիտե, թե ինչեր եմ դուրս տալիս իմ այս նամակում, ըստ երևույթին մի քիչ վատառողջ եմ: Հավանաբար մելամաղձություններն են ինձ տանջում, աչքերս շատ են ցավում, և երբեմն հիշողությունն ինձ տանում-կանգնեցնում է աչքի ցանցաթաղանթի դիմացկունությանն ու հատուցմանը վերաբերող մի հոդվածի առաջ, որ ես տարիներ առաջ եմ կարդացել:

Երբ պատշգամբիս դռնից դուրս եմ նայում, ինձ թվում է, թե մենք դեռ երկար տարիներ կարող ենք ապրել ու աշխատել: Աշխարհն աննկարագրելիորեն գեղեցիկ է ու բաղմաբղետ, պատշգամբիս այս կանաչ ու բարձրուղեշ դռան արանքից այն օր ու գիշեր զրնգում է աչքերիս առաջ, կանչում է ինձ ու հրամայում ընդունել իր հրավերքը: Եվ նորից ու նորից ես դուրս եմ վազում և նրանից մի կտոր պոկում ինձ համար, մի շատ փոքրիկ, աննշան թվացող պատառիկ: Այս տարվա ամառային տաք ու չոր եղանակի պատճառով՝ աչքերիս առաջ փռված կանաչին տվող վայրերը հրաշալիորեն լուսավոր ու կարմրավուն են դարձել, ես երբեք չէի մտածել, որ կրկին անգլիական կարմիր ու հողաճերմակ սիենա ձեռքս կառնեմ: Շուտով վրա կհասնի աշունը՝ հնձած արտերով, այգեկութով, եգիպտացորենի բերքահավաքով ու կարմրին տվող անտառներով: Ես պետք է այդ ամենին մեկ անգամ ևս իմ մասնակցությունը բերեմ, և դեռ մի քանի հարյուր էսքիզներ էլ պիտի նկարեմ: Բայց երբեմն էլ ինձ թվում է, որ ես մեկ անգամ ևս պետք է դեպի իմ ներսը, իմ հոգու խորքը ուղևորություն կատարեմ, ինչպես որ երեխա ժամանակներս էի անում, այսուհետև ես պետք է լիովին հիշողությամբ ու երևակայությամբ նկարեմ, բանաստեղծություններ հորինեմ ու երազներ մանեմ: Գուցե և այդպես էլ անեմ:

Մի հայտնի փարիզեցի նկարիչ, որից մի երիտասարդ արվեստագետ խորհուրդ էր հարցնում, նրան ասել է. «Երիտասա՛րդ, եթե Դուք ուզում եք նկարիչ դառնալ, ուրեմն մի՝ մոռացեք, ամենից առաջ հարկավոր է լավ սնվել: Երկրորդ. մարսողությունն էլ շատ կարևոր է, հոգացե՛ք, որ ստամոքսը կանոնավոր

գործի... Եվ երրորդ. ձեր կողքին միշտ մի սիրունիկ ու փոքրիկ ընկերուհի ունեցեք»... Այո, պետք է կարծել, որ արվեստի այս սկզբունքը ես յուրացրել եմ, և, կարելի է ասել, որ դրանում ես պակասություն չեմ զգում: Բայց այս տարին անիծյալ տարի է, և նույնիսկ այդ հասարակ բաներում բախտս չի բերում: Ես քիչ եմ սնվում և վատ, հաճախ օրերով միայն հաց եմ ուտում, երբեմն էլ միայն զբաղված եմ լինում ստամոքսս լցնելով (ես գտնում եմ, որ դա ամենաանօգուտ բանն է, որով մարդ կարող է զբաղվել...), մի կարգին ընկերուհի էլ չունեմ կողքիս, ունեցածս չորս-հինգ կանայք են, որոնցից հաճախ միայն հիասթափվում եմ և շուտ սպառվում, այսինքն՝ այստեղ ևս սով է տիրում: Ժամացույցի մեխանիզմում ինչ-որ բան է խափանվել, և այն բանից հետո, երբ չյուղով նրա որովայնը փորփրեցի, այն կրկին դիվահարի պես առաջ է վազում, շարունակ շաչում է ու դղրդում... ի՜նչ հեշտ է ապրելը, երբ մարդ առողջ է: Դու դեռ երբեք ինձնից այսքան երկար նամակ չես ստացել, բացառությամբ գուցե այն օրերի, երբ մենք ներկապնակի շուրջն էինք բանավիճում: Ես ավարտում եմ գրելս, մոտենում է ժամը հինգը, արդեն բացվում է հրաշագեղ լույսը: Ընդունի՛ր ողջույններս, քո

Քլինգզոր:

Հետգրություն.

Հիշու՞մ ես իմ այն փոքրիկ նկարը, որ քեզ շատ էր դուր գալիս, դա ամենաչինականն է, որ ես երբևէ նկարել եմ. հյուղակով, կարմիր ճանապարհով, վերոնեզյան կանաչով ներկված ատամներով ծառեր, իսկ ետնախորշում՝ խաղալիքներով ու տիկնիկներով զարդարուն մի քաղաք: Ես այն հիմա չեմ կարող քեզ ուղարկել, ճիշտն ասած՝ չգիտեմ էլ, թե որտեղ ես դու: Բայց և այնպես այդ նկարը քեզ է պատկանում, դա ես, ամեն դեպքում, հարկ եմ համարում ասել:

ՔԼԻՆԳԶՈՐԸ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԻՐ ԲԱՐԵԿԱՄ ԹՈՒ ՖՈՒԻՆ

(Այն օրերին, երբ նա աշխատում էր ինքնանկարի վրա)

Հարբած նստած եմ գիշերով հողմահարվող պուրակում,
Եվ ճյուղերին երգեցիկ ոսկե աչունն է բազմել,
Դատարկ շիշս լցնելու՝ դեպի մառանն է վազում
Պանդոկապանը մրթմրթան ու մարմնեղ:

Առավոտյան, առավոտյան կմխրճի մահը դժգույն
Իր շառաչուն գերանդին մսերի մեջ ալ-կարմիր,
Ու դեռ երկար-երկար այսպես դարանակալ ու հտպիտ

Իմ թշնամին կատաղի աչք չի թեքում ինձանից:

Ողջ գիշերը ծոր եմ տալիս երգն իմ՝ նրան ծաղրելու համար,
Դեռ հնչում է երգն իմ հարբած՝ անտառներում հոգնատանջ:
Ես երգում եմ նրան ծաղրելու համար՝
Դատարկելով ըմպանակը մինչև վերջ:

Տառապանքներ շատ եմ կրել իմ թափառիկ ճամփեքին,
Երեկո է հիմա ու ես նստած խմում եմ, սպասում,
Մինչև մանգաղը պսպղուն
Գլուխս, խը՛րթ, կրաժանի սարսռացող իմ մարմնից:

ԻՆՔՆԱՆԿԱՐ

Սեպտեմբերի առաջին օրերին, անսովոր չոր ու տոթ շաբաթներին հաջորդեցին անձրևային օրերը: Հենց այդ օրերին, Կաստանյետայի իր ապարանքի բարձրադիր լուսամուտներով սրահում առանձնացած, Քլինգզորը նկարում էր իր ինքնանկարը, որն այժմ կախված է Ֆրանկֆուրտում:

Այդ սարսափելի և սակայն այնքան կախարդական ու հրաշագեղ նկարը, որը Քլինգզորի վերջին ավարտուն աշխատանքը եղավ, միաժամանակ նրա այն չլսված բեղուն, չիկացած ու մոլեգին ամառային աշխատանքների շրջանի գագաթն ու թագադրումը հանդիսացավ: Շատ կողմերով էր այն աչքի ընկնում, բայց առաջին հերթին նրանով, որ յուրաքանչյուր ոք, ով շատ թե քիչ գիտեր Քլինգզորին, այդ նկարով իսկույն և անսխալ կերպով վերստին ճանաչում էր նրան, թեև ոչ մի նկար երբեք այնքան շատ չէր հեռացած իր բնօրինակից, որքան այս մեկը:

Ինչպես Քլինգզորի բոլոր վերջին աշխատանքները, այնպես էլ այս ինքնանկարը կարելի էր տարբեր տեսանկյուններից մեկնաբանել: Ոմանց համար, մասնավորապես նրանց, որ նկարչին չէին ճանաչում, այդ նկարը, ամենից առաջ, հրաշալի տրամադրություն ու հնչողություն առաջ բերող գույների մի համանվագ էր հիշեցնում, և չնայած իր ողջ խայտաբղետությանը՝ այն նուրբ ու ազնիվ հյուսված մի գորգ էր: Ուրիշները նրանում տեսնում էին առարկայի նյութապաշտությունից ազատագրվելու համարձակ, բայց հուսահատ մի վերջին փորձի արձագանքը. նկարված էր բնանկար հիշեցնող մի դեմք, մազերը՝ ծառասաղարթների ու կեղևամաշկի մեջ երևակված, ժայռաճեղքերին նմանեցված ակնախոռոչներով, այդ մարդիկ ասում էին, որ այս նկարը հիշեցնում է բնությունը սոսկ այն չափով, ինչ չափով որ որոշ լեռնաշղթաներ մարդկային դեմքեր են հիշեցնում, իսկ որոշ

ծառերի ճյուղեր էլ՝ մարդկային ձեռքեր ու ոտքեր, հեռավոր ու սիմվոլիկ նմանություն... Եվ ընդհակառակը, շատերը այդ նույն աշխատանքում տեսնում էին միմիայն առարկան ու առարկայականը, տեսնում էին հենց իր՝ անողոք հոգեբանությամբ տարրալուծված ու մատնանշված Քլինգզորի դեմքը, որպես մի մեծ խոստովանություն, անխնա, անգութ, ճչացող, սրտառուչ ու սարսափելի խոստովանություն: Ոմանք, այդ թվում նաև նրա կատաղի հակառակորդներից շատերը, այդ նկարը համարում էին Քլինգզորի խելագարության հանգամանքը հաստատող մի ապացույց, նրա խենթության արգասիքն ու խորհրդանշանը: Նկարի մեջ նատուրալիստորեն պատկերված գլուխը համեմատելով բնորդի, նրա լուսանկարների հետ՝ նրանք ձևերի աղճատվածության ու չափազանցումների մեջ փնտրում էին վայրենության, այլասերվածության, ատավիզմի ու անասնականության գծեր ու տարրեր: Նրանցից ոմանք նույնիսկ հարձակումներ էին գործում այդ նկարի անկիրք անշարժության ու ֆանտաստիկության վրա, նրանում տեսնելով մենագարությամբ տառապողի ինքնասիրահարվածություն, աստվածանարգության, ինքնափառաբանման և մի տեսակ կրոնական մեծամոլության մոլուցք: Բոլոր այս մեկնաբանությունները հնարավոր են, և դեռ շատ ուրիշներն էլ են հավանական թվում:

Այն օրերին, երբ իր ինքնանկարի վրա էր աշխատում, բացառությամբ գինովցած գիշերների, Քլինգզորը սենյակից դուրս չէր գալիս, սնվում էր լոկ հաց ու մրգով, որ պանդոկատիրուհին էր բերում իրեն, չէր սափրվում, աշխատում էր արևահար ճակատով ու խորը ներս ընկած աչքերով, մատնված լինելով նման անուշադրության՝ նա հիրավի սարսափելի տեսք էր ստացել: Նա նկարում էր նստած դիրքով և սոսկ հիշողությանն ապավինելով, և միայն ժամանակ առ ժամանակ, աշխատանքի դադարների ընթացքում, մոտենում էր սենյակի հյուսիսային պատին ամրացված մեծադիր, հնաոճ, վարդերի մազմզուկներով նկարազարդված հայելուն, երկարում էր գլուխը, չռում աչքերն ու ծամածռություններ անում:

Հսկայական հայելին շուրջառող հիմարիկ վարդաբեղիկների միջև ընկած տարածքում, և իր՝ Քլինգզորի դեմքի ետնամասում, նա բազմաթիվ ուրիշ դիմագծեր էր նկատում. անուշիկ ու զարմացած մանկական դեմքեր, հրճվանքով ու խանդավառությամբ լի պատանեկան անուրջներ, հարբեցողի հեգնախառն աչքեր, շրթունքների մի անվերջանալի շարան՝ ծարավից տոչորվողի, հալածվածի, տառապողի, որոնողի, անառակի, enfant perdu-ի[1]:

1 (Ֆրանս.) ընկեցիկ երեխա:

Գլուխը սակայն նա կերտեց վսեմ ու կոպիտ, կուսական անտառի կուռքի գլխի պես, ինքնասիրահարվածի, խանդոտ Եհովայի, խրտվիլակի գլխի նմանությամբ, որի առաջ մարդիկ զոհաբերում են իրենց անդրանիկ զավակներին ու դուստրերին: Այդպիսին էին նրա նկարած մի քանի դեմքերը: Այլ կերպ էին նկարված ընկնողների, խորտակվողների, կործանվողների, իրենց կործանման հետ հաշտվածների դեմքերը. մամուռ էր աճել դեմքի վրա, ծուռտիկ շարված էին ծեր ատամները, թառամած մաշկը ամբողջապես ճաքճքած էր, իսկ պատռվածքների մեջ երևում էին վերքերն ու բորբոսը: Սա այն դրվագն է, որ առանձնապես դուր էր գալիս նրա մի քանի բարեկամներին: Նրանք ոգևորված ասում էին. ահա՛ մարդը՝ ecce homo, հոգնած, անհագ, ընչաքաղց, վայրի, մանկամիտ ու խորամանկ մարդը, մեր ժամանակակիցը, մեռնող, մեռնել ցանկացող եվրոպացի մարդը, ամեն տեսակի թախծից նրբացած ու հղկված, բոլոր տեսակի արատներով հիվանդ, իր կործանման դատապարտվածությունից խանդավառ ու ոգևորված, ամեն առաջադիմության պատրաստ, ամեն տեսակ հետընթացի համար հասունացած, ամբողջովին խանդ, հույզ ու նաև հոգնություն, ճակատագրի ու ցավի հետ հաշտ, հանձնված ճակատագրի քմահաճույքին՝ ինչպես թմրամոլը թույնին, միայնակ, ճահճացած, ամուլ ու ծեր, միաժամանակ և՛ ֆառաստ, և՛ կարամազով, գազան և իմաստուն, ամբողջովին մերկ, անճարակ և պատվասիրության նշույլից անգամ զերծ, մահվան հանդեպ մանկական վախով լի, հոգնած և միաժամանակ պատրաստակամ՝ մահն ընդունելու համար:

Իսկ ավելի հեռվում, դեպի խորքը գնացող բոլոր այդ դեմքերի հետևում հանգչում էին նախամարդու, կենդանական ու բուսական աշխարհների, քարակերտ քանդակների հեռու-հեռավոր, խորախորհուրդ ու ծերացած դեմքերը. այդ պատկերները կարծես ոգեկոչված լինեին երկրիս երեսին ապրող վերջին մարդու կողմից, որն ասես մահվանից մի վայրկյան առաջ, մեկ անգամ ևս իր երևակայության մեջ գծագրելիս լիներ հին ու նոր ժամանակների և աշխարհի ծանոթ ու օտարոտի կերպարանքները:

Այդ մոլեգին ու լարված օրերին Քլինգզորն ապրում էր հափշտակվածի պես: Գիշերները ծանրանում էր գինով, և ապա՝ մոմերը ձեռքին, հին հայելու առաջ կանգնած՝ հետազոտում էր հարբեցողի իր թախծոտ և քմծիծաղող դեմքը: Մի երեկո նա նույնիսկ տուն հրավիրեց իր մի սիրուհուն, երկուսով նստել էին աշխատասենյակի բազմոցին, և երբ Քլինգզորը մերկանդամ ընկերուհուն իր գիրկն առավ, սեղմեց կրծքին, անսպասելիորեն հայացքը սահեց նրա ուսի վրայով ու ընկավ հայելու մեջ՝ հանկարծ այդ կնոջ արձակված մազերի արանքից նա տեսավ իր աղա-

վաղված դեմքը՝ կարմրած աչքերով, վավաշոտությամբ և այդ վավաշոտության նկատմամբ զզվանքով լիքը:

Քլինգզորը նրան մյուս օրը ևս հրավիրեց իր մոտ, սակայն նկարչի տեսքից կինը սարսափեց և այլևս չվերադարձավ...

Գիշերները քիչ էր քնում: Հաճախ արթնանում էր սարսափելի երազներից, քրտինքը դեմքին, վայրի անզսպության մեջ ու կյանքից հոգնած, բայց, մեկ էլ տեսար՝ ոտքի կցատկեր, կնայեր պատուհանի հայելու մեջ, կկարդար իր վրդովված դիմագծերի չփոթ բնանկարը, մռայլ ատելությամբ կնայեր ու չարախինդ կժպտար... Մի անգամ նա երազում տեսավ, թե ինչպես էին իրեն տանջում, աչքերի մեջ մեխեր խփում, ճարմանդով պատառոտում քիթը, և ահա նա նկարել էր այդ կտտանքների ենթարկված դեմքը, մեխերը աչքերի մեջ, ձեռքերում ածուխներ... Մենք այդ տարօրինակ ու արտասովոր նկարը գտանք նրա մահվանից հետո: Նյարդագալարումի նոպայի վրա հասնելուն պես՝ նա գլուխը կախ էր գցում աթոռի թիկնակից, ցավից ծիծաղում էր ու բղավում, այլակերպված դեմքը պահում էր հայելու առաջ, ուշիուշով զննում նյարդային ցնցումները և հեգնում աչքերից հոսող արցունքները:

Այս կտավի վրա նա նկարել էր ոչ միայն իր դեմքը և նրա հազարավոր արտահայտությունները, իր աչքերն ու շրթունքները, բերանի վշտալի խոռոչը, ճակատի ծալքավոր ժայռապատկերները, արմատավոր ձեռքերն ու ցնցվող մատները, բանականության հեգնանքն ու աչքերի մեջ ցոլցլացող մահվան կնիքը, այլև քմահաճ, լիաբուռն ու դողդողացող վրձնահարվածներով պատկերել էր իր իրական կյանքը, իր սերը, հավատն ու հուսահատությունը: Դրանց կողքին՝ նկարել էր մերկ կանանց բազմություններ, հարբածությունից իրենց կորցրած ու իրար սեղմված՝ որպես թռչուններ կամ ճակատամարտի զոհեր, իսկ այդ կուռքերի առաջ կանգնած էր ինքը՝ Քլինգզորը, պատանի ինքնասպանի դեմքով, հեռվում՝ տաճարներ ու անտառներ, մի վիթխարահասակ ու խենթուկ մորուքավոր աստված, դաշույնով ճեղքված կանացի կուրծք, թիթեռնիկներ՝ թևերի վրա նկարազարդված դեմքերով, իսկ այդ ամենի ետևում, քաոսի ու խառնաշփոթի մի անկյունում ծվարած՝ պատկերված էր մահը, մոխրագույն մի ուրվական, որը փոքրիկ, ասեղնաչափ նիզակով խոցում էր Քլինգզորի ուղեղը:

Երկարատև ու անընդմեջ աշխատանքից հետո՝ անհանգստությունը գլուխ բարձրացրեց նրա հոգում, իր շողշողացող սենյակով մեկ անդադար այս ու այն կողմ էր վազվզում, դռները բացուխուփ էին լինում նրա այդ երթևեկությունների պատճառով, պահարանից շշեր էր դուրս կորզում, գրադարակներից՝ գրքեր դուրս քաշում, սփռոցներն էր քաշում սեղանների

վրայից, պառկում էր հատակին ու կարդում, շունչը պահած դուրս կախվում պատուհանից, հին կտավներ ու լուսանկարներ էր հայտնաբերում ու ողջը շաղ տալիս հատակով մեկ, սեղաններին ու անկողինների վրա, բոլոր սենյակները լիքն էին թղթերով, նկարներով, գրքերով ու նամակներով: Երբ անձրևախառն քամին պատուհանից ներս էր խուժում՝ ամեն ինչ ծածանվում էր խառնիխուռն ու իրար մեջ խճճված, ամեն ինչ տակնուվրա էր լինում: Հնատիպ առարկաների բազմության մեջ նա գտավ իր մանկության օրերի նկարը, չորս տարեկան երեխայի մի լուսանկար էր, հագին սպիտակ ամառային զգեստ, սպիտակին տվող բաց շիկավուն մազերի տակից իրեն էր նայում մի քմահաճ մանկական դեմք: Նա գտավ իր ծնողների նկարները, երիտասարդ օրերի սիրուհիների լուսանկարները: Ամեն ինչ հրապուրում, հուզում ու շլացնում, գրավում ու տանջում էր նրան, պատեպատ խփում, ամեն ինչ նրան դեպի անցյալն էր ձգում ու նորից ետ շպրտում, և ահա նա հանկարծ ցնցված վեր էր թռչում, սարսռալով կպչում էր փայտե տախտակին և շարունակում նկարել: Խոր կնճիռները ակոսում էին նրա դեմքը, նա կերտում էր իր կյանքի լայնահուն տաճարը, հզոր շտրիխներով արտահայտում նույնիսկ ամենաանշան թվացող կեցության հավերժությունը, հեծկլտուն վրձնահարվածներով՝ իր անցողիկությունը, հրաշագեղ ընդվզումով պատկերում էր քմծիծաղ տվող իր նմանակին, հեգնական հնչողությամբ արտահայտում փտումի ու նեխումի իր դատապարտվածությունը: Հետո նա, թակարդն ընկած այդ եղջերուն, կրկին վեր էր ցատկում և բանտարկյալի վարգով վազվզում սենյակների միջով: Ստեղծագործելու երջանկավետ բերկրանքը լուսավորում էր նրան՝ որպես մի խոնավ ու ցնծալի ամպրոպ, դա տևում էր այնքան ժամանակ, մինչև որ ցավը նրան վերստին գետին էր տապալում ու նրա երեսովը տալիս իր կյանքի ու արվեստի ծանր վաստակով ձեռք բերած փշրանքները: Կանգնած իր նկարի առաջ՝ նա աղոթում էր, հետո թքեց նրա վրա: Նա խելագար էր՝ ինչպես որ յուրաքանչյուր ստեղծագործող է որոշ չափով խելագար լինում: Բայց մի զարմանալի անբացատրելիությամբ, անգամ խելագարության պահերին՝ նրա ստեղծագործություններն անսխալական ու խելացի էին ստացվում, և ինչպես լուսնոտն է ամեն ինչ ըստ հարկի և պատշաճի կատարում, այնպես էլ նա բավարարում էր իր ստեղծագործական պահանջմունքները: Քլինգզորը ներքուստ հավատում ու զգում էր, որ իր ինքնանկարի համար մղվող այդ դաժան կռվում քննվում է ոչ թե մի առանձին, մասնավոր մարդու ճակատագիրը, և որ դա ոչ թե մեկ առանձին վերցրած մարդու հաշվետվությունն է կյանքի առաջ, այլ որ այստեղ դրված է համամարդկայինի,

համընդհանուրի, անհրաժեշտի հարցը: Նա զգում էր, որ ինքը այժմ կրկին անգամ կանգնած էր ճակատագրական մի խնդրի առջև, որի կողքին իր ողջ նախկին անհանգստությունն ու վախը, արբեցումն ու զմայլանքը, այդ ամենը սոսկ մի պարզագույն վախ էր իր գերխնդրի իրականացման ճանապարհին, ու նաև նրանից փախուստ տալու միջոց: Այժմ այլևս չկար ոչ անհանգստություն և ոչ էլ վախ, կար միայն առաջ ընթանալու ձգտում, միմիայն հարված ու խայթոց, հաղթանակ ու կործանում: Եվ նա հաղթում էր ու կործանվում, տառապում ու ծիծաղում, մեծ դժվարություններ հաղթահարելու գնով՝ իր համար ճանապարհ էր հարթում, սպանում էր ու մահանում, ծնում էր ու ծնվում...

Ֆրանսիացի մի նկարիչ էր ուզում տեսնվել նրա հետ, տանտիրուհին նրան ուղեկցեց դեպի թափթփված իրերով լի նախասրահը, անկարգությունն ու աղտոտվածությունն էին քրքջում խառնաշփոթ սենյակներում: Քլինգզորը ներկայացավ չսափրված, գորշամոխրագույն դեմքով և ներկոտված թեզանիքով, քայլերն այնքան լայն էր դնում, ասես սենյակներով մեկ ճախրելիս լիներ: Անծանոթը ողջույններ էր բերել Փարիզից ու Ժնևից, ապա իր հարգանքն արտահայտեց նկարչի հասցեին ու մեծարանքի խոսքեր ասաց: Քլինգզորը շարունակ այսուայնկողմ էր շուռումուռ գալիս, և, պետք է ենթադրել, դիմացինին չէր լսում: Շփոթված հյուրը լռեց և որոշեց հրաժեշտ տալ, այդ պահին Քլինգզորը անսպասելիորեն մոտեցավ նրան, ներկոտված ձեռքը դրեց ուսին և նայեց ուղիղ նրա աչքերի մեջ:

- Շնորհակալություն,- կամացուկ ասաց նա՝ մեծ դժվարությամբ արտաբերելով հնչյունները,- շնորհակալություն, սիրելի բարեկամ: Բայց ես աշխատում եմ և չեմ կարող խոսել: Մարդիկ միշտ էլ չափից դուրս շատ են խոսում: Մի՛ չարացեք ինձ վրա, և իմ կողմից ողջունեք բարեկամներիս: Դուք ասացեք նրանց, որ ես իրենց սիրում եմ,- և կրկին մյուս սենյակն անցավ:

Պատրաստի նկարը նա զետեղեց այս խարանածածկ օրերի ընթացքում մոռացության մատնված խոհանոցում և ավարտված համարեց իր գործը: Նա այն երբեք ոչ ոքի ցույց չտվեց: Հետո վերոնալ ընդունեց ու քնեց՝ մի ամբողջ օր ու գիշեր: Ապա՝ արթնանալուն պես լվացվեց, սափրվեց, հագավ նոր սպիտակեղենն ու զգեստները, քաղաք իջավ և գնեց միրգ ու ծխախոտ՝ Ջինային նվիրելու համար:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

(1918թ. Ցյուրիխ)

Կա մի երկիր, ուր ուրախությունները տեսանելի են, բայց կեղծ,
և ցավն ու դառնությունը՝ թաքնված, բայց իրական...
Լյուի դը լա Բրյուիեր (XVI դար)

Կար-չկար մի մեծ, գեղեցիկ, սակայն ոչ հարուստ մի երկիր, որտեղ մի քաջարի ժողովուրդ էր ապրում, համեստ, բայց կորովի, և գոհ էր իր ճակատագրից: Հարստությունն ու բարեկեցիկ կյանքը, նրբագեղությունն ու շքեղաշուքությունը նույնպես տեղ չունեին այնտեղ, և ավելի հարուստ հարևան երկրները երբեմն-երբեմն ոչ առանց հեգնանքի կամ հեգնախառն կարեկցանքով էին նայում այդ մեծ երկրի համեստագույն ժողովրդին:

Որոշ բաներ, սակայն, որ դրամով չես կարող ձեռք բերել և որոնք, այնուհանդերձ, գնահատվում էին մարդկանց կողմից, լավագույնս բարգավաճում էին այլ առումներով ոչ քաջահռչակ այդ ժողովրդի մեջ: Եվ այնպես լավ էին բարգավաճում, որ ժամանակի ընթացքում այդ աղքատիկ երկիրը, չնայած իր նվազ հզորությանը, դարձավ մեծահռչակ ու գնահատված: Այնտեղ ծաղկում էին ապրում այնպիսի երևույթներ, ինչպես երաժշտությունը, ստեղծագործ միտքն ու բանական իմաստությունը, և ինչպես որ մեծամեծ իմաստունից, քարոզչից կամ բանաստեղծից չէին պահանջում, որ նա հարուստ, նրբագեղ, հասարակավար կամ չփվող լիներ, և նրան, այնուհանդերձ, ըստ հարգի ու պատշաճի պատիվների էին արժանացնում, այդպես էլ հզորագույն ժողովուրդներն էին վարվում այդ զարմանահրաշ, բայց ընչազուրկ ժողովրդի հետ: Նրանք ուսերն էին թոթվում այդ ժողովրդի թշվառության և աշխարհիս երեսին նրա ինչ-որ տեղ ծանրաշարժ ու տարաբախտ կենցաղավարության առնչությամբ, բայց և առանձնահատուկ բավականությամբ ու առանց նախանձի դույզն-ինչ նշույլի էին խոսում նրա մտածողների, բանաստեղծների ու երաժիշտների մասին:

Աստիճանաբար այնպես պատահեց, որ ստեղծագործ մտքի այդ երկիրը խրվեց աղքատության ճիրանների մեջ՝ հաճախ հարևանների ճնշումներին ենթարկելով, սակայն նույն այդ հարևաններին և ողջ աշխարհին ամենայն առատաձեռնությամբ, մեղմածոր մի խաղաղավետությամբ իր ջերմության ու իմաստնության արգասաբեր շիթն էր մշտնջենապես զեղում:

Բայց կար մի բան, հնամենի ու աչքի զարնող մի հանգամանք, որի պատճառով ժողովուրդը ոչ միայն ծանակվում էր օտարների կողմից,

այլև ինքն էլ խորապես տառապում ու ցավ էր ապրում. այս գեղեցիկ երկրի բազում տարբեր ցեղերը դեռ հնուց անտի անհաշտ էին ու իրարու հանդեպ մշտապես թշնամաբար տրամադրված: Հավերժական կռիվ ու նախանձ կար նրանց մեջ: Եվ երբ ժամանակ առ ժամանակ որևէ գաղափար էր ծնունդ առնում՝ ժողովրդի լավագույն զավակների շուրթերից արտաբերվելով, որ պետք էր միավորվել և համատեղ ու միասնական ուժերով խաղաղ աշխատանքի լծվել, այդժամ, սակայն, այն գերիշխող գաղափարը, ըստ որի բազում ցեղերից մեկը կամ նրա իշխանը պետք է մյուսներից ավելի բարձր դիրք զբաղեցներ ու ղեկավարությունը ստանձներ, մեծամասնությանն այնպես էր դիմադարձ կանգնեցնում, որ միավորման գործը երբեք գլուխ չէր գալիս:

Հաղթանակն օտար իշխանի ու զավթիչի նկատմամբ, որը երկիրը ծանրածանր լծի տակ էր դրել, թվում էր վերջապես գլուխ էր բերելու այդ միավորումը: Բայց նորից մի ակնթարթում գժտվում էին իրար հետ, բազում մանր-մունր իշխանիկները ընդդիմանում էին դրան, և այդ իշխանների հպատակները նրանցից այնքան շատ ողորմածություն էին ստանում պաշտոնների, տիտղոսների ու գունագեղ ժապավենների տեսքով, որ համընդհանուր գոհունակություն էր տիրում և ոչ ոք նորարարությունների հանդեպ հակվածություն չէր ցուցաբերում:

Մինչ այս, մինչ այն՝ աշխարհով մեկ ընթանում էր այն ինքնահնար հեղաշրջումը, մարդկանց և իրերի այն տարօրինակ փոխակերպումը, ոչն ինչպես մի ուրվական կամ հիվանդակիր որոմ վեր բարձրացավ առաջին շոգեմեքենաների ծխագոլորշիներից և ամենուր վերափոխեց կյանքը: Աշխարհը լցվեց աշխատանքով ու ջանադիր ջերմեռանդությամբ, այն կառավարվել սկսեց մեքենաների կողմից և, մշտապես քաջալերանք կարդալով, նորանոր աշխատանքների էր մղում: Մեծամեծ հարստություններ կուտակումներ առաջ եկան, և աշխարհի այն մասը, որ մեքենաներ էր հայտնագործել, առաջվանից ավելի մեծ չափով իր տիրապետությունը հաստատեց երկրիս երեսին, հողագնդի մնացած մասերը բաժանեց իր հզորների միջև, և նա, ով զորեղ չէր՝ դատարկաձեռն մնաց ու ոչինչ չստացավ:

Անսպասելիորեն ամեն ինչ հանկարծ այլ ընթացք ստացավ: Հնում հնչած ձայները, որ ցեղերի միավորումն էին պահանջում, բնավ խլացված չէին: Մի հզոր, կորովի պետական այր հանդես եկավ. մեծազոր հարևան ժողովրդի նկատմամբ տարած երջանկախոստում, ըստ ամենայնի փառահեղ հաղթանակն ուժեղացրեց ու միավորեց երկիրը, որի բոլոր ցեղերն այժմ միաբանված էին ու մի զորավոր տերություն էին հիմնադրել: Երազողների, մտածողների ու երաժիշտների ընչազուրկ երկիրն արթնացել էր, այն այլևս հարուստ էր ու զորեղ, միաբանվել ու երկնային ճանապարհ էր ոտք դրել որպես մի հավասարազոր պետություն՝ իր նույնքան մեծ ու հնամենի եղբայրների կողքին: Դրսում՝ հեռասփյուռ աշխարհում թալանելու ու ձեռք գցելու այլևս շատ բան չկար, երիտա-

սարդ տերությունն աշխարհի հեռավոր ծայրերում արդեն իսկ վիճակները բաժանված գտավ: Բայց մեքենայի ոգին, որը մինչև հիմա այս երկրում չափազանց դանդաղ էր իշխանության եկել, այժմ զարմանալիորեն ծաղկում էր ապրում: Ողջը՝ երկիրն ու ժողովուրդը, շատ արագ փոխակերպվեց: Դարձավ ավելի մեծ, ավելի հարուստ, դարձավ ավելի զորեղ ու սարսափազդու: Հարստությունների կուտակումներ առաջացան, և նա շրջապատեց իրեն զինվորականների, հրանոթների ու ամրոցների եռակի պատնեշով, և հարևաններին, որոնց սկսել էր անհանգստացնել երիտասարդ նորագոյացությունը, շուտով կասկածն ու վախը պաշարեցին, և նրանք էլ սկսեցին պաշտպանական պատնեշներ կառուցել և հրանոթներ ու ռազմանավեր հայթայթելու պատրաստություններ տեսնել:

Սակայն դա դեռ վատթարագույնը չէր: Այդ հրեշավոր պաշտպանական պատնեշների համար միջոցներ տրամադրելու բավականաչափ փող կար, և պատերազմի մասին ոչ ոք չէր մտածում, զինվում էին միայն հենց այնպես՝ հավուր պատշաճի, ամեն հնարավոր դեպքերի ու զարգացումների համար, որովհետև հարուստները հաճույք են ստանում իրենց փողերի շուրջ երկաթակուռ պատնեշներ տեսնելուց:

Շատ ավելի վատթար էր այն, ինչը երիտասարդ տերության ներսում էր կատարվում: Այս ժողովուրդը, որը երկար ժամանակից ի վեր աշխարհում կես-ծանակված, կես-հարգված վիճակում էր եղել, որն այնքան շատ ոգի և անչափ նվազ փող էր ունեցել, ահա այդ ժողովուրդը հիմա հասկացավ, թե ինչ հրաշալի բան էր փողն ու պետականությունը: Նա կառուցում էր ու խնայողություններ անում, առևտրով զբաղվում, փող էր փոխ առնում ու փոխ տալիս, ոչ ոք չէր կարող արագորեն բավականաչափ հարստանալ, և ով մի ջրաղացի կամ դարբնոցի տեր էր, այժմ պետք է շտապ կարգով գործարան ձեռք բերեր, ով երեք ենթավարպետ ուներ, հիմա պետք է տասը կամ քսանն ունենար, շատերն էլ այդ թիվն արագորեն մինչև հարյուրի կամ հազարների էին հասցնում: Եվ բազմաթիվ ձեռքերն ու մեքենաները որքան ավելի արագ էին աշխատում, այնքան ավելի արագ էր փողը կուտակվում, և կուտակվում էր այն առանձնաշնորհյալների ձեռքում, որոնք այն դիզելու բախտին էին արժանացել: Շատուշատ աշխատավորներ էլ, սակայն, այլևս մեկ վարպետի մոտ աշխատող ենթավարպետներ ու գործավորներ չէին, այլ հարկադիր աշխատանք կատարողի ու ստրկության աստիճանին էին իջել:

Մյուս երկրներում էլ ամեն ինչ նույն կերպ էր ընթանում, այնտեղ էլ արհեստանոցը գործարանի էր վերածվում, վարպետը իշխանավոր էր դառնում, աշխատավորը՝ ստրուկ: Աշխարհում ոչ մի երկիր չէր կարող խուսափել այդ ճակատագրից: Բայց երիտասարդ տերությունն այն երջանկությունն ունեցավ, որ աշխարհում սկզբնավորված այդ նոր ոգին և հակվածությունն իր առաջ գալուն զուգադիպեց: Ետևում չկային ո՛չ հին ժամանակներ, ո՛չ էլ հին հարստություններ, այն արագընթաց դեպի

նոր ժամանակն էր ընթանում որպես մի անհամբեր երեխա, ձեռքերը լիքն էին աշխատանքով ու նաև փողով:

Հիշեցնողներն ու նախազգուշացնողները, սակայն, ժողովրդին ասում էին, որ սխալ ճանապարհով են ընթանում: Նրանք հիշեցնում էին այն վաղեմի ժամանակների, երկրի խաղաղավետ, ծածուկ փառքի մասին, հոգևոր տեսակի առաքելության ու հաղորդակցման ոգու մասին, որ նա երբեմնի ժամանակներում ունեցել էր, ստեղծագործ մտքի մըշտնջենական ու ազնվագույն, ոգեղեն շիթի մասին, երաժշտության ու բանաստեղծական ոգու տիրապետության, որ ժամանակին որպես շնորհ էր ընծայում աշխարհին: Սակայն երջանկության մեջ ապրող երիտասարդ տերության մեջ դա միայն ծիծաղ էր առաջ բերում: Աշխարհը կլոր էր ու պտույտներ էր գործում, և այն, որ նախապապերը մի ժամանակ բանաստեղծություններ էին հորինել և իմաստասիրություններ գրի առել, դա իհարկե շատ հրաշալի էր, բայց թոռներն ուզում էին ցույց տալ, որ այս երկրում նաև այլ կերպ էր կարելի ու հնարավոր գործել: Եվ այսպես, իրենց հազարավոր գործարաններում նրանք նոր մեքենաներ էին կռում ու կոփում, նորանոր երկաթուղագծեր, նոր տեսակի ապրանքանմուշներ թողարկում և ամեն հնարավոր դեպքի համար՝ նաև մշտապես նորանոր զենքեր ու հրանոթներ: Հարուստները հեռանում էին ժողովրդից, աղքատ աշխատավորներն իրենց մենակ ու լքված էին զգում, և այլևս երբեք չէին մտածում իրենց ժողովրդի մասին, որի մասն էին կազմում իրենք, այլ դարձյալ ու վերստին իրենց համար էին հոգ տանում, իրենց մասին մտածում ու սեփական տենչանքների բավարարմանը ձգտում: Եվ հարուստներն ու հզորները, որ բոլոր այդ թնդանոթներն ու հրացանները արտաքին թշնամիների դեմ էին պատրաստել, հրճվում էին իրենց հոգածու հեռատեսության առթիվ, որովհետև այժմ ներսում էլ թշնամիներ կային, որոնք առաջիններից գուցե թե շատ ավելի վտանգավոր էին:

Այս ամենն իր վախճանը գտավ մեծ պատերազմի հորձանուտում, որը տարիներ շարունակ այնպես սարսափելիորեն ամայացնում էր աշխարհը, և որի ավերակների մեջ մենք դեռ կանգնած ենք՝ խլացած նրա աղմուկ-շառաչից, դառնացած նրա անհեթեթությունից և հիվանդ՝ հեղված արյան շիթերից, որ վարգում են մեր բոլորի երազների միջով:

Պատերազմն ավարտվեց նրանով, որ այս երիտասարդ, ծաղկուն տերությունը, որի զավակները, ջերմեռանդ տաքգլուխությամբ ոգեշնչված, ճակատամարտի դաշտերն էին նետվել, կործանվեց: Նա տանուլ տվեց, սոսկալի պարտություն կրեց: Հաղթողները, սակայն, նախքան որ խոսքը խաղաղություն հաստատելուն կվերաբերեր, ծանր ռազմատուգանք էին պահանջում պարտված ժողովրդից: Եվ պատահեց այն, որ մինչ ջախջախված զորաբանակները երկարաձիգ օրեր ու գիշերներ շարունակ կենաց ու մահու կռիվներ մղելով ետ էին նահանջում, հայրենիքի խորքից երկար շարասյուններով նրանց ընդառաջ էին բերվում մինչ-

այժման իշխանության խորհրդանիշները՝ հաղթանակած թշնամուն հանձնելու: Մեքենաներն ու փողը երկարուձիգ չիթերով պարտված երկրից դուրս էին հորդում դեպի թշնամու ամենակուլ գրպանը:

Այդ ընթացքում, սակայն, պարտված ժողովուրդը, մեծագույն նեղության պահին սթափվեց, ուշքի եկավ: Նա վռնդեց իր առաջնորդներին ու իշխանավորներին և ինքն իրեն խելահաս հայտարարեց: Նա ինքն իր ներսից խորհուրդներ կազմեց և իր կամքն արտահայտեց՝ սեփական ուժերով ու սեփական ոգու գերլարմամբ իր դժբախտության միջից ելք գտնելու հաստատակամությամբ տոգորված:

Այս ժողովուրդը, որ նման մի ծանրագույն քննության ենթարկվելով՝ չափահաս էր դարձել, դեռ այսօր էլ չգիտե, թե ուր է իր ճամփան տանում և ով է լինելու իր առաջնորդն ու աջակիցը: Երկնայինները, սակայն, քաջ գիտեն դա, ու գիտեն նաև, թե ինչու են իրենք այս ժողովրդի ու աշխարհի վրա պատերազմի արհավիրքն ուղարկել:

Եվ այդ օրերի խավարի միջից մի ճանապարհ է լուսաճառագում, մի ուղի, որով պետք է ընթանա պարտության մատնված ժողովուրդը:

Նա չի կարող վերստին երեխա դառնալ: Այդ բանը ոչ ոք չի կարող: Նա չի կարող իր հրանոթները, իր մեքենաներն ու իր փողը պարզապես դուրս նետել և վերստին մի փոքրիկ, խաղաղավետ քաղաքում ծվարած՝ բանաստեղծություններ հորինել ու սոնատներ նվագել: Բայց նա կարող է այն ճանապարհով առաջ ընթանալ, որով նաև առանձին մարդը շարժվի պիտի, երբ որ կյանքն իրեն դեպի մոլորությունն ու խոր տառապանքն է առաջնորդում: Նա կարող է իր մինչայժման ճանապարհի մասին մտաբերել, իր ծննդյան ու մանկության, իր հասակ առնելու մասին, իր փառքի ու կործանման մասին, և կարող է այդ հիշողությունների վերարթնացման ճանապարհին ուժեր գտնել իր մեջ, որոնք բանիբուն, հիմնավորապես ու անկորնչելիորեն իրեն են պատկանում: Նա պետք է «ինքն իր մեջ խորասուզվի», ինչպես բարեպաշտներն են ասում, և իր մեջ՝ հոգու խորքում, իր սեփական էությունը գտնի՝ անկործան ու անապական, և այդ էությունը չի ուզենա խուսանավել իր ճակատագրից, այլ կստանձնի նրա բեռը և իր վերագտած լավագույն ու առինքնող հիմնակետից ողջը նորովի կվերսկսի:

Եվ եթե դա այդպես լինի, երբ ճնշված ու տառապած ժողովուրդը ճակատագրի նախանշած ճանապարհով ինքնակամ և ուղիղ ընթանա, այդժամ նրանից, ինչն առաջներում կար, ինչ-որ բան կվերանորացվի, կվերականգնվի: Նրանից վերստին մի մշտնջենական ու խաղաղարար հոսանքաշիթ կարտահեղվի ու աշխարհի մեջ կխորասուզվի, և նրանք, որ այսօր դեռ իր թշնամիներն են, ապագայում, այդ խաղաղարար շիթով վերստին համակված, ականջալուր կլինեն:



Հիսուն Հրատարակչի (Ուսումնական) Փոքր
Սեպտեմբերյան Ցոյց Հանրագրի 1930
(Բարձրի բարեկամությունը)

[illegible]

Monteagnola 6. Juni 1930

Ihrer Bitte zufolge gebe ich Ihnen die Erlaubnis, eine armenische Uebersetzung meines Werkes «Siddhartha», oder Teile daraus, in der von Ihnen geplanten armenischen Zeitung zu publizieren. Honorar erwarte ich nur für den Fall dass Ihr Unternehmen Ihnen Gewinn bringt. Diese Erlaubnis gilt jedoch nur für den einmaligen Abdruck in Ihrem Journal, sie gilt weder für andre Zeitschriften noch für eine Buch-Ausgabe.

Hochachtungsvoll Hermann Hesse

Բաշխեց պահվում է Ե.Ղարիբյանի անվան Գրականության
պետական թանգարանում, Ստեփան Զալի 66

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԻԴՀԱՐԹԱ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ԲՐԱՀՄԱՆՈՐԴԻՆ

Բրահման - Հնդկական բարձրագույն կաստայի անդամ: Հնագույն ժամանակներից ի վեր բրահմաններ էին համարվում քուրմերը, բանաստեղծները, գիտնականներն ու քաղաքագետները: Հին օրենսգրքերը սահմանում են բրահմանների սրբությունն ու անձեռնմխելիությունը: Հինդուիզմը չունի հիմնադիր, չունի նաև համընդհանրական-պարտադիր դավանաբանություն: Հինդուները միավորված չեն միասնական հավատամքով, նրանց մեջ կան բազմաստվածության հավատավորներ, միաստվածականներ և աթեիստներ: Այստեղ միակ որոշիչը պատկանելությունն է որևէ ճանաչված կաստայի:

Բրահմա - Հնդկական կրոնի տեսակ, որը ծագումնաբանորեն նշանակում է կախարդանք, մոգություն, ապա նաև՝ ուժ, որն ստեղծում է բոլոր աշխարհները, պահպանում ու կործանում դրանք: Բրահման աշխարհի արարիչն է, հինդուիզմի եռաստվածության, որ է՝ Տրիմուրթի հորջորջյալի առաջին դեմքը: Շիվայի՝ արարչության պահապանի ու Վիշնուի՝ արարչության կործանողի հետ միասին տղամարդկային եռամիասնություն կազմելով, սովորաբար պատկերվում է եռադեմ և քառաձեռ կերպարանքով: Ավելի ուշ՝ այս աստվածությունը բուդդայականների կողմից վերածվել է Բուդդայի օգնականի ու ծառայի, իսկ դասականներն, ընդհակառակը, այն բուդդիստներից փոխառելով՝ երկրպագել են նրան որպես իրենց գլխավոր աստվածություն:

Գովինդա - Այս անունը Հեսսեն քաղել է Բհագավատգիտայից: Գովինդան՝ Արջունայի կառապանը, Արջունային քարոզում է կյանքի իմաստի մասին: Հեսսեի մոտ՝ Սիդհարթան վերջում քարոզում է Գովինդային:

Սիդհարթա - Նշանակում է՝ «նա, ով հասել է իր նպատակին», Բուդդային (շուրջ 560-480 թթ. ն.Ք.) տրված մականուններից է: Վերջինս, սերելով ազնվականական Սաքյա կամ Շաքյա ընտանիքից, բնութագրվում է նաև Շաքյամունի անվամբ: Հնդկական ազնվականական տոհմաբանության ծիսակարգի համաձայն՝ տոհմանուններին հավելադրվում էին նաև վեդայական տեսանողների անունները, այստեղից էլ՝ նա կրում է նաև Գոթամա կամ Գաութամա անու-

նը: Բուդդայի հայրը Նեպալի Հիմալայների ստորոտին տեղակայված Սուդդհոդանայի իշխանն էր, մայրը, որ մահացել էր նրա ծնունդից շատ չանցած, կոչվում էր Մայա: Դաստիարակված լինելով շռայլումի ու առատաձեռնության ոգով՝ ամուսնանում է իր զարմուհի Յասոդհարայի հետ և ունենում է մի որդի՝ Ռահուլա անունով: 29 տարեկանում, բարեկեցիկ կյանքից հոգնած, փրկության որոնումներում լքում է հայրենիքը և վեց տարի շարունակ թափառում որպես մուրացիկ-ճգնավոր, ուսանում է՝ առանց ներքին բավարարվածության, տարբեր ուսուցիչների մոտ և ինքզինքը հանձնում է խստագույն ինքնաճաղկման: Վերջում՝ Գայայի մոտ գտնվող Ուրուվելա ավանում պայծառատեսություն է իջնում վրան: Այնուհետև մեկնում է Բենարես, հիմնում է վանական ուխտ և հետագայում, քարոզելով ու ուսուցանելով, շրջում է Հյուսիսային Հնդկաստանում:

Օմ - Միստիքական վանկարկություն հինդուիզմի ու բուդդայականության սուրբ գրքերում՝ «Կատարյալը», «կատարելություն», «իրագործում» նշանակությամբ:

Աթման - Սանսկրիտում ծագումնաբանորեն նշանակում է «շունչ», «շնչառություն» (գերմ.՝ Atem, atmen), հետագայում հանդես է գալիս նաև այլ նշանակություններով՝ կենսաուժ, ավիշ, անձնավորություն, ինքնություն, ես, հնդկական փիլիսոփայության մեջ՝ հոգի: «Սիդհարթան դաստիարակվել ու կրթվել է իր հորենական ավանդույթով: Նա գիտե և ճանաչում է Միակը՝ Աթմանը, որը ոչ ուսյալ մարդը խոր քնի մեջ միայն կարող է վերապրել, ինչի մասին հիշատակվում է Սոնադևայի Ուպանիշադներում: Սակայն բրահմանների ամենագիտությունն անգամ ի զորու չէ արթմնի վիճակում, կյանքում վերապրել Աթմանը» (Ա. Հսիա, «Հերման Հեսսեն և Չինաստանը», Մայնի Ֆրանկֆուրտ 1974, էջ 238):

Ստվեր - «Սրանից կարելի է հասկանալ, որ Գովինդան հանդիսանում է Սիդհարթայի մի տեսակ երկրորդ եսը, ընդսմին՝ Սիդհարթան գործում է որպես արդեն իսկ առաջինի փոխակերպված եսը, որպես Գովինդայի այնկողմնային գաղափարակերպը կամ մի այնպիսի գիտակցություն, որին Գովինդան դեռ պետք է մտահասու լինի» (Դեբա Պ. Պատնայկ, «Գովինդա», «Հերման Հեսսեի «Սիդհարթային» վերաբերող նյութեր ժողովածու»-ում, 2-րդ հատոր, էջ 190-191):

Ռիգվեդա - Հնդկական գրականության հնագույն հուշարձանը:

Պրաջապատի - Վեդայական առասպելաբանության մեջ Արարիչը կամ բարձրագույն Աստվածը:

Ուպանիշադներ - Հին հնդկական աստվածաբանական-փիլիսոփայական գրվածքներ՝ անհամարժեք ու տարբեր ժամանակաշրջաններից սերող, ամենատարբեր ուսմունքներ պարունակող

Սամավեդա - Ռիգվեդայից հետո երկրորդ վեդան է՝ երգերի վեդա. Ռիգվեդայի օրհներգների ընտրանին է, որ առաջինից տարբերվում է լոկ օրհներգների մատուցման եղանակներով:

Չհանդոգյա-ուպանիշադ - Իմաստասեր Շանքարայի կողմից որպես իսկական և հավաստի ճանաչված տասը ուպանիշադներից իններորդը:

Սատյամ - Մայայի շղարշաքողի ներքո թաքցված իրականությունը:

Բանյան - Բենգալերեն՝ թզենի:

«Օմը աղեղն է, հոգին՝ նետը» - Օմը, բոլոր վեդայական գրություններիի սկիզբն ու ավարտը, «աստվածային ուժի» խորհրդանիշն է, որով ներծծված է ողջ տիեզերքը և որն ապրում է մարդկային սրտի մանրատիեզերքում, մանրաշխարհում՝ որպես աստծո ապրեցնող, փրկչական ողորմություն, ձև չունեցող կամ անէ մի ուժ, որը, սակայն, սկիզբն է բոլոր գոյություն ունեցածների, եղողների ու լինելիքների («Հերման Հեսսեի «Սիդհարթային» վերաբերող նյութերի ժողովածու»-ում, 2-րդ հատոր, էջ 99-100):

Սամանա - Թափառաշրջիկ, մուրացիկ վանական:

ՍԱՄԱՆԱՆԵՐԻ ՄՈՏ

Սաքյա - Բուդդայի տոհմանունը

Մագադհա - Հին հնդկական թագավորություն, որը մոտավորապես ընդգրկում է ներկայիս հնդկական Բիհար նահանգը:

ԳՈԹԱՄԱ

Սավաթհի - Գոթամա Բուդդայի ժամանակներում Կոսալայի մայրաքաղաքը, ներկայումս ընդգրկված է Օուդ նահանգի կազմում, որն էլ իր հերթին մաս է կազմում Ութթար Պրադեշի՝ Գանգեսի պտղատու հարթավայրում: «Սավաթհի քաղաքը, ուր «յուրաքանչյուր երեխա Վեհագույնի անունը գիտեր», թեթևակի կերպափոխված տարբերակն է Շրավասթհի տեղանվան, այն քաղաքի, ուր Բուդդան վաճառական Անաթապինդիկայի կողմից արքայազն Ցեթայի «Ցեթավանա» անունով այգին ընծա ստացավ, ուր և նա սթևանում էր այն ժամանակ: (Վ.Գանեչան, Հերման

Հեսսեի Հնդկաստանյան վերապրումը, «Հերման Հեսսեի «Սիդհարթային» վերաբերող նյութերի ժողովածու»-ում, 2-րդ հատոր, էջ 61):

Ութնամասնյա ուղի - Ըստ Հայնրիխ Ցիմմերի («Հնդկաստանի փիլիսոփայությունն ու կրոնը, Մայնի Ֆրանկֆուրտ 1973 թ.) ազնիվ կամ ճշմարիտ ութնամասնյա ուղու առանձին աստիճաններն են՝ 1. ճշմարիտ հայեցումը, 2. ճշմարիտ մտածումը, 3. ճշմարիտ խոսքը, 4. ճշմարիտ արարքը կամ գործելակերպը, 5. ճշմարիտ կենցաղավարությունը, 6. ճշմարիտ ձգտումը, 7. ճշմարիտ ունկնդրումը, 8. ճշմարիտ խորասուզումը կամ ինքնասուզումը: Հերման Հեսսեն միանշանակորեն ելնում է այս աղբյուրից: Այլ մեկնաբանություններում ինքնամաքրման այս ճանապարհը բնորոշվում է նաև Ութնանդամ ուղի ձևով, անվանակոչվում են հետևյալ ութ աստիճանները՝ 1. ճշմարիտ հավատ, 2. ճշմարիտ վճիռ, 3. ճշմարիտ խոսք, 4. ճշմարիտ արարք, 5. ճշմարիտ կյանք, 6. ճշմարիտ ձգտում, 7. ճշմարիտ մտածում, 8. ճշմարիտ ինքնախորասուզում: Համաձայն բուդդիստական ուսմունքի՝ Ութնամասնյա Ուղին տանում է դեպի տառապալից գոյության կատարյալ ու վերջնական վերառումը և դրանով իսկ՝ Նիրվանայի:

ԱՐԹՆԱՑՈՒՄ

Ցոգավեդա - Ցոգավեդա գոյություն չունի: Ցոգան Հնդկաստանում զարգացում ստացած հոգևոր կենտրոնացման վարժանքների համակարգ է, որի նպատակն է՝ մարմնի նկատմամբ ամբողջական տիրապետության հաստատման միջոցով հոգու ազատագրումը: Պաթանջալիին վերագրված բրահմանական փիլիսոփայական համակարգը, որի ուսմունքն ամփոփված է Ցոգա-սուտրաներում, մեզ ավանդված տեսքով ծագում է Հ.Ք. առաջին դարից և գործածվում է որպես Սանքյա փիլիսոփայության մետաֆիզիկական հիմք, նույնպես ուսուցանելով Ութնամասնյա Ուղին՝ 1. բարոյական անբասիր վարք, 2. արտաքին և ներքին մաքրություն, 3. մարմնի որոշակի դիրքերի ընդունում, 4. շնչառության կարգավորում, 5. զգայական օրգանների տարանջատում առարկայական հիմքից, 6. մտածողության կենտրոնացումը որոշակի կետի վրա, 7. հայեցություն, 8. ինքնախորասուզում:

Աթհարվավեդա - «Տան քուրմի վեդան», ընտանեկան կրոնական ծեսերի համար անհրաժեշտ օրհներգների ու մոգական երգասացությունների ժողովածու:

Մարայի կախարդանքը - Մարա՝ մարդասպան, մահ, չար ոգի, սկզբունք:
Մայայի շղարշաքողը - Մայան հնդկական փիլիսոփայության իրատեսական, պանթեիստական համակարգում ներկայացնում է այն ուժը, որի միջոցով աստված աշխարհ է բերում իր էության մի մասի իրական ձևափոխումը, դրանով իսկ մարդկանց խոչընդոտելով ճանաչել աստծո հետ իր էության միասնությունը: Իդեալիստական ուսմունքներում Մայան այն անբացատրելի պատրանքն է, որն անգիտության մեջ գտնվողներից թաքցնում է Ամենագոյի հետ իր ինքնության նույնականության գիտակցումը: Մայան ներկայացվում է որպես շղարշաքողով ծածկված գեղեցկություն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՄԱԼԱ

Ծառամագլցում - Կամա-սուտրայում գրկախառնման 12 դասական ձևերից 6-րդը:
Քամալա - Ենթադրաբար Կամա անվան ձևափոխությունն է: Կաման հնդկական սիրո աստվածն է, որը ներկայացվում է թութակին հեծած վարգող պատանու տեսքով:
Վիշնու - Հինդուիզմի գերագույն աստվածներից մեկը: Վիշնուն պետք է որ երկրիս երեսին ինը անգամ վերամարմնավորված լինի, վերջին երկու դեպքերում՝ որպես Ռամա և Կրիշնա: 10-րդ վերամարմնավորումը սպասվում է:
Լակշմի - Հնդիկների մոտ երջանկության և գեղեցկության աստվածուհին, Վիշնուի կինը: Լակշմին ներկայացվում է Վիշնուի ոտքերին նստած:
«Իր ստվերաշատ պարտեզը մտավ գեղեցկուհի Քամալան» - Հ.Հեսսեի բանաստեղծությունն է:
Կամասվամի - Այս անունը, ինչպես Քամալայի դեպքում, հավանաբար Կամա անվան ձևափոխություններից է: Սվամի նշանակում է՝ վարպետ, տեր, սեփականատեր:

ԵՐԵՎԱ-ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

«Մեր բնույթի մարդիկ գուցե չեն կարող սիրել» - հմմտ. «Գովինդա» գլխի մի արտահայտության հետ, ուր ասվում է՝ «...իրենը մարդս կարող է սիրել»:

ՍԱՆՍԱՐԱ

Սանսարա - Հեսսեի Media in Vita շարքի («Մի օր, սի՛րտ, դու կխաղաղվես...) (15.02.1921թ.) բանաստեղծություններից է, սկզբնապես վերնագրված է եղել «Սանսարա»: Սանսարա

նշանակում է կեցության հավերժորեն կրկնվող վերանորացումը՝ իր բոլոր տառապանքներով հանդերձ:

ԳԵՏԱՓԻՆ

«Խորը սեր այս հոսանուտ ջրի հանդեպ» - «Պատահական չէ Հեսսեի կողմից հոսող ջրի ընտրությունը որպես Թաոյի անանձնական մարմնավորում: Քանզի գետը բոլոր փոխակերպումների մարմնավորում-հասկացությունն է: Կոնֆուցիուսի «Զրույցներում» ասվում է. «Այսպես ամեն ինչ հոսում է ինչպես այս գետը, առանց կանգառի, գիշեր ու տիվ»: Նա, ով սակայն ճանաչել է փոխակերպումը, իր հայացքն ուղղում է ոչ թե անցողիկին, այլ նրան, ինչը ծնում, մղում է տալիս այդ փոխակերպմանը, այսինքն՝ Թաոյին: Լաո Ցզիի 32-րդ ասույթը հաստատում է այս միտքը. «Կարելի է Թաոյի հարաբերությունը աշխարհի նկատմամբ համեմատել լեռնային աղբյուրների ու դաշտային ջրերի հետ, որոնք լցվում են գետերի ու ծովերի մեջ»: Լաո Ցզին խոսքից ժուժկալ էր, սակայն նրա հետևյալ արտահայտությունները համապատասխանում են այն պատկերին, որ «Սիդհարթայում» Հեսսեն վերագրել է գետին. «...բոլոր ալիքները և ջրերը շտապում են՝ տառապելով՝ դեպի իրենց նպատակը, այդ նպատակները բազմաթիվ են՝ ջրվեժները, լճերը, արագահոս գետերը, ծովերը, և բոլոր այդ նպատակներին հասնում են, և յուրաքանչյուր նպատակին հետևում է նորը, և ջուրը գոլորշի է դառնում ու բարձրանում դեպի երկինք, դառնում է անձրև ու երկնքից թափվում է ներքև, դառնում է աղբյուր, դառնում առվակ, դառնում է գետ, ձգտում է դեպի նորը, վերստին ու նորից հոսում» (Ա. Հսիա, «Հերման Հեսսեն և Չինաստանը», Մայնի Ֆրանկֆուրտ 1974, էջ 242-243):

ԼԱՍՏԱՎԱՐԸ

Վասուդևա - Կրիշնայի անուններից մեկը: «Վասուդևան Թաոյի անձնավորված մարմնացումն է, գետը՝ անանձնականը, չանձնավորվածը: Վասուդևայի ու Լաո Ցզիի միջև նմանությունը ակնբախ է:

ԳՈՎԻՆԴԱ

«Յուրաքանչյուր ճշմարտության հակառակը նույնպես ճշմարիտ է» - «Յուրաքանչյուր լավ, իսկական ճշմարտությունը, թվում է ինձ, պետք է ընդունակ լինի, որպեսզի այն նաև չրջել կարողանաս: Այն, ինչը ճշմարիտ է, դրա հակառակը նույնպես պետք է ճշմարիտ լինի: Քանզի յուրաքանչ-

յուր ճշմարտություն ինքնին մի կարճառոտ բանաձևում է աշխարհի վերաբերյալ որոշակի հայացքի՝ դիտված որոշակի բևեռից, և չկա որևէ բևեռ առանց հակառակ բևեռի» (Հ. Հեսսե, Վիլհելմ Շեֆերի մի թեմայի արծարծումների առնչությամբ, 1919 թ., Հ.Հեսսեի երկերի լիակատար ժողովածու, հատոր 11, էջ 209):

Նիրվանա - Բուդդիստական ուսմունքում ապաշխարանքի միջոցով ձեռք բերված փրկությունը՝ որպես կյանքի մղումից լիակատար հրաժարում-դադար: Սանսարայի (կամ Սամսարայի) հակադրությունը:

Սերը - Այս հասկացությունը ըստ շատ մեկնաբանների, այդ թվում նաև Հեսսեի համար բացառապես քրիստոնեական տարր է: Սակայն քրիստոնեությունը, չնայած որ Քրիստոսի ավետումն, անտարակույս, սիրո ավետում է, բոլորովին էլ սիրո մենաշնորհի տերը չէ: Սերը Թաոյի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որոշ առումով՝ նույնիսկ նրա գլխավոր առարկան, քանի որ Թաոն շուրջառում և ընդգրկում է բոլոր էակներին: Սերը պատկանում է Թաո Թե Քինգ եռամիասնությանը: Ընդ որում՝ Թաոն ու Թեն անհաշտվելի են, քանի որ նրանք բոլոր արարածների գոյության նախապայմանն են՝ առանց որոնց ոչինչ գոյություն չունի և չի կարող ունենալ: Այդ պատճառով էլ՝ Թաոիզմում ևս սերը վճռորոշ տեղ է զբաղեցնում: «Սիդհարթայում» գլխավոր հերոսի պատկերացրած ու երկրպագած սերը բոլորովին էլ զուտ քրիստոնեական սերը չէ, այլ ավելի հարիր է հեթանոսական պատկերացումներին: Սիդհարթան սիրում է, ասենք, քարը, ոչ այն բանի համար, որ այն աստծո արարչագործության մասն է կազմում, այլ որովհետև այն խորհրդանշում է տևականությունն ու փոխակերպումը, այլ խոսքով, քանի որ այն Թաո է:

Կրիշնա - Առասպելական հնդկական թագավոր, Վիշնու աստծո 8-րդ երկրային հայտնության կերպարանավորումը:

Ագնի - Կրակի հնդկական աստվածը, որը զոհասեղանին խնկարկվող զոհին դեպի երկինք է տանում:

Աշոտ Ալեքսանյան

(ծնվ. 24.12.1961թ., Երևան)

բանաստեղծական գիտությունների թեկնածու

գրականագետ, գեղարվեստական թարգմանություններ, սաանձին գրքերով

Հեղինակ Հեղինակ
Նարոյ և գրական
միտումներ
ստեղծագործության
«Սարգիս» 1991
192 էջ

Հեղինակ Վիրաբ
Օրերգ Վրեժխնդրո-
ղությունը կամ
Նարոյ 1992
272 էջ

Սիշել դե Լանդանուսկա
Երրորդ
աշխարհակարգը
Հայաստանը,
ինքնաբերությունն
զուշակություններ,
«Նաիրի» 1992, 96 էջ

Ռոբերտ Մուզիլ
Երեք կին
էսքիզներ,
նովելներ,
«Լաստիկ» 1994
148 էջ

Հեղինակ Գեորգ
Նոր Արքայությունի
ջերմությունը
«ԳԱՀ-հրատ.»
«Լուսաբեր» 1997,
208 էջ

Հեղինակ Մարիա Ռիլկե
Ամարի հոգին
բանաստեղծություններ
«Նաիրի» 1998
192 էջ



Ռոբերտ Մուզիլ
Մարդ առանց
հատկությունների,
վեպ հատորներով,
«Արտասահմանյան
գրականություն»
2004, 72 էջ

Սիլվանա Ֆոլեգատի
610 Bedford Drive,
I am an American
դրամա,
«Արտասահմանյան
գրականություն»
2004, 84 էջ

Հեղինակ Գեորգ
Դասախոսիկ
ժողովածու
«Տաղանդ»
2004, 48 էջ

Հեղինակ Գեորգ
Գոլդման, Սիդնեյ Սիդնեյ
գրական Հայաստան»
2004, 336 էջ

[illegible] 5

[illegible] 3

[illegible] 55

[illegible] 63

[illegible] 21

[illegible] 26

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ
ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՆԵՐՍ
Մանրավեպեր

HERMANN HESSE
DEMIAN
SIDDHARTHA
KLINGSORS LETZTER SOMMER
Verlag "Grakan Hayrenik" (Hayastan)
(In Armenischer Sprache)

Խմբագիր՝ Արմինե Կարապետյան
Նկարիչ՝ Վազգեն Պահլավունի Թադևոսյան
Տեխ. խմբագիր՝ Աննա Սանդոյան

Շապիկի նկարը՝ Գուստավ Կլիմտ
«Բեթհովենյան որմնանկարներ» շարքից

Տպագրությունը՝ «ԵԳԵԱ» հրատարակչատան

Չափը՝ 84x60 1/16:
21.0 տպ. մամ., 26.1 հրատ. մամ.:
Տպաքանակ՝ 400: Գինը՝ պայմանագրային:

«Գրական Հայրենիք» («Հայաստան»).
Երեւան-9, Իսահակյան 28